Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԹԱՓԱՌԱԿԱՆ ՀՐԷԱՅ

ԳՈՐԾ

ԵՒԺԷՆ ՍԻՒ ՖՐԱՆՍԻԱՑՈՒ

ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ.

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

ՄՈՍԿՎԱ.
1858.

Լպվ
407

[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

[illegible]

~~№ 64~~

№ 243բ

[illegible]

2000

4-63

ԹԱՓԱՌԱԿԱՆ ՀՐԷԱՅ

407

ԳՈՐԾ

ԵՒԺԷՆ ՍԻՒ ՖՐԱՆՍԻԱՑՒՈՒ

ՀԵՂԻՆԱԿԻ

ՓԱՐԻԶԵԱՆ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԻ ԵՒ ԱՅԼ ԳՐՈՒԱԾՆԵՐԻ։

ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑԻ

ԱՇԽԱՏՈՒԹԵՆՈՎ։

УЧЕНИЧЕСКАЯ БИБЛИОТЕКА ЛАЗАРЕВСКАГО ИНСТИТУТА ВОСТОЧНЫХ ЯЗЫКОВЪ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ։

ГОС. П. БИБ-КА АРМ. С.С.Р.
ОБМЕННЫЙ ФОНД

ՄՈՍԿՎԱՅԻ ՄԷՋ

Լազարեանց Քաջափայլ պարոնների տպարանումը։

1857։

На основаніи отзыва Адъюнкта С.-Петербургскаго Университета по каѳедрѣ Армянскаго языка, Бероева, печатать позволяется, съ тѣмъ, чтобы по отпечатаніи представлено было въ Цензурный Комитетъ узаконенное число экземпляровъ. С.-Петербургъ. Октября 19 дня 1856 года.

Цензоръ *В. Бекетовъ.*

Гос. Пуб. Б-ка Арм. С.С.Р.
407-2004
35
28-406
5185-50

ՊԵՏԱԿԱ՛Ն ԽՈՐՀՐԴԱԿԱ՛ՆԻ ԵՒ ԱՍՊԵՏԻ

ՊԱՐՍԻԿ ԵՒ ԱՐԱԲԱԿԱՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՑՉԱՊԵՏԻ Պ. ԼԱԶԱՐԵԱՆՑ

ԼԻՑԷՈՆՈՒՄԸ ՄՈՍԿՎԱՅԻ ՄԷՋ

ՍՏԵՓԱ՛ՆՈՍ ՛ՆԱԶԱՐԵԱ՛ՆՑ

ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ԱՐԴԱՐԱՄԻՏ ՄԵԾԱՐԱՆԱՔՈՎ

՛ՆՈՒԻՐՈՒՄԷ

ԹԱՐԳՄԱՆԻՉԸ ։

ՄԵԾԱՊԱՏԻՒ ՊԱՐՈՆ·

Գիտեմ, որ սեպհական է քո, ամենեցուն յայտնի և ամենների բերանում վկայած համեստութեանը, հեռի փախչել ամենայն արտաքին փառքից ու պատուից, հերիք համարելով քեզ քո սրտի խաղաղ ու պարզ երջանկութիւնը, բայց ես, իմ փոքրիկ գործի ճակատը պսակելով քո միշտ գեղեցիկ անունով, կամէի միայն ընծայաբերել քեզ, գիշեր ու ցերեկ երկաթի դիմացկոտութենով, դառն հանգամանքների մէջ աշխատողիդ մեր Նոր Հայ մատենագրութեան վերայ, որ Ռուսաստանի մէջ առաջին անգամ քեզանից զարկ ստացած, յառա՛ջ է քայլում նոյն ուղղութենով. կամէի միայն ընծայաբերել քեզ, ո՛վ առաքինի, հոգիացած Ազգասէր, այս իմ գրաւոր վաստակը, որպէս մի չքաւոր, բայց արդարամիտ նշան յարգանքի։

Թո՛ղ քաղցրանայ քո ազնիւ աչքը այս փոքրիկ գործի վերայ, և քաջալեր լինի ինձ դէպ ի առաւելը և աւելի արժանաւորը մեր շատ սիրելի Հայկական եղբայրակիցների օգտի համար։

ՅԱՌԱՋԱԲԱՆ·

—

Մեր պատուելի հայրենակիցքը շատ անգամ լսելով ազնուամիտ հեղինակների առ ի սրտէ ճշմարտասէր և ցաւակցական խօսքերը, Ազգի անուսումնասիրութեան և անգրասիրութեան մասին, վիրաւորվումեն, ցոյց տալով իւրեանց ինչպէս երևումէ, արդարացի պատճառները. առաջին, թէ նոցա գրածները հին և մեռեալ լեզուով լինելով, անմօտենալի էին Ազգին. երկրորդ, թէ մեծ մասով գրուածքը լինումեն փիլիսոփայական կամ հնասիրական խնդիրների վերայ, որ ժամանակի որպիսութեանը անյարմար լինելով, չեն զարթեցնում Ազգի հոգու մէջ եռանդ դէպ ի գրասիրութիւն. վասնորոյ և մնումեն սորա և նորա տանը ընկած առանց անգամ և բացվելու, կամ, քանի մի հին լեզու իմացողների ձեռքում:

Այդ խօսքերի վերայ, ինձ քաղցր եղաւ դուրս տալ Եւժեն Սիւ Պարոնի «Թափառական Հրէայ» անունով վիպասանութեան հայ թարգմանութիւնը այն լեզուով, որ ժողովրդին հասկանալի էր: Եթէ փորձով երևի, որ ժողովրդի գանգատին արժան է իրաւունք տալ, ի հարկէ մեր պատուելի հեղինակքը իւրեանց ընթացքը կը յարմարեն ժամանակի որպիսութեանը, և կ'աշխատին այնպիսի բաներով պարապեցուցանել ընթերցողները, որ և հասկանալի լինէին նոցա և ազդեցութիւն ունենային նոցա հոգեղէն զարգացման վերայ. իսկ թէ Ազգայինքը այդ խօսքերը բերան առել են

միայն այն մտքով, որ բամբասեն հեղինակների արդարաբանութիւնը և դորանով ծածկեն իւրեանց անուսումնասիրութեան մեղքը, այն ժամանակ այդ ևս յայտնի կը լինի և կը հասկացնէ բանի զօրութիւնը: Այս խօսքերը ես ասումեմ ընդհանրապէս. իսկ, իմ կարծիքով, մինչև մեջ տեղումը չկային դպրոցներ, հասարակութիւններ, և այլ շատ պարագաներ, որ կարող էին Ազգի հոգու մէջ բուսուցանել և զարգացնել լուսաւորութեան սերմը, մինչև օրինաւոր գործիք չկար խոպանացած երկիրը փորելու և հերկելու, զուր տեղը սերմ ցանել չոր ու մացառոտ երկրի վերայ, կամ ապառաժների և ճանապարհի վերայ, օգուտ ամենևին ունենալու չէր:

Այն Ազգը, որ չունէր դպրոցներ, ուսումնական ընկերութիւններ, զանազան լուսաւոր գաղափարներով հարուստ շարունակ օրագրութիւններ, այն Ազգը, որի համար ուսումը և գիտութիւնը մի երկրորդական երրորդական բան էր, որ իւր հոգու բոլոր զօրութիւնը լարել և տրամադրել էր միայն նիւթական բաների համար, նորան ի՞նչ կը ներգործէ երկու տարին մի անգամ կամ տարին մի անգամ մի գրքի աշխարհ յայտնվիլը. և խեղճ հեղինակը տարիներով չարչարվումէ մինչև իւր աշխատութիւնը գլուխ կը բերէ, բայց այդ աշխատութիւնը Ազգին մի բանի տեղ անց կը կենայ, գոնէ մինչև այժմ չէ երևում դորա մի դրական ապացոյցը:

Բանը այս տեղ հասած լինելով, հարկաւոր էր հեղինակներին մի հնար գտանել ժողովրդի սիրտը մի կերպով ջերմացնելու, մի կերպով զարթեցնելու նորա մէջ այն ազնիւ եռանդը լուսաւորութեան, որ մարդկութեան պարծանքն էր. ուրեմն, նախ պիտոյ էր այն լեզուով խօսել, որ ժողովրդի ականջը ներգործէր սրտի վերայ և այն տպաւորութիւնը, որ լողութիւնը ստանումէր, բացարձակէր սրտի վերայ: Այս, գիտակցութենով և հասկացողութենով կը լինի. եթէ մեք լսէինք մի անհասկանալի բառ, մեր հա-

մար մի և նոյն էր լսել մի թմբուկի ձայն. այսպիսի ձայները լսողութեան վերայ ներգործելուց առաւել, այլ ազդեցութիւն չունին: Այս պատճառաւ ժողովրդի սրտի վերայ ներգործելու համար, պիտոյ է այնպիսի ձայնով ներգործել նորա լսողութեան վերայ, որ գիտակցութիւնը, ըմբռնելով այս ձայնի խորհուրդը և տպաւորութիւնը, անմիջապէս հասուցանէ նորա սրտին. և հեղինակը պարտական է գործ ունենալ ժողովրդի սրտի և հոգու հետ, և ոչ նորա ականջի հետ, որ ինքն ըստ ինքեան առաջնորդ էր մի միայն արտաքին աշխարհի տպաւորութեններին, սրտի և հոգու մէջ մտանելու: Երկրորդ, մի այնպիսի ժողովրդի, ինչպէս մեր հայոցն է, նայելով նորա այժմեան վիճակին, պիտոյ է ընդհանուր և հասարակ կրթութիւն, որպէս պատրաստողական հնար դէպի առաւել բարձր և հիմնաւոր կրթութիւն, և ոչ բարձր և վերին կրթութիւն մի որպիսի և իցէ մասնաւոր առարկայի կամ լաւ ասել ուսման ճիւղի: Այժմեան դրութեան մէջ Հայոց ազգը կարող է հասանել բարձր կամ վերին կրթութեան մասնաւոր առարկայի մէջ, միայն այն ժամանակ, եթէ այդ առարկայն, այդ ուսման ճիւղը, հնար էր նորա նիւթական բարեկենդանութեանը:

Այս պատճառների հիման վերայ, հեղինակի գրելիքը առաջինը պիտոյ է լինէին նոր հայախօսութենով, երկրորդ, հեղինակութիւնը պիտոյ է վերաբերվէր ընդհանուր կրթութեան, և այնպէս, որ առանց նախընթաց կարօտութեան օրինաւոր դպրոցների և Համալսարանի, հասկանալի լինէր ընթերցողներին և մի և նոյն ժամանակը գրաւող և դաստիարակող ընդհանրապէս:

Շատ օրինակներ ունինք մեր աչքի առաջև, որ մեծամեծ աշխատութիւնք, այո, քրտինքով գլուխ բերած, Ազգին ամենևին օգուտ չեն բերել, ինչպէս են բարձրագոյն ուսումների հրահանգութիւնքը. յանկարծ, մինչ ոչ Դպրոցներ, ոչ Ճեմարան և ոչ Համալսարան ունէինք, Թարգմա-

նել և տպել «Ուսումն նաւուղղութեան» այս անելով, մեք չունիմ միայն այս գործը պախարակել կամ սորա անուղղ լինելը յայտնել, այլ այսպէս շատերը կան, և ոչ միայն շատ կան, այլ կարելի է ասել, թէ մեր մատենագրութեան մեծ մասը, այսպիսի բաներից է բաղկացած: Ո՞վ է դոցա կարդացողը և հասկացողը, և ո՞ւր է այդ գրքերի հանդէսը: Այո, եթէ ունեցել էինք պատշաճաւոր ուսումնարաններ, եթէ գիտութեան սանդուղքի համար ունեցել էինք մի ամուր քարից պատուանդան, որի վերայ աներկիւղ կարելի էր սանդուղքը ամրացնել, այն ժամանակ կարելի էր և աւելի վեր բարձրանալ. իսկ մեք ոչ եթէ օրինաւոր պատուանդան, այլ և առանց մի ոտք կոխելու տեղ ունենալու, կամենու-մենք օդի վերայ սանդուղք ամրացնել և նորա վերայով բարձրանալ: Այդպիսի բաներ երազում միայն կարող են կատարվել, իսկ արթնութեան մէջ, ոչ երբէք:

Քանի որ մեր մատենագրական գործունէութիւնը փակ-ված է այն նեղսիրտ և դարաւոր հնութեան սահմանի մէջ, քանի որ տասն և ինն դարու հեղինակքը չորրորդ և հինգ-երորդ դարու լեզուով խօսելով, ստիպումեն ժողովրդին ես մոռանալ XIX երրորդ դարը, մոռանալ շրջապատող հանգամանքները և յետ գնալ հեռանալ մինչև V դարը, ես իմ կողմից կարելի է մեղանչումեմ.... կատարեալ իրաւունք կը տամ ժողովրդի անգրասիրութեանը. պատճառ, թէ և հեղինակները ինքեանք գրելու ժամանակ վերանումեն մինչև V դարը, բայց ժողովուրդը չէ կարող նոյնպէս գնալ V դարը, մեր պատուելի XIX երրորդ դարու հե-ղինակութիւնքը կարդալու: Նա պինդ կապած է ժամանակի շղթաներով. ժամանակը վազումէ յառաջ. ուրեմն և ժո-ղովուրդը պիտոյ է վազէ. այս տեղ նա միջոց չունի, թէ և ցանկանար, յետ դառնալ այնքան հեռի, տասն և չորս դարու ճանապարհ. ժողովուրդը ուղեկից է ժամանակին և մնացել է և մնումէ նորա ազդեցութեան տակ. պատուելի

հեղինակները բացառութիւն կամենալով լինել հասարակաց օրէնքից մնացել են և այժմ ևս ամենայն ջանք գործ են դնում մնալ V երրորդ դարումը և ամենևին ցած չգալ այս դարուցը, ուրեմն ի՞նչպէս պիտոյ է սոքա միմեանց հասկանան: Զ'գիտեմ ի՞նչ գերբնական զօրութիւն է հարկաւոր, որ տասն և չորս դարու խորոցը, որ այնքան մեծամարմին ընկած էր V և XIX դարերի մէջ, ճեղքէր և հասանէր ժողովրդին:

Տեղեք չունինք ամենևին մեր ժողովրդի անգրասիրութեան վերայ զարմանալու. պատճառ, մեր մատենագրութիւնը մինչև այսօր Եկեղեցական մատենագրութիւն է, միջին դարերի դպրոցական մատենագրութիւն, եթէ այս անունը ևս կարելի էր տալ. չկայ նորա մէջ կեանք և կենդանութիւն, այլ սկզբից մինչև այսօր մի վհատեցուցիչ միօրինակութիւն: Եւ դնենք թէ մի հայ մարդ առնուր իւր ձեռքը հին լեզուով շարադրած մի գիրք (ի հարկ է հայերէն) և սկսէր չոր չոր կարդալ այնքան, մինչև որ անգիր ուսանէր միանգամայն կարդացածը, թէպէտ այս մի մեքենական սարսափելի տանջանք է, բայց ի՞նչ օգուտ կարող էր քաղել դորանից. ո՛չինչ, և Աստուած վկայ է ո՛չինչ. մարդկային մարմինը երբէք չէ կարող սնանել այնպիսի կերակրից, որ ինչ յատկութեններով մտանումէր բերանը, նոյն յատկութեններով դուրս գար որովայնից առանց մարսվելու և արիւն դառնալու. պատճառ, մարմինը իւր շինուածքի համար նիւթ չստանալով այնպիսի կերակրից անտարակոյս կը թուլանար և յետոյ կը քանդվէր ևս. հոգու համար մի այսպիսի կերակուր է չհասկացած բան կարդալը:

Թոյլ տանք, թէ կարդացածի լեզուն ևս հասկանար, բայց մի բան կարդալու ժամանակ բառերի լոկ նշանակութիւնը հասկանալ, չէ իմացվում բանի զօրութիւնը հասկանալ, ուրեմն ի՞նչ կարող էր գտանել այն տեղ, որ և մտքի կողմից հասկանալի լինէր նորան և գրաւիչ: Աստուծա-

կան բաները հասարակ ժողովրդի համար չեն․ նա չէ կարող տանել նոցա ճշդութեանը, նա չէ ուսել այդ առարկաները․ իսկ մեր միջումը եթէ կան ևս նորախոս մատեանք, նոցա բովանդակութիւնքը մեծ մասով ուսումնական են, չեմ ասում այս տեղ նոցա պակասութիւնքը, թէ լեզուի և թէ կարծիքների կողմից․ վերջինները շատ տեղ դարերով յետ են մնացած այժմեան ժամանակներից։

Եւ առ հասարակ մեր մատենագրութեան մէջ ի՞նչ գրքեր կան․ Սուրբ գիրք, որ դժբաղդաբար հասկանում ևս չէ ժողովուրդը, թարգմանչաց իւրեանց սեպհական գրուածքը, զոր օրինակ Մովսէս Խորենացի, Եղիշէ վարդապետ, Կորիւն, Ղազար փարպեցի և որ սոցա կարգումը են․ բայց քանի՞ մարդիկ կային որ համ էին տեսանում սորանցից․ ասածիս անհակառակելի վկայ այն տխուր ճշմարտութիւնն է, որ Հայերը օտարի լեզուով կարդումեն իւրեանց սեպհական հեղինակի գործը։ Բաց ի սորանցից ի՞նչ ունինք ժողովրդի մէջ․ մի քանի աննպատակ և անտեղի գրքեր գերապատիւ Մխիթարեանց շնորհքով լոյս հանած․ յետոյ, հրահանգ քրիստոնէական վարդապետութեան․ յետոյ, դարձեալ հրահանգ, դարձեալ հրահանգ, տասը քսան անգամ մի և նոյն բանը զանազան կերպարանափոխութենով։ Ինչի՞ եմ մոռանում քերականութիւնները, որ զանազանվումեն մինը միւսից շատ անգամ նորանով, որ մինը տասը հոլով է ընդունում, միւսը իննը, միւսը վեց, իսկ միւսի հոլովների կարգը այլ է բոլորովին։

Այսպէս ահա մեր դպրութեան մէջ չ՛կայ ոչինչ նորութիւն․ մի և նոյն բաները կրկնվումեն ամենայն օր, չեմ ասում օրացոյցների համար, որ միշտ նոր են տպվում զանազան տեղերում, որոնց մի քանիքը եղանակներն են գուշակում, միւսը արիւն թողնելու համար չար ու բարի օրերն է ցոյց տալիս․ ճշմարիտ է և չեմ ուրանում, որ էֆի-մերոտէ ևս պակաս չէ, այն հրաշալի գիրքը, որ մեր ժողո-

վուրդը սիրումէ, որի մէջ գրված են ամենայն տարի աշխարհի երեսին պատահելու գործերը, արեգակի և լուսնի խաւարումը իւրեանց դուշակութեններով, արագիլի գնալը ևայլն ևայլն: Տխուր մատենագրութիւն! Ու ինչպէս կարելի է պահանջել, որ ժողովուրդը ընթացք տայ այսպիսի մատենագրութեան, ընդունի նորան սիրով սեղանով:

Բնական աշխարհի մէջ ոչինչ բան չ'կայ, ոչինչ բան չէ կատարվում առանց խորհրդի. հեղինակները ևս, մնալով այս հասարակաց բնութեան օրէնքի տակ, ամենայն բան գրելու ժամանակ պիտոյ է իւրեանց խորհուրդը ունենան, և այս խորհուրդը պիտոյ է կարելի բան լինի, այսինքն ժամանակի հանգամանքներին յարմար: Բայց ցաւելով եմ խոստովանում, որ մեր հին լեզուով խօսող հեղինակները պակաս են այս խորհրդից. մի այդպիսի հեղինակի սիրտ տուել է շարադրել կամ թարգմանել մի գիրք, նա կատարումէ իւր սրտի ցանկութիւնը. բայց ինչ խորհրդով, օգուտը ինչ է, ով է կարդացողը կամ հասկացողը, նա չէ մտածում. նա ցանկանումէ միայն, որ գրքի ճակատումը տպած լինի իւր անունը. և թէ փոքր ինչ ուսել է հնախօսել, Եղիշէի հետ հաւասար է իւր մտքումը. փարպեցին, շատ ցած է նորանից. և հետևումէ, որ ոճերի ամփոփութեան կողմից Խորենացուց ևս պակաս չ'մնայ. բայց ես կարծեմ աւելորդ ասացի. եթէ լատիներէն գրելու ժամանակ աշխատումեն ամենայն բառ այնպէս գործ ածել ինչպէս Կիկերոնն է գործածել, ինչ պատճառով հայերս ամբողջ ոճեր և դարձուածներ չէ պիտոյ դնենք մեր շարադրութեններին մէջ Խորենացուց և Յովհաննէս Կաթողիկոսից.... ինչ պատճառով հին լեզուի անգործածական բառերը և ոճերը անտես առնենք, որոնք հին ժամանակներումը տեղ տեղ երևումեն գործ ածված. առաւել անհասկանալի կը լինի մեր գրածը և կը փառաւորվի մեր անունը, կ'ասեն սա երևելի հայկաբան է...

Չեմ խղճահարվում այս խօսքերը ասելու ժամանակ.

պատճառ, կենդանի ճշմարտութիւն է, մէջ և դժբաղդաբար «Չայն բարբառոյ յանապատի»:

Դպրոցական աշխատութենով, որ մեր պատուելի հնաւէր հեղինակքը համարումեն, թէ կարելի էր մեծ ազդեցութիւն ունենալ ժողովրդի լուսաւորութեան վերայ, ահա հազար երեք հարիւր տարին լրացած, հազար չորս հարիւրն է գնում, որ ոչինչ չյառաջացաւ. և թէ Հայերի մէջ կան մարդիկ, այդ օտար դպրութենների շնորհն է. եթէ պատուելի հեղինակների ընթացքը այսպէս շարունակվի միշտ, ապա և Հայերի հոգեղէն կեանքը կը շարունակվի մի օրինակ ինչպէս եղել է և կայ և կը մնայ այնպէս, այսինքն հասարակ ժողովուրդը զուրկ լուսաւորութենից, իսկ բան ուսանել կամեցողը կարօտ օտարների շնորհին:

Այս ողբալի բանի պատճառը պարզ տեսանելի է ամենայն մարդու, եթէ միջին դարերի աբեղայական ակնոցները աչքերի վերայից հանած, նայեն ամենայն բանի վերայ Հերշէլի հեռադիտակով. այն ժամանակ կը տեսանեն անտարակոյս, որ Հայերը մինչև այժմ աշխարհական դպրութիւն չեն ունեցել. լաւ ու վատ եղել է և կայ աբեղայական դպրութիւն, ինչպէս վերևումը յիշեցինք. կը տեսանեն, որ սա մի կողմից իւր լեզուի հնութիւնը չփոխելով, միւս կողմից մի և նոյն բանը հարիւր անգամ գրելով օտարացուցել է ժողովուրդը իւրանից այնպէս, որ այժմ հին լեզուն մեր ժողովրդի համար եղել է Եգիպտոսի մեհենական անմատչելի լեզու: Անցան այն ժամանակները, գեղեցիկ խօսումէ Պարոն Պիսարևսկին [1] երբ համարումէին մարդիկ, թէ մի միայն քուրմի հանդերձով կարելի է մտանել գիտութենների աշտանակին. անցան այն ժամանակները, կրկնումեմ, երբ չափով ու կշռով տալիս էին ազգին իմաստութեան լոյսը և այն, ինչ ուղղութենով որ կամենումէին. զարմանալի է աշխար-

1) Общепонятная Физика. Изд. второе. 1854 г· Спб. стр. IV.

հիս փոփոխութիւնը. բայց առաւել զարմանալին այս է, որ այժմ ևս կան շատ մարդիկ, որ չեն հաւատում, թէ այս փոփոխութիւնը իրագործված է արդէն աշխարհի երեսին։

Ես ամենևին երկբայութիւն չունիմ այս փոփոխութեան վերայ. միայն այս եմ մտածում, թէ հազարաւոր տարինե-րով քնելուց յետոյ ո՞րքան աշխատութիւն պիտի մեր Ազգին Հայկական խօսքը վերակենցաղելու, քանի՞ սիրտ ու ձեռք նոր հայախօսութեան ամբարտակ յարուցանելու հնութեան աւե-րակների վերայ։ Այո՛, մեծ հանդէս կայ բանիմաց Հայերի առաջև, եթէ դոքա, հասկանալով իրաց կարգի փոփոխու-թիւնը, ցանկանային մշակել Հայկական անշէն անապատը և անմահացուցանէին իւրեանց անունը մշտնջենական արձան-ներով — աննախանձ աշխատութիւններով։

Բայց իմ այս ասելովը թող մեր սիրելի Ազգը չի-մանայ թէ Ազգի համար կայ չկայ, միայն ուսումնականքն են պարտական գործ կատարել, ո՛չ. Ազգային խօսքի տնտեսու-թեան մէջ ամենայն մարդ իւր վիճակի և կարողութեան յար-մար պիտոյ է գործակատար գտանվի. մի միայն հեղինակները ոչինչ չեն կարող անել։ Դնենք թէ գրեցին շատ բաներ. գրուածքը կարօտ են տպվելու. հեղինակը, տարիներով կեանք մաշելուց յետոյ իւր աշխատութեան վերայ, պարտական չէ հոգալ և նորա տպագրութիւնը, նա յանցաւոր չէղաւ, որ աշխատեց. նորա աշխատութիւնը պիտոյ է դառնայ հասա-րակաց ժառանգութիւն, թէ և դժբաղդաբար այսպէս է եղել մեր հեղինակների գործակատարութիւնը մինչև այսօր։ Ազ-գային եղբարք պարտական են նոյնպէս քաջալերել իւրեանց համար աշխատողքը, սրբել նոցա ճակատի քրտինքը և բարի և Ազգաշէն գործերով օրինակ դառնալ նոյնպէս իւրեանց ընկերներին։

Ես Ազգային խօսքի շինութեան մասին խօսակցութիւնս կնքումեմ սորանով, թէ մինչև նոր լեզուն չ՛լինի առ. հասարակ մատենագրական լեզու, մինչև գրուածների իմաստը ըմբռնելը

և հասկանալի չլինի ժողովրդին, մինչև Ազգը խոհեմ ճանապարհներով հոգս չառնէ սեպհական Ազգային դպրոցների մասին և վերջապէս, որ ամենից հարկաւորն է, մինչև մեր պատուելի հեղինակները դպրոցական փառքը յետ դնելով Ազգի համար չաշխատէին առողջամիտ կերպով, և միւս կողմից Ազգի կարողքը օգնութիւն չառնէին նորանց, սուտ է ամենայն լուսաւորութիւն. և առանց ամենայն գործունէութեան սպասելը մի լուսաւորող ժամանակի, ոչ այլ ինչ է, եթէ ոչ, անձնախաբէութիւն։

Կնքելով իմ խօսակցութիւնը Հայկական մատենագրութեան վերայ, արժան եմ համարում ծանօթութիւն տալ այս տեղ մի քանի բաների մասին, որ վերաբերվում են ներկայ աշխատութեանս։

Մեր Ազգայիններից, որ ծանօթ են Ֆրանսիարէն, Գերմաներէն և Ռուսերէն լեզուներին, արդէն կարդացած կը լինին «Թափառական Հրէայ» վիպասանութիւնը և ճանաչած նորա ազնիւ և սուրբ խորհուրդը, ուրեմն և արժանաւորութիւնը. վասնորոյ աւելորդ համարելով այս մասին երկար բարակ քարոզ կարդալ, պարտականութիւն եմ համարում միայն այսքան ասել, որ, եթէ մեր Մխիթարեան գերապատիւ Հարք չեն կամեցել այս բանը հայերէն թարգմանել և տպել, պատճառը կարօտութիւն չունի մեկնութեան։ Եւժէն Սիւ, մարդկութեան բարեկամ Պարոնը, այս աշխատութեան մէջ նկարագրումէ Յիսուսեան աբեղաների անքրիստոնեայ և բարբարոս վարք ու բարքը. Մխիթարեան գերապատիւ Հարք ինքեանք ևս կրօնակից և ջատագով լինելով Յիսուսեաններին [1] հաւանական և շատ բնական է, որ նոցա ձեռքը չէր համարձակվելու այսպիսի գործ կատարել, մանաւանդ որ Տէր Պապը նզովել է այս աշխատութեան հեղինակը և կարդացողը, ու-

---

1) Տես Փափազեանի Եկեղեցական պատմութեան (տպած. 1848, Վիեննա.) 923 երեսից մինչև 932 երեսը։

րեմն, և Թարգմանողը: Իսկ ճշմարիտը պիտոյ է խոստովանել. Ի՞նչպէս կարելի է, որ մի Պապական աբեղայ հակառակվի այնպիսի մի մարդու, որ Աստուծոյ փոխանորդ էր, արքայութեան դուռը բացող և փակող.... (մի՞թէ): Գո՛հ եմ Աստուծուց, որ Պապական չլինելով ունիմ ազատութիւն գրել և Թարգմանել այն բանը, որ ջատագով էր ճշմարտութեան, որ պախարակումէր Քրիստոսի օրէնքին ընդդէմ գործերը և նկարագրումէր ամենայն ինչ մաքուր խղճմտանքով. և այս երկար աշխատութեան մէջ, ամենայն քայլափոխումն նոր քաջալերութիւն եմ զգացել, որովհետև պիտոյ է բարձրացնել ճշմարտութեան դրօշակը:

Իմաստուն և բանագէտ մարդերի համար, բացատրութեան կարօտ չէ իմ նպատակը. իսկ մեր միւս եղբայրակիցներին, որ կէս մի բաղդի անգթանալովը, կէս մի իւրեանց մեղքովը հեռի են մնացել լուսաւորութեան ճրագից, պիտոյ է ասել, թէ այս վիպասանութիւնը, այս հրաշալի գործը, առանց ամենևին կողմնապահութեան նկարագրելով Յիսուսեանների ընթացքը դէպ ի Բեննըպօնի ժառանգները, կարող էր ըմբռնելի կերպով հասկացուցանել մեր Հայերին, թէ ինչպէս էր Յիսուսեան Կարգի ուղղութիւնը որ Պապականութեան հարազատ զաւակներն էին: Այնքան ևս աւելորդ էր ասել, եթէ մեր Ազգի բոլոր որդիքը ձեռնհաս լինէին քննել իմաստասիրաբար, թէ ի՞նչ է Պապականութիւնը առ հասարակ. քննել նորա պատմութիւնը, և նորանից կարողանալ դուրս բերել մի անկողմնապահ և ճշմարիտ եզրակացութիւն: Բայց ափսոս, որ այս չ՛կայ ընդհանուրի մէջ. թէպէտ և մասնաւոր մարդերում Քրիստոսի կենարար Աւետարանը, ուսուցանելով անհակառակելի ճշմարտութիւնը, տնկելով Աստուածային հոգու խաղաղութիւնը, ներգործել է, և բերել է այն պտուղը, որի մասին ինքը Քրիստոս աղաչումէր «Սուրբ արա զնոսա ճշմարտութեամբ քով, զի քո բանդ ճշմարտութիւն է»: 1).

1) Յովհ. ԺԷ գլ. 17 համար:

Այո, եթէ այսպէս լինէր և ընդհանուրի համար, մեք երանելի մարդիկ էինք. բայց ի՞նչպէս լինէր, կայի՞ն արդեօք լինելութեան պատճառները, ո՞ւր են Ազգային դպրոցները, ո՞ւր են Ազգի իշխանների այս մասին հոգաբարձութիւնքը։ Եւ այս է պատճառը, որ Պարոն Փափազեանի նման մարդիկ աշխատութիւն են կրում մեր համար եկեղեցական պատմութիւն գրելու. Հայոց ազգը «չէն տուն հարս կը գնայ» Փափազեանից ուսանելով իւր եկեղեցու պատմութիւնը։ Չեմ ասում դեռ ևս այն, որ աբեղայական խուցը, չէ և չէ այն դիտանոցը, որ տեղից կարելի լինէր ազատ տեսողութենով նկատել աշխարհի իրողութիւնքը, և նկարագրել այնպէս, ինչպէս որ կային։

Պարոն Փափազեանը, իւր 1848 Թուականում տպած եկեղեցական պատմութեան մէջ, սկսած 923 երեսից մինչև 932 երեսը, ախոյեան դուրս գալով Յիսուսեան Կարգի հակառակորդների ընդդէմ, ամենայն ջանք գործ է դնում, Յիսուսեանների խաւարը, լոյս ապացուցանել, իսկ հակառակորդների լոյսը, խաւար։ Ցաւումեմ, որ պատուելի հեղինակը, չէ կարողացել գոնէ մտաւորապէս ծածկել իւր համակրութիւնը Յիսուսեանց հետ, և համարելով, թէ աշխարհքումը բաց ի Մխիթարեան միաբանութենից այլ մարդիկ չկային, շատ դրական և վճռական կերպով հանդէս է դուրս եկել Հայերի մէջ։ Այս բանը ինձ պատճառ տուեց, գերապատիւ Եւժէն Սիւ հեղինակի վիպասանութեան սկզբումը, դնել Յիսուսեան Կարգի պատմութիւնը, քաղելով արդարամիտ և ճշմարտասէր հեղինակների գործերից. և այս նախ, որ իմ ընթերցողքը չհամարեն, թէ Պարոն Սիւ՛ն ոյժ տալով իւր մտքի թևերին, և ունենալով զանազան յարաբերութիւնք դէպ ի Յիսուսեանները, կերպարանագործել է Րոդէնի, դ՛Էգրինիեի, Գրիբուայի, և այլ մարդերի մէջ զանազան բնաւորութիւնք. այլ ուսանելով Յիսուսեան Կարգի պատմութիւնը, ցրւեն ամենայն ստորաքարշ կարծիք Եւժէն Սիւ Պարոնի մասին։

Երկրորդ, Պարոն Փափազեանը կամ, թէ նա ինքը կենդանի չէ, նորա եղբայրակիցքը կարդալով այս գրուածը այքան միայն հասկանան, թէ ինչ որ իւրեանք գրումեն այն գլխաւորութեամբ, որ Հայոց ազգը իւրեանց գրածը ընդունէ հալած իւղի տեղ, Ազգը ունի կարողութիւն, ոչ թէ միայն ճանաչել այս խարդախութիւնը, որ գիտենք, թէ ինչ աղբիւրից է.... այլ և քննել, և քննելուց յետոյ անաչառ հոգով դատել և դատապարտել սուտը, և ստութեան հեղինակը:

Անցան այն ժամանակները երբ Պապական իշխանութիւնը կարգումէր խուզարկու ատեան (inquisitio), կատարումէր զարհուրելի տօներ (auto-da-fe), զոհելով մարդկութեան անբաւ անդամները: Ժամանակը, աշխարհի լուսաւորութիւնը, ինքեանք կարգել են այժմ Պապական գործերի վերայ քննութեան Ատեան. այն մարդիկը, որ երբեմն ինկվիզիտորների ձեռքով դատապարտվումէին դէպ ի բանդ, դէպ ի հուր, դէպ ի սուր, նոյն մարդիկը կրկնումեմ, մի անփախչելի մտաւորական ինկվիզիցիօ են կարգել, և դէպ ի յաւիտենական ամօթ դատապարտումեն Պապականութեան անքրիստոնեայ գործերը: Զարմանալին այս է, որ Մխիթարեան գերապատիւ Հարք ինքեանք միշտ նստելով կանգնելով մի քանի անուսումն և ռամիկ Հայերի հետ, և շօշափելով նոցա տգիտութիւնը, կարծումեն, թէ մեր բոլոր Ազգը առանց բացառութեան այդպիսի մարդերից է բաղկացած. և թէ, ինչպէս այն խեղճ մարդիկը չեն որոշում թոյնը, որ խառնումեն Մխիթարեանք իւրեանց գրուածների մէջ, նոյնպէս բոլոր ազգը թոյնը կ՚ընդունէ շաքարի տեղ, խնդրենք ներողութիւն. այդպէս չէ, Հայերի համար ևս մի փոքր փոխվել է աշխարհը:

Ճշմարիտ է. և ո՞վ կարող էր ուրանալ, մեր Ազգի մէջ, կան շատ և շատ անուսումն մարդիկ ինչպէս նաև պատուելի Մխիթարեանց մէջ, որոնց շատերին ես ինքս պատահել եմ, որոնք բացի Rosarium և Pater noster աղօթելուց այլ բան չգիտէին, բայց մի՞թէ չկան մեր Ազգի մէջ

նաև լուսաւոր մարդիկ, որոնց դաստիարակի առաջև պատճառ ունէին կարմրել և ամաչել հրապարակական ստախօսքը . . . այո կան, և շատ կան այժմ կրկնումեմ, և սրտիս երախտագիտութենից դէպ ի Աստուած, ստիպվումեմ ասել հանապազ, «փառք քեզ տէր Աստուած, որ խնայելով մարդկութեան տկարութեանը, ստեղծել ես նոյնպէս հնարներ, որոնցով կարելի էր դարման տանել ախտացածներին»:

Իմ աշխատութեան բովանդակութեան մասին ես այսքան ծանօթութիւն տալուց յետոյ, մի երկու խօսք պատշաճ եմ համարում ասել այն մասին, թէ ես իմ այս աշխատութեան մէջ գործ դրել եմ ամենայն ջանք, որ իմ գրածը պարզ լինի և հասկանալի և որքան կարելի է մօտ ժողովրդի կենդանի լեզուին. բայց արդեօք հասե՞լ եմ նպատակիս, այդ խնդիրը, իմ գործ չէ լուծանել:

Նոր լեզուն դեռ ես մանուկ է. դեռ շատ և շատ դժուարութիւնք կան այս լեզուով գեղեցիկ և յաջող խօսելու. այդ կըհոգայ ժամանակը, երբ նոր լեզուն հեղինակների գրչի տակ ճախարակվելով, կ՚ըստանայ իւր այրական հասակը. մանաւանդ որ այժմ դեռ շատ բաներ կան, որոնց մասին Հայերը ամենևին գաղափար ես չունենալով, չունին հետևաբար և այն անօթները, այսինքն այն ոճերը և դարձուածները, այո շատ անգամ և բառերը, որոնց մէջ կարելի էր պարունակել նոր մտքերը, որ մինչև այժմ չ՚կային Հայերի մէջ:

Ես շատ լաւ գիտեմ, որ իմ խօսակցութեան ձևը, ունի պակասութիւններ, բայց ի՞նչ առնես, ամենայն մարդ իւր պէս կըխօսի, անհատութիւնը չէ կարելի ոչնչացուցանել: Իմ խորհուրդը այն չէ եղել, որ իմ գրածը ուրիշին օրինակ դառնայ. ես մի միայն ցանկացել եմ, որ այս վիպասանութիւնը և Յիսուսեան Կարգի պատմութիւնը Հայերի համար ես կենդանի լինի աշխարհի երեսին. — ես հասած եմ իմ նպատակիս:

Մ. Նալբանդեանց:

ՅԻՍՈՒՍԵԱՆՔ

ՅԻՍՈՒԻՍԵԱՆՔ

ՅՕԴՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

Այս յօդուածի մէջ պարունակուածն հետեւեալքը.

Իգնատիոս Լօյոլա.

Յիսուսեան կարգի ծագումը.

Տրիդենտեան ժողով.

Յիսուսեան կարգի ներքին կազմակերպութիւնը.

Յիսուսեանների աստիճանքը.

Կառավարութեան կերպը.

Յիսուսեան Դպրոցք.

ՅԻՍՈՒՍԵԱՆՔ

ՅՕԴՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

Բոլոր Աբեղայական կարգերից, որ երևել են աշխարհի երեսին և այժմ համարեա թէ անհետացել են, ոչ մինը չստացաւ պատմութեան մէջ այն ասպարէզը, ինչ որ ստացաւ Յիսուսեան կարգը: Նա հաստատվելով այն ժամանակ, երբ նախկին կարգերը արդէն անօգուտ և մինչև անգամ ծանրութիւն էին Պապական իշխանութեանը, որ ահի ու դողի մէջ էր Լուտերի Վերանորոգութենից, մի անսովոր արագութենով տարածվեցաւ բովանդակ աշխարհի երեսին. ստացաւ անչափ հարստութիւն և բոլոր Եւրոպայի գործերի վերայ ազդեցութիւն ունենալուց յետոյ, հիմնեց Պարագվայումը մի անկախ Տէրութիւն, որով իրագործեց իւր գաղափարը քաղաքական շինութեան մասին: Թէպէտ և այս գաղափարը ժողովրդի համար մի չոր և մեռեալ բան էր, բայց նոյն իսկ կարգի համար, հաստատ և շահաւէտ: Այս նշանաւոր կարգի յատկացած բնութիւնը այն էր, որ բոլոր ներկայ բաների կարգերի ընդդէմ, ինչպէս և լինէին սոքա, զրահաւորվի մի մշտնջենաւոր պատերազմի և խռովութեան հոգով:

Յիսուսականութիւնը, որ հակառակ էր Ֆրանսիայի Թագաւորական իշխանութեանը, Հենրիկոս երրորդի և Հենրիկոս չորրորդի ժամանակ. Անգլիայի Ազնուապետութեանը, Կարոլոս առաջինի և Յակոբ երկրորդի ժամանակ, Սպանիայի ինքնակալութեանը, Վենետ-

---

Ծանօթութիւն: Այս յօդուածի նիւթերը քաղված են հետևեալ շարադրութեններից: 1) Allgemeine Geschichte der Jesuiten von Peter Philipp Wolff, 2) Les Jésuites, par Michelet et Quinet (1843), 3) Résumé de l'histoire des Jésuites en France, par Leskine, 4) Constitution des Jésuites avec les déclarations.

կեան և Հօլլանդեան Հասարակապետութեններին, այս Ցիսուսականութիւնը, ծածկելով իւր դիտաւորութիւնը և խորհուրդը ազգասիրութեան և բարեպաշտութեան դիմակներով, վերջին ջանքը ու աշխատանքը գործ էր դնում, որ կարողանայ ձեռք ձգել բոլորի կառավարութեան սանձը, և հիմնել իւր Համաշխարհական Թագաւորութիւնը:

Զարմանալի էր Ցիսուսականութեան հնարները, որ գործ էր դնում իւր օգտի համար: Այս հնարների կարգումն են շատ դատապարտելի գործեր, որոնց մէջ մանաւանդ այն, որ ձեռք էին բարձրացնում Թագաւորների կեանքերի վերայ ինչպէս Հենրիկոս III ի և Հենրիկոս IV ի, Վիլհելմ — Օրանեանի, Լուդովիկոս XV ի, և այլն և այլն, բայց Աստուծոյ ողորմութիւնը հասանելով, հանգամանքների դժուարութիւնը արգելք եղաւ այս զարհուրելի գործերին, որպէս յառաջ խաղալուն նոյնպէս և աճելուն:

Լուդովիկոս XIV ի Թագաւորութիւնը Վերսայլեան Տէրութեան ճոխութենով, յաղթութեան և դպրութեան փառքերով, ցուցանումէր մի ամենակատար և ամենափառաւոր յաղթող ինքնակալութիւն. այլև գաղափար էր դարձել Եւրոպայի բոլոր ժամանակակից Տէրութեններին: Ցիսուսեանք այս բանը շատ լաւ հասկանալով, իւրեանց ներգործութեան համար ընտրեցին այլ ճանապարհ: Նոքա զանազան խորամանկութեններով խոստովանահայր դարձան բոլոր Եւրոպական Թագաւորներին, տիրապետեցին նոցա խղճի վերայ և այս ճանապարհով սկսեցին ներգործել, կարգի օգուտը ունենալով իւրեանց համար իբրև հասարակաց նպատակ. խափանեցին ժողովրդի մտաւոր աճեցականութիւնը և կենսական շարժողութիւնը, ինչպէս կը տեսանենք յետոյ մանրամասն: Բայց նոցա խորամանկութիւնը վերջապէս յայտնվեցաւ և նոքա աքսորվեցան և հալածվեցան բոլոր Եւրոպական Թագաւորութեններից: Պապերը ինքեանք ևս տեսան վերջապէս, թէ Ցիսուսականների ջերմեռանդութիւնը դէպ ի Հռովմէական գահը էր մի միայն կեղծաւորութիւն և խաբեբայութիւն, որի տակ Թագուցանում էին իւրեանց պատուասիրական մտածութիւնքը և խորհուրդը:

Ինչ ժամանակ նոքա առաքելութեան պատճառով գնում էին հեռաւոր աշխարհներ, աղճատումէին մինչև անգամ և Քրիստոնէական հաւատի ճշմարտութիւնքը, Թագուցանումէին Փրկչի կրած չարչարանքները և նորա աշխարհի երեսին ունեցած աղքատ ու ապաշուք կեանքը. սրբացնումէին ստրկութիւնը և հերձուածը, որպէս զի կարողանան իւրեանց կողմը շրջել Արևելքի հզօր իշխանները:

Կոնդակ կոնդակի քամակից դուրս էին գալիս ընդդէմ այս քարոզիչներին, որ աղճատումէին Քրիստոնէական հաւատի հոգին, բայց

ծիլ էր պապական կոնդակներին ականջ դնողը, թէպէտև նոցա անդամները, որոնք Պապի երեսն էին տեսանում, լիզում էին նորա ոտքերը և կեղծաւորաբար ցոյց էին տալիս, թէ ինքեանք ոչինչ այլ բան չեն եթէ ոչ Պապի արբանեակներ և Հռովմէական եկեղեցու հարազատ զաւակներ . . . .

Կլեմենդ XIV Պապը հասկանալով Յիսուսեանների հոգին և խաբեբայական ուղղութիւնը, մանաւանդ աչքի առաջև ունենալով նոցա ապստամբութիւնը պապական հրամաններին և կոնդակներին ընդ դէմ, 1773 թուականին յուլիսի 21 ին դուրս տուեց մի կոնդակ, որով և ջնջեց այս կարգը դատապարտելով նորան որպէս վնասակար պապական դաւանութեան: Բայց Յիսուսեանների Մաքիավելլական հոգին չէր կարելի ջնջել. նա վաղուց ահա՛ մտել էր աշխարհի գործերի մէջ:

Պիոս VII ը, որին որսացել էին Յիսուսեանք իւրեանց սատանայական խարդախութիւններովը, 1814 թուականին օգոստոսի 7 ին լուծեց արժանայիշատակ Կլեմենդ XIV ի բանադրանքը Յիսուսեան կարգի վերայից, իւր անպարծանք կոնդակովը որ յայտնի է անունով, Sollicitudo omnium Ecclesiarum, որով և վերականգնեց Յիսուսեան ապիրատ կարգը հին և նոր աշխարհների մէջ: Բայց կործանուած կարգի գործերը և ուղղութիւնը կենդանի էին աշխարհի երեսին: Պիոս VII, ֆիզիկական կենդանութիւն պարգևելով մահով դատապարտուած կարգին, չէր կարող ջնջել նորա անցեալ ապիրատութիւնների յիշատակը Ազգերի սրտից, որ ամենայն րոպէ սպանում էին նորան բարոյապէս. ոչինչ տեղում չ'ընդունեցին այս կարգը, և նորա անդամների առաջև փակած մնացին աշխարհների դուները. բայց եթէ մի քանի տեղերում ինչպէս Ռուսսիա և Պրուսսիա ընդունեցին նորանց, շուտով զղջալով իւրեանց մարդասիրութեան վերայ, որ ցոյց էին տուել անարժան մարդերի, դարձեալ հալածեցին, ինչպէս մանրամասն կը տեսանենք այս մասին խօսելու ժամանակ:

Զարմանալի է Յիսուսեանների ժրութիւնը և հնարագիտութիւնը: Թէպէտ և հասան նորանց ընդհանուր արհամարհութիւնք և հալածանք, այսու ամենայնիւ նոքա չեն վհատում. բաց ի շատ սակաւ և այն թոյլ Յիսուսեաններից, որոնք յօժարեցան փոխել իւրեանց հանդերձը և կեանքի եղանակ որոշել, միւսքը որ մանաւանդ հոգի ունէին, յուսալով իւրեանց խարդախութեան և հնարագիտութեան վերայ, մնումէին կամակորված: Նոքա իսկոյն յարմարվելով ժամանակի հանգամանքներին, փոխեցին իւրեանց ուղղութիւնը, սկսեցին աշխատել, որ հասանեն հոգևոր բարձր պաշտօնների, որպէս զի կարողանան մի կերպով ներգործել ժողովրդի վերայ: Ինչպէս խօսել եմ յառաջաբանութեանս մէջ, ես հարկաւոր համարեցի մեր Ազգա-

յինների ուշադրութիւնը դարձուցանել այս կարգի վերայ, որ յառաջ քան թէ «Թափառական Հրէայ» վիպասանութեան կարդալը, կարողանան ծանօթութիւն ունենալ այս կարգի մասին, ճանաչել և շօշափել նորա հոգին։

Այս խորհրդով, ես ցոյց կը տամ կարգի ծագումը և արագ տարածութիւնը, կը նկարագրեմ նորա ներքին կազմութիւնը, որի մէջ երևումէ նորա հոգին և որից բղխումէ նորա յարատևութիւնը, այն ժամանակ, երբ ինքը Պապականութիւնը կործանվումէր աչա. ցոյց կը տամ յետոյ, թէ ինչ կերպով ներգործումէր նա նոր երկիրների մէջ, ուր քաղաքականութիւն կամ բոլորովին չ՛կար, կամ եթէ կար, այն ևս իւր սկզբնական կոշտ ձևով. ցոյց կը տամ վերջապէս, թէ ինչպէս պատերազմեցաւ նա հզօր քաղաքականութեան հետ, որ արդէն պատմական ընթացքով ստացել էր իւր կատարելութիւնը։ Հզօր քաղաքականութիւն ասելով իմանում եմ Ֆրանսիայն, և դիտաւորութիւն ունիմ խօսել միայն Ֆրանսիայի մասին այն պատճառով, որ այս ազգի հոգին մանաւանդ արգելք լինելով Յիսուսեաններին առհասարակ, Յիսուսեանները քանի՞ անգամ պիտոյէ փոխէին իւրեանց ներգործութեան ձևը և ուղղութիւնը։

Եթէ ես յանձն առնուի գրել Յիսուսեանների մասին այնպէս, որ ոչինչ բան դուրս չ՛մնար ինչ որ պատմութիւնը մեզ հասուցել է, ապա հարկ էր ինձ մի Աստուածաշնչի մեծութեանով գիրք գրել, որի վերայ տարիներ պիտոյ էր գործ դնել. այդ իմ կողմից, իմ այժմեան հանգամանքների մէջ անկարելի էր. ես իմ գործը կատարեցի, ժամանակի սակաւութեանը յարմարվելով. առաջին անգամը այսքան ծանօթութիւն բաւական համարելով, չեմ հրաժարվում այլ ևս ուրիշ անգամ նոցա վերայ խօսելուց։

Իգնատիոս Լոյոլա, Յիսուսեան կարգի նախահայրը, ծնեցաւ **1491** թուականին Սպանիայի Գվիպուսկօյա գաւառում Լոյոլա ամրոցի մէջ։ Նորա ծնողքը թէպէտև երևելի մարդիկ էին, բայց ո՛չ հարուստ։ Իգնատիոսը իւր տասն տարեկան հասակում գտնվում էր ֆերդինանդի և Իզաբելլայի պալատում իբրև մանկլաւիկ։ Պալատի ճոխութեան և շռայլութեան մէջ, մանաւանդ անդադար ամբոխմունքների և աղաղակի պատճառով, նա չ՛կարողացաւ ստանալ մի հիմնաւոր կրթութիւն. հազիւ թէ կարողացաւ գրել և ընթեռնուլ ուսանել, ինչպէս վկայումէ Պետրոս Րիբադանեյրը որ ժամանակակից էր նորան և անդամ Իգնատիոսի Յիսուսեան կարգի։

Իգնատիոսը պատանեկութեան հասակում շատ գեղեցիկ էր և անչափ կնամոլ. բայց այս միակերպ կեանքը, թէպէտ և պերճ պալատի ճոխութենով, չկարողացաւ յագեցուցանել նորա վառ երևակայութիւնը և եռանդուն գործունէութիւնը. վասնորոյ թողեց նա այս կեանքը և նուիրեց իւր անձը զինուորական ծառայութեան:

1521 թուականին Ֆրանսիացիք պաշարեցին Պամպելունա քաղաքը. պաշարված զօրքը և առ հասարակ բնակիչքը, անյաջող հակառակամարտութենից յետոյ, արդէն վճռել էին տալ քաղաքը թշնամու ձեռքը. մի միայն Իգնատիոսը, որ Պամպելունայի զօրքի մէջ կապիտանի պաշտօն ունէր, ընդդիմանումէր այս վճռին և առաջնորդ դառնալով մի քանի հարիւր կորիճ զինուորների վերջին յուսահատութեան մէջ պաշտպանումէր քաղաքը: Բայց ոտքերի վերայ վէրք ստանալով ձախումը, պարսպից արձակված քարից, իսկ աջումը հրացէնքի գնտակից, վայր ընկաւ մեռելի նման. Նորա այս վիրաւորութիւնը դատակնիք եղաւ պաշարեալներին. Ֆրանսիացիք մի քանի օրից յետոյ քաղաքը առին: Իգնատիոսը գտնվումէր թշնամիների մեծահոգի խնամածութեան տակ, և վերջապէս իւր ցանկութեանը համաձայն ուղարկվեցաւ նոյն թշնամիների ձեռքով իւր հայրենի ամրոցը: Իգնատիոսի վէրքերը բժշկելու համար գանչված բժիշկները ասացին, թէ հարկաւոր է անպատճառ հանել ոտքի փշրված ոսկերքը. և մինչ կատարումէին այս սոսկալի վիրաբուժութիւնը, նորա մօտ գտնված մարդիկը, ինչպէս պատմիչները վկայումեն, չտեսան նորա երեսում երկիւղի կամ չարչարանքի նշան: Երկար ու ձիգ հարինքից յետոյ, որ հազիւ կարողացաւ տանել, Իգնատիոսի վէրքը բժշկվեցան, միայն մի ոտքը կարճ մնաց միւսից և ծունկի տակում գոյացաւ մի աւելորդ մսի մասն (tyloma), որ մանաւանդ անհանգստութիւն էր տալիս նորան: Քաջասիրտ Իգնատիոսը հրամայեց սղոցել այս մասը և երկար ժամանակ կապումէր ոտքի վերայ մի երկաթի մեքենայ, որ կամաց կամաց ձգելով երկարացնումէր նորա ոտքը, թէ և այսպիսի բժշկութիւնը մեծ ցաւ էր պատճառում նորան: Ցաւի մեծը այն էր, որ այս բաները օգուտ չտուեցին և նա մինչև իւր մահը կաղ մնաց: Իգնատիոսը, իւր ծանր ու դանդաղ բժշկութեան ժամանակ, անգործութենից ձանձրանալով խնդրեց կարդալու համար Ասպետական վիպասանութիւններ, բայց այն տեղ չկար ոչինչ աշխարհական գիրք. Նորան տուեցին Պապական վանքերի աւանդութիւնքը: Աշխոյժ Իգնատիոսը այս գիրքը կարդալով զգաց իւր մէջ մի այլ ընդունակութիւն, մի բոլորովին նոր կոչումն: Նորա երևակայութիւնը, որ դեռ չէր ամրացած սաստիկ հարինքից յետոյ, պատրաստ էր ընդունել ամենայն հրաշալի բան, վասնորոյ և չկարողացաւ ընդդիմանալ

այն տպաւորութեանը, որ այս գիրքը ազդումէր։ Ֆերդինանդի և Իզաբելլայի փառաւոր մանկլաւիկը, քաջ կապիտանը յանկարծ լինումէ անապատական և հիմնադիր աբեղայական կարգի։ Իգնատիոսի վարքագրիչքը ասումեն, թէ երբ նա դեռ մտատանջութեան մէջ էր, ընտրէ՞ այս ասպարէզը թէ ո՛չ, յանկարծ երևեցաւ նորան Աստուածամայրը. ծունկ չոքած Աստուածածնի պատկերի առաջև երդում կերաւ իւր անձը, իւր ծառայութիւնը նուիրել Աստուածածնին և նորա անունի վերայ պատերազմիլ անհաւատների հետ, որոնց և քարոզել քրիստոնէութիւն։ Այս միջոցին վերկացաւ մի անսովոր աղաղակ, Իգնատիոսի սենեակի պատուհանները դուրս ընկան, Սատանայն, որ մինչև այժմ կապել էր նորան աշխարհի հետ, թողեց յաւիտեան։

Իգնատիոսի առաջին խորհուրդը և նպատակը Երուսալէմ ճանապարհորդել եղաւ սուրբ տեղերին երկրպագելու. բայց որովհետև նորա վէրքը բոլորովին առողջացած չէր, վասնորոյ նստաւ ձիու վերայ, կապեց թամքին գոտին, ճանապարհի պարկը, հողաթափը, մի խօսքով ինչ որ կը վայելէր ուխտաւորի ունենալ, և այս կերպով սկսեց իւր ճանապարհորդութիւնը։ Ճանապարհի վերայ պատահեց նորան մի Մավր, որի հետ սա կրօնական վէճ բաց արեց. Մավրը, չ՚ընդունելով Իգնատիոսի ասածները, թողեց նորան ճանապարհի վերայ և հեռացաւ։ Իգնատիոսը բարկանալով այս բանի վերայ զգաց իւր մէջ մի անզովանալի ծարաւ հեռացած ճանապարհորդը սպանելու. վասնորոյ թողեց ձեռքիցը ձիու սանձը այն խորհրդով, որ թէ հաճոյ և ընդունելի է սուրբ կուսին անհաւատի պատժվիլը, ձին կ՚երթայ այնպիսի ճանապարհով, որ անպատճառ կը հանդիպէր Մավրին։ Բախտը յաջողեց և Մավրը ոչինչ տեղում նորան չ՚հանդիպեց։ Իգնատիոսը հասաւ շուտով Մանրեզ քաղաքը, որ հռչակաւոր էր իւր վանքովը և Աստուածամօր հրաշագործ պատկերովը։ Այս տեղ Իգնատիոսը արձակեց իւր ծառայքը, գնեց մի աբեղայական հաստ մախրագոյն վերարկու և խոստովանվելով մի աբեղայի յայտնեց իւր դիտաւորութիւնը, թէ կամենումէր Քրիստոսի գերեզմանի մօտ կատարել իւր ապաշխարութիւնը։ Աբեղայն գովեց այս դիտաւորութիւնը։ Իգնատիոսը քանի օր քանի գիշեր ծունկի վերայ մնալով Աստուածածնի պատկերի առաջև կախեց իւր գլխարկը և սուրը սեղանի վերայ, և ուխտաւորի հանդերձով ճանապարհ ընկաւ ոտքով դէպ ի Բարսելոն, որպէս զի այն տեղ նաւ գտանելով նստի և նաւէ Պալեստին։ Բայց ճանապարհին իմանալով, որ Բարսելոնում ժանտախտ է յառաջացել և թէ ամենայն հաղորդակցութիւն այս քաղաքի հետ կտրված է, յետ դարձաւ վերստին Մանրեզ։ Նա վեր-

ջացուց երեսը ածիլելը, նոյնպէս մազ և եղունգ կտրելը, հագաւ երկաթի շղթաներ, հաց չէր ուտում այլ կերպ, եթէ ոչ մոխիր խառնած հետը. կոշտ շորեր հագած ման էր գալիս փողոցներում ողորմութիւն հաւաքելով. ոչ ոք նորա մօտ չէր գալիս, ամենքեան փախչում էին. իսկ երեխայքը քար էին ձգում նորա վերայ: Այսու ամենայնիւ Մանրէզի մէջ շուտով տարածվեցաւ այս զարմանալի աղքատի հոչակաւոր ծագումը, բնակիչների կարեկցութիւնը դէպ ի նա օր է օր աւելանում էր, որ բազմութենով գալիս էին նորան տեսանելու: Իգնատիոսը, կարծելով թէ սատանայն փորձումէ իւր հեզութիւնը և կամենումէ գայթակղեցուցանել, հեռացաւ դէպ ի մի այր, ուր անցուց քանի մի ժամանակ համարեա թէ առանց կերակուր ուտելու: Կասկած չ՚կայ թէ նա կը մեռանէր այն տեղ քաղցածութենից, եթէ չ՚գտանէին նորան մի աղբիւրի մօտ կիսամեռ ընկած և չ՚բերէին Մանրէզ: Նորա ջլերը բոլորովին թուլացած էին. նորան փոփոխակի երևումէին երբեմն Աստուածամայրը, երբեմն Սրբերը, երբեմն դժոխք և սատանայի փորձութիւնքը: Վերջապէս տեսանելով, որ իւր սուրբ նպատակին հասանելու համար հարկաւոր է առողջութիւն, իսկոյն մօրուքը ածիլեց, մազերը և եղունգները կտրեց, հանդերձը փոքր ինչ կարգի բերեց և սկսեց փողոցներում և հրապարակներում քարոզել ժողովրդին:

Ինչպէս ասումեն նորա պատմիչքը, Իգնատիոսը այս միջոցին գրել է իւր շարադրութիւնը, որ յայտնի է անունովս «Հոգևոր Վարժութիւն» Exercitia spiritualia, և որ Յիսուսեանք խիստ շատ պաշտումեն: Չ՚նայելով այս գրքի խորհրդական պարունակութեանը, նորա մէջ երևումեն ջանք և աշխատութիւն կարգի օգտի համար սպանել ամենայն տեսակ բնական կամ լաւ ասել սեպհական գործունէութիւն. մի խօսքով, մարդը շինել մեքենայ. այս պատճառով չէ կարելի կարծել, թէ մի անկիրթ երևակայութենով մարդ, ինչպէս էր այն ժամանակ Իգնատիոսը, կարողանար այսպիսի գիրք գրել. երևի թէ նա գրել է այս գիրքը Փարիզի մէջ, երբ նորա երևակայութիւնը և հոգին ստացել էին փոքր խորամանկ Քաղաքագիտութեան մասին տեղեկութիւններ: Վերջապէս Իգնատիոսը, որ մտածում էր թէ գնայ Երուսալէմ սուրբ տեղերին երկրպագութիւն տալու, նաւ նստաւ Բարսելոնումը և հասաւ Գայէտ, որ տեղից ոտքով գնաց նա Հռովմ և լիզելով Ադրիանոս IV ի հողաթափները և, այլ ուխտաւորների հետ միասին Պապի օրհնութիւնը ստանալով, շարունակեց իւր ճանապարհը: Սպանիացիք ճանապարհի համար արծաթ տուեցին նորան, բայց նա բոլորը բաժանեց աղքատներին և ինքը ապրում էր ողորմութենով այս ինքն մուրացկանութենով: Դժուար եղաւ

նորա այս ճանապարհորդութիւնը. բոլոր Իտալիա ամայացած էր փոքր ինչ յառաջ գոյացած սարսափելի ժանտախտից. ամբողջ քաղաքներ, ամբողջ գեղեր դատարկված էին: Իգնատիոսը գունաթափած, չարչարված, և միանգամայն հալումաշ եղած պահքից և հիւանդութենից ոչինչ տեղում չէր գտանում մի օթևան. նորան, ախտացած համարելով ժանտախտով, հալածում էին ամենայն տեղից. գիշերները անցուցանումէր պարզ երկնքի տակ. նորա օտարութիւնը ժողոված էր ո՛չ թէ մի բնակութեան յարկի մէջ, այլ կապոյտ երկնակամարը էր նորան տունի փոխանակ: Օրերով ոչինչ չէր ուտում. պատճառ, չէր գտանում. ամենայն մարդ փախչում էր նորանից երկիւղ կրելով իբրև ախտացած մարդուց, որպէս զի ինքը ևս չ՛վարակվի անողորմ ցաւովը. բայց ի վերայ այսր ամենայնի Իգնատիոսը ուրախանումէր քաշած չարչարանքների համար, նա համարումէր թէ այդ նեղութիւնքը քաւումեն նորա մեղքերը, վասնորոյ առաւել զօրանումէր հոգով:

Այս անտանելի ճանապարհորդութեան մէջ, ասումեն, որպէս թէ երևել է նորան Քրիստոս, և խոստացել է ապահով մուտք տալ Վենետիկ: Ճշմարիտ. մինչև անգամ Վենետկի դուռի պահապանքը չ՛հարցրեցին Իգնատիոսից, թէ ո՛վ է, ո՞ր տեղից է գալիս կամ ո՛ւր է գնում, և այս կերպով նա կարողացաւ ազատութեամբ մտանել Վենետիկ: Այն տեղ ևս ապրումէր մուրացկանութենով. և գիշերները հանգչումէր սուրբ Մարկոսի հրապարակումը: Նորա ծանօթութիւնը հուչակաւոր Սպանիացիների հետ նորան այնքան օգտակար եղաւ, որ հնար ունեցաւ նստել այն զինուորական նաւը, որ նաւումէր Պալեստին: Բանի տեղ չ՛գնելով ծովային հիւանդութիւնը, նա սև հաց էր ուտում և նաւի սպասաւորներին քարոզումէր շատ խիստ բարոյականութիւն: Նորա քարոզները փոքր մնաց որ գլխին փորձանք դառնային. կոշտ ու վատթարաբարոյ նաւաստիքը ձանձրանալով թափառական քարոզչից կամենումէին ցամաք հանել նորան առաջին անմարդաբնակ կղզու վերայ. հակառակ քամին, որ մղեց տարաւ նորանց մինչև Կիպրոս կղզու եզերքը, արգելառիթ եղաւ այս զարհուրելի դիտաւորութիւնը կատարելու: Նաւը մի քանի օր այնտեղ կանգնելով, վերջապէս վեր առեց խարիսխը և ապահովութեամբ հասաւ Երուսալէմ դեկտեմբերի 4 ին 1523 թուականին: Իգնատիոսը վաճառեց իւր ունեցած չունեցածը, որպէս զի կարողանալով հատուցանել Սարրակինոսներին սովորական հարկը թոյլտուութիւն ստանայ Փրկչի գերեզմանի մօտ աղօթելու: Իգնատիոսը հազիւ թէ հասել էր իւր նպատակին, փոխվեցաւ. նա մի այլ մարդ դարձաւ բոլորովին. նորա սիրտը յղացաւ նոր խորհուրդ աւետարանել Թուրքերին և առ հա-

տարակ արևելեան ազգերին: Նորա անսանձ երևակայութիւնը փոքր առ փոքր հանդարտեց, երևեցաւ նորա մէջ մտածողութիւն և անապատականը դարձաւ քաղաքագէտ (politicus), դարձաւ հիմնադիր մի հզօր կարգի:

Լօյոլան տեսանելով Քրիստոսի դատարկ գերեզմանը իսկոյն հասկացաւ, որ միմիայն խելքի զօրութենով կարելի է ազգերը դէպ ի այս կողմ քաշել երկրպագութեան համար. Այս օրից ահա նորա գաղափարը կազմած է, կարգը (systema) պատրաստ, այս օրից կամքը ստացաւ իւր յատկացեալ պաշտօնը. բայց Լօյոլան ոչինչ ուսումն չունի, հազիւ գիտէ գրել և ընթեռնուլ. ի՞նչ փոյթ. մի քանի ժամանակից յետոյ բոլորը կ՚իմանայ: Արդարև, արձակեալ կապիտանը, ապիկար զինուորը թողնումէ իւր օդեղէն գաղափարները, վերադառնումէ Սպանիա և նստումէ Բարսելօնի և Սալամանկայի դպրոցների աշակերտական նստարանների վերայ: Մանրէզի անապատականը, Քրիստոսի գերեզմանի ոգևորված ուխտաւորը ուսանումէ երեխաների հետ միասին քերականութիւն. լարումէ իւր զօրութիւնքը, որ ուսանի լատինի լեզուի հոլովմունքը և խոնարհմունքը . . . .

Բայց Բարսելօնեան դպրոցից շատ փոքր օգուտ ստացաւ նա. երբ վարժապետը մեկնումէր նորան լատինի քերականութեան կանոնները, նորա երևակայութիւնը պատկերացնումէր զանազան բաներ: Վերջապէս, Բարսելօնում երկու տարի մնալուց յետոյ, գնաց Սալամանկա այն տեղ Համալսարանում դասեր լսելու համար, ուր և սկսեց քարոզել փողոցներում և հրապարակներում: Նա ո՛չինչ չ՚գիտէր. ուսել էր ո՛վ գիտէ ինչ Աստուածաբանութիւն. բայց խօսումէր այնպիսի հաւատով, այնպիսի ոգևորութեամբ, որ ժողովուրդը խուռն բազմութենով հաւաքվումէր նորան լսելու, մինչև անգամ երկու երևելի տիկիններ համոզվելով նորա քարոզներից ծպտեալ կերպարանքով մտն էին գալիս նորա քամակից, և գտանվումէին նորա աշակերտների համարում: Այս պատճառով նորան յափշտակեցին և բանդ դրեցին. Նա դուրս չ՚եկաւ բանդից, մինչև երկու տիկինները յետ չ՚դարձան տուն: Բացի դորանից խուզարկու ատեանը սկսեց հետևել նոցա քամակից: Դոմինիկեան աբեղաները, նախանձելով Իգնատիոսի յառաջադիմութեանը և սիրելի լինելուն ժողովրդի մէջ, միանգամ հրաւիրեցին նորան իւրեանց վանքը. վանահայրը մի քանի Աստուածաբանական հարցմունք առաջարկեց, ի հարկէ նա ոչինչ չ՚կարողացաւ պատասխանել, և ի՞նպէս կարող էր պատասխանել, մինչ դեռ ոչինչ չ՚գիտէր: Վանահայրը, տեսանելով նորա տգիտութիւնը, իսկոյն հրամայեց բռնել նորան, և իբրև խաբեբայ կամ ժողովրդի մոլորեցուցիչ տարեց Եպիսկոպոսի առաջևը: Եպիսկոպոսը իսկոյն հրա-

մայեց բանդ գնել նորան և բոլոր նորա աշակերտքը: Իգնատիոսը և աշակերտքը բանդումը նստած երգումէին հոգևոր տաղեր. և երբ միւս մարդիկը հնար գտան բանդից փախչելու, նա իւր աշակերտների հետ միասին մնաց բանդումը, թէպէտև դուռները բաց էին: Այս բանը այնպէս գրաւեց բոլորի սիրտը, որ իսկոյն արձակեցին նորան բանդից իւր աշակերտների հետ միասին:

Վշտանալով Սալամանկայի անշնորհակալ բնակիչներից, մանաւանդ աբեղաներից և Համալսարանի վարդապետներից, որոնք յայտնի յայտնի, ինչպէս ինքը Իգնատիոսը ասումէր, հակառակվումէին Աստուածային հոգուն, որոշեց Փարիզ գնալ, ուր գտանվումէր Եւրոպայի մէջ հռչակված Համալսարանի Աստուածաբանական ֆակուլտէտը: Նա այս բանը յայտնեց իւր աշակերտներին, բայց նոքա, ձանձրացած լինելով անորոշ և անհանգիստ կեանքից, բաժանվեցան իւրեանց վարժապետից. վասնորոյ Իգնատիոսը, բարձելով իշի վերայ իւր գրեանքը և ամենահարկաւոր բաները, ինքը մի միայն ճանապարհ ընկաւ դէպ ի Փարիզ, ուր պիտոյ է ընկնէր նոր փորձանքների մէջ և հանդիպէր զանազան արգելառիթների:

Փարիզ հասանելու ժամանակ, նա համարեա թէ այնքան բան գիտէր, որքան Բարսելոնում: Նորա քարոզները, որ Սալամանկայում ասումէր, գործից ձգել էին նորան. վասնորոյ նոր ի նորոյ նստաւ քերականութիւն ուսանելու: Մի անգամ նորա ընկերներից մինը գողացաւ նորա վերջին արծաթը, որ բերել էր իւր հետ Սպանիայից. այն ժամանակ սկսեց նա դարձեալ մուրացկանութիւն առնել: Բայց Ֆրանսիացիք, որ առ հասարակ մեծահոգի են, ակամայ տալիս էին Սպանիական աղքատին մի բան ողորմութիւն, լրտես համարելով նորան, ըստ որում Պավիա քաղաքի մօտ եղած պատերազմը դեռ չէին մոռացել: Իգնատիոսը մի աբեղայի խորհրդով ուսումնապարապի ժամանակ ուղևորեցաւ դէպի Սպանիական Նիդերլանդիա ողորմութիւն հաւաքելու, որ տեղից բաւական արծաթ բերեց իւր ապրուստի համար:

Այս միջոցներումը կարողացաւ նա մի քանի ընկեր ճարել. նա այնպիսի գեղեցկախօսութենով նկարագրեց նոցա կամաւոր աղքատութեան ուխտը, որ իսկոյն գնացին նորա քամակից հիւանդանոցները և սկսեցին ապրել մուրացկանութենով: Իգնատիոսը Մոնտեգիւ (Montaigu) դպրոցում մի տարի մնալուց յետոյ մտաւ Սուրբ Վառվառէի կօլլէգիումը, ուր լսումէր փիլիսոփայական դասեր. բայց և այս տեղ չհրաժարվեցաւ նա իւր քարոզութեններից:

Նորան հետևողներից շատերը կիրակէ և տօնի օրերը պահք էին պահում և չէին գնում կօլլէգիումը եկեղեցական վէճերը լսելու,

որ ամենայն տօնի օր ուսանողները բանումէին լեզուի մէջ առաւել կրթվելու համար։ Ջուր տեղը պատիժներ էին սպառնում նորանց, որովհետև լողը չ'կար։ Այս պատճառով կառավարիչը (Rector) և վարդապետները (Professores) վճռեցին, այս անկարգութիւնը վերջացնելու համար, բոլոր ուսանողների ներկայութեամբը ծեծել Իգնատիոսին. այս մի խիստ պատիժ էր, որ գործ էին դնում այն ժամանակ, երբ բանը նեղ տեղը կ'ընկնէր։ Իգնատիոսը ուրախ էր, որ պիտոյ է չարչարվէր Աստուծոյ փառքին նախանձաւոր լինելով։ Բայց երբ բերեցին նորան ժողովքի մէջ, հանդէսը, այսինքն ժողոված վարդապետները ձեռքերում գաւազաններ պատրաստ ունելով նորան ծեծելու համար, ներգործեց նորա վերայ մի զարմանալի ազդեցութիւն։ Մի կողմից նա սաստիկ ցանկանումէր որ ծեծվի. միւս կողմից լաւ հասկանումէր բանի վօրութիւնը, որ նորա ընկերքը և բոլոր վարդապետները պիտոյ է գործ դնէին ամենայն աշխատութիւն նորան համալսարանից արտաքսելու. այսպիսի խայտառակութենից յետոյ և ինքը ոչինչ ուսումն չունէր, առանց որին չէր կարող անգամ և մտածել իւր գաղափարը կենդանացնելու համար։ Վերջապէս մօտեցաւ կառավարչին, և պատշաճաւոր խոնարհութենով կարողացաւ նորան համոզել, որ յետ ձգէ այս պատիժը. Նա խոստացաւ ջերմեռանդութենով լսել դասերը և կրօնական վիճաբանութիւնքը. և արդարև 1532 թուականին ստացաւ Աստուածաբանական և երկու տարուց յետոյ Մագիստրոսական աստիճան։

Մի քանի ժամանակ Իգնատիոսը լսեց Յակոբեանների մօտ Աստուածաբանական դասեր, բայց շուտով նորանից յետոյ սկսեց դարձեալ ապաշխարութիւն և խիստ բարոյականութիւն քարոզել ժողովրդին։ Նորա քարոզութեան ձևը շատ զարմանալի էր. ահա նորա մի օրինակը։ Իգնատիոսը գիտէր, որ իւր ընկերներից մինը ամենայն օր գնումէր իւր սիրականի մօտ, որի բնակութիւնը Փարիզից շատ հեռի չէր. որպէս զի կարողանայ յետ ձգել նորան այս անմաքուր սիրուցը, մի օր ձմեռվայ սաստիկ ցրտի ժամանակ հանեց բոլոր հանդերձը և այնպէս մօրից մերկ, մինչև պարանոցը մտաւ գետի մէջ, որի մօտից պիտոյ է անցանէր երիտասարդ ընկերը։ Երբ սիրահար երիտասարդը մօտեցաւ գետին, Իգնատիոսը դուրս բարձրացաւ ջրից գոռալով դէպի նա «ո՜յ անբաղդ, ո՞ւր ես գնում, չե՞ս տեսանում Աստուծոյ պատուհասը քո գլխի վերայ. գնա՛ լցուցանել քո պիղծ ցանկութիւնը, իսկ ես կը մնամ այս տեղ այս սառն ջրի մէջ, որ իմ չարչարանքովը հեռացնեմ քեզանից Աստուծոյ բարկութիւնը։

Իգնատիոսը այս միջոցներում կարողացաւ բաւական օգուտ բերել խուզարկու ատենին։ Լուտերի և Կալվինի վարդապետութիւնքը

սաստիկ արագութեամբ տարածվումէին Ֆրանսիայի մէջ. մի քանի Համալսարանական ուսումնականք կամակից էին այս բանին։ Իգնատիոսը խաբեբայութեամբ այս բանը նորանցից իմանալով մտնեց նորանց խուզարկու ատեանին։ Այս կերպով փոքր առ փոքր յառաջացաւ նա իւր ասպարէզի մէջ, այս ինքն Ցիսուսականութեան։ Նորա այս նոր ուղղութիւնը երևումէ մանաւանդ իւրեան հետևող ճարելու ժամանակ։ Նա չէ որոնում այլ ևս աղքատ, ռամիկ, և անուսումն մարդիկ, և չէ համոզում նորանց իւր ոգևորեալ սրբութեամբը. նա լաւ գիտէր, որ այդպիսի մարդերից չէ կարելի կարգ հիմնել, վասնորոյ աշխատումէր իւր կողմը քարշել խելօք և ուսումնական մարդիկ։ Բաղդը յաջողեց նորան. նա հանդիպեց Պետրոս Ֆաբերին (Le feve), որ շատ աշխատաւոր և քանքարաւոր ուսանող էր, Իգնատիոսը շատ աշխատութիւն կրեց մինչև կարողացաւ համոզել այս ուսանողին դէպի Թափառական Հոգևոր Ասպետութիւնը. վերջապէս նորան յաջողեցաւ մինչև ամենավերին աստիճան շարժել այս ուսանողի վառ երևակայութիւնը, իսկ մնացեալ բաները կատարեց «Հոգևոր Վարժութիւնը». այս կերպով Ֆաբեր առաջին հետևողը դարձաւ Իգնատիոսին։ Սորանից պակաս դժուարութիւն չ՚կրեց Իգնատիոսը իւր երկրորդ ընկերը ճարելու համար։ Շատ ժամանակ էր արդէն, որ նայումէր նա նախանձելով Ֆրանսիսկոս Կսավիէ Նաւարրացի ազնուականի վերայ, որ այն ժամանակ փիլիսոփայութեան դաս էր կարդում Վօվէսկեան կօլլեգիումի մէջ։ Սա ծիծաղումէր Իգնատիոսի վերայ և ոչինչ զուարճութիւն չէր գտանում նորա կրօնամոլութեան մէջ. պատճառ, ինքը շատ հաստատ չէր հաւատի վերայ։ Բայց Իգնատիոսը ամենևին չէր յուսահատվում։ Նա մի փոքր ժամանակ Կսավիէի համար դարձեալ Ֆերդինանդոսի և Իզաբելլայի պալատական դարձաւ. ամենայն տեսակ կեղծաւորվումէր Կսավիէի առաջև, վերջապէս կարողացաւ ճանաչել նորա թոյլ կողմը։ Կսավիէի ապրուստը շատ շռայլ էր, վասնորոյ շատ անգամ արծաթի մեծ պակասութիւն էր զգում և ամենահարկաւոր բաների համար, Իգնատիոսը արծաթ տալով նորան որ հաւաքումէր մուրացկանութեամբ, վերջապէս կարողացաւ նորան դէպ ի իւր կողմը շրջել։ «Հոգևոր Վարժութիւնքը» խզեցին և միանգամայն ոչնչացուցին այն կապը, որ կապումէր Կսավիէին աշխարհի հետ։ Շուտով Կսավիէից յետոյ ուրիշ շատ աշակերտներ ևս մանաւանդ Սպանիացիք և Պորտուգալացիք, հռչակաւոր Յակոբ Լայնեցը, Ալֆօնս Սալմերօնը, Նիկօլայ Բօբադիլեան, Սիմօն Ռոդրիգեզը և այլ ուրիշներ «Հոգևոր Վարժութիւնների» հրաշալի զօրութենից համոզվելով միաւորվեցան Իգնատիոսի հետ։ Որպէս զի կարողանայ նորանց միանգամայն աշխարհքից հրաժարել, կամեցաւ Իգ-

նատխասը երդումով կապել, այս պատճառով Աստուածածնի վերափոխման տօնի օրը, նա աշակերտների հետ միասին հեռացաւ կուսանաց վանքը, որ Փարիզի մօտ Մօնմարտր տեղումն էր։ Այն տեղ մի մատուռի մէջ Լայեննեզը, որ արդէն քահանայ էր, պատարագ արեց, և պատարագից յետոյ բոլոր ընկերքը երդում կերան հանդէսով, որ հրաժարվին աշխարհի ամենայն բարութեններից, և նուիրեն իրեանց անձը Աստուծոյ բանի քարոզութեանը անհաւատների մէջ։ Այս խորհրդով խոստացան նոքա ընկնել Պապի ոտքերը, խնդրել նորա օրհնութիւնը, մատուցանել նորան իրեանց ծառայութիւնները և կատարել կուրօրէն ամենայն ինչ, որ հրամայէ Առաքեալի տեղապահը։ Այսպէս սկսեց այս հռչակաւոր հասարակութիւնը։ Հաւանական է, թէ այս կարգը ևս շուտով կը կործանվէր և կը չքանար, ինչպէս շատ հոգևոր կարգեր երևել էին աշխարհի երեսին և յետոյ անհետացել, եթէ կամակորութենով սկսէր աշխատել իւր նախկին նպատակին հասանելու համար, այսինքն քարոզել Աւետարանը անհաւատներին։ Բայց գերմանիայի նորանոր անցքերը, որոնցից ահ կար թէ կործանելու էին Հռովմի քահանայապետների ութ հարիւր տարի ունեցած իշխանութիւնը, ուրիշ ուղղութիւն տուեցին այս հասարակութեանը, և հարկադրեցին նորան նշանաւոր հանդիսանալ ընդհանուր պատմութեան մէջ։

Քանի մի խօսք ասենք այժմ «Հոգևոր վարժութիւնք» անունով գրքի վերայ (Exercitia Spiritualia), որ արդէն քանի անգամ յիշել ենք։ Այս ինչ հրաշալի գիրք է, որին չեն կարող ընդդիմանալ ոչ մանկութիւնը, ոչ աշխարհայնութիւնը, ոչ հարստութիւնը և ոչ մինչև անգամ հպարտ անհաւատութիւնը։ Արդէն ասացինք, որ այս գիրքը Լօյօլայի առաջին տարիներումը գրուած բան չէ. երևի թէ գրված է այն Փարիզում այն ժամանակ, երբ արդէն նորա վառ աշխոյժը և եռանդը փոխվումէր դէպ ի մի սառն քաղաքականութիւն։ Այս գրքի մէջ պարունակվումէ Յիսուսականութեան բովանդակ հոգին և ուղղութիւնը։ Կարգի բոլոր յառաջադիմութիւնքը այս գրքի մէջ իբրև գաղափար պարունակված մտքերի պտուղքն են մի միայն։

Լօյօլա ոգևորութեան ամենայն աստիճաններից անցանելով, կարգի է դնում բոլոր փորձերը, որ կատարել էր իւր վերայ, մինչև անգամ իւր տեսիլքները հարինքի մէջ։ Նա Ֆիզիկա և Քիմիա ուսուցանելու ձևերը դնումէ այն բանի վերայ, որ ամենայն ձևերից բարձր է. այս ինքն մարդկային հոգու թռիչքի վերայ. մի խօսքով, շարադրում է «Բնաբանութիւն» (Physiologia) ուսանելու գիրք, կամ լաւ ասել ոգևորութեան և սրբութեան մի խորհրդական նշան։ Լօյօլայի զանազանութիւնը այլ անապատականներից գլխաւորաբար այն

է, որ նա կարողացել է սառնասրտութենով և լօգիկաբար նկատել իւր անձը, փորձել իւր անձը իւր պաշտօնի մէջ. այս բաներից յետոյ Լօյոլան, հարկադրելով իւր աշակերտներին մի և նոյնը գործել ինչ որ ինքը գործել էր իւր անձին հետ, կարողացաւ երեսուն օրի մէջ չքացնել բանականութիւնը և ինքնագոյ կամքը: Յիսուսականութեան հետ զուգընթացաբար ծաղկած խուզարկու ատեանը մասն մասն լուծանումէր իւր անբաղդ զոհերի մարմինը. Հոգևոր վարժութիւնքը, Լօյոլայի մեքենայի տակ, լուծանումէին մասն մասն ազատ մտքերը, որպէս զի սրբութեան հասանեն: Այս գրքի մէջ պարունակվումեն հետևեալ կանոնները. ա) թղթի վերայ զանազան մեծութեամբ գծեր խազել համեմատ մտքի մեծութեանը, բ) կիսափակ պատուհաններով սենեակի մէջ նստել փակված (januis ac fenestris clausis tantisper), գ) դուրս արձակել բացագանչութիւնք (in exclamationes prorumpère), դ) Դժոխքը միտք բերելու ժամանակ, որ ունի իւր մէջ երկու մուտք, հինգ գլխաւոր տեղիք և մի խօսակցութիւն (dua praeludia, puncta quinque et unum colloquium) 1) երևակայել լաց, սուգ, աղաղակ, ծուխ, ծծումբ, խղճի որդունքը և այլն և այլն: Բաց ի սորանցից այս հրաշալի գրքի մէջ գտանումենք հետևեալ բաները. աղօթելու երրորդ կերպը բաղկանումէ փոքր ինչ բառերի և աղօթելու ժամանակի չափաւորութենից (tertius orandi modus per quandam vocum et temporum silentii commesurationem) այս տեղ մանաւանդ պիտոյ է, որ շնչառութեան և բառերի միջոցը լինի հաւասարաչափ (et paria anhelituum ac vocum interstitia observanda). այս կերպով ոգևորված մարդը դառնումէ մի մեքենայ, որ հառաչումէ, հեկեկումէ, գանգատական բաներ է խօսում եայլն եայլն. և այն, այնպիսի կարգով, որ փորձով ճանաչված էր ամենալաւ:

Ի՞նչպէս կատարելագործվումէ այս կերպով պատրաստված մեքենայն (Automatum). Նա ի՞նչպէս է հասանում վերջապէս մինչև հաւատի խորհուրդքը և ճշմարտութիւնքը: Ահա՛ թէ ինչպէս: Եթէ

---

1) Ներածութիւն (Praeludium) «Հոգևոր Վարժութենների» մէջ նշանակումէ մի ընդհանուր տեղի, որի մէջ պիտոյ է երևակայել իւր անձը և այն առարկաները, որ գտանվումեն նորա մէջ: Պարբերութիւն (Punctum) երևակայած պատկերը մանրամասնաբար համեմատվումէ, այս տեղ հինգ զգայարանքների աստիճան առ աստիճան գործակցութենովը քննվումէ պատկերի բոլոր մանրամասնութիւնքը, և վերջապէս Խօսակցութիւն (Colloquium) աղօթք է առ Աստուած, որի մէջ նկարվումեն այն բոլոր զգացողութիւնքը, որ ծնել էին հոգու մէջ պատկերը տեսանելու ժամանակ: Իգնատիոսը ինքը չէ զարգացնում այս ձևերը և զգացողութիւնքը, նա միայն ճանապարհ է ցոյց տալիս, որով պիտոյ էր գնալ: (Constitutions des Jésuites; Appendice sur les Exerc. Spirituels).

բանը վերաբերվում Քրիստոսի կեանքում պատահած մի անցքի, այն ժամանակ հարկաւոր է երևակայել մի սահմանեալ տեղ. զոր օրինակ եթէ Քրիստոսի քարոզութենների վերայ, պիտոյ է նախ և յառաջ երևակայել ճանապարհ, հարթ կամ անհարթ (viam planam aut arduam), եթէ նորա գեթսեմանի պարտէզումը աղօթելու վերայ, պիտի երևակայել մի պարտէզ որոշեալ մեծութենով և դրութենով (certa magnitudine, figura et habitudine), չափել նորա երկայնութիւնը և լայնութիւնը։ Փրկչի յաղթութեան և թագաւորութեան վերայ խօսելու ժամանակ հարկաւոր է երևակայել գեղեր, քաղաքներ (villas et oppida), յետոյ նկարագրել իւր հոգու առաջև երկրի թագաւորը իւր ժողովրդի մէջ (punctum primum proponere sibi ob oculos humanum regem), խօսել այս թագաւորի հետ, յետոյ փոքր առ փոքր թագաւորի տեղը դնել Քրիստոսը, ժողովրդի տեղ, իւր անձը. ահա այս կերպով կը նկարագրվի Քրիստոսի թագաւորութիւնը։ Ահա այս է մինչև խորհրդական բաները բարձրանալու կերպը։ Սորանից ինչ ուղղակի և անհրաժեշտ հետևանք կը ծագի. նիւթական տպաւորութիւնքը վերջին նպատակ շինելը արդեօք չէ՞ նշանակում ասել, թէ հաւատ չկայ հոգու վերայ, և դորանով չէ՞ հեռանում Քրիստոնէական խո՞կութենից. արդեօք այս ծածուկ և ծպտեալ կերպարանքով անցնել չէ դէպի հոգու թագաւորութիւնը. . . . և այսպիսի չնչին զգուշութիւնքը չե՞ն դառնում արդեօք վերջումը խորամանկութիւն և երեսպաշտութիւն այս զարմանալի վարդապետութեան հետևողների մէջ։ Ի՞նչպէս. փրկիչը ծունկի վերայ արիւն քրտինքի մէջ աղօթում մարդկութեան համար, դու, փոխանակ այս բանը մի միայն միտք բերելով հիանալու, պարապում ես պարտէզը չափելով, նորա ճանապարհների կարգը զննելով. դու, թափորի ստորոտումը այն այլակերպութեան անթարգմանելի րոպէում, նայում ես սարի ձևին, զննում ես նորա բարձրութիւնը, լայնութիւնը, արգաւանդութիւնը . . . Այս՞ է Քրիստոսի վարդապետութիւնը. Այս՞ է առաքելական Քրիստոնէութիւնը։

Լոյոլա Աւետարանի ուսման հակառակ տալիս է աշակերտներին իւր անձին մի մասը, իւր մտածութեան փեճեկի մի թաղանթը։ Նա իւր մանկութեան ժամանակ գիտէր ոգևորութիւն, բայց կազմելով մի անսահման իշխանութիւն ոչովին չէ տալիս այս կեանքի և ազատութեան աղբիւրը. Նա փոխանակ ազատ ոգևորութեան տալիս է ուրիշներին մի միայն ձևի և կարգի անուրը, և պահանջում դէպ ի իւր Աստուածը ո՛չ թէ մանկական սէր և խոնարհութիւն, այլ ստրկական երկիւղ (timor servilis)։

Դառնանք դարձեալ դէպ ի Լոյոլան։ Մոնմարտրեան նշանաւոր երդումից յետոյ, նա դարձեալ ընկաւ (և արդէն վերջին անգամ)

407-2004 35 (5185-50)
Гос.Пуб.Биб-ка Арм. С.С.Р.

ցնորման մէջ։ Վերստին երևումքին նորան սուրբեր ու հրեշտակներ. երբեմն դժոխք ու սատանաներ։ Իգնատիոսի հոգու այսպիսի խառնակնդորված վիճակը սաստիկ խանգարեց նորա առողջութիւնը. աշակերտքը բժիշկներ կանչեցին, որոնք խորհուրդ էին տալիս Իգնատիոսին ուղևորիլ դէպ ի հարաւ, բայց նա ամենևին չէր համաձայնում։ Վերջապէս Կսավիէն, Լայնեզը և Սալմերոնը յայտնեցին, թէ ինքեանք կամէին գնալ Սպանիա, որ կարգի գնեն այն տեղ հասարակութեան գործերը։ Իգնատիոսը երկիւղ կրելով, թէ մի՞ գուցէ այս երիտասարդ մարդիկը երթալով իւրեանց հայրենիքը և ծնողաց աղաչանքին ականջ դնելով, կամ գուցէ դեռ ևս աշխարհի ապագայ փառաւոր յոյսերից հրապուրվելով, մնային այն տեղ, հրամայեց նորանց մնալ Փարիզի մէջ, իսկ ինքը ճանապարհ ընկաւ դէպ ի Սպանիա, հաւաքվելու տեղ նշանակելով աշակերտներ Վենետիկ քաղաքը։

Իգնատիոսը երկար չմնաց հայրենիքի մէջ. զուր տեղը նորա ծերունի հայրը և մանաւանդ եղբայրը ծունկ չոքած նորա առաջևը աղաչումքին մնալ. նա հերքեց նոցա խնդիրը, հրաժարվեց նորանց օգնութենից և շտապեց դէպ ի Վենետիկ, ուր և հասաւ 1537 թուականին։ Այս տեղ նա իւր սովորական կերպով սկսեց քարոզել ժողովրդին և աշակերտներ ճարել։ Հոգևորականութիւնը լաւ աչքով չէր նայում նորա վերայ, և մինչև անգամ դատապարտումէր իբրև հերետիկոս։ Ասումէին, թէ նա իբրև հերետիկոս հալածված է Սպանիայից և Ֆրանսիայից. գտնվեցան և վկայք, որ պատահել էին Սալամանկայում այն ժամանակ, երբ Դոմինիկեան կրօնաւորները բանդ էին դրել Իգնատիոսը իբրև ժողովրդի մոլորեցուցիչ։ Բայց ի վերայ այսր ամենայնի Լօյօլան կարողացաւ ազատվիլ սպառնացած վտանգներից։ Նա սկսեց կեղծաւորվիլ այն տեղի Պետրոս Կարաֆֆա եպիսկոպոսի առաջևը (որ յետոյ Պապ դարձաւ Պաւլոս IV անունով), և բոլորովին արդարացաւ նորա օգնութենով։ Բայց եպիսկոպոսի բարեհաճութիւնը դէպ ի Իգնատիոսը երկար չ'տևեց. պատճառ, Կարաֆֆայն ինքը ևս մտածումէր մի կարգ հիմնել, այն խորհրդով, որ ուղղէր Իտալական հոգևորականութեան բարոյականութիւնը, որ մինչև պարանոցը թաղված էր վերին աստիճանի անառակութեան մէջ. Նա յոյս ունէր միաւորել իւր կարգի հետ Լօյօլան և նորա աշակերտքը. բայց Իգնատիոսը կարո՞ղ էր արդեօք իւր նպատակից հրաժարվիլ, որին հասանելու համար արդէն այնքան գործ էր կատարած. Նա հրաժարվեց միանգամայն և Կարաֆֆայն այս պատճառով դարձաւ նորան թշնամի։

Այս միջոցին Իգնատիոսի աշակերտքը, որ Փարիզումն էին նոր

աշակերտներ ճարեցին. կլօդ լը ժէ (Le Jay), ժան կօդիւր, Պասկիե Բրուէտ և այլ մի քանի խելացի և քանքարաւոր մարդիկ։ Նոքա իւրեանց վարդապետի հրամանի զօրութենովը պիտոյ էր 1537 թուականի սկզբումը Վենետկումը լինէին. բայց պատերազմը, որ պատրաստվումէր բորբոքվիլ Ֆրանսիայի և Սպանիայի մէջ, նորանց հարկադրեց թողնել Փարիզը դեռ 1536 թուականում։ Նոքա ճանապարհ ընկան ուխտաւորների հագուստներով, ձեռքերում Սուրբ գիրք բռնած, իբրև ուղղափառութեան նշան, գլխների վերայ վարդի պսակներով և ի պատիւ Աստուածամօր և այլ սուրբերի հոգևոր տաղեր երգելով։ Այս կերպով Վենետիկ մտան նոքա 1536 թուականի դեկտեմբերի վերջերումը։

Այս տեղ նոքա ողջը միասին հետևելով Իգնատիոսի օրինակին մտան զանազան հիւանդանոցներ, տկարներին սպասաւորելու համար։ Եթէ կարելի է հաւատ ընծայել Յիսուսեան կարգի պատմիչներին, ուրեմն նոցա նախանձաւորութիւնը այս պաշտօնը լրութենով կատարելու համար մարդկային չէր, այլ, մարդկութենից վեր։ Ամենայն բանից անտանելի է մանաւանդ կսավիեի գործը, նա ուտումէր այն կերակուրների փշրանքը, որ մնացել էին փոխադրական ցաւեր ունեցող հիւանդներից. ամբողջ օրը ման էր գալիս ափրոդիտական ցաւերով վիրաւորված մարդերի մօտ, ուր և գիշերը քնումէր, խմումէր այն ջուրը, որով հիւանդը լուացել էր իւր վէրքը, մինչև անգամ, եթէ կար բժշկական հարկաւորութիւն, ծծումէր այս տարափոխիկ վէրքերից արիւն ու թարախը։ Սոսկալի անձնազոհութիւն. այս կարգից դուրս գործերը և ապառաժի նման հաստատ կամքը, որ տեսանումենք կարգի անդամների մէջ մինչև կարգը դեռ ևս ծնած չէր, այլ միայն յղացած Լոյոլայի սրտումը, կը տեսանենք յետոյ թէ ինչ գործերի ծնող դարձան։

Գարունը վերայ հասաւ. հարկաւոր եղաւ մտածել դէպ ի սուրբ տեղերը ցանկալի ճանապարհորդութեան մասին։ Իգնատիոսը կարծումէր, թէ կանուխ է դեռ ևս կարգին օրինաւոր և վաւերական հաստատութիւն խնդրել։ Նա երկու հզօր թշնամի ունէր Հռովմի մէջ կարաֆֆա կարդինալը (առաջվայ Վենետկի Եպիսկոպոսը) և Պետրոս Օրտիզը, այն երևելի Աստուածաբանը, որի հետ Իգնատիոսը լաւ չէր մինչ դեռ փարիզումն էր համալսարանի մէջ։ Այսու ամենայնիւ, այս ճանապարհորդութիւնը կատարելու համար, անպատճառ հարկաւոր էր Պապի օրհնութիւնը և մանաւանդ ողորմութիւնը. պատճառ, Իգնատիոսը և նորա ընկերքը ոչինչ չունէին։ Այս խորհրդով նա իւր աշակերտներին ուղարկեց Հռովմ, իսկ ինքը միայն մնաց Վենետկում։ Ֆաբեր և կսավիե, Պապական աշխարհի մայրաքաղաքը

հասանելուց յետոյ, ողջից յառաջ գնացին Օրտիցի մօտ և կարողացան շրջել նորան իւրեանց կողմը: Օրտիցը ինքը Պապին ներկայացրեց նորանց, որ տուեց իւր օրհնութիւնը և ճանապարհի համար յիսուն դուկատ: Բացի դորանից նա թոյլ տուեց նոցա միջից նորանց, որոնք չ՚ունէին դեռ քահանայական կարգը, ձեռնադրվել քահանայ ո՛ր եպիսկոպոսից և կամենան: Իգնատիոսի աշակերտքը, շատ շնորհակալ մնալով Պապի մարդասէր ընդունելութենից, ստանալով նորա օրհնութիւնը և երկու հարիւր դուկատը, որ հաւաքված էր Հռոմում Սպանիացի վաճառականներից, վերադարձան Վենետիկ, ուր Պապական դեսպանի առաջև ուխտեցին կամաւոր աղքատութեան և ողջախոհութեան ուխտը:

Նոքա, քահանայ ձեռնադրվելով Արդէննեան Եպիսկոպոսից պահքով ու աղօթքով, բնակվում էին Վենետիկ քաղաքի մէջ, քարոզումէին ժողովրդին բարքի սրբութիւն և ապաշխարութիւն: Այսպիսի կեանքը սիրելի դարձաւ Իգնատիոսին. նա դիպուած էր որոնում, որ կարողանայ իւր առաջվայ ուխտիցը, այս ինքն Երուսալեմ գնալուց յետ կենալ: Այս դիպուածը շուտով պատահեցաւ: Փորթուգալիայի և Վենետկի մէջ պատերազմ բացվեցաւ, որով ծովային ճանապարհորդութիւնը շատ վտանգաւոր դարձաւ: Այն ժամանակ Իգնատիոսը հաւաքեց իւր ընկերքը և յայտնեց նորանց, թէ Աստուած ուրիշ բանի համար չէ բորբոքել այս պատերազմը, եթէ ոչ նոցա նախկին մտադրութիւնքը խանգարելու և նոր նպատակին ձեռք զարկելու համար. այս ինքն Պապական իշխանութեանը պաշտպան դառնալու համար, որ երկիւղ էր կրում և ալեկոծութեան մէջ էր Լուտերի Վերանորոգութենից:

Բոլոր ժողովը հաւանեց այս կարծիքին և դատողութեանը, և վճռեց, որ Իգնատիոսը, Ֆաբերը և Լայնեզը գնան Հռոմ ընկնեն Պապի ոտքերը և մատուցանեն նորան իւրեանց ծառայութիւնը. իսկ նացեալ ընկերքը ցրվին Իտալիայի բոլոր անկիւնները աշակերտ ճարելու համար: Այս տեղ դրվեցան հասարակութեան համար հետևեալ կանոնները. ա) բոլոր անդամները պարտական են բնակվել հիւանդանոցներում և ապրել մուրացկանութեամբ, բ) այն անդամները, որ կը բնակին մի քաղաքի մէջ, պիտոյ է փոփոխակի իշխեն միմեանց, գ) պարտական են ուսուցանել ժողովրդին փողոցներում և հրապարակներում և դ) առանց ամենայն վարձի: Իգնատիոսը, Ֆաբերը և Լայնեզը ուղևորեցան դէպ ի Հռոմ, այս վերջի երկուսը շատ փոքր յոյս ունէին գործի յառաջադիմութեան վերայ. և այնքան առաւել վհատումէին, որքան մօտենումէին Սուրբ Քաղաքին, Հռոմին: Բայց Իգնատիոսը շուտով արիացրեց նորանց. նա ճանապարհի

վերայ փոքր ինչ հեռացաւ նորանցից դէպ ի մի մատուռ աղօթք կատարելու պատճառով. քիչ ժամանակից յետոյ զուարթ և ուրախ երեսով դուրս վազեց մատուռից և եկաւ աշակերտների մօտ, յայտնեց նորանց, թէ աղօթքի ժամանակ տեսիլք է տեսել և ձայն է լսել, որ ասել է նորան «Romae tibi propiturus ero».

Իգնատիոսը Հռոմ հասնելով շատ ջերմութեամբ սկսեց իւր գործը. նա կարողացաւ իւր նախկին թշնամի Օրտիցի հաւատարմութիւնը շահել, որ այն ժամանակում, իբրև երեսփոխան Կարոլոս Vի գործերումը, երևելի ներգործող անձն էր Պապական պալատի մէջ: Օրտիցը ինքը այս երեք ընկերները տարեց Պապի մօտ, որ շատ սիրով ընդունեց նորանց, առաջին հարկաւոր դէպքումը խոստացաւ գործ դնել նոցա ծառայութիւնը, Ֆաբերին և Կսավիերին շնորհեց della Sapienza անունով Կոլլեգիումի մէջ Աստուածաբանութեան ամբիոններ, այլ և թոյլ տուեց Իգնատիոսին աշխատել Հռոմի մէջ հոգիների փրկութեան համար:

Այս բանով Լօյոլա արժանալով «Հոգևոր Վարժութենների» օգնութեամբը, նոր կողմնակիցներ ստացաւ, որ Պապի դռնումը զօրեղ մարդիկ էին: Նոցա մէջ էին նաև կարդինալ Կոնտարինի և Օրտիցը: Այս վերջինս հեռացաւ Կասսանօ սարը և այն տեղ լսումէր Իգնատիոսից Աստուածաբանական դասեր, չնայելով, որ ինքը Օրտիցը այն ժամանակներում երևելի Աստուածաբան էր և մեծ փառք էր ճարել Փարիզի Համալսարանի մէջ:

Իբրև երեսփոխան Կարոլոս Vի գործերումը, Օրտիցը հարկադրված էր մնալ միշտ Հռոմի մէջ, վասնորոյ չէր կարողանում յայտնապէս հետևել Լօյոլային և նորա աշակերտների կարգումը լինել. բայց դորա փոխանակ գործ էր դնում նա իւր բոլոր ջանքը և հնարը Պապի դռնումը, որ յառաջադիմութիւն պարգևէ Իգնատիոսի մտադրութեան: Ամենայն բան լաւ էր գնում հասարակութեան համար. Իգնատիոսին թըվումէր, թէ հասել է վերջապէս կարգը հիմնելու ժամանակը. նա իւր բոլոր աշակերտները Հռոմ կանչեց, որոնք ժողովով խորհուրդ առնելով իւրեանց նախկին կանոնների վերայ (աղքատութիւն և ողջախոհութիւն) աւելացուցին երկու հետևեալ ուխտերը «կոյր հնազանդութիւն դէպի կարգի Գեներալը և Պապը: Վերջին ուխտը Լօյոլա անհրաժեշտ համարեց. պատճառ, գիտէր, թէ Պապը շատ փոքր է սիրում այլ կարգերը, որոնք Պապական իշխանութեան այն վտանգաւոր ժամանակում ոչինչ օգուտ չէին բերում:

Աշակերտները կամենումէին կարգը անուանել հիմնադրի անունով «Իգնատիոսեան», բայց Լօյոլա հրաժարեց իւրեանից այդ պատիւը, և համոզեց նորանց անուն տալ կարգին «Յիսուսեան» (so-

cietas Jesu)։ Վերջապէս Լօյոլա կարդինալ Կոնտարինու ձեռքով առաջարկեց Պապին իւր կարգի պայմանքը։ Այդ պայմանները այնպիսի խելքով, այնպիսի խորին իմաստութենով և ներկայ քաղաքական գիտութենների հմտութենով գրուած էին, որ չէր կարելի ամենևին կարծել, թէ այդ անկիրթ Իգնատիոսի գրածը լինէր. երևի թէ նորա աշակերտներից մինը և մանաւանդ Լայնեզն էր գրել։ Պաւլոս III Պապը, կարդալով այս պայմանքը, ուրախութենիցը բաձագանչեց «Spiritus Dei est hic» (Հոգի Աստուծոյ է այս տեղ) և երեք կարդինալի վերահասութեանը յանձնեց այն պայմանները. այս կարդինալներից մինը էր Բարթողոմէոս Գվիդիչիոնի որ շատ ուսեալ և խելացի մարդ էր, և իւր բարեպաշտութեան մասին ամենայն տեղ յարգելի։ Այս կարդինալը հակառակ գտնուեց այս կարգի հիմնաւորութեանը. նա սորանից յառաջ ևս մի շարադրութիւն էր գրել, որի մէջ շատ հասուն բանականութենով ապացուցանումէր աբեղայական կարգերի անօգտութիւնը և մինչև անգամ նոցա վնասակարութիւնը դէպ ի Պապական իշխանութիւնը. այս պատճառով պահանջումէր, որ ջնջվին այսպիսի աբեղայական կարգերը, որոնք անօգուտ էին և մարդկութեանը, և քրիստոնէութեանը և Պապական իշխանութեանը։ Նորա երկու ընկերքը համաձայնեցան նորա հետ և առաջարկութիւնը մնաց առանց հաստատվելու։

Բայց Լօյոլա և նորա ընկերքը չվհատեցան ամենևին. նոքա առաւել ևս սկսեցին գործ դնել իւրեանց ջերմեռանդութիւնը, որ կարողանան շահել Պապի հաճութիւնը. ցրվեցան բոլոր Իտալիայի քաղաքները և սկսեցին քարոզել ապաշխարութիւն, վարքի սրբութիւն և հնազանդութիւն դէպ ի Պապական աթոռը։ Նոցա բարեպաշտութեան համբաւը տարածվեցաւ մինչև շատ հեռի տեղեր. Պորտուգալիայի Տէրութիւնը խնդրեց Իգնատիոսից, որ սա մի քանի մարդ ուղարկէ Հնդկաստան Քրիստոսի Աւետարանը քարոզելու, բայց Իգնատիոսը այսպիսի հարկաւոր ժամանակում չկամենալով բաժանել իւր հասարակութիւնը, մի միայն Լիսաբօն ուղարկեց երկու մարդ Րօդրիգեզ և Կսավիե անուններով։ Նա օգուտ քաղելով այս հանգամանքից կրկնապատկեց ջանքը, որ իւր կողմը շրջէ որպէս Պապը, նոյնպէս և կարդինալ Գվիդիչիոնին. փոփոխակի ներգործումէր, երբեմն իբրև քաղաքական մարդ, երբեմն իբրև Սուրբ. և վերջապէս հասաւ իւր ցանկացած նպատակին. Պաւլոս III Պապը իւր կոնդակովը, որ գրած էր 1540 թիւ դեկտեմբերի 27 ին հաստատեց կարգը միայն այն պայմանով, որ այս հասարակութեան անդամների թիւը քառասունից առաւել չլինի։

Սորանից յետոյ հասարակութեան անդամքը ձեռնամուխ եղան

գեներալի ընտրութեանը. ամենայն մարդ ցանկանումէր, որ Իգնատիոսը լինի: Նա երկար ժամանակ հրաժարվումէր, բայց յետոյ չկարողանալով հերքել հասարակաց խնդիրը, որ ծունկ չոքած, աղաչումէին յանձն առնուլ, համաձայնեցաւ նոցա աղաչանքին և յանձն առաւ Յեզուիտեան կարգի գեներալութեան իշխանութիւնը և պատիւը:

Լօյոլա պատարագը մատուցանելուց յետոյ, ինչքան Հռովմումը կարդինալներ կային, նոցա բոլորի ներկայութեամբը հրապարակով ու հանդիսով ուխտեց, միշտ պահել աղքատութեան, ողջախոհութեան ուխտը և կոյր հնազանդութիւն ունենալ դէպ ի առաքեալի փոխանորդը որպէս բարեհաճէր նա ուղարկել կարգի անդամները Աւետարանը քարոզելու համար. Այս բանը այն միջոցին ոչ ոք չհասկացաւ: Լօյոլայից յետոյ միւս ներկայ եղող անդամքը նոյնպէս երդում կերան, միայն այս զանազանութեամբ, որ երդում ուտելու ժամանակ նայումէին Իգնատիոսի վերայ, և բացի այն ուխտերից, որ արեց Իգնատիոսը, նոքա յաւելացուցին մի այլ եւս ուխտ, այսինքն հնազանդ լինել կարգի գեներալին: Շուտով այս բաներից յետոյ Լօյոլա սկսեց իւր սովորական պարապմունքը, այսինքն քարոզել ժողովրդին բարքի և վարքի սրբութիւն և ուսուցանել մանուկներին կրօնագիտութիւն. Նա մանաւանդ հոգս էր առնում բարքերի մաքրութեան մասին:

Այն միջոցին Հռովմէական եկեղեցու հոգևորականները, Աղեքսանդր VI ի գործերովը և Լեոն X ի շռայլութենովը պակասել էին պատշաճից .... Իգնատիոսը իւր ուշադրութիւնը դարձուց անպարկեշտ կանանց վերայ. Նա հաւաքումէր նորանց մի յատուկ նոցա համար պատրաստված տան մէջ, և քարոզումէր ապաշխարութիւն: Մի անգամ այս կանանց մէջ պատահեցաւ մի ամուսնաւոր կին, որ կռուով ապրումէր իւր մարդի հետ. Նա համոզվելով Իգնատիոսի քարոզներից մնաց այս տան մէջ: Այս բանը արդէն հերիք պատճառ էր կարգի թշնամիներին, նոքա յանցաւոր էին համարում այս և սորա նման գործերի մէջ կարգի անդամները: Բանը այսպէս լինելուց յետոյ Իգնատիոսին հարկաւոր եղաւ դիմել դէպ ի Պապի պաշտպանութիւնը, որ իւր կոնդակովը սրբեց Իգնատիոսի և նորա ընկերների արատաւորված պատիւը:

Այս միջոցին Յիսուսեանները ցրվեցան բոլոր եւրոպական թագաւորութենների մէջ: Րոդրիգեզ մնաց Պորտուգալիայում, ուր այնպիսի ազդեցութիւն ունեցաւ, որ թագաւորը ընծայեց կարգին Լիսաբոնի Սուրբ Անտօնի եկեղեցին և Կօիմբրի դպրոցը: Ինքը Պապը, Սալմերոն և Բրուէ Յիսուսեանները ուղարկեց Իրլանդիա, ուր մեծ երկիւղ կար Հենրիկոս VIII ի վերանորոգութեան երեսից: Ֆաբեր, Լեժէ և Բօբադիլլիա գնացին Գերմանիա: Լեժէ, Րեգենսբուրգի մէջ

այնպիսի ջերմութեամբ խօսեց վերանորոգութեան ընդդէմ, որ ժողովուրդը կատաղելով կամենումէր խեղդել նորան Դանուբի մէջ։ Իսկ Փաբերը Քեօլն քաղաքում ստացաւ մի նոր անդամ Պետրոս Կանիզի անունով, որ յետոյ մեծ արդիւնք ցոյց տուեց կարգին, և շարադրեց երեխաների համար մի կրօնագիտութիւն, խիստ յարգված Պապականներից և մինչև այժմ։

Ֆրանսիայի մէջ բաղդը չյաջողեց Յիսուսեաններին։ Հենրիկոս IIը, ինչ ժամանակ պատերազմ ունէր Սպանիայի հետ, քշեց փարեզից բոլոր Սպանացիները, որոնց կարգումը և Յիսուսեանները, բայց դորա փոխանակ Սպանիայի մէջ առանձին պաշտպանութիւն ցոյց տուեց նորանց Ֆրանսիսկոս Բօրջիայն, որ այն միջոցին Կարոլոս V ի տեղապահն էր Մադրիտի մէջ։ Ինչ որ վերաբերումէ Իտալիային, այս երկրում մի նշանաւոր քաղաք չկար, ուր չլինէր Յիսուսեան։ Շուտով նորանց թիւը բարձրացաւ մինչև ութսուն. Պապը, օրէ օր համոզվելով Իգնատիոսի ջերմեռանդութենից, յաւելացնումէր Յիսուսեանների արտօնութիւնը իւր անսխալելի կոնդակներովը?? Նա շինեց նորանց թիւը անորոշ և անսահման, իրաւունք տուեց կարգին նոր օրէնքներ և կանոններ սահմանել իւրեան իսկ կարգի համար, փոփոխել հին կանոնները յարմարվելով տեղին և հանգամանքներին, թոյլ տուեց Յիսուսեաններին պատարագել ամենայն եկեղեցւ մէջ. Պապական աշխարհի բոլոր քաղաքների մէջ, քարոզել ժողովրդին հրապարակներում և փողոցներում, թողութիւն տալ մեծ մեծ մեղքերին, մինչև անգամ այնպիսի մեղքերին, որ մինչև այն օրը Պապը միայն քաւումէր. Պապին մնացել էր սեպհական թողութիւն տալ այն մեղքերին, որ յիշված են «Սուրբ Հաղորդութեան» ասված կոնդակի մէջ։

Այս կերպով Աբեղայական կարգից, աստիճան առ աստիճան գոյացաւ մի հասարակութիւն, որ ունէր իւր սեպհական օրէնքները, կանոնը և իրաւունքը. երևեցաւ նոր տէրութիւն բոլոր եւրոպական տէրութիւնների մէջ (status in statu)։ Շուտով ահա սորանից յետոյ հանդէս բացվեցաւ Յիսուսեանների առաջ ցոյց տալու իւրեանց ջերմեռանդութիւնը դէպ ի Առաքելական Աթոռը, կամենումեմ ասել թէ կազմվեցաւ Տրիդենտեան հռչակաւոր ժողովը։ Այն բաների մասին, որ պատճառ եղան այս ժողովքի կազմութեանը, հարկաւոր համարումեմ մի քանի խօսք ասել։

Եկեղեցական վերանորոգութիւնը, անհաւատալի արագութենով տարածվումէր Գերմանիայի մէջ. զուր տեղը Լեոն X Պապը աշխատումէր փակել նորա առաջը «Նզովքի կոնդակովը»։ Ինքը կայսրը մի կողմից խոստովանեցաւ վերանորոգութեան օրինաւորութիւնը,

իրաւունք տալով Պրոտեստանտներին (բողոքականներին) մի ազատ ժողով կազմել, հաւատի վերաբերեալ խնդիրները քննելու և վճռելու համար: Բայց դորանից Ֆրանսիայի և Սպանիայի Եպիսկոպոսքը պահանջումէին իւրեանց արտօնութիւնը մանաւանդ Եպիսկոպոսական գործերի մէջ, այն արտօնութիւնը, որ Հռովմի Աթոռը ինքը իւր ազատ կամքով առանց ոչ ոքի համաձայնութեան սեպհականել էր իւրեան: Շատ բնական և հասկանալի բան է, որ Պապերը, տեսանելով, որ գործը այսպիսի ընթացք ստացաւ, պէտք է ամենայն ջանք գործ դնէին ժողովքի առաջը փակելու, որ թէ կազմվէր, անտարակոյս ցոյց կը տար Պապական իրաւունքների չարաչար գործադրութիւնը, և գուցէ դեռ ևս կը պահանջէր, որ իսկական Պապական կառավարութիւնը, ինքը իսկ Պապութիւնը ենթարկվի վերանորոգութեան, որ գոնէ դորանով կարելի լինի փակել Պրոտեստանտութեան առաջը, որ ինչպէս մի կրակ չոր նիւթերի մէջ, այնպէս առաջ էր վազում դէպ ի ամենայն կողմ ժողովրդի մէջ: Այո՛ դեռ Ադրիանոս VI ը մտածումէր վերանորոգել Պապականութիւնը. բայց վերահաս մահը արգելք եղաւ նորան իւր ցանկութիւնը կատարելու: Պապական Աթոռը զանազան վէճերի և Սիմոնականութեան միջնորդութենով անցաւ Ֆլօրենտացի զօրավարի ապօրինի որդու, Յուլիոս Մեդիչիսի ձեռքը: Այս ամենաննենգաւոր մարդը գործ դրեց իւր բոլոր խորամանկութիւնը, որ յետ ձգէ և միանգամայն ոչնչացնէ ժողով կազմելու դիտաւորութիւնը, և նորա յաջորդը, երբ նստաւ Հռովմի գահի վերայ, տեսաւ, որ արդէն բանը բանից անցել էր: Պաւլոս III Պապը, որպէս զի կարողանայ այս ընդհանուր ընդդէմ Պապականութեան ապստամբութեան առաջը առնուլ, անհրաժեշտ հարկ համարեց ընդունել հասարակաց ցանկութիւնը, և թոյլ տալ որ ժողովքը լինի: Բայց զուր գնացին նորա աշխատութիւնքը այն մասին, որ ժողովը լինի Իտալիայում. նորան հարկադրեցին, որ լինի այն Տրիդենտի մէջ:

Պապը, կամենումէր ուղարկել այն ժողովը իբրև իւր երեսփոխան այնպիսի մարդիկ, որ նախ և յառաջ շատ ջերմեռանդ հպատակ էին Պապական աթոռին, երկրորդ, երևելի Աստուածաբան և կանոնագէտ: Այսպիսի դիպուածում կարո՞ղ էր արդեօք նա մոռանալ Յիսուսեանները, նոցա կոյր հնազանդութիւնը Պապական իշխանութեան ատելութիւնը դէպ ի հերետիկոսները, վէճերի և խռովութենների մէջ վարժութիւնը, ամենայն ինչ մի խօսքով շատ յարմար էր Պապի ցանկութեանը և հանգամանքների պահանջողութեանը. վասն որոյ հրամայեց նա Գեներալին, ընտրել Յիսուսեանների միջից երկու շատ լաւ և ուսումնական մարդիկ ժողովը ուղարկելու համար: Իգնատիոսը ուրախութեամբ կատարեց այս հրամանը, որ պի-

տոյ է նոր փառքով ծածկէր կարգի երեսը. նա ընտրեց այս մասին Լայնէզը և Սալմերօնը, որ իբրև Պապական Աստուածաբանք հասան Տրիդենտեան ժողովը մայիսի մէջ 1546 Թուականին։

Բնակվելով հիւանդանոցների մէջ, նոքա սկսեցին իւրեանց գործը նորանով, որ կեղծաւորվելով այնտեղի հոգևոր իշխանների առաջև, աշխատումէին շրջել նորանց իւրեանց կողմը։

Այս կարգի պատմիչքը ասումեն թէ չնայելով, որ Իգնատիոսը հիւանդ էր տենդով, այսու ամենայնիւ մի այնպիսի գեղեցկախօսութեամբ ջատագովումէր Մարիամի կուսութիւնը Դոմինիկեանների հակառակ, որ ներկայ գտնված եպիսկոպոսները համարեցին թէ տեսանումէին իւրեանց առաջևումը ո՛չ թէ մի հասարակ մարդ, այլ Աստուծոյ մարգարէ, որ իբրև դաբիրայ եռոտանու վերայ մեկնումէր խորհուրդներ և քարոզումէր երկնքի Աստուածային նախասահմանութիւնը։ 1) Բայց Տրիդենտեան ժողովքի սահմանադրութենից երևումէ, որ Լայնէզ մասնակից չէր այս վէճին, և թէ միայն Օգոստինեան աբեղայքը ջատագովումէին Մարիամի կուսութիւնը Դոմինիկեանների հակառակ, թէ և երկու կողմը ևս չխլեց մինը միւսից յաղթութեան ձիթենին, և երկար չոր ու ցամաք վիճաբանութենից յետոյ հարկադրեցին նորանց լռել և դադարել այդ անօգուտ խօսակցութենից՝ հաւաստի է միայն այս, որ Լայնէզ իւր առաջին անգամ ժողովքի մէջ յայտնվելու ժամանակ, կասկած տարածեց ժողովականների սրտումը, որոնք համարումէին, թէ նա Պելագիական էր. պատճառ վեցերորդ նիստումը, երբ խօսակցութիւն էր լինում Աստուածային գթութեան մարդու վերայ ներգործութեան մասին, նա հերքումէր մարդումը ամենայն ազատ կամք։

Շուտով Պապի երեսփոխանների և այլ եպիսկոպոսների մէջ յայտնի թշնամութիւն ծագեցաւ։ Պապը, օգուտ քաղելով ժանտախտի յայտնվելուց Տրիդենտի մէջ, տեղափոխեց ժողովը Բօլոնեա. Պապական կողմնակիցքը, նոցա կարգում և երկու Յիսուսեանները գնացին այս քաղաքը, բայց Գերմանացւոց և Ֆրանսիացւոց եպիսկոպոսները մնացին Տրիդենտի մէջ, և շարունակեցին եկեղեցական գործերի քննութիւնը. այս կերպով ընդհանուր ժողովը գլուխ չեկաւ։

Ի վերայ այսր ամենայնի, այն վէրքը, որ Վերանորոգութիւնը դրեց Պապական սրտի վերայ, աւելի խոր էր ներգործում հետ զհետէ. օրէ օր տարածվումէին Լուտերի Վարդապետութիւնը Գերմանիայում,

1) Putabant non hominem aliquem e pulpito verba proferre, sed vatem coelo delapsum e tripode oracula fadere, mysteria eloqui decreta pronuntiare (Imago primi succ. Lib. 1. pag 139).

Ցվինգլիինը Շվէյցարիայում, իսկ կալվինականութիւնը ծաղկում էր Ֆրանսիայի մէջ. Հռովմի քահանայապետութիւնը տեսանում էր իւր մօտակայ կործանումը։ Ամենայն Պապ երկիւղ էր կրում վերջացնել այն գործը, որ սկսած էր ընդդէմ եկեղեցական վերանորոգութեանը, վասնորոյ և թողնում էր իւրեան յաջորդին։ Գերմանացիք, Ֆրանսիացիք և մինչև անգամ Սպանիացիք զօր էին պահանջում որ մի Տիեզերական ժողով լինի և քննվին այն տեղ եկեղեցական գործերը. վերջապէս կորուսին նոքա իւրեանց համբերութիւնը, սպառնացան Պապին, որ թէ նա չ՚հաւաքի մի օրինաւոր ընդհանրական ժողով, ինքեանք ազգային ժողովներով վերջացնելու էին ահա գործը։ Այս պատճառով Պիոս IV Պապը հարկադըրվեցաւ տասն տարուց յետոյ նոր ինորոյ կազմել մի ընդհանուր ժողով, որի համար տեղ նշանակվեցաւ դարձեալ Տրիդենտը։

Լայնէզը և Սալմէրօնը, դարձեալ յայտնվեցան այս ժողովքի մէջ իբրև Պապական Աստուածաբանք. Նոցա գլխաւոր միտքը այն էր, որ փոխեն ժողովքի ուղղութիւնը, պարապեցուցանեն նորան զանազան Աստուածաբանական չնչին բաներով և այս կերպով մոլորեցնելով ժողովքի ուշադրութիւնը, հեռացնեն այն առարկայից որի մասին գումարվել էր ժողովքը և որ ամենայն իրաւունքով սպառնում էր Պապական Աթոռին չարաչար կործանումն. այս տեղ իւր ամենայն ճոխութենով հանդէս դուրս եկաւ Յիսուսեանների դպրոցական Աստուածաբանութիւնը։ Զուր տեղը հրամայվեցաւ, որ ժողովքի անդամներից իւրաքանչիւրը կէս ժամից աւելի չ՚խօսեն. Սալմէրօնը և Լայնէզը այնպիսի ճարտարութենով խառնափնդորում էին խնդիրները, որ մինը միւսից դուրս գալով, անվերջանալի էր լինում, և ժողովքը դեռ չէր սկսած իւր գլխաւոր գործը։

Վերջապէս Ֆրանսիայի և Գերմանիայի Եպիսկոպոսները ճարերը կտրված, առաջարկեցին ժողովքի դատողութեանը Հռովմէական Աթոռի գործը, այսինքն իւր կամքով զանազան եպիսկոպոսական հոգևոր իրաւասութենների ինքեան սեպհականելը։ Այս տեղ հարկաւոր էր, որ Պապի կողմի մարդիկը պաշտպանէին Հռովմի Աթոռը, Լայնէզը կատարեց այս գործը մեծ ճարտարութեամբ իւր խօսած ճառովը, որ կառող էր օրինակ լինել դպրոցական իմաստակութեան (սոփեստութեան)։ Աւելորդ եմ համարում դուրս գրել այս տեղ նորա բոլոր ճառը, որ ամբողջ գրուած գտանվումէ Paolo Sarpi ի շարադրութենների մէջ «Histoire du concile de Trente» (T. II. p. 139. et squ). յիշեմ միայն այս, թէ Լայնէզը առաջին մասնումը առ հասարակ վարդապետումէ Պապական իշխանութիւնը, ապացուցանումէ Պետրոսի գերազանցութիւնը միւս առաքեալներից,

որից դուրս է բերում եզրակացութիւն, թէ և Պապը որպէս յաջորդ Պետրոսի գերազանց է այլ եպիսկոպոսներից, որոնք միւս առաքեալների յաջորդներն էին, ուրեմն գերազանց է և ներկայ ամբողջ ժողովքից. ըստ որում, ասում է Լայնէզ, եթէ իւրաքանչիւր եպիսկոպոս առանձին առանձին պարտական են հնազանդվել Պապին, և թէ նորանցից մինը չ'հնազանդվի, հերետիկոս կը համարվի, ուրեմն կասկած չ'կայ, որ բոլորը միասին առած, եթէ հակառակվին Պապին, հերետիկոս կը համարվին, և ժողովը, որ Պապը կազմել է մի միայն խորհուրդ առնելու համար, կըդառնայ հերետիկոսական ամբոխ։ Այս բոլոր իմաստակութիւնը նա զօրացնում է Սուրբ գրքի վկայութեններով, որ մեկնումէր, ինչպէս կամենումէր ինքը, կամ, ինչպէս ցանկանումէր պապականութեան սիրտը, թէ գրուած լինէին, և կանոնգրքի յօդուածներով։ Երկրորդ մասնումը հերքում է նա այն կարծիքները, որ առանձին առանձին տրվեցան Պապի հակառակ։

Այս ճառը զանազան տպաւորութիւն գործեց լսողների վերայ․ պապական դեսպանները մինչև երկինք բարձրացուցին Լայնէզի խելքը և ճարտարութիւնը, դորա հակառակ ուղղամիտ եպիսկոպոսները լցվել էին արհամարհանքով դէպ ի նա և դէպ ի նորա գոված Պապը, մանաւանդ Փարիզի Արք Եպիսկոպոսը մի առանձին ոգևորութենով ջարդեց Լայնէզի կարծիքները օրինաւոր և առողջամիտ փաստերով. և խոստացաւ հետևեալ նիստումը ապացուցանել, որ ինքեանք Յիսուսեանք են հերետիկոս և կամենումեն խռովել եկեղեցու խաղաղութիւնը։

Պապի դեսպանները և Յիսուսեանները գործ դրեցին իւրեանց բոլոր խարդախութիւնը, որպէս զի այդ նիստը չ'լինի, ուր պիտոյ է արդարապէս խայտառակվէին Փարիզի իմաստուն Արք եպիսկոպոսի բերանով։ Վերջապէս հասան իւրեանց նպատակին, զանազան ազգերի Եպիսկոպոսները մանաւանդ Փրանսիացիները և Սպանացիները կռվեցնելով միմեանց հետ։ Կայսրը, իմանալով այս բանը, գնաց Ինսպրուկ, որ մօտ լինելով Տրիդենտին, իւր ներգործութենովը հաշտեցնէ երկու թշնամացած կողմերը։ Կանիզի Յիսուսեանը, որ գտնվումէր կայսրի մօտ, ամենայն հնար գործ էր դնում, որ Պապի կողմը շրջէ նորան. երբ այս անօգուտ եղաւ, նա լրտես դարձաւ, և Ֆերդինանդի բոլոր մտածութենների մասին ծանօթութիւն էր տալիս Պապի դեսպաններին և Յիսուսեաններին, որոնք իմանալով, վաղ ուրեմն ներգործումէին ժողովքի մէջ և կայսրի խաղաղութեան մասին խորհուրդների առաջը փակումէին։ Ահա այս կերպով ժողովը չ'կարողացաւ հասանել իւր գլխաւոր նպատակին, որ էր Պապական Աթոռի և Տէրութեան վերանորոգութիւնը։

Անհնար է նոյնպէս լուռ մնալ Լայնէզի և մի այլ խաբերայութեան մասին: Ժողովքի մէջ սահմանված էր շատ փոփոխութիւններ առնել աբեղայական կարգերում, որոնց մէջ կայր և այս թէ, կարգի իշխանը տարեկան հարցաքննութենից յետոյ, կամ պիտոյ է թոյլ տար աշակերտներին ընդունել ուխտը, կամ յետ դարձուցանէր նորանց իւրեանց տունը: Որովհետև այս բանը համաձայն չէր Յիսուսեան կարգի ուղղութեանը, որի անդամ լինել ցանկացողքը շատ տարիներով պիտոյ է փորձվէին, վասնորոյ Լայնէզ խնդրեց, որ բացառութիւն լինի իւրեանց կարգի մասին, այսինքն այս կանոնը ազդեցութիւն չունենայ Յիսուսականացու աշակերտների վերայ: Այս խնդրին բոլորը միաբերան համաձայնեցան, բայց երբ այս սահմանադրութիւնը պիտոյ է գրով արձանացնէին, Լայնէզ Լատինի բաղդասութեան կանոնների վերայ հիմնըվելով, հրամայեց գրել «Per hæc sancta sinodus non intendit» և այլն: Այս յոգնակի բառը hæc փոխանակ եզակի բառիս hoc, երկպայրաբանութիւն տալով ամբողջ սահմանադրութեանը, պատճառ դարձաւ վերջումը, որ Յիսուսեանք չ'ընդունին այս ժողովքի բոլոր սահմանադրութիւնքը աբեղայական կարգերի մասին:

Այս միջոցին Իգնատիոսը խնդրեց և ստացաւ Պապից ուրիշ շատ արտօնութիւններ իւր կարգին: Նա ինքը սկսեց փոքր առ փոքր յետ կենալ իւր առաջվայ ուխտերից. Պորտուգալիայի թագաւորը կամենումէր իւր խոստովանահայր նշանակել Յակոբ Միրա Յիսուեանը, որ հրաժարվեցաւ այս վսեմ պաշտօնից, անհամաձայն համարելով այսպիսի պաշտօնը իւր դրած հեզութեան ուխտին, այս բանը բոլորովին անհաճոյ եղաւ Իգնատիոսին. պատճառ, որ գրեց Միրային «Այդպիսի պաշտօնքը հակառակ չեն մեր կոչմանը. մեք «պարտական ենք չ'արհամարհել հասարակաց կարծիքով շատ ցած «ճանաչված գործը, և ոչ վախենալ շատ բարձր պաշտօններից: Այո՛ «մեզ պիտոյ է հիւանդանոցներումը վարժել մեր ջերմեռանդութիւնը, «բայց իվերայ այսր ամենայնի չ'հրաժարվել և թագաւորական ապա«րանքներից: Թագաւորները ամենայն կողմից փորձանքներով և ամ«բոխմունքներով պատած, առաւել ևս քան թէ այլ մահկանացուք, «կարօտ էին մեր օգնութեանը, որ հոգու փրկութիւն գտանէին»: Ահա՛ Յիսուսեանների թագաւորական խոստովանահայր դառնալու և նոցա խղճմտանքին տիրելու համար աշխատութենների գլխաւոր հիմքը: Բայց Լօյոլա միանգամայն այլապէս էր մտածում եպիսկոպոսական արժանաւորութեան մասին, և երբէք չէր կամենում թոյլ տալ Լէժէին, կայսրի ձեռքից ընդունել Աուգսբուրգի եպիսկոպոսական աթոռը: Նա երկիւղ էր կրում, թէ մի՛ գուցէ կարգի քանքարաւոր

և օգտակար անդամքը հոգևորական բարձր աստիճանների հասանելով, մոռանան և անտես առնեն կարգի օգուտը։

Այս միջոցին Իգնատիոսը իւր կարգի երկու աստիճանների վերայ (այսինքն անդամների և աշակերտների), յաւելացրեց երրորդ աստիճանը ևս «Արտաքին Յիսուսեան» (jésuites extêrnes) Այս աստիճանը հաստատվեցաւ նորանց համար, որոնք ստիպված իւրեանց հանգամանքներից չէին կարողանում ընդունել կարգի ուխտը, բայց կարող էին օգտակար լինել կարգին. այս պատճառով բոլոր առաջվայ ուխտերի միայն անունը մնաց և կարգը կորուց մինչև անգամ հոգևորական բնաւորութիւնը և յատկութիւնը. այժմ կիսով չափ դարձաւ աշխարհական, որ (ինչպէս կը տեսանենք յետոյ), շատ վէճերի պատճառ եղաւ Փարիզի Պարլամենտի հետ։

Բայց կարգը իւր արագ յառաջադիմութեան մէջ, պատահեցաւ և հզօր հակառակորդների, որ ճանաչումէին նորա հոգին և ուղղութիւնը։ Պորտուգալիայում դատապարտումէին Յիսուսեանները, թէ նոքա, ուսուցանելով Կօիմբրեան Կօլեգիումի մէջ, սերմանումեն աշակերտների սրտումը այնպիսի գիտութիւն, որ օգտակար էր կարգին, բայց անհամաձայն Թագաւորութեան հին և բնաւորեալ սովորութեններին։ Սպանիայում, եպիսկոպոսները շատ լաւ չէին նոյնպէս Յիսուսեանների հետ, մտքերումը ունենալով նոցա ամենասաստիկ աշխատութիւնը Տրիդենտեան ժողովի մէջ, պապական իշխանութեան գործադրութիւնը արդարացնելու համար, բայց Յիսուսեանների բաղդից այս արհամարհանքների փոխանակ Սուրբ Ինկվիզիցիօն ընդունեց նորանց իւրեան պաշտպանութեան տակ, և Լօյոլան կարողացաւ վերջապէս Ֆերդինանտ երկրորդի օրովը հաստատվիլ Նիդերլանտայի մէջ։

Մի միայն Ֆրանսիայի մէջ կարգը հանդիպեցաւ սաստիկ արգելառիթների և շատ խելացի հակառակորդների։ Շատ ժամանակ է, որ Յիսուսեանք կամենումէին մտանել և արմատանալ այս տէրութեան մէջ, որպէս զի կարողանան տիրապետել Աստուածաբանական Ֆակուլտէտին, որի կարծիքը շատ յարգելի էր Պապական աշխարհի մէջ։ Այս խորհրդով Իգնատիոսը դիմեց դէպ ի Լօտարինգեան կարդինալը, որ գտանվումէր այն ժամանակ Հռովմում, և որ շատ հարուստ և երևելի մարդ էր Ֆրանսիայի մէջ։ Կարդինալը խոստացաւ նորան պաշտպան լինել Ֆրանսիայի Տէրութեան մօտ, և ճշմարիտ. կատարեց նա իւր խոստմունքը, երբ արդէն Փարիզ էր հասել։ Նորա միջնորդութենովը Հենրիկոս II ը հրամայեց Պարլամենտին արձանագրել Թագաւորական հրամանը, որով օրինաւոր էին ճանաչվում Ֆրանսիայի մէջ բոլոր պապական կոնդակները կարգի արտօնութենների մասին և որով թոյլատրվումէր մի միայն Փարիզ քաղաքի մէջ

շինել տուն և կօլլեգիում երեխաների դաստիարակութեան համար։ Պարլամենտը, դեռ ևս այս հրամանը չ'կատարած, բովանդակ գործը ենթարկեց Փարիզի Համալսարանի Աստուածաբանական ֆակուլտէտի և նոյն քաղաքի Արք Եպիսկոպոսի վերաքննութեանը։ Սուրբ ֆակուլտէտը իւր գրաւոր դատողութեան մէջ յայտնեց. թէ այդ «կարգը «սեպհականումէ ինքեան մինչև այժմ չ'լսված անուն, այս է Յիսու«սեան. թէ նա անդամ է ընդունում անխտիր ամենայն մարդ և մինչև «անգամ այնպիսի մարդիկ, որ մանաւանդ յայտնի էին իւրեանց ան«պատվութենովը, թէ նա չունի այնպիսի սովորութիւններ և կանո«նադրութիւններ, որով բաժանվէր կարգը աշխարհականներից, թէ «տուել են նորան աւելորդ արտօնութիւնք, որ վնասակար էին եպիս«կոպոսական և քահանայական իրաւունքներին, թէ կարգը այս ճա«նապարհով, անհամաձայնութիւն և վէճ սերմանելով այլ և խան«գարելով հոգևոր իշխանութեան հպատակութիւնը, ոչինչ բա«րեկարգ Տէրութեան մէջ չէ կարող ընդունվիլ»։ Փարիզի Արք եպիսկոպոսը, որ պատճառ ունէր ատելու Յիսուսեանները, Տրիդենտեան ժողովի մէջ նոցա առաջ բերած խնդիրների և կարծիքների մասին, հաստատեց ֆակուլտէտի վճիռը, այս ևս յաւելացնելով, թէ որովհետև, կարգի գլխաւոր նպատակը այն է, որ քարոզէ անհաւատներին Քրիստոսի Աւետարանը, վասն որոյ առաւել պատշաճ է Սուրբ Յովհանն Երուսաղեմայու Ասպետների նման ուղարկել նորանց Ասիայ։ Յիսուսեանները, ջարդ ու փշուր եղած Սրբազան ֆակուլտէտի և Փարիզի Արքեպիսկոպոսի դատակնիքով, հեռացան Սէն-Ժերմէն ագարակը, որ Փարիզի Արք եպիսկոպոսի իշխանութենից դուրս էր, Սէն-Ժերմէնի Աբբային Պապից պարգևած արտօնութեան զօրութենովը։ Իգնատիոսը գրեց նորանց, որ չի յուսահատվին, այլ շարունակեն իւրեանց աշխատութիւնը. նորա հետևողութենով խուզարկու ատեանը դատապարտեց Փարիզեան Համալսարանի Աստուածաբանական ֆակուլտէտի վճիռը։

Այս միջոցին հասաւ կարգի պատմութեան խորհրդաւոր դարագլուխը, այսինքն Լօյոլայի մահը։ Նորա կեանքում պատահած անօրինակ անցքերը, նորա անդադար հոգսը և աշխատութիւնքը, որ կրումէր կարգը ընդարձակելու և տարածելու համար, հետևեցուցին նորա մարմնի նուաղութիւն, որ թուլացուց Իգնատիոսի իբնէ բիրդ և առողջ կազմուածքը։ Երբ բոլորովին զրկված ուժից, ընկած էր մահուան մահճի մէջ, նա դեռ ևս թելադրեց իւր շարադրութիւնը «Հնազանդութեան օգտակարութեան մասին» և կնքեց իւր զարմանալի կեանքը յուլիսի 31 թուականին 1556 տարումը։ Այսպէս եղաւ այս հռչակաւոր մարդի վախճանը, որի մասին զանա-

զան մարդիկ զանազան բաներ ասացին։ Ոմանք սրբացնումեն նորան, ոմանք վերագրումեն մի առանձին քանքար։ Ճշմարիտը խօսելով եթէ ասենք, նա, ո՛չ այն է և ո՛չ այն. նորա հռչակված սրբութիւնը ո՛չ այլ ինչ էր, եթէ ո՛չ կամակոր մոլակրօնութիւն։ Նա իբրև Սպանիացի ունէր արմատական կամ ժառանգական հպարտութիւն և անսանձ երևակայութիւն, որ ժամանակի զարմանալի փոփոխութենների միջնորդութենովը, ձգումէր նորան զանազան կարգից դուրս գործերի մէջ, որոնք մինչև անգամ անհնարին բաների կարգումն էին։

Կեանքի վերջին ժամանակներումը չ՚մնացին Իգնատիոսի մէջ նորա առաջվայ աշխուժի և ոգևորութեան մինչև անգամ և հետքը. զանազան հոգսերը կարգի կառավարութեան մասին, բնականաբար պիտոյ է հեռացնէին նորա միտքը երկնային տեսիլքներից, երազներից, և դարձուցանէին նորան իրական գործերի վերայ։ Իգնատիոսը բնակվելով Պապական Ապարանքի մօտ, որ այն ժամանակներումը փայլումէր Եւրոպայի մէջ, սեպհականեց ինքեան սնափառութիւն, քաղաքավարութիւն, և մինչև անգամ Պալատական կեանքի շռայլութիւնը։ Նա վերին աստիճանի անկիրթ մարդ էր. եթէ արդարութենով, նորանից սահմանված կարգը իւր քաղաքականութեամբ, կարելի է նշանաւոր համարել, այն ժամանակ կարգը առաւել երախտապարտ է քան թէ հիմնարկողին, ժամանակի հանգամանքներին, որոնք փրկեցին նորան առաջվայ ուխտերից, այսինքն աղքատութենից և հեզութենից, և տուեցին ըստ ամենայնի հակառակ ուղղութիւն. մի բանի համար միայն կարգը երախտապարտ է Լօյոլային, որովհետև նորանից ստացաւ նորա զինուորական հոգին։ Լայնեզի և Ակվավիւ Մաքիավելականութիւնը, հիմնեց կարգի տիեզերական թագաւորութիւնը խորին քաղաքականութեան բովանդակ մասներով. Իգնատիոսը և մտածած չէր անգամ դորա մասին, և կարողութիւն ևս չունէր նորան հասանելու։ Մի միայն կրօնական մոլութիւն էր նորա խորհուրդը և նպատակը, որին հասանելու համար ոչինչ բան չէր խնայում։ Անդադար աշխատութիւնը, երեխաներ կրթելը, ընտանեկան գործերում միջնորդ լինելը բղխումէր առաջ միմիայն հաւատից. բայց յետոյ, այսինքն Իգնատիոսի յաջորդների օրովը, այդ բաները գործիք դարձան զարհուրելի քաղաքականութեան։

Իգնատիոսի վարքը գրողքը ընծայումեն նորան շատ հրաշքներ, միմիայն Րիբադանէյրա, խոստովանելով միայն նորա սրբութիւնը, հերքումէ նորան վերագրած շնորհքները։ Բայց XVII դարու սկզբումը, երբ Յիսուսեանք Ապօթէօս էին պատրաստում իւրեանց նահապետին, Րիբադանէյրայի պատմութիւնը սրբագրվեցաւ այսինքն փոփոխվեցաւ այնպէս, ինչպէս ցանկալի էր Յիսուսեաններին, որ գրէր հեղինակը,

և նորա առաջին տպագրած օրինակները ջնջվեցան որքան կարելի էր Յիսուսեանների աշխատասէր և անխոնջ ձեռքովը: Վերջ ամենայնի Գրիգոր XV մարտի 12 ին 1622 Թուականում դասեց Իգնատիոսը սուրբերի կարգը, և Նիդերլանդայի Յիսուսեանները գրեցին նորա մահարձանի վերայ հետևեալ արժանի ուշադրութեան խօսքերը.

Cujus animus
Vastissimo coërcērï non potuit totius orbis ambitu
Ejus corpus
Humili hoc angustoque tumulo continetur.
Qui magnum aut Pompejum, aut Caesarem, aut Alexandrum cogitas
Aperi oculos veritati
Majorem his omnibus leges
Ignatium.

Որ նշանակում է «Որի հոգու համար բաւական չէր ամբողջ աշխարհի տարածութիւնը, նորա մարմինը պահվում է այս անշուք և նեղ բլուրի տակ: Եթէ դու մեծ ես համարում, կամ Պոմպէոսը, կամ Կեսարը կամ Ալեքսանդրը, բա՛ց ճշմարտութեան հանդէպ աչքդ և կը տեսանես, որ ողջից մեծ է Իգնատիոսը»:

Կարճ ի կարճոյ նկարագրեցի ես այս տեղ Յիսուսեան կարգի հիմնարկութեան և առաջին անգամ բոլոր Եւրոպական Տէրութեանների մէջ տարածվելու պատմութիւնը, հետևում է այժմ ցոյց տալ նորա ներքին կազմակերպութիւնը, որ ինչպէս պատճառ էր կարգի արագ տարածութեանը, նոյնպէս նորանից էր կախվում, որ Յիսուսեանք մեծ հանդէս և նշանակութիւն ստացան պատմութեան մէջ: Այս կազմակերպութիւնը ընդունված է բոլորից իբրև քաղաքականութեան օրինակական գործ: Իգնատիոսը անգիտաբար դրեց նորա հիմքը, և հաւաքեց նիւթեր, որ կարգի դրվեցան յետոյ այլ Գեներալների ձեռքով, մանաւանդ Յակոբ Լայենեզի ձեռքով, որ իւր ժամանակումը երևելի քաղաքագէտներից մինն էր:

Ոչինչ հասարակութիւն աշխարհի երեսին հաստատված չէր այսպիսի ապահով հիմքերի վերայ, ինչպէս Յիսուսեան կարգը. սարսափելով տեսան յետոյ, որ դուրս եկաւ Եւրոպական Տէրութենների մէջ մի ահարկու իշխանութիւն, որ կոխեց ու անցաւ առաջվայ իշխանութիւններից, որոնք չափի ու սահմանի տակ էին և որոնց մէջ կային օրէնք ու կանոն. դուրս եկաւ մի այնպիսի իշխանութիւն, որ աշխատում էր հիմնել մի համաշխարհական, մի տիեզերական Թագաւորութիւն: Կարգի կանոնները, և Թէ ինչպէս էր բաղկանում այս մարդկութեան Թշնամի հասարակութիւնը արդարև յաւիտեանս յաւիտենից կը մնար իբրև մի անլուծանելի առեղծուած օրինատուերի

և Տէրութենական մարդերի համար, եթէ 1584 Թուականումը, երբ Ցիսուսեանք հասան արդէն վերին աստիճանի կարողութեան, չտպվէին այդ բոլոր կարգադրութիւնքը, կարգի գլխաւոր անդամների գործադրութեան համար. այլ մարդերի համար մի անմօտենալի գաղտնիկ էր նոցա կարգը ու կանոնը:

Կարգը բաղկամնումէր այս հետևեալ գլխաւոր աստիճանակարգերից, այսինքն. I) Ունկնդիրներից կամ Նորընծաներից, II) Աշակերտներից, III) Ժողովողներից (coactor) և IV) Ուխտապահներից: Ունկնդիրք անուանվումէին նոքա, որոնք արդէն երկու երեք կամ աւելի ևս տարիներ փորձված էին. գլխաւոր անդամք իշխումէին նոցա վերայ, և նոքա պարտական էին խոստովանել նորանց իւրեանց մեղքերը, պատմել ինչ որ բոլոր կեանքերումը գլխներից անցել էին, այսպէս աչա՛ արդէն Նովիցիալ Ցիսուսեանները քննումէին և ճանաչում նոցա բնաւորութիւնը և այս կերպով դնումէին նորընծաների վերայ այնպիսի պարտականութիւնք, որոնց մանաւանդ յարմար էին: Եթէ նոցանում չերևէին ոչ մի բանի ընդունակութիւն, որ կարգին հարկաւոր էին, այնպիսիներին յետ էին ուղարկում: Կանոնի զօրութենով, մի քանի մահացու մեղքեր, որոնք, թէ լինէին մի մարդի վերայ, զրկումէին նորանց կարգին անդամ լինելու իրաւունքից, բայց այս բանի վերայ չէր լինում խիստ ուշադրութիւն, և գեներալը քանքարաւոր մարդիկ ընդունումէր կարգի անդամ, հաշիւ չ՛դնելով նոցա մեղքերը, որչափ և մեծ լինէին սոքա: Ունկնդիրները երկար փորձվելուց յետոյ անցանումէին գովասանեալ աշակերտների կարգը, որոնք կամ ուսուցանումէին դպրոցների մէջ, կամ դեռ ևս ուսանումէին ինքեանք. Նոցա դեռ յայտնի չէր, թէ ինչ կամ ո՞ր աստիճանակարգի մէջ պիտոյ է մնային, պատճառ այդ բանը գեներալի կամքիցն էր կախվում, որի կամքը էր և հասարակաց կամք, հասարակութեան անդամները տէր չէին իւրեանց մարդկային ազատ կամքին: Գեներալը կարո՛ղ էր նուիրել (օրհնել) նորանց պրոֆեսսա-ւոր ուխտերին, որոնց յայտնի էին կարգի բոլոր գաղտնիքը, կամ շինել նորանցից աշխարհական ժողովողներ, որոնք կատարումէին ամենաստոր պաշտօններ: Երրորդ աստիճանակարգը բաղկանումէր ժողովողներից. այս աստիճանին կարելի էր հասանել և չ՛լինելով գովանի աշակերտ. Նոյնպէս կարելի էր պրոֆեսսաւոր լինել ժողովող չեղած, այս տնօրէնութիւնը, ինչպէս վերևումը ասացի, կախվումէր գեներալից, որ, յարմարվելով կարգի հարկաւորութեններին, տնօրինումէր: Նուիրեալների ընդունակութիւնքը ևս շատ բան էին նշանակում այս տնօրէնութեան ժամանակ: Ժողովողները բաժանվումէին— հոգևորական, և աշխարհական: Առաջիններից պահանջվումէր լաւ

կրթութիւն, պատճառ, նոքա քահանայք էին և դպրոցների մէջ ուսուցիչք, նոյնպէս աննշան մարդերի համար նոցանից էին նշանակվում խոստովանահարք. աշխարհական ժողովողները Կօլլէգիումների և Ուխտապահերի տներում կատարումէին ամենացած պաշտօններ, և չէին կարող քահանայանալ: Ժողովողները հրաժարվումէին իւրեանց սեպհականութենից, որ ընծայումէին Կարգին, այս ինքն Յիսուսեան եկեղեցիներուն և Կօլլէգիումներուն. իսկ ինքեանք պիտոյ է ապրէին մուրալով. բայց թէ գտնվէին Կօլլէգիումներում և նորընծայական տներում, այն ժամանակ ստանումէին նոքա իւրեանց ապրուստ այս շինուածների եկամուտից: Ժողովողների ուխտը կատարվումէր հրապարակով, բայց ո՛չ հանդէսով. նոցա խոստմունքը այս էին. ողջախոհութիւն, աղքատութիւն, և կոյր հնազանդութիւն դէպ ի Գեներալի կամքը:

Ժողովողների և չորս ուխտերի ուխտապահերի մէջ կար մի այլ միջին աստիճանակարգ «Ուխտապահք երեք ուխտերի. Կանոնադրութեան մէջ այս մասին ոչինչ չէ յիշվում, թէ ինչ խորհրդով է կարգած: Երեք ուխտերի ուխտապահքը զանազանվումէին ժողովողներից նորանով, որ չէին կարող քահանայանալ կամ վարժապետ լինել և նորանց ուխտապահական երդումը չէր լինում հրապարակով, թէ և մի կերպ հանդիսավորութեամբ: Հիմնըվելով այս բանի վերայ Ֆրանսիացի Գեներալ Պրօկուրօր Դէ-Մօնկլարը իւր շարադրութեան մէջ «Compte rendu des constitutions des Jésuites» կարծումէ, թէ այս աստիճանակարգը սահմանված էր այնպիսի աշխարհական մարդերի համար, որոնք թէ և Յիսուսեան էին, բայց պիտոյ է ծածկէին այդ նախ, Կարգի օգտի համար, երկրորդ հասարակութեան դրութեանը համեմատ: Այս բոլոր աստիճանակարգի մարդիկը կարող էին և չզանազանվիլ հագուստներով աշխարհական մարդերից:

Վերջին, որ և ամենավերին աստիճանակարգը բաղկանում էր «Չորս ուխտերի ուխտապահերից». սոքա էին հասարակութեան հիմնաւոր սիւնքը — այս մեծ մարմնի ոսկերքը ու ջիլերը «columnae et fundamenta totius societatis; ossa et nervi hujus magni corporis». խորհրդածութեան ժամանակ սոքա միայն ունէին ներգործական և կրաւորական ձայն. սոցանից ընտրվումէին Կարգի Գեներալը և այլ բարձր աստիճանաւորները. սոքա միմիայն, ինչպէս ասաց Պօրտուգալացոց Թագաւորը իւր հրովարտակի մէջ, Յիսուսեանները հալածելու մասին, գիտէին բոլոր դաշնադրութենների սարսափելի գաղտնիքը: Տարակոյս չկայ, որ Չորս ուխտի Յիսուսեաններից պահանջվումէին. խորին գիտութիւն, խելք, բանականութիւն, և մանաւանդ բոլոր

մասնաւոր կամ անձնական օգուտների մեռուցումն, կարգի օգտի համար նոքա պիտոյ է ոչնչացնէին իւրեանց ազատ կամքը և կոյր հնազանդութեամբ հպատակէին կարգի կամքին։ Այս պատճառով մեծ զգուշութեամբ ընդունվումէին այս աստիճանակարգի մէջ միայն այն մարդիկը, որոնք շատ տարիներով փորձված էին։ Սոցա ուխտը զանազանվումէր միւսերից նորանով, որ սոքա երդում էին ուտում կատարեալ հնազանդութիւն ունենալ դէպ ի Պապը, ուր և ուղարկելու լինէր նորանց Աւետարանի քարոզութեան համար։ Բայց այս երդումը մի մեծ զօրութիւն չունէր, և Պապին մեծ օգուտ չէր կարող բերել. պատճառ, գեներալը ամենայն ժամանակ կարող էր յետ կանչել քարոզիչները, եթէ կամենար, առանց խնդրելու Պապի յատուկ համաձայնութիւնը։ Բացի բոլոր այս կարգերից կային և անորոշ Յիսուսեանք «Jésuites indifférants», սոքա յատկացեալ պաշտօն չունէին կարգի մէջ, այլ առանց ձայն հանելու պիտոյ է հնազանդվէին կարգի կամքին և կատարէին այն գործը, որ կարգը յանձնումէր նոցա, սոքա էին ողջից վտանգաւոր Յիսուսեանքը։

Բայց այսու ամենայնիւ ո՛չ թէ միայն օտարների, այլ և ինքեանց Յիսուսեանների համար, որ Չորս ուխտիցը չէին, մնումէր անլուծանելի առեղծուած, թէ ո՛վ, ո՞ր կարգին է պատկանում. յայտնի էր միայն, որ գեներալը, գաւառականները և կօլլեգիումների կառավարիչքը լինումէին միշտ չորս ուխտի Յիսուսեաններից։ Յիսուսեան կարգը ունենալով կիսաշխարհական բնաւորութիւն զանազանվումէր այլ աբեղայական կարգերից նորանով, որ գեներալը, կարո՛ղ էր արձակել կարգից այն անդամները, որ կամ մի բանով յանցաւոր էին գտնվել, կամ անօգուտ էին կարգին։ Մինչև անգամ ինքեանք անդամները. կարո՛ղ էին հրաժարական խնդիր տալ գեներալին, որ ազատ իրաւունք ունէր արձակելու։ Այն Յիսուսեանները, որ ինքնակամ հրաժարվումէին կարգի օգտաւէտութենից, համարվումէին ուրացողք, հերետիկոսք, և Պապի տուած արտօնութեան զօրութենովը կարելի էր բռնել նորանց, ուր և լինէին նոքա և դատել դատապարտել կարգի դատաստանովը. և եթէ հարկաւոր լինէր, աշխարհական իշխանաւորները, երկիւղ կրելով, որ չարտաքսէին իւրեանց եկեղեցուց, հարկադրվումէին խլոյն հասուցանել իւրեանց օգնութիւնը, երբ Յիսուսեանք առաջին անգամ պահանջումէին։ Քրէական յանցանքների համար Յիսուսեանները չունէին յատկացուցած օրէնքներ. իւրաքանչիւր առանձին պատահմունքների համար, կամ գեներալը կամ կառավարիչը դնումէին իւրեանց վճիռը։

Խօսինք այժմ Յիսուսեանների ներքին կազմուածքի մասին։

Յիսուսեանների ներքին կազմուածքը բաղկանումէր հետևեալ

հասարակութիւններից (corporatio). I կօլլեգիաներից, նորընծայական տներից, և երևելի մարդերի բնակարաններից, II Ուխտաւորական տներից, III Առաքելական ժողովներից (missia). բացի սորանցից կային և այլ Յիսուսեանք, որ առանձին գաղտնի երդումներով կապված էին կարգի հետ, բայց բնակումէին Յիսուսեանների հասարակութենից դուրս: 1710 թուականին կարգը ունէր 612 կօլլեգիա, 340 ապարանք, 59 նորընծայական տուն, 200 առաքելական ժողով, և 20,000 Յիսուսեան, բացի կողմնակի Յիսուսեաններից, որոնց թիւը անհամար էր Եւրոպայի, Ասիայի և Ամերիկայի մէջ. նոցա պատկանումէին և շատ երևելի մարդիկ. ինչպէս Ֆրանսիսկոս Բորջիան կանդինեան զօրագլուխը, Լուդովիկոս XIV, կարդինալ Ռօշֆուկօ և մի քանի այլ մարդիկ: Ուխտապահերի տները բաղկացնումէին կարգի էական մասը և չէին կարող ոչինչ բանի տիրել. բայց ապարանքները, կօլլեգիաները և նորընծայական տները առաջինների նման գլխաւոր պաշտօն չունէին կարգի մէջ, և կարող էին սեպհականել ինքեանց շարժական կամ անշարժ կայք և կալուած: Սորանով պարզվումէ և հասկացվումէ Յիսուսեանների անհամար հարստութիւնը, չնայելով, որ նոքա երդում էին կերել աղքատութեան ուխտը պահելու:

Այս ահագին միութիւնը կառավարվումէր գեներալի, գաւառականների և կառավարիչների ձեռքով. գեներալը էր գլուխ կարգին, գաւառականք իշխող գաւառներին (որ երբեմն պարունակումէին իւրեանց մէջ քանի մի տէրութիւնք), իսկ կառավարիչք և ուխտապահերի իշխանքը կառավարումէին կօլլեգիաները, ուխտապահական և նորընծայական տները, այլև առաքելութիւնքը: Բացի սորանցից կային և այլ շատ ստորին աստիճանաւորներ, որոնք ենթադրվումէին Ուխտապահերի գլխաւորին, սոքա գաւառականներին, իսկ գաւառականները գեներալին: գեներալի մօտ գտնվումէին միշտ չորս օգնականք, որ կարգի խորհրդածութենով նշանակված էին, գեներալի ընտրութենից յետոյ. բացի այս չորս օգնականներից ինքը գեներալը ընտրումէր այլ ևս չորս մարդ անկախ մնալով կարգի հաճութենից. գտնվումէին նոյնպէս գեներալ-քարտուղար, և գլխաւոր խորհրդական (monitor), սոքա ողջը լինումէին ինքեան իսկ կարգի մէջ անմիջապէս. բայց Պապի կամ այլ Պապական տէրութենների մօտ գտնվումէին կարգի իրաւունքների գեներալ-Պաշտպանքը (general procurator), իսկ իւրաքանչիւր գաւառների համար նշանակվումէին առանձին այցելուք (visitator):

Բոլոր գաւառների դէպուտատները անդամ էին կարգի խորհրդարանին, և միշտ հաւաքվումէին Հռովմի մէջ. բացի գեներալի ընտ-

րութեան ժամանակից շատ սակաւ էին պատահում այսպիսի ժողովքներ և այն երևելի գործերի մասին։ Գեներալի մահից յետոյ իսկոյն նորա տեղը բռնումէր գեներալ յաջորդը, որ վաղուց արդէն նշանակել էր ինքը գեներալը. այս գեներալ յաջորդը պարտական էր սահմանեալ ժամանակի մէջ հրաւիրել խորհրդարանի անդամները նոր գեներալի ընտրութեան համար. ընտրողները, ինչպէս Պապ ընտրելու ժամանակ, փակվում էին մի առանձին սենեակի մէջ (conclavium) և ոչինչ կերակուր չէին ընդունում բացի լոկ հացից և ջրից, մինչև որ ընտրութիւնը կ՚աւարտվէր։

Գեներալի իշխանութիւնը անսահման և մշտնջենական էր քանի կենդանի էր սա. նա նշանակումէր կամ հրաժարումէր կարգի բոլոր աստիճանաւորքը, դուրս էր տալիս նոր օրէնքներ, երևելի գործերի ժամանակ հրաւիրումէր իւր չորս օգնականքը, բայց նոցա խօսքը ոչինչ ազդեցութիւն չունէր, գեներալի կամքից էր կախված ընդունել կամ չ՚ընդունել այն։ Մի միայն նշանակված դիպուածներում Յիսուսեանք կարող էին զրկել գեներալը իւրեան արժանաւորութենից. այս դիպուածները հետևեալքն են. I) եթէ նա մեղանչէր ողջախոհութեան ընդդէմ, II) եթէ կոլլեգիաների և նորընծայական տների կայքը անցուցանէր օտարի ձեռք, առանց կարգի օգտին, III) եթէ ընկնէր կրօնական մոլորութեան մէջ. այս յանցանքով դատապարտվեցաւ գեներալ Գօնզալեզը, երբ զինուորվել էր ընդդէմ այն վարդապետութեան, որ ասվումէր «ճշմարտանման» (probabilis). միմիայն Պապի պաշտպանութիւնը փրկեց նորան Յիսուսեանների ենթադրեալ վրիժառութենից, որոնց համար ամենասիրելի էր «ճշմարտանման» վարդապետութիւնը։ Բայց այս ևս հարկաւոր է իմանալ, որ վերոյիշեալ յանցանքների համար գեներալը զրկվումէր իւր աստիճանից այն ժամանակ, երբ յանցանքը ասվումէր Արտաքոյ և յայտնի. այս անունը յանցանքի վերայ դրվումէր Յիսուսեանների դատողութեամբ, որոնք փոքր թէ շատ գտանվումէին գեներալի ազդեցութեան տակ, ուրեմն երբէք չէր պատահում, որ դատապարտվէր գեներալը հրապարակով։

Բոլոր Յիսուսեանք սարսափելի երդումով պարտաւորված էին տեղեկութիւն տալ միմեանց մասին. այս կանոնը դրած էր ոչ միայն այն պատճառով, որ իմացվի Յիսուսեանների գաղտնիքը որքան նորանց միմեանցից հեռացնելու համար. ըստ որում իւրաքանչիւրքը ևս հաւատ չունենալով միմիանց վերայ անպատճառ պիտոյ է և հեռի լինէին միմեանցից, որով գեներալի իշխանութիւնը լինումէր առաւել անսահման։ Բացի այս ծանօթութեններից գաւառականքը պարտական էին յայտնել ոչ թէ միայն այն բաների մասին, որ անմի-

ջարար յարաբերումէքին կարգին այլ և ամենայն դիպուածների մասին զանազան թագաւորութենների մէջ. կառավարիչքը ևս իւրեանց կողմից յայտնումէին այս բաները ուղղակի գեներալին, որ համեմատումէր այս ծանօթութիւնքը դաւառներից ստացածների հետ։ Եթէ մի առաւել հարկաւոր կամ գաղտնի բան լինէր, այս ծանօթութիւնքը գրվումէին թուանշաններով։ Գեներալը այս յայտարարութեններից ծանօթութիւններ քաղելով միշտ տեղեակ էր Եւրոպայի անցքերի բոլոր գաղտնիքներին, գիտէր զանազան տէրութենների վիճակը և ույժը, նոցա մտքի ուղղութիւնը, և շատ անգամ առաւել լաւ, առաւել ճիշտ, քան թէ նոցա թագաւորները և նախարարները. նա օգուտ քաղելով այս յայտարարութեններից իւր ներգործութիւնը յարմարումէր գործերի ընթացքին։ Այս կերպով աչա լրտեսութիւնը և ստրկական կոյր հնազանդութիւնը այս համաշխարհական հասարակութեան հոգին էր և կապը. պատճառ ոչինչ բանով չէր սահմանափակվում և ոչինչ արգելք չէր նորան, ոչ տեղը, ոչ ազգութիւնը և ոչ մինչև անգամ հաւատը։

Տանենք այժմ մեր ընթերցողները Յիսուսեան դպրոցները, որոնց մէջ Յիսուսականութիւնը սպանումէ նոյնպէս ամենայն միտք ու բանականութիւն, ջնջումէ գիտութիւն և արուեստ, ինչպէս հոգևոր վարժութեան մէջ, մանաւանդ կանոնադրութեան մէջ. նա մեռուցանումէ կամքը, ոչնչացնումէ մարդկային ինքնագոյ ազատութիւնը և անկախութիւնը։ Կարգի հիմնադիրքը շատ լաւ են հասկացել իւրեանց դարու բանական ուղղութիւնը։ Նոքա յայտնվումեն այն ժամանակ, երբ Վերանորոգութեան կարօտութիւնը զգումէին ամենայն տեղ, աճումէր առ հասարակ քննողական հոգին, և երևումէին նոր նոր յայտնագործութիւնք, որոնցով շատ և շատ պարապած էր մարդկութիւնը։ Մարդիկ առ հասարակ ուսումնականութենով, բանաստեղծութենով և փիլիսոփայութենով յոյս ունէին, նաև աշխատումէին իսկ հասանել մի նոր և լաւ ապագայի։ Ինչպէս ուրեմն դադարեցուցանել, մեռուցանել մարդկային բանականութիւնը, մանաւանդ այն ժամանակ, երբ նա յորձանքներով սկսել էր բղխել։ Եթէ այս հասարակութիւնը յայտնապէս և հրապարակով ընդդէմ դուրս գար XVI դարու մտքերի անհանգիստ և անդադար ձգտողութեանը, կասկած չկար, որ դարը չէր լսելու նորան։ Յիսուսեանք լաւ ճանաչեցին այս ճշմարտութիւնը, վասնորոյ և անուանեցին իւրեանց պաշտպան ամենայն ուսման և արուեստի։ Նոքա տալիս էին մարդկային խելքին և բանականութեանը բոլոր արտաքին փայլը և ստուերական կարողութիւն, որպէս զի կեղակարծ, այսինքն խաբեբայական շարժողութենով դադարեցուցանեն նորա ճշմարիտ անձնականութիւնը, ուժաթափ առնեն նորան դպրո-

ցական շարժողութիւններով և խեղդեն գիտութիւնը իւրեանց գրերի փոշիներով։

Արդարև, ուր որ հասանումէր Յիսուսեանների ոտքը, որ տեղում նոքա հաստատվումէին, իսկոյն շինումէին եկեղեցի և նորա մօտ հոյակապ դպրոց, հարուստ ամենայն տեսակ բաներով, որ հաճոյ էր բանականութեան, այսինքն ձեռագիրներով, մատենադարանով, Ֆիզիկական և աստեղաբաշխական գործիքներով։ Բայց մի՛ զուարճանաք այս արտաքին փայլողութենով, որի տակ Թագնված կայ դատարկութիւն։ Ինքը Կարգը նշանակումէր իւրեան դպրոցների ուսուցիչներին դասատուութեան կերպը, գաղտնի կանոնադրութենով, որ յայտնի էր անունով Ratio studiorum, որ տալիս էր ուսուցիչներին։ Այս կանոնադրութեան առաջին օրենքներից մինը այս էր Nemo novus introducat quaestiones այսինքն «ո՛չ ոք չէ պիտոյ յառաջ բերէ նոր խնդիրներ։ Այս կանոնների զորութենով բոլոր ուսումը սահմանափակվումէր մի քանի յայտնի խնդիրների շրջանի մէջ, որից չէր կարելի ուսանել և մի նոր բան։ Այն ուսուցիչները, որոնք հակառակ այս կանոնին կըվարվէին, իսկոյն կը հալածվէին Կարգի դպրոցներից, զրկվելով իւրեանց պաշտօնից։

Փիլիսոփայութիւն դաս էին տալիս Արիստոտելի գրով, որ Յիսուսեանք իւրեանց կամեցածի պէս սրբագրել էին, մէջի եղած գլխաւոր բաները դուրս էր հանած, իսկ աշակերտներին պարապեցնումէին դպրոցական իմաստակութեններով, և այլ մանր մունր չնչին բաներով. զորօրինակ երեք տարեկան ուսման ընթացքի մէջ միայն երեք կամ չորս օր կարելի էր Աստուծոյ վերայ խօսել (quaestiones de Deotridui aut quatridui spatium non excedant): Ամենևին չէր կարելի պարապիլ այն ուսմամբը, որ վերաբերումէր սկզբունքների (principia), Աստուծոյ գոյութեանը և մշտնջենականութեանը։ Դպրոցական կամ այսպէս անուանված «Աբեղայական» Աստուածաբանութեան ուսման ընթացքը ձգվումէր մինչև չորս տարի։ Յիսուսեանք անուանումէին նորան կազուիստիկա. արդէն միմիայն այս անունը ցոյց է տալիս, թէ ի՛նչ նշանակութիւն ունէր այս գիտութիւնը Յիսուսեան դպրոցների մէջ. Նորա բոլոր ուսման շրջանը կատարվումէր չնչին բաների մասին վիճաբանութեններով, որ մոլորեցնումէին մարդումիտքը Սուրբ գրքի խորին և վերհամբարձ ճշմարտութեններից։ Գեղարուեստների մասին պիտոյ է մի և նոյն բանը ասել. պատճառ որ բացի արտաքին ձևից ոչինչ պարունակութիւն չկայ միջումը։ Բանաստեղծութիւն անուանվումէր միմիայն բառերի և ոտերի խաղացմունքը, սուրբերի գովասանութիւնը, Վիրգիլլիոսի երգերին համակերպութիւնքը, բարոյական մոքերը և այլն և այլն. ինչպէս զորօրինակ

Յիսուսեան դպրոցների մէջ իբրև օրինակ ցոյց տուած չափաբերական գրուածը անունով «S. Ignatius et primus ejus socius Petrus Faber sub persona Daphnydis et Lycidae» (Սուրբ Իգնատիոսը և նորա առաջին ընկերը Պետրոս Ֆաբեր իբրև Դաֆնիս և Լիցիդա)։

Հինները կարդացվումէին միայն հատուածներով, և այն, ինչ որ կառավարիչը կ՚ընտրէր. իսկ պատմութիւնը դաս էր տրվում այն գրքերով, որ շարադրել էին Յիսուսեանք, խանգարելով բոլոր իրողութիւնքը, յարմարվելով կարգի օգուտներին։ Այս տեղ հարկաւոր է ասել և այս, թէ այն աշակերտները, որո՛նք կարո՛ղ էին օգտակար լինել կարգին, անպատճառ դառնումէին Յիսուսեան, մինչև անգամ եթէ ծնողքը ևս չ՚կամենային, որովհետև Պապից Յիսուսեան կարգին տուած արտօնութեան զօրութենովը տասն և չորս տարեկան տղան կարո՛ղ էր մտանել Յիսուսեան հասարակութեան մէջ. կարծիք չ՚կայ, որ այսպիսի կրթութենով մանուկ տղայի անձնագիտութիւնը, կամքը և ճանաչողութիւնը չքանումէ. ուրեմն շատ հեշտ էր Յիսուսեաններին խլել ողորմելի երեխաներից նոցա անգէտ համաձայնութիւնը։

Ահա՛ այսպէս էր այս հռչակաւոր կարգի կազմակերպութիւնը, որ կարողացաւ դիմանալ Եւրոպական ապստամբութեններին, որի պատճառը ակներև է։ Հոգևոր Վարժութեան մէջ, որ գրել էր Իգնատիոսը երևումէն դեռ ոգևորութեան նշմարանք. կանոնադրութեան մէջ ամենայն ինչ սառն և մեռեալ, ինչպէս գետնայարկի մէջ շարված են լինում՝ կարգով յաւիտեանս յաւիտենից անփոփոխ դագաղները. սոցա նման հասարակութիւնը կարող է յարատևել առանց այլայլութեան, որովհետև չ՚կայ նորանում փոփոխութեան սկիզբն. այս ինքն չ՚կայ կեանք, որ ամենայն ինչ յառաջ է տանում։ Այս մի Չինաստան է խելացի մարդերի ձեռքով հիմնըված։ Ամենայն քրիստոնէական ժողովքի մէջ մեք տեսանումենք քրիստոնեայ և մարդ. Յիսուսեանների մէջ, միայն գաւառականք, ուխտապահերի վերակացուք, վերատեսուչք, տնտեսք և այլն և այլն. իւրաքանչիւր այս աստիճանաւորքը ունին իւրեանց պաշտօնքը պարզ և յատկացած։ Բայց այսքան պաշտօնների գործերի մէջ, որ շատ լաւ կապած են մինը միւսի հետ, չ՚կայ մարդ և քրիստոնեայ, չ՚կայ կեանք. ամենայն ինչ հիմնըվածէ մատնողութեան և կոյր հնազանդութեան վերայ, որ ոչնչացնումէ ամենայն աձնցողութիւն, ամենայն ազատ կամք. այնպէս, որ մարդը դառնումէ կարգի ձեռքին մի մեռեալ գործիք, ծեր մարդու գաւազան «Ut senis baculus» ինչպէս ասել է ինքը Լոյոլա։

Այս բանի անհրաժեշտ հետևանքը այն եղաւ, որ աճեցան ընչքին ընդունակութիւնները, կործանվեցան և չքացան բոլորովին մեծ և

հոյակապ մտքերը և ընդունակութիւնքը: Ճշմարիտ. Ցիսուսեանների մէջ շատ ճարտար քաղաքագէտներ, շատ լեզուագէտներ և խորամանկ քարոզիչներ կային, բայց մեծ մարդ իւր մտքովը և բանականութենովը, ո՛չ երբէք: Կարգը համարեա թէ կրկնում է իւր պատմութեան մէջ հիմնարկողի կեանքը. սկզբումը դեռ ևս Ֆրանսիսկոս Կսավիեն, Րոդրիգեզը, և Բոբադիլլիան ունէին ոգևորութիւն, որ նոյնպէս հոգի էր տալիս Մանրէզեան անապատականին, բայց նորանցից յետոյ ամենայն բան փոխվում է. Լայնէզի սառն քաղաքավարութիւնը իւր բոլոր պարագաներով անցանում է դէպ ի Ակվավիւու և նորա յաջորդների հոգին. մինչև անգամ՝ և այժմ ամենայն տեղից հալածված, անարգված և քարուքանդ եղած հասարակութիւնը արտաբերում է իւր վերջին խօսքը, այսինքն — կոյր հնազանդութիւն: Այս էր հիմնարկողի կտակը, այսպէս էր և ինքեան հասարակութեան վերջին կամքը: 1)

---

1) Տես Simple Coup d'Oeil, և Բորդօսի և Լիօնի Արք եպիսկոպոսի նամակները, և Շարտրեսի եպիսկոպոսի նամակները, որոնք տպած են Ֆրանսիացոց զանազան օրագիրների մէջ:

ՅԻՍՈՒՍԵԱՆՔ

ՅԻՍՈՒՍԵԱՆՔ

ՅՕԴՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Այս յօդուածի մէջ պարունակվումն հետեւեալքը·

Յիսուսեան Առաքելութիւնք·

Հնդկաստանի
Չինաստանի և
Եափոնիայի } մէջ·

Պարագվայի Աստուածպետական Հասարակապետութիւնը:

Յիսուսեանների ներգործութիւնը Ֆրանսիայի մէջ, Ֆրանսիսկոս IIի թագաւորութենից սկսած մինչև Կարգի նորոգութիւնը Պիոս VIIի ձեռքով:

ՅԻՍՈՒՍԵԱՆՔ

ՅՕԴՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ ԵՒ ՎԵՐՋԻՆ

Առաջին յօդուածի մէջ ես արդէն ասացի, թէ կարգի գլխաւոր խորհուրդը այն էր, որ ընդդէմ Վերանորոգութեններին պաշտպան լինի Պապականութեանը, և Քրիստոնէութիւն տարածէ Ասիայի և նոր յայտնագործած Ամերիկայի մէջ։ Մեք տեսանք, թէ Յիսուսեանք, ինչպէս Տրիդենտեան ժողովի մէջ, երբ դեռ այնքան զօրեղ չէին, որ ջոկէին յայտնապէս իւրեանց օգուտը Պապական Աթոռի օգուտից, պաշտպան դուրս գալով Պապական իշխանութեանը, շատացուցին նորանից գանգատաւորների թիւը, և դորանով իսկ պատճառ տուեցին Վերանորոգութեանը յաղթանակելու.— այժմ կը տեսանենք նորանց իբրև շատ զօրացած մարդիկ Պապական կոնդակներով, որ ամենևին չէին մտածում ո՛չ առաքելութեանց, ո՛չ Պապի, և ո՛չ մինչև անգամ Քրիստոնէութեան վերայ, այլ միմիայն աշխատումէին մեծացնել իւրեանց հասարակութիւնը, զօրացնել և հաստատցնել նորան։

Ոչինչ աբեղայական կարգ չունեցաւ այնքան առաքելութիւնք աշխարհի ամենայն մասներումը, որքան Յիսուսեան կարգը. Յիսուսեանք հարիւր հատորից աւելի գրեցին միմիայն այս ապացուցանելու համար, թէ Քրիստոնէութիւնը, ո՛չ Հնդկաստանում, ո՛չ Ամերիկայում, և ո՛չ Աֆրիկայում կարո՛ղ էր հաստատվել առանց նոցա գործակցութեանը. և թէ շատ Յիսուսեանք մարտիրոսական մահով կնքեցին քրիստոնէական հաւատի յաղթանակը այս աշխարհների մէջ։ Բայց Յիսուսեան Առաքեալների բերանով քարոզված Քրիստոնէութիւնը Աւետարանական քրիստոնէութիւն չէր, ո՛չ առաքեալների և եկեղեցու առաջին վարդապետների քրիստոնէութիւն, և ո՛չ մինչև

անգամ Պապական Քրիստոնէութիւն. Ցիսուսեանք, քարոզելով Քրիստոնէութիւնը զանազան աշխարհների մէջ, յարմարումէին նորան ժամանակի պահանջողութեանը, աղճատումէին և փոփոխումէին, ինչպէս կը տեսանենք աչա ներքևումը: Եւ Ցիսուսեան մարտիրոսքը չէին մարտիրոսանում իւրեանց Քրիստոնէական համոզման վերայ, ինչպէս էին առաջին դարերի մարտիրոսքը, այլ սոքա մարտիրոսանումէին կոյր հնազանդութեան վերայ, որ ունէին դէպ ի կարգի կամքը, ընտիր զինուորների նման, որ քաջութեամբ մեռանումէն, հնազանդվելով իւրեանց իշխանաւորի հրամանին:

Ֆրանսիսկոս Կսավիե, որ անուանվեցաւ «Առաքեալ Հնդկաստանի», առաջին քարոզիչը եղաւ Ցիսուսեանների միջից. Նա Պորտուգալացոց նաւատորմիղի հետ 1542 Թուականին գնաց Հնդկաստանի Գօա մայրաքաղաքը Գանգէս գետի այս կողմումը, և հետևելով իւր վարդապետի օրինակին իսկոյն մտաւ այն տեղի հիւանդանոցը, սկսեց ծառայել հիւանդներին, և ապրիլ ողորմութենով: Իւր լիակատար իրաւունքների մասին, որ ստացել էր Պապական և Պորտուգալական Տէրութեններից, յայտնեց Գօաի եպիսկոպոսին, և ստացաւ նորանից ևս Թոյլտուութիւն իւր իրաւունքներին համեմատ ներգործելու: Այս խորհրդով ուսաւ այն տեղի հասարակ ժողովրդի խօսակցութիւնը, և սկսեց երեխայք հաւաքել և ուսուցանել, քարոզել ապաշխարութիւն, վարքի ու բարքի մաքրութիւն: Նա այս բաները քարոզումէր Գօաի բնակիչներին, որոնց մեծ մասը քրիստոնեայք էին. մանաւանդ զինուորվումէր բազմակնութեան ընդդէմ (Հնդկաստանի քրիստոնեայք շատ հարճեր պահումէին) և փոքր ինչ կարողացաւ դադարեցնել այս սովորութեան զօրութիւնը:

Պորդուգալիայի տէրութիւնը, տեսանելով Կսավիեի աշխատութիւնը ժողովրդոց վարքը ու բարքը մաքրելու մասին, յանձնեց նորան Գօաի նոր շինած սերմինարանի գլխաւոր տեսչութիւնը, որ դարձաւ յետոյ Ցիսուսեան ամենահարուստ և ամենամեծ կօլլեգիում: Կսավիե ուղևորեցաւ շուտով դէպ ի մարգարտաբեր ծովեզրը, ուր գտանվումէին Պորտուգալացոց գաղթականքը: Այն տեղի բնակիչքը հեթանոսք էին, Կսավիե չէր հասկանում նոցա լեզուն: Նա սկսեց իւր գործը նորանով, որ Պորտուգալացոց օգնութեամբ ջարդեց, կործանեց նոցա կուռքերը, կռատունները, Թափեց բոլորը ծովը, և նոցա փոխանակ կանգնեց եկեղեցիներ և ժամատուններ: Այս ծովեզրից անցաւ նա Տրավանկոր. այս շրջմոլիկ Եւրոպացի մեծ քարոզչի հրաշալի գործերի լուրը տարածվեցաւ ժողովրդոց մէջ. ամենայն հասակի մարդիկ, ծերից բռնած մինչև մանուկը խուռն բազմութենով վազումէին նորա մօտ, որ տեսանեն այս հրաշալի մարդու երեսը: Կսավիե վեր

ելանումէր առ հասարակ ծառերի վերայ, և այն տեղից քարոզումէր իւր քրիստոնէութիւնը հաւաքված ժողովրդին: Նա անխոնջ աշխատութենով ճանապարհորդումէր ամենայն տեղ և շատ անգամ ոտով, ոտով անցաւ նոյնպէս Գէյլօն, Պօլապատան, Մելանիուր և Մալակկա կղզիները քարոզելով Աւետարանը, և Պօրտուգալացոց օգնութենով կամայ ակամայ հեթանոսները քրիստոնեայ շինելով: Շուտով օգնութիւն հասան նորան նոյնպէս և այլ Յիսուսեանք, որոնց մէջ երևելի դարձաւ Կրիմինալը: Կսավիե սոցա մի մասնը թողեց Մալակկայում, իսկ ինքը գնաց Մօրէնեան կղզիները, ուր խաբեբայութեամբ մկրտեց մի օրվայ մէջ տասն երկու հազար մարդ: Կասկած ունենալով, թէ մի՛ գուցէ այս մարդիկը նորից հեթանոս դառնային (ինչպէս և պիտոյ է լինէր. պատճառ խաբեբայութենով էին մկրտված), խնդրեց Պօրտուգալացոց թագաւորից, որ Ինկվիզիցիօ հաստատէ այն տեղ. իսկ ինքը գնաց Գէյլօն: Վերջապէս հասաւ նա մինչև Կամօրին հրուանդանը, որի բնակիչքը, շատ մոլեալ լինելով իւրեանց հին կրօնի վերայ, չ՚նայելով Կսավիեի ջերմեռանդ քարոզութեանը և Պօրտուգալացոց զինուորների բարբարոսութեանը, չ՚ընդունեցին քրիստոնէութիւն և մնացին իւրեանց կռապաշտութեան մէջ: Կսավիե թողեց այս տեղ Կրիմինալը, և ինքը գնաց Եափոնիայ: Կրիմինալը կրակով ու սրով ջնջումէր Աւետարան չ՚ընդունողները. բնակիչքը, կորուսանելով իւրեանց համբերութիւնը, ապստամբեցան Պօրտուգալացոց ընդդէմ, և Կրիմինալը, Յիսուսեաններին առաջնորդելով, որ միացած էին այն զօրքի հետ, որ եկած էր այն տեղ ապստամբութիւնը շիջուցանելու համար, ընկաւ պատերազմի մէջ մեռած: Յիսուսեան կարգը քրիստոնէութեան առաջին նահատակ անուանեց նորան, և խնդրելով Պապից դասել տուեց նորան սուրբերի կարգը:

Կսավիե մի փոքրիկ նաւով անցաւ այս միջոցին հնդիկների ծովից և հասաւ մինչև Եափոնիայ. Յիսուսեանք տեսան այս տեղ մի նոր կրօն «Բուդդականութիւն» զինուորված սրբազան գրքերով և կենդանի աւանդութիւններով: Կսավիե չ՚սոսկաց դժուարութենից, և հազիւ թէ ուսել էր Եափոներէն քանի մի խօսք, սկսեց վիճել Բօնզերի [1]) և Եափոնիայի իմաստունների հետ: Հալածվելով բօնզերից, արհամարհվելով և խայտառակվելով իմաստուններից և ժողովրդից, միտքը դրեց գնալ Չինաստան և այն տեղ քարոզել, յուսալով, որ թէ յաջողի իւրեան ջնջել այն տեղ բուդդականութիւնը, Եափոնիայն կը հետևի Չինաստանին, ըստ որում նորա կրօնի կենդրոնը այն տեղ էր: Կսավիե չ՚ընդունեց այն գումարը, որ Պօրտուգալացոց վա-

---

[1]) Բօնզ նշանակումէ Եափոնացոց Աբեղայ:

ճառականները ընծայումէին նորան և շտապեց հասանել Սայքամ կըղզին, որ Չինաստանի եզերքումն էր։ Այս տեղ իմացաւ նա, թէ Չինական կայսրութիւնը անմօտենալի էր օտարականներին, և թէ դեսպանք միայն կարող էին մտանել նորա մէջ։ Բայց այս դժուարութիւնը արգելք չեղաւ Կսավիէրին. շուտով վերադարձաւ նա Գօա, և համոզեց Պօրտուգալացոց փոխարքային, դեսպանութիւն ուղարկել Չինաստան։ Դեսպան նշանակվեցաւ մի Պօրտուգալացի հարուստ վաճառական, Կսավիէն գտանվումէր նորա մարդերի մէջ։ 1552 թուականին դեսպանութիւնը հասաւ Մալակկա. այն տեղի զինուորական գաւառապետը, անսովոր բան համարելով մի հասարակ վաճառականի դեսպանութիւնը այդպիսի Ասիական հզօր ինքնակալութեան մօտ, ընդդիմացաւ այս բանին։ Կսավիէն զուր տեղը աշխատեցաւ, հիմնվելով իւր լիակատար իշխանութեան վերայ, բայց գաւառապետը, որ և լաւ չէր փոխարքայի հետ, չ՚կամեցաւ լսել ամենևին ոչինչ։ Կսավիէն նզովեց նորան. բայց նահանգապետը, նզովքներից վախեցող մարդ չ՚լինելով, հրամայեց երկաթի շղթաներով կապել բոլոր դեսպանութիւնը. Կսավիէն հազիւ փախաւ նորա ձեռքից մի հասարակ նաւակով մինչև Սայքամ։ Այս տեղ նա իւր բոլոր ունեցած արծաթը տուեց մի Չինացի վաճառականի, որ յօժարեցաւ գիշերով և շատ ծածուկ հանել նորան Կանտօն քաղաքը։ Բայց Կսավիէրին չ՚յաջողեցաւ հասանել իւր սրտի ցանկացածին. նա հիւանդացաւ յանկարծ հարինքով և մեռաւ փակած կայսրութեան դուռի մօտ, իւր սրտի անհամբերութենից և սպասելուց։

Այսպէս եղաւ այս հռչակաւոր մարդի վախճանը, որ միմիայն իւր ջերմեռանդութենովը դէպ ի Քրիստոնէական հաւատը, առանց գործ դնելու խորամանկութիւն և կեղծաւորութիւն, որոնք Յիսուսեանների սովորական գործիքներն էին, բաց արեց Ասիայի հեռաւոր կողմերում արձակ ճանապարհ կարգի անդամների համար։ Նա առանձին ներգործելով կարգից, չ՚սեպհականեց ինքեան նորա բնաւորութիւնը, այլ մնաց այն ոգևորութեամբ, որով դուրս էր եկել Լօյոլայի «Հոգևոր Վարժութենից»։ Նորա կոյր և ամենայն վտանգ արհամարհող ջերմեռանդութիւնը Քրիստոնէութիւն տարածելու համար, շատ անգամ դուրս էր հանում նորան չափից ու սահմանից, շատ անգամ գործել էր տալիս անխնայ գործեր։ Նա ինչպէս չէր նմանում խորամանկ Յիսուսեաններին, չէր նմանում նոյնպէս և նախկին դարերի Քրիստոնէական քարոզիչներին, այլ, նայելով նորա անհամբերութեանը և ինկվիզիտորական բնաւորութեանը, շուտով նորան կարելի էր Դոմինիկեան ասել։

Սորա մահից երկու տարի յետոյ մարմինը բերվեցաւ Գօա. իսկ Օգոստոսի 6 ին 1623 թուականին Ուրբանոս Ութերորդ Պապը դա-

սեց նորան սուրբերի կարգը: Կալվինեից յետոյ ծագեցաւ Յիսուսեանների նոր ցեղ, կանոնադրութենով և Լայնեզի ամենաճիշտ քաղաքագիտութենով զինուորված: Այս Յիսուսեանները Կալվինի յոյսը չունէին, որ միմիայն Քրիստոսի վարդապետութեան ուժովը կարողանան իւրեանց հետ քարշել Հնդկաստանի անթիւ բնակիչքը և հարկադրել նորանց թողուլ իւրեանց հին կրօնը, որի վերայով անցել գնացել էին շատ դարեր: Սոքա խորամանկութենով կամենումէին այս նպատակին հասանել. և որպէս զի հեշտութեամբ դարձնեն Հնդկացիքը իւրեանց հաւատից, քարոզումէին նորանց սուտ Աւետարան ըստ ամենայնի յարմար Հնդկաց ճաշակին. Նորանց կամենալով հաճոյանալ քան թէ Քրիստոսի վարդապետութեանը: Եափոնիայից սկսած մինչև Մալաբար, Մօլուկկեան կղզիներից մինչև Ինդոս գետի եզերքը Յիսուսեանք տարածումէին սուտ ու խաբեբայ կարծիքներ Աստուծոյ մասին, քարոզումէին սուտ եկեղեցի. Իննովկենդիոս X, Կլեմենտ IX, Կլեմենտ XII և Բենեդիկտոս XIV զուր տեղը աշխատեցան իւրեանց անդադար դուրս տուած կոնդակներովը դարձնել Յիսուսեան քարոզիչքը դէպ ի Քրիստոսի ճշմարիտ Աւետարանը: Զարմանալի բան է աշխարհիս փոփոխութիւնը. այն մարդիկը, որոնք նուիրված էին մի միայն այն բանին, որ պաշտպան լինէին Պապական իշխանութեանը, որ թև ու թիկունք դառնային նորան ամենայն տեղում, որ մինչդեռ աւելի զօրութիւն չունէին, կուրօրէն սորկանումէին Պապութեանը, այժմ յայտնի համարձակ ապստամբեցան ընդդէմ Պապականութեան, և փոքր մնաց, որ ջնջէին Արևելքից ո՛չ թէ միայն Պապականութիւնը, այլ և Քրիստոնէութիւնը:

Յիսուսեանները, Քրիստոս քարոզելով, թագուցանումէին նորա չարչարանքը, նորա մահը, մի խօսքով այն ամենայն բանը, որ սեպհական էր Քրիստոսի, ինչպէս մարդկութեան փրկչի: Այս Քրիստոնեայքը խաչ չէին ընդունում [1]) և եթէ հանդիսաւոր օրերում հարկաւորումէր անպատճառ խաչի գործածութիւնը, ծածկումէին նորան ամենայն կողմից ծաղիկներով այնպէս, որ ներկայ գտանվողքը չէին կարողանում նկատել: Նոքա տեսանումէին միայն Քրիստոսի պատկերը ոսկիով արծաթով պատած, յաղթական կերպով կանգնած թագաւորների և իմաստունների մէջ, որոնք երկրպագումէին նորան:

Յառաջ քան թէ Յիսուսեանք, եկել էին այս տեղ Կապուսինեան քարոզիչք. բայց նոքա շատ փոքր յառաջադիմութիւն ունեցան, պատճառ այս Ազգի հասկացողութիւնը շատ կոշտ ու խաւար էր: Սոքա (Հնդկացիք) հաւատումէին հոգեփոխութեան. կովը համար-

---

[1]) Illos pudet Christum crucifixum prædicare. Իննովկենտիոս X-ի կոնդակից:

վումէր Նոցա մէջ այնպիսի կենդանի, որի մէջ մտանումէին բարեպաշտ և սուրբ մարդերի հոգիքը։ Նոքա մեծ երջանկութիւն էին համարում մեռանել ձեռքերում բռնած ունենալով կովի պոչ. ո՛չ ոք բարեպաշտ Հնդկացիներից չէր ուտում կովի միս։ Ապաշխարողքը ապաշխարութեան օրերում մոխիր էին ածում գլխներին, որ ստանումէին կովի այրած ապականութենից։ Ինչ ժամանակ կոյս աղջիկը ստանումէր իւր կատարեալ հասակը, մեծ հանդէսով երաժշտական նուագներով, ման էին ածում նորա տան չորս կողմումը կուսական չափահասութեան խորհրդական նշանը։ Ամենայն հարս ունէր կախած իւր վզից Ողջախոհութեան Աստուծոյ պատկերը, այն խորհրդով, թէ նոքա պատրաստ էին արդէն ամուսնական կեանքի համար։ Զննելով այս բաների վերայ Կապուցիննեանք ստացան մի քանի ունկնդիրք. Նոցա քարոզութեան մեծ պակասութիւնը այն էր, որ նոքա Քրիստոնէական ճշմարտութիւնքը քարոզումէին շատ վերացական կերպով. առանց ամենևին կապելու նորան Հնդկաստանի հասարակաց կարգի հետ. այս էր պատճառը, որ չ՛կարողացան Հնդկաց հասարակ մարդերից կողմնակիցներ ճարել։

Յիսուսեանք միանգամայն ջոկ ճանապարհով ընթացան. Նոքա սկսեցին քարոզել Աւետարանը այնպէս, որ արդէն յարմար էր տեղական հաւատին, որ կարո՛ղ էր հեթանոսութեան համար տանելի երևիլ։ Ռոբերտ Նօբիլի Յիսուսեանը հագաւ առաջին անգամ Բրամինի հագուստ և անուանվեցաւ Եւրոպական Բրամին։ Նորանից օրինակ առին և այլ Յիսուսեանք. Նոքա թողումէին Քրիստոնէական եկեղեցու մէջ հեթանոսական արարողութիւններ, թոյլ էին տալիս նորադարձերին խոստովանելուց յառաջ մոխիր ցանել գլխների վերայ, որ ստացած էր կովի թրիքից, աղջիկներին ներումէին կրել ողջախոհութեան նշանը, ազնուականների և ռամիկների համար ջոկ եկեղեցիներ էին շինում, պատարագի ժամանակ պահումէին առ հասարակ ո՛չ թէ Պապական, այլ Հնդկական արարողութիւն. չէին կամենում մտանել ստորակարգ մարդերի տուն Սուրբ Խորհուրդին հաղորդելու համար, հիմնըվելով այն բանի վերայ, թէ ամենայն Բրամին պղծվումէ մտանելով ստորակարգ մարդու տուն։

Ահա Կլեմենտ XI ի կոնդակի խօսքերը, որ Կարդինալ Տուրնօնը տարաւ Պոնդիշար «Մեք չենք կարող այլ ևս համբերել, որ հոգևոր բժիշկները հրաժարվին ստորակարգ մարդերի այն հոգևոր օգնութիւնը մատուցանելուց, որից չէին հրաժարվում մինչև անգամ և հեթանոս բժիշկները (medici gentilis)»։ Այսպէս ևս Բենեդիկտոս XIV իւր կոնդակի մէջ առաւել ազդու կերպով ասումէ «Մեք կամենումենք և հրամայումենք, որ ստորակարգ մարդերը Սուրբ խորհուրդին

հաղորդելու ժամանակ ճիշտ պահվի քահանայական կանոնը, և կատարվի այս ցանկութիւնը առանց յետաձգութեան (ulteriori dilatione remota)». բայց Յիսուսեանք չէին հնազանդվում. և այսպիսի հրամաններ դուրս էին գալիս անդադար մինչև կարգի բոլորովին ջնջվելը։

Քրիստոնէական հաւատի նախկին քարոզիչքը չէին ներգործում այսպէս. նոքա ցոյց էին տալիս Աւետարանական Վարդապետութիւնը, նորա բոլոր Աստուածային պարզութենով, և այս էր պատճառը, որ Քրիստոնէութիւնը տարածվումէր հրաշալի զօրութենով և շուտութենով։ Նոքա ևս դուրս գալով Հրէաստանի միջից, մտան մի նոր աշխարհ, մի հարուստ և հպարտ աշխարհ, որ լի էր ոսկով և գոհարներով, որ արհամարհումէր ստրուկները. բայց ո՛չ մինը այս սուրբ քարոզիչներից տեսանելով Հռոմի այսպիսի շռայլութիւնը, չմտածեց փոփոխել Քրիստոնէական հաւատի ուսումը, խաչը թագուցանել հեթանոսների առաջև հոգևոր հանդէս կատարելու ժամանակ։ Ո՛չ ոք այն սուրբ քարոզիչներից չ'հերքեց ստրուկները, որ միշտ հալածված էին աղնուատոհմերից. նորա հակառակ սուրբ քարոզիչքը այս հասարակութեան մէջ քարոզումէին չարչարված Աստուածը, հալածված Քրիստոսը, այն Աստուածային մանուկը մսուրի մէջ խանձարրած։ Նոքա Յուպիտերական Կապիտոլին, որ անչափ շռայլութենով յղփացած էր, ցոյց տուեցին Գողգոթայն և չարչարանքի բաժակը, և այս պատճառով ևս յաղթեցին, և յաղթական հանդիսացուցին հեթանոսների մէջ Քրիստոնէական հաւատը։ Ի՛նչ կարօտութիւն ունէր Հռոմ այնպիսի Աստուծոյ, որ զգեստաւորած էր ոսկով և զօրացած կարողութենով. այս զօրութեան պատկերը շատ անգամ տեսած էր նա. բայց Աստուած խաչի վերայ, որ սրբումէր աղքատներին և հարուստներին ո՛չ միայն Հռոմէական Քաղաքացիների, այլ և բոլոր մարդերի իբրև անդամների մի և նոյն մարդկութեան, որ ներկայ էր նորա Աստուածայնութեան առաջևը, ահա թէ ինչ բան յաղթեց հին աշխարհին և չէ դադարում ծաղկել և պտուղ բերել և նոր աշխարհում։

Յիսուսեանք մի և նոյն դրութեան մէջ էին դէպ ի Հնդկաց շռայլութիւնը, զանազան վիճակները և հազարամեայ սովորութիւնքը, որպիսի դրութեան մէջ գտանվումէին Քրիստոնէութեան առաջին քարոզիչքը Հռոմում դէպի նորա հաստատ և հզօր քաղաքականութիւնը, որի հիմքը ստրկութիւն էր [1]։ Բայց Յիսուսեանք չ'հետևեցին այս սուրբ և ճշմարիտ քարոզիչներին. Նոքա գործ էին կատա-

[1]) *Summa* itaque de jure personarum divisio hæc est, quod omnes homines aut liberi, aut servi. Dig. Lib. I, Tit. V, 4.

րում, յարմարվելով իւրեանց քաղաքական հաշիւների հետ, և այս էր պատճառը, որ ամենայն նորանց գոյացուցածը աստիճան առ աստիճան քանդվումէր կարգի նենգաւոր քաղաքականութեան շնչելուց: Այսպէս ահա՛ ներգործումէին Յիսուսեանք Հնդկաստանի մէջ: Ճափոնիայում և Չինաստանում նոքա պահումէն մի և նոյն ուղղութիւնը, մի և նոյն որսողական հոգին, մի միայն յարմարվելով տեղի հանգամանքներին, որի մէջ գտանվումէին: Այս գործերից մի քանիսը մանաւանդ արժանի են հարցասիրութեան իւրեանց մանրամասն հանգամանքներով. բայց իմ յօդուածի սահմանը չի ներում երկար ու ձիգ խօսել այս մասին, վասն որոյ որքան կարելի է շատանումեմ համառօտ գրելով: Նախ և յառաջ քանի մի խօսք ասենք Ճափոնիայի Յիսուսական Առաքելութեան վերայ:

Այս երկիրը ունէր իւր առանձին սովորութիւնքը Չիներից ստացած. սա ևս Չինաստանի նման հեռանումէր օտարասահման մարդերի հաղորդակցութենից, բայց այս տեղում թոյլտուութիւն կար ամենայն տեսակ հաւատ պաշտելու, միայն այն պայմանով, որ հակառակ չ՚լինէին այդ հաւատները Տէրութենական հիմնաւոր օրէնքներին: Բօնզերը գլխաւորքն էին այս զանազան կրօնապաշտութենների, որ ըստ մեծի մասին աղճատեալ Բուդդականութիւն էր: Սոքա մշտնջենական թշնամի էին այն մարդերին, որ անուանվումէին այն տեղ փիլիսոփոս կամ անհաւատ: Յիսուսեանք օգուտ քաղելով այս կրօնական թոյլտուութենից սկսեցին Աւետարանի քարոզութիւնը կէսը Ճափոներէն կէսը Լատիներէն. այնպէս, որ խեղճ անհաւատները շատ անգամ մկրտվելով չէին իմանում, թէ ինչ է մկրտութիւնը կամ Քրիստոնէութիւնը:

Յիսուսեանների Աւետարանի նախանձաւորութիւնը չէր յագենում միայն քարոզութենով և մկրտելով. նոքա շատ անգամ կործանումէին հեթանոսական մեհեանները, խորտակումէին կուռքերը, որոնց փոխանակ կանգնեցնումէին Քրիստոսի խաչելութիւնը և Տիրամօր պատկերը: Զարմանք չէ՛, որ այսպիսի գործողութեններից յետոյ թշնամացան նորանց Բօնզերը և հակառակորդ դուրս եկան, տեսանելով իւրեանց հաւատի անարգութիւնը: Շատ Յիսուսեանք զոհ եղան նոցա վրէժխնդրութեանը: Բայց ի վերայ այսր ամենայնի Յիսուսեանների խորամանկութեամբ գործ կատարելը յաղթանակեց. նոքա ճարտարութենով կարողանումէին կռվեցնել միմեանց հետ Ճափոնիայի զանազան իշխանները, որոնք մի Կայսրի հպատակ էին, և, խոստանալով նորանց Պօրտուգալացոց օգնութիւնը, հարկադրումէին ընդունել Քրիստոնէական հաւատը: 1587 թուականին Ճափոնիայի մէջ համարվումէր մինչև քսան հազար Քրիստոնեայ: Յիսուսեանք, որ կամենու-

մէին իւրեանց կարգը հանդիսացուցանել Եւրոպայի առաջեւ, դեսպանութիւն ուղարկեցին Հռովմ, որի մէջ կային երեք հատ նորադարձ իշխաններ։ Պօղոս IV Պապը շատ փառաքշանքով ընդունեց այս դեսպանութիւնը, և Ճափոնիայի համար Եպիսկոպոս նշանակեց Լուտովիկոս Սօտելօ-Ֆրանսիսկեան կրօնաւորը, որ իւր բարեպաշտութենով և ճիշտ բարոյականութենով հռչակված հոյակապ մարդ էր։ Յիսուսեանք անհաւան գտնվեցան ամենևին այս բանին, նոքա գործ դրեցին ամենայն հնար, որ կորուսանեն Սօտելօն, որ և վերջապէս զոհ գնաց Յիսուսեանների անքրիստոնեայ խորամանկութեանը, ըստ որում նոցա հնարներով բանդ դրվեցաւ և մեռաւ մարտիրոսական մահով։ Բայց առ հասարակ Յիսուսեանների ուրախութիւնը շատ կարճաժամանակեայ եղաւ. 1611 թուականին, Հօլլանդացիք մտան Ճափոնիայ, որ այն ժամանակ Եւրոպայի մէջ առաջին վաճառական մարդիկն էին, բոլոր վաճառականութիւնը Պօրտուգալացոց ձեռքից անցաւ Հօլլանդացոց ձեռքը, և այս կերպով Յիսուսեանները զրկվեցան իւրեանց ջերմեռանդ պաշտպաններից։ Շուտով ահա կայսրը և այլ մանր իշխանները, նկատելով Յիսուսեանների կարողութեան օր ըստ օրէ մեծանալը, և երկիւղ կրելով, որ մի՛ գուցէ նոքա, ժողովուրդը քրիստոնէացնելով, ինքեանց սեպհականեն և նորանց վերայ իշխանութիւնը, ընդդէմ դուրս եկան քարոզիչներին։ Յիսուսեանք զօրք դուրս բերեցին, որոնց ինքեանք էին գլուխ կացած, բայց յաղթվեցան թշնամու շատութենից։ Կայսրը մեծ հալածանք հանեց առ հասարակ քրիստոնեաների վերայ. ամենայն օտարական մարդ, որ մտանումէր Ճափոնիայ, պարտական էր այն տեղի աստիճանաւորների ներկայութեամբը, ոտքի տակ կոխել խաչը որպէս ապացոյց նորա անքրիստոնէութեանը. ամենայն ոք այս անարգութիւնը չկատարած խաչի վերայ չէր կարող մտանել Ճափոնիայի Տէրութեան մէջ։ 1648 թուականին Ճափոնիայի մէջ քրիստոնէութեան և հետքը անգամ չմնաց։

Չինաստանում Յիսուսեանների մէջ առաւել փառաւորվեցաւ Մատէօ Րիկչի, խորամանկ և հնարագէտ մարդը ինչպէս Լայնէզ. նա կարողացաւ հաստատել իւր կարգը այն Երկնային Թագաւորութեան մէջ, ուր օտար մարդ չէր կարող ոտք կոխել։ Շատ լաւ ուսաւ Չինացոց լեզուն, հագնումէր Բօնզի հագուստներ, կեղծաւորութենով հաճոյանումէր Մանդարիններին, իւր անձը սիրող էր ցոյց տալիս նոցա հպարտութեանը և սովորութեններին, որոնց օգնութեամբ շատ աշակերտ ճարեց իւր վարդապետութեանը մինչև անգամ և կայսերական դռնումը։ Բայց այս բանը այնքան դժուար չէր, որքան երևումէր. պատճառ, Յիսուսեանները նորադարձերին թոյլ էին տալիս կատարել համարեա թէ բոլոր հեթանոսական արարողութիւնքը, հա-

մարեմ թէ թողումէին նորանց իւրեանց հին կրօնի մէջ, քարոզելով այնպիսի Աւետարան, որ շինած էր Չինաստանի կրօնին և սովորութեանը յարմար։ Շուտով Յիսուսեանների գործը մեծացաւ. Բօնզերը նկատեցին այս բանը, և կայսեր մի Սիրականի օգնութեամբ, որ հաւատարիմ էր Բօնզերին, կարողացան ընդդէմ զինաւորել կայսրը Յիսուսեաններին։ Րիկչի գործ դրեց Եւրոպայի մէջ բաւական հասարակեալ մի խորամանկութիւն. բայց այս խորամանկութիւնը ուսումնական մանդարինները չ՚կարողացան հասկանալ։ Նա մի թշնամանող տետրակ շարադրեց կայսրի վերայ և տարածեց ժողովրդի մէջ. երբ քննութիւն բացվեցաւ այս բանի մասին, Րիկչի, ինքեան կողմնակից ունենալով մի քանի դիւրահաւան Մանդարիններ, կարողացաւ համոզել և հաւատացնել կայսրը, թէ գլխաւոր Բօնզերից մինն է տետրակի հեղինակը, որ մանաւանդ թշնամի է Յիսուսեաններին։ Ողորմելի Բօնզը մեռաւ անտանելի չարչարանքի մէջ, մինչդեռ ջարդումէին նորա ոսկերքը գաւազանով։

Բայց շատ չ՚քաշեց Յիսուսեանների հանգստութիւնը։ 1615 թուականին կայսրը, հաւանելով մի Մանդարինի առաջարկութեանը, սարսափելի հալածանք հանեց նոցա վերայ, որի պատճառները չ՚բացայայտելու համար Յիսուսեան կարգի պատմիչքը կամաւ մասնակից են լինում Զաքարիայի պապանձմանը։ Շատերը կորան բանդի մէջ, մի քանիսին վիճակեցաւ այն Բօնզի մահը, որ զոհ էր եղել Յիսուսեանների դաւաճանութեանը, ինչպէս փոքր ինչ յառաջ ասացի։ Այլ ի վերայ այսր ամենայնի Սաղմոսի ասածի նման, թէ ահա մեղաւորք են և յաջողեալ է նոցա, սոցա ևս բաղդը, մարդկութեան այն ոխերիմ թշնամին, սկսեց դարձեալ յաջողել. Թաթարները տիրելով Չինաստանի հիւսիսային նահանգներին, սպառնումէին կործանել Փեքին քաղաքը։ Յիու Մանդարինը, որ մտերիմ բարեկամ էր Յիսուսեաններին, խորհուրդ տուեց կայսրին օգնութիւն կանչել Պօրտուգալացիքը. համոզելով, թէ ոչ ոք նորանցից լաւ չ՚գիտէ թնդանօթի գործածութիւնը, որով մի միայն կարելի էր ազատել Չինաստանը զարհուրելի թշնամիների ձեռքից. և թէ անպատճառ հարկաւոր է շահել Յիսուսեանների սիրտը, որ նոքա միջնորդ լինին Չինացոց և Պօրտուգալացոց մէջ։ Կայսրը համաձայնեցաւ այս բանին, Յիսուսեանները վերստին յետ կանչվեցան Չինաստան. իսկ Թաթարները, պարապած լինելով իւրեանց սեպհական խռովութեններովը, կտրեցին իւրեանց յարձակմունքը և ասպատակութիւնը Չինաստանից։ Յիսուսեանք առանց օգուտ քաղելու չ՚թողեցին և այս բանը. նոքա սկսեցին քարոզել, թէ իւրեանց աղօթքի զօրութենովը կատարվել էր այդ, և այսպիսի ամօթալի խաբեբայութեամբ ձեռք առեցին դարձեալ իւրեանց նախ-

կին իրաւունքը և գործը. և վերջապէս ստացան մի և նոյն ոյժը Տէրութեան Դռնումը:

Կայսրի սէրը Ցիսուսեանների վերայ մինչև այն աստիճան մեծ էր, որ նոցա համար տէրութենական հիմնաւոր օրէնքներին հակառակ գործ գործեց: Ադամ Շալլ Ցիսուսեանը ստացաւ առաջնակարգ Մանդարինի արժանաւորութիւն, որի պաշտօնը էր, նայելով աստղերի ընթացքին, մեկնել երկնքի կամքը, որ կայսրի հայրն էր համարվում. խորամանգ Շալլը շուտով տիրապետեց երկնային որդու կամքին, ուղղակի և առանց յօժարութիւնը հարցանելու մուտք ստացաւ կայսրի մօտ, որ չունէր և ոչ մի Չինացի, դատտիարակ դարձաւ կայսերական Աթոռի ժառանգին, և համարեա թէ ազատակամ կառավարիչ երկնային թագաւորութեանը: Ցիսուսեաններից շատերը ստացան Մանդարինական արժանաւորութիւն. և Չինաստանի առևտուրը Եւրոպայի հետ անցաւ Ցիսուսեանների ձեռքը, որ ունէին իւրեանց սեպհական գործակատարքը ամենայն ծովահայեաց քաղաքներում: Հօլլանդացիք ևս հետևումէին այս բանին. նոքա մեծագին ընծաներով եկան կանտօն քաղաքը. բայց խարդախ Շալլը հաւատացուց իւր աշակերտ կայսրին, թէ Հօլլանդացիք շատ փոքրիկ երկրի տէր էին յառաջ Եւրոպայի մէջ, յետոյ ապստամբեցան իւրեանց թագաւորի ընդդէմ, ծովային աւազակ դարձան և այժմ աշխատումեն Չինաստան մտանել, որպէս զի կայսրի թեթևահաւատութենից օգուտ քաղելով կողոպտեն աշխարհի հարստութիւնը: Մատաղահաս կայսրը լսեց իւր վարժապետի խօսքին, և արգելեց Հօլլանդացոց առևտուր անել Չինաստանի մէջ:

Ցիսուսեանք շուտով աչա սկսեցին հալածել Դօմինիկեան և ֆրանսիսկեան կրօնաւորները, որ գալիս էին այն տեղ առաքելութեամբ: Մօրալէս անունով Դօմինիկեանը, փրկվելով Ցիսուսեանների հալածանքից և Եւրոպայ հասած, իմաց տուեց Պապին Չինաստանի մէջ Ցիսուսեանների ձեռքով տարածված աղճատեալ Քրիստոնէութեան մասին, և թէ նոքա, քարոզելով Քրիստոսի Աւետարանը, չէին մտածում Քրիստոսի կենարար վարդապետութեններովը շինել Չինացոց սիրտը և աշխատիլ նոցա հոգու փրկութեան համար, այլ յարմարումէին Աւետարանը Չինացոց սովորութեան հետ, որպէս զի կարողանան որսալ Չինացոց սիրտը և իրաւունք և հարստութիւն ճարել իւրեանց կարգի համար: Իննովկենդիոս X պապը ընդունեց Դօմինիկեանները իւր պաշտպանութեան տակ, և դատապարտեց Ցիսուսեան կրօնաւորները: Բայց Ցիսուսեանք շուտով Հռովմ ուղարկեցին մի Պալատական Ցիսուսեան Պետրոս Մարտինի անունով, որ կարողացաւ համոզել Իննովկենտիոս X ի յաջորդ Ալէքսանդր VII Պապը, և հաւատացնել նորան թէ Դօմինիկեանք ինքեանք են մեղաւոր, թէ

նոքա նախանձելով Յիսուսեաններին զրպարտել են նորանց։ Նոր Պապը դատապարտեց Դոմինիկեանները և արդարացուց Յիսուսեան ընկերութիւնը, որ գտանվումէր Չինաստանի մէջ։

Այս բանից առաջ սկսեց այն արժանայիշատակ վէճը երկու կարգի մէջ, երկու կողմից ևս անհամար գրքեր ու տետրակներ էին տպվում իւրեանց անձը արդարացնելու և թշնամու կողմը դատապարտելու համար. երկու կողմից ևս անդադար դեսպաններ էին ուղարկվում Պապի մօտ։ Պապերը գործ էին դնում երբեմն ողոքանք երբեմն սպառնալիք. բայց երկուսը ևս լինումէին անօգուտ։ Այն համարկութիւնը, որ յայտնի է անունով de propaganda fide, շատ ջերմեռանդութենով մտաւ այս վէճի մէջ, որի առաջարկութենով դուրս եկան անթիւ պապական կանոնադրութիւնք Չինաստանի Քրիստոնէական եկեղեցու միջից հեթանոսական արարողութիւնքը դուրս ձգելու համար։ Վերջապէս Կլեմենտ X և Իննովկենտիոս XII Պապերը, տեսանելով Յիսուսեան քարոզիչների կամակորութիւնը, նզովքով դատապարտեցին նորանց։ Բայց այս միջոցին Սպանիական և Ֆրանսիական Տէրութիւնքը խառնվեցան այս գործի մէջ։ Անզօր Կարոլոս IIը գործիք էր դարձած Յիսուսեանների ձեռքում. Լուդովիկոս XIVը արդէն իւր խոստովանահայր էր շինել Հայր Լաշէզին 1) Յիսուսեանը, վասն որոյ երկու տէրութիւնքը ևս կողմնակից դարձան Յիսուսեաններին։ Կլեմենտ XI Պապը տեսաւ, որ ճար չկայ, դարձեալ նզովեց Յիսուսեան քարոզիչները, և 1702 թուականին կարդինալ Տուրնոնին (Maillard de Tournon), որ շատ խելացի և գեղեցկախօս մարդ էր (Բօսսիւետի բարեկամ), Անտիոքի Եպիսկոպոսի պատուանունով, արևելեան Հնդկաստան և Չինաստան ուղարկեց, որ քննէ Յիսուսեանների յանցանքը, և ջնջէ նոցա առաքելութիւնը արևելքից։

Յիսուսեանք, չկարողանալով կեղծաւորութեամբ և ընծաներով խաբէլ այս հաշակաւոր մարդը, գործ դրեցին այնուհետև իւրեանց բոլոր խորամանկութիւնը նորան կորուսանելու համար. Նոցա որոգայթներով կարդինալ Տուրնոնը զրկեցաւ Մակաօ քաղաքի բանդը։ Պատերազմը այս խնդրի վերայ, թէ Կոնֆուցիուս Աստուծոյ պատիւ տալը, քաղաքակա՞ն թէ կրօնական գործողութիւն է, երկու կող-

---

1) Հայր Լաշէզին ինքնակամ փոխումէր Արևելեան Հնդկաստանի Ֆրանսիացոց պահպանեալ մասերի մէջ նահանգապետները. Պօնդիշերի համար նոր նշանակված գեներալ նահանգապետին ճանապարհ դնելով ասաց «Ողորմած Պարոն. յիշեցէք, թէ ինչ որ դուք մեր հայրերին կ՚առնէք այնտեղ, նոյն բանը ձեզ կ՚առնեն Վերսայլումը, ինչպէս դուք այն տեղ նորանց հետ կը վարվիք, այնպէս ևս ձեզ հետ այս տեղ կը վարվին» (Memoires hist. pas Norbert).

միջ ևս շարունակվում էր մեծ զօրութեամբ և կատաղութեամբ։ Յիսուսեանք արհամարհում էին պապական կոնդակները. նոքա Ասիայի և Եւրոպայի մէջ այնչափ զօրացած էին, որ կարող էին չհնազանդվիլ Պապի կամքին. բայց այնպիսի խորամանկութեամբ ներգործում էին, որ առ հասարակ դուրսից նայելով երևում էր, որ նոցա գործերը ունէին օրինական ձևեր, վասն որոյ չէր կարելի բոլորովին դատապարտել նորանց. նոցա կողմնակիցքը օրէ օր աւելանում էին։

Կլեմենտ XIը որոշեց դեսպանութիւն ուղարկել Չինաց կայսրի մօտ Յիսուսեանների կարգութիւնը կայսերական գահում ոչնչացնելու համար. դեսպան նշանակվեցաւ Մեցցաբարդան, որ հռչակաւոր էր իւր անհնարին խորամանկութեամբը։ Բայց Յիսուսեանք տեղեկ չունէին նորան աշակերտել խորամանկութեան մասին, ըստ որում ինքեանք հեղինակ և վարդապետ էին խորամանկութեան դաւաճանութեան և այլ սարսափելի յանցանքների. Նոքա հաւատացուցին կայսրը թէ Մեցցաբարդայի խորհուրդը այն է, որ տարածէ Պապի իշխանութիւնը Չինաստանի մէջ, և զօրանալ վնասէ կայսրի իշխանութեանը։ Այսպէս խօսում էին Յիսուսեանք, որ փեքինում էին. իսկ նոցա գեներալը, որ Հռոմում նստած էր, մի և նոյն ժամանակում ընկնում էր Պապի ոտքերը, և հաւատացնում էր, թէ իւր կարգը առանց մի սահմանափակութեան հլու հպատակ է Պապի կամքին։

Մեցցաբարդան ինչ ժամանակ ներկայանալով կայսրին ծունր չոքեց նորա առաջևը Չինաց սովորութեամբ, Յիսուսեանք Մանդարինի հագուստներով կայսրի աթոռի չորս կողմում կանգնած ծիծաղում էին դեսպանի վերայ։ Այս տեսակցութենից յառաջ Յիսուսեաններից մինը ասաց. «Եթէ Պապը միտք ունի այլ ևս վշտացնել Յիսուսեանները, այն ժամանակ կարգը հարկադրված կը լինի ցոյց տալ բոլոր աշխարհին, թէ ինչ կարող էր անել։» — Ես չեմ հասկանում, — շարունակեց Մաւրաօ անունով միւսը, ինչպէս Պապի խիղճը չէ տանջում, այլ ներում է այսպիսի գործեր կատարել. ողջին յայտնի է, որ նա դուրս տալով exilla die [1] անունով կոնդակը մահուչափ մեղանչեց. եթէ այդ կոնդակը գործ դրվի, և կատարվի այն, ինչ որ գրած է նորա մէջ, այն ժամանակ Չինաստանի մէջ Քրիստոնէութիւն չէ լինելու։ — Մեցցաբարդայն հինգ անգամ պատահեցաւ կայսրի մօտ, բայց ոչինչ չկարողացաւ յառաջացուցանել։ Առաջին տեսակցութեան ժամանակ կայսրը նշանացի անելով Պապական կոնդակների հակառակութիւնքը Յիսուսեանների մասին, ասաց. «ոչ

---

1) Այսպէս անուանվում է այն նզովքի կոնդակը, որով Պապը դուրս է ձգում եկեղեցուց Յիսուսեան քարոզիչքը։

ոք չի հաւատայ այն մարդերին, որ կամենումեն հաւատացնել, թէ կարմիր գոյնը, սպիտակ է. իսկ սպիտակը, դեղին. ինչ կարելի է մտածել այն մարդերի մասին, որ մի և նոյն գոյնը անուանումեն երբեմն սպիտակ, երբեմն դեղին, և երբեմն կարմիր։»

Դեսպանը պատասխանեց. — Թէ Պապը, իբրև Քրիստոսի փոխանորդ աշխարհի երեսին, հոգևոր գործերի մէջ չէ կարող սխալվիլ։ — «Բայց կարելի՞ է արդեօք» ասաց Կայսրը, որ Պապը ճշմարիտ դատողութիւն անէր Չինաստանի մասին, որ երբէք տեսած չէր, և ոչինչ հասկացողութիւն չունէր նորա մասին. ինչ կասէին իմ համար, թէ և ես երկնքի որդի իմ, եթէ մտածէի դատողութիւն անել Եւրոպական գործերի վերայ։» — Սրբազան Պապը չէ կամենում դատողութիւն անել Չինաստանի վերայ, պատասխանեց Մեցցաբարդան. նա կամենումէ, որ այս աշխարհին Տէրութեան մէջ բնակված քրիստոնէայքը չհեռանան իւրեանց քրիստոնէական հաւատի կանոններից։ — Ինչպէս երևումէ, Կայսրին հաւանական չեղաւ Մեցցաբարդայի պատասխանը, վասնորոյ արձակեց իւր երեսից։ Երկրորդ տեսակցութեան ժամանակ, երբ Մեցցաբարդան խօսումէր Պապի ամենայն գործերի մէջ անմեղանչականութեան վերայ, Կայսրը համեմատեց նորան որսորդի հետ, որ բաղդի վերայ յուսալով նետումէ օդի մէջ և սպանումէ թռչուններ։ Պալատական Մանդարին — Յիսուսեանք Կայսրից առաւել ծիծաղեցան, որ շատ ուրախացել էր իւր սրամիտ խօսակցութեան վերայ։ «Իմ այս համեմատութեան համար դու ի՞նչ ես մտածում», հարցրեց Կայսրը Մեցցաբարդայից, «ինչո՞ւ չես պատասխանում». — շատ սրամիտ բան էր, պատասխանեց Կարդինալը — և ձեր մեծութիւնը անչափ քաղաքավարի էք 1)։

Մեցցաբարդան իւր դեսպանութեան ժամանակ խաղալիկ էր դարձած Յիսուսեաններին. նոքա հաւատացնումէին Կայսրին, թէ դեսպանը կամենումէ խլել քրիստոնեաների խաղաղութիւնը, և կպչումէ մինչև անգամ Կայսերական իշխանութեանը։ Այնքան մեծ կասկած և անհաւատարմութիւն կար Մեցցաբարդայի վերայ, որ նորա բնակարանի դրան մօտ պահապանք էին կանգնած, և ո՛չ ո՛ք, մինչև անգամ և իւր մարդիկը, չէին կարող միայնակ տեսանել դեսպանի երեսը։ Մեցցաբարդան վերջապէս բարեաւ մնաս անելով Կայսրի հետ, որ վերջին տեսակցութեան ժամանակ շատ քաղաքավարի ընթացել էր, գնաց Մակաօ քաղաքը. այն տեղ փորեց, հանեց գերեզմանից խեղճ ողորմելի Տուրնօնի մարմինը և բերեց իւր հետ Եւրոպայ, ոչինչ գործ չկարողանալով յառաջացնել Չինաստանի մէջ։ Քանի

---

1) Norbert. Mèmoires historiques sur les missions des pères jesuites, Tome II, page 72.

կայսրը, որ այնքան սիրումէր Յիսուսեանները, վախճանեցաւ շուտով. Նորա ժառանգը, առ հասարակ քրիստոնեաներին չսիրելով, խլեց քարոզիչներից շատ արտօնութիւններ, որ ունէին յառաջուց: Բայց Յիսուսեանք մնացին Պալատական Մաթեմաթիկոսների պաշտօնում, Օրացոյց և զանազան գուշակութիւնք շարադրելու համար: Նայելով բաների հանգամանքներին նոքա դադարեցին Չինացիները Քրիստոնեայ շինելուց և հոգս էին անում մի միայն կարգի եկամուտների մասին: Յիսուսեան երկու վաճառատուները, Փէքինի մէջ բերումէին ամենայն տարի իւրաքանչիւրքը առաւել քան թէ յիսուն հազար տալեր 1): Բայց Քրիստոնէութիւնը երբէք չէր վերջանում Չինաստանից բոլորովին, ամենայն ժամանակ մի քանի Յիսուսեան քարոզիչք շարունակումէին իւրեանց շարադրած Աւետարանի քարոզութիւնը: Այս քարոզիչքը, ինչպէս վկայումէ կանտօնի Եպիսկոպոսը իւր նամակի մէջ, որ գրել էր Բենեդիկտոս XIV Պապին, վարումէին մի գայթակղեցուցիչ կեանք, շատ անգամ զոհելով պատշաճը..... Դեռ ևս 1780 թուականին Պետրոս Հալլերշտէյն Շվապացի Յիսուսեանը Պալատական Մանդարին էր և Չինաստանի Մաթեմաթիկական մեծ ընկերութեանը նախագահ:

Ես ցոյց տուեցի, թէ ինչ կերպով ներգործումէին Յիսուսեան քարոզիչքը Չինաստանում, Եափոնիայում և Հնդկաստանում. այսպէս էր ահա և ամբողջ կարգի ուղղութիւնը: Բայց չէ կարելի մտածել, որ կարգի անդամներից ամենայն ոք առանձին և առանց բացառութեան այսպէս և այս հոգով ներգործէր. Լուզիանի և Հիւսիսային Ամերիկայի անապատների քարոզիչքը, ինչպէս Ֆրանսիսկոս Կսավիեէ, որ աննշան մարդիկ էին Եւրոպայումը, մտանումեն խոր և անանցանելի լճերի, սարերի և անտառների մէջ, նստումեն վայրենիների մակոյկներում և գնումեն հետևելով խորհրդական գետերի ընթացքին անծանօթ ազգերին Աւետարան քարոզելու: Բայց կարգի հոգին անտեսանելի կերպով հետևումէ նոցա քամակից և աստիճան առ աստիճան չորացնումէ այն հողը, որի վերայ սերմանել էին Աւետարանի սերմը: Արդէն 1722 թուականին Շարլևուան հազիւ հազ կարողացաւ այս վայրենի անապատների մէջ գտանել Քրիստոնէութեան նշանակը կամ հետքը. բարեպաշտ քարոզիչների ձեռքով սերմանածը այրումէր կարգի սարսափելի խորամանկութիւնը: Պապականութեան այս պաշտպանքը ցոյց տուեցին միայն ընդհանուր պատմութեանը մի մեծ ծառայութիւն, նոքա բացին Անգլիայի և նորանց ձեռքով Հիւսիսային Ամերիկայի միացեալ նահանգներին, Հիւսիսային Ամերիկայի անապատների ճանապարհը:

1) Dubalde Description de la Chine.

Այսու ամենայնիւ Յիսուսեան կարգին յաջողեցաւ մի ազգի մէջ իրագործել Տէրութիւն հիմնարկելու գաղափարը. այս ասելով ես խօսումեմ Պարագվայի վերայ։

Յիսուսեանք Ֆիլիպպ III ին գանգատումէին Սպանիական նահանգապետների վերայ, թէ նոքա իւրեանց խստութեամբ, որ գործ էին դնում դէպ ի այն տեղի բնակիչքը, և անհաւանութեամբ, որ ունէին դէպ ի Յիսուսեան քարոզիչքը, արգելք էին Քրիստոնէութեան տարածվելուն Ամերիկայի մէջ։ Թագաւորը շատ ողորմած կերպով լսեց այս գանգատին. Յիսուսեանք խրախուսվելով այս բանից առաջարկեցին նորան Քրիստոնէական հասարակապետութեան գաղափարը, որից պիտոյ է ծնանէին նահապետական ժամանակների երջանիկ օրերը։ Ֆիլիպպ IIIը կրթված լինելով Մարիաննա 1) հռչակաւոր Յիսուսեանի դաստիարակելովը հետևաբար գտնվումէր Յիսուսեան կարգի ազդեցութեան տակ. վասն որոյ տուեց նորանց Պարագվայն իբրև Տէրութիւն ամենևին անկախ Սպանիայից, որի մէջ կարգը կարող էր ներգործել արձակ համարձակ, միայն այն պայմանով, որ հատուցանէ Արքունի գանձարանին, որ Մադրիտումն էր, սահմանած հարկը (état mi-souverain)։ Յիսուսեան կարգը հիմնարկելով Պարագվայի հասարակապետութիւնը, նորա կազմուածքի մէջ ցոյց տուեց կատարելապէս իւր քաղաքական սկզբունքը։ Եւրոպայի և Ասիայի մէջ, նա պիտոյ է պատերազմէր ներկայ բաների կարգի հետ. բայց այս տեղ հարաւային Ամերիկայի անապատներումը կարող էր փչել իւր հոգին նոր և վայրենի մարդերի վերայ ամենայն ազատութեամբ։ Առաջին անգամից երևումէ, թէ Յիսուսեանների քաղաքական կարգը, որ մահացնումէր կատարելութեան հասած ազգերը, ըստ ամենայնի յարմար էր այս երեխայ ազգին։ Յիսուսեանք մի հրաշալի ճարտարութեամբ քարշումէին նորանց իւրեանց կողմը. բաժանումէին մինը միւսից և յաւիտենական հլու և հնազանդ էին շինում իւրեանց կարգին։ Դուրս եկաւ երեխաների հասարակապետութիւն, որ իւր կեանքի երջանկութեան համար ունէր ամենայն պայմանները, բացի այն բաներից, որ կարող էր կերպարանագործել նորա միտքը և հասակաւոր մարդ շինել երեխայից։ Այն ձևը, որ գործ էին դնում Յիսուսեանք Սպանիական նահանգապետներին գաւաղանի տակ չարչարված անբաղդ ազ-

---

1) Մարիաննա Պալատական Յիսուսեանը Մադրիտի մէջ. Ֆիլիպ II ի հրամանով շարադրեց մի գիր «de Rege et Regis Institutione» վերագրով, թագաւորութեան ժառանգի ընթերցանութեան համար. որի մէջ սահմանումէր թէ ի՞նչ դիպուածներում կարելի է թագաւորական կեանքը դաւաճանել։ Այս գիրը 1610 թուականին մեծ հանդիսով այրվեցաւ Փարիզի մէջ։

գերին մի ազատ և հանգիստ կեանք պարգևելու համար, և փոքր առ փոքր իւրեանց կարգի իշխանութեան հետ ընտելացնելու համար, արժանի է, որ Օրէնք տուողները և Հասարակապետութեան քարոզիչքը զարմանային: Փաղաքշանքով և խրատական պատիժներով ներս էին բերում նոքա այս վայրենի Ազգի մէջ Սէր դէպ ի բարեկարգութիւն, և ընտելացնումէին նորանց հաստատ բնակութեան և անասնադարմանութեան հետ:

Պարագվայի մէջ կրօնն էր Յիսուսեանների Քաղաքական և հոգեկան օրէնսդրութեան հիմքը, նոքա ինքեանք դառնումէին դաբիրայ այն Աստուծուն, որ քարոզումէին. կոյր և անսահման հնազանդութիւն ունենալ դէպ ի այս դաբիրանները առաջին կրօնական պահանջողութիւնն էր: Այս կերպով Յիսուսեաններին դժուար չէր այն ազգը, որ երախտապարտ էր նորանց իւր հանգստութեան համար, ընտելացնել այն մտքի հետ, թէ չ՛կայ աշխարհի երեսին առաւել բարձր և հզօր իշխանութիւն, քան թէ կարգի իշխանութիւնը. որի անհրաժեշտ հետևանքը այն էր, որ այն վայրենի մարդիկը անչափ յարգումէին Յիսուսեան քարոզիչքը: Պարագվայի բնակիչքը ծունկ չոքած լսումէին նոցա հրամանը. և մեծ երջանկութիւն էին համարում համբուրել այս Սուրբ Հարց հանդերձի քղանցը:

Հասարակաց կեանքը, քաղաքական կառավարութիւնը և զանազան արհեստները, որ ներս էին բերած Հասարակապետութեան մէջ բոլորովին համաձայն էին կարգի խորհուրդին և գաղափարին: Բոլոր բնակիչք ուսան աշխատել. այր մարդիկը աշխատումէին դաշտումը, կանայք ստանումէին սահմանեալ չափով կանեփ, կամ բամբակ, որ պարտական էին մաքրել կամ գործել նորանցից զանազան պաստառներ մի շաբաթվայ մէջ. երեխայք մինչև անգամ ունէին իւրեանց օրական պարտականութիւնը: Արհեստներից, բերած էին Պարագվայի մէջ, կենդանագրութիւն, ճարտարապետութիւն և երաժշտութիւն, այն չափով և այն սահմանով, որքան հարկաւոր էր այն տեղի կեանքին: Հրապարակական զուարճութիւնքը, էին միայն թատրոնական խաղարկութիւնները, որ կատարվումէին այնպիսի հանդիսավէհութեամբ, ինչպէս Աստուածային պաշտօնը: Առ հասարակ ներկայացնումէին զանազան անցքեր Սրբազան պատմութենից. մանաւանդ այնպիսի անցքեր, որ կարող էին տպաւորութիւն գործել Պարագվայեցիների երևակայութեան վերայ. և տնկել նոցա հոգու մէջ սէր և հնազանդութիւն դէպ ի իւրեանց տիրողքը, այսինքն Յիսուսեանքը: Քաղաքական կառավարութիւնը յանձնած էր վերատեսուչների (նոքա այսպէս էին կոչվում) կամ հոգաբարձուների, որոնք կարգվումէին Յիսուսեանների ձեռքով, կախվումէին նոցանից և գտնվումէին ըստ ամենայնի նո-

ցա իշխանութեան տակ։ Շատ փոքր յանցանքի համար, ըստ մեծի մասին նշանակված էր մարմնական պատիժ. բայց մեծամեծ յանցանք-ները, զոր օրինակ Յիսուսեան անարգիլը կամ վշտացնելը (?), արժանի էին լինում մահու դատապարտութեան։ Ամենայն տարի հաւաքվու-մէին խորհրդականք և քննումէին տարեկան բոլոր գործերը. Նոր օ-րէնքներ դնումէին և հիները փոխում։

Յիսուսեանների գլխաւոր խորհուրդը այն էր, որ ուսուցանեն Պարագվայեցիներին կարգ, և պահեն նորանց կատարեալ տգիտու-թեան մէջ. այս պատճառով հեռացնումէին նորանցից ամենայն գի-տութիւն, որ դէպ ի չարը կարելի էր գործ դնել։ Մասնաւոր սեփ-հականութիւնք ջնջված էին. հասարակաց քրտունքի պտուղը, պատ-կանումէին Յիսուսեաններին, որոնք բաժին էին տալիս աշխատողնե-րին այնքան սահմանափակ, որով հազիւ թէ կարելի էր լցուցանել կեանքի անհրաժեշտ պիտոյքը։ Այս բաներից կարելի է եզրափակել, թէ ինչքան մեծ գանձ էր բերում կարգին այս հարուստ երկիրը, որի բնակիչքը բաւականանումէին միմիայն անհրաժեշտ հարկաւորու-թեններով. և ինչքան աշխատութիւն պիտոյ է գործ դնէին Յիսու-սեանք, որ ջնջէին Պարագվայի և Եւրոպայի միմիանց հետ կապակ-ցութիւնը։

Բոլոր երկիրը, ինչպէս վկայումէ Պօտօզի քաղաքի ընդհանրա-կան նահանգապետը Դօն Մատիա-դը-Հօրտարին, բաժանած էր երե-սուն վեց եկեղեցական գաւառներ (վիճակ), որոնցից իւրաքանչիւրքը ունէին իւրեանց մէջ մինչև տասն հազար ընտանիք։ Բաց ի ոսկու, արծաթի, կտաւեղէնների անհամար գործարաններից, Պարագվայի մէջ ունէին ձուլարան, ուր շինումէին թնդանօթներ և այլ զանազան զէն-քեր, որ Յիսուսեանք գործ էին ածում պատերազմի ժամանակ, դրա-ցի Հնդկացիների հետ, կամ վաճառումէին Եւրոպացոց։

Յիսուսեանները համաշխարհական առևտուր ունէին Պարակվայի բուսական բերքերի. մանաւանդ բամբակի, շաքարի, թաբակի, զա-նազան մորթերի և այլ բաների։ Վեց տարին մի անգամ գալիս էր գեներալ Պրօկուրօրը, հաշվումէր եկամուտքը և գոյացած դրամը մուր-հակներով ուղարկումէր Հռովմ Գեներալի ձեռքը։ Իւրաքանչիւր գա-ւառում կային շտեմարաններ, ուր պահվումէին վաճառելի ապրանք-ները. ոսկի, արծաթ, գոհարեղէնք. Նոցա երևելի վաճառատեղիքը էին, Սանտա-ֆէ, Բուէնոս-Այրես և Տուկուման. միմիայն այս վա-ճառատեղիքը տարեկան արդիւնք բերումէին առաւել քան տասն մի-լիօն Տալեր։

Այս Տէրութենական կառավարութեան մէջ, երևումէ Յիսու-սեանների յաղթականութիւնը, այս տեղում ցոյց տուեցին նոքա կա-

տարելապէս իւրեանց բնաւորութիւնը։ Բայց այս խորհրդական Հաստուածը ունի՞ արդեօք իւր մէջ մեծ Թագաւորութեան սկիզբն. ամենայն տեղ, ուր սկսանումէ պատմական կեանքը, մէք տեսանումենք ստէպ արիւնահեղ պատերազմեր, որոնցով ամրանումէ ազգի մատաղահաս զօրութիւնքը, իսկ այս տեղ, մի զարհուրելի հանգստութիւն։ Յիսուսականութեան հոգին չորացուց այս կուսական երկիրը.... Նա չէ կարող յառաջացուցանել Գվատիմօզին կամ Մօնտեզումն։ Կարգը պատրաստ է կործանվիլ, բայց Պարագվայի ժողովուրդը կենդանացնումէ նորան իւր անմատչելի սահմաններում, լինելով օր ըստ օրէ առաւել խորհրդական, առաւել անմռունչ։ Յիսուսեանների ցանկութիւնը իրագործվեցաւ. երևեցաւ մի Տէրութիւն առանց շնչառութեան, առանց շարժողութեան, զրկված կեանքի ամենայն նշաններից։

Յիսուսեան կարգի պատմութիւնը Եւրոպայի մէջ ցոյց է տալիս երկու ուղղութիւն։ XV և XVI դարերումը կարգը պատերազմումէ Թագաւորների միապետական իշխանութեան հետ, և այն կարգադրութենների հետ, որ պաշտպան էին այս իշխանութեններին։ Այս ժամանակներումը նոր էին կազմվում Եւրոպայի մեծ միապետութիւնքը, այսինքն Ֆրանսիան, Սպանիան, Գերմանական-կայսրութիւնը. (Աւստրիական Տան ժառանգական երկիրները) և Անգլիան։ Միապետական իշխանութեան մէջ երևումէր ազգերի կեանքը. նա նկարագրումէր միջին դարերի լուսաւորութեան հետևանքը. Միութիւն, Ազգութիւն, Թագաւորութիւն։ Ահա այս կենդանացուցիչ իշխանութեան ընդդէմ դուրս եկան Յիսուսեան Հասարակապետական քարոզիչքը. մանաւանդ. Բելլարմին, Մարիաննա, Ալֆոնս Սալմերօն և Էմմանուէլ Սպա. և ո՞վ կարող էր մտածել. նոքա ընդդէմ դուրս եկան ժողովրդական իրաւունքի անունով, ի հարկէ խառնելով նորա հետ իւրեանց Աստուածպետական Հասարակապետութեան տեսութիւնը։ Կերպարանագործելով այս միտքը, նոքա ամենայն իշխանութեան հիմք ընդունումէն Թագաւորութեան մէջ այն, ինչ որ ասացին XVIII դարու հեղինակները և Հասարակապետութեան քարոզիչքը. Րուսսօն և Մօնտեսկիեն — beneplacita multitudinis. բայց այս XVI դարու ժողովրդապետականները ինքեանք ջնջումէին իւրեանց գաղափարը, ամենայն իշխանութենից վեր դասելով Պապի իշխանութիւնը, այս ճանապարհով և իւրեանց կարգի իշխանութիւնը։

Բայց ինչպէս առաջին յօդուածի մէջ յիշվեցաւ, հանդամանքների դժուարութիւնքը արգելառիթ էին այս տեսութեանը. ժողովրդի պատմական կեանքը դեռ ևս չէր ամրացել, Տէրութիւնքը դեռ չէին կարող կուլ տալ մասնաւոր իշխանութիւնքը, որ դեռ ևս չէին ոչնչացած, վասն որոյ Սարպի և այլ Հասարակապետական քարոզիչք,

որ հասկանումէին ժամանակակից գործերի ընթացքը, դուրս դրեցին քաղաքական սկիզբն ըստ ամենայնի հակառակ Յիսուսեաններին, այսինքն թագաւորների Աստուածային իրաւունքը, և այս կերպով աշխարհական իշխանութիւնը հաւասար կացուցին հոգևոր իշխանութեան հետ։

Միապետութիւնքը սկսեցին կերպարանագործվիլ, իսկ Յիսուսեանք, տեսանելով իւրեանց տեսութեան կատարեալ անյաջողութիւնը, վեր առեցին այլ ուղղութիւն։ Այս օրից նոքա յայտնվումեն ամենայն տեղ իբրև թագաւորների խոստովանահայր, և նոցա ձեռքով ներգործումեն իւրեանց կարգի օգտի համար։

Լուդովիկոս XIVի ծերութեան ժամանակ, Սպանիայի Կարոլոս IIը, Յակոբ II և բաց ի սորանցից շատ Սպանիայի և Աւստրիայի թագաւորներ կառավարվումէին Յիսուսեանների ձեռքով։

Այս առ հասարակ նկարագրութիւնը ես կ՚աշխատիմ կերպարանագործել Յիսուսեան կարգի պատմութեան մէջ Ֆրանսիայում։

Մեք տեսանք որ դեռ ևս նոր էր կազմվել Յիսուսեան կարգը, մինչ իսկոյն Ֆրանսիայի մէջ պատահեց զօրեղ հակառակորդների, որք էին Պարլամենտը և Համալսարանը։ Ֆրանսիսկոս IIի օրովը անցան պատմական ասպարեզի մէջ հռչակաւոր Գիզերը, որ պաշտպան էին Յիսուսեան կարգին։ Սոցա միջնորդութենով Պուասսիու եկեղեցական ժողովքը, որ յայտնի էր անունովս colloque de poissy, թոյլ տուեց Յիսուսեաններին մնալ Տէրութեան մէջ, միայն այն պայմանով, որ ընդունէին նոքա այլ անուն. ընդունէին այլ կարգերի նման եպիսկոպոսների իրաւասութիւնը և առ հասարակ Ֆրանսիայի մէջ հրաժարվէին իւրեանց արտօնութենից։ Յիսուսեանք առաջին անգամ ընդունեցին բոլոր պայմանները և բացին Փարիզի մէջ Կլերմոնդեան կոլլեգիումը (որ այժմ Collége Louis le Grand) [1], բայց Համալսարանը այն ժամանակվայ հռչակաւոր իրաւաբան Դիւմուլենի խորհրդով բողոքեց այս բանի ընդդէմ։ Գործը մտաւ Պարլամենտ. նոր, և մինչև այն ժամանակ անյայտ փաստաբանը, Էտիեն Պասկիե, փառաւոր կերպով պաշտպանեց Համալսարանի իրաւունքը։ Գեղեցիկ ճարտարութենով ապացուցեց Յիսուսեանների վնասակարութիւնքը Ֆրանսիացոց հոգևորականների համար, և մինչև անգամ Տէրութեան վտանգը, հիմնըվելով այս բանի վերայ, թէ Յիսուսեանների մեծ մասը Սպանիացի լինելով, կարող էին լրտեսութիւն առնել այն ժամանակ մա-

1) Այս Կոլլեգիումը Կլերմոնտեան անուանվումէր այն պատճառով, որ դորա գումարը կտակով թողել էր Յիսուսեաններին, նոցա կողմնակից Հիյլեօմ Դիւպրա, Կլերմոնդի Եպիսկոպոսը, որ հռչակաւոր Դիւպրա (Duprat) կանցլերի ապօրինի որդին էր, որ կամենումէր գնել Պապական Աթոռը 1,200000 լիբրէով։

Նաւանդ, մինչ Ֆրանսիայն և Սպանիայն Թշնամի էին միմիանց: Նա
այսպէս վերջաւորեց իւր ճառը. «Դուք ինքներդ Պարոններ, դուք
«ինքներդ, որ այժմ ընդունումէք Յիսուսեաններըը, կը զղջաք. բայց
«գուցէ Թէ ուշ լինի այն ժամանակ. դուք կը զղջաք, երբ կը տե-
«սանէք ձեր գիւրաՀաւանուԹեան կորստական Հետեւանքը, այսինքն
«ամենայն կարգի և ՀանգստուԹեան կործանումը ոչ միայն այս Թա-
«գաւորուԹեան մէջ, այլ և բովանդակ Քրիստոնեայ աշխարՀներում—
«նոցա խորամանկուԹենով, կեղծաւորուԹենով, նենգուԹենով, նան-
«րաՀաւատուԹենով, երեսպաշտուԹենով և այլ զարՀուրելի արա-
«տիքներով»:

Կարգի փաստաբանը Վերսօրիս անունով, շատ Թոյլ կարողացաւ
Հերքել այս բաները. բայց Պարլամենտը չնայելով գործի ընԹացքի
վերայ, ատելուԹիւն ունենալով դէպ ի Պրօտեստանտները յետ դրեց
այս գործի վախճանական վճիռը անորոշ ժամանակով, և Թոյլ տուեց
Յիսուսեաններին ուսուցանել նոր բացած Կօլլեգիումի մէջ:

Երիտասարդ փաստաբանի (Պասկիեի) փառաւոր յայտնուԹիւնը,
որ մանաւանդ փայլեցաւ այս պաշտպանուԹենով, և որի մասին դեռ
ևս ժողովքի առաջին նիստումը գովասանուԹիւն էր խօսել Հռչակա-
ւոր Դիւպենը, շատ սաստիկ վրդովեց Յիսուսեաններին, նոքա տեսան
նորանում մի նոր և քանքարաւոր Հակառակորդ: Կամենալով ջնջել
այն տպաւորուԹիւնը, որ գործել էր նորա ճառը, գրեցին ճառի պա-
տասխանը, ՀայՀոյանքի և զրպարտուԹեան ձևով, որ մինչև այժմ պաՀ-
պանվումէ Փարիզի Պարլամենտի Հին դիւանների մէջ. այս շատ նշա-
նաւոր պատասխան է, վասն որոյ դուրս եմ գրում այս տեղ բառ առ
բառ: «Թող Պասկիե շաղփաղփէ այնքան, մինչև որ մեր անդամներից
«մինը կամ այլ ոք կաղմէ Հասարակութեան Համար ՀամախմբուԹիւն.
«նորա յիմարուԹենների, ցանցառուԹենների, իշուԹենների (aneries),
«չար և Հերետիկոսական կարծիքների, որ այս բաներից շինեն նորան
«գերեզման, որի մէջ կենդանի կենդանի կը Թաղվի. այնպիսի գերեզ-
«ման, դէպ ի որը Հարիւր մղոնից պիտոյ է Թռչին, Հասանեն ագռաւ-
«ները և անգղները նորա մարմնի Հոտը առած. գերեզման, որին չէ
«պիտոյ կարողանան մարդիկ մօտենալ առանց քիԹերը բռնելու գար-
«շաՀոտուԹեան պատճառով. որի վերայ պիտոյ է բուսանին մամուռ
«և եղինձ, և ուր պիտոյ է բոյն շինեն մողէսները և բազելիսկները,
«պիտոյ է վայեն բուերը և այլ գիշատող Թռչունները:

«Պասկիե, անառակ, Փարէզեան խաբեբայ, խեղկատակ, ծաղրա-
«ծու, զրպարտուԹեան վաճառող, որ արժանի չէ ծառաների մօտ ծա-
«ռայ լինելու, անպիտան, որ շատ անպիտանուԹիւնք է գործում (qui
«rote, qui pêtte, qui vaisse et qui rend sa gorge) Հերետիկոս,

«կամ առաւել վատթար, կեղտոտ և զզուելի հեգնող, յիմարների նա-«հապետ (archi-sot par sa nature), ամենայն տեսակ յիմար»:

«Պասկիե վերագիր ամենայն տեսակ զրպարտութեններ, (Pas-«quier est un pasquin)[1]) մեծ հորթ, եղն, էշ, անարժան այն ջրին, որով լուանումեն նորա գլուխը, այնպիսի ծաղրածու, որի գլխին «պիտոյ է դնել դեղին գլխարկ, աքաղաղի փետուրներով և բոժոժ-«ներով. օձ, սողուն, գորտ, խօսքերով միայն Պապական, իսկ իրա-«ղապէս Աստուած մի անձն դաւանող և մինչև անգամ անաստուած, «շատախօս կաչաղակ, անսանձ խելագար, որ ընկնումէ ամենայն կողմ, «որ ապականէ և պղծէ կարապների մաքուր փետուրների պատուական «սպիտակութիւնը»:

Ահա Յիսուսեան աբեղաների ճշմարտութիւնը. այսպէս կամենումեն նոքա ապացուցանել իւրեանց իրաւունքը և հերքել հոյակապ Պասկիեի իմաստուն ասածները: Ի՞նչ ասել է, ճշմարտութիւն ապացուցանելու համար հայհոյել և նզովել. եթէ ունեին նոքա իրաւունք, փաստ և պատճառ, թո՛ղ հանդէս բերեն, թո՛ղ մարդավայել կերպով հերքեն հակառակորդի խօսքը, և լուսափայլ կացուցանեն իւրեանց ճշմարտութիւնը: Այս բաները ոչ այլ ինչ են, եթէ ոչ, յայտնի ապացոյց և քարոզ, թէ այդ Յիսուսեան աբեղայքը ջարդ ու փշուր էին եղած բարոյապէս և ջախջախված խորտակված միանգամայն Պասկիեի ճշմարտութեան մուրճի տակ. պատճառ, բանականութենով և խելքով կ՚ապացուցանվի ճշմարտութիւնը, եթէ կայ, բայց հայհոյութիւն, գաւազան և բռնութիւն, երբէք չեն կարող ապացուցանել մի չինովի, հնարած ճշմարտութիւն, վա՜յ այն ճշմարտութեանը որ այսպիսի հնարների էր կարօտում. ողբա՜լի հնար ճշմարտութիւն ապացուցանելու:

Բայց այս կարապները օրէ օր աւելի գործի տէր էին դառնում Եկատարինէ Մեդիչիսի պալատումը, Սպանիացիք ներգործումէին նոցա ձեռքով. նոքա, ինչպէս երևումէ դը-Տու նախագահի խօսքերից, առաւել կատաղի դահիճք եղան այն հռչակաւոր սպանութեան մէջ, որ յայտնի է անունովս Բարթոլոմէոսեան գիշեր. կամ, Փարիզի արիւնաշաղախ հարսանիք 2): Նոքա արդէն բաւականաչափ զօրացած էին Ֆրանսիայի մէջ և 1577 թուականին, նոր ի նորոյ սկսեցին աշ-

---

1) Pasquin — մի հին և աղճատեալ արձանի անուն է, որի վերայ Հռովմի մէջ դնումէն ամենայն տեսակ զրպարտ թշնամանք:

2) Այս անցքը գեղեցիկ նկարագրած է ամենայն մանրամասնութենով, գերապատիւ Ստեփաննոս Նազարեանց Վարդապետի ,,Հանդէս Նոր Հայախօսութեան անունով գրքի մէջ, տես երկրորդ հատորում: Տպած Մոսկվայի մէջ 1857 թիւ:

խատել, որ ձեռք բերեն Փարիզի Համալսարանի ուսուցչապետական, վարդապետական ամբիոնները: Բուրբօն Կարդինալը, որ պաշտպան էր Յիսուսեաններին, կանչեց իւր մօտ Համալսարանի կառավարիչը և Համալսարանական ծերակուտի անդամքը. յայտնեց նորանց, թէ Պապը և Թագաւորը ցանկանումէին տեսանել Յիսուսեան աբեղաները Փարիզի Համալսարանի մէջ վարդապետական աթոռների վերայ: Կառավարիչը պատասխանեց. թէ այդ բանը գլուխ բերելու համար յառաջուց հարկաւոր է իմանալ, թէ Յիսուսեան աբեղայքը աշխարհակա՞ն են, թէ հոգևորական. Կարդինալը չ՚կարողացաւ այս հարցմունքին պատասխանել: Բայց մի գաւառական Յիսուսեան աբեղայ, որ այն տեղ ներկայ էր, և որ մինչև այն ժամանակ չէր խօսում, ասաց: «Sumus tales quales» (մեք այնպէս ենք, ինչպէս). կառավարիչը խընդրեց նորանից բացայայտել այս խօսքերը. աբեղան պատասխանեց «Յիսուսեան աբեղաները, իրողապէս բաղկացնումեն աշխարհական հասարակութիւն իւրեանց ուխտերին համաձայն. բայց ո՛չ բոլորովին կատարեալ, այլ այս պայմանով, թէ նոքա աշխարհականանումէին հրապարակով ուսուցանելով մանուկներին այն ամենայն գիտութիւնքը, որ Պապը պարզապէս նշանակել էր իւր կոնդակներից մինի մէջ»: Կառավարիչը և երեսփոխանքը չ՚կարողացան հասկանալ այս աբեղայի խօսածը. վասն որոյ փակած մնացին Համալսարանի դուները Յիսուսեան աբեղաների առաջև:

Շուտով սորանից յետոյ կազմակերպեցաւ հռչակաւոր Սուրբ Լիգան, որ քսան տարի չարչարեց Ֆրանսիայի աշխարհը: Ինչպէս Մեզերիե ասումէ, Յիսուսեանք էին նորա քարոզիչքը և փողարքը: Նոցա միջից մանաւանդ երևելի եղաւ Հենրիկոս Սամմիե անունով Յիսուսեան աբեղայն, որ քանի անգամ ուղարկվեցաւ զանազան Պապական Թագաւորների մօտ օգնութիւն խնդրելու:

Սա Փարիզի մէջ ժողովուրդը գրգռելով Հուգենօտների ընդդէմ շատ անգամ կերպարանափոխ եղաւ. երբեմն զինուորի, երբեմն քահանայի, երբեմն աղքատի հանդերձ հագնելով: Մտանումէր խաղարկութեան տներ և պանդոկներ, այս բաները Յիսուսեան Կարգի կանոնով թոյլ էր տուած, սուրբ նպատակին հասանելու համար (Նպատակը կը սրբէ հնարը??..): Այս աներկիւղ մարդը ճանապարհորդեց բոլոր Գերմանիայ, Իտալիայ և Սպանիայ. գնաց ամենայն պապական Թագաւորի մօտ, աշխատելով պատերազմել տալ նորանց Հենրիկոս IIIի հետ, որովհետև սա պաշտպան էր Հուգենօտներին: Նորա հետ միացաւ և մի այլ Յիսուսեան աբեղայ-Կլօդիոս Մատիե, որ անուանված էր «Սուրհանդակ Սուրբ Լիգայի»:

Վերջապէս յաջողեցաւ նորանց համոզել Ֆիլիպպ IIը դաշ-

նակից լինել Պապական թագաւորների հետ 1584 թուականի դեկտեմբեր ամսումը (ligue défensive et offensive)· այս դաշնադրութեան զօրութենով նոքա բոլորը պարտաւորվեցան գործ դնել ամենայն զօրութիւն Պապականութիւնը Ֆրանսիայի մէջ պահպանելու համար· և Հենրիկոս III ի մահից յետոյ Կարդինալ Բուրբոնին թագաւորեցուցանելու համար, բաց ի նորա բոլոր մերձաւոր ժառանգաւորներից, որ ընկել էին հերետիկոսութեան մէջ։

Այս միջոցին մայրաքաղաքը դարձաւ Սուրբ Լիգայի ընկերակցութեան կենդրոն։ Տասն և վեց 1) հռչակաւորքը, որ գրգռվումէին և կառավարվումէին Յիսուսեանների խորհրդով, ազատակամ ներգործումէին Փարիզի և Ֆրանսիայի վերայ։

Հենրիկոս III ը, որ սկզբումը շատ ուշ չէր դնում Սուրբ Լիգայի վերայ, զարհուրեցաւ երբ լսեց, թէ իւր թագաւորութեան կէսը անցել է արդէն Սուրբ Լիգայի պատկանողների դրօշի տակ· որոշեց նա վերջապէս ինքը իւրեան Սուրբ Լիգայի գլուխ քարոզել· յուսալով, թէ կարող է այս ճանապարհով իւր ձեռքում պահել թագաւորական իշխանութիւնը, բայց շատ սխալվեցաւ իւր կարծիքի վերայ· Գիզերը և Յիսուսեանք էին Ֆրանսիայի իսկական տիրողքը։ Հենրիկոս, տեսանելով իւր սխալը, օգնութիւն խնդրեց իւր փեսայ Հենրիկոս Նավարրացիուց· այս երկու թագաւորքը միացուցին իւրեանց զօրքը և պաշարեցին Փարիզը։ Սարսափած մնացին Տասն և վեցը, և հնար էին որոնում այս վտանգից ազատվելու։ Այն միջոցին, երբ սոքա հաւաքված Մայեն դուքսի առանձնարանի մէջ խորհուրդ էին կատարում, երևեցաւ Բուրգուան, Յակոբեանների վանքի վանահայրը· և յայտնեց, թէ իւր աբեղաներից Յակոբ-Կլեման անունով մինը (Jacques Clément) բարեպաշտ հոգետես, որ յոյս ունի, թէ հրեշտակները օգնութիւն կը հասանէին նորան երկնքից, սուրբ գործը կատարելու համար· կամ թէ գոնէ արժանի կը լինի ստանալ մարտի-

---

1) Ինչ ժամանակ Գիզ Դուքսը, Յիսուսեանների ձեռքով գրգռվելով Հենրիկոս III ի ընդդէմ, որ պաշտպան էր Հուգենոտներին, կազմեց Սուրբ Լիգա, այս ինքն սուրբ կապակցութիւն անունով դաշնակցութիւնը, որի արտաքին ձևը էր միմիայն կրօնական, այս է հաստատ պահել Պապականութիւնը Փարիզի մէջ, իսկ ներքին խորհուրդը բոլորովին քաղաքական խնդիր, այն ժամանակ Փարիզի հասարակութիւնը քաղաքի իւրաքանչիւր թաղերից մի մի մարդ կարգելով դաշնակցութեան մէջ, որպէս փոխանորդ թաղերի բոլոր բնակիչներին, մտաւ Սուրբ Լիգայի մէջ· բայց որովհետև տասն և վեց հատ էին այս արեւփոխանքը քաղաքի տասն և վեց թաղի թուով, վասն որոյ և պատմութեան մէջ Փարիզի հասարակութիւն ասելու փոխանակ ասվումէ «տասն և վեց», որով իմացվումէ Փարիզի հասարակութիւնը։

բոսական արմաւենին, վճռումէ զոհել իւր անձը բոլոր Պապականների փրկութեան համար. այսինքն, թէ կամենումէ սպանել Հենրիկոս III ը, որ հալածումէ Պապականները: Այս րոպէին Բիւսսի-Լեկլեր (Bussi-Leclere) անունով մի մարդ բերեց մի, նամակներով լիքը ծրար, որ Բաստիլիայի Պարլամենտի անդամքը յանձնել էին մի Օգոստինեան աբեղայի, որ պատարագումէր նոցա համար. և խնդրել էին այս աբեղայից հասուցանել նամակների ծրարը, Թագաւորին:

Իսկոյն վճռվեցաւ, թէ այս նամակները կարող են Յակոբ-Կլեմանի համար անցաթուղթ լինել: Դուքս Մայենը տուեց այս նամակները Բուրգուանին և խնդրեց համոզել Կլեմանը, որ հարցուփորձի ժամանակ չյայտնէ իւր խորհրդակիցքը. կամ գոնէ ասէ միայն վանահօր անունը, որին խոստացաւ տալ զինուորական պահնորդներ, անվտանգ Ֆլանդրիա հասանելու համար, ուր նա կարող էր գտանել մի հանգիստ ապաստանարան: Այսպէս ևս կատարվեցաւ: 1588 Թուականի յուլիսի 31 ին, երեկոյեան ժամանակ Յակոբեան երիտասարդ Յակոբ-Կլեման աբեղայն, հասաւ Սէն-Կլու. ամբողջ գիշեր աղօթքի հետ եղաւ և միւս օրը գնաց Արքունի պալատ: Երբ կամենումէր ներս մտանել պահապանը արգելեց: Ինչ ժամանակ աբեղայն բարձր բարձր խօսումէր պահապանի հետ, Հենրիկոս III ը լսելով այս աղաղակը, գանչեց պատուհանից, որ բաց էր. «Ներս թողեցէք դորան. ինձ համար կասեն, թէ ես հալածումեմ աբեղայքը և չեմ կամենում տեսանել նորանց»:

Յակոբ-Կլեմանը, ներկայացաւ Թագաւորին, որ այն միջոցին նստած էր աթոռի վերայ և տուեց նորան նամակների ծրարը: Ինչ ժամանակ Հենրիկոս կարդումէր ուշադրութենով այս նամակները, աբեղայն հանեց իւր թևի միջից երկայն դանակը, որ պատրաստած էր, և ցցեց Թագաւորի կուրծքը: Պահապանքը, լսելով Թագաւորի աղաղակը, ներս վազեցին. և տեսանելով Թագաւորը արեան մէջ թաւալված, իսկ աբեղայն կանգնած նորա մօտ արիւնոտ դանակը ձեռքին, յարձակվեցան Կլեմանի վերայ և կտոր կտոր արեցին նորան նոյն րոպէին: Յակոբ-Կլեմանը ժամանակ չգտաւ իւր խորհրդակիցքը յայտնելու:

Յիսուսեան աբեղայքը, ժամանակակից օրագիրների մէջ գովումէին այս զարհուրելի Թագաւորասպանութիւնը: Այն օրը, որ Հենրիկոս III ը սպանեցին Փարիզի մէջ, նոքա կամենումէին Բորդոի մէջ մորթել Մարշալ Մատինեօնը, և տիրել ամրոցին: Մատինեօնը ազատվեցաւ, բայց Յիսուսեան աքսորվեցան քաղաքից: Իւրեանց այն ժամանակներում տպած շարադրութենների մինի մէջ, Յիսուսեան աբեղայք ասումեն, թէ Աստուած պատժեց Հենրիկոս III ը, Մարշալ

Մատինեօնի Ցիսուսեաններին հասուցած նեղութիւնների համար, որ հպատակօրէն կատարումէր միշտ Հենրիկոսի հրամանները այս մասին։

Մինչդեռ այս բաները լինումէին, Հենրիկոս IV Թագաւոր անուանեց իւրեան. այն Թագը, որ ժառանգաբար պատկանումէր նորան, պիտոյ է նա պատերազմով ստանար։ Ցիսուսեան աբեղայքը, որոնց խորհրդով կառավարվումէին Տասն և վեցը և մանաւանդ Դուքս Մայենը, որ այն միջոցին գլխաւոր գործակատար էր, կարդինալ Բուրբօնը Թագաւոր հրատարակեցին Կարոլոս X ի անունով։ Հենրիկոս IVը բռնեց այս եօթանասուն տարեկան պառաւը, որ և երիտասարդ ժամանակին չէր ցոյց տուել մի առանձին խելք, և փակեց նորան Պուատուի Շատինիե անունով ամրոցի մէջ, ուր հետևեալ տարումը և մեռաւ այս Թագաւորի ուրուականը, իւր յիշատակը Թողնելով մի քանի դրամների վերայ, որ այն ժամանակ կտրվել էին նորա պատկերով։

Ֆրանսիայն շփոթութեան մէջ էր, Թէ ո՞վին ընտրէ Թագաւոր։ Բօրդոսի Պարլամենտը կամենումէր Հենրիկոս IVին, իսկ Տուլուզի Պարլամենտը, որոշեց հնազանդվիլ միանգամայն Սիկստոս V Պապի կոնդակին, որի մէջ Հենրիկոս IVը անուանված էր «հերետիկոս, և որպէս մասնակից շատ յանցանքների, անարժան և անյարմար Ֆրանսիայի Քրիստոնէական Թագը ժառանգելու։

Հենրիկոս ատելութեամբ բորբոքվելով այս կոնդակի վերայ. հրամայեց իւր կողմնակիցներին, որ յատուկ այս պատճառով ուղարկումէր Հռովմ, զարկել իսկական Վատիկանի դուռի վերայ հետևեալ նամակը գրած դէպի Սիկստոս Vը։

«Հենրիկոս, Աստուծոյ ողորմութեամբ Թագաւոր Ֆրանսիայի
«և Նավարրայի, Թագաւոր Բէարնա, առաջին Պէր Ֆրանսիայի, ընդ-
«դիմանումէ Հռովմի Պապ անուանված (soi disant pape de Rome)
«Սիկստոս Vի կոնդակին. հաստատումէ, որ այն սուտ է և անիրաւ,
«և իբրև մի չարագործութիւն յանձնումէ Ֆրանսիայի Պէրերի դա-
«տաստանին, որոնց գլուխը ինքն է. ինչ որ վերաբերումէ հերետի-
«կոսութեան, Թագաւորը ասումէ և հաստատումէ, Թէ պարոն Սիկս-
«տոս Vը, որ պապ է կոչվում, չնայելով իւր սրբազնութեան վերայ,
«չարաչար սուտ է խօսել, Թէ նա ինքն է հերետիկոս. և այս բանը
«պիտոյ է ապացուցվի, մի ազատ և օրինաւոր, լրացեալ ժողովքով։
«Եթէ Սիկստոս չհնազանդվի, ինչպէս հրամայումեն եկեղեցական կա-
«նոնները, այն ժամանակ Թագաւոր Հենրիկոսը կըքարոզէ նորան
«նեռն, սուտ Քրիստոս. և կ'ունենայ նորա հետ մշտնջենական և ան-
«հաշտ պատերազմ.... Եթէ առաջվայ ժամանակներումը նորա նա-
«խորդ Թագաւորները գիտէին ինչպէս պատժել այսպիսի մարդերի
«ամբարտաւանութիւնը (de tels galants), ինչպէս Սիկստոս Պապն է

«երբ Նոքա մոռանումէին իւրեանց պաշտօնը և խառնվումէին աշխար-
«հական գործերի մէջ այնպէս և վերոյիշեալ Ֆրանսիայի և Նավար-
րայի Թագաւոր Հենրիկոսը, որ ոչինչ բանով իւրեան նախորդնե-
«րից պակաս չէ, կայ ունի Աստուծոյ օգնութեննովը, վրէժխնդիր լի-
«նել այն անպատվութեանը, որ բերեցին նորա արիւնի, նորա տան,
և բոլոր Ֆրանսիայի Պարլամենտների վերայ»։

Այս սպառնալիքով լիքը նամակը գրելուց յետոյ, Հենրիկոս IVը ընդունեց Պապական դաւանութիւնը. որպէս թէ այն դիտաւորութեամբ, որ ապացուցանէ, թէ ինքը կատարեց այս գործը ոչ եթէ Պապից երկիւղ կրելով — Paris vaut bien une messe! ասաց նա և փառաւոր յաղթանակով մտաւ Փարիզ։

Այս միջոցին վախճանեցաւ Սիկստոս Vը, շուտով նորա քամակից մեռաւ և Գրիգոր XIVը, որ անցել էր Պապական աթոռը արդէն խոր ծերութեան մէջ։ Նորան յաջորդեց Կլեմենտ VIIIը, որի մօտ ուղարկվեցան շուտով դեսպաններ Հենրիկոս IVի կողմից — Դիւպերրոն և դ'Օսսա, այն մասին որ խնդրեն չքացնել Հենրիկոս IVի ընդդէմ գրուած նզովքի կոնդակը։

Պապը շատ սիրով ընդունեց Հենրիկոսի դեսպանքը. բայց պահանջեց անպատճառ, որ թոյլ տան այս դեսպանքը ծեծել իւրեանց գաւազաններով թագաւորի անուան վերայ, բոլոր կարդինալների ներկայութեամբը։ Աղնուասիրտ դեսպանները երկար ժամանակ վիճելուց յետոյ, համաձայնեցան կրել այս հոգևոր պատիժը. բայց այն պայմանով, որ այդ կատարվի եկեղեցու մէջ, կարդինալները հագած լինին իւրեանց կարդինալական հոգևոր զգեստքը և թոյլ տրվի իւրեանց, դեսպաններին, կանգնած լինել պատիժը կատարելու ժամանակ 1)։ Հենրիկոս IVը, ամենևին անհաւան գտանվեց այս կոմէդիային. բայց կարծեց, թէ ահա վերջանումէ դորանով ամենայն անհամաձայնութիւն, թէ վերջապէս կը սկսի հանգստութեննով վարել իւր թագաւորութիւնը։ Մի ամսից յետոյ յայտնագործած ապստամբական դաշնադրութիւնը ցոյց տուեց, թէ Սրբազան Լիգայի և Յիսուսեան աբեղաների կամքը այն էր, որ Հենրիկոս մեծի փոխանակ, կարդինալ Կարոլոս Բուրբօնի նման թագաւոր ունենան, որպէս զի կարողանան կամեցածների պէս պարեցնել։

Մելեօնումը, բռնվեցաւ մի երիտասարդ մարդ Բարրիեր անունով, որի խօսքերից, որ ասել էր հրապարակական տեղում, կարելի էր եզրափակել, թէ նա մի չար դիտաւորութիւն ունէր թագաւորի մասին։ Երբ բանը ընկաւ հարցափորձի, Բարրիերը խոստովանեցաւ,

---

1) Dupin: de antiqua ecclesiae disciplina.

թէ արդարև կամենումէր Հենրիկոս IVին սպանել Օբրի և Վարադ Յիսուսեանների խորհրդով։

Հայր Վարադը պատուիրել է այս մարդին պաս պահել այս սուրբ գործը կատարելուց յառաջ (նա այսպէս է անուանել այս մարդասպանութիւնը), միւս օրը խոստովանեցրել է նորան և հաղորդել Յիսուսեան կօլլեգիումի մէջ։ Բարրիերը պատժվեցաւ (սպանվեցաւ) իսկ Հայր Վարադը փախաւ գնաց Ֆլանդրիա։

Այս միջոցին բոլոր Ֆրանսիայն երդում կերաւ Հենրիկոսի անունով. միմիայն կապուչիննեանք և Յիսուսեանք հրաժարվեցան երդումից. այն պատճառով, որ Յիսուսեան աբեղայքը չէին կամենում երդմնազանց լինել, ըստ որում այլ խորհրդի վերայ էին ինչպէս կը տեսանենք ներքևումը։

Փարիզի Համալսարանի Աստուածաբանական և իրաւաբանական ֆակուլտէտները, դատապարտելով Յիսուսեան աբեղաների այս ընթացքը. պահանջեցին, որ աքսորվեն Յիսուսեանք Ֆրանսիայի միջից։ Համալսարանի կողմից փաստաբան նշանակվեցաւ Անտուանտ Արնօ, Պօր-րուալեան հռչակաւոր անապատականի հայրը, որ յետոյ զոհ գնաց Յիսուսեան աբեղաների չարագործութեանը. պատճառ, Յիսուսեանք չարաչար հանեցին որդուց հօրը դէպ ի Յիսուսեանները ատելութեան վրէժը։ Ընդհանուր էր գանգատը Յիսուսեանների ձեռքից։ Յիսուսեանք տեսանումէին, որ վտանգը պատրաստ է միշտ իւրեանց համար և երբէք ազատվելու չեն, քանի կենդանի էր Հենրիկոս IVը, որ ատելով ատումէր Յիսուսեանները. և թէ թոյլ էր տալիս նորանց մնալ Ֆրանսիայի մէջ, միայն այն մասին էր, որ չասեն թէ երկիւղ էր կրում Հենրիկոսը Յիսուսեաններից 1)։

Յիսուսեան կոլլեգիումի մէջ, ուսանումէր մի կիսախելք մոլեկրօն մարդ, Յովհան Շատել (Chastel) անունով. Յիսուսեանների համար մեծ աշխատանք չէր արժում նորա խելքին նստեցնել, թէ ով որ սպանէ Հենրիկոս IVը, մեծ պաշտօն կըլինի կատարած կրօնին և Ֆրանսիային, և սուրբ կըլինի, եթէ ինքը կորչի այս հսկայական քաջագործութիւնը կատարելու ժամանակ։ Շատել բորբոքված, վառված այս խրատներից, գնաց Պալատական Գաբրիէլ անունով տիկինի տունը, ուր ամենայն երեկոյ գնումէր Հենրիկոս IVը, և մի ծածուկ տեղ պահվելով սպասումէր թագաւորի գալուն։ Գաբրիէլ տիկինը թագաւորի հետ խօսելու ժամանակ, յանկարծ ցած ձգեց ձեռքից թաշկինակը, Հենրիկոսը խոնարհեցաւ, որ վեր առնու. և այս դիպուածը փրկեց նորա կեանքը։ Ի՞նչպէս. Շատել դուրս եկաւ թագն-

1) Sully: Economies royales T. I, p. 117.

ված տեղից, այսինքն վարագուրի քամակից, ուր կանգնած լինելով անտեսանելի էր Թագաւորին և տիկնին, բայց որովհետև Թագաւորը խոնարհել էր այս միջոցին որ վեր առնու Թաշկինակը, վասն որոյ դանակը հասաւ նորա երեսին և ԹեԹև վէրք դրեց շրԹունքի վերայ, և կոտրեց մի ատամը: Այնպէս շուտ կատարվեցաւ այս շարժողութիւնը, Պալատականք, որ կային տիկնիի տան մէջ, չիմացան իսկոյն, Թէ ով վիրաւորեց Թագաւորը: Ինքը Հենրիկոսը կարծումէր, Թէ վիրաւորվեցաւ չար Մանտուրիայի ձեռքով, որ բնակումէր այն տեղ. վասնորոյ և գանչեց «Սատանայն առնու այս յիմարին. ինձ վիրաւորեց: Այս խօսքերի վերայ Մօնտինի ասպետը տեսաւ մի անծանօԹ մարդ, որ գնումէր կամաց դէպ ի դուռը. իսկոյն կանգնեցրեց նորան և ասաց. «երկուսիցս մինը վիրաւորեց Թագաւորին. կամ դու, կամ ես»: Շատել խոստովանեցաւ, բայց չ'կամեցաւ մատնել իւր խորհրդակիցքը. վերջապէս բանդումը քանի անգամ հարցափորձից յետոյ բանալով գաղտնիքի վարագոյրը մատնեց իւր խորհրդակիցքը: Երբ յայտնեցին Հենրիկ IVին այս բանը, նա հիւանդպառկած տեղից ասաց շրջապատող Պալատականներին «Ուրեմն պիտոյ է, որ այս .... Յիսուսեան աբեղաների դատակնիքը խօսէր իմ բերանը: (Fallait il donc que ces b.... de Jésuites soient convaincus par ma bouche) 2):

Պարլամենտը գործ դրեց ամենավճռական հնարներ. Շատելը դատապարտելով դէպ ի մահ, մի և նոյն ժամանակումը այսինքն **1594** Թուականի դեկտեմբերի **29**ին վճռեց, Թէ «Յիսուսեան աբեղայք, իբրև խանգարիչք աշակերտների բարոյականութեանը. որ ուսանումէին նոցա դպրոցներում, իբրև հասարակաց հանգստութեանը վրդովիչք, և իբրև Թշնամի Թագաւորի, և Տէրութեանը, պարտական են բոլորը-առանց բացառութեան — այս վճիռը յայտնվելուց երեք օրից յետոյ դուրս գալ Փարիզից. իսկ տասն և հինգ օրից յետոյ Ֆրանսիական Տէրութեան միջից: Նոքա, որ դուրս չ'գնան, կամ միւս անգամ ոտք կոխեն Ֆրանսիայի աշխարհը, պիտոյ է պատժվին իբրև Թագաւորի հրամանի յայտնի հակառակորդներ»:

Եւ արդարև Յիսուսեանք դուրս եկան Ֆրանսիայից, բայց նոցա մի մասնը մնաց Հիեննայում և Լանգեդօկում, ուր դեռ ևս կարող էին մի կերպով դիմանալ Սրբազան Լիգայի կողմնակիցքը: Յիսուսեան կարգի բոլոր Թղթերը կնքվեցան: Հեննար Յիսուսեանի մի շարադրութեան մէջ գտանվեցան այնպիսի խօսքեր, որ անարժան էին գրելու:

---

2) Le Mercure Jésuite T. I, p. 520.

Հենեարին կախեցին. Պարլամենտը վճռեց քանդել այն տունը, ուր բնակվումէր Շատել, և նորա տեղում մի բուրգ շինել Թագաւորի փրկութեան և Յիսուսեան աբեղաների Ֆրանսիայից աքսորվելու յիշատակի համար: Բուրգի վերայ կայր հետևեալ վերագիրը:

S. P. Q. P.

Extinctori pestiferæ factionis hispanicæ, incolumitate ejus et vindicta parricidii læti, majestate ejus devotissimi.

Duplex potestas ista fatorum fuit;
Gallis saluti quod foret Gallis dare,
Servare Gallis quod dedissent optimum 1).

Այս միջոցին Հենրիկոսը մտածումէր բաժանվիլ իւր Մարգարիտա Վալուա կնոջից, որ քանի տարով մեծ էր իւրեանից, և որի հետ պսակվել էր յարմարվելով քաղաքական հանգամանքներին: Պապը խոստացաւ լուծանել այս ամուսնական կապը. միայն խնդրումէր յետ կանչել Յիսուսեանները աքսորից. որպէս թէ ինչպէս ասումէր, Փարիզի մէջ այս բանից վիրաւորված մարդիկը զինաթափ առնելու համար: Հենրիկոս IVը ամենևին չէր սիրում իւր կինը, շատ ընդդէմ էր նորան Մարգարիտայն, որի հետ պսակված օրը Փարէզը արիւնով էր լուացվել 2). այս պատճառով խոստացաւ Պապին մի քանի ժամանակից յետոյ կատարել նորա պահանջածը. այսինքն, յետ դանչել աքսորից Յիսուսեան աբեղայքը: Պսակը քակվեցաւ և Հենրիկոսը գնաց Լիօն, իւր երկրորդ կնոջ Մարիա Մեդիչիսի ընդառաջ, որ այն ժամանակվայ գեղեցիկներից առաջինն էր. խելացի և խորագէտ կին, որի ճակատը գրած էր մեծ նշանակութիւն ունենալ Ֆրանսիայի պատմութեան մէջ: Մարիա Մեդիչիսի հետ կային երկու Իտալացի Յիսուսեանք, Մաճիօ և Ճենտիլ, երկուսը ևս ճարտար խռովարար և յաջող Պալատականք: Նոքա կարողացան դարձուցանել իւրեանց վերայ Թագաւորի բարեհաճութիւնը, և համոզումէին նորան խոստանալ երկու ամսից յետոյ թոյլ տալ Յիսուսեաններին Փարիզ մտանել: Բայց Յիսուսեանների, Մարշալ Բիրոնի ընդդէմ

---

1) Սպանիական կորստաբեր ընկերութեան կործանողին, նորա ողջութեան և հայրասպանների վրէժխնդրութեան վերայ ուրախացողքը և նորա մեծութեան պատուասիրողքը: Կրկնապատիկ եղաւ ճակատագրի խորհուրդը. որ է տալ Գաղղիացոց, ինչ որ կարող էր փրկաւէտ լինել նոցա, և պահպանել Գաղղիացոց համար ինչ որ նա տուած էր նոցա շատ պատուականներից:

2) Ես յիշումեմ Բարթողոմէոսեան գիշերը:

դաւադրութեանը մասնակից եղած լինելը, և այլ թագաւորութիւն-ների մէջ նոցա ձգած խառվութիւնքը, հարկադրեցին թագաւորին, որ իւր մտադրութիւնը յետ դնէ։ Հայր Մաճիօ, որ Մարիա Մեդի-չիսի հետ էր, Փարիզ հասանելուց յետոյ և իւր սրամիտ խօսքերի համար թագաւորին հաճոյանալուց յետոյ, մի անգամ ասաց թագա-ւորին. «Ձեր Մեծութիւնը աւելի երկար էք կրում ձեր յղացածը քան թէ կանայք. նոքա ինն ամսից արդէն ծնանումեն» — իմ բարե-կամ — պատասխանեց Հենրիկոսը մի և նոյն ձևով — թադաւորներին տուաւել ա՛չ է ազատվիլ այսպիսի յղութենից, քան թէ կնիկ մար-դերին։

Վերջապէս Հենրիկոս IVը վճռեց, որ վերադառնան Յիսուս-եանք։ Երբ Սիւլլի խորհուրդ էր տալիս նորան չ'առնել այս գործը, Հենրիկոսը պատասխանեց. «գիտեմ, որ Յիսուսեանները յետ կան-չելով, ես իմ կեանքս վտանգի մէջ եմ ձգում, բայց եթէ չ'թողում նոցա Փրանսիա մտանել այսու ամենայնիւ չեմ կարող իմ կեանքի ապահովութեան համար երաշխաւոր լինել։ Այդ մարդիկը ամենայն տեղ գրագրութիւն ունին, ամենայն տեղ ընկերներ և խորհրդակիցք, նոքա ամենայն ժամանակ կըգտանեն ինձ։ գուցէ դեռ ասեն և իմ մասին, թէ ես վախենում եմ նորանցից։ Բայց եթէ բանը մահի կերպի վերայ մտածելու գայ, ես կեսարին համաձայն իմ. ամենայն մահից լաւ է անակնկալ և յանկարծական մահը»։ 1)

Վերջապէս Յիսուսեանք վերադարձան Փրանսիայ ութը տար-վայ աքսորից, 1603 թուականի սեպտեմբերի 25ին։ Նոքա ստացան դարձեալ Փարիզի մէջ ուսուցչական տունը և Կլերմոնտեան Կօլ-լեգիումը, այն պայմանով, որ դասախօսութիւն չ'առնեն այն տեղ։ Բայց վեց տարուց յետոյ, այսինքն 1609 թուականին, յաջողեցաւ նոցա հրաման ստանալ Աստուածաբանական ուսման ընթացք բանալու։

Յիսուսեանք մեծ յոյս չէին կարող ունենալ թագաւորի վերայ, որ երբէք հաւատ չունէր իւրեանց վերայ։ Նոքա որոշեցին ուղղել դէպի նորա սիրտը Րավալեակի սուրը այն ժամանակ, երբ Հենրի-կոսի մեծակշիռ մտքերը ստացել էին իւրեանց կատարեալ կերպարա-նագործութիւնը։

Ուրբաթ օր, 1610 թուականի մայիսի 14ին, թագաւորը Լուվ-րից գնումէր կառքով զինարան. նորա կառքի մէջ նստած էին, դէ-բերնօն, Մօնբազօն, Լեվարդեն և Րօկլօր դուքսերը և դը-լա-Ֆօրս և Միրաբոյ մարկիզները։ Մի նեղ փողոցից դէպ ի միւսը շուռ գա-լու ժամանակ, դուրս եկան նոցա առաջքը քանի մի սայլեր, խառով

---

1) Sully: Economies royales, T. II, pag. 34.

բեռնաւորած. թագաւորական սպասաւորքը գնացին ճանապարհը յըստակելու, իսկ վերան բաց կառքը, որի մէջ նստած էր թագաւորը մնաց կանգնած: Այս միջոցին Րաւալեակ աբեղայն անկիւնի քամակից դուրս գալով, կանգնեցաւ կառքի քամակի անիւների վերայ երկու հարուած տուեց Հենրիկոսի կուրծքին դանակով. առաջին հարուածը մահացուցիչ: Մեծ շփոթութեան մէջ ընկան բոլորը: Եթէ Րաւալեակ ձեռքից թողնէր իսկոյն դանակը և անհետանար, չէին գտնելու նորան. բայց նա բռնվեցաւ արիւնոտ դանակը ձեռքին, և խոստովանեցաւ, թէ ինքն էր թագաւորի սպանողը: Այն միջոցին երևեցան մի քանի զրահաւորված անծանօթ մարդիկ, որոնք ասացին, թէ հարկաւոր է սպանել նորան, և անյայտացան բազմութեան մէջ: Դուքս դ'Էպէրնօնը թագուհու սիրելին և Յիսուսեանների պաշտպանը տուեց Րաւալեակը Մօնտէնի ատպետի ձեռքը, որ փակեց նորան դը-Րէ անունով պանդոկի մէջ, ուր ամենայն մարդ ազատ մուտք ունենալով կարող էր տեսանել նորան:

Կոտօնը, որ դրած էր նորա մօտ, նորան մեռանելու պատրաստելով համոզումէր չ'զրպարտել պատուաւոր մարդիկը, այս ինքն չ'յայտնել, թէ Յիսուսեան աբեղաների խորհրդով ձեռք էր բարձրացրել Աստուծոյ օծեալի վերայ: Յիսուսեանների և Դուքս դ'Էպէրնօնի խըռովարարութեամբ շատ թոյլ կերպով կատարվեցաւ Րաւալեակի գործի քննութիւնը: Այսու ամենայնիւ հարցմունքի ժամանակ ցոյց տուեց նա, թէ տեսիլքներ երևումէին նորան, որոնք հրամայումէին սպանել թագաւորը, թէ նա այս բանը խոստովանելու ժամանակ ասել էր իւր խոստովանահայր Դօբենի Յիսուսեանին: Բայց երբ Դօբենին կանչվեցաւ, Պարլամենտի մէջ պատասխան տալու համար, ասաց նախագահին. «Աստուած պարգևել է մի քանիսին խօսելու շնորհք, ուրիշներին գուշակութիւն, բայց ինձ, մոռանալ այն բանը, ինչ որ խոստովանութեան ժամանակ ասումէին ինձ» այս խօսքերից առաւել ոչինչ չ'կարողացան լսել նորանից:

Հենրիկոս IVի թաղումը կատարվեցաւ մեծ հանդէսով. բոլոր թագաւորական աստիճանաւորքը, հոգևորականք թէ աշխարհականք գնումէին դագաղի յետքից միանգամայն սևազգեստեալ. Պարլամենտի անդամքը իւրեանց սովորութենով գնումէին կարմիր արկանելիք ձգած իւրեանց վերայ, այն խորհրդով, թէ թագաւորի մահը արգելք չէ իրաւադատութեան ընթացքին: Մասնակից էին այս տխուր արարողութեանը բոլոր աբեղայական կարգերը. միմիայն Յիսուսեանք էին, որ չէին երևում: Նոքա, ինչպէս ասումեն, Տացիտ, Տիվերի և Լիվի, չէին եկել իւրեանց սպանած թագաւորի մարմինը թաղելու այն պատճառով, որ ժողովուրդը նոցա սուտ տխրեցուցած երեսների վերայ

չ՚նկատէ նոցա ներքին ուրախութիւնը։ Երեք ժամից յետոյ, զկնի Թագաւորի մահին դ՚Էպերնօն դուքսը մտաւ Պարլամէնտ. և ձեռքը դնելով սուրի վերայ ասաց որոտալիր ձայնով «Պարոններ, այս սուրը
«դեռ մերկ չէ, դեռ ևս նա գտանվում պատեանի մէջ. եթէ այսօր,
«այս ժողովքի մէջ, Թագուհին չ՚ընդունվի և չ՚հրատարակվի գահա-
«կալ և յաջորդ հանգուցեալ Թագաւորին, այն ժամանակ հարկա-
«ւոր կը լինի հանել այս սուրը պատենից։ Ես գիտեմ, ձեզանից մի
«քանիսը ժամանակ կը խնդրեն մտածելու, բայց նոցա մտածողութիւնը,
«այժմեան ժամանակումը անտեղի է. ինչ որ այսօր կարելի է ա-
«նել անվտանգ, էգուց նոյն բանը գլուխ կը գայ սարսափելի արիւն-
«հեղութենով»։

Օրինաւորները, որ Դուքսի հրամանով շրջապատել էին Պարլամէնտը, զօրացնումէին մի և նոյն ձայնը։ Հէնրիկոս IVի այրին անւանվեցաւ Թագուհի և Տէր Ֆրանսիայի։ Հասարակաց ձայնը և կարծիքը, դատապարտումէր Դուքս դ՚Էպերնօնը և մինչև անգամ Թագուհին ևս իբրև մասնակից Թագաւորի դաւաճանութեանը։ Մարիա Մեդիչիսի վարմունքը դէպ ի Սիւլլին և հանգուցեալ Թագաւորի դէպ ի այլ հաւատարիմքը. նորա շարունակ հրաժարվելը Րավալեակի խորհրդակիցքը գտանելուց և պատժելուց, և մանաւանդ պաշտպանութիւնը, որ ցոյց էր տալիս Յիսուսեաններին, ճշմարտումէն դժբաղդաբար այս զարհուրելի կասկածը։

Թագաւորի մեռանելուց երեք ամսից յետոյ Յիսուսեանք ընդդէմ Պարլամէնտին հրաման ստացան ուսուցանել Կլերմօնդեան կօլլեգիումի մէջ. ոչ թէ միայն Աստուածաբանութիւն, այլ և բոլոր այլ գիտութիւնքը։ Զուր էր բողոքում Համալսարանը այս բանի ընդդէմ։ Համալսարանի անդամներից մինը, Էդմօնտ Րիշէե շատ ուսումնական և խելացի մարդ, որ այն ժամանակը Համալսարանի Սէնտիկ էր, մի գիրք շարադրեց, որով ապացուցանումէր Յիսուսեանների քաղաքական տեսութեան բոլոր վնասը։ Յիսուսեանք իւրեանց սովորական կերպով դատապարտեցին նորան իբրև հերետիկոս, բայց այս օգուտ չ՚բերեց. Րիշէեի գիրքը մեծ տպաւորութիւն գործեց ժողովըրդի վերայ։

Այս ժամանակումը լուր ստացվեցաւ, թէ, Ուրբանոս VIII Պապը ոչնչացուցել է Սիկստոս Vի կոնդակը, որի զօրութեամբ մի և նոյն ժամանակում երկու եղբարք չէին կարող Կարդինալ լինել։ Համբաւ ևս տարածվեցաւ, թէ այդ բանը եղել է Կարդինալ Րիշէլեին հաճոյանալու համար, որ հովանաւոր էր Յիսուսեաններին։ Արդարև մի քանի ժամանակից յետոյ Պապը դրեց նախարարի եղբօր Ալֆօնս Դիւպլեսսու գլխին կարդինալական գլխարկը, որ մի և նոյն

ժամանակում անուանվեցաւ Լիոնի Արք Եպիսկոպոս։ Պապը, իբրև փոխարէն այն բարերարութեանը, որ արեց, պահանջումէր Նորընծայ Կարդինալից, որ հարկադրէ նա Րիշիեին հրաժարվիլ իւր գրքից և գրել նորա հակառակ, մի խօսքով հերքել իւր ասածները։ Րիշիե չլսեց խիստ Նախարարի եղբօր հրամանին, և հաստատ կերպով ջատագովումէր իւր կարծիքը։

Րիշիլիեն չէր սիրում ամենևին, որ հակառակվէին իւր խօսքին։ Նա արտաքին կերպով հաշտվեցաւ Րիշիեի հետ, և հրաւիրեց նորան ճաշ ուտելու իւր մօտ։ Ճաշից յետոյ առանձին մնալով Րիշիեի հետ, առաջարկեց մի քանի խնդիրներ, որ յարաբերումէին Պապական իշխանութեանը։ Երբ վարդապետը պարզ հոգով ասաց իւր կարծիքը, Կարդինալը գոռաց «Դուք այժմ պարտական էք հրաժարվիլ ձեր գրքից, կամ, այս րոպէիս մեռանել» մինչդեռ այս խօսքերը ասումէր նա, երկու մարդիկ, որ թագնված էին սենեակի մէջ, յարձակվեցան Րիշիեի վերայ և ուղղեցին երկու դանակ, մինը դէպ ի կուրծքը, միւսը դէպ ի թիկունքը։ Ողորմելի Րիշիե ճար չգտաւ, որ չստորագրէ արդէն պատրաստված իւր գրքի հերքումը [1]։

Յիսուսեանք այս ժամանակումը փոխեցին իւրեանց ներգործութեան կերպը, ինչ որ վերաբերումէր Ֆրանսիայի քաղաքական գործերի կարգին։ Հանճարեղ Րիշիլիեն զարմանալի ճարտարութենով աշխատումէր հասանել իւր նպատակին այս ինքն ջնջել կալուածական իշխանութեան մնացորդքը և զօրացնել թագաւորական իրաւունքը։ Հին ազնուական գերդաստանները հարկադրված էին խոնարհել խիստ Նախարարի կամքի առաջևը, որ և խորամանկութենով և ուժով գիտէր ոչնչացնել բոլոր խոչընդակութիւնքը։ Րիշիլիեի բռնաւորական բնաւորութիւնը և խորամանկութիւնը ըստ ամենայնի համաձայն էին Կարգի բնաւորութեանը։ Յիսուսեանք հասկացան, որ Կարդինալը իւր առաջին անգամ հակառակ ներգործութենովը, կարող էր ջնջել նորանց Ֆրանսիայի միջից. և Պապի հետ մօտ լինելով կարող էր վնասել և բոլոր հասարակութեանը։ Նոքա երբէք չէին ցանկանում ունենալ մի այսպիսի զարհուրելի թշնամի, վասն որոյ որոշեցին հնա-

---

1) Զարմանալի է, որ Պարոն Փափազեան, եկեղեցական պատմութեան պարզերես հեղինակը, իւր գրքի մէջ սև գոյնը կարմիր չէ ներկում կամ աւելի լաւ, չէ ոսկեզօծում, ինչպէս սովոր է, Յակոբ Կլեման թագաւորասպան աբեղայն Յութիտի հետ համեմատելով. երևի թէ լաւ իմանալով ներկելի բանի և իւր ներկի քիմիական որակութիւնքը և նոցա փոխադարձ հակադրութիւնքը խելք է գործ դրել և չէ փորձել իւր կարասը, որ մի գուցէ սաստիկ սև լինելով կարմիր չներկվի, այլ գորա հակառակ հրաշափառ խայտառակ գոյն։ «Յետինն չար քան զառաջինն»։

ղանդ լինել նորան և ծառայել նորան, որ նորա ձեռքով կարողանան օգուտ քաղել, և առաջին ներգործողը դառնալ յետոյ Ֆրանսիայի մէջ։ Ես աւելորդ եմ համարում նկարագրել Յիսուսեան աբեղաների անքուն և անձանձիր ներգործութիւնքը Հուգենօտները հալածելու, Լարօշելը առնելու, Ֆրանսիայի ազնուականների ապստամբութիւնը շիջուցանելու ժամանակներումը. այս բոլոր երևելի դիպուածների մէջ նշանաւոր էր հանճարեղ Բիշլիէն։ Ես ցոյց կը տամ միայն նոցա այն ներգործութիւնը, որ ունեցան (այսպէս անուանուած) Աստուածաբանական — քաղաքական խնդիրի մէջ, որ այնքան երկար ժամանակ զբաղեցուցել էր, ո՛չ թէ միայն Ֆրանսիան այլ և բոլոր Եւրոպան։ Ես յիշումեմ Յանսէնեանների հալածման ժամանակը։

Ա՛նհասկանալի կը թուի. թէ ինչո՞ւ համար ըստ երևութին այնքան աննշան գիրքը «Օգոստինոս» անունով, որ գրեց Կունէլիոս Յանսէնը, և դորանով ինքը Յանսէնականութիւնը կարողացաւ տեղ գտանել այն ժամանակվայ Եւրոպացի ուսումնականների սրտի մէջ, կարողացաւ իւր կողմը շրջել ջերմեռանդ կուսակիցներ, և ընկնել պարհուրելի հալածանքի տակ։ Յիսուսեան աբեղաների խորամանկ քաղաքականութեան մէջ պարունակվումէ դորա պատճառը։

Այս միջոցներում Յիսուսեան կարգը հասաւ վերին աստիճանի կարողութեան. նորա անդամքը տարածված էին աշխարհի ամենայն կողմը, հարստութեանը չափ չկար։ Մի միայն Պարագվայն իւրաքանչիւր տարի բերումէր աւելի քան թէ քսան միլլիոն տալլեր եկամուտ. համարեա թէ սորա կէսի չափ բերումէին Հնդկաստանի և Չինաստանի գործակալութիւնքը։ Այն արդիւնքները, որ ստանումէին Եւրոպայում գտնված դպրոցներից և մասնաւոր մարդերի նուիրագործութեննից, անհաւատալի մեծ էին։ Այսպիսի հնարներով Յիսուսեանք կարո՛ղ էին ամենայն բանի ձեռք տալ. նոցա հարկաւոր էր միայն մի պատճառ, որ բոլորովին ջնջէին իւրեանց հակառակորդքը։ Յանսէնի գիրը ինքն ըստ ինքեան այնքան անմեղ կարողացաւ լինել ահա՛ այս ցանկացած պատճառը։

Յանսէն եպիսկոպոս էր Հօլլանդայի Իպր քաղաքի։ Հռչակաւոր լինելով իւր գիտութեննովը, բարեպաշտութեննովը և խիստ բարոյականութեննովը չկարողացաւ հաճոյ գտանվիլ Յիսուսեաններին, որոնք մի և նոյն ժամանակում չունէին այս մարդավայել յատկութիւնքը։ Նո՛քա Յանսէնը ատումէին մանաւանդ այն պատճառով, որ նա գրել էր մի գիրք ինչպէս յիշեցի այս անունով «Augustinus, seu doctri-«na de humanæ Naturæ sanitate, ægritudine, medicina, adversus «Pelagianos et Morsilienses», որի մէջ նա յարձակվումէ Մօլինականների վարդապետութեան վերայ. այսինքն Մօլինի Յիսուսեանի հե-

տեղների վերայ, որ դատողութիւն էր գրել» Աստուծոյ բարութեան մասին, վերաբերեալ դէպ ի մարդկային ազատութիւնը»: Մահը ազատեց Յանսէնը Յիսուսեաններից. բայց մի՛թէ մի բան կ՚ազատվէր Յիսուսեանների ձեռքից. Նոքա հրաման հանել տուեցին Հռովմի մէջ, որով արգելք դրվեցաւ այս գրքի վերայ: Րիշիլիե կարդինալը, որ ատումէր Յանսէնին այն պատճառով, որ վերջինս նորա գործերի ընթացքը անուանել էր Մաքիավելական և դատապարտել էր նորան իւր շարադրութիւններից մինի մէջ, հրամայեց դահճի ձեռքով այրել Օգոստինոսի մասին գրած գիրը և սկսեց պաշտպան լինել Յիսուսեաններին: Րիշլիեի մահից յետոյ, Յիսուսեանների գործի ընթացքը դէպ ի Մազարինի կարդինալը մնաց միօրինակ, ինչպէս էր դէպ ի Րիշլիեն. պատճառ որ, սա ինքը ևս իւր թշնամիքը հալածելու համար գործ էր դնում Յանսէնի գիրը իբրև առիթ. ուրեմն բնականաբար պիտոյ է բարեյաջող լինէր նա Յիսուսեաններին:

Երբ Հայր Լաշէզ Թագաւորի խոստովանահօր տեղը կարգվեցաւ Լետիլիե Յիսուսեանը, ֆօնտնել փիլիսոփայն ասաց. «Յանսէնեանք մեղանչեցին» և ճշմարիտ որ Յիսուսեանք, ինչպէս ինքեանք ասումէին, հարկադրեցին Յանսէնեաններին խմել մինչև տակը Յիսուսեան կարգի դառնութեան բաժակը: Այս ևս հարկաւոր է իմանալ, որ Յանսէնական էին անուանվում նոքա բոլորը, որ ընդունումէին մաքրեալ հաւատալիքը. հերքելով այն ամենայն, ինչ որ Պապերը իւրեանց անձնական օգտի համար աւելացրել էին: Յանսէնեանների մէջ կային այն ժամանակվայ խելացի և բանագէտ մարդիկ. յառաջադէմ հոգևորականք, երևելի աստուածաբանք և քարոզիչք, որոնցով այն միջոցին լցուած էր Ֆրանսիայն: Յանսէնեանների բնակութեան կենդրոնը էր Port-royal (Արքայական դուռն) անուանված վանքը:

Լետելլիեի առաջին քաջագործութիւնը եղաւ Արքայական դուռնը քանդելը. որի քարը, չ՚թողվեցաւ քարի վերայ, մինչև անգամ մեռած Յանսէնեանների մարմինքը հանվեցան գերեզմաններից և ձգվեցան խորխորատների մէջ: Այս խիստ ու կոշտ վարմունքը, շարժեց Ֆրանսիացոց ատելութիւնը դէպ ի Յիսուսեան աբեղայքը. որ ոչինչ ժամանակ չէր հասած այս աստիճանի սաստկութեան ինչպէս այս դիպուածումը: Նոքա ինքեանք Եւրոպայի ամենայն աշխարհներից հալածվելուց յետոյ, խոստովանեցան, թէ ճնշումն իւրեանց Արքայական դուռնի քարերը:

Բայց այս դեռ ևս հերիք չէր Յիսուսեանների համար: Շուտով բացվեցաւ նոցա առաջ, իւրեանց թշնամիները հալածելու համար, մի նոր հնար. դուրս եկաւ Քեննելի գիրը (Quesnel), որ գրված էր ֆրանսիարէն և անուանվումէր «Reflexions morales sur le Nouveau Te-

stament». այս գիրը պարունակումէ իւր մէջ հարիւր մի կանոն, մեծ մասամբ դուրս բերած Օգոստինոսի և այլ եկեղեցական հարց գրուածներից. ուրեմն, բաւական նման բան է Յանսէնեանների վարդապետութեանը: Այս գիրքը Ֆրանսիայի և Եւրոպայի մէջ ընդունվեցաւ մեծ սիրով. Ֆրանսիացոց հոգևորականներից լաւ մարդիկը, ինքը Բօսիւէ, բարեկամ էին Քենելի հետ:

Անկարելի էր համարձակաբար զինուորվել այս գրքի ընդդէմ և դատապարտել նորան, որ առ հասարակ Յիսուսեանների սովորութիւնն էր. վասն որոյ ձեռք առին նոքա իւրեանց խորամանկութիւնը, որ խաբեն և Պապը և Լուդովիկոս XIVը: Նոքա հաւատացուցին Կլեմենտ XIին, թէ Ֆրանսիայի Թագաւորը ամենևին ատումէ այս գիրը. և շատ շնորհակալ կը լինէր Պապից, եթէ դատապարտէր Պապը այս գիրքը: Կլեմենտ XIը կարդալով այս գրքի Լատիներէն թարգմանութիւնը, որ եղած էր Յիսուսեանների ձեռքով, ուրեմն կարդալով միանգամայն աղճատած օրինակը, հրամայեց գրել դատապարտութեան կոնդակ, որ պատմութեան մէջ յայտնի է անունով «Unigenitus» Յիսուսեանք այս կոնդակի հեղինակքը, փախչելով հեռատեսութեամբ ապագայ վէճերից և հերքողական փաստերից չկամեցան դատապարտել Քենելի գրքի իւրաքանչիւր կանոնները առանձին առանձին. ահագին ներածութենից յետոյ, հասարակաբար Պապի իշխանութեան և հերետիկոսութեան վերայ, նոքա վերջումը զետեղեցին քսան չորս անարգական ըստ մեծի մասին նոյնանշան խօսքեր 1), որոնցով դատապարտվումէին Քենելի գրքի հարիւր մի կանոնքը. — respective et in globo: Դժուար չէր հաւատացնել և Լուդովիկոս XIVին թէ Պապը, շատ ցանկանումէր, որ Թագաւորը ընդունէր այս կոնդակը, և թէ Քենելը հետևող էր Յանսէնի աղանդին: Ֆրանսիացոց եպիսկոպոսները պահանջեցին, որ Պապը բացայայտէ, թէ Քենելի գրքի կանոններից, որը՞ հերետիկոսական է, որը՞ աստուածուրացական, որը՞ բարեպաշտ ականջի համար լսելու անպատեհ. Պապը պատասխանեց, թէ նորա կոնդակը բացայայտ է և պարզ, և թէ ինքը չէ կարող սխալվել 2): Քանի եպիսկոպոսունք յանցաւոր համարվեցան որպէս Յանսէնականք, բայց քաջութեամբ ընդդէմ կանգնեցան. և երբ հարկադրվելով բռնութենից ընդունումէին կոնդակը, բողոքեցին դէպ ի

1) Զոր օրինակ. հերետիկոսական, սխալական, աստուածուրացական և այլն և այլն:

2) Պապերը անսխալ և անմեղանչական են այս հիման վերայ, թէ մարդս սխալական է և մեղանչական, իսկ Պապը մարդ է, մի միայն անսխալելի և անմեղանչական Աստուծոյ ձեռագործ. ուրեմն Պապը մարդ լինելով անսխալ է և անմեղանչական: Հրաշալի՛ Լօգիկա:

մի գալոց ժողովք, որ և մինչև այժմ չէ եղած և երևի թէ և չէ լինելու այսուհետև ևս։

Քէննելը բանդ դրվեցաւ, նորա բոլոր կայքը գրվեցան գրաւեցան, այն գումարը, որ բարեկամները նուիրումէին նորան, գործ էր դրվում նորա պաշտպանները և բանդապետները կերակրելու համար։ Նոքա բոլորը, որ համարձակվումէին գրել կամ հրապարակով խօսել «Unigenitus» կոնդակի հակառակ, մինչև անգամ շատերը Պարլամենտի անդամներից Յիսուսեանների սովորական կանոնով արտաքսվեցան եկեղեցուց և զրկվեցան սուրբ խորհրդի հաղորդութենից։ Յիսուսեանք համոզումէին Պապին, որ նա այս կոնդակը հրատարակէ իբրև պապական եկեղեցւոյ հիմնաւոր հաւատալիք. հակառակութեան բոցը բարձրացաւ. Ֆրանսիացոց հոգևորները և Պարլամենտը չէին կամենում ընդունել Unigenitus կոնդակը իբրև հիմնաւոր հաւատալիք պապական եկեղեցու և Յիսուսեանք դիմէին դէպ ի Թագաւորի միջնորդութիւնը։

Լուդովիկոս XIVը ծերութեան ժամանակումը գտանվումէր իւր խոստովանահօր և այլ Պալատական Յիսուսեանների անսահման իշխանութեան տակ. Հ. Լետիլիե այնպիսի ճարտարութենով կարողացաւ ներգործել այս Թագաւորի վերայ, մեծացուցած և հակառակ կերպով նկարագրելով նորա առաջև երիտասարդութեան ժամանակ գործած մեղքերը, որ Լուդովիկոսը բոլորովին անձնատուր եղաւ նորան. և այս սրբակաց ծերութեան ժամանակ ո՛չ ոք չէր կարող ճանաչել երբեմն մեծ Թագաւորը։

Լուդովիկոսի առաջվայ սիրելի Փարիզի Արք Եպիսկոպոս կարդինալ դը Նոյալը, զրկվեցաւ իւր արժանաւորութենից և սովամահ եղաւ միմիայն այն պատճառով, որ բռնել էր Քէննելի կողմը։ Լուդովիկոսը մեռանելու ժամանակ միտքը բերեց նորան, և յայտնեց, որ ցանկանումէ տեսանել. բայց Հ. Լետիլիե հակառակվեց այս ցանկութեանը և ասաց Թագաւորին. «եթէ կարդինալը այս րոպէիս երևի Պալատի մէջ, ամենքեան կը մտածեն, թէ Ձեր մեծութիւնը գերեզմանի դուռնի մօտ, զղջումէիք, որ այնպէս վարվեցաք նորա հետ և կ՚արդարացնէք նորա անձը» — բայց ես չունիմ ոչինչ ատելութիւն դէպ ի նա, պատասխանեց Լուդովիկոսը. ես միշտ սիրել եմ նորան։ Եթէ չէ կարելի, որ նա գայ ինձ մեռանողիս մօտ, թող իմ ատենադպիրը գրէ նորան մի նամակ, և ինչքան կարելի է քաղցր ոճով։ Կնճռադէմ քարոզիչը թելադրեց գրողին փոխանակ քաղցր խօսքերի այնպիսի բառեր, որոնցից թափումէր լեղի և արհամարհութիւն։

Լետիլիե քանի անգամ տուեց մեռանող Թագաւորին, ստորագ-

րել այն թուղթը, որ հարկ էր դնում Թագաւորական ժառանգի վերայ ընդունել Ֆրանսիայի մէջ Uneginitus կոնդակը իբրև հիմնաւոր հաստատելիք. բայց Լուդովիկոսը պատասխանումէր «դուք գիտէք, որ «ես այս բանի մասին բացայայտ տեղեկութիւն չունիմ, ես միանգա«մայն ձեր խղճմտանքի վերայ յուսացի և ներգործեցի այնպէս, ինչ«պէս դուք կամեցաք։ Ինձ չ՚յաջողեցաւ խաղաղութիւն տնկել ձեր «և իմ ժողովուրդի մէջ։ Մեռանելով ահա, աղաչումեմ Աստուած, «որ իմ յաջորդքը ինձանից բաղդաւոր լինին այս բանի մէջ. ահա «ինչ որ ես կարող իմ անել այժմ։ Եթէ դուք խաբեցիք ինձ, ոչ «ես, այլ դուք պիտոյ է պատասխան տաք Աստուծոյ առաջևը. Նա գի«տէ, որ ես բարի ցանկանումէի Հռովմէական եկեղեցուն և Ֆրան«սիային։

Ինչ ժամանակ Լուդովիկոս XIVը յաւիտեան փակեց իւր աչքերը, Լետիլիե առեց խաչը և դրեց Թագաւորի ձեռքը։ Այն ժամանակ Յիսուսեանք անընդհատ կարգով մօտենումէին հանգուցեալի մահճին և բարձր ձայնով աղօթելով համբուրումէին նորան։ Այսպիսի հանդէս չէր տեսնված ամենևին Պալատի մէջ։ Մեծ Թագաւոր Լուդովիկոս XIVը մեռաւ Յիսուսեան դարձած.... 1)։ Այս կերպով Ֆրանսիայի համար Յիսուսեանների խռովարարութեան պտուղը այն եղաւ, որ նորա երևելի Թագաւորներից մինը, իւր կեանքի վերջին օրերումը, ոչ թէ միայն օտարացաւ ժողովրդից, այլ և ատելի դարձաւ նորան։ Լուդովիկոսը սկսած այն պատերազմից, որ արեց Սպանիայի ժառանգութեան համար օրէ օր կորցրեց իւր հոգու զօրութիւնը, իւր իշխանութեան մի մասը յանձնեց Լետիլիեին, վերջապէս Յիսուսեան կարգի հոգին ծերացած Թագաւորի կեանքի վերջերումը տիրապետեց բոլոր Ֆրանսիային։ Այս բանից հասկացվումէ, թէ Թագաւորական իշխանութեան մեծաշուք գաղափարը, որ փառաւորապէս իրագործել էր Լուդովիկոսը, ինչու համար այդպէս շուտով կորուց իւր կախարդական ոյժը Ֆրանսիացոց համար.....

Յիսուսեանների յանցաւոր գործերի տարեգրութեան մէջ, նշանաւոր է մանաւանդ այն գործը, որ պատահեցաւ Տուլոնի Թագաւորական սերմնարանի կառավարիչ Ժիրար անունով Յիսուսեանի և օրիորդ Լա-Կադիերի մէջ։ Ցանցանքը յայտնագործվեցաւ, Ժիրարը դատապարտված էր. բայց հարստութիւնը և Յիսուսեանների ներգործութիւնքը փրկեցին նորան։ Է քաղաքի Պարլամենտը, ուր տարվել էր գործը, փոխանակ Ժիրարը դէպ ի մահ դատապարտելու վճռեց աքսորել նորան այն նահանգից, ուր պատահել էր գործողութիւնը.

1) Memoires du duc de Saint-Simon.

Զարմանալին այս է, որ այսպիսի վճիռը հաստատվեցաւ երկու ձայնի առաւելութեամբ, ընդդէմ միւս անդամներին, որոնց մի կէսը դատապարտումէր Ժիրարը դէպ ի կրակ, իսկ միւս կէսը դէպ ի հասարակ մահ։ Պարլամենտը մի և նոյն ժամանակ արդարացուց և Լա-կատիեր օրիորդը, չնայելով Յիսուսեանների հետևողութեանը, որ կամենումէին դատապարտել նորան որպէս զրպարտող։

Այն մասնակցութիւնը, որ ամբողջ Ֆրանսիայն ունեցաւ այս անբաղդ աղջկայ գործի մէջ, ցոյց էր տալիս, թէ ի՛նչ աստիճանի էր հասած ազգի ատելութիւնը դէպ ի Յիսուսեան աբեղայքը։ Լա-կատիեր, իւր յօժարութենովը մտաւ կուսանաց վանքը, ուր և շուտով վախճանեցաւ. երկու տարուց յետոյ մեռաւ և Ժիրարը Լիօն քաղաքում։ Յիսուսեանք փառաւորումէին նորա անունը, իբրև զրպարտված մարդու անուն, և վերագրումէին նորան զանազան հրաշագործութիւնք. մինչև անգամ համոզումէին Պապին ընդունել նորան սուրբերի կարգը։

Օրլէանեան Դուքսը իւր գործակատարութեան սկզբումը շատ չէր սիրում Յիսուսեան աբեղայքը. Հայր Լետիլեն և այլ Պալատական Յիսուսեանները շուտով հեռացվեցան. բովանդակ Ֆրանսիայն ուրախութեամբ լսեց ատելի խոստովանահօր հալածվելու լուրը, որ բռնութեան հետ մակարդած վերին աստիճանի խորամանկութենով, և առևտուրով, որ ունէր Հռովմի և Ֆրանսիայի Արքունեաց հետ, ներգործումէր ո՛չ միայն Ֆրանսիայի վերայ, այլ և ամբողջ Եւրոպայի վերայ։ Այն աստիճանի սաստիկ էր ժողովրդի ատելութիւնը դէպ ի նա, որ Բուրժի Արք Եպիսկոպոսը, որի վիճակի մէջ կամենումէր բնակվիլ Լետիլեն, յայտնեց թէ չէ կարող երաշխաւոր լինել նախկին Արքունի խոստովանահօր կեանքի ապահովութեանը, որի ընդդէմ պատրաստ էր ժողովուրդը գործ դնել ամենայն կերպ բռնութիւն։ Կարդինալ դը Նոյալը դարձեալ երևեցաւ Պալատի մէջ, և ստացաւ իւր առաջվայ ոյժը։ Համալսարանին յետ դարձվեցան այն արտօնութիւնքը, որ Յիսուսեանների օգտի համար խլվելէին նորանից։ Բաստիլեայում փակած արգելած Յանսէնեանքը ազատութիւն ստացան։

Յիսուսեանք չէին յուսահատվում. նոքա նորընծայ չէին քաղաքագիտութեան մէջ. նոքա գիտէին, թէ ի՛նչ է նշանակում թագաւորութեան մէջ զինուորական ոյժը, այս պատճառով ևս դիմեցին դէպ ի զօրքերի գունդը։ Խոստովանութեան միջնորդութենով, կարողացան նոքա իւրեանց կողմը շրջել զինուորները, հաւատացուցին նորանց, թէ հաւատը կորչումէ, և թէ մեծ ասպարէզ կայ նոցա առաջևը. այսինքն, պահպանել հաւատը Ֆրանսիայի մէջ։ Նոքա մինչև անգամ հասարակութիւն հիմնեցին զինուորների մէջ, որ անուան-

վում էր «Մարիամի սուրբ սրտի Հասարակութիւն» (Compagnie du saint coeur de Marie). Քանի մի գունդ խնդիր տուեցին, որ Տէրութիւնը ընդունէ այս Հասարակութիւնը օրինաւոր. քանի մի նահանգներում զինուորների մէջ ծագեցան թշնամական շարժողութիւնք այն ժամանակվայ բաների կարգին ընդդէմ: Զուր տեղը Կարդինալ Դը Նոյալը և ուրիշ հոգևորական մեծ աստիճանաւորքը աշխատեցան սահմանափակել Յիսուսեան խոստովանահայրց ներգործութիւնքը, զուր տեղը բողոքումէին դէպ ի Կլեմենտ XIը, որ գալոց ժողովքը հրաւիրվի:

Օրլէանեան Դուքսը ոչինչ հաւատ չէր պաշտում: Նա միօրինակ ծիծաղումէր և Յանսենեանների վերայ, և Յիսուսեանների վերայ, և Պապի վերայ: Երբ հանդիսաւոր օրերում նա իւր մերձաւոր մարդերով, որ բաժանորդ էին նորա կարծիքներին եկեղեցի էր գնում, ժողովուրդը յայտնի յայտնի քրթմնջումէր նորա մասին. և շատ անգամ աղաղակով վերաւորումէր նորան: Չնայելով իւր փայլուն շնորհքների վերայ, Դուքսը փոքր առ փոքր կորուսանումէր իւր նախկին աշխոյժը. հեշտախտ կեանքը քամեց նորան. գիշերային թատրոնական խաղարկութիւնքը պալատի մէջ, որին մասնակից էին Փարիզի հռչակաւոր տիկինները, որոնց մէջ գտանվումէր այն ժամանակվայ երևելի գեղեցիկներից Բերրիեան Դքսուհին, խլումէին Օրլէան-Դուքսի բոլոր ժամանակը: Երբ նա հարկադրված էր պարապիլ Տէրութենական գործերով, խմումէր քանի մի բաժակ Շամպայնեան գինի, որ արծարծէ իւր անզօրացած կարողութիւնը: Վերջապէս Աբբայ Դիւբուայն միանգամայն ձեռք առեց Տէրութեան կառավարութիւնը: Այս Աբբայն երբեմն սպասաւոր էր Սէն-Լօրանս անունով Օրլէանեան Դուքսի դաստիարակի մօտ. շուտով զարթեցան Դուքսի մէջ ախտերը, և Աբբայն այս կերպով կարողացաւ շահիլ նորա հաւատարմութիւնը, և սիրելի մնաց նորան մինչև մահը: Դիւբուա առաջին նախարար լինելուց յետոյ, աշխատումէր ստանալ Կարդինալական գլխարկը. վասն որոյ ամենայն կերպ ջանանումէր օգնել Պապին և Յիսուսեաններին, թէպէտ և ինքը ոչինչ հաւատ չէր պաշտում:

Պարլամենտը, որ չէր կամենում օրագրի մէջ արձանագրել Օրլէանեան Դուքսի հրովարտակը Unigenitus կոնդակը Ֆրանսիայի մէջ իբրև կրօնական հաւատալիք ընդունելու մասին, նախարարի հրամանովը մեծ անպատվութեամբ աքսորվեցաւ Փարիզից և գնաց հեռացաւ Պօնդուազ: Այս քաղաքի մէջ 1720 թուականին մարտի 4 օրումը Պարլամենտի անդամքը ընդունեցին Unigenitus կոնդակը իբրև կրօնական հաւատալիք, վասն որոյ վերադարձան աքսորանքից: Դիւբուա ստացաւ Կարդինալութիւնը. Յիսուսեանք հանդիսացան յաղթական:

Շուտով սորանից յետոյ Լուդովիկոս XVը ձեռք առեց Ֆրանսիայի

կառավարութիւնը. ժողովուրդը զայրացած էր սաստիկ Յիսուսեաններին վերայ: Շատերը մեռանումէին առանց հաղորդութեան, բայց չէին ընդունում Unigenitus կոնդակը իբրև կրօնական հաւատալիք: Յանսենեանք համարվումէին մարտիրոսք, և նոցա վերագրվումէին զանազան հրաշագործութիւնք:

Այն ժամանակ Յանսենեանների մէջ, հռչակվեցաւ մանաւանդ մի մարդ Ֆրանսիսկոս Պարի անունով, որ ծագումէր մի ազնուական ազգատոհմից. սա վաճառեց իւր ունեցած կայքը, արծաթը բաժանեց աղքատներին, իսկ ինքը ապրումէր ողորմութենով: Այսպիսի դրութեան մէջ ապրեցաւ նա 1722 թուականից մինչև 1727 թուականը. վերջապէս բոլորովին հրաժարվեցաւ աշխարհքից և առանձնանալով մի այրի մէջ սովամահ մեռաւ: Այսպիսի անսովոր դիպուածը XVIII-երրորդ անհաւատ դարումը պիտոյ է, որ տպաւորութիւն գործէր հասարակ ժողովրդի վերայ: Այո՛. երբ Պարիի մահուան լուրը տարածվեցաւ մայրաքաղաքի մէջ, ամենայն ոք վազումէր դէպ ի այրը, ուր բնակվումէր Պարին, կտրատումէին մեռածի շորերը և իբրև մի սուրբ նշխար պահումէին իւրեանց մօտ: Նորան մեծ հանդէսով թաղեցին հասարակաց ծախսով. ժողովուրդը ամենայն օր գումարվումէր նորա գերեզմանի վերայ. որպէս թէ նորանով գործված զանազան հրաշքների պատմութիւն էին լինում: Ի հարկէ թագաւորական Պալատը և հասարակութեան վերին կարգը ծիծաղումէին այս բանի վերայ. բայց հոգևորականք, մանաւանդ Կարդինալ—դը Նոյալը ջատագով էին նորան: Նոքա ինքեանք տարածումէին այսպիսի լուրեր և պաշտպանումէին, ուրիշից դուրս եկածները, որպէս զի առաւել ևս զայրացնէն ժողովուրդը Յիսուսեաններին ընդդէմ:

Բայց ցաւը այս էր, որ Կարդինալ դը Նոյալը շուտով վախճանեցաւ խոր ծերութեան մէջ. նորա փոխանակ Յիսուսեանների խորամանկութենով Փարիզի Արք Եպիսկոպոս նշանակվեցաւ Քրիստափոր դը Բոմոն անունով անուսումն և անկիրթ, բայց խիստ և կամակոր մարդը, որ մի քայլ ևս չէր փոխում առանց Յիսուսեանների կամքին: Այս մարդը սարսափելի հալածանք հանեց Յանսենեանների վերայ, արգելեց վերջին թոշակը եթէ մեռանողը դեռ կենդանութեան ժամանակ չէր ընդունել Unigenitus կոնդակը իբրև կրօնական հաւատալիք: Ժողովրդի վրդովումը սաստկանումէր. ապստամբութիւնը պատրաստ էր ահա վառվիլ Փարիզի մէջ: Լուդովիկոս XVը կամելով փակել այս ապստամբութեան առաջը համաձայնեցաւ Պարլամենտի անդադար առաջարկութեանը, և որոշեց հրատարակել. թէ, ա) «Թէպէտ և Unigenitus կոնդակը Ֆրանսիայի թագաւորած Հռովմէական դաւանութեան մէջ կրօնական հաւատալիք չէ, սակայն, պիտոյ է նո-

րան հնազանդվիլ»։ բ) «Հոգևոր և մարմնաւոր դատարանները պարտական են չարագործութիւն ճանաչել, հոգևոր աստիճանաւորների վերջին Թոշակից այն մարդիկը զրկելը, որ Unigenitus կոնդակը չէին ընդունած իբրև կրօնական հաւատալիք»։ գ) «Մինչև այժմ այս կոնդակի մասին եղած վէճերը և խօսակցութիւնքը տրվումեն մոռացութեան»։

Այս Թագաւորական հրովարտակը տարակոյս չ'կար, որ պիտոյ է զայրացնէր Յիսուսեանները. արդարև, նոցա ատելութեան հետևանքը շուտով դուրս երևեցան։ 1757 Թուականի յունուարի 5ի երեկոյեան ժամը վեցին Լուդովիկոս XVը կառք նստաւ, որ գնայ Տրիանօն. յանկարծ սաստիկ զարկ զգաց կողկումը և գանչեց «On m'a donné un furieux coup de poing». յետոյ արիւն տեսանելով ձեռքի վերայ բոլորովին գունաթափեցաւ և ասելով «ես վիրաւորված եմ» ցնցվեցաւ երկիւղէցը, թէպէտ և վէրքը անվտանգ էր միանգամայն։

Այս միջոցին ամենայն աչք դարձաւ այն մարդի վերայ, որ կանգնած էր Թագաւորի մօտ առանց գլխարկը հանելու։ Զինուորքը յափշտակեցին այս մարդը և գտան նորա գրպանի մէջ երկու երկսայրի դանակներ մինը մեծ, միւսը փոքր գմելինի նման. փոքր դանակովն էր նա վիրաւորել, այս պատճառով անվտանգ էր դրած վէրքը։ Այս մարդը անուանվումէր Րոբեր-Ֆրանսիսկոս Դամիեն, որ ծառայումէր Յիսուսեան կօլլէգիումի մէջ իբրև աշխարհական ծուռվող. սա մի շատ անկիրթ մարդ էր, և քաղաքական գործերը ամենևին օտար էին սորան, վասն որոյ երբէք չէր կարելի մտածել, որ իւր սեպհական կամքովը որոշած գործել էր այս յանցանքը. խելագարութիւն ևս չ'նկատվեցաւ նորանում։ Հասարակաց ձայնը դատապարտումէր Յիսուսեանքը. ասումէին, թէ Դամիենը ներգործել է նոցա թելադրութենովը, և ճշմարիտ կային մի քանի բաներ, որ արդարացնումէին այս կարծիքը։

Ինչ ժամանակ կառքը բերեցին Թագաւորին, որ նստի, մի Յիսուսեան աբեղայ մօտեցաւ Դամիենին և մի քանի խօսք ասելով, հեռացաւ նորանից։ Բայց այս բանը դեռ հաստատ ապացոյց չէր. պատճառ, Դամիենը ծառայումէր Յիսուսեան կօլլէգիումի մէջ, և կարող էր պատահել, որ մի ծանօթ կրօնաւոր պատահաբար մօտենար նորան։ Բայց բանը այս էր, որ Դամիենը իւր պատասխանների մէջ գործ էր ածում. «մեք» բառը, և երբ հարցնումէին, թէ ունէ՞ր արդեօք խորհրդակիցք, նա միշտ պատասխանումէր. «եթէ ունիմ ես բայց նոքա այս տեղ չեն»։ Պարլամենտը կամելով վերահասու լինել ճշմարտութեանը, սաստիկ չարչարանքների մատնեց նորան. տաքացրած ագցաններով բոկումէին նորա մարմինը, և տաք իւղ էին լցնում

բացված վէրքերի վերայ, հանումէին եղունգները և այլն և այլն։ Ոչինչ բան չ՚կարողացաւ ներգործել նորա վերայ, նա, չ՚տուեց իւր խորհրդակիցների անունը։ Թղթեր ևս չէր կարելի գտանել նորա մօտ, ըստ որում Ցիսուսեանք իւրեանց կանոնի զօրութենով, չէին կարող ծածուկ խորհրդակցութիւններ գրի միջնորդութենով ունենալ, մինչև անգամ և Տէրութեանց հետ։ Նոքա խոստմունք էին տալիս ինքեանք, իսկ ուրիշից առնումէին գրաւոր ստորագրութիւն։ Ամենայն այս տեսակ գրագրութիւնը արգելված էին և փոխանակ նամակի, անդամներից մինը թռչումէր դէպ ի հարկ տեղը, թէ և հինգ հարիւր Լիօի ճանապարհ լինէր այն 1)։

Այս պատճառների համար չէր կարելի վաւերական կերպով ցոյց տալ Ցիսուսեանների գործակցութիւնը Դամիենի հետ. բայց ամբողջ Ֆրանսիայն չ՚նայելով այս բաների վերայ վճռողական կերպով դատապարտումէր Ցիսուսեանները, որպէս մասնակից Դամիենի չարագործութեանը, ինքը նախարար Շուազեօլը ըստ ամենայնի հակառակ էր Ցիսուսեաններին։ Նա .քանի անգամ առաջարկեց թագաւորին ջընջել այս կարգը Ֆրանսիայի միջից։ Շուազեօլը երկիւղ կրելով Ցիսուսեաններից, որոնք վերագրումէին նորան ամենայն տեսակ չարագործութիւններ, մինչև անգամ Լուդովիկոս XVIի հօր, Դոֆինի, դեղամահ սպանութիւնը, աշխատումէր առաջին յաջող դիպուածումը, գլուխ բերել իւր մտքի դրածը այս կարգի մասին, որ և շուտով յաջողեցաւ նորան տեսանել։

Լավալլետ անունով Ցիսուսեանը, որ վաճառականութիւն էր առնում Ամերիկայի մէջ, սնանկանալով, պարտական մնաց Մարսելիայի վաճառական Հուֆրին և Լէօնսի ազգանունով եղբարցը մի միլիոն հինգ հարիւր երկու հազար ֆրանկ։ Ցիսուսեանք պահանջեցին, որ գործը դատվի Փարիզի Պարլամենտի մէջ. յուսալով Պալատի հետ ունեցած կապակցութեններովը իւրեանց կողմը շրջել դատաստանի ձայնը, բայց սխալեցան։

Շուազեօլը այս անգամ միացաւ Պարլամենտի հետ և մայիսի 8ին 1761 թուականին հաստատվեցաւ այն վճիռը, որի զօրութենով Ցիսուսեան կարգը պարտաւորվումէր վճարել Լավալետի պարտքը և թէ հակառակ այս վճռին կարգը չ՚կամենար վճարել, այն ժամանակ կարգի կալուածքը Ֆրանսիայի մէջ, պիտոյ է խլվէին պարտքի դէմ։ Բայց Ցիսուսեանք պատասխանեցին, թէ Հ. Լավալլետը գլխաւոր իշխան լինելով այն Ցիսուսեան ընկերութեանը, որ Մարտինի-

1) Histoire des reflexions morales, p. 531.

կայումը էր, Հասարակութեան կանոնների զօրութենով կարող էր ունենալ այսպիսի առևտրական գործեր, կալուածներ ստանալ, կամ կորուսանել նորանց առանց գեներալի հրամանին, ուրեմն ոչ թէ ամբողջ կարգը, այլ վերևումը յիշած նորա մի մասնը պարտաւոր է վճարել Լավալլետի պարտքը։ Պարլամենտը հրամայեց Յիսուսեաններին ներկայացնել կարգի կանոնադրութիւնը ինքեան Պարլամենտին, երեք օր ժամանակ տալով։ Յիսուսեանք երկիւղ կրելով, թէ մի գուցէ այս կանոնների վերատեսութիւնը մի վատ հետևանք ունենայ, իւրեանց որոմնացանութենովը Պալատի մէջ, կարողացան այնպէս առնել, որ Թագաւորը Հրովարտակ տուեց Պարլամենտին ինքեան Թագաւորին մատուցանել կարգի կանոնադրութիւնքը վերահասութեան համար։ Պարլամենտը հնազանդվելով Թագաւորի հրամանին, ներկայացրեց կանոնադրութիւնը Թագաւորին. մի և նոյն ժամանակումը վճռեց, որ կարգը, նոյն կարգադրութենից երկրորդ պատճենը երեք օր ժամանակից յետոյ մատուցանէ Պարլամենտին։

Նոյն տարվայ օգոստոսի 6ին հաստատվեցաւ Պարլամենտի վճիռը, որի զօրութենով Յիսուսեանների քսան չորս Աստուածաբանական գրուածքը դահճի ձեռքով կրակի դատապարտվեցան. իսկ ինքեանք Յիսուսեանք զրկվեցան Ֆրանսիայի մէջ ամենայն արտօնութենից, որ ունէին մինչև այն ժամանակ։ Լուդովիկոս XVը, չէր իմանում, որ կողմը բռնի. մի կողմից խոստովանահայրը ներգործումէր, միւս կողմից Նախարար Շուազէօլը։ Վերջապէս իւր Հռովմի մէջ ունեցած դեսպանի ձեռքով խօսակցութիւն բացեց կարգի գեներալի հետ, այսինքն Լաուրենտ Րիկչիի հետ Յիսուսեան կարգի կանոնադրութիւնների փոփոխութեան մասին Ֆրանսիայի մէջ։ Րիկչի, որ այն միջոցին փոխանակ անզօր Կլեմենտ XIIIին կառավարումէր բոլոր պապական աշխարհը, պատասխանեց. Sint ut sunt non sint. (այսինքն «Թող լինի այնպէս, ինչպէս որ է, ապա թէ ոչ թող չլինի»։) Պարլամենտի ցանկութիւնը ևս այդ էր։ Յիսուսեանների կանոնադրութիւնքը տարի ու կէս քննելուց յետոյ վերջապէս առաջարկեց Թագաւորին իւր վճռադատութիւնը անունով «Recueil monstrueux des assertions soutenues et ensceignées par la compagnie des Jesuites». Այս առաջարկութեան մէջ ապացուցանվումէր, որ երկու Յիսուսեանք իւրեանց շարադրութենների մէջ, թոյլ էին տալիս շնութիւն, անառակութիւն. — երեսուն վեցը նոցանից թոյլ էին տալիս, մարդասպանութիւն. — երկու Յիսուսեանք անձնասպանութիւն. և եօթանասուն հինգ Յիսուսեանք թագաւորասպանութիւն։ Լուդովիկոս XVը վերջապէս Շուազէօլի խորհրդին հետևելով 1764 թուականի նոյեմբեր ամսի մէջ ստորագրեց Յիսուսեանները Ֆրանսիայից աքսորելու հրովարտակը։

Այս անցքից յետոյ Յիսուսեանք քաշվեցին դէպ ի Հռոմ. բայց և այն տեղ նոցա համար պատրաստ էր հալածանքը, նոքա և այն տեղ պիտոյ է հանդիպէին նեղութիւնների և սարսափելի չարչարանքների: Կլեմենտ XIIIը վախճանեցաւ, նորա տեղ նստաւ Պապական աթոռը Կլեմենտ XIV շատ ուսումնական և լաւ մարդը. նա լաւ գիտէր ինչ աստիճանի ողորմելի դրութեան մէջ էին թողնում Յիսուսեանք Հռոմի պապերը, բայց ի այս կարծիքից, ստացվեցան ահա ամենայն տէրութիւններից գանգատներ Յիսուսեանների վերայ: Պապը քննութեան ժողովք նշանակեց մանաւանդ այնպիսի կարդինալներից, որոնք ճանաչումէին Յիսուսեաններին և ունէին դէպ ի այս մարդիկը մի արդար և բնական ատելութիւն: Այս ժողովը հաւաքվումէր ծածուկ ինքեան իսկ վատիկանի մէջ. Վերջապէս 1773 թուականի յուլիսի 21 օրումը Պապը ստորագրեց այն կոնդակը, որով ջնջումէր Յիսուսեան կարգը. այս կոնդակը հրատարակվեցաւ օգոստոսի 16ին երեկոյեան ութը ժամին: Իսկոյն կոնդակի հրատարակութենից յետոյ բոլոր Յիսուսեանների տները շրջապատեցին կորսիկացի զինուորները: Պապական աստիճանաւորքը զրահաւորված զօրականներով մտանումէին Յիսուսեանների տները և հաւաքելով Յիսուսեանները կարդումէին Աստուծոյ փոխանորդի, անմեղանչական Պապի կոնդակը կարգի ջնջվելու մասին: Հրամանի լողքը իսկոյն պարտական էին մերկանալ իւրեանց Յիսուսական հանդերձը և երեք օրից յետոյ կեանքի եղանակ որոշել, այսինքն կացութիւն (status): Մինչև որ բռնված Յիսուսեանք չ'յայտնէին իւրեանց ցանկութիւնը, թէ ինչ կացութիւն էին որոշում իւրեանց համար, չէին ազատվում արգելանքից, այլ մնումէին պահապանների պահպանութեան տակ:

Կարգի Գեներալ Րիկչին բանդ դրվեցաւ. Յիսուսեանների Դիւանատունը և գանձարանը կնքվեցան: Նոյն երեկոյին Հունգարացոց և Գերմանացոց Կօլլեգիումների մէջ երևեցաւ հրկիզութիւն. Թէ և Պապական կառաւարութիւնը ամենայն ջանք գործ դրեց կրակը մարելու համար, բայց զուր եղան բոլոր աշխատութիւնքը. Թղթերը այրվեցան և ոչինչ բան չ'մնաց, որոնցից կարելի լինէր հասկանալ ջնջված կարգի գաղտնիքը: Րիկչի, ինչ ժամանակ նորան հարցանումէին, չ'կամեցաւ ցոյց տալ գանձերի տեղը, և շուտով մեռաւ բանդարկութեան մէջ: Նա իւր մահու մահճումը բողոք դրեց, որով ապացուցանումէր կարգի որպէս թէ անմեղութիւնը:

Այս միջոցին, ժողովրդի մէջ հրատարակվեցան զանազան գուշակութիւններ Պապի մօտակայ վախճանի վերայ: Ման էին գալիս զանազան տարեգրական ցուցակներ, որոնց զօրութենովը պիտոյ է Կլեմենտ XIVը մեռանէր 1774 թուականում: Այս գուշակութիւնքը այ-

լսվեցին պապի հոգու խաղաղութիւնը. «ես գիտեմ» ասումէր նա, «որ Յիսուսեան կարգը ջնջելու կոնդակը, իմ մահու դատակնիքն է. բայց ես չեմ զղջում, ես առաջի Աստուծոյ պարտական էի դուրս տալ նորան»: Արդարև կարգի ջնջվելուց ութ ամիս յետոյ առոյգ և զուարթ պապը հիւանդացաւ յանկարծ և մի քանի ժամից յետոյ մեռաւ, բոլորովին սևացած: տարակոյս չկար նորան դեղամահ անելու մէջ. Յիսուսեան կողմնակիցքը համբաւ հրատարակեցին, թէ ինքը երկինքը յայտնի կերպով պատժեց յանցաւորը:

Պապական Շվէյցարիայի մէջ, ուր Յիսուսեանք մեծ ազդեցութիւն ունէին ժողովրդի վերայ, ռամիկները առեցին հանգուցեալ պապի պատկերը և կախեցին որպէս մահապարտ: Յիսուսեանք հալածական լինելով բոլոր Պապական աշխարհներից 1) ապաստանարան գտան Պրուսսիայի և Ռուսսիայի մէջ, բայց շուտով և այս տեղերում երևեցան նոցա վնասակար ազդեցութիւնքը, և նոքա այն միջոցին հալածվեցան այս աշխարհներից, երբ Պիոս VIIը իւր անպարծանք կոնդակովը, որ տուել էր 1814 թուականի օգոստոսի 18 օրումը վերականգնեց ջարդ ու փշուր եկած Յիսուսեան կարգը: Օրհնեալ Ալեքսանդր կայսեր հրովարտակը 2) Յիսուսեանները երկու մայրաքաղաքներից հալածելու համար տրվեցաւ կառավարող ծերակուտին 1815 թուականի դեկտեմբերի 19 օրումը. շուտով սորանից յետոյ հալածվեցան Ռուսսիայի բոլոր կայսրութենից:

---

1) Դնում եմ այս տեղ կարգով, թէ Յիսուսեանք, ո՞ր թուականում ո՞ր աշխարհքից հալածվեցան:

1596, Հօլլանդայից:

1612, Վենետկից:

1729, Սավօյիայից:

1759, Պօրտուգալիայից:

1767, Սպանիայից. Նէապօլից և Սիկիլիայից:

1768, Պարմի Դքսութենից, և Մա՛լթա կղզից:

2) Ցաւում եմ, որ չունիմ պատրաստի Օրհնեալ Ալեքսանդր Կայսեր Հրովարտակի պատճէնը, որ կարողանայի այս յօդուածի մէջ բառ առ բառ արտագրել. մանաւանդ այն պատճառաւ, որ Պարոն Փափազեանը իւր եկեղեցւ պատմութեան մէջ խօսելով, Ռուսաստանի Յիսուսեանները ներս ընդունելու վերայ, զանց էր արել պատմել, թէ ինչ հետևանք ունեցաւ այս ընդունելութիւնը, թէ Լօյոլայի որդիքը արժանի կացուցի՞ն իւրեանց անձը այսպիսի Կայսերական շնորհին, որ բաշխել էր նորանց:

Խոստանում եմ իմ ընթերցողներին, մի այլ ժամանակ տպել այս հրովարտակի պատճէնը. և վերստին խօսել Յիսուսեանների մասին. սկսած, Պիոսի ձեռքով նորանց Կարգի վերականգնելուց մինչև մեր օրերը:

Ահա՛ Յիսուսեանների պատմութեան և բնաւորութեան համառօտ տեսութիւնը: Այն մարդը, որ մտանումէր այս կարգի մէջ, որ անգամ էր դառնում այս ընկերութեանը, դադարումէր ոչ թէ միայն քաղաքացի լինելուց, այլ և մարդ լինելուց. — Նա Յիսուսեան էր լինում յայտնի աստիճանի:

Պարծանք Պապականութեան, Յիսուսեան կարգ. արժանի որդիք, արժանի հօր: «Ծառ ի պտղոյ իւրմէ ճանաչի»:

ԹԱՓԱՌԱԿԱՆ ՀՐԷԱՅ

ԹԱՓԱՌԱԿԱՆ ՀՐԷԱՅ

—

ՅԱՌԱՋԱԲԱՆ

—

ԱՇԽԱՐՀԻ ԵՐԿՈՒ ՄԱՍՆԵՐԸ

Հիւսիսային ովկիանոսը, իւր յաւիտենական սառուցներով պատումէ Սիբիրիայի և Հիւսիսային Ամերիկայի անապատների եզերքը։ Այս երկու երկիրները Բերինգեան նեղուցով միմիանցից բաժանված, աշխարհի առանձին մասերն են։ Սեպտեմբերը արդէն վերջանումէր. օր ու գիշերվայ հաւասարութեան հետ սկսեցին մառախուղ և բեւռային մրրիկներ։ Խոր գիշերը շուտով հետեւումէ բեւռային տխուր ու կարճ օրի քամակից. երկնքի պղտոր շուշանագոյն կապուտակութիւնը, հազիւ հազ լուսաւորված է արեգակի ճառագայթներով, որ ջերմութիւն չեն տալիս, որոնց գունաթափ և մեռեալ լոյսը աղօտանումէ ձիւնի կուրացուցիչ փայլմունքից, որ ծածկել է բոլոր անապատը, որի եզերքը դէպ ի հիւսիս վերջանումեն սև սև ահագին ապառաժների բազմութենով։

Այս ապառաժեայ հսկաների բազմութեան ստորոտումը, սփռած է սառն ովկիանոսի մեռեալ վարագոյրը, ուր փոխանակ ալիքների, ընկած են այս և այն կողմ բազմութիւն սառուցի սարերի, որ իւրեանց կապոյտ գագաթներովը անյայտանումեն հեռի կիսաթափանցիկ ցուրտ օդի մէջ։ Դէպ ի արևելք, Սիբիրիայի սահմաններում, Ուլլինին հրուանդանի երկու ծայրերի մէջ, հազիւ հազ երեւումէ մոյգ կանաչ մի գիծ, դէպ ի որը դանդաղ մօտենումեն սպիտակ սառուցի բեկորների բազմութիւնը։ Այդ Բերինգեան նեղուցն է. իսկ նեղուցի միւս կողմում և նոյն իսկ վերայով, կախված են հիւսիսային Ամերիկայի վերջին ծայրի, Կալլեսկեան հրուանդանի ապառաժների որձաքարեայ հսկաները։

Այս անապատ տեղերումը արդէն չկան շնչաւոր էակներ. զարհուրելի ցրտերից քարերը ճաքվումեն, ծառերը ճեղքվումեն կտոր կտոր և գետինը պատառվելով ձգումէ հեռի սառուցի կտորները: Այս տեղ երևումէ, որ ոչինչ կենդանի չէ կարող պատերազմիլ ցրտի և մրրկի հետ, սովի և մահի հետ. բայց.... այս է զարմանալին.... այս ահագին ձիւնի տարածութեան վերայ, երևումեն մարդու ոտքի նշաններ. Ամերիկայի կողմից տպաւորված են, կնոջ քնքուշ ոտքի թեթև նշաններ, ուղղված դէպ ի ապառաժները, որ տեղից երևումեն նեղուցի միւս կողմի Սիբիրիայի ձիւնապատ դաշտերը. Սիբիրիայի կողմից երևումեն, այր մարդու ոտքի խոր խոր և մեծ նշաններ, որ նոյնպէս ուղղված էին դէպ ի նեղուցը: Նորա հակառակ կողմից գալով, որպէս թէ յոյս ունէին աշխարհի ծայրումը, տեսնել միմեանց ծովանեղուցի վերայով, որ բաժանումէ աշխարհի երկու մասերը: Ուղղից զարմանալին այս է, որ այս մարդը և կինը անցան անապատից այն ժամանակ, երբ կատաղի մրրիկը փչումեր ամենայն զարհուրելի զօրութենով:

Հարիւրամեայ սև կուենիները, որ այս և այն տեղ գերեզմանի խաչերի նման կանգնոտած էին ձիւնի տարածութեան վերայ, մրրկի ուժովը խլվումէին տեղերից և ջարդ ու փշուր եղած տարվում էին փոթորկի հետ, շատ հեռի տեղեր: Այն ծառերը, որոնց վերայից դարեր էին անցել, կործանվումէին այս փոթորկից. սառուցի սարերը դողդողումէին և ահագին կտորները սաստիկ ճայթմունքով զարկումէին մինը միւսին: Բայց միայնակ ճանապարհորդքը դիմանումէին այս մրրկի ներգործութեանը և մի քայլ չխոտորվելով իւրեանց ընթացքից, ինչպէս երևումէ նոցա հարթ և ուղիղ հետքերից, որ թողեցին ձիւնի վերայ:

Ովքեր են այս արարածքը, որ այսպէս հանդիստ գնումեն այն



տեղում, ուր բնութիւնը դողալով սարսափումէ. և պատահմամբ, կամ գիտութեամբ, թէ նախասահմանութեան տնօրէնութենովը, եօթը գամ զարկած կօշիկի գարշապարով մարդը, թողնումէ այսպիսի հետք: Եւ այս հետքը թողնումէ նա ամենայն տեղ իւր ճանապարհի վերայ. այս խոր հետքը փայլումէ. և հարթ հաւասար, ամուր ձիւնի վերայ երևումէ այնպէս, որպէս թէ մարմարոնեայ յատակի վերայ զարկած լինէր ատամանդից ոտքի տեղ:

Բայց ահա գիշեր առանց մառախուղի հասաւ փոխանակ ցերեկի ... գիշեր զարհուրելի.... ձիւնի պայծառ սպիտակութեան միջ-

Նորդութենով տեսանվում, թէ այս սպիտակ անապատը, երկնքի մուգ կապոյտ և համարեա սև կամարի տակ ինչպէս անվերջանալի ընկած է և շէկագոյն աստղերը անյայտանումեն նորա միգապատ և սառն անդունդքի մէջ: Բոլոր շրջակայքումը թագաւորում խոր լռութիւն. յանկարծ, Նեղուցի քամակից հորիզոնի վերայ երևում գունաթափ լոյս, սա յառաջ նման է կապտագոյն և աղօտ փայլողութեան, ինչպէս լինում առ հասարակ լուսնի ծագելուց յառաջ. յետոյ մեծանում այս լոյսը, արձակում ամենայն կողմ իւր ճառագայթները և վառվում պարզ վարդագոյն փայլմամբ: Այն միջոցին երբ երկու կողմի խաւարը զօրանում առաւել և առաւել, և սպիտակ անապատը, որ փոքր մի յառաջ տեսանելի էր, չէ որոշվում խաւար երկնակամարից: Ահա այս զարհուրելի խաւարի մէջ լսվում մի անորոշ, շփոթ աղաղակ. որպէս թէ մեծ մեծ թռչուններ, երբեմն թռչելով երբեմն դադարելով ընկնումէին գետնի վերայ, իսկ ձայն, չէ լսվում ամենևին: Այս մունջ զարհուրանքը, յառաջընթաց էր բնութեան այն երևելի տեսարանին, որ ամենայն կենդանի և շնչաւոր դողացնում. ամէհի գազանից սկսած մինչև անմեղ արարածը. . . . և ահա դուրս ցայտեց վերջապէս հիւսիսային փայլողութիւնը, այն մեծասքանչ տեսարանը, որ թէպէտ մի անսովոր բան չէ բևեռային կողմերի համար:

Հորիզոնում երևեցաւ պայծառ կիսագունդ, որի բերանի կենդրոնից, դուրս էին բղխում ահագին լուսեղէն սիւներ, որոնք բարձրանալով գունդի ամենայն կողմից, լուսաւորումեն և երկինքը, և գետինը, և ծովը: Հրեղէն փայլմունքը, որպէս արշալուսից ընկնում և սահում ձիւնապատ դաշտի վերայից, բացարձակում հիանալի լոյս սառուցի սարերի մոխրագոյն գագաթների վերայ, և փոքր ինչ կարմրեցնում և թեթև, ոսկու գոյն է տալիս երկու ցամաքահողի սև սև ահագին ապառաժներին:

Հիւսիսային փայլողութիւնը հաւաքելով իւր կենդրոնում փայլողութեան բոլոր ույժը, վերջապէս փոքր առ փոքր սկսեց գունաթափիլ, և նորա պայծառ շառաւիղքը, անհետացան թափանցիկ և լուսաւոր մառախուղի մէջ: Այս միջոցին, օդափայլութեան զարմանալի ներգործութենովը, որ անսովոր չէ այն լայնութեան տակ եղած երկիրների համար, թըվումէր, թէ Ամերիկայի եզերքը, ծովանեղուցով Սիբիրիայից բաժանած, շատ մօտ էր Սիբիրիային. և որպէս թէ կարելի էր կամուրջ հաստատել աշխարհի մի մասնից, միւս մասնի վերայ:

Այս լուսատու կապտագոյն շոգիների մէջ, որ պտուտ էին գալիս, երկու կողմում երևեցան երկու մարդու կերպարանք. Սիբիրիայի կողմում այր մարդու, որ ծունկ չոքած անթարգմանելի յուսահատ կերպով, պարզել էր ձեռքերը դէպ ի Ամերիկա. իսկ Ամերի-

կայի կողմում, գեղեցիկ մատաղահաս կին, այս տխուր մարդու աղաչանքին պատասխանումէր երկինքը ցոյց տալով. . . . Մի քանի վայրկեան այս երկու մառախլապատ մեծ կերպարանքները նկարագրվեցան կէս գիշերվայ լուսաւորութեան վերջին ճառագայթների մէջ. յետոյ, մառախուղը փոքր առ փոքր սկսեց թանձրանալ և ամենայն բան աներևութացաւ։ Ի՞նչ տեղից եկան այս երկու էակները, որ այս կերպով հանդիպեցան միմեանց աշխարհի ծայրումը, բևեռային սառուցների մէջ. ո՞վքեր են այս ստեղծուածքը, որ մի ակնթարթ, մի խաբէական երևութով մօտեցած, յետոյ դարձեալ կարծես թէ բաժանված են յաւիտեանս։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆ

ՍՊԻՏԱԿ ԲԱԶԷԻ ՊԱՆԴՈԿԸ։

I.

ՄՕՐՕԿԸ։

1831 *թուականի հոկտեմբերը վերջանումէր. օրը դեռ չէր միանգամայն երեկոյացել, իսկ պղնձեայ չորս եղջերաւոր կանթեղը արդէն լուսաւորումէր ճաքճքած պատերով ընդարձակ գոտիկոնը, որ շինած էր ախոռի վերայ, և որ ունէր միայն մի պատուհան և այն ծածկած։ Այս տեղից ախոռի մէջ, կախած էր հասարակ սանդուղք։ Գոտիկոնի մէջ ընկած էին անկարգ անկանոն երկաթի շղթաներ, սուր սուր ատամներով վզնոցներ, սղոցի ատամներով սանձեր և երկայն պողպատի բարակ գաւազաններ փայտեայ կոթերով։*

Մի անկիւնում կանգնած է շարժական հնոց, այն հնոցների նման, որ կլայկագործքը գործ են դնում մետաղ հալեցնելու համար. նորա մէջ դրած են չոր տաշեղներ և ածուխ, հերիք է և մի կայծը ևս, որ մի րոպէում բորբոքէ կրակը։ Ո՛չ շատ հեռի այս զարհուրելի գործիքներից, որ նման են դահճի գործիքների, թաւալումն հին դարերի զինուորական գործիքներ. պողպատի զրահ, պիրկ, դիւրաթեք և բարակ իբրև կակուղ գործուածք ընկած է մեծ արկղի վերայ միւս երկաթի գործիքների մօտ. դարձեալ այս տեղ դրած են շատ տեսակ զէնքեր. երկայն երեք անկիւնաւոր գեղարդներ, թեթև և պիրկ փայտեայ կոթերով, որոնց վերայից դեռ չեն սրբված արիւնի նոր հետքերը։

Այս բաների հետ միասին կային ևս երկու հատ Տիրօլեան կարբինաներ, մեծ մեծ հրացայտներով. առ հասարակ այս տեղ, ուր

կան մահացուցիչ զէնքեր և բարբարոսական գործիքներ, գտնվումեն խառնված օտարոտի բոլորովին այլ առարկաների բազմութիւն. փոքրիկ ապակեկազմ արկղներ, որ պարունակումեն իւրեանց մէջ օրհնարաններ, մետալիոններ «գառին Աստուծոյ», օրհնած ջրի անօթներ, շրջանակների մէջ դրած սրբելի պատկերներ, և վերջապէս մեծ բազմութիւն, խոշոր և երկնագոյն թղթի վերայ Ֆրէյբուրգում տպած տետրակների. տետրակների, ուր պատմութիւն է լինում նորանոր հրաշքների մասին, ուր յառաջ էր բերվում Ց—Ք, մի բնագիր նամակը, ուղղված դէպ ի մի հաւատարիմ, որի վերջումը, 1831 և 1832 թուականների մասին լինումեն ամենազարհուրելի գուշակութիւններ ամբարիշտ և ապստամբ Ֆրանսիայի ընդդէմ։

Շինութեան առաստաղի խոտորնակի գերաններից, կախած էր խոշոր նկարած մի կտաւ, որոնցով զարդարումեն ձեռնածուները իւրեանց խաղարկութեան տան ճակատը։ Այս պաստառի վերայ կար այսպիսի մակագիր։

«Ճշմարիտ և արժանի յիշատակի դարձ Իգնատիոս Մօրօկի, որ յայտնի է անունովս «Գէտ»՝ որ պատահեցաւ Ֆրէյբուրգ քաղաքում 1828 թուականին»։

Այս պատկերը, շատ մեծ բուն սովորականից, բարբարոսական ձևով ներկած, բաժանված էր երեք հատուած, որ երևեցնումէին դարձողի, որ Գէտ էր անուանվել, երեք գլխաւոր անցքերը։ Առաջին բաժանման մէջ նկարած էր մի մարդ, երկայն և համարեա սպիտակ մօրուքով և գազանի ձևով. հագած էր եղնի կաշուց հանդերձ, ինչպէս հասարակօրէն հագնումեն հիւսիսային Սիբիրի վայրենի և թափառական մարդիկը, գլուխը ծածկած էր սև աղուեսի մորթուց սրածայր գլխարկով, որի վերայ երևումէր ագռաւի գլուխ. երեսի գծերումը նկարած էին զարհուրանք և ահ։

Նա գունձ եկած նստած է մի սահնակի մէջ, որին լծած վեց շէկ շներ վազումեն ամենայն զօրութենով ձիւնի վերայ, փրկվելով նորանց հալածող գայլերի և արջերի գնդից, որոնց ատամները և բացած ճանկերը կարող են անտարակոյս հարիւր անգամ կտրատել և փշրել և մարդը, և շները, և սահնակը։ Այս նկարագրութեան տակ գրած է. «1810 թուականին հեթանոս Մօրօկը ազատվումէ գիշատվող գազաններից»։ Երկրորդ հատուածի մէջ, Մօրօկը սպիտակ հանդերձով ձեռները դրած ծնկերի վերայ կանգնած է պատշաճաւոր կերպով մի մարդի առաջև, որ հագած էր սև զգեստ սպիտակ և դարձուած օձիքով. այս պատկերի մի անկիւնում նկարած է մի հրեշտակ, որ թռչումէ, մի ձեռքում փող, իսկ միւսում հրեղէն սուր. նորա բերանից դուրս են գալիս հետևեալ խօսքերը, որ գրած են կարմիր

տանէրով սև տեղի վերայ. «Հեթանոս Մորօկը փրկվեցաւ գիշատող գազաններից. և այժմ այն գազանները պիտի դողան Իգնատիոս Մորօկի առաջև, որ Քրիստոնէութիւն ընդունեց և մկրտվեցաւ Փրէյբուրգում»: Եւ ճշմարիտ. երրորդ հատուածի մէջ, Նոր դարձուածը երկայն ու լայն կապոյտ շորերով հպարտ փառահեղութենով գլուխը բարձրացուցած, ձախու ձեռքը դրած կողքին մի հրամայողական կերպով պարզում յառաջ աջ ձեռքը, և կարծես թէ մի շարժողութենով ոչնչացնում և հարկադրում դողալ ամբողջ վագրների, բորենիների, արջերի և առիւծների գնդերը, որոնք պոչերը սեղմած, ճանկերը և ատամները պահած, սողումեն գետնաքարշ Նորա ոտքերի տակ աշարեկ եղած հեզութենով: Այս նկարագրութեան ցածումը գրած է. «Իգնատիոս Մորօկ դարձուած. վայրենի գազանք սողումեն Նորա ոտքի տակ»:

Յատակի վերայ այս պատկերի տակում դեղերով գրած են մանր մանր տետրակներ, տպած նոյնպէս Փրէյբուրգում, որոնց մէջ պատմրվում, թէ ինչ հրաշքով հեթանոս Մորօկը Քրիստոնեայ դառնալով, ստացաւ յանկարծ մի գերբնական ընդունակութիւն հնազանդեցնել գիշատող գազանները. սորա ապացոյց կարող է լինել ամենայն օրվայ խաղերը, որ Մորօկ կատարում ո՛չ այնքան իւր քաջութենովը պարծենալու համար, որքան մերձաւորին խրատելու......

Ախոռի ներքին մասից, բաց թողած փոքրիկ դռնակի միջոցով դուրս է գալիս ամպի նման շոգի, և տարածվում մի անսովոր սուր և թափանցիկ հոտ: Ժամանակ առ ժամանակ լսվում սաստիկ և բարձր խորգալու ձայն, ծանր շնչառութիւն խուլ աղաղակի հետ միասին, որ թէ լսուէր հեռուից, որպէս թէ մի ծանր բան ման է գալիս և թաւալում տախտակեայ յատակի վերայ: Դստիկոնի մէջ — միայն մի մարդ կայ. այն Մորօկն է զսպող գիշատիչ գազանների, որ անուանված է Գէտ: Երեսանց դատելով այս մարդը կը լինի այսպէս քառասուն տարեկան, հասակը միջակ, անդամները չոր ու ջիլ, փաթթված է բոլորովին սև երեսով, բայց կարմիր արիւնի գոյն մորթուց մուշտակի մէջ. երեսը թէ և բնական սպիտակ այլ սևացել է թափառական կեանքից, որ վարում սկսած երեխայութենից: Մազերը բաց դեղին ինչպէս առ հասարակ բևեռային բնակիչների մազեր, Նոքա ցրուած այնպէս ուղիղ շարքով ընկնումեն ուսերքի վերայ, քիթը փոքր սրածայր և դէպ ի վեր դարձած, երկայն և համարեա սպիտակ մօրուքով, որ ծածկում կուրծքը: Բայց այս մարդու դէմքի վերայ առաւել զարմանալի են աչքերը. Թերթևանուկները միշտ այնպէս բարձրացած, որ աչքի սպիտակուցը երևում ամենայն կողմից կարմիր բբի շրջանակումը: Մի միայն այս օտարոտի հայեացքը անընդհատ պշու-

ցած անշարժ է շինում կենդանիքը. բայց Գէտը չէ ար՝ամարհում
նոյնպէս իւր զինարանի զարհուրելի գործիքները: Մօրօկ, նստած սե-
ղանի մօտ, բացեց գաղտնի փակերով կպցած արկղի կրկին յատակը,
որի մէջ կային օրհնարաններ և այլ նորա նման բաներ. և հանե-
լով այն տեղից կնքած բաներից մինը վերան թուանշաններով և փա-
կագրերով, որ նշանակումէին հասցէն, դրեց մուշտակի գրպանը, յե-
տոյ փակեց արկղը և դրեց սեղանի տակ:

Այս անցքը անցաւ չորս ժամին ճաշից յետոյ ՍՊԻՏԱԿ ԲԱԶԷԻ
պանդոկի ախոռի մէջ. այս մի միայն պանդոկը կայ Մօկկերն ագա-
րակում, որ շատ հեռի չէ Լէյպցիգից: Մի րոպէից յետոյ, գետնի
տակից լսուեցաւ ահագին մռնչիւն, որից դողաց բովանդակ ախոռը.
Ցուդա՛, ձայնդ կտրիր, գոռաց Գէտը դառնալով դէպ ի դռնակը: Խա-
կոյն սորանից յետոյ մի այլ ձայն առաւել զարհուրելի, ինչպէս լ-
վումէ հեռուից որոտը: Կայէն, լռիր, գանչեց Մօրօկը վեր կենալով
իւր տեղից: Վերջապէս լսվեցաւ երրորդ մռնչիւնը անտանելի սաս-
տիկ, որից դողացին ախոռի պատերը: Մա՛հ, կլռե՞ս թէ ո՛չ, գոռաց
Գէտը և վազեց դէպ ի դռնակը անտես և անհանգիստ գազանը հան-
դարտեցնելու, որի անունը Մահ էր: Բայց ո՛չ սովորական իշխանու-
թիւնը, ո՛չ սպառնալիքը կարողացան լռութիւն տալ. ընդհակառակը
մռնչիւնների հետ լսվեցան և մեծ մեծ շների հաչելու ձայներ:

Մօրօկ գեղարդը ձեռքին արդէն պատրաստվել էր ներս իջանել
դռնակից, երբ յանկարծ երևեցաւ մի մարդ, բոլորշի, մոխրագոյն
գլխարկով, կարճ բաճկոնով և լայն կանաչ մահուդի վարտիկով:
Նորա փոշոտած կաշիէ տրեխներից կարելի էր հասկանալ, որ նա հետ
էր գալիս մի հեռի ճանապարհից, մանաւանդ որ ուսին կապած էր կա-
շիներով ճանապարհի պարկը: — Սատանայն առնու այս կենդանիքը,
ասաց նա գերմաներէն, ներս մտանելով դստիկոնը. — երեք օրում ար-
դէն կարողացան մոռանալ ինձ. . . Ցուդան դուրս հանեց թաթը
վանդակի ծակերից. . . իսկ Մահը բոլորովին զայրացած այս և այն
կողմն է ընկնում կատաղածի պէս: Զարմանալի է. մի՞ թէ չեն ճա-
նաչում ինձ: «Համբաւները լա՞ւ են թէ վատ, Կարոլոս» հարցրեց
Մօրօկ մի անհանգստութենով դարձեալ գերմաներէն թէպէտ և այլ
արտաբերութեամբ» — համբաւները լաւ են: — «Ի՞նչպէս եղաւ, հան-
դիպեցար դու նորանց» — ես պատահեցի նորանց երեկի, երկու լիեօ
հեռի Վիտտըմբերգից: — «Փառք Աստուծոյ, ասաց Մօրօկ ուրախ ու-
րախ ձեռները ծալելով: — Այդ շատ պարզ բան է. . . Ռուսաստա-
նից Ֆրանսիա անպատճառ պիտոյ է այդ ճանապարհով գնալ, և դաշն
կարելի է կապել մինին, հազար հատուցանելու, որ նոքա կըպատա-
հին Վիտտըմբերգի և Լէյպցիգի մէջ: — «Բայց նոցա նշանները՞» —

Ամենևին հաւմաձայն, աղջիկները թխագգեստ, ձին սպիտակ, ծեր մարդը մեծ ընչացքներով, գլուխը հագած մուգ կապոյտ գլխարկ, վերան ձգած մոխրագոյն ճանապարհական վերարկու, քամակներից վազում Սիբիրեայի շուն: —

«Դու ո՞ւր թողեցիր նորանց» — Մի լիեօ այս տեղից. կէս ժամից յետոյ նոքա այս տեղ կը լինին. «ի հարկէ այնուհետև այս պանդոկումը կը լինին, որովհետև ուրիշը չ՚կայ այս ագարակում» ասաց Մօրօկը մտածելով: — Արդէն գիշերը ևս մօտ է. — յաւելացրեց կարօլոսը: «Բայց դու մի բան խօսեցա՞ր ծերի հետ» — Ծե՞րի հետ. . . . ինչպէս չէ կը խօսէս նորա հետ: — «Ի՞նչ պատճառով» — Ապա մի փորձիր: — «Ինչի՞ համար չէ» — Անհնար է: «Անհնար է՞. ինչի՞ համար» — ահա կըտեսանես. ես միշտ քամակներից գնումէի երևկվայ իջևանից սկսած, ուր որպէս թէ յանկարծ պատահեցայ. մի քանի խօսք ասացի ծերին, ինչպէս հասարակված բան է, եթէ ուղեկցի պատահէիր ճանապարհի վերայ. ես նորան ասումէմ, «ողջոյն, Աստուած օգնական, ընկե՛ր» բայց նա փոխանակ պատասխան տալու մի ծուռը նայեց իմ վերայ. այս հերիք չէր, դեռ ձեռքի փայտովը ցոյց տուեց ճանապարհի միւս կողմը: — «Նա Ֆրանսիացի է. գուցէ չ՚հասկացաւ գերմաներէն» — Չ՚հասկացա՞ւ. նա հասկանումէ, և քեզանից վատ չէ խօսում: Ես ինքս լսեցի, ինչպէս նա իջևանումը հարցանումէր տան տիրոջից ինչ որ աղջիկներին և իւրեան պէտք էին: — «Իջևանումը չ՚փորձեցի՞ր, որ կարողանաս խօսել» — Միանգամ խօսեցի. բայց նա այնպէս բիրդ պատասխան տուեց, որ ես առաւել լաւ համարեցի հանգիստ թողնել նորան, որպէս զի բոլոր գործը չ՚խանգարվի: Ես վաղուց աճ ասումեմ, որ այն մարդը իսկապէս սատանայ է, հաւատա՛ ինձ. և չ՚նայելով նորա ալեխառն ընչացքներին և պառաւժութեանը պէտք է, որ շատ ուժով և համարձակ լինի, այնպէս, որ հազիւ թէ կարողանայ նորան դիմանալ իմ ընկեր ուժեղ Գոլիաթը. . . Չ՚գիտեմ դու ինչ կամենումես անել. . . բայց խորհուրդ եմ տալիս, իմ տէր, զգուշանալ. . . — «Իմ սև Եավայի ինձը ևս բաւական զօրեղ և չար էր» ասաց Մօրօկ արհամարհանքով և հեգնական ժպիտով: — Մա՞հը. ճշմարիտ է. նա այժմ ևս զօրեղ է և չար ինչպէս յառաջ. . . Միայն քո առաջևը նա խոնարհ է: «Տեսանո՞ւմես, ես և այն ծերը այդպէս կը զսպեմ, առանց նորա ուժի և յանդգնութեան վերայ նայելու: — Ուրեմն զգուշացիր իմ տէր. խօսք չ՚կայ որ դու յաջողակութենով և համարձակութենով ոչ ոլից պակաս չես, բայց հաւատա՛ ինձ, այն ծեր գայլից, որ այս տեղ գալիս է, երբէք չէ կարելի հեզ գառն շինել: —

«Չեն սողում արդեօք աջով ու վախով ոտքիս տօ՛կ իմ առիւծ

կայէնը, իմ վագր Յուգայն» — Յայտնի բան է. դու շրջապատեցիր քեզ այնպիսի հնարներով, որ . . . «Ես շրջապատեցի ինձ հաւատով. և ահա ամենայն բան սորա մէջն է . . . այո՛ ամենայն բան» ասաց Մօրօկ բարձր ձայնով, կտրելով Կարօլոսի խօսքը և նայելով նորա վերայ այնպիսի կերպով, որ Կարօլոսը հարկ և հարկ ստիպվեցաւ գլուխը կախել և չհամարձակուիլ աւելի բան խօսել: «Միթէ նա, որին տուած է կարողութիւն զսպել կատաղի գազանները պատերազմի մէջ, յաղթական չէ հանդիսանալու մարդերի վերայ . . . չար և անօրէն մարդերի վերայ» յաւելացրեց Գէտը ուրախ և ոգևորեալ ձայնով:

Բոլորովին հաւատալո՛վ իւր տիրոջ ասածին, թէ կարողութիւն չունենալով վիճել նորա հետ այսչափ բարակ խնդրի վերայ Կարօլոսը խոնարհաբար պատասխանեց Մօրօկին. — դու ինձանից շատ գիտես, իմ տէր, ինչ որ և առնես, միշտ բարի կը լինի: «Դու ամբո՞ղջ օրը հետևեցար այն ծերին և մատաղահաս աղջիկներին» հարցրեց Գէտը մի րոպէից յետոյ: — Այո՛, հեռուից: Ես լաւ իմանալով տեղերը թուփերի քամակից սարերի վերայով և կողմնակի ճանապարհներով ման էի գալիս, աչքս չհեռացուցած մեծ ճանապարհից, որի վերայով գնումէին նոքա: Վերջին անգամ ես նայեցի նոցա քամակից կղմինդրի գործարանի ջրաղացի յետքից . . . Նոքա գնումէին ուղիղ ճանապարհով, իսկ ես օգուտ քաղելով գիշերվայ հասանելուց կրկնապատկեցի իմ քայլերը, և շտապեցի բերել քեզ ինչպէս ասումես բարի համբաւ: «Շատ բարի . . . այո՛, շատ բարի . . . դու կը ստանաս վարձը . . . «բայց եթէ այդ մարդիկը մի կերպով սըլքվէին իմ ձեռքից . . . Մօրօկը ցնցվեցաւ և չաւարտեց սկսած խօսքը. Նորա երեսի գծագրութենից և ձայնի հնչումից երևումէր, որ ստացած ծանօթութիւնը նորա համար շատ մեծագին էր: — Արդարև — սկսեց դարձեալ Կարօլոսը — ուրեմն արժանի է ուշադրութեան այդ գործը, որովհետև Ռուսաց սրընթաց սուրհանդակը, որ եկաւ Պետերբուրգից Լէյպցիգ ձեզ հանդիպելու . . . . գուցէ թէ . . . . «Ո՞վ քեզ ասաց, որ սուրհանդակը եկել էր այս ճանապարհորդների գործի մասին» շտապով կտրեց Մօրօկ Կարօլոսի խօսքը» դու սխալվումես: Բաց ի դորանից քո գործ չէ քննել ուրիշի ընթացքը. առաւել լաւ է, կատարիր այն, ինչ որ հրամայումեմ քեզ» — Մնաս բարով, իմ տէր. ներիր ինձ և չխօսենք այլ ևս այս մասին . . . Այժմ, լաւ է, ես կը հանեմ իմ ուսի պարկը և կ'երթամ օգնել Գոլիաթին գազանները կերակրելու. կարծեմ ժամանակ է կերակուր տալ նորանց, թէ չեմ սխալվում: Իմ տէր, արդեօք լա՛ւ նայումէ նորանց իմ յամրաշարժը (Գոլիաթը):

«Գոլիաթը գնացել է այլ գործով. նա չէ պիտոյ իմանայ քո վերադառնալը, իսկ ծերը և աղջիկները չէ պիտոյ ամենևին քեզ տեսանեն այս տեղ. ապա թէ ոչ, ով գիտէ կասկածանք ևս կը ծագի նոցա մէջ»: — Ո՞ւր ապա գնամ ես: «Գնա՛ ձիանոցի քամակը և այն տեղ սպասիր իմ հրամաններին. կարելի է, որ դու այս գիշեր ևս ճանապարհորդես դէպ ի Լէյպցիգ»: — Այդ քո կամքն է. իմ պարկի մէջ ինչ ասես կայ, ուրեմն ես ձիանոցի քամակում և ընթրիք կ'ուտեմ և կը հանգստանամ: — «Գնա՛» — իմ տէր մի մոռանար, ինչ որ ասացի. զգուշացի՛ր այն ալեխառն ընչացքներով ծերիցը. նա համարձակ է ինչպէս սատանայ. ես փոքր ինչ սովորած եմ մարդ ճանաչել. Ճշմարիտ, զգուշացի՛ր... «Հանգիստ կացի՛ր ես միշտ զարթուն եմ» պատասխանեց Մօրօկ: — Ուրեմն, ցանկանումեմ յառաջադիմութիւն:

Նա կարօլոսը սկսեց ցած իջանել սանդուղքներից և վերջապէս ծածկվեցաւ Մօրօկի աչքից: Գէտը փաղաքշական բարեաւ միայն ասած իւր ծառային, բաւական ժամանակ ման էր գալիս խոր մտածելով. յետոյ մօտենալով այն փակած արկղին, որի մէջ պահվումէին թղթերը, հանեց այն տեղից մի երկար նամակ և քանի մի անգամ կարդաց նորան մեծ ուշադրութենով: Ժամանակ առ ժամանակ վեր կանգնումէր տեղից և մօտենումէր ծածկած պատուհանին, որ նայումէր դէպ ի պանդոկի գաւիթը և ականջ էր դնում տխուր անհանգստութենով:

Նա անհամբեր սպասումէր ճանապարհորդների գալուն, որոնց մասին լուր էր ստացել:

II.

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՔԸ:

Երբ նախընթաց դէպուածը անցանումէր «Սպիտակ Բազէի» պանդոկում Մօկկերն ագարակի մէջ, երեք անձինք, որոնց այնպիսի անհամբերութենով սպասումէր Մօրօկը, գաղանների ղպողը, հանդիստ գնումէին ծաղկաւէտ դաշտի վերայով, որ մի կողմից պատած էր գետով, որի վերայ շինած էր մի ջրաղաց, իսկ միւս կողմից մեծ ճանապարհով, որ հանումէր Մօկկերն ագարակը, որ մի լիեօ հեռի նորանից շինած էր բաւական բարձրաւանդակի վերայ:

Երկինքը շատ պարզ էր, երեկոյեան խոր խաղաղութիւնը ընդհատվումէր գէթ կարկաչահոս ջրի ձայնովը, որ փրփրումէր ջրաղացի անիւի դարձուածքով. խիտ թփերը արձակումէին ջրի վերայ իւրեանց կանաչագոյն և թափանցիկ ստուերը, բայց առաւել հեռի, — հիա-

նալի ցոլանումէին երկնակամարի կապուտակը և արևամտի բոցավառ գոյնը, և եթէ բլուրները չարձակէին իւրեանց ստուերը գետի վերայ, այն ժամանակ ոսկին և հոսանքի կապուտակը միանալով կը կազմէին մի կուրացուցիչ վերարկու ոսկուց և երկնակամարի կապուտակից։ Բարձր և գետեզերեայ եղէգնը, խոնարհեցնումէր իւր սև թաւիշեայ փունջը երեկոյեան հողմի թեթև շնչառութեան տակ. արևը փոքր առ փոքր անյայտանումէր կրակով շրջանակած ծիրանի ամպերի լայն ժապաւէնի քամակում։ Օդի մէջ մեղմիկ լսվումէր հեռի տեղում արածող հօտի զանգակիկների ձայնը։

Նեղ ճանապարհի վերայով, որ բացած էր մարգի խիտ արօտների միջից, երկու մատաղահաս օրիորդներ, որոնց հազիւ թէ լրացել էր տասն և հինգերորդ տարին հասակի, ճանապարհորդումէին սպիտակ ձիով, երկուսը ևս յարմար տեղաւորված ընդարձակ և կատարքով թամբի վերայ. նոքա շատ քնքոյշ էին կազմուած և ոչ մեծ հասակով։

Բարձրահասակ, թուխ այր մարդը ալեխառն երկայն ընչացքով, առաջնորդումէր ձիուն բռնած նորա սանձից, ժամանակ առ ժամանակ նայելով յարգութեամբ և հայրական հոգածութենով օրիորդների վերայ։

Նա գնումէր ձեռքին բռնած երկայն գաւազան, որ օգնումէր նորան քայլելու. ուսերից, որ յայտնումէին մարմնի կազմուածքի ոյժը և ամրութիւնը, կախուած էր զինուորական ճանապարհակիրը. նորա փոշոտած կօշիկները և յամրաշարժ ոտքերը, ցոյց էին տալիս, թէ շատ ժամանակ է քանի նա ճանապարհումն էր։ Զօրեղ շունը, մինը այն շներից, որ հիւսիսային Սիբիրիայի բնակիչքը լծումեն սահնակների մէջ, որ մարմնի կազմուածքովը և գունովը առաւել նման է գայլի, և ոչ մի քայլ չհեռանալով գնումէր այս փոքր կարաւանի առաջնորդի հետևից։

Աննկարելի է երևակայել առաւել գեղեցիկ բան, քան թէ այս օրիորդքը։ Նորանցից մինը ձախու ձեռքով բռնել էր թոյլ տուած սանձը, իսկ աջ ձեռքը փաթաթել էր քրոջ մէջքին, որ քնած էր ահա գլուխը դրած սորա ուսի վերայ։ Ձիու իւրաքանչիւր քայլը շարժեցնումէր այս երկու ձգական մարմինքը լի գեղեցկութենով և ճօճումէր նոցա փոքրիկ ոտքերը, որ կախած էին թամբի կողքերից կախած տախտակի վերայ, որ ծառայումէր ասպանդակի տեղ։ Այս երկուորեակ քուրերը իւրեանց մօր քնքշութենով անուանվումէին, մինը Րօզ, իսկ միւսը Բլանշ։ Նոքա որբք էին, որի մասին վկայութիւն էր տալիս նոցա կիսամաշ թուխ զգեստը։ Երկուսի հասակը միաչափ, նոքա այնպէս նման էին մինը միւսին, որ միմիայն շարունակ նոցա

հետ լինելով, կարելի էր սովորել զանազանել նորանց: Մինի պատկերը, կարող էր համարվել միւսինը. այս բոլէին նոցա զանազանութիւնը այն էր, որ Բօղը չէր քնում և կատարումէր կարգով երեցի պաշտօնը: Այս կարգը հնարել էր կարգի վերայ սիրահարված կայսերական ծեր զինուորը, օրիորդների ուղեցոյցը, աւելորդ չ՚համարելով սահմանել նոցա մէջ հպատակութիւն և երիցութեան իրաւունք: Գրէյզէ, այս անուանի պատկերահանը, կը վառվէր ոգևորութեամբ, տեսանելով այս երկու գեղեցիկ գլուխները, ծածկած սև թաւիշեայ գլխարկներով, որոնց տակերից դուրս էին թափվում գանգուրներով պարզ շագանակագոյն մազերը վզերի և ուսերի վերայ, շուք ձգելով բոլորշի, վարդագոյն և ատլասեան այտերին. մեխակի բոսորային ծաղիկը ցօղով թացացած, չէ լինում առաւել գունաւոր և մախմուրաւոր քան թէ նոցա փառաւոր շրթունքը. մանուշակի քնքոյշ կապուտակութիւնը, մոյգ կերևէր նոցա մեծ աչքերի թափանցիկ կապուտակութեան առաջևը, որոնց մէջ նկարվումէին նոցա բարքի հեզութիւնը և հասակի անմեղութիւնը. սպիտակ մաքուր ճակատը, կաթնախառն վարդագոյն քիթը, կզակի մատնեհարը, բոլորովին տալիս էին այս գեղեցիկ երեսներին հեզութեան և զմայլելի բարութեան նկարագիր: Հարկաւոր էր այլ ևս տեսանել նորանց կայծակի և առ հասարակ վատ եղանակի ժամանակ, երբ ծեր զինուորը հոգացողութենով փաթաթումէր երկուսին մի մեծ եղնի մորթուց մուշտակի մէջ, և ծածկումէր նոցա գլուխը այս ջրից աներկիւղ հանդերձի կընկուղով, այն միջոցին ոչինչ չէր կարող լինել առաւել զմայլեցուցիչ քան թէ այս երկու թարմ, ժպտացող, երեսները, որ դուրս էին նայում տխուր ծածկոցի տակից:

Բայց գիշերը պարզ էր և ջերմ, ծանր մուշտակը կախած էր երկու քուրերի ծունկերի մօտ, իսկ կընկուղը թամբի կատարքի վերայից: Բօղը աջ ձեռքը փաթաթելով քնած քրոջ մէջքին, նայումէր նորա վերայ մի անթարգմանելի, համարեա մայրական քնքշութենով. այն օրը Բօղը երէց էր, իսկ երէց քոյրը համարեա թէ մօր փոխանակ է լինում: Որբերը ո՛չ թէ միայն պաշտումէին միմիանց, այլ բաց ի դորանից, ամենայն ժամանակ ենթարկված էին մի օրինակ զգացողութենների. — հոգեբանական յայտնութիւն է, որ շատ անգամ երևումէ երկուորեակների մէջ. մինի զգալը իսկոյն ցոլանումէր միւսի կերպարանքի վերայ, մի և նոյն հանգամանքը երկուսին ևս զարհուրեցնումէր և ներկումէր երեսները ամօթով. — այսպէս համաձայն զարկումէին նոցա դեռահաս սրտերը, անմեղ ուրախութիւններ, դառը վշտեր, նոքա միասին էին զգում և բաժանորդ էին լինում միմիանց: Երեխայութեան հասակում, մի և նոյն ժամա-

նակ տկարանալով սաստիկ հիւանդութենից, ինչպէս երկու—ծաղիկներ մի ծղօտի վերայ, նոքա կորացան, գունաթափեցան և միասին վշտացան, և միասին ևս ստացան վերստին իւրեանց մաքուր և թարմ կարմրութիւնը:

Արդեօք հարկաւո՞ր էր ասել, թէ այս խորհրդական և անքակտելի կապը, որ միաւորումէր երկուորեակները, չէր կարող քակվիլ առանց մահաբեր հարուած հասուցանելու այս ողորմելիների գոյութեանը: Այսպէս թռչնիկների գեղեցիկ զոյգը, անբաժան անուանված, որ ապրումէն մինը միւսի կեանքով, տխրումէն, չարչարվումէն և մեռանումէն յուսահատութենից, երբ մարդու բարբարոսական ձեռքը բաժանումէ նորանց:

Որբերի առաջնորդը, յիսուն տարեկան մարդ, ունէր զինուորական իրան և ցոյց էր տալիս իւր մէջ Նապօլէօնեան զինուորի անմահ տիպը. . . . .

Նա հեծեալ ումբաձիգ էր Կայսերական Թիկնապահ գնդի, մականուանված Դագօբեռ: Նորա տխուր և խիստ երեսը նկարած էր շատ ճիշտ և որդխսայայտ. Թաւ և ալեխառն ընչացքը ծածկումէր բոլորովին նորա ներքևի շրթունքը, միանալով նորա լայն սպանիական մորուքի հետ որ ծածկումէր համարեա թէ ամբողջ կզակը. ներս ընկած, աղիւսագոյն և չոր ինչպէս մագաղաթ թշերը, շատ խնամով ածիլած էին: Թանձր և դեռ ևս թուխ յօնքերը ծածկումէին նորա պարզ կապտագոյն աչքերը. ոսկի օղերը հասանումէին մինչև նորա սպիտակավերջ զինուորական օձիքը. կաշեայ գօտին կապած էր նորա հաստ և մոխրագոյն մահուդի վերարկուի վերայից, իսկ կողքի հագած մոյգ կապոյտ գլխարկը, ծածկումէր նորա ճաղատ գլուխը:

Դագօբեռ, յառաջ ունելով Հերքուլէսեան ոյժ, ունելով առիւծի սիրտ—բարի, համբերող, որովհետև քաջ էր և ուժեղ, չ՛նայելով իւր դէմքի թթու գծագրութեանը, որբերի հետ վարվելու ժամանակ ցոյց էր տալիս ամենաբարակ հոգաբարձութիւն, չ՛լսուած ծառայութիւն, քնքշութիւն, որ ակամայ արժանի էր սիրելու—համարեա՛ թէ մայրական քնքշութիւն. . . այո՛ մայրական, պատճառ քաջութեան և սիրու ընդունակ են միայն մօր սիրտը և զինուորի սիրտը: Ստոյիկեան հանգստութիւնը, որ ճնշումէ ամենայն ալեկոծութիւն, անդրդուելի սառնասրտութիւնը երբէք չ՛թողեցին Դագօբեռը. Թէպէտ և նորանում չ՛կար ոչինչ ծիծաղելի բան, այսու ամենայնիւ նորա ան-այլայլելի անվեհերութիւնը ամենայն ընթացքում, հասանումէր մինչև կատարեալ կատակի (КОМИЗМЪ):

Ճ՛անապարհի վերայ ժամանակ առ ժամանակ յետ էր դառնում, որ մի փաղաքշական խօսք ասէ, կամ թէ փայփայէ սպիտակ և բարի

ձին, որ տանումէր իւր վերայ որբերը: Խորացած փոսութիւնքը և երկայն ատամները արդէն նշան էին ձիու պատուելի ծերութեանը. իսկ երկու խոր վէրքերը, մինը կողքումը իսկ միւսը կրծքումը ապացուցանումէին, որ նա պատահած էր և թունդ պատերազմերի մէջ. այս պատճառով երբեմն զգալի հպարտութենով ցնցեցնումէր իւր հին զինուորական սանձը, որի պղնձեայ պատերազմական զարդի վերայ երեւումէր դեռ ևս քանդակած արծիւը. Նորա քայլերը հաւասար էին, զգոյշ և հաստատ, բրդերը անհարթ, փորը ո՛չ շատ հաստ, փրփուրը, որ առատութենով ծածկել էր սանձը, վկայումէր ձիու առողջութեանը, որ ձիանք ստանումէն մշտական բայց չափաւոր աշխատութենից, և շարունակ ճանապարհորդութենից միջոց առ միջոց լաւ հանգստանալով: Թէպէտ և այս ձին արդէն կէս տարի էր որ ճանապարհումն էր, այսու ամենայնիւ տանումէր իւր վերայ երկու քուրերը և ծանր պայուսակը, որ կապած էր թամբի քամակից, այնպէս, ինչպէս ճանապարհորդութեան առաջին օրումը:

Եթէ մեք ամենայն մանրամասնութենով քիշեցինք երկայն ատամները, այն խոր ծերութեան անտարակոյս նշանները, պատճառն այն էր, որ նա ստէպ ցոյց էր տալիս նորան միմիայն այն խորհրդով, որ պահպանէ իւր անունի պատիւը, — նորան գանչումէին «Ուրախ» — և խաղայ իւր ընկեր շան հետ, որին երևի թէ ընդ հակառակն անուանումէին «Տխուր»: Տխուրը ամենևին յետ չ՚մնալով իւր տիրոջից գնումէր Ուրախի դնչի տակով, որ երբեմն շատ քաղաքավարութեամբ բռնումէր ատամներով նորա մէջքից, բարձրացնումէր դէպ ի վեր և տանումէր մի րոպէ ժամանակ: Շունը, պաշտպանված լինելով խիտ բրդով և երևի թէ շատ ժամանակից արդէն սովորած լինելով իւր ընկերի խաղերուն, համբերումէր Ստոյիկեան ներողամտութենով. մի միայն, եթէ խաղը երկարումէր բաւական ժամանակ, Տխուրը դարձնումէր գլուխը և սկսումէր ռռնալ. Ուրախը իսկոյն հասկանումէր բանի զօրութիւնը և շտապումէր ցած թողուլ նորան. երբեմն ևս ժամանակ անցուցանելու համար նա սկսումէր շօշափել զինուորի ճանապարհակիրը, որ, ինչպէս երևումէ, նա ևս սովորած էր այս տեսակ ուրախութեններին:

Այս մանրամասնութիւնքը կարո՛ղ են ծանօթութիւն տալ, թէ ի՛նչ համաձայնութիւն թագաւորումէր երկու քրոջ, ծեր զինուորի, ձիու և շան մէջ: Փոքրիկ կարաւանը անդադար յառաջ էր խաղում, անհամբեր ցանկանալով մինչև գիշերը հասանել Մօկկերն ագարակը, որ արդէն երևումէր հեռուից բլուրների վերայ: Դագօբերը երբեմն ուշադրութեամբ դիտումէր չորս կողմը և որպէս թէ աշխատումէր միտք բերել անցածը. Նորա երեսը փոքր առ փոքր մթնացաւ: Ոչ

հեռի ջաղացից, որի աղաղակը դարձուց Դագոբեռի ուշադրութիւնը, նա կանգնեցաւ և սկսեց ոլորել ընչացքը. այս միմիայն նշան էր նորա սաստիկ բայց ծածուկ, հոգեկան ալեկոծութեանը:

Ուրախը հետևելով իւր տիրոջ օրինակին կանգնեցաւ նոյնպէս: Բլանշը ցնցված ձիու կանգնելուց զարթեցաւ, բարձրացրեց գլուխը և առաջին հայեցուածքը քնքուշ ժպիտով բաշխեց իւր քրոջը, յետոյ երկուսը ևս մնացին զարմացած, տեսանելով, որ Դագոբեռը կանգնած էր անշարժ, երկու ձեռքերովը ընկած իւր երկայն գաւազանի վերայ և, ինչպէս երևումէր, խոցոտված ծանր բայց գաղտնի զգացմունքով.... Այն միջոցին նոքա գտնվումէին մի փոքրիկ բլրակի ստորոտում, որի վերայ ստուեր էին ձգած մի մեծ կաղնու ճիւղեր: Ռօզը, տեսանելով Դագոբեռի անշարժութիւնը և մտածմունքի մէջ ընկած լինելը, թեքվեցաւ թամբի վերայից և իւր փոքրիկ սպիտակ ձեռքովը թիկնը տուած զինուորի ուսին, որ կանգնած էր այն տեղ քամակը դարձուցած դէպ ի օրիորդքը, ասաց քնքշութենով. «ինչ պատահեց քեզ, Դագոբե՛ռ»: Ծեր զինուորը յետ դարձաւ և օրիորդքը առաւել ևս զարմացան, տեսանելով արտասուքի խոշոր կաթիլը, որ թաց գիծ քարշելով արևից այրված թշի վերայ անհետացաւ նորա թանձր ընչացքում: «Դու լալիս ե՛ս». բացագանչեցին Ռօզը և Բլանշը սրտերը սաստիկ շարժված. «աղաչումենք քեզ, ասա՛ մեզ, ինչ պատահեց քեզ»:

Րոպէական մտածողութենից յետոյ, զինուորը իւր կոշտ ձեռքովը սրբեց աչքերի արտասուքը և ցոյց տալով կաղնին, որի մօտ կանգնած էին, ասա՛ց որբերին անհաստատ ձայնով. — Ես ձեզ կը տխրեցնեմ իմ, խե՛ղճ զաւակներ... բայց ինչ որ պատմելու եմ ձեզ— սուրբ բան է: Արդէն տասն և ութ տարի է.... Լէյպցիգեան մեծ պատերազմի օրամտումը ես ձեր հօրը բերի այս ծառի մօտ: Նա սրով երկու վէրք էր ստացել գլխի վերայ և մի վէրք գնդակով ուսի վերայ... այս տեղ մեք գերի առնվեցանք... բայց ո՞վի ձեռքով, ուրացողի... այո՛ մի Ֆրանսիացու, մի վտարանդի մարկիզի, գնդապետի Ռուսաց ծառայութեան մէջ. և որ շատ ուշ... վերջապէս մի օր... դուք կ՚իմանաք ամենայն ինչ: — Յետոյ, փոքր մի լռելով, ցոյց տուեց գաւա[illegible]ը Մօկկերն ագարակը և յաւելացրեց. — Այո՛... այո՛, յիշումեմ ահա այս սարաւանդների վերայ ձեր քաջ հայրը առաջնորդումէր մեզ.... այս տեղ խորտակեց թշնամիների կիրասիրները և խլեց մի թնդանօթների շարք: Ա՛հ, իմ զաւակներ, նայէիք մի ձեր քաջ հօր վերայ, երբ նա մեր հեծեալ ամբաձիգ խումբի առաջեւից, որ լցվումէր գնդակների կարկուտով, յարձակվեցաւ թշնամու վերայ. այնպիսի քաջեր այսուհետև երևելու չեն:

Այն միջոցին, երբ Դագոբեռ այս կերպով նկարագրումէր իւր յիշատակութիւնքը և կարեկցութիւնը, որբերը ակամայ ցած իջան թամբից, ձեռք ձեռքից բռնած մօտեցան կաղնուն և ծունր դրեցին։ Յետոյ սեղմելով մին մինի թափեցին շատ արտասուք, իսկ զինուորը կանգնած քամակներում, խաչած ձեռքերով, թիկնը տուած գաւազանին խոնարհեցուց իւր բացած գլուխը նոցա վերայ։ — Հերիք է, մի՛ տխրիք. — քնքշութենով ասաց նա մի քանի ժամանակից յետոյ, տեսանելով, որ արտասուքը չէ դադարում թափվելուց Րօզի և Բլանշի կարմրացած թշերի վերայից։ — Կարելի է կը գտնենք գեներալ Սիմոնը Փարիզի մէջ. — և յաւելացրեց. — ես ձեզ կը մեկնեմ այս բոլոր բաները այսօր երեկոյ իջևանումը։ Ես գիտութեամբ սպասումէի այս օրին, որ պատմէի ձեզ շատ և շատ բաներ ձեր հօր մասին. ես ունիմ այս բանի պատճառները... պատճառ, այս օրը որպէս թէ տարեգլուխ է։ «Մեք լալիս ենք այն պատճառով, որ յիշեցինք մեր մայրը» ասաց Րօզը։ «Մեր մայրը, որին կը տեսանենք միայն երկնքումը», շարունակեց Բլանշը։ Զինուորը բարձրացրեց որբերը բռնելով նոցա ձեռքերից, նայումէր երբեմն մինի և երբեմն միւսի վերայ, ցոյց տալով մի աննկարագրելի սէր, որ առաւել սրտաշարժ էր երևում նորա դէմքի խոշոր գծագրութեան պատճառով։ — Իմ զաւակներ չէ պիտոյ անչափ վշտանալ — ասաց նա — ձեր մայրը շատ պատուական կին էր. այդ ճշմարիտ է... երբ նա բնակվումէր Լեհաստանում նորան անուանումէին «Վարսավիոյ մարգարիտ». պէտք էր նորան անուանել համաշխարհական մարգարիտ. պատճառ, բովանդակ աշխարհում չէ կարելի գտանել այնպիսի կին... ճշմարիտ... Դագոբեռի ձայնը դողդողաց. նա լռեց և իւր սովորութենով սկսեց ոլորել երկայն ու ալեխառն ընչացքը։ — Լսեցէք ինձ իմ զաւակներ — ասաց նա յաղթելով իւր ամբոխմունքին — ձեր մայրը տուեց ձեզ ամենալաւ խրատներ, այնպէս չէ՞. — «Իհարկէ ճշմարիտ է Դագոբեռ» — Բայց նա ինչ հրամայեց ձեզ մահից փոքր ինչ յառաջ։ — «Միշտ յիշել իւրեան, բայց չտխրել» — Այդ ճշմարիտ է։ — Նա ասաց մեզ, թէ Աստուած միշտ գթած է դէպ ի այն խեղճ մայրերը, որոնց զաւակները մնումեն աշխարհի երեսին. նա թոյլ կը տայ նորան լսել երկնքի բարձրութենից մեր խնդիրները», ասաց Բլանշը։ «Եւ թէ [illegible] աչք պէտք է ունենայ մեր վերայ», շարունակեց Րօզը։ Յետոյ երկու քոյր միասին ակամայ բռնելով ձեռք ձեռքից սրտաշարժ գեղեցկութենով բարձրացուցին դէպ ի երկինք իւրեանց անմեղ հայեացքը և ասացին իւրեանց հասակի յարմար զմայլեցուցիչ հաւատով» Այնպէս չէ՞ մայր, դու տեսանումես և լսումես մեզ» — Ձեր մայրը լսումէ և տեսանումէ ձեզ — ասաց Դագոբեռ սիրտը լցուած. — ուրեմն մի՛

տրտմեցուցանէք նորան ձեր վշտով... Նա արգելեց ձեզ տխրիլ: Ճշմարիտ է քո ասածը, Դագոբեռ, այսուհետև չենք տխրելու» և որբերը սրբեցին գլորվող արտասուքը:

Դագոբեռը թէ և շատ Աստուածապաշտ մարդ չէր....... բայց պատվումէր ամենայն հաւատաւորութիւն: Ներկայ լինելով քառասուն տարվայ միջոցում այնքան զարհուրելի և փառահեղ տեսարանների, նա այնքան երես առ երես պատահած էր մահին, որ հաւատաւորութեան բնական ազդեցութիւնը, որ սեպհական է ամենայն հասարակ և սուրբ հոգիների մեծ ազդեցութիւն ունէր նորա սրտի վերայ: Այսպէս և այժմ, թէպէտ և չէր կարող բաժանորդ լինել երկու որբերի մխիթարական մտածողութեանցը, բայց յանցանք էր համարում աւերել նորան: Նկատելով, որ նոքա հանգստացան մի փոքր, ասաց. — ահա այդպէս լաւ է իմ զաւակներ: Ինձ առաւել ախորժ է երբ դուք խօսումէք միմիանց հետ, բարակ ծիծաղելով, ինչպէս երէկ և այսօր առաւօտ... դուք այնպէս զբաղած էիք ձեր խօսակցութեննով, որ չէիք պատասխանում իմ հարցմունքներին: Այո՛, այո տիրուհիք, ահա երկու օրէ արդէն, որ դուք պարապած էք ինչպէս երևումէ մեծ գործերով.. բայց առաւել լաւ, եթէ այդ պարապեցուցանումէ ձեզ: Երկու քոյր ևս կարմրատակեցին, թեթև ժպտացին, որ մեծ հակադրութիւն էր արտասուքի, որ դեռ ևս շուռ էր գալիս աչքերումը. և Ռօզը ասաց զինուորին փոքր մի ամբոխված. «ո՛չ Դագոբեռ, հաւատացնումեմ քեզ, մեք խօսումենք այնպէս, դատարկ բաների վերայ: — Լաւ է, լաւ է, ես չեմ ցանկանում ոչինչ բան իմանալ... այժմ հանգստացէք մի փոքր, այնուհետև դարձեալ դէպ ի ճանապարհ. արդէն ուշ է, բայց մեզ հարկաւոր է դեռ ևս հասանել Մօկկերն ագարակը քանի որ լոյս է, որպէս զի էգուց փոքր ինչ կանուխ ճանապարհ ընկնենք: «Բայց դեռ ևս շա՞տ ճանապարհ կայ մինչև Փարիզ» հարց արեց Ռօզը: — Այո՛, իմ զաւակներ, դեռ ևս հարիւր իջևան կայ անցանելու... մեք թէպէտ և ո՛չ շուտ, բայց այսու ամենայնիւ յառաջ ենք խաղում. բայց դորա փոխանակ ճանապարհորդութիւնը դիւրագին է նստում մեզ, իսկ մեր գրպանումը չ՛կայ շատ փողի պաշար: Իջևանումը ձեզ սենեակ, ինձ Ցխուրի հետ մի կտոր յարդ և վերմակ, իսկ ծեր Ռութախին տակը փռելու թարմ խոտ. այս է մեր բոլոր ճանապարհորդութեան ծախսը: Կերակրի համար խօսել ևս չէ հարկաւոր. ձեր երկուսին չէ պիտոյ առաւել, քան թէ մի մկան, իսկ ես Եգիպտոսում և Սպանիայում սովորել եմ այն ժամանակ զգալ քաղցածութիւն երբ թոյլ են տալիս հանգամանքները: «Դու չ՛ասացիր դեռ ևս, ճանապարհումը դու ինքդ ես կատարում մի քանի տնտեսական պիտոյք, որպէս զի առաւել ևս պահպանես մեր արծաթը.......

և մինչև անգամ չես ներում մեզ օգնել քեզ։ Վերջապէս, բարի Դագոբեռ, երբ մտածումենք, որ ամենայն երեկոյ դու ինքդ ես լուանում կտաւիքը իջևաններումը... որպէս թէ մեզ անպատշաճ էր...— Ձեզ — ընդհատեց զինուորը Բլանշի խօսքը. չէ՞ք մտածում արդեօք, որ թոյլ տայի ձեզ օճառոտ ջրի մէջ խանգարել ձեր գեղեցիկ ձեռքերը։ Եւ ի՞նչ զարմանալի բան է, որ զինուորը սովորի կտաւիք լուանալ... ես, զոր օրինակ պատերազմի ժամանակ, ամենալաւ լուացարար էի ամբողջ խմբի մէջ։ Բայց ինչպէս արդկումեմ... չպարծենալով ասումեմ։ «Գեղեցիկ, ճշմարիտ գեղեցիկ. միայն երբեմն այրումես». յաւելացրեց Րօզը ժպտելով։

— Երբ արդուկը չափազանց տաք է, այդ ճշմարիտ է... ո՞վ է իմանում... ինչքան չեմ բռնում երեսխ ամենևին չեմ զգում աւելորդ ջերմութիւն, իմ կաշին այնքան կոշտացել է, — ասաց Դագոբեռ իւր սովորական կերպով։ «Մեք կատակ ենք առնում, բարի Դագոբեռ». — ուրեմն իմ զաւակներ, եթէ դուք տեսանումէք որ լաւ եմ կատարում լուացարարի պաշտօնը, թողեցէք ինձ և ձեր կտաւիքը լուանալ, այդ առաւել դիւրագին կը լինի, իսկ ճանապարհի վերայ և ամենափոքր տնտեսութիւնը չէ պիտոյ արհամարհել, մանաւանդ այնպիսի աղքատ մարդերի ինչպէս մեք. մեզ հարկաւոր է գոնէ այնքան արծաթ, որով կարողանայինք հասանել մինչև Փարիզ... բայց այն տեղ աստուծով կ'օգնեն մեզ թղթերը և մեդալիօնը, որ պահումեք ձեզ մօտ... «Այդ մեդալիօնը սուրբ բան է մեր համար. մեր մայրը մեռանելով յանձնեց նորան մեզ»։ — Ես այդ պատճառով ասումեմ, որ չ'կորուսանէք. ստէպ ստէպ նայեցէք ձեր մօ՞տ է արդեօք։ «Ահա նա» ասաց Բլանշը հանելով կրծքից փոքրիկ Բրօնզեայ մեդալիօնը, որ նոյնպիսի շղթայով կախած էր վզից։ Մեդալիօնի երկու կողմումը գրած էր հետևեալ մակագիրը։

Victime
de
L. C. D. J·
Priez pour moi.
—
Paris.
Le 13 Février 1682.

Նուէր.
L. C. D. J:
Աղօթեցէք իմ համար։
—
Փարիզ
Փետրուարի 13· 1682 թ.

A Paris
Rue Saint François, № 3.
Dans un siècle et demi
Vous serez
Le Février 13, 1832.
—
Priez pour moi,

Փարիզի մէջ.
Սուրբ Ֆրանսիսկոսի փողոցում № 3։
Մին ու կէս դարուց յետոյ
Դուք կը լինէք
Փետրուարի 13· 1832 թ.
Աղօթեցէք իմ համար։

«Ի՞նչ են նշանակում այս խօսքերը Դագոբեռ», հարցարեց Բլանշը, քննող աչքով նայելով այս տխուր մակագրին. «մայրերս ժամանակ չ՚գտաւ մեկնել մեզ նորանց»: — Այդ մասին մեք կըխօսինք այս երեկոյ իջևանումը — պատասխանեց Դագոբեռ: — Արդէն օրը ուշանում է, ժամանակ է ճանապարհ ընկնել. պահեցէք լաւ այդ մեդալիօնը ու ընկնենք ճանապարհ, մեզ դեռ ևս մի ժամի ճանապարհ կայ մինչև իջևանը: Հապա խնդրեմ զաւակներս մի անգամ ևս նայենք այս բլրին, ուր ընկաւ ձեր քաջ հայրը և նստեցէք ձիու վերայ: — Որբերը վերջին անգամ յարգանքով նայեցան այն տեղի վերայ, որ իւրեանց առաջնորդի մեջ ծնուցել էր այնպիսի տխուր յիշատակութիւն և նստեցան Ռւրախի վերայ Դագոբեռի օգնութենով: Այս աղնիւ կենդանին և մի բոպէ չէր հեռացել նորանցից. այլ ծեր ծառայողի նախատեսութեամբ, օգուտ քաղելով յաջող ժամանակից, ուտում էր Թարմ և հիւթաւոր խոտը. իսկ Տխուրը, հանգիստ երկարացած մարգի վերայ և գունչը կոխած առաջևի երկու Թաթերի մեջ, նայում էր նորա վերայ նախանձելով:

Իսկոյն, երբ ճանապարհ ընկնելու առաջին նշանը տուած էր Դագոբեռ, շունը անցաւ իւր տեղը տիրոջ քամակումը: Դագոբեռը, քշքշելով մարգը իւր երկայն գաւազանով, զգուշութեամբ առաջնորդում էր ձիուն սանձից բռնած. պատճառ, մարգը քանի գնում էր դառնում էր ճախճային: Մի քանի քայլ անցած, նա հարկադրվեցաւ դարձնել դէպ ի ձախ դէպ ի մեծ ճանապարհը:

Դագոբեռ Մօկկերն հասած, հարց արեց, Թէ ո՞ւր է առաւել առատ պանդոկը. Նորան պատասխանեցին Թէ միայն մի պանդոկ կայ այն տեղ, «Սպիտակ Բաղէ» անունով:

«Ուրեմն գնանք Սպիտակ բաղէի պանդոկը» ասաց Դագոբեռը:

III.

ՀԱՍՆԵԼԸ:

Մօրօկը — գաղաններ զսպողը, արդէն շատ անգամ անհամբերաբար բացել էր պաշտպանարանը գոտիկոնի պատուհանի, որ նայում էր դէպ ի Սպիտակ Բաղէի պանդոկի գաւիԹը, երկիւղ կրելով, որ աչքից չ՚փախցնէ երկու որբերի և զինուորի գալուստը: Զ՚տեսանելով նորանց, նա դարձեալ սկսում էր ճեմել դանդաղ քայլերով ձեռքերը կրծքին խաչած և գլուխը կախած. նա հնար էր որոնում իրագործելու իւր մտածած գաղափարը, այս բանի մասին մտածու-

թիւնը երևի թէ շատ ճնշումէր նորա հոգին. պատճառ, նորա երեսը առաւել թթու էր քան թէ սովորականը:

Չ'նայելով նորա գաղանական դէմքին, այս մարդը զրկված չէր մի քանի մտաւորական ընդունակութիւններից. նորա աներկիւղութիւնը, որ ցոյց էր տալիս գաղանների կառավարութեան մէջ, և որ յաջող խաբեբայութեան թելադրութենով վերագրումէր իւր նոր, քրիստոնէական կրօնը ընդունելուն. նորա բանախօսութիւնքը երբեմն մտացի և մեծաշուք, խիստ երեսպաշտութիւնը տուել էին նորան մի ազդեցութիւն հասարակ ժողովրդի վերայ այն տեղերին, ուր գնումէր նա թափառելու ժամանակ:

Ո՛չ ոք չէր հաւատալու, թէ Մօրօկ ծանօթացել էր վայրենի գազանների բարքերին դեռ ևս շատ յառաջ, քան թէ քրիստոնեայ դառնալը.... ճշմարիտ որ, ծնած լինելով հիւսիսային Սիբիրիայում, դեռ մանկութեան ժամանակներից նա շատ համարձակ որսորդներից մինն էր. յետոյ 1810 թուականին թողնելով այս արհեստը, մի ռուս երկրաչափի մօտ ձիավար դարձած, որին յանձնած էր քննել բևեռային կողմերը, գնաց նորա հետ միասին Պետերբուրգ: Այն տեղ Մօրօկ բաղդի զանազան յեղափոխութենից յետոյ մտաւ սուրհանդակների կարգը, որոնք դիւրաբեկ սահնակների վերայ նստած տանումէն լայնատարած տէրութեան ամենայն կողմ... հրամաններ, սկսուած Պարսից սահմաններից մինչև սառուցեալ ծովի եզերքը: Այսպիսի մարդերի համար, որ տիւ և գիշեր վազումէն փայլակի շուտութենով չ'կայ, ո՛չ տարու եղանակ, ո՛չ արգելք, ո՛չ վաստակիլ և ո՛չ վտանգ. նոքա նետվումէն իբրև աղեղի սլաք, և պիտոյ է կամ նպատակին հասանեն կամ չքանան: Սորանից պիտոյ է հասկանալ, թէ ի՛նչ վըստահութիւն, ամրութիւն պիտի ունենան այսպիսի կեանք վարող մարդիկը. և ի՛նչ աստիճան յանձնուած պիտոյ է լինին իւրեանց ճակատագրին:

Այժմ հարկաւոր չէ պատմել, թէ ի՛նչ զարմանալի հանգամանքների պատճառներով թողեց նա այս դժուար պաշտօնը, մտաւ Ֆրէյբուրգեան վանքը և յետոյ, ընդունելով Քրիստոնէայ հաւատը, սկսեց իւր շրջագայութիւնը իւրեան գազանանոցով, որ գտաւ յայտնի չէ թէ ո՞ր տեղից.... Մօրօկը շարունակումէր իւր ճեմելը դստիկոնում: Գիշերը արդէն կոխեց: Երեք անձինքը, որոնց այսպէս անհամբեր սպասումէր, դեռ չ'երևեցան: Նորա գնացքը այնուհետև առաւել և առաւել սկսեցին լինել անհաւասար, ամբոխված և ցնցողական: Յանկարծ նա կանգնեցաւ, գլուխը խոնարհեցուցած դէպ ի պատուհանի կողմը, սկսեց ականջ դնել: Նորա լռութիւնը բարակ էր ինչպէս վայրենու լռութիւն: «Ահա՛ նոքա» բացագանչեց նա, և

Նորա վայրենի աչքերը փայլատակեցան դժոխական ուրախութենով. Նա լսեց մարդու ոտքի, յետոյ ձիու ոտքի ձայն։ Մօտեցան դստիկոնի պատուհանին, նա զգուշութեամբ բացեց պաշտպանարանը և տեսաւ, որ պանդոկի գաւիթը մտան երկու մատաղահաս օրիորդք նստած ձիու վերայ և մի ծեր զինուոր նոցա առաջնորդը։

Միգապատ գիշերը վերայ հասաւ. երկինքը ծածկվեցաւ թանձր ամպերով, սաստիկ քամին փչումէր լապտերների վերայ, որոնց լուսովը ներս էին ընդունում նոր եկողները։ Նշանները, որոնց մասին ծանօթութիւն էին տուած Մօրօկին այնպէս ուղիղ էր, որ նա ոչինչ կերպով չէր կարող չճանաչել նորանց։ Հաւաստած, թէ զօհերը ընկած էին իւր իշխանութեան տակ, փակեց պատուհանը։ Մտածելով դեռ ևս մի քառորդ ժամ, երևի այն մասին, որ կարգի դնէ իւր ձեռերը, նա խոնարհեցաւ յետոյ դէպ ի դռնակը, դէպ ի որը սանդուղք էր դրած և գանչեց, «Գօլիաթ». — Ի՞նչ կը հրամայէք իմ տէր — պատասխանեց մի կերկերեալ ձայն։ «Ե՛կ այս տեղ» — Գալիս եմ. . . ես ահա այս րոպէին գալիս եմ սպանդարանից և բերումեմ միս։ — Սանդուղքի աստիճանքը ձայներ հանեցին և շուտով ահա մի ահագին գլուխ երևեցաւ յատակին հետ հաւասար։ Մարդը, որ ստացել էր իւրեան յարմար անուն «Գօլիաթ» (նորա հասակի բարձրութիւնը էր վեց ոտնաչափ, և թիկնաւէտ ինչպէս Հերքուլէս.), ունէր մի զզուելի կերպարանք։ Նորա շիլ աչքերը ներս ընկած էին նեղ և դուրս ընկած ճակատի տակ. Նորա գլխի և մօրուքի մազերը չէկ, թանձր և խոզի մազի նման տալիս էին նորա երեսին անասնական — վայրենի գծագրութիւն։ Իւր լայն ծնօտների մէջ, որ զրահաւորված էին խոզի ժանիքների շատ նման ատամներով, նա բռնել էր հում մի կտոր, տասն կամ տասն երկու ֆունտ։ Նա առաւել յարմար էր համարում այս կերպով տանել միսը, որովհետև կարողանումէր ձեռքերովը բռնել սանդուղքից, որ ծալվում էր նորա տակում։ Վերջապէս այս ահագին մարմինը դուրս եկաւ միանգամայն դռնակից. Նայելով նորա վզին, որ նման էր եզնի վզի, նորա թիկունքի և կուրծքի զարմանալի լայնութեանը, ձեռքի ու ոտքի հաստութեանը, դժուար չէր հասկանալ, որ այս հսկայն առանց ամենայնի իւր անձնը վտանգելու կարող էր իւր ոյժը չափել արջի ուժի հետ։ Նա հագած էր հին մոյգ կապոյտ կարմիր խազերով վարտիկ, ներսի կողմից պատած ոչխարի մորթով և մի կարճ զգեստ կամ լաւ ասել զրահ ամենահաստ կաշուց, որ տեղ տեղ ճանկված էր գազանների սուր ճանկերով։ Վեր ելանելով բոլորովին դստիկոնը, Գօլիաթը հեռացուց մինը միւսից իւր ծնօտները և բերանը բանալով ձգեց յատակի վերայ միսը, որ համարեա թէ քառորդ եզն էր, յետոյ որկրամոլի բերկրութենով լիզեց իւր արիւնոտ ընչացքը։

Այս պլանդակ մարդը, այլ խաղարկուների նման, սկսեց նորանով, որ արծաթ ստանալու համար բազմութեան առաջև հում միս էր ուտում. յետոյ սովորելով այս վայրենական կերակրին և միաւորելով իւր օգուտը ճաշակի զուարճութեան հետ նա միշտ սկսանումէր Մօրօկի բոլոր խաղարկութիւնքը, ուտելով խառնիճաղանճի առաջև մի քանի ֆունտ հում միս։ — Մահի և իմ բաժինը մնացին այն տեղ ցածումը, բայց այս ահա Կայէնի և Յուդայի համար — ասաց Գոլիաթ ցոյց տալով մսի վերայ — ո՞ւր է կտրիչը... պիտոյ է երկու բաժանել այս, հաւասարաչափ, առանց զրկողութեան... մարդ թէ գազան բոլորը մին է... յետ քարշելով հանդերձի թևը, նա մերկացուց իւր, ինչպէս գայլի մորթի, բրդոտ ձեռքը ծածկած մատնաչափ երակներով։

— Բայց ո՞ւր է, իմ Տէր, կտրիչը — հարց արեց նա որոնելով աչքերով։ Գէտը, առանց պատասխանելու այս հարցմունքին, ինքը մի քանի հարցմունք արեց իւր օգնականին։ «Դու ցածո՞ւմը էիր երբ նոր ճանապարհորդքը մտան պանդոկ»։ — Այո՛ իմ տէ՛ր, ես այն միջոցին տուն էի գալիս սպանդարանից։ — «Ի՞նչ մարդիկ են»։ — Երկու աղջկերք նստած սպիտակ ձիու վերայ և նորանց յետ մի մեծ ընչացքով ծերունի... բայց ո՞ւր է կտրիչը... գազանները սաստիկ սոված են, ես ևս նոյնպէս... ո՞ւր է կտրիչը.... «Գիտե՞ս արդեօք ո՞ւր իջևանեցուցին այս ճանապարհորդքը» — Պանդոկատէրը աղջկերքին և ծերունուն տարաւ այն կողմ միւս գաւիթը, դէպ ի այն բնակարանը, որի պատուհանքը դուրս են նայում դէպ ի դաշտ։ Բայց իմ տէր... բայց ո՞ւր է...։ Սարսափելի մունչիւնը դղրդեց դստիկոնը և ընդհատեց Գոլիաթի խօսքերը։

— Լսո՞ւմէք — գանչեց նա — գազանքը կատաղումեն քաղցածութենից։ Եթէ ես կարողանայի, ես ևս կը մռնչէի։ Ես երբէք Կայենը և Յուդային տեսած չէի այնպիսի դրութեան մէջ ինչպէս այս երեկոյ. Նոքա այնպէս ոստնումեն վանդակների մէջ, կարելի է որ խորտակեն ևս նորանց... իսկ Մահի աչքերը առաւել լուսափայլ են, քան թէ երբէք եղած էին, համարեա թէ երկու ճրագ... խեղճ Մահ։ Մօրօկը ուշ չ՚դարձուցանելով Գոլիաթի խօսքերին շարունակեց հարցանել։ «Ուրեմն աղջկերքին տեղաւորեցին քամակի գաւթումը բնակարանի մէջ» — Այո՛, այո՛, բայց սատանայի սիրուն թող լինի տուեցէք կտրիչը։ Այն ժամանակից, երբ գնացած էր Կարոլոսը, միայն ինձ վերայ է ամենայն բանի կառավարութիւնը, և այս բանը արգելք է լինում մեզ կերակուր ուտել իւր ժամանակին։ «Բայց ծերը մնաց աղջկերքի հետ», հարց արեց Մօրօկ։

Գոլիաթը զարմացած նորանով, որ իւր տէրը առանց նայելու-

ստիպողական խօսքերին չէ ևս մտածում անգամ գազանների ընթրիքի մասին, Նայումէր Գէտի վերայ առաւել և առաւել զարմանալով: «Պատասխանի՛ր անասուն...

— Եթէ ես անասուն եմ, և իմ ոյժը հաւասար է մի բարի անասունի ուժի — գանչեց գոլիաթը բարկացած — և անասուն անասունի առաջև, ես ո՛չ միշտ տեղիք կը տամ: «Ես հարցանումեմ քեզ, ծերունին մնա՞ց աղջկերքի մօտ, թէ ո՛չ.» կրկնեց Մօրօկը: — Ո՛չ — պատասխանեց հսկայն — ծերունին, իւր ձին ձիանոց տանելուց յետոյ, խնդրեց տաշտ և ջուր, յետոյ տեղաւորված սիւնի մօտ, լապտերի լուսովը, սկսեց կտաւիք լուանալ. արդէն սպիտակ է ընչացքը բայց լուացք է անում իբրև լուացարար: Այդ մի և նոյն է եթէ ես սկսանէի ծտեր կերակրել կորեկով, յաւելացրեց Գոլիաթը արհամարհանքով թիկունքը վեր քարշած: Այժմ ես պատասխանեցի ձեր հարցմունքներին իմ տէր, ուրեմն թոյլ տուեցէք ինձ գազաններին ընթրիք պատրաստելով պարապիլ: — Յետոյ աչքերովը որպէս թէ մի բան որոնելով յաւելացրեց — ո՞ւր է ընկել մեր կտրիչը:

Գէտը, րոպէական մտածողութենից յետոյ, ասաց Գոլիաթին. «Այս երեկոյ դու մի՛ կերակրիր գազանները»: Գոլիաթը սկզբումը չ՚հասկացաւ. այնքան անհասկանալի էր նորան այս հրամանը: — Ի՞նչ էք հրամայում իմ տէր, — ասաց նա: «Ես չեմ հրամայում քեզ կերակրել այս երեկոյ գազանները»: Գոլիաթը չ՚պատասխանեց. Նա տնկեց իւր շիլ աչքերը ձեռքերը կապեց կուրծքին, և յետ գնաց երկու քայլ: «Հասկանո՞ւմ ես իմ ասածը», ասաց Մօրօկ անհամբերութեամբ. «կարծես պարզ եմ խօսում»: — Չուտե՞լ. երբ միսը բերված էր, երբ մեք և առանց դորան երեք ժամով ահա ուշացած էինք ընթրիք ուտելու... գանչեց Գոլիաթը առաւել և առաւել զարմանալով: «Հնազանդվի՛ր և լռի՛ր»: — Ուրեմն դուք կամենումէք, որ այս օր մի անբաղդութիւն պատահի: Գազանները քաղցածութենից կը սկսեն չարանալ, ես ևս նոյնպէս: «Առաւել լաւ» — Կը կատաղին: «Առաւել լաւ: — Ի՞նչպէս առաւել լաւ... բայց... «Լռի՛ր»: Բայց սատանայն առնու, ես ևս նորանցից պակաս սոված չեմ: «Կե՛ր. ո՞վ է քեզ արգելում. քո ընթրիքը պատրաստէ, դու ուտումես հում միս»: — Ես երբէք չեմ ուտում առանց գազաններին, որպէս և նոքա առանց ինձ: «Քեզ ասումեն թշուառական, որ թէ համարձակուիս կերակուր տալ գազաններին ես այն րոպէին դուրս կը վարեմ քեզ»:

Գոլիաթը արձակեց մի խուլ մռնչիւն, կերկերեալ, իբրև արջի մռնչիւն, աչքերը տնկելով Գէտի վերայ, ցոյց տալով բարկութիւն և ամենամեծ զարմանք: Մօրօկը, տալով այս հրամանը, սկսեց ճեմել զատիկոնի մէջ ուղիղ և խոտորնակի, և ըստ երևութին մտածելով

մի բանի վերայ։ Ցետոյ դառնալով դէպ ի Գոլիաթը, որ չէր կարողանում դեռ ևս ուշը վերայ բերել իւր զարմանալուց, ասաց. «մտքումդ է քաղաքապետի տունը, որին գնացի ես այն երեկոյ իմ Թոյլտուութիւնը յայտնելու. դեռ ևս նորա կինը գնեց ինձանից մանր գրեանք և օրշնարաններ» — Մտքումս է — կոշտ պատասխանեց Հսկայն։ «Գնա՛ այն տեղ և հարցուր աղախնից, կարո՞ղ եմ արդեօք էգուց շատ կանուխ, անտարակոյս տանը գտանել քաղաքապետը» — Ի՞նչի համար։ «կարելի է ինձ հարկաւոր լինի խօսել նորա հետ մի շատ մեծ գործի մասին. բայց նախատեսութեան պատճառով ասա՛ նորան, թէ ես խընդրումեմ նորանից տընից դուրս չ՚գնալ ինձ չ՚տեսած։ — Բարի է... բայց գազանները... չէ՞ կարելի արդեօք կերակրել նորանց քաղաքապետին գնալուց յառաջ... մի միայն Եավայեան Ինձը... նա ողջից առաւել սոված է. Թոյլ կը տաս իմ տէր... մի միայն Մահը։ Ես մի փոքր բան կը դնեմ բերանս. միայն թէ նա ուտէ։ Մեք կայէնի և Ցուգայի հետ կը համբերենք։ «Մանաւանդ ընձին չ՚համարձակուիս կերակուր տալու... այո՛ նորան... առաւել փոքր քան թէ միւսեսին։ — Սատանայի եղջիւրներ — գանչեց Գոլիաթը — այսօր ի՞նչ պատահեց ձեզ, ես խելք չեմ հասուցանում։ Ափսոս, որ կարոլոսը այս տեղ չէ, նա այնպէս խորամանգ է, որ իսկոյն կը մեկնէր ինձ, թէ ինչի համար արգելումէք կերակրել սոված գազանները։ «Քեզ հարկաւոր չէ և հասկանալ» — Ի՞նչ է, կարոլոսը դեռ ևս շուտով չի վերադառնայ։ «Նա արդէն վերադարձաւ» — Ո՞ւր է ապա. — «Դարձեալ գնաց»։ — Ի՞նչ բաներ են լինում մեզանում. այս տեղ մի գաղտնի բան կայ... կարոլոսը գնացել էր. վերադառնումէ և դարձեալ գնումէ... «Բանը կարոլոսի վերայ չէ այլ քո վերայ. դու օրկրամոլ ես ինչպէս գայլ, բայց դորա փոխանակ աղուէսի նման խորամանգ, և երբ կամենումես յետ չես մնում և կարոլոսից»։ Եւ Մորոկ փաղաքշելով թափեց հսկայի ուսերը, փոխելով յանկարծ իւր ձայնը և երեսի կերպարանքը։ — Ես խորամանգ եմ։ «Եւ ահա՛ դորա ապացոյցը. այս գիշեր կարելի է ստանալ տասն ֆլորին և դու անպատճառ խորամանգութիւն գործ կը դնես նորանց ստանալու համար։ — Բայց ինչ հարկաւոր է անել, որ ստացվի այդ տասն ֆլորինը։ «Կ՚իմանաս»։ — Դժուա՛ր բան է։ «Կ՚իմանաս. գնա՛ յառաջ քաղաքապետին, բայց գնալու ժամանակ մի մոռանար կրակ վառել հնոցում» ասաց Մորոկը, մատով ցոյց տալով հնոցը։ — Շատ բարի իմ տէր... — պատասխանեց հսկայն, ընթրիքը ուշացածից մի փոքր մխիթարվելով տասն ֆլորինը ստանալու յուսովը։ «Հնոցի մէջ դիր այդ պողպատեայ թոռագուռը, որ մինչև ի կարմրիլ ջերմանայ» յաւելացրեց Գէտը։ — Շատ բարի իմ տէր։ «Թոռագուռը հնոցը դրած, գնա

քաղաքապետին, բայց երբ կը վերադառնաս, սպասիր ինձ այս տեղ»։— Շատ բարի իմ տէր։

Մօրօկը կամենումէր արդէն գնալ. բայց յանկարծ կանգնեցաւ և հարց արեց. «դու ասումես, որ ծերունին լուացք է առնում դաւթումը» — Այո՛ իմ տէր։ — «Նայի՛ր չմոռանաս ինչ որ հրամայեցի. պորպատեայ Թռւագուաը դի՛ր կրակը, գնա քաղաքապետին, և յետոյ սպասիր այս տեղ իմ հրամաններին»։

Գէտը, այս ասած, ցած իջաւ դռնակից սանդուղքներով և ծածկվեցաւ։

IV.

ՄՕՐՕԿԸ ԵՒ ԴԱԳՈԲԵՐԸ։

Գուլիամթը չէր սխալված... Ճշմարիտ որ Դագոբեռը կտաւից էր լուանում իւր սովորական կերպով։ Տեղեակ լինելով զինուորի կեանքին, որ ունի նա պատերազմի ժամանակ, չէ կարելի զարմանալ և այս ստոր երևեցած բնաւորութեանը. բաց ի սորանից Դագոբեռ հոգաբարձու էր մի միայն այն բանին, որ ինչքան կարելի է պահպանէ որբերի փոքրիկ արծաթը և ազատէ նորանց ամենայն տեսակ աշխատութենից և հոգսից. այս պատճառով ամենայն երեկոյ իջևաններումը ինքը կատարումէր շատ կանացի պաշտօններ։ Բայց առաջին անգամը չէր, որ պարապումէր նա այսպիսի գործերով. պատերազմի ժամանակներում շատ անգամ ճարտարութեամբ նորոգումէր զանազան վնասուածներ, որ հանդիպումէն զինուորական հագուստներին պատերազմի օրումը. հերիք չէ, որ զինուորը տանումէ սուրի հարուածին, նա պիտոյ է նորոգէ և իւր նշանազգեստը. պատճառ որ սուրը վնասելով կաշուն ճեղքումէ և նշանազգեստը, որ չէր պատկանում։ Այս պատճառով, ջերմ պատերազմի երկրորդ օրը, լաւ զինուորները (որ միշտ որոշված են իւրեանց պատերազմական զգեստի գեղեցկութեամբը) հանումէն պարկից փոքրիկ կապոցը, ուր պահվումէին ասեղներ, դերձաններ, մկրատներ, կոճակներ և այլ սոցա նման մանր մունր բաներ և սկսումէն նորոգել որպէս շատ հոգածու կին։

Այս տեղ յարմար է ասել, թէ ինչ պատճառով Ֆրանսուա Բօդուէնին (որբերի առաջնորդին) տուել էին «Դագոբեռ» մականունը երբ նա էր կայսերական թիկնապահի ամենալաւ և քաջ հեծեալ ումբաձիգ զինուորի մինը։

Ամբողջ օրը շարունակվեցաւ սաստիկ պատերազմը, բայց յաղթութիւնը մնաց առանց վճռվելու... Երեկոյեան այն խումբը, որի մէջ գտանվումէր մեր կտրիճը հրաման ստացաւ, որ պահէ թողված

աւանի աւերակները. պահապանները դրված էին. հեծեալների կէսը մնացին ձիու վերայ, իսկ միւս կէսը հրամայվեցաւ փոքր ինչ հանգստանալ կապելով ձիերը մի տեղ: Բօղուէնը պատերազմեցաւ քաջութեամբ և այս անգամ չէր ստացել և մի վէրք ևս. պատճառ որ նա և հաշիւ անգամ չէր ձգում այն խոր քերթուածը, որ հասուցել էր նորան մի զինուոր անյաջողակ կերպով ցածից վեր խփելով սլաքը բարձումը — Աւաղա՛կ իմ նոր վարտիկը... բացագանչեց ռմբաձիգը, նկատելով, որ իւր բարձի վերայ բացվել էր ահագին պատառուած. նա վրէժը հանեց վերևից ցած խփելով իւր սրովը այնպէս ճարտարութեամբ, որ շամփրեց Աւստրիացուն: Նա Ստոյիկեան սառնասրտութեամբ նայումէր թեթև վէրքի վերայ բայց չէր կարող համբերաբար տանել կործանիչ վնասին, որ հասած էր իւր նշանազգեստի վարտիկին. վասնորոյ նոյն երեկոյեանը, բանակումը կամեցաւ դարման տանել այս բանին. հանելով պարկից իւր կապոցը և ընտրելով ամենալաւ ասեղը, հագաւ մատնոցը մատը, սկսեց դերձակութիւն առնել խարուկի լուսով: Յառաջ հանեց նա իւր ահագին կօշիկները, յետոյ պիտոյ է խոստովանել և վարտիկը, շրջեց նորան, որ կարկատած տեղը այնքան յայտնի չ՛լինի:

Այսպիսի կիսամերկութիւնը, մասնաւորապէս մեղանչումէր ընդդէմ կարգի կանոններին, բայց կապիտանը, որ ման էր՛ գալիս, չ՛կարողացաւ ծիծաղը բռնել, տեսանելով, որ ծեր զինուորը փառաւոր նստած, ահագին գլխարկը գլխին, պաշտօնական նշանազգեստով, կօշիկները դրած մօտումը իսկ վարտիկը ծունկերի վերայ, կարումէր հանգիստ, ինչպէս դերձակը իւր սեղանի վերայ: Յանկարծ լսւեցան հրաձանից նետելու ձայներ և պահապանքը յետ քարշվեցան դէպ ի գլխաւոր պահպանարանը գանչելով «Վեր առէք հրացաններդ»: Մի րոպէում ռմբաձիգները նստան ձիերի վերայ. անբաղդ կարկատողը առաջին կարգի գլխաւորն էր. ժամանակ չունենալով շրջել իւր վարտիկը, նա հագաւ նորան ինչպէս և իցէ խոտորնակի առանց այս և այն կողմը ընկնելու, առանց կօշիկներին այնպէս բոկիկ թռաւ ձիու վերայ:

Թշնամիների գունդը, օգուտ քաղելով փոքրիկ անտառի մօտ լինելուց, կամենումէր յանկարծ յարձակվել խումբի վերայ, որ բռնել էր աւանը. պատերազմը արիւնահեղ եղաւ: Մեր կորիճը բարկութենից ինքը իւրեան չ՛գիտէր, նորա աչքումը շատ բան էին արժում նորա մանր մունր կայքը. այն օրը նորա համար մի ճակատագրական օր էր. վարտիկը պատառուած, կօշիկները կորած, բայց դորա փոխանակ երբէք նա այնպիսի կատաղութենով չէր կոտորած ինչպէս այն օրը: Լուսինը պայծառ լուսաւորումէր պատերազմի ասպարէզը և այս պատճառով ամբողջ խումբը վկայ էր փառաւոր քաջութեան

ումբաձգին, որ սպանելով երկու դիմամարտները իւր ձեռքով գերի բռնեց օֆիցերը:

Ֆրանսիացոց խումբը պահեց իւր տեղը: Այս պատերազմից յետոյ կապիտանը կանգնեցրեց իւր զինուորները պատերազմական կարգով նորանց շնորհակալ լինելու մտքով, և հրամայեց կարկատողին դուրս գալ կարգերի միջից կամելով գովել նորան, նորա գեղեցիկ քաջութենների համար: Մեր կտրիճը ուրախութեամբ կը կառավարվէր և առանց այս իւր քաջութեան գովասանքին, բայց պիտոյ էր հնազանդվիլ:

Կարելի է երևակայել, թէ ինչպէս զարմացան կապիտանը և նորա ստորադրեալքը երբ այս բարձրահասակ փառահեղ իրանով երևտասարդը, դուրս եկաւ ձիով, կոխած ասպանդակների վերայ բոկիկ ոտքերով. կապիտանը սաստիկ զարմացած, մօտեցաւ նորան և միտքը բերելով, թէ ի՞նչ բանով էր պարապած այս զինուորը այն րոպէին երբ հրատարակեցին աղմուկը, հասկացաւ այսպիսի օտարոտի հագնըվելու պատճառը: «խա, խա, խա, ծեր ճնճղուկ» ասաց նա նորան. «դու ինչպէս Դագոբեռ թագաւորը հագնումես վարտիկդ խոտորնակի....»

Հակառակ զինուորական կարգին, այս ծիծաղը հազիւ թէ չտարածվեցաւ զինուորների կարգի մէջ կապիտանի այս կատակովը: Բայց մեր կտրիճը ուղիղ նստած թամբի վերայ, ձախ բութը դրած ինչքան կարելի է յարդարած սանձի կոճակի վերայ, սեղմեց թուրի կոթը աջ բարձին, պահեց իւր ամենեին անայլայլելի սառնասրտութիւնը և լսած կապիտանի շնորհակալութիւնը կատարեց մի կիսադարձ և մինչև անգամ աչքը չ՚թարթած մտաւ իւր կարգը: Այս օրից սկսեցին Ֆրանսուա Բօդուէնին Դագոբեռ գանչել. և այս մականունը մնաց նորա վերայ յաւիտեան:

Նու ահա Դագոբեռը գաւթի վերայ ամենայն հանդարտութենով պարապումէր լուացարարութեամբ առաւել զարմանք պատճառելու համար հիւրերին, որ հաւաքված պանդոկի մեծ դահլիճումը խմումէին գարեջուր և հետաքրքրութեամբ նայումէին ծերունի զինուորի վերայ: Արդարև զարմացուցիչ տեսարան էր: Դագոբեռը հանած իւր մոխրագոյն վերարկուն և վեր քարշած շապիկի թևերը ամենայն զգուշութենով սապոնումէր քթի թաց թաշկինակը փռած տախտակի վերայ, որ իւր ստորին ծայրովը կողմնակի թողած էր ջրով լիքը ամանի մէջ: Աջ ձեռքի վերայ, որ խայտաբղետացած էր կարմիր և կապոյտ գունաւոր պատերազմական նշաններով, երևումէին երկու սրտեր, այնպէս, որ կարելի էր մատ կոխել նոցա մէջ:

Գերմանացիք, թարակը ծխելով և գարեջուրը խմելով, կա-

տարեալ իրաւունք ունէին զարմանալու ճաղատ գլխով երկայն ընչացքով հաստկաւոր ծերունու պարապմունքի վերայ, որի երեսի գծագրութիւնքը առաւել մօտ քարշող չէին. պատճառ, Դագոբեռի, երեսը ստանումէր կոշտ և թթու գծագրութիւն, եթէ նա չէր գտանվում օրիորդների մօտ։ Բոլոր հիւրերի հայեացքը, շարունակ դարձուցած նորա վերայ, սկսումէին արդէն անհանգիստ առնել Դագոբեռը, մինչ նա ոչինչ օտարոտի բան չէր տեսանում իւր պարապմունքի մէջ։

Այս միջոցին Գէտը վեր ելաւ գաւիթը, տեսանելով զինուորին, նայեց մի քանի վայրկեան նորա վերայ աչքերը պշուցած. յետոյ մօտենալով նորան ասաց Ֆրանսիարէն բաւական ծաղրալի ձայնով «Երեւումէ սիրելիս, որ դու շատ հաւատ չես ընծայում Մօկկերնի լուացարարներին»։ Դագոբեռը չդադարելով սապօնելուց, յօնքերը քարշեց, գլուխը փոքր ինչ դարձուց, ծուռը ծուռը նայեցաւ Գէտի վերայ և մի խօսք ևս չպատասխանեց։ Մօրօկը, զարմացած այսպիսի լռութենից, շարունակեց. «Ես չեմ սխալվում սիրելի դու Ֆրանսիացի ես... բայց իմ ասածը ապացուցանումէն քո ձեռքի վերայ գրված խօսքերը, բաց ի դորանից քո պատերազմական ձեւիցը երեւումէ, որ դու հին կայսերական զինուոր ես, և այս պատճառով ինձ թըվումէ, որ այդպիսի հերոսին աւելի պատշաճ չէր կանացի գործով պարապիլ»։ Դագոբեռը լռեց, բայց կրծեց ընչացքը և սկսեց շուտով լուանալ կտաւիքը, որ սրտով մի բան չխօսի. պատճառ, Մօրօկի երեսը և խօսքերը շատ անախորժ էին նորան, թէպէտ նա չէր կամենում ցոյց տալ այս զգացմունքը։ Բայց Գէտը ձեռք վեր չառեց նորանից և դարձեալ խօսեց. «Ես հաւատացած եմ սիրելիս, որ դու ո՛չ խուլ ես և ո՛չ մունջ. ինչ պատճառով ուրեմն չես կամենում ինձ պատասխանել»։ — Ես ձեզ չգիտեմ և գիտել ևս չկամիմ, ուրեմն թողեցէք ինձ հանգիստ. — և սկսեց դարձեալ իւր գործը։ «Ուրեմն, կարելի է ծանօթանալ... մի բաժակ Րէյն-վէյն խմելով մեք կը խօսենք միմեանց հետ մեր զինուորութիւնների վերայ... ես ևս նոյնպէս պատահած եմ պատերազմի բոցերում. այո և ես... գիտեմ այդ, դուցէ դու առաւել յարգանք ցոյց տաս ինձ։ Դագոբեռի ճաղատ գլխի երակները լարվեցան, նա նկատումէր անծանօթ հարցանողի ձայնի և հայեցուածքի մէջ, մի որպէս թէ կատակողական բան, որ դէպ ի կռիւ էր հրաւիրում, այսու ամենայնիւ այս անգամ ևս համբերեց։ «Ես հարցանումեմ. ինչ պատճառով չկամիս իմ հետ մի բաժակ գինի խմել... մեք կը խօսէինք Ֆրանսիայի վերայ... ես երկար կացած եմ այն տեղ, գեղեցիկ երկիր է։ Եւ այս պատճառով ինձ միշտ քաղցր է լինում Ֆրանսիացոց պատահել ուր և լինի... մանաւանդ երբ նոքա

կտաւիք են լուանում այսպէս վարպետութեամբ ինչպէս դու»։ Եթէ ես լուացարար ունեցած էի ապա քեզ մօտ նորան աշակերտ կը տայի»։

Արդէն ծաղրածութիւնը յայտնի էր. պարզ երևումէր Գէտի լիրբ հայեացքումը յանդգնութեան և կռվի հրաւէր։ Դագոբեռ մտածելով, որ կռիւը այսպիսի հակառակորդի հետ շատ հեռի կարող է գնալ և կամելով ինչպէս և իցէ փախչել կռվելուց, վեր առեց տաշտը և գնաց գաւթի միւս ծայրը, յուսալով այս կերպով կտրել խօսակցութիւնը, որ այնպէս խիստ և սաստիկ փորձումէր նորա համբերութիւնը։

Դժոխային ուրախութիւն փայլեց Մօրօկի կարմիր աչքերում, բբերի մօտի սպիտակ շրջանակները երևումէր, որ լայնանումէին. նա երկու երեք անգամ կարթաձև մատներովը շփեց իւր երկայն և դեղնագոյն մօրուքը, որպէս ցոյց իւր ուրախութեան, յետոյ սկսեց դանդաղ քայլերով մօտենալ զինուորին, իւր հետ առած մեծ դահլճից դուրս եկող մի քանի հետաքրքիր հիւրեր։

Դագոբեռը, չնայելով իւր սովորական սառնասրտութեան վերայ, վշտացած և ինքը իւրեանից դուրս եկած Գէտի անամօթ ընթացքից, մտածումէր սկզբումը խորտակել Մօրօկի գլուխը տախտակովը, որի վերայ սապոնումէր, բայց միտքը բերելով որբերը ծածկեց իւր բարկութիւնը։ Մօրօկը, ձեռքերը սրտին կապած, ասաց Դագոբեռին ընդհատված և լիրբ ձայնով «դու բոլորովին դատարկ մարդ ես, յիմար». յետոյ դառնալով դէպ ի ներկայ մարդիկը շարունակեց գերմաներէն. «ես ասացի այս երկայն ընչացքով Ֆրանսիացուն, որ նա անքաղաքավարի մարդ է... կը լսենք, թէ ինչ պիտոյ է պատասխանէ. կարելի է, որ պատահի ինձ, մի լաւ խրատել դորան։ Աստուած մի արասցէ, թէ ես կռուասէր եմ», յաւելացրեց նա կեղծաւոր Աստուածպաշտութեամբ, «բայց Տէր Աստուածը լուսաւորել է ինձ իւր շնորհքով, ես նորա ձեռքի գործն եմ, և առաւել յարգելով նորան պարտականութիւն եմ համարում ինձ, ուսուցանել և ուրիշներին, յարգել նորա արարածքը»։

Այս անամօթ և մտացի վերջաբանութիւնը շատ ախորժ երևեցաւ հետաքրքիր նայողների ճաշակին. Գէտի փառքը տարածվեցաւ մինչև անգամ և մինչև Մօկկերն, նոքա յոյս ունէին, որ նա միւս օրը կը սկսի իւր խաղարկութիւնը, և այս բանը շատ զբաղեցնումէր նորանց։ Դագոբեռը, լսելով այս հրապարակական հրաւէրը, չկարողացաւ այլ ևս համբերել և ասաց հակառակորդին գերմաներէն. — ես հասկանումեմ գերմաներէն... խօսեցէք ուրեմն գերմաներէն, թող և այլք լսեն։ —

Նոր նայողներ յաւելացան առաջինների վերայ. կռիւը քանի

գնաց զբաղեցուցիչ եղաւ, և այս պատճառով հակառակորդների չորս կողմումը շուտով շրջանակ կազմեցին հետաքրքիրները։ Գետը շարունակեց գերմաներէն. «ես ասացի, որ դու անքաղաքավարի ես. բայց այժմ պարզ ասումեմ, որ դու անամօթ յանդուգն ես... ի՞նչ պիտոյ է պատասխանես ինձ։ — Ոչինչ. — պատասխանեց սառնութեամբ Դագոբեռ, սկսելով սապոնել այլ թաշկինակ։ «Ո՛չինչ» վեր առեց Մօրօկը «շատ չէ, բայց ես քեզանից առատ կը լինիմ խօսքով և ասումեմ, որ երբ մի պատուաւոր մարդ պատուասիրումէ իւր քաղաքավարութենից մի օտարական մարդու մի բաժակ գինով, այն ժամանակ այդ օտարականը իրաւունք չունի պատասխանել նորան լրբութեամբ... և արժէ, որ ուսուցանեն նորան թէ ինչպէս պիտոյ է ապրել աշխարհի երեսին»։

Քրտինքի խոշոր կաթիլները գլորվումէին Դագոբեռի ճակատի և թշերի վերայով, նորա լայն Սպանիական մօրուքը ցնցողութենով դողումէր, բայց դարձեալ բռնումէր նա ինքը իւրեան. բռնելով թաշկինակի երկու անկիւնից, որ ողողումէր ջրի մէջ, թօթափեց նորան և սկսեց քամել կիսաձայն երգելով մի հին զինուորական երգ...։

Լռութիւնը, դէպ ի որը Դագոբեռ դատապարտել էր ինքը իւրեան, խեղդումէր նորան. բայց երգը փոքր ինչ սփոփեց նորա սիրտը։

Մօրօկը դառնալով դէպ ի նայողները, ասաց նորանց կեղծաւորեալ հարկադրութենով։ «Մեզ յայտնի է, որ Նապոլէոնեան զինուորքը վարումէին իւրեանց իբրև հեթանոս, ձիեր կապումէին եկեղեցու մէջ և շարժումէին Աստուծոյ բարկութիւնը իւրեանց վերայ օրը հարիւր անգամ և իւրեանց գործերի համաձայն խեղդվեցան, կայծակնահար եղան Բերեզինում ինչպէս փարաւոն. բայց մեք չ՚գիտէինք, որ Տէր Աստուածը այս չար մարդիկը պատժելու համար, խլել էր նորանցից և քաջութիւնը, նոցա միմիայն լաւ յատկութիւնը... Ահա մարդ, որ ինձ վշտացնելով անպատուեց Աստուծոյ ստեղծուածը. բայց չէ կամենում հասկանալ, թէ պարտական էր ներողութիւն խնդրել ինձանից, ապա թէ ոչ...։

— Ապա թէ ո՛չ. — կրկնեց Դագոբեռ չնայելով Գետի վերայ։

«Ապա թէ ո՛չ, դու ինձ բաւականութիւն կը տաս... ես արդէն ասացի քեզ, որ նոյնպէս պատահած եմ պատերազմերում. մեք կը գտանենք մի տեղից երկու սուր, իսկ էգուց արշալուսի ժամանակ պարսպի միւս կողմումը կը նայենք, ի՞նչ գոյն է մեր արիւնը... եթէ միայն արիւն խաղումէր քո երակների մէջ։

Այս հրաւէրը արդէն փոքր ինչ սկսումէր երկիւղ ձգել նայողների սիրտը, որոնք երբէք չէին սպասում, թէ գործը այսպիսի վերջ ստանար։

Մենամարտութիւն. — գանչեց նորանցից մինը — դուք կամենումէք, որ երկուսիդ ես փակեն լաւ տեղում... մեզանում օրէնքները շատ խիստ են մենամարտութեան մասին:

«Մանաւանդ եթէ բանը կը հասանի այնպիսի մարդերի, որ սոսկական վիճակից էին կամ օտարական» յաւելացրեց երկրորդը. եթէ քաղաքապետը տեսանէ ձեզ, որ զէնք ունէիք ձեռքերումդ, իսկոյն բանդ կը դնէ ձեզ և կը նստիք այն տեղ երեք ամիս մինչև դատաստան կը կարգեն»: — Մի՞թէ դուք ծանօթութիւն կը տաք մեր մասին հարց արեց Մօրօկ: — «Մեք չենք յայտնելու» ասացին գերմանացիք. «կարգադրեցէք ինչպէս կամիք... բայց մեք տալիս ենք ձեզ բարեկամական խորհուրդ... կը լսէք նորան թէ ոչ, այդ ձեր կամքն է»:

— Բանդը ինձ ահարկու չէ. — գանչեց Գէտը. — միայն թէ երկու սուր գտանէինք... և էգուց առաւօտ կը տեսանէինք, թէ ո՞րքան փոքր եմ մտածում քաղաքապետի կարգադրութեանների մասին: — «Ի՞նչ պիտոյ է առնէք դուք երկու սրով» Դագոբեռ հարց արեց Գէտից ամենևին սառնասրտութեամբ: — Ի՞նչպէս, մի սուրը կը լինի քո ձեռքում, իսկ միւսը իմ, և այն ժամանակ կը տեսանես... Տէրը ինքը հրամայումէ պաշտպանել իւր պատիւը:

Դագոբեռը վեր քաշեց թիկունքը, կապեց կտաւիքը իւրթաշկինակի մէջ, սրբեց սապոնը և մեծ խնամքով դրեց նորան պարկի մէջ. յետոյ ատամների միջով սուլելով իւր սիրական երգը կամենումէր ահա գնալ: Գէտը, յօնքերը հաւաքեց և սկսեց արդէն երկիւղ կրել, թէ իւր հրաւէրը չ՚հասանի ցանկացած նպատակին: Նա երկու քայլ արեց դէպ ի Դագոբեռի առաջ, կանգնեցաւ նորա դիմաց, որպէս թէ կտրելով նորա ճանապարհը. յետոյ, ձեռքերը ծալելով կրծքին և զննելով ոտքից մինչև ի գլուխ, ամենավշտացուցիչ լրբութեամբ ասաց «ուրեմն, այն աւազակ Նապոլէօնի ծեր զինուորը պիտանի է միայն կանացի գործերում... և հրաժարվումէ մենամարտութենից»:

— Այո՛, հրաժարվումէ. — պատասխանեց Դագոբեռ հաստատ ձայնով, բայց սաստիկ գունաթափ եղած:

Դուցէ երբէք չէր պատահած զինուորին ապացուցանել իւրեան հոգաբարձութեանը յանձնված որբերին այսպէս յայտնի, իւր քնքուշ ջերմեռանդութիւնը և անձնազոհութիւնը. սորա բնաւորութենով մարդու համար, անպատիժ թողլ տալ անարգել իւրեան և յետոյ հրաժարվիլ մենամարտութենից, — անչափելի զոհ է:

«Ուրեմն դու ցած մարդ ես... վախենումես... ինքդ խոստովանումես......

Այս խօսքերի վերայ, Դագոբեռը վէր ցայտկեց մի և նոյն տեղում, եթէ միայն կարելի է այսպէս ասել, որպէս թէ այն րոպէին երբ կամենումէր յարձակվել Գէտի վերայ, մի յանկարծական մտածողութիւն յետ պահեց նորան։ Արդարև նա յիշեց երկու օրիորդքը և մտածեց կորստական արգելքների վերայ, որոնց կարող էր պատահել մենամարտութենից յետոյ, որ բարեյաջող կամ անյաջող պիտոյ է վերջանար իւր առաջիկայ ճանապարհորդութեան համար։ Բայց զինուորի այս բարկացոտ շարժողութիւնը, թէ և մի ակնթարթում, այնպէս մեծ նշանակութիւն ունէր, նորա գունաթափ և քրտինքով ծածկված սառը երեսի կերպարանքը այնպէս զարհուրելի էր, որ Գէտը և նայողները յետ քաշվեցան։

Խոր լռութիւն տարածվեցաւ մի քանի վայրկեան. յանկածարկան յեղափոխութիւն կատարվեցաւ նայողների խելքերում։ Նորանցից մինը ասաց շրջապատողներին. «Ինչպէս երևումէ, այս մարդը ամենևին երկչոտ չէ»։ — Իհարկէ չէ։ — «Երբեմն առաւել քաջութիւն հարկաւոր է մենամարտութենից հրաժարվելու քան թէ հրաւէրը ընդունելու»։ — Բաց ի դորանից, Գէտը իրաւունք չունի չնչին բաների համար կռիւ սկսանել նորա հետ. նա այս տեղացի չէ։ — «Եւ եթէ նա սկսէր մարտնչել և բռնվէր, այն ժամանակ, իբրև օտարական, շուտով չէր ազատվելու բանդից»։ — Այս ևս պիտոյ է յաւելացնել — ասաց միւսը թէ նա միայնակ չէ ճանապարհորդում, այլ երկու մատաղահաս օրիորդների հետ։ Ուրեմն կարելի՛ է պահանջել, որ նա այսպիսի դրութեան մէջ մարտնչի չնչին պատճառով։ Ի՞նչ կը լինէր այն ողորմելիների վիճակը, եթէ նա սպանվէր կամ բանդդրվէր։

Դագոբեռը յետ դարձաւ դէպ ի այն մարդը, որ արտաբերեց այս խօսքերը և տեսաւ իւր առաջև մի հաստ մարդ, բաց և ուրախ դէմքով. զինուորը պարզեց դէպ ի նա իւր ձեռքը և ասաց շարժված ձայնով. «շնորհակալ եմ պարոն»։

Գերմանացին բարեկամաբար սեղմեց Դագոբեռի ձեռքը և բաց չ՛թողնելով նորան յաւելացրեց. — պարո՛ն, կատարեցէք միմիայն, մի խնդիրս, խմեցէք մեզ հետ մի բաժակ պունշ. իսկ մեք արդէն յանձն առնումենք հարկադրել այն խելագարին, խոստովանել իւր անտեղի բարկանալը և զարկել ձեզ հետ բաժակ բաժակի։

Մինչև այս ժամանակ, Մօրօկը, յուսահատված Դագոբեռի հրաւէրը չ՛ընդունելովը, մի կատաղի արհամարհութենով նայումէր նորա կողմնակիցների վերայ. այժմ, փոքր առ փոքր նորա երեսի գծագրութիւնքը կակղեցան, և համարելով, թէ իւր խորհրդի յառաջադիմութեան համար անպատճառ հարկաւոր է փարագուրել իւր բար-

կութիւնը պատահած անյաջողութեան վերայ, մօտեցաւ զինուորին ասելով նորան բաւական քաղցրութեամբ: — Ուրեմն, թող այսպէս լինի, կը լսեմ այս պարոններին. պիտոյ է խոստովանել, և ես բոլորովին արդար չեմ. ձեր չոր ընդունելութիւնը ինձ վշտացուց. ես չ՚կարողացայ ինքս ինձ բռնել... դարձեալ կրկնումեմ, և ես արդար չեմ. — յաւելացրեց նա ծածկեալ տհաճութենով — Աստուած հրամայումէ մեզ խոնարհիլ... Ես ներողութիւն եմ խնդրում ձեզանից:

Նայողները Մօրօկի այս չափաւորութեան և զղջման ապացոյցը խիստ լաւ կերպով ընդունեցին և գովեցին:

— Նա ներողութիւն է խնդրում ձեզանից. դորա ընդդէմ աւելորդ է խօսել, բարեկամ, — ասաց նորանցից մինը դառնալով դէպ ի Դագօբեռը — գնանք, խմենք միասին. մեք այս առաջարկութիւնը առնումենք ձեզ բոլոր սրտով և դուք նոյնպէս կ՚ընդունէք նորան...

«Ուրեմն ընդունումէք առաջարկութիւնը, մեք ամենեքեան խընդրումենք ձեզանից ձեր գեղեցիկ օրիորդների անունով», ասաց հաստ մարդը, աշխատելով համոզել Դագօբեռին:

Զինուորը շարժված գերմանացոց այս բարեկամական ընթացքից, պատասխանեց նորանց:

— Շնորհակալ եմ պարոններ, դուք արժանաւոր մարդիկ էք... բայց երբ ուրիշներից ընդունումեն պատուասիրութիւն, պիտոյ է և պատուասիրեն: — «Թո՛ղ այդպէս լինի, մեք չենք հրաժարվում և այդ պայմանից... իհարկէ իւրաքանչիւր մարդ իւր կարգով, մեք կը վճարենք առաջին բաժակի գինը, իսկ դուք երկրորդինը»:

— Աղքատութիւնը արատ չէ. — շարունակեց Դագօբեռ — և այսպէս բաց սրտով ասումեմ ձեզ, որ ես կարողութիւն չունիմ պատուասիրել ձեզ. մեր առաջև դեռ երկար ճանապարհ կայ, և ես չէ պիտոյ արծաթ գործ ածեմ առանց յատուկ հարկաւորութեան:

Զինուորը այնպիսի պարզ, բայց հաստատ արժանաւորութեամբ արտաբերեց այս խօսքերը, որ գերմանացիք չ՚համարձակվեցան նորոգել իւրեանց հրաւիրանքը լաւ հասկանալով որ Դագօբեռի բնաւորութեամբ մարդը, չէ կարող ընդունել նորան առանց իւր անձը ցածացնելու:

«Այդ թէ և այնքան լաւ չէ, բայց ինչ առնես. թող այդպէս լինի», ասաց հաստ մարդը. «բայց ես շատ ցանկանումէի ձեզ հետ բաժակ բաժակի զարկել. բարի գիշեր պատուելի զօրական... բարի գիշեր... ժամանակը ուշ է արդէն: Սպիտակ Բազէի տէրը մեզ շուտով դուռը ցոյց կը տայ»: — Բարի գիշեր պարոններ. — ասաց Դագօբեռ, երթալով դէպ ի ձիանոցը, որ տայ ձիուն կրկնաչափ կերակուր:

Մօրօկը մօտեցաւ նորան և ասաց կեղծաւորեալ հեզութեամբ. «ես խոստովանեցայ իմ յանցանքը, խնդրեցի ձեզանից ներողութիւն դուք ինձ ոչինչ չ՚պատասխանեցիք... մի՞թէ դուք դեռ ևս բարկանումէք իմ վերայ»:

— Եթէ դու կը պատահես ինձ այնպիսի ժամանակ, երբ ես հարկաւոր չէի երեխաներին, այն ժամանակ երկար չեմ խօսելու քեզ հետ. երկու խօսք և գործը կ՚աւարտեմ. — ասաց զինուորը խուլ ձայնով. յետոյ շուտով քամակը դարձուց դէպ ի Գէտը, որ դանդաղ քայլերով դուրս գնաց սրահից:

Սպիտակ Բազէի պանդոկը շինած էր զուգահեռագծի ձևով: Նորա մի ծայրումը բարձրանումէր գլխաւոր շինուածքը, միւսումը զանազան սենեակներ, որ տրվումէին չնչին գներով աղքատ ճանապարհորդներին: Կամարակապ պաշտգամբը, անցուցած շինութեան բոլոր այս բաժնի միջից, դուրս էր բացվում դէպ ի դաշտը: Վերջապէս սրահի երկու կողմումը շինած էին ձիանոցներ և ախոռներ, նորանց վերայ խոտնոցներ և դտիկոններ փոքրիկ սենեակներով:

Դագօբեռը մտանելով այս ձիանոցներից մինի մէջ վերեվից արկղի վերայից մի չափ գարի, որ պատրաստուած էր նորա ձիու համար, լցրեց ամանի մէջ նախընթացաբար մաքրելով նորան և գնաց Ուրախի մօտ: Մեծ զարմանք տիրեց Դագօբեռին, որովհետև նորա ընկերը Թափառական կեանքի մէջ չէր պատասխանում ուրախ խրխընջոցով գարու ձայնին, որ պատճառվումէր եղեգնահիւս ամանի մէջ շարժվելուց: Զինուորը անհանգստացած այս բանից սկսեց քաղցրութեամբ գանչել Ուրախին, բայց այս խեղճ անասունը փոխանակ իւր միտք հասկացնող աչքերը ուղղելու դէպ ի իւր տէրը ինչպէս յառաջ առնումէր և անհամբերաբար առաջևի ոտքերով փորելու գետինը, մնումէր բոլորովին անշարժ:

Զինուորը առաւել ևս զարմացած մօտ գնաց նորան:

Աղօտ լուսովը լապտերի, որ կախած էր ձիանոցումը, նա տեսաւ ողորմելի ձիուն այնպիսի դրութեան մէջ, որ ցոյց էր տալիս զարհուրանք. նորա ոտքերը կիսածալ, վիզը երկարացրած, ականջները կախած, հոտոտելիքը դողում էին. ուրախը ամենայն զօրութենով քարշումէր իւր սանձը, որպէս թէ կամենալով կտրել, ցանկանալով հեռանալ միջնապատից, որի վերայ շինած էին մսուրները, ցուրտ և առատ քրտինքը պխակացուցել էին նորա կաշին կապտագոյն ստուերներով. նորա բուրդը առ հասարակ հաւասար և արծաթագոյն, որ յառաջ խկոյն երևումէր յայտնի մութժամանակ ձիանոցի մէջ, այժմ թրվումէր, թէ բարձրացել է և մթնել. վերջապէս, ժամանակ առ ժամանակ ցնցողական դողդոջիւնք տարածվումէին խեղճ անասունի բոլոր մարմնի մէջ:

«Ի՞նչ դրութեան մէջ ես... ի՞նչ պատահեց քեզ իմ ծերունի Ուրախ», ասաց զինուորը, դնելով կողովը գետնին, որ փայփայէ ձիուն. Եւ դու այնպէս ես, ինչպէս քո տէրը... և դու՞ վախենումես», յաւելացրեց նա ցաւած, յիշելով այն վիշտը, որ հարկադրվեցաւ ընդունել: Վախենումես և դու՞... բայց կարծեմ դու յառաջ երկչոտ չէիր»:

Ձին, չնայելով իւր տիրոջ խրախուսանքին և փայփայելուն չէր դադարում զարհուրանք ցոյց տալուց. միայն սկսեց այնպէս սաստիկ չ՛քարշել սանձը, անվստահ կերպով մօտեցուց իւր հոտոտելիքը Դադօբեռի ձեռքին և սկսեց հոտոտել, որպէս թէ կասկածելով, թէ նա՞ էր արդեօք:

«Դու արդէն և ինձ չես ճանաչում». գանչեց Դադօբեռը «այս տեղ մի անսովոր բան կայ»:

Եւ նա անհանգստութեամբ նայեց իւր չորս կողմը:

Ձիանոցը ընդարձակ էր և մութն, հազիւ հազ լուսաւորված մի լապտերով, որ կախած էր առաստաղից, որ սարդերը պատել էին իւրեանց գործուածքով: Ձիանոցի միւս ծայրումը, որ բաժանված էր Ուրախից մի քանի ձի կապելու տեղերով, կանգնած էին Մօրօկի երեք հատ սև և ուժեղ ձիերը: Նոքա չէին ցոյց տալիս ոչինչ երկիւղ, չէին դողում ինչպէս Ուրախը, այլ հանդարտ կանգնած էին իւրեանց համար:

Դադօբեռ զարմացած այս օտարոտի հակադրութենից, որ շուտով պիտոյ է պարզվէր, սկսեց դարձեալ փայփայել իւր ձին, և Ուրախը փոքր առ փոքր հանգստացած իւր տիրոջ ներկայութեամբը սկսեց լիզել նորա ձեռքերը, գլուխը քսել նորան, բարակ խրխնջալ և վերջապէս իւր սովորական կերպովը, յայտնեց իւր ջերմեռանդութիւնը զանազան շարժողութեններով:

«Ահա՛ այդպէս լաւ է... ահա՛ և ինձ քաղցր է նայել քո վերայ իմ ծերունի Ուրախ», ասաց Դադօբեռը, բարձրացնելով կողովը և լցնելով գարին մսուրի մէջ. «կեր առողջութենով, եգուց շուտով չենք հասանելու դարձեալ իջևան. մանաւանդ մի վախենար ամենայն չնչին բանից... Եթէ քո ընկեր Ցխուրը այս տեղ լինէր, այդ քեզ կը հանգստացնէր... բայց նա վերևումը երեխաների հետ է, պահպանումէ նորանց իմ չեղած ժամանակ... Հերիք է նայել ինձ վերայ, լաւ է սկսիր ուտել»:

Բայց ձին խառնեց միմիայն գարին իւր շրթունքի ծայրերովը, որպէս թէ հնազանդվելով տիրոջ հրամանին, բայց ուտել չ՛սկսեց, այլ շօշափումէր Դադօբեռի վերարկուի թևերը:

«Ահ իմ խեղճ Ուրախ, ի՞նչ պատահեց քեզ. դու միշտ սի-

րումէիր գարի, իսկ այժմ և նայել չես ուզում նորա վերայ... բոլոր ճանապարհումը այս առաջին անգամ պատահումէ նորան», ասաց զինուորը, սկսելով արդարև անհանգստանալ, պատճառ ճանապարհորդութեան բաղդաւոր վախճանը կախված էր նորա ձիու ամրութենից և առողջութենից:

Յանկարծ մռնչիւնը զարհուրելի և այնպէս մօտ, որ թըվումէր թէ գազանը ձիանոցի միջումը է, մինչև այն աստիճան վախեցրեց Ուրախին, որ նա միանգամայն կտրեց սանձը և դուրս փախաւ ձիանոցից նորա բաց դռնովը. Դագոբեռը չ'կարողացաւ բռնել ինքը իւրեան, որ չ'ցնցվի այս յանկարծական սաստիկ և վայրենի մռնչիւնից, որ պարզեց նորան իւր ձիու երկիւղի պատճառը:

Պատկից ձիանոցը, ուր տեղաւորված էր Մօրօկի թափառական գազանանոցը, բաժանվումէր Ուրախի կանգնած ձիանոցից միայն մի բարակ պատով, որի վերայ շինած էին մսուրները. Մօրօկի երեք ձին արդէն սովորած այս զարհուրելի մռնչիւնին իհարկէ մնումէին հանգիստ:

«Լաւ է» ասաց զինուորը հանգստանալով, «այժմ ես բոլորը հասկանումեմ. երևի թէ Ուրախը լսել է արդէն այսպիսի մռնչիւն, նա իմացել է որ այն լրբի գազանները այն տեղ են, իհարկէ այդ կը վախեցնէր նորան», յաւելացրեց զինուորը խնամով հաւաքելով գարին արկղի մէջ: «Երբ կը կանգնեցնեմ նորան մի այլ տեղ, և երևի թէ այս տեղ մի հատ չէ ձիանոցը, այն ժամանակ երևի թէ Ուրախը կ'ուտէ գարին, և մեք եգուց կը կարողանանք ճանապարհ դուրս գալ շատ կանուխ :

Վախեցած ձին, փախչելով և վազելով բոլոր սրահի մէջ, մօտեցաւ իսկոյն Դագոբեռին լսելով նորա ձայնը, և Դագոբեռը բռնեց նորա սանձից առանց մի նեղութեան: Ձիապանը Դագոբեռի հարցմունքի վերայ ցոյց տուեց նորան մի այլ դատարկ ձիանոց, ուր միայն մի ձի կանգնելու տեղ կար, ուր և կապվեցաւ Ուրախը:

Ձին, ազատվելով իւր համար ծանր դրացութենից, հանգստացաւ և առաւել ուրախացած այնպէս անզգուշաբար խաղաց իւր տիրոջ վերարկուի հետ, որ Դագոբեռ նոյն երեկոյեանը հարկադրվեցաւ ձեռք առնուլ իւր դերձակութիւնը. բայց ծերունին, ոչինչ չ'նկատելով, ուրախանումէր միայն նայելով ձիու վերայ, որ շատ մեծ ախորժակով սկսեց ուտել գարին:

Զինուորը տեսանելով, որ ամենայն բան գնաց դարձեալ իւր կարգով, փակեց ձիանոցը և գնաց շուտով ընթրիք ուտելու, որ յետոյ շտապէ որբերի մօտ:

Նա արդէն սկսումէր բարկանալ իւր վերայ, որ այսքան երկար միայն թողել էր նորանց:

V.

ՐՕԶԸ ԵՒ ԲԼԱՆՇԸ։

Որբերը իջևանած էին պանդոկի հեռաւոր բնակարանների մինի փոքրիկ և աղքատին սենեակի մէջ, որի միմիայն պատուհանը նայումէր դէպ ի դաշտ։ Անկողին առանց վարագուրի, մի սեղան և երկու աթոռ այս սենեակի եղած չ'եղած զարդարանքն էին։ Սենեակը լուսաւորվումէր միայն լապտերով. սեղանի վերայ պատուհանի մօտ ընկած էր Դագոբեռի ճանապարհակիրը։ Տխուրը, Սիբիրիայի այն մեծ շէկ շունը, որ պառկել էր դուռի մօտ, արդէն հաչել էր գլուխը դարձուցած դէպ ի պատուհանը, բայց առանց անհանգիստ հետևանքների։ Երկու քուրերը թեք ընկած էին մահճի վերայ։ Նոցա վերայ կային սպիտակ արկանելիք, որ վզերի և ձեռքերի վերայ կոճակված էին։ Նոքա գլխարկ չէին հագնում. վասնորոյ լայն ժապաւէնով հաւաքված էին նոցա գեղեցիկ շագանակագոյն մազերը քունքերի մօտ, որ չ'քբքրվէին գիշերը։ Այս սպիտակ հալաւները, այս սպիտակ պսակները, որ պատումէին նոցա գլուխը, առաւել գեղեցկացնումէին նոցա թարմ և զմայլեցուցիչ դէմքերի անմեղ և քնքոյշ կերպարանքը։

Որբերը ծիծաղումէին, կամաց խօսելով միմիանց հետ. պատճառ, չ'նայելով շատ և շատ կրած վշտերին, որ շատ կանուխ պատահեցան նորանց, նոքա պահումէին դեռ ևս իւրեանց հասակի պարզամիտ ուրախութիւնը. երբեմն մօր յիշատակը տխրեցնումէր նորանց, բայց այս տխրութիւնը չունէր իւր մէջ մի այնպիսի չարչարող զօրութիւն. շուտով կարելի է անուանել այս տխրութիւնը մի խաղաղ մտածողութիւն, որից ո՛չ եթէ փախչումէին նոքա, այլ դեռ ևս որոնումէին. Նոցա համար պաշտական մայրերը չէր մեռած.... այլ գտանվումէր մի հեռաւոր տեղում։ Կրօնական ծէսերի մէջ նոքա նոյնպէս տգէտ էին ինչպէս նա և Դագոբեռը, պատճառ, անապատումը, ուր նոքա բնակվումէին, չ'կային ո՛չ եկեղեցի և ո՛չ քահանայ. Նոքա հաւատումէին միայն լսելով, թէ արդարև բարի Աստուածը այնքան ողորմած է եղել խեղճ մայրերի վերայ, որոնց զաւակները մնացել էին աշխարհի երեսին, որ թոյլ է տուել նորանց երկնքի բարձրութենից տեսանել իւրեանց զաւակները և լսել նոցա բոլոր խօսուածքը. և թէ այս զաւակներին պահումեն երկնքում բնակվող գեղեցիկ հրեշտակները։

Այս երեկոյ որբերը միմիանց հետ խօսումէին մի բանի վերայ սպասելով Դագոբեռին։ Այս խօսակցութիւնը ինչպէս երևումէ շատ

զբաղեցնումէր նորանց. մի քանի ժամանակից սկսած նոցա մէջ գոյացել էր մի գաղտնիք, որից շատ անգամ դողումէին նոցա կուսական սրտերը, ամբոխվումէին դեռահաս կուրծքերը, վարդագոյն թշերը ներկվումէին կարմիր գունով և մեծ, քնքոյշ, կապոյտ աչքերը լցվումէին մի անհանգիստ, մտածողական մաշուածքով:

Ռօզը այս երեկոյ պառկած էր մահճի եզրումը. Նորա բոլորշի ձեռքերը խաչաձև կապված էին իւր գլխի տակով, որ դարձուցած էր դէպ ի քոյրը: Բլանշը թիկնը տուած արմունկով նորա գլխի մօտ նայումէր Ռօզի վերայ ժպտելով և ասումէր. «Դու ինչպէս կարծումես, կը գա՞յ նա այս գիշեր»: — Անպատճառ երեկի... նա խոստացաւ մեզ: — «Նա այնպէս բարի է... նա չէ փոխում իւր խոստմունքը»:

— Բաց ի դորանից այնպէս գեղեցիկ. Նորա երկայն և խարտեաշ մազերը, ասես թէ, ծածանումեն գանգուրներով: — «Ապա անունը ինչպէս գեղեցիկ է. ինչպէս յարմար եկել է նորա երեսին»: — Ի՜նչ հեզ ժպիտ է, ի՜նչ քնքոյշ ձայն. մտքի՞դ է երբ նա մեր ձեռքերից բռնած ասումէր մեզ. «Իմ երեխայք, օրհնեցէք Աստուածը, որ նա ձեր երկուսի մէջ դրել է մի հոգի. ինչ որ ուրիշները որոնումեն օտարների մէջ, այն ունիք դուք ձեր իսկ մէջ... պատճառ ձեր երկու սիրտը բաղկացնումեն մի սիրտ»: — Ի՜նչպէս երջանիկ ենք մեք, քուրիկ, որ այսպէս մտքերիս է նորա ամենայն խօսքը:

«Մեք շատ ուշադրութենով լսումենք նորան... երևակայիր. երբ ես տեսանումեմ, որ դու լսումես նորան, ինձ միշտ թվումէ, որպէս թէ ես ինքս լսումեմ նորան...», ասաց Ռօզը ծիծաղելով և համբուրելով քրոջ ճակատը... Այո՛, քուրիկ, երբ նա սկսումէ խօսել, այն միջոցին քո աչքերը, կամ լաւ ասել մեր աչքերը քանի գնումեն մեծանումեն, և մեր շրթունքը շարժումեն, իսկ այնպէս, որպէս թէ կրկնումէինք նորա խօսքերը... սորանից յետոյ զարմանք չէ, որ չենք մոռանում նորա և մի խօսքը, որ ասած էր: — Եւ խօսումէ նա գեղեցիկ... միշտ ազնիւ, մեծահոգի. Նորա խօսելու ժամանակ ինչքան լաւ լաւ մտքեր ծնանումեն մեր հոգու մէջ, այնպէս չէ՞ քուրիկ... միայն հարկաւոր է, որ չմոռանայինք այն խօսքերը: «Հանգիստ կացիր, նոքա միշտ կը մնան մեր սրտումը, ինչպէս ձագերը իւրեանց մօր բունի մէջ:

Արդէն այս մեծ բաղդաւորութիւն է մեր համար քուրիկ, որ նա սիրումէ մեզ երկուսիս ևս: «Այո՛, և այլապէս չէ կարող լինել, երբ մեր երկուսի մէջ մի սիրտ է»: — Մի՞թէ կարելի՞ է սիրել Ռօզը առանց սիրելու Բլանշը, ինչ կը լինէր չսիրվողի վիճակը»: — Բաց ի դորանից նորան և դժուար կը լինէր ընտրել: Մեք այնպէս

Նման ենք միմեանց»։ — Բայց որպէս զի ազատէ իւր անձը դժուարութենից — ասաց Ռօզը ծիծաղելով — նա սիրեց մեզ երկուսիս էլ... «Այո՛, և լաւ չէ՞ արդեօք այսպէս նա միայն սիրումէ մեզ երկուսիս. իսկ մեք երկուսս նորան միայն»։ — Միայն թէ նա ձեռքից չ՚թողուր մեզ, մինչև մեր Փարիզ հասանելը։ «Եւ որպէս զի Փարիզումը ևս տեսանէինք նորան»։ — Փարիզումը առաւել հարկաւոր է, որ նա մեր հետ լինէր...՝ և Դագոբեռի հետ միասին... այնպիսի լայնատարած քաղաքի մէջ... Ա՜հ Աստուած իմ. Բլանշ, ով գիտէ ինչպէս լա՞ւ է այն տեղ։ «Փարիզումը... այդ մի խօսքով պիտոյ է ոսկուց ձուլած քաղաք լինի»։ — Այդպիսի քաղաքում պիտի որ ամենեքեան երջանիկ լինին... այն տեղ ամենայն ինչ այնպէս գեղեցիկ է։ «Բայց մեք խեղճ որբերս հազիւ թէ կը համարձակվէինք մտանել այն տեղ... ինչպէս կը սկսեն մեր վերայ նայել»։ — Ճշմարիտ է, բայց որովհետև այն տեղ ամենեքեան երջանիկ են, պիտոյ է որ և բարի լինին... «Այնպէս և կը սկսեն մեզ սիրել այն տեղ»։... — Բաց ի դորանից մեք միայն չէինք լինելու, այլ մեր բարեկամի հետ... մեր խարտեաշ բարեկամի հետ։ «Նորա և մտքիցը չէ անցած այդ... այս գիշեր պիտոյ է ասել նորան այդ մասին։ — Լաւ, եթէ նա խօսի... դու ինքդ գիտես, որ շատ անգամ նա լուռ ու մունջ նայումէ մեր վերայ, ուղղելով իւր աչքերը մեր աչքերի վերայ։ «Այո՛ և այդ րոպէներումը նորա հայեացքը երբեմն միտքս է ձգում այն, թէ ի՞նչպէս նայումէր մեր վերայ մեր սիրական մայրը։ — Եւ մեր մայրը պէտք է որ շատ ուրախանայ մեր երջանիկ բարեկամութեան վերայ, նա տեսանումէ մեզ։ «Եթէ մեզ այդպէս սիրումեն, ուրեմն մեք արժանի ենք այդ սիրուն։ — Տեսէք այս սնափառը... — ասաց Բլանշը, իւր բարակ մատներովը հաւասարելով քրօջ մազերը, որ բաժանված էին ճակատին վերայ։

Ռօզը, րոպէական մտածութենից յետոյ, ասաց. «Ի՞նչպէս կարծումես. չ՚ասե՞նք արդեօք այս ամենը Դագոբեռին։—կամիս, ասենք... «Մեք ամենայն ինչ կը պատմենք նորան առանց ծածկելու, ինչպէս պատմումէինք մեր մօրը, ինչ պատճառով ծածկենք նորանից։ — Մանաւանդ այն բանը, որ պատճառ է մեր այսպիսի երջանկութեանը։ «Բայց դու զգումե՞ս արդեօք, այն օրից, երբ ճանաչել էինք մեր բարեկամը, մեր սրտերը առաւել սաստիկ և շուտ սկսեցին զարկել»։ — Այդ ճշմարիտ է, որպէս թէ նոքա առաւել լցուած էին։ —

«Շատ հասկանալի է այդ, մեր բարեկամը բռնել է այն տեղ իւր բաժինը մի փոքրիկ տեղ»։ — Ուրեմն մեք լաւ կ՚առնէինք եթէ յայտնէինք Դագոբեռին մեր բաղդաւորութեան մասին։

«Ճշմարիտ է քո ասածը։

Այս միջոցին շունը նորից հաչեց: «Քուրիկ», ասաց Բօղը, փաթաթվելով քրոջը, «ահա շունը դարձեալ հաչեց, այդ ինչ է պատահել նորան:— Տխուր, հերիք է հաչածդ, եկ այս տեղ.— ասաց Բլանշը, ձեռքով զարկելով մահճի եզրին: Շունը վեր կացաւ, դարձեալ մի խուլ ձայնով հաչեց և դրեց վերմակի վերայ իւր մեծ և մռացի գլուխը, անդադար նայելով դէպ ի պատուհանը: Քուրերը թեքվեցան դէպ ի նա, որ փայփայեն նորա լայն ճակատը, որի միջակէտումը կայր լաւ տեսակից եղածի նշանը — բաւական բարձրութիւն:

— Ինչ ցանկութիւն է վերադ եկել, Տխուր, անդադար հաչելու — ասաց Բլանշը կամաց քաշելով ականջից:

«Խեղճը նա միշտ անհանգիստ է լինում, երբ Դագոբերը այս տեղ չէ. ճշմարիտ, նա որպէս թէ հասկանումէ, թէ այս միջոցին առաւել ևս հարկաւոր էր մեզ պահպանել:— Քուրիկ, կարծես Դագոբերը ուշանումէ մեր հետ բարեւ մնայ ասելու: «Երևի թէ դարմանումէ Ուրախը:— Իսկ մեք և բարեւ մնայ չ՛ասացինք մեր ծերունի Ուրախին: «Այո՛, ճշմարիտ է. ինչպէս ցաւելի է այդ:— Խեղճ ձի... Նա միշտ ուրախութեամբ լիզումէ մեր ձեռքերը, որպէս թէ շնորհակալ լինելով մեր այցելութեան համար: «Բայց երևի թէ Դագոբերը և մեր տեղը բարեւ մնայ ասաց նորան:— Բարի Դագոբեռ, նա միշտ այնպէս պարապումէր մեր հետ, այնպէս երես է տալիս... Մեք ծուլութիւն ենք առնում, բայց նա կրումէ ամենայն վիշտը...

«Արդեօք ինչ պիտոյ է առնել, որ ազատէինք նորան աշխատութեննից:— Ինչ դժբաղդութիւն է, որ մեք հարուստ չենք, և չենք կարող մի փոքր գո՛նէ հանգստութիւն ճարել նորա համար:

«Ա՛հ քուրիկ. հարուստ չենք... մեք... մեք միշտ կը մնանք աղքատ որբեր:— Ապա մեդալիոնը ինչի համար է: «Իհարկէ նա պիտոյ է մեզ մի կերպ յոյս տայ, առանց նորան մեք և չէինք սկսելու այսպիսի երկար ճանապարհ կատարել:— Դագոբերը խոստացաւ ամենայն ինչ պատմել մեզ այս երեկոյ —...

Օրիորդը չ՛կարողացաւ շարունակել: Պատուհանի երկու ապակինները կոտր կոտր եղած թռան սաստիկ ձայն հանելով: Որբերը զարհուրածներից ընկան միմեանց գիրկ, իսկ շունը յարձակվեցաւ դէպ ի պատուհանը կատաղած հաչելով:

Խեղճ, դողդոջուն, և երկիւղից անշարժացած երկու քուրերը պինդ սեղմած մինը միւսին պահումէին իւրեանց շնչառութիւնը. նոքա զարհուրած չէին համարձակվում նայել դէպ ի պատուհանը: Տխուրը առաջևի երկու թաթերը դրած պատուհանի վերայ չէր դադարում բարկացած հաչելուց:

— Ա՜հ, այս ի՞նչ բան է — շշնջումէին որբերը — իսկ Դագոբեռը դեռ մինչև այժմ չէ գալիս։

Յետոյ յանկարծ գանչեց Րօզը բռնելով Բլանշի ձեռքից։

— Լսի՛ր, լսի՛ր… մի մարդ գալիս է սանդուղքների վերայով։

«Ա՜հ Աստուած իմ… կարծես այդ Դագոբեռը չ՚լինի. լսումես ի՞նչպէս ծանր քայլեր են»։ — Տխո՛ւր. շուտ այս տեղ, պաշտպանի՛ր մեզ. գանչեցին երկու քուրերը սաստիկ զարհուրած։

Ճշմարիտ, որ անսովոր ծանր քայլերու ձայն լսվեցան փայտեայ սանդուղքի վերայ և մի օտարոտի աղաղակ լսվեցաւ բարակ միջնապատի քամակից, որ բաժանումէր սենեակը նախասենեակից։ Վերջապէս մի ծանր բան ընկաւ դուռի քամակումը և սաստիկ շարժեցուց նորան։ Օրիորդները սաստիկ վախեցած, առանց ամենևին ձայն հանելու նայումէին միմիանց երեսի։ Դուռը բացվեց. Դագոբեռը ներս մտաւ։ Րօզը և Բլանշը տեսանելով Դագոբեռին ուրախութեններից գրկվեցին, որպէս թէ մի մեծ վտանգից ազատված էին։

«Ի՞նչ պատահեց ձեզ. ինչի՞ց վախեցաք այդպէս», հարց արեց զինուորը զարմացած։ — Ա՜հ, եթէ իմացել էիր դու — ասաց Րօզը դողդոջուն ձայնով, պատճառ երկու քուրերի սրտերը ևս սաստիկ զարկումէին։

— Եթէ դու իմացել էիր, թէ ինչ պատահեց այս տեղ… բաց ի դորանից մեք չ՚ճանաչեցինք քո քայլուածքը… մեզ այնպէս ծանր երևեցաւ… այլ և այն աղաղակը միջնապատի քամակում.....։

«Ի՞նչպէս երկչոտ էք. ես տասն և հինգ տարեկան չեմ և չեմ կարող վազել սանդուղքի վերայով. բաց ի դորանից ուսիս դրած բերումէի անկողինս, այսինքն յարդով լցած մահիճը և ձգեցի նորան դուռի տակ, որ իմ սովորութենովը այն տեղ պառկիմ քնելու»։

— Աստուած իմ, մեք յիմար չե՞նք արդեօք քուրիկ, որ և չ՚մտածեցինք ամենևին այդ մասին. — ասաց Րօզը նայելով Բլանշի վերայ։ Եւ նոցա գեղեցիկ երեսները, որ յառաջ միասին գունաթափել էին, այժմ միասին դարձեալ կարմրեցան։ Այս միջոցին շունը դարձեալ թաթերը դրած պատուհանի վերայ հաչումէր անդադար։

«Այդ ի՞նչ բան է իմ զաւակներ, Տխուրը միշտ հաչումէ դէպ ի այն կողմը», ասաց զինուորը։

— Մե՛ք չ՚գիտենք. մի մարդ կոտրեց ապակին, այս էր, որ մեզ սաստիկ վախեցրեց։ Դագոբեռը առանց և մի խօսք ևս պատասխանելու վազեց պատուհանի մօտ, շուտով բացեց նորան, դուրս հեռացրեց վանդակակապ պաշտպանարանը և գլուխը կոխեց պատուհանից դուրս։

Նա ոչինչ չ՚տեսաւ բաց ի խաւար գիշերից… սկսեց ականջ

գնել, բայց ոչինչ չ՚լսեց բաց ի քամու ձայնից: «Տխուր», ասաց նա, իւր շանը, ցոյց տալով բաց պատուհանը. «Թո՛ւր տեսանեմ դէպ ի դուրս»:

Հաւատարիմ շունը Թռաւ և անյայտացաւ անցանելով պատուհանից, որ միայն ութն ոտնաչափ բարձր էր գետնից: Դագոբեռը, դուրս կախված պատուհանից կիսով չափ, ձայնով և շարժողութեններով քաջալերում էր իւր շունը: «Տխո՛ւր, եթէ մի մարդ կայ այդ տեղ բռնի՛ր նորա կոկորդից, քո ատամները սուր են... բաց մի Թո՛ղ նորան մինչև որ ես օգնութիւն հասանեմ քեզ: Տխուրը ոչինչ չ՚գտաւ:

Լսվում էր նորա այս և այն կողմը վազելը ամենայն տեղ հետքեր որոնելով և երբեմն արձակելով հաչելու ընդհատական խուլ ձայներ որսորդ շների նման, որ որոնում էր գազանի հետքը:

«Երևի թէ ոչ ոք չ՚կայ բարի շուն. եթէ այդ տեղ մի մարդ լինէր դու վաղուց բռնած կը լինէիր նորա կոկորդից»: Յետոյ դառնալով դէպ ի օրիորդները, որ անհանգիստ կերպով ուշ էին դնում նորա խօսքերին և նկատում էին նորա բոլոր շարժողութիւնքը, հարցարեց. «իմ զաւակներ, ի՛նչպէս խորտակվեցան այս ապակիները. դուք նկատեցի՞ք»: — Ո՛չ Դագոբեռ. մեք խօսում էինք միմիանց հետ մինչ յանկարծ լսեցինք սաստիկ ճայթիւն, և ապակիները ընկան յատակի վերայ: «Ինձ Թըվեցաւ, յաւելացրեց Րօզը», որ պաշտպանարանը յանկարծ զարկեց պատուհանին»:

Դագոբեռը քննեց պաշտպանարանը և նկատեց նորա վերայ բաւական երկայն կարթ, որ ազատ պտուտվում էր և որ գիտութեամբ շինած էր, ներսից գոցելու պատճառով: «Դուրսը սաստիկ քամի է», ասաց նա, «և երևի թէ պաշտպանարանը քամու ուժովը զարկել է պատուհանին, իսկ կարթը կոտրել է ապակիները... այո՛, այդպէս ևս պիտոյ է եղած լինի... ո՛չ ովի գլուխը չի գալ այսպիսի կատակ անել»:

Յետոյ դառնալով դէպ ի Տխուրը, շարունակեց. «ի՛նչպէս է ծերունի, բան չ՚կա՞յ»: Շունը պատասխանեց հաչելով. զինուորը հասկացաւ նորան բացասական կերպով, նորա համար և ասաց. «ուրեմն յետ դարձիր... շրջան կատարելով... քեզ միշտ և ամենայն տեղ բաց է մուտքը... դու չես մոլորվում ճանապարհից...

Տխուրը հետևեց այս խորհրդին, մի փոքր ժամանակ հաչելով պատուհանի տակ, սկսեց վազել, որ շրջան առնու տան չորս կողմը և մտանէ սրահը: «Ուրեմն իմ սիրականք հանգստացէք», ասաց զինուորը մօտենալով որբերին, «ուրիշ բան չ՚կայ եթէ ո՛չ քամին վախեցրել է ձեզ»: — Բայց մեք շատ վախեցանք, ասաց Րօզը:

«Գիտեմ, գիտեմ. բայց այս տեղից կը սկսի փչել քամին և

դուք կը մրսէք սաստիկ», ասաց զինուորը հեռանալով դարձեալ դէպ ի պատուհանը, որ վարագոյր չունէր։

Մի փոքր մտածելով, թէ ինչպէս դարման տանի այս անախորժ դիպուածին, նա վեր առեց աթոռի վերայից եղնի մուշտակը, կախեց նորան պատուհանի կպղից և քղանցներով որքան կարելի է լաւ կալեց երկու ծակերը, որ մնացել էին ապակիները կոտրվելից յետոյ։ «Շնորհակալ ենք քեզանից Դագոբեռ... ի՛նչպէս բարի ես դու... մեք այնպէս անհանգիստ լինումէինք, որ չէիր գալիս...— իրաւ, որ դու այսօր ուշ եկար հասարակ սովորութենից։

Նոքա այս տեղ միայն նկատեցին, որ զինուորը, չ՚ազատված դեռ ևս ծանր տպաւորութենից, որ պատահել էր Մօրօկի անախորժ պատահելուց, գունաթափ էր և ամբոխված։ Բօղը առաջինը հարցարեց նորան.— ի՛նչ պատահեց քեզ... ինչպէս գունաթափ ես։— «Ի՞նձ, ամենևին ոչինչ, իմ զաւակներ»։— Արդարև դու շատ գունաթափ ես... երեսդ գոյն չունի ամենևին... Բօղը ճշմարիտ է ասում... «Հաւատացէք, ոչինչ», պատասխանեց զինուորը մի փոքր խառնված, պատճառ վարպետ չէր սուտ ասելու։ Յետոյ գեղեցիկ պատճառ գտանելով իւր ամբոխմունքը մեկնելու, նա շտապեց յաւելացնել։ «Կարելի է, որ ես փոքր ինչ փոխվեցայ երեսով. պատճառ, ձեր երկիւղը ինձ շատ ամբոխեց, մանաւանդ այն բանի համար, թէ ես էի պատճառը։— Դու էիր պատճա՞ռը։ «Իհարկէ. եթէ ես այնքան երկար չ՚նստէի ընթրիք ուտելու ժամանակ, ուրեմն այս տեղ կը լինէի ապակիների կոտրվելու միջոցին... իսկ թէ ես այս տեղ եղած էի դուք պատճառ չ՚ունէիք վախենալու։— Դու եկար... և մեք մոռացանք արդէն անցածը։ «Բայց դու ինչի՞ չես նստում»։— Այս րօպէիս, կը նստիմ իմ զաւակներ. ես բան ունիմ խօսելու ձեր հետ,— ասաց Դագոբեռը առնուլով մի աթոռ և նստելով մահճի գլխի մօտումը, որի վերայ պառկած էին երկու քուրերը։— Տեսանենք. արդեօք չէի՞ք նիրհելու,— յաւելացրեց նա, աշխատելով ժպտել, որ հանգստացնէ նորանց։ «Եթէ կամիս Դագոբեռ, նայիր». պատասխանեցին երկու օրիորդքը նոյնպէս ժպտելով և աշխատելով որքան հնար է մեծ բանալ իւրեանց կապոյտ աչքերը։— Տեսանումեմ, տեսանումեմ,— ասաց զինուորը — նոքա դեռ շուտով չեն փակվելու, բաց ի դորանից դեռ ևս ինն ժամն է։ «Մեք ևս ինչ ասես ունինք քեզ ասելու Դագոբեռ», յաւելացրեց Բօղը նայելով քրոջ երեսին։— Ճշմարիտ։ «Այո՛, մի գաղտնիք պիտոյ է յայտնենք քեզ»։— Գաղտնի՞ք։ «Ի՞նչ զարմանալու բան կայ այս տեղ»։— Եւ շատ երևելի գաղտնիք...— յաւելացրեց Բօղը։ «Այդ գաղտնիքը յարաբերումէ մեզ երկուսիս», վեր առեց Բլանշը։— Այդ մասին ոչ ոք չէ երկբայում, դուք ոչինչ

բան չունիք առանձին։ Ջուր չեն ասում, թէ երկու գլուխ մի գլխարկի տակ։ — «Դու և այդպէս իսկ առնումես ծածկելով մեր երկուսի գլուխը քո մուշտակի կընկուղով», ասաց Բօզը ծիծաղելով։ — Տեսանումես. սոքա ի՛նչպէս կատակող են, սոցա հետ չես կարող խօսել։ Ուրեմն տիրուհիք պատմեցէք, ի՛նչ է ձեր գաղտնիքը։ «Պատմի՛ր քուրիկ», ասաց Բլանշը։ — Ո՛չ տիրուհի. խնդրեմ դուք սկսեցէք, այսօր դուք երեց էք, իսկ այդպէս երևելի գաղտնիքը, ինչպէս դուք անուանումէք նորան, պիտոյ է անպատճառ երեցը պատմէ։ Ուրեմն սկսեցէք պատմել, ես լսումեմ, — ասաց զինուորը, բանադատելով իւրեան ժպտել, որ առաւել կարողանայ ծածկել առանց վրէժխնդրութեան թողած անարգանքը, որ ծանրանումէր նորա հոգու վերայ։

Եւ ահա Բլանշը, որ այն օրը, ինչպէս ասումէր Դագօբեռը, երեց էր, սկսեց խօսել իւր և քրոջ տեղը։

VI.

ԳԱՂՏՆԻՔ։

«Բարի Դագօբեռ», ասաց Բօզը զմայլեցուցիչ քաղցրութեամբ, «յառաջուց խոստացիր չ՚բարկանալ մեր վերայ, յետոյ կ՚ասենք քեզ մեր գաղտնիքը»։

— Ա՛յնպէս չէ՞, որ դու չես բարկանալու քո սիրելի զաւակների վերայ, — յաւելացրեց Բլանշը նոյնպէս քաղցր ձայնով։ «Թո՛ղ ձեր ասածի պէս լինի», պատասխանեց Դագօբեռը. «բաց ի դորանից ես և չ՚գիտեմ բարկանալ ձեր վերայ, և ի՛նչ պատճառով բարկանամ»։ — Գուցէ մեք պարտական էինք յայտնել քեզ մեր գաղտնիքը շատ յառաջ... «Լսեցէք ինձ իմ զաւակներ», պատասխանեց Դագօբեռը խրատական կերպով մի րոպէ մտածելով այս երևելի դիպուածի վերայ. «երկուսից մինն է. դուք, կամ լաւ էք արել, որ չէք ասել ինձ, կամ վատ... եթէ լաւ է եղել ձեր չ՚ասելը, ուրեմն շատ գեղեցիկ է. բայց եթէ վատ, արդէն անցել է. այժմ աւելորդ է խօսել այդ մասին... ուրեմն պատմեցէք, ես բոլորովին ականջ դարձած լսումեմ»։

Բօզը, բոլորովին հանգստացած այս իմաստուն վճռովը, սկսեց պատմել նայելով քրոջ վերայ ժպիտը բերնին։

«Երևակայիր քեզ, Դագօբեռ, երկու գիշեր է ահա՛ շարունակ, որ հիւր է գալիս մեր մօտ»։

— Հիւր, — բացագանչեց զինուորը արագ ուղղվելով։

«Ա՛յո և գեղեցիկ հիւր... խարտեաշ»։

— Սատանայն առնու, ինչպէս խարտեաշ, — գանչեց Դագոբեռը վեր թռչելով աթոռի վերայ։ «Այո՛, խարտեաշ... կապոյտ աչքերով», յաւելացրեց Բլանշը։ — Ի՞նչ սատանայ է... կապոյտ աչքերով. — և Դագոբեռը դարձեալ ցնցվեց աթոռի վերայ։ «Այո՛, կապոյտ աչքերով... ահա՛ այսպէս մեծ, կրկնեց Րօզը, աջ ձեռքի ցուցամատովը չափելով ձախ ձեռքի ցուցամատի վերայ մեծութիւնը։ — Թէ և նա ունենար այսպիսի մեծ աչքեր, — և զինուորը շատ առատութեամբ ցոյց տուեց իւր ձեռքը մինչև արմուկը — թէ և այսպիսի աչքեր ասումեմ ես, այսու ամենայնիւ այս տեղ լաւ բան չ՛կայ... խարտեաշ, կապոյտ աչքերով... տիրուհի՛ք, այս ինչ բան է։ — Եւ Դագոբեռը վեր կանգնեցաւ տեղից խիստ և աննկարագրելի անհանգստութենով։ «Ա՛հ Դագոբեռ ահա՛ դու ինչպէս ես, իսկոյն կը սկսիս բարկանալ դեռ ևս բանի սկզբումը», յաւելացրեց Բլանշը։ — Ի՞նչպէս սկզբումը. պիտոյ է շարունակութիւնը և վերջը լինի։ «Վերջը՞, երևի թէ չէ...» և Րօզը անխելքի նման սկսեց ծիծաղել։ — Մեք ցանկանումէինք, որ այդ ամենևին վերջ չունենար — յաւելացրեց Բլանշը բաժանորդ լինելով քրոջ ուրախութեանը։

Դագոբեռը առանց ծիծաղելու նայումէր երբեմն այս, և երբեմն այն քրոջ վերայ, կամելով հասկանալ այս առեղծուածը. որ ինքը չ՛գիտէր. բայց նայելով նոցա գեղեցիկ երեսներին, որ ոգևորված էին կենդանի և պարզահոգի ծիծաղով, նա մտածեց, որ նոքա չէին կարողանալու այսպէս ծիծաղել, եթէ մի որպիսի և իցէ մեծ սխալ արած լինէին, այս պատճառով դադարեց երեսը կնճռելուց և ինքը ևս սկսեց ուրախանալ, որ իւր որբերը այնպէս ուրախ են, մինչդեռ ինքը գտանվումէր անախորժ դրութեան մէջ։

«Ծիծաղեցէք, ծիծաղեցէք, իմ զաւակներ», ասաց նա. «ես ինքս ևս ուրախանումեմ և հոգիս ցնծումէ, երբ դուք ծիծաղումէք։ Յետոյ մտածելով, որ չէր պիտոյ այդպէս պատասխանել մատաղահաս օրիորդների խոստովանութեանը, նա յաւելացրեց խիստ ձայնով», ճշմարիտ է ես սիրումեմ ձեր ծիծաղելը բայց ո՛չ այն ժամանակ տիրուհի՛ք, երբ դուք խարտեաշ և կապո՛յտ աչքերով հիւրեր էք ընդունում։ Այո՛ և ես յիմար եմ, որ լսումեմ ձեր կատակը... խոստովանեցէք շուտով դուք ծիծաղումէք իմ վերայ. այնպէս չէ՞»։ — Ամենևին... ինչ որ քեզ ասացինք ճշմարիտ է, կատարեալ ճշմարիտ։ «Դու գիտես Դագոբեռ, որ մեք երբէք սուտ չենք խօսում», յաւելացրեց Րօզը։ — Նոքա ճշմարիտ են, երբէք սուտ չեն խօսում. կրկնեց զինուորը նորից սկսելով անհանգստանալ։ — Բայց այս ինչ սատանայ է. ինչ կերպով այդ հիւրը կարողացաւ այս տեղ մտանել։ Ես քնումեմ նախասենեակումը ձեր դուռնի տակ, իսկ Տխուրը

պառկումէ պատուհանի տակ, և թող նա ունենայ ինչպէս կամի կապոյտ աչքեր և խարտեաշ մազեր այսու ամենայնիւ այլապէս չէ կարող անցանել, եթէ ոչ կամ դռնից կամ պատուհանից։ Մեք Տխուրի հետ շատ զգաստ ենք... թող գայ մի չ՛հրաւիրած հիւր, մեք կ՛ընդունենք նորան մեր կերպով։ Բայց իմ զաւակներ հերիք է կատակել, պատմեցէք մի լաւ։

Որբերը նկատելով Դագոբեռի երեսումը, որ նա արդարև անհանգիստ էր եղած, չ՛կամեցան առաւել ևս դէ՛պ ի չարը գործածել նորա բարութիւնը նայեցին միմիանց երեսի. Րօզը, իւր գեղեցիկ ձեռքում բռնելով ծերունի զինուորի մեծ և կոշտ ձեռքը, ասաց. «Հերիք է անհանգիստ լինել, մեք կը պատմենք քեզ մանրամասն, թէ ի՛նչպէս եկաւ մեզ մօտ մեր բարեկամ Գաբրիէլը։ — Դարձեալ նոյն բանը. անո՞ւն ևս ունի նա։ «Իհարկէ մեք և ասումենք քեզ... Գաբրիէլ... այնպէս չէ՞ Դագոբեռ, գեղեցիկ անուն է։ Այո՛, և դու ինքդ կը սիրես նորան, երբ մի լաւ ճանաչես։

— Կը սիրեմ ձեր բարի Գաբրիէ՞լը — կրկնեց զինուորը գլուխը շարժելով — կը սիրեմ ձեր բարի Գաբրիէլը — այդ դեռ ևս Աստուած գիտէ, հարկաւոր է յառաջ իմանալ բոլոր անցքը։ Յետոյ մի փոքր մտածելով, յաւելացրեց. զարմանք է. այդ բանը իմ միտքս բերումէ...

«Ի՞նչ բան, Դագոբեռ»։

— Տասն և հինգ տարի սորանից յառաջ, ձեր հայրը, Ֆրանսիայից վերադառնալու ժամանակ, ինձ մի նամակ բերեց իմ կնօջից. կինս գրումէր, թէ չ՛նայելով իւր աղքատութեան վերայ և չ՛նայելով որ իւր ձեռքումն էր մեր անչափահաս որդին Ագրիկօլը, նա վեր է առել իւր մօտ մի որբ տղայ հրեշտակի նման գեղեցիկ, նորան նոյնպէս գանչումէին Գաբրիէլ։ Դեռ ևս շատ ժամանակ չէ, որ ես նորա մասին լուր ստացայ։ «Ո՞վի ձեռքով»։ — Իսկոյն կը պատմեմ։ — «Ահա տեսանումե՞ս, դու ունիս քո սեպհական Գաբրիէլը. ի՛նչպէս ապա չես սիրելու և մերը»։ — Ձերը՛... ձերը՛... կը տեսանենք դեռ ևս ի՛նչպէս է ձերը... ես այս տեղ փշի վերայ եմ նստած...

«Դու գիտես Դագոբեռ», ասաց Րօզը, «մեր Բլանշի հետ սովորութիւնը, ձեռք ձեռքից բռնած քնել»։ — Գիտեմ, գիտեմ. ես ստէպ զուարճանումէի տեսանելով երբ դուք պառկումէիք օրօրոցի մէջ։ Մարդ չէր կշտանում ձեր վերայ նայելուց. այնպէս գեղեցիկ էիք դուք։ — «Ահա երկու գիշեր սորանից յառաջ, մեք դեռ նոր քնել էինք, յանկարծ տեսանք...» — Երազներո՞ւմդ — գանչեց Դագոբեռ — մինչ դուք քնո՞ւմէիք, ուրեմն երազներումդ։ — Իհարկէ երազներումս... ի՛նչպէս կարելի էր այլապէս»։ — Թո՛ղ ուրեմն քրոջս

վերջացնել խօսքը։ — «Այդ պէլ բան է», ասաց գինուորը որպէս թէ հոգի առնուլով, «այդ պէլ բան է։ Իհարկէ ես միշտ տեղիք չունէի անհանգիստ լինելու այդ մասին... պատճառ... բայց այսու ամենայնիւ երազում կարծես թէ առաւել լաւ է... Ասա՛, հոգիս»։ — Հազիւ թէ քնել էինք մեք, երազ տեսանք... «Երկուսդ միասի՞ն»։ — Այո՛, միւս օրը զարթած, մեք սկսեցինք պատմել միմիանց ինչ որ տեսել էինք երազում, մի և նոյն բանը»։ — Շատ զարմանք. իմ զաւակներ։ ի՞նչ տեսաք երազում։

Տեսանք, որպէս թէ ես և Բլանշը նստած էինք կարգով. յանկարծ ներս է մտանում մի գեղեցիկ հրեշտակ, երկայն սպիտակ հանդերձով, խարտեաշ մազերով և կապոյտ աչքերով. նորա երեսը այնպէս բարի էր, որ մեք ափերս կպեցինք, որպէս թէ կամէինք աղօթք առնել նորա առաջև։ Նա ասաց մեզ քնքոյշ ձայնով, որ Գաբրիէլ է իւր անունը, որ մեր մայրը ուղարկել է նորան մեզ պահպանելու, և թէ նա երբէք հեռանալու չէ մեզանից»։ — Եւ յետոյ — յաւելացրեց Բլանշը — նա բռնեց մեր երկուսի ձեռքերից և թեքված դէպ ի մեզ, երկար նայեց մեր վերայ, այնպիսի զմայլելի հեզութենով, որ մեք չէինք կարողանում հեռացնել մեր աչքը նորա գեղեցիկ երեսից։ — «Ճշմարիտ է», շարունակեց Րօզը, «և մեզ թըվումէր, թէ նորա կախարդիչ հայեացքը կարծես թէ քարշումէր երբեմն մինիս երբեմն միւսիս. կամ թէ թափանցումէր ուղիղ մեր սիրտը... դըժբաղդաբար, Գաբրիէլը շուտով գնաց մեր մօտից, ասելով, թէ հետևեալ գիշերը մեք տեսանելու էինք նորան»։

— Ի՞նչպէս եղաւ, եկա՞ւ։

«Իհարկէ, դու կարող ես երևակայել, թէ ի՛նչպէս ցանկանումէինք շուտով քնել, որ իմանայինք, թէ նա կը կատարէ՞ր իւր խոստմունքը»։

— Ես այժմ հասկացայ, թէ դուք ի՛նչ պատճառով երէք օր յառաջ երեկոյեան այնպէս ջերմեռանդութեամբ շփումէիք ձեր աչքերը. — ասաց Դագոբեռ ճակատը շփելով. — երևումէր, ասես թէ քունը միանգամայն յաղթահարումէր ձեզ... դուք կամենումէիք, որքան կարելի է ինձ գլխից ցանել, որ ազատ պարապէիք ձեր երազատեսութեամբը։ «Ճշմարիտ է, Դագոբեռ»։ — Բանը այն էր, որ չէր կարելի ձեզ ինձ ասել, ինչպէս Տխուրին. գնա Դագոբեռ քնի՛ր։ Բայց ի՛նչպէս եղաւ եկա՞ւ, ձեր Գաբրիէլը։ «Եկաւ և այս անգամ նա շատ բան խօսեց մեր հետ. և մեր մօր անունով մեզ այնպիսի բարոյական, ազնիւ խորհուրդներ տուեց, որ յետոյ մեք Բլանշի հետ ամբողջ օրը յիշումէինք նորա իւրաքանչիւր խօսքը, նորա կերպարանքի, նորա հայեացքի գծագրութիւնը։

— Ահա թէ ինչ պատճառով տիրուհիք, երեկ բոլոր ճանապարհումը դուք միշտ շշնջումէիք և այնպէս ցրուած, որ իմ հարցմունքներին պատասխանումէիք մի անիմաստ բան: «Մեք անդադար մտածումէինք մեր Գաբրիէլի վերայ»: — Եւ այն օրից մեք նորան այնպէս սիրեցինք, ինչպէս և նա մեզ: «Ուրեմն նա միայն է ձեր երկուսի համար»: — Միթէ մեր երկուսի մայրը ևս մի հատ չէ՞: «Եւ դու Դագոբեռ միայն չե՞ս մեր համար: — Բոլորը ճշմարիտ է, բայց բանը այս է, որ ինչպէս երևումէ ես շուտով կը սկսեմ նախանձիլ այդ Գաբրիէլին, այո...: «Դու մեր ցերեկվայ բարեկամն ես, իսկ նա գիշերվայ»: — Բայց գործով այդպէս դուրս չէ գալիս. գիշերը տեսանումէք նորան երազում, իսկ ցերեկը միշտ խօսումէք նորա վերայ. ուրեմն ինձ ինչ կը մնայ: «Քեզ մնումէն քո երկու որբերը, որոնց դու շատ սիրումես, ասաց Րօզը: — Եւ որոնք, բաց ի քեզանից ոչ ոք չունին աշխարհի երեսին. — յաւելացրեց Բլանշը քաղցր ձայնով:

«Ը՛մ, հըմ, թո՛ղ այդպէս լինի իմ ղաւակներ», յաւելացրեց զինուորը քնքշութեամբ. «Ես բաւական կը լինիմ իմ բաժնովը և չեմ բարկանում ձեր Գաբրիէլի վերայ: Ես յառաջ գիտէի, թէ մեք կարող ենք Տխուրի հետ հանգիստ քնել.. բայց այս տեղ մի զարմանալու բան չկայ, ձեր առաջին երազը տպաւորութիւն է գործել ձեր երևակայութեան վերայ, յետոյ ամբողջ օրը խօսել էք դորա վերայ և դարձեալ երևել է ձեզ մի և նոյն երազը. խելքից հեռի չէ, որ դուք ձեր գիշերային գեղեցիկը կը տեսանէք և երրորդ անգամ»: — Ա՛հ Դագոբեռ, հերիք է կատակել. ո՛չ ով չէ վիճում, որ այդ լոկ երազ է... բայց մեզ թըվումէ, թէ մեր մայրն է ուղարկում այդ երազները: Նա չէ՞ր, որ միշտ ասումէր մեզ, թէ որբ աղջկերքին պահպանումեն պահապան հրեշտակները... Գաբրիէլը մեզ պաշտպան կը լինի, նոյնպէս և քեզ: «Շնորհակալ եմ նորանից, եթէ ինձ չմոռանայ. բայց առաւել լաւ կը լինի, եթէ պահպանէ ձեզ Տխուրը. նա այնպէս խարտեաշ չէ, բայց դորա փոխանակ առաւել սուր են նորա ատամները, այս պատճառով ևս, նա աւելի յուսալի է»: — Դու ինչպէս անտանելի ես քո կատակներովը, Դագոբեռ: «Ճշմարիտ. դու միշտ ծիծաղումես ամենայն բանի վերայ:

— Ճ՛շմարիտը պիտոյ է ասել, խիստ շատ եմ ծիծաղում... ծերունի Ուրախի նման ծիծաղումեմ առանց ատամներս բանալու: Հերիք է, մի բարկանաք տիրուհիք, իրաւ որ ես արդար չեմ, դուք այդ երազի հետ միացուցիք ձեր մօր յիշատակը և լաւ էք առնում, որ խօսումէք դորա վերայ առանց ծիծաղելու: — Բաց ի դորանից — յաւելացրեց նա — երազները շատ անգամ կատարվումեն... ահա օրինակը, մի անգամ Սպանիայում իմ երկու ընկերները, որ կայսերա-

կան Դրակոնեան գնդից էին, տեսան երազում. որպէս թէ դեղում էին նորանց. և ճշմարիտ. միւս օրը դեղեցին նորանց: Դուք միշտ տեսանումէք երազում այդ գեղեցիկ Գաբրիէլը, այն պատճառով... մի խօսքով այն պատճառով, որ այդ ուրախացնումէ ձեզ: Դուք խեղճերդ այնպէս ուրախ չէք. այս պատճառով, գոնէ գիշերները երևումեն ձեզ ուրախացուցիչ երազներ: Այժմ ես պիտոյ է մի քանի բան պատմեմ ձեզ. բայց խօսք կը լինի և ձեր հանգուցեալ մօր վերայ, ուրեմն խոստացէք ինձ չ՚տխրել: — Հաւատա մեզ Դագոբեռ, մեք յիշելով մեր մայրը երբէք չենք տխրում, բայց միայն մտածումենք:

«Ուրեմն շատ լաւ է. ես երկիւղ կրելով, որ մի գուցէ տխրեցնէի ձեզ, միշտ յետ էի գնում այս պատմութիւնը: Ձեր մայրը ինքը անպատճառ կը պատմէր ձեզ բոլորը, եթէ դուք չափահաս եղած լինէիք. բայց մահը այնպէս յանկարծ կտրեց նորա կեանքի թելը, որ նա չ՚կարողացաւ այդ անել. բաց ի դորանից նորան ևս, ինչպէս ինձ, շատ ցաւելի էր խօսել այդ մասին. իսկ ես հաստատել էի մտքումս չ՚պատմել ձեզ այդ բաները, մինչև չ՚անցանէինք պատերազմի դաշտից, ուր ձեր հայրը գերի գնաց... բայց այս միջոցին ես շահեցայ ժամանակ: Վերջապէս աչա անցանք մեք այն դաշտից. առաւել ևս լռումնալու պատճառ չ՚մնաց. հարկաւոր է լինում պատմել ձեզ բոլորը»:

— Պատմի՛ր Դագոբեռ, մեք պատրաստված ենք քեզ լսելու, — պատասխանեցին օրիորդքը, ընդունելով ուշադիր և մտածող կերպարանք:

Զինուորը մի փոքր լռելուց յետոյ, հաւաքելով իւր միտքը, ասաց մատաղահաս որբերին. «Ձեր հայր Գեներալ Սիմոնը մի հասարակ արհեստաւորի որդի էր, նորա հայրը մինչև իւր մահը չ՚թողեց իւր արհեստը, որչափ ասումէր նորան գեներալը, բայց զուր էր լինում... նորան ինչ կամենայիր ասէիր, նորա համար մի և նոյն էր, նա իւրեանը կը նայէր... բայց դորա փոխանակ շատ բարի էր... մի և նոյն, ինչպէս ձեր հայրը, ամենևին անզանազան: Ձեր հայրը, իբրև հասարակ զինուոր պաշտօն մտանելով, ստացաւ մինչև գեներալութեան աստիճան և բաց ի դորանից և կոմսութիւն. ուրեմն կարող էք դատել, թէ նա ո՞րչափ աշխատել է իւր կեանքումը և ինչ փառքով»:

— Կոմսութիւն. այդ ինչ է նշանակում:

«Ոչինչ, դատարկ բան, մի պատուանուն է, որ կայսրը իբրև պարգև ընծայումէր աստիճանի հետ միասին, և ձեր հայրը ստացել էր կոմսութիւն... բայց և այս պիտոյ է ասել որ նորա նման կտրիճ այլ ևս չ՚կար բոլոր բանակի մէջ. ինքը գեղեցիկ, քաջ...

— Ուրեմն այդ ճշմարիտ է նա շատ գեղեցիկ էր: Մեր մայրը միշտ ասումէր, թէ նա շատ գեղեցիկ է:

«Աւելորդ է ասել... բայց ամենևին նման չէ ձեր խարտեաշ գեղեցիկ Գաբրիէլին։ Բարձրահասակ, թուխ... և երբ նա հագնումէր իւր պաշտօնական նշանազգեստը... մի խօսքով այնպէս կտրիճ էր, որ բոլոր կնիկ մարդերին խելքից էր հանում։ Բայց մեք ինչպէս սիրումէինք նորան. նորա հետ պատրաստ էինք և սատանայի վերայ ես յարձակվելու... եթէ միայն համարձակվէր սատանայն երեւիլ...»

— Ասումեն, թէ նա, ո՛չ միայն գեղեցիկ էր, այլ և բարի հոգի ունէր։

«Բարի... նա՛. նա ձեռքով ծռումէր պայտը այնպէս հեշտութեամբ, ինչպէս դուք խաղալու թուղթը. իսկ այն օրը, երբ գերի առնըվեցաւ նա, թշնամու շատ ռմբաձիգներ կոտորեց իւր սրով իսկական թշնամիների թնդանօթների վերայ։ Այդպիսի ուժեղ և քաջ մարդը բարի չ'լինի՞... Ահա շուտով տասն և ինն տարի կը լինի, մինչ այս տեղից ո՛չ շատ հեռի, այն տեղում, որ ցոյց տուեցի ձեզ դեռ Մօկկերն չ'հասած, ձեր հայրը վտանգաւոր վիրաւորված ընկաւ ձիուց... ես նորա մօտ էի, օգնութիւն վազեցի, բայց հինգ րոպէ չ'անցաւ մեք երկուսս ես գերի ընկանք։ Ո՞վի ձեռքով... մի ֆրանսիացու։ Այո՛ մի փախստական Մարկիզի, գնդապետի Ռուսաց ծառայութեան մէջ». ասաց Դագօբեռ վշտացած, «և երբ այս մարկիզը մօտեցաւ գեներալին, ասաց ֆրանսիարէն «Պարո՛ն, անձնատուր եղէք ձեր հայրենակցին»։ — Մի ֆրանսիացի, որ ընդդէմ զինուորված է ֆրանսիային, ամենևին իմ հայրենակիցը չէ. դա մի հայրենիք դաւաճանող է. իսկ ես անձնատուր չեմ լինում մի ուրացողի, պատասխանեց գեներալը, և վերջին ուժը հաւաքելով մօտեցաւ մի Ռուսաց ռմբաձիգ զինուորի և նորան տալով իւր սուրը, ասաց. «կտրի՛ճ, քեզ անձնատուր եմ լինում։ Մարկիզը գունաթափեցաւ ինչպէս կտաւ արհամարհութենից....»

Որբերը հպարտ հպարտ նայեցան միմեանց վերայ, պայծառ կարմրութենով ծածկվեցան նոցա թշերը և ակամայ բացագանչեցին, ա՜հ, քաջ հայր, քաջ հայր...

«Հըմ. իսկոյն երևումէ, որ այս օրիորդների երակների մէջ խաղումէ զինուորական արիւն», ասաց Դագօբեռ, մի տեսակ հպարտութեամբ չփելով իւր ընչացքը և յետոյ դարձեալ շարունակեց իւր պատմութիւնը։ «Այս կերպով, մեք գերի գնացինք։ Գեներալի վերջին ձին սպանված էր նորա տակում. նա հեծել էր Ուրախի վերայ, որ այն օրը վէրք չէր ստացած, և մեք ապահով հասանք մինչև Վարսաւիա։ Այս տեղ ձեր հայրը ծանօթացաւ ձեր մօր հետ, որին գանչումէին «Վարսաւիայի մարգարիտ». ուրեմն կարելի է երևակայել,

թէ նա ինչպէս եղած կը լինէր: Չեր հայրը, ամենայն բանի մէջ պաշտելով բարութիւնը և գեղեցկութիւնը, շուտով սիրահարվեցաւ ձեր մօր վերայ, ձեր մայրը սիրեց նոյնպէս նորան, բայց նորա ծնողքը ուրիշի հետ նշանել էին... բայց ո՜վ հեա...: Դագոբեռը չ՛կարողացաւ խօսքը վերջացնել:

Այս րոպէին Ռօզը սաստիկ գանչեց, ցոյց տալով դէպ ի պատուհանը, սաստիկ վախեցած:

VII.

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԸ:

Վախեցած օրիորդի ձայնի վերայ Դագոբեռը յանկարծ վեր թռաւ աթոռի վերայից և հարց արեց». «ինչ պատահեցաւ սիրելի Ռօզ»: — Նայի՛ր... նայի՛ր... ասաց Ռօզը, ինձ երևեցաւ, որ մի ձեռք ներս մտաւ պատուհանից և քարշեց մուշտակը: Ռօզը դեռ չէր կարողացել աւարտել իւր խօսքը, Դագոբեռը արդէն վազեց դէպ ի պատուհանը, քարշեց մուշտակը, բացեց պատուհանը, նայեցաւ... անթափանցելի խաւար... սկսեց ականջ դնել — ոչինչ չէր լսվում, միայն քամին սաստիկ փչումէր: Դագոբեռը վեր առեց ճրագը սեղանից, դուրս կախվեց պատուհանից ճրագը ձեռքին, պաշտպանելով բոցը իւր ափովը, բայց ոչինչ չ՛կարողացաւ նկատել... նա դարձեալ փակեց պատուհանը, մտածելով, թէ քամին շարժեցրել էր մուշտակը և թէ Ռօզը վախեցել էր առանց պատճառի:

«Ո՛չ ով չկայ, իմ զաւակներ, հանգիստ կացէք», ասաց նա. «մուշտակը շարժվել է երևի թէ քամու սաստիկ փչելուց»:

— Բայց ինձ շատ յայտնի երևեցաւ, որ պատուհանից մի ձեռք ներս մտաւ և կամաց քարշեց մուշտակը. — ասաց Ռօզը դեռ ևս դողալով բոլոր մարմնով: «Բայց ես աչքս չէի դարձնում Դագոբեռից, այս պատճառով ոչինչ չ՛տեսայ», յաւելացրեց Բլանշը:

— Բան ևս չ՛կար տեսանելու իմ սիրելիք. և ինչ պիտոյ է լինի... պատուհանը ութն ոտնաչափ բարձր է գետնի երեսից, ուրեմն առանց սանդուղքի հսկայն ևս շուտով չէ հասանելու նորան. իսկ թէ սանդուղք դրած լինէին, այն ժամանակ դեռ հեռացրած չէին լինել նորան և իհարկէ ես ևս կը տեսանէի իսկոյն, Ռօզը գանչած րոպէին, ես արդէն պատուհանի մօտ էի, ցած նայեցայ ճրագով, բայց ոչինչ չ՛տեսայ:

«Ուրեմն երևակայութիւնս խաբեց ինձ», ասաց Ռօզը: — Իհարկէ քուրիկ, այդ քամին էր — պատասխանեց Բլանշը: «Ուրեմն ների՛ր

ինձ Դագոբեռ, որ ես զուր տեղը անհանգիստ արեցի քեզ», յաւելացրեց Բօզը։

— Մի մեծ բան չէ — պատասխանեց զինուորը, մտածելով — ճշմարիտ ափսոս, որ Ցխուրը չ՚վերադարձաւ, նա կը զգուշանար պատուհանին և դուք երկիւղի պատճառ ունենալու չէիք։ Երևի նա հոտ առնելով իմացած, թէ ո՞ւր է կապած Ուրախը, գնացել է իւր ծերունի ընկերին այցելութիւն... արդեօք գնա՞մ նորա քամակից։

«Ո՛չ, ո՛չ, Դագոբեռ, մի՛ թողուր մեզ», բացագանչեցին երկու օրիորդքը. «առանց քեզ շատ երկիւղալի կը լինի»։ — Բայց այժմ և Ցխուրը երևի թէ շուտով կը գայ և կը սկսի դուռը ճանկել... ուրեմն լաւ է շարունակենք մեր բանը — ասաց Դագոբեռ և նստեց դարձեալ մահճի գլխումը, բայց ուղիղ պատուհանի հանդէպ։

— Ես արդէն ասացի ձեզ, որ ձեր հայրը, մնալով Վարսաւիայի մէջ իբրև գերի, սիրահարվեցաւ ձեր մօր վերայ, բայց նորան կամենումէին ուրիշի տալ։ 1814 թուականին մեք լսեցինք, որ պատերազմը վերջացել է. կայսրը աքսորվել է Էլբա կղզին, իսկ Բուրբոնեանք վերադարձել են Ֆրանսիայ։ Այս տեղ ձեր մայրը՝ սկսեց ասել գեներալին, թէ ահա պատերազմը վերջացել է, դուք ազատ էք, կայսրը անբաղդութեան մէջ է, դուք ամենայն բանով պարտական էք նորան, գնացէք նորա մօտ... չ՚գիտեմ երբ կը տեսանենք միմիանց, բայց ես ո՛չ ովի չեմ գնալ բաց ի ձեզանից և մինչև իմ կեանքի վերջը իմ սիրտը ձեզ է պատկանում... Գեներալը, գնալուց յառաջ, գանչեց ինձ իւր մօտ և ասաց. «Դագոբեռ մնացի՛ր այս տեղ, գուցէ դու հարկաւոր լինիս օրիորդ Եւային, եթէ նորա ազգականները սկսեն նեղել նորան և նա մտածէ փախչել նորանցից. և մի և նոյն ժամանակումը դու օգնական կը լինիս մեր գրագրութեանը։ Փարիզումը կը տեսանեմ քո կինը և որդին, կ՚ասեմ նորանց, որ դու ողջ ես և առողջ, որ դու ինձ... բարեկամ ես։ «Դու նոյնպէս բարի էիր», կրքով ասաց Բօզը ուղղելով իւր կապոյտ աչքերը Դագոբեռի վերայ։ — Բարի դէպ ի հայրը, դէպ ի մայրը և դէպ ի նոցա զաւակները — յաւելացրեց Բլանշը։

«Մինին սիրելով չէ կարելի չ՚սիրել և միւսերը», պատասխանեց զինուորը, «այսպէս ահա գեներալը գնաց Էլբա կղզին կայսրի մօտ. իսկ ես մնալով Վարսաւիայի մէջ թաքնվումէի ինչ տեղ ասես մօտ այն տունին, ուր բնակվումէր ձեր մայրը։ Գեներալը իմ անունի վերայ գրումէր նամակներ, իսկ ես ծածուկ տալիս էի ձեր մօրը։ Մի անգամ, — ահա ինչպէս բան է իմ զաւակներ յանկարծ գրումէ գեներալը, թէ կայսրը յիշել է ինձ...»։ — Քեզ. ուրեմն կը ճանաչէր նա քեզ։ — «Բայց դուք ինչպէս էիք կարծում։ Ձեր հայրը չ՚գի-

տեմ ինչ էր անել, որ կայսրը իսկոյն վեր էր առել, թէ Դագոբեռը. գիտեմ հեծեալ և ամբաձիգ իմ հին Թիկնապահ գնդի։ Նա դեռ ևս Եգիպտոսումը, Իտալիայումը... բոլորովին վիրաւորված էր. Հին մորթող է, ես ինքս խաչ կախեցի նորա կրծքից Վագրամումը։ Ես չեմ մոռացել նորան։ Ահա ինչպէս բան է, իմ զաւակներս։

Երբ ձեր մայրը կարդաց ինձ այս բանը, ես իսկոյն անխելքի նման գոռացի։ Իսկ խաչը, որ նա իւր ձեռքով տուել էր ինձ, աչքիցս առաւել պահումեմ... ես պահումեմ նորան ահա այս ճանապարհակրիս մէջ, այն բաների հետ, ինչ որ մեզ համար առաւել թանգագին է — մեր քսակի և թղթերի հետ։

Արդեօք ես ինչ էի խօսում։ Ես տալիս էի ձեր մօրը գեներալի նամակները, խօսումէի նորա հետ ձեր հօր վերայ, այդ շատ մխիթարումէր նորան։ Ձեր խեղճ մայրը շատ դժուար դրութեան մէջ էր։ Նորա բոլոր ազգականքը ընդդէմ էին նորան և շատ վիրաւորումէին, բայց նա ասումէր. ոչ ոքի մարդու չեմ գնալ, բաց ի գեներալ Սիմոնից։ Խօսք չկայ, քաջ կին էր հանգուցեալը... որպիսի օրինակ առնելու համբերութիւն, ինչպէս անդրդուելի հաստատութիւն։ Մի անգամ ինչպէս եղաւ գեներալից նամակ եկաւ նորան, թէ նա կայսրի հետ միասին դուրս է եկել Էլբա կղզուց։ Պատերազմը դարձեալ բացվեցաւ։

Ձեր հայրը պատերազմումէր ամենայն քաջութենով, նորա զինուորքը կրակն էին մտանում... Եւ ո՞վ արդեօք կը հրաժարվէր իւր կեանքը դնելուց այդպիսի գեներալի համար...» Այս բաները լսելու ժամանակ ծեր զինուորի արիւնը եփ եկաւ, ճակատի երակները լարվեցան. Թշերը վառվումէին։ Բայց ոչ նա միայն զգումէր այն լսողութեան ազդեցութիւնը, նորա պատմութիւնը ամբոխեց և որբերը. նոցա սիրտը զարկումէր առաւել ուժով, թշերը այրվումէին։ — Ինչ երջանկութիւն է, որ մեք այդպէս քաջ հայր ունինք — բացագանչեց Բլանշը։ «Արդարև երջանկութիւն. բաց ի դորանից ինչ պատիւ է, իմ զաւակներ։ Մօնտմիրալեան պատերազմից յետոյ, երեկոյեան կայսրը, բոլոր զօրքի սրտի ուրախութեան համար պարգևեց ձեր հօրը պատերազմի դաշտումը Լէյնի զօրագլխութիւն և Ֆրանսիայի մարշալութիւն»։

— Ֆրանսիայի մարշալութիւն. — ասաց Ռօզը զարմացած. դեռ ևս չհասկանալով կատարելապէս այս խօսքերի նշանակութիւնը։

«Եւ Լէյնի զօրավարութիւն». յաւելացրեց, ոչ պակաս զարմացած Բլանշը։

— Այո այդպէս, Պետրոս Սիմոնը, էր և մարշալ և զօրավար — բայց յետոյ չընդունեցին այս պարգևները. պատճառ, շուտով այս

պատերազմից յետոյ ուր հանդիսացաւ ձեր հայրը, հասաւ զարհուրելի օրը . . . Այդ օրը, իմ զաւակներ, անուանվում Վատերլօօ: Ձեր հայրը, առաջնորդելով Թիկնապահ բանակին, մնաց պատերազմի դաշտում բոլորովին ծածկված վէրքերով: Երկար ժամանակ նա չ՚կարողացաւ ուղղվիլ. բայց հազիւ թէ նա մի փոքր թեթևացել էր, սկսեց խնդրել, որ թոյլ տան գնալ Սուրբ Հեղինէի կղզին, մի այլ կղզի աշխարհի ծայրում, ուր Անգլիացիք տարեցին մեր կայսրը: Դժբաղդաբար, ձեր հօրը թոյլ չ՚տուեցին գնալ, նա բարկացաւ, մտածեց Ֆրանսիայ գանչել կայսրի որդին և կամենումէր ազմել մի գունդ, որի մէջ գտնվումէին համարեա թէ նորա բոլոր առաջին զինուորքը: Այս դիտաւորութենով նա գնաց Պիկարտիայի մի քաղաքը, ուր լինումէր այս գունդը, բայց արդէն գիտէին այն տեղ ձեր հօր խորհուրդը: Հազիւ թէ նա եկած էր այն տեղ, չ՚թողեցին մինչև անգամ փոքր ինչ հոգի առնուլ, նոյն րոպէին յափշտակեցին նորան և բերեցին գնդի կառավարչի մօտ. . . . բայց գիտէք ո՞վ էր առաջնորդում այդ գնդին. . . բայց այդ, թող մնայ. . . . երկայն պատմութիւն է, բաց ի դորանից այդ առաւել կը վշտացնէ ձեզ. . . : Մի խօսքով ձեր հայրը շատ ժամանակ է, որ ատումէր այդ գնդապետը զանազան պատճառներով: Գեներալը միայն մնալով նորա հետ, ասաց նորան, «եթէ դուք ցած մարդ չէք, ուրեմն ազատեցէք ինձ մի քանի ժամ և սկսենք դէպ ի մահ մարտնչել, պատճառ ես արհամարհումեմ ձեզ, ահա այս բանի համար, ատումեմ, ահա այս բանի համար, բաց ի դորանից և այն բանի համար: Գնդապետը համաձայնեցաւ նորա հետ. արձակեց ձեր հայրը. միւս օրը նոքա մենամարտեցան և գնդապետը ընկաւ մեռածի նման:

«Ո՛հ Աստուած իմ»:

— Գեներալը դեռ ևս սրբումէր իւր սուրը, մինչ յանկարծ մի նորան հաւատարիմ մարդ վազեց ասել նորան, որ նա շուտով անյայտանայ, պատճառ նորան արդէն որոնումէին: Նա լսեց և յաջողութեամբ դուրս գնաց Ֆրանսիայից. . . և լաւ որ այսպէս եղաւ. երկու շաբաթից յետոյ նորան դատապարտեցին դէպ ի մահ, որպէս դաւաճան:

«Աստուած իմ, անբաղդութիւնք են բոլորը»:

— Բոլորը դէպ ի լաւ են. զուր չեն ասում, թէ բաղդաւորութիւնը անբաղդութեան հետ մի կարգում են ման գալիս. . . այսպէս ևս պատահեց: Ձեր մայրը անյողդողդ մնաց իւր խոստմունքի մէջ և անհամբերութենով սպասումէր նորա վերադարձին: Ձեր հայրը արդէն ոչինչ չէր կարող առնել, ոչ կայսրի և ո՛չ նորա որդու համար, նորան աքսորեցին Ֆրանսիայից և նա եկաւ Վարշաւիա: Ձեր

մօր ծնողքը արդէն մեռած էին, ձեր մայրը ազատ էր այն ժամանակ, նոքա ամուսնացան և ես վկաների մինն էի։

«Ճշմարիտ է քո ասածը, Դագոբեռ... բաղդը դեռ ես այդպիսի նեղութիւնների մէջ չէ հեռացել նորանից»։

— Այսպէս, նոքա երջանիկ էին իւրեանց բարեգործութիւններովը, բայց երկար չվայելեցին մի հանգիստ կեանք։ Ձեր հայրը խառն լինելով մի գործի մէջ.... շուտով հարկադրվեցաւ փախչել։ Ձեր մայրը կամենումէր ահա գնալ նորա հետ, բայց մի դատաստանական գործ արգելք եղաւ նորան.... և շուտով զրկվեցաւ նա հացի վերջին կտորից....։ Այսու ամենայնիւ մեք մի կերպով ճանապարհ ընկանք, նա Ուրալի վերայ նստած, իսկ ես ոտքով նորա մօտից։ Մեք շատ և շատ վիշտ և կարօտութիւն կրեցինք։ Հասանք մի աղքատ գիւղ, այս տեղ դուք ծնեցաք։

«Իսկ մեր հայրը. ինչ պատահեց նորան. ստանո՞ւմէիք նորա մասին որպիսի և իցէ ծանօթութիւն»։

— Այո՛, գէթ միանգամ զաւակներս...

«Ո՞վի ձեռքով»։

Դագոբեռի դէմքի վերայ երևեցաւ մի օտարոտի զգացմունք։

— Ովի ձեռքո՞վ — ասաց նա. մի րոպէ լուռ մնալուց յետոյ — մի մարդու ձեռքով, որ ամենևին չէ նմանում հասարակ մարդերի։ Այս բանը ձեզ առաւել հասկանալի առնելու համար, կարճառօտ պատմեմ ձեզ մի անցք, որ պատահեցաւ Ֆրանսիական պատերազմի ժամանակ։

Կայսրը հրաման տուեց առնուլ մի թումբ, որ մեծ վնաս էր հասուցանում մեզ։ Երկու անգամ արդէն յարձակվեցանք պաշարել, բայց անօգուտ. վերջապէս ձեր հայրը առած զրահաւոր գունդը, ինքը առաջնորդ եղաւ պաշարելուն և իւր կտրճի սովորութենովը ջարդումէր ահա թշնամիները նոյն իսկ նոցա թնդանօթների վերայ։ Յանկարծ գտանվեց նա թնդանօթի բերանի առաջևը, որի մօտի մարդիկը բոլորը սպանված կամ վիրաւորված էին։

Այսու ամենայնիւ նորանցից մինը, բոլորովին ծածկըված վերքերով, մի կերպով բարձրացաւ ծնկի վերայ և դրեց պատրոյգը... իսկ ձեր հայրը գտանվումէր այն ժամանակ տասն քայլ հեռի, ուղիղ թնդանօթի առաջևը»։

«Աստուած իմ. ինչ վտանգ է»։

— Արդէն խօսք չկայ։ — Ձեր հայրը շատ անգամ խոստովանվումէր, որ երբէք, ո՛չ յառաջ և ո՛չ յետոյ, ընկած էր այսպիսի վտանգի մէջ։ — Ումբաձիգը դրեց պատրոյգը, թնդանօթը արձակվեցաւ. բայց այն ակնթարթում մի երկարահասակ մարդ, հագած շինականի

հալաւ, որին ձեր հայրը յառաջ չէր նկատել, յարձակվեցաւ ուղիղ թնդանօթի վերայ։

«Ո՜հ անբաղդ, ինչ սարսափելի մահ է»։

— Ինչարկէ — ասաց Դագոբեռը մտածելով, — նա պիտոյ է կտոր կտոր լինէր, բայց չեղաւ այնպէս։

«Ի՞նչ ես ասում»։

— Կրկնումեմ ձեր հօր խօսքերը։ Շատ անգամ ասումէր նա ինձ. «երբ կրակը երևեցաւ, ես ակամայ փակեցի աչքերս, որ չտեսանեմ այլանդակված դիակը այն անբաղդին, որ իմ համար զոհ բերեց իւր կեանքը... և ի՞նչ ես կարծում։ Աչքս բանումեմ. առաջիս կանգնած է նոյն բարձրահասակ մարդը նոյն իսկ տեղում, հեզութենով նայելով ռմբաձգի վերայ. իսկ նա ծնկի վերայ յետ ընկած նայումէ այս մարդի վերայ այնպիսի աննկարագրելի երկիւղով, որպէս թէ նորա առաջ կանգնողը էր նոյն ինքը սատանայն։ Յետոյ պատերազմի մրրկի մէջ ես կորուսի նորան աչքիցս և աւելի չտեսի»։

«Ի՞նչ ես ասում, Դագոբեռ, մի՞թէ կարելի է այդ»։

— Նոյն մի և նոյնը ասումէի գեներալին. նա ինձ պատասխանումէր, թէ ինքը ևս չէ հասկանում, թէ ինչպէս կարողացաւ այս պատահել, բայց այս ճշմարտապէս եղած էր այնպէս, ինչպէս պատմումէր։ Երևի թէ այս մարդու կերպարանքը սաստիկ տպաւորութիւն էր գործել ձեր հօր վերայ. նա նկատել էր, որ նա երեսուն տարեկանից աւելի չէր, և թէ նորա սև, թանձր, և բոլորովին միմեանց հետ միաւորված յօնքերը, որպէս թէ մի յօնք էր, որ անցանումէր մի քունքից դէպ ի միւսը, թանձր, սև գծի նման ճակատի վերայ.... Այս բանը մի՛ մոռացէք իմ զաւակներ... դուք իսկոյն կիմանաք, թէ ինչի համար հարկաւոր էր այս։ «Միամիտ եղիր Դագոբեռ չենք մոռանում....», մի ձայնով ասացին որբերը առաւել և առաւել զարմացած։ — Ինչ զարմանք է. մարդ, սև գծով ճակատի վերայ։

«Լսեցէք։ Ես արդէն ասացի ձեզ, որ Վատերլօօումը գեներալը մեռածի նման ընկաւ պատերազմի դաշտումը.... գիշերով, երբ նա ընկած էր գետնի վերայ վէրքերից պատճառված սաստիկ տենդի մէջ, նորան երևեցաւ լուսնի լուսովը, որ մի և նոյն մարդը, խոնարհած դէպ ի նա, տխուր կերպով նայումէ նորա վերայ և աշխատումէ դադարեցնել վէրքերից թափած արիւնը և պահպանել նորա կեանքը։ Ձեր հայրը, ինքը ևս լաւ չհասկանալով, թէ ինչ էր անում, հեռացնումէ նորան և ասումէ, թէ այնպիսի անյաջող պատերազմից յետոյ, մնումէ իւրեան մի միայն մեռանել. իսկ այն մարդը, որպէս թէ պատասխանումէ. ապրիր Եւայի համար.... այս ինքն ձեր

մօր համար: Դուք գիտէք, որ նա մնաց Վարսաւիայումը, երբ ձեր հայրը ուղևորեցաւ Էլբայ կղզին, կայսրի մօտ. իսկ այն տեղից նորա հետ Ֆրանսիա»:

— Ի՞նչպէս այդ բոլորը օտարոտի բաներ են, Դագոբեռ, և այն օրից սկսած մեր հայրը այլ ևս չ՛տեսաւ այդ մարդը:

«Տեսաւ... պատճառ, և այդ իսկ մարդը ծանօթութիւն բերեց ձեր մօրը գեներալլի մասին:

— Այդ երբ... ի՞նչպէս է, որ մեք չ՛գիտէինք այդ:

«Միտքե՞րդ է, ձեր մօրը վախճանելու օրի առաւօտը դուք ծերունի Ֆեօդորի հետ գնացիք անտառը ման գալու»:

— Ճշմարիտ է — պատասխանեց Րօզը տխրութեամբ — մեք գնացինք անտառ ծաղիկ հաւաքելու, որ մեր մայրը սիրումէր այնպէս:

«Նա այնպէս առողջ էր, որ մեք ամենևին չէինք մտածում, որ նոյն օրը երեկոյեան կը հասանի մեզ այնպիսի անբաղդութիւն», յաւելացրեց Բլանշը: — Ճշմարիտ է զաւակներս. նոյն օրը առաւօտը ես ինքս ևս ուրախ երգումէի, աշխատելով պարտիզի մէջ, ես պատճառ չունէի տխրելու: Եւ ահա, ես աշխատումեմ և փորումեմ գետինը և երգումեմ երգեր, յանկարծ մի մարդ հարցանումէ ինձանից ֆրանսիարէն. «Այս գիւղը Միլօ՞սկ է կոչվում»: Ես նայեցայ, առաջևս կանգնած է մի անծանօթ մարդ.... նայումեմ զարմացած... փոխանակ, որ պատասխանեմ նորան, ես յետ քաշվեցի և աչքերս պշուցի նորա վերայ յիմարացածի նման....

«Ի՞նչ պատճառով».

— Նա շատ բարձրահասակ էր, սաստիկ գունաթափ, ճակատը բաց և մեծ... յօնքը միացած կազմումէին մի զգալի սև գիծ:

«Ուրեմն այդ մի և նոյն մարդն էր, որ մեր հայրը երկու անգամ տեսել էր պատերազմի մէջ:

— Այո՛ նա: —

«Բայց Դագոբեռ», ասաց Րօզը մտածելով, «այդ պատերազմերից յետոյ շատ ժամանակ էր անցել»: — Այո՛, մօտ տասն և վեց տարի:

«Քանի՞ տարեկան կը լինէր այն անծանօթը, երբ դու տեսար նորան:

— Ո՞չ աւելի, քան թէ երեսուն:

«Ուրեմն կարելի՞ է, որ այդ այն մարդը լինի, որին մեր հայրը պատահել էր պատերազմում տասն և վեց տարի յառաջ»:

Դագոբեռը, մի քանի ժամանակ լռելով, վեր քարշեց Թիկունքը և ասաց, — ձեր ասածը ճշմարիտ է, ես սխալեցայ... այնպիսի զարմանալի նմանութիւն... բայց....

«Իսկ եթէ նոյն մարդն է, ուրեմն ի՞նչպէս է, որ չէ ծերացել այն օրից մինչև քո տեսանելը»:

— Ու մի՞թէ չ'հարցրեցիր դու, թէ նա՞ արդեօք երկու անգամ փրկել էր մեր հայրը պատերազմի մէջ:

«Ես այնպէս զարմացած էի նորա յայտնելովը, որ իմ գլուխս չ'եկաւ այդ միտքը. իսկ յետոյ ժամանակ չ'գտայ. պատճառ, շուտով գնաց մեզանից... այսպէս նա հարց արեց ինձանից. այս չէ՞ Միլօսկ գեղը»: — Այս է. բայց ինչ տեղից գիտէք դուք, որ ես Փրանսիացի եմ, — ասացի ես: «Մօտից անցանելով ես լսեցի, ինչպէս երգումէիր», պատասխանեց նա: «Չե՞ս կարող արդեօք ցոյց տալ ինձ, թէ ո՞ւր է բնակվում գեներալ Սիմոնի կինը»: — Նա այս տեղ է բնակվում: —

Նա երկար նայեց իմ վերայ. կարելի է նկատելով, որ իւր այցելութիւնը զարմացրել էր ինձ. յետոյ ասաց քաղցրութեամբ, ձեռքը պարզելով դէպ ի ինձ. «դու երեւումէ գեներալ Սիմոնի բարեկա՞մն ես և լաւ բարեկամը»: Այս միջոցին ինչպէս զարմացած կը լինէի ես:

— Բայց, պարո՛ն, ո՞ր տեղից դուք այդ բոլորը գիտէք:

«Նա շատ անգամ խօսումէր ինձ քո մասին շնորհակալութեամբ»:

— Ուրեմն դուք տեսե՞լ էք գեներալը:

«Այո՛, շատ ժամանակ չէ, Հնդկաստանում, ես ևս նոյնպէս նորա բարեկամն եմ և նամակ եմ բերել նորանից նորա կնոջը: Ինձ ասացին, թէ նա բնակվումէ այս գեղի մէջ: Առաջնորդի՛ր ինձ դէպ ի նորա մօտ»:

— Բարի ճանապարհորդ.... ես արդէն չ'տեսած սիրեցի նորան — ասաց Բօզը — նա մեր մօր բարեկամն է եղած:

«Ես նորանից խնդրեցի փոքր ինչ սպասել, և կամենումէի այս միջոցին զգուշացնել ձեր մայրը, որ այսպիսի յանկարծական ուրախութիւնը չ'խանգարէ նորա առողջութիւնը: Հինգ րոպէից յետո նա ձեր մօր մօտն էր արդէն....»

— Ինքը ինչպէս մարդ էր, Դագոբեռ:

«Շատ բարձրահասակ, հագած էր մոյգ գունով մուշտակ և մեծ մորթեայ գլխարկ:

— Բայց դէմքով գեղեցի՞կ էր:

«Շատ գեղեցիկ, զաւակներս. բայց այնպէս հեզ, այնպէս տխուր, որ ես ևս տխրեցայ նորա վերայ նայելով»:

— Խե՜ղճ. երևի թէ մի վիշտ ունէր:

«Ձեր մայրը նորա հետ մի քանի րոպէ խօսելից յետոյ, դանչեց ինձ և ասաց, որ ստացել է լաւ համբաւներ գեներալի մասին. Նա շատ արտասուք թափեց. նորա առաջևը դրած էր թղթերի մեծ կապոց: Այդ օրագրութեան մի տեսակ էր, որ ձեր հայրը ամենայն

երեկոյ գրումէր, գո՛նէ գորանով մխիթարելով իւրեան. ձեր մօր հետ խօսել չէր կարող, այս պատճառով գրումէր այն բաները, ինչ որ կամենումէր ասել նորան....»։

— Ո՞ւր են այդ թղթերը, Դագոբեռ։

«Այն տեղ, պարկի մէջ, իմ խաչիս հետ և մեր արծաթի հետ. ժամանակով ես բոլորը կը տամ ձեզ. բայց այժմ առ ժամանակ ես առեցի միայն մի քանի թերթ։ Դուք այժմ իսկ կը կարդաք այն թերթերը և իսկոյն կ՚իմանաք, թէ ինչի՞ համար հարկաւոր էր այն»։

— Իսկ մեր հայրը շա՜տ ժամանակ է, որ Հնդկաստանումն էր։

«Ձեր մայրը չ՚կարողացաւ ասել ինձ այդ մասին մանրամասն. ես գիտեմ միայն, որ ձեր հայրը յառաջ պատերազմեցաւ թուրքերի հետ յոյների համար. իսկ յետոյ գնաց Հնդկաստան, ուր իւր կանոնով պաշտպան դուրս եկաւ թոյլ կողմին և սկսեց պատերազմել Անգլիացոց հետ»։

՝Նոքա ատելի էին նորան այն օրից, երբ տարեցին մեր Կայսրը Սուրբ Հեղինէի կղզին։ Գեներալը պաշտօն մտաւ մի հնդկական Իշխանի մօտ, որից Անգլիացիք փոքր էր մնացել, որ խլէին բոլոր երկիրը։ Նա մի քանի ամսի մէջ այնպէս կրթեց այս իշխանի տասն և հինգ հազար զօրքը, որ նոքա գեներալի առաջնորդելովը սկսեցին յաղթել Անգլիացոց...։ Այո՛, ահա կարդացէք... այս տեղ իմ պատմածից լաւ ասված է։ Բաց ի դորանից դուք կը գտանէք այս տեղ մի անուն, որ երբէք դուրս գալու չէ ձեր յիշողութենից. ես այս խորհրդով իսկ ընտրել եմ այս թերթերը»։ — Ո՜վ. ի՜նչ բաղդաւորութիւն է կարդալ այն, որ գրված էր մեր հօր ձեռքով. համարեա թէ նորա հետ խօսելու հաւասար է. — բացագանչեց Րօզը։ «Որպէս թէ նա մեր հետ էր», յաւելացրեց Բլանշը։

Եւ երկու օրիորդքը շուտով պարզեցին իւրեանց ձեռքը դէպ ի թղթերը, որ Դագոբեռ հանեց իւր գրպանից։ Յետոյ երկուսը միասին, սրտաշարժ գեղեցկութեամբ, լցուած ակամայ շարժողութենով, լուռ լուռ համբուրեցին թերթերը, որ գրված էին իւրեանց հօր ձեռքով։

— Դուք կ՚իմանաք նոյնպէս, իմ սիրականներ —, ասաց Դագոբեռը, — այս օրի վերջումը, թէ ի՛նչ պատճառով ես այնքան զարմացայ, երբ ասացիք ինձ, թէ ձեր բարի հրեշտակը անուանվումէր Գաբրիէլ.... կարդացէք... կարդացէք... —, յաւելացրեց նա, նկատելով, որ այս բանը զարմացուց որբերը։ — Բայց մի՛ մոռացէք, որ ձեր հայրը գրել էր այդ ճանապարհորդին պատահելուց յառաջ, որ բերեց մեզ այս թղթերը։

Րօզը նստած մահճի վերայ, վեր առեց թերթերը և սկսեց կար-

բաղ սրտաշարժ ձայնով. Բլանշը գլուխը դրած քրոջ ուսի վերայ ուշադրութեամբ նայում էր նորա կարդացածին: Նորա շրթունքի թեթև շարժվելուցը յայտնի էր, որ և նա նոյնպէս կարդում էր, բայց ինքը իւր համար:

VIII.

ՀԱՏՈՒԱԾՆԵՐ ԳԵՆԵՐԱԼ ՍԻՄՈՆԻ ՕՐԱԳՐԻՑ:

Բանակում, Ավեան աւերերի մօտ. 20 փետրուարի 1830 թւ.:

«Ամենայն ժամանակ, երբ մի քանի երես շարունակում եմ իմ օրագիրը, որ գրում եմ Հնդստանի խորքումը, ուր ձգեց ինձ թափառական կեանքը, իմ օրագիրը ասում եմ, որ կարելի է սիրելի Եւա, դու երբէք կարդալու չէիր, ես մի և նոյն ժամանակ զգում եմ երկու կիրք միասին, անուշ և վշտացուցիչ. ինձ մխիթարիչ է քո հետ այս տեսակ խօսակցութիւնը, բայց մի և նոյն ժամանակ մեր միմեանցից հեռի մնալու մասին մտածողութիւնը երբէք այնպէս չէ խածատում իմ սիրտը, երբ այն ժամանակ մինչ խօսում եմ քո հետ հեռուից»:

«Եթէ մի օր այս թերթերը ընկնեն քո ձեռքը, քո մեծահոգի սիրտը իհարկէ սաստիկ կը զարկէ լսելով աներկիւղ մարդու անունը, որ այսօր փրկեց իմ կեանքը, և գուցէ թէ մի օր երախտապարտ պիտոյ է լինիմ այն մարդուն, տեսանելով քեզ և մեր երեխայն:

Այնպէս չէ՞. մեր երեխայն կենդանի է: Ես պիտոյ է մխիթարեմ ինձ այս հաւատովը, առանց նորա ինչ սարսափելի կը լինէր քո կեանքը աքսորում: Իմ անգին զաւակ... այժմ պիտի որ նա տասն և չորս տարեկան հասակը անցուցանէ... ինչպէս է նա: Երևի բոլորովին քեզ նման. այնպէս չէ՞: Նա ունի քո մեծ և կապոյտ աչքերը: Անխելք եմ ես, քանի՜ անգամ արդէն ակամայ առաջարկել եմ քեզ իմ օրագրի մէջ այս անխելք հարցմունքը, որին դու չես կարող պատասխանել... և քանի՜ անգամ դեռ ևս կը պատահի ինձ կրկնել մի և նոյն բանը...: Սովորեցուր մեր երեխային սիրով արտաբերել փոքր ինչ բարբարոսական անունս «Ճա́յլմա»:

— Ճ՛այլմա —, ասաց Ռօզը արտասուքը աչքերում, ընդհատելով իւր ընթերցուածը: «Ճայլմա», կրկնեց Բլանշը նոյնպէս շարժված, ինչպէս քոյրը: Մեք երբէք չենք մոռանալու այս անունը:

— Ու լաւ կ՚առնեք զաւակներս. այդ մի կտրիճ զինուորի անուն է, թէ և նա շատ երիտասարդ է դեռ ևս: — կարդա՛ Ռօզ:

«Ընգին Եւա. ես արդէն նախընթաց թերթերումը պատմեցի քեզ», շարունակեց Բօզը. որ այս ամսի մէջ մեք կարող ենք համարել երկու փառաւոր օրեր: Հնդկական արքայազնի, իմ ծերունի բարեկամի զօրքերը առաւել և առաւել ընտելանումէն Եւրոպական կարգին և գործումէն հրաշքներ: Մեք բոլորովին կոտրեցինք Անգլիացիքը և հարկադրեցինք թողուլ այս անբաղդ աշխարհի մի մասնը, որ նոքա անողորմաբար ամայացնումէին: Այսօր առաւօտ, ապառաժների և սարերի վերայով շատ դժուար անցքից յետոյ, մեք մեր նախընթաց պահապաններից իմացանք, որ թշնամին զօրութիւն ստանալով պատրաստվումէ դէպ ի յարձակողական ներգործութիւն. թշնամին մի քանի լիեօ հեռի էր մեզանից, պատերազմը անխափանելի էր. իմ ծերունի բարեկամ Հնդկական արքայազնը, ինձ փրկողի հայրը, անհամբերութենով սպասումէր պատերազմի սկսելուն:

Գործը սկսվեց երեք ժամի մօտ. պատերազմը շատ կամակոր և արիւնահեղ էր: Տեսանելով մեր զօրքի փոքր ինչ երկչոտութիւնը, պատճառ թշնամին, թուով շատ էր մեզանից և բաց ի դորանից զօրութիւն ստացաւ նոր զօրքից, ես զարկվեցայ Անգլիացոց հետ մեր վերջապահ հեծելազօրքովը:

«Ծերունի արքայազնը գտանվումէր կենդրոնում, և աներկիւղ պատերազմումէր իւր սովորութեամբ: Ճայլմա՛ն, նորա տասն և ութ տարեկան որդին, քաջ ինչպէս հայրը և մի րոպէ յետ չէր մնում ինձանից: Պատերազմի ամենասաստիկ ժամանակը, սպանվեցաւ իմ տակի ձին և գլորվեցաւ իմ յետ միասին մի փոսի մէջ, որի մօտով գնումէի: Նա այնպէս սաստիկ ճնշեց ինձ իւր տակում, որ ես յառաջ կարծեցի թէ կոտրեցաւ իմ բարձի ոսկրը . . . : — Խեղճ հայրիկ — ասաց Բլանշը: «Բայց նա այս անգամ յաջողութեամբ ազատվեցաւ Ճայլմայի օգնութենով», յաւելացրեց Բօզը. «Նկատումե՞ս Դագոբեռ, ինչպէս լաւ սերտեցի այս անունը» և Բօզը շարունակեց կարդալը:

«Անգլիացիք համարումէին, թէ ինձ սպանելուց յետոյ, հեշտ կարող էին ընթանալ մեր զօրքի հետ (բայց այս համարումը շատ գեղեցիկ էր իմ համար): Մի Սիպայեան օֆիցեր և հինգ կամ վեց կարգից դուրս զինուորք, տեսանելով, որ ես փոսը ընկայ, յարձակվեցան այն տեղ, որ կարճեն իմ կեանքը: Մեր լեռնականքը, կրակի և ծուխի միջից, չնկատեցին իմ ընկնելը, բայց Ճայլմա՛ն, որ և մի րոպէ չէր հեռացել ինձանից, իջաւ ինձ մօտ փոսի մէջ, և նորա սառնասիրտ աներկիւղութիւնը փրկեց ինձ: Նորա կրկնափող կարաբինայն լցած էր. մի փողից նետելով նա սպանեց օֆիցերը, միւսովը վէրք դրեց մի կարգից դուրս զինուորի ուսին, որ արդէն ծակել էր իմ ձեռքը սլաքով, բայց մի՛ վախենար իմ բարի Եւայ, այդ ոչինչ է . . . մի փոքր քերթուած առաւել ոչինչ . . .

Վիրաւորված է, Աստուած իմ դարձեալ վիրաւորված, — գանչեց Բլանշը ձեռքերը զարկելով միմեանց։

«Հանգիստ կացէք», ասաց Դագոբեռ այդ երեւի թէ ինչպէս ասումէ գեներալը ոչ այլ ինչ է եթէ ոչ քերթուած. պատճառ, առաջվայ վէրքերը, որ արգելք չէին լինում նորան պատերազմելու, նա անուանումէր «սպիտակ վէրքեր», այսպիսի խօսքեր նա միայն կարող էր հնարել։

«Ճայլմա՛ն տեսանելով, որ ես վիրաւորված եմ», շարունակեց Բօզը արտասուքը սրբելով, «բռնեց կարաբինայի փողից և կոթովը հարկադրեց զինուորին յետ քաշվիլ։ Բայց այս միջոցին ես նկատեցի, որ նոր թշնամի թաք կացած մի մեծ բամբուկի քամակում կամաց ցած թողեց իւր երկայն հրացանը, դրեց փողը երկու ճիւղի մէջ փչեց պատրոյգը և նշան դրեց Ճայլմայի վերայ.... Ջուր տեղը աշխատեցի ես զգուշացնել նորան իմ աղաղակներով. գնդակը զարկեց ուղիղ քաջ կտրիճի կուրծքին։ Զգալով, որ վիրաւորված է նա ակամայ յետ գնաց երկու քայլ, ընկաւ մի ծունկի վերայ, բայց դեռ ես բռնումէր ինքը իւրեան և աշխատումէր պաշտպանել ինձ իւր մարմնովը։ Կարո՞ղ ես երեւակայել իմ կատաղութիւնը, իմ յուսահատութիւնը։ Դժբաղդաբար իմ բոլոր աշխատութեան, ձիու տակից ազատվելու փորձը, եղաւ բարձիս անհամբերելի ցաւը։ Ես անզօր, զինաթափ, մի քանի վայրկեան վկայ կացայ այս անհաւասար պատերազմին։

«Ճայլմայի արիւնը գնումէր. նորա ձեռքը թուլանումէր։ Արդէն կարգից դուրս զինուորների մինը, խրախուսելով ուրիշները քակումէր գօտիից մի տեսակ ահագին և ծանր լայն սուրը, որով միանգամ զարկելով կարելի է գլուխ թռցնել, մինչ յանկարծ օգնութիւն վաղեցին մեզ տասն երկու հոգի մեր լեռնականներից. նոքա ազատեցին Ճայլմային, ինձ հանեցին ձիու տակից և մի քառորդ ժամ չքաշեց, ես դարձեալ նստած էի ձիու վերայ։ Չնայելով մեր մեծ կորուստի վերայ, յաղթութիւնը մնաց մեր կողմը։ Եգուց կը լինի վճռողական պատերազմը. Անգլիացոց բանակի լոյսը երեւումէ այս տեղից... Ահա իմ անգին Եւա, թէ ինչ կերպով այս երիտասարդ մարդը, փրկեց իմ կեանքը։ Ուրախ եմ, որ նորա վէրքը անվտանգ է. գնդակը սահել էր կողերի միջով»։

«Այժմ իմ սիրական Եւա կ՚աշխատիմ ծանօթացնել քեզ, թէ և պատմելով միայն, աներկիւղ Ճայլմայի հետ. նորա հասակը աւելի չէ քան թէ տասն և ութը տարեկան։ Մի խօսքով նկարագրվումէ նորա այրական և ազնիւ բնաւորութիւնը. նորա հայրենիքումը սովորութիւն կայ, երբեմն մականուն դնել տասն և հինգ տարեկան

հասակից յետոյ, այս սովորութենով նորան գանչում էին Թեթեւոգի. իհարկէ մեծահոգի մօրերի և կրքերի կողմից, այս զարմանալի, բայց սրտաշարժ սովորութենով, մականունը անցել է և նորա հօր վերայ, նորան անուանում էին հայր Թեթեւոգու, և որ ամենայն արդարութենով արժանի է անունիս [illegible]: Ճայլմա՛ն կատարելապէս արժանի է իւր հօրը: Այս պատանին այնպիսի քաջ և հպարտ կորճութիւն ունի, որ պատերազմ է դուրս գալիս որպէս երիտասարդ յոյն Լէոնիտեան ժամանակների. միշտ բաց կուրծքով. մինչ այս կողմի բոլոր զինուորքը թէ և խաղաղ ժամանակում ման էին գալիս մերկ ուսերով, ձեռքերով, և կուրծքերով, բայց պատրաստվելով դէպ ի պատերազմ սովորաբար հագնում էին բաւական հաստ բաճկոն:

«Ես ցաւելով նկատում էի, որ Ճայլմա՛ն չնայելով իւր քնքուշ հասակի վերայ երբեմն երբեմն ընկնում էր խոր մտածութեան մէջ: Ես շատ անգամ նկատում էի, որ նա իւր հօր հետ մի օտարոտի կերպով նայում էին միմեանց վերայ....: Դատելով այն խօսքերից, որ երբեմն ակամայ դուրս են թռչում երկուսից էլ, ես մտածում էմ, որ նոքա չնայելով մեր մօտ կապակցութեանը այսու ամենայնիւ ծածկում էին ինձանից մի որպիսի և իցէ ընտանեկան տխուր գաղտնիք. գուցէ մի օտարոտի անցք, որին նոցա մտածող և բորբոքված երևակայութիւնը, ընծայում է մի գերբնական բնաւորութիւն:

«Բայց իմ սիրելի, դու գիտես, որ ես ու դու զրկված ենք ուրիշի նանրահաւատութեան վերայ ծիծաղելու իրաւունքից.... ես, Ֆրանսիական պատերազմի ժամանակ, երբ ինձ պատահեց այն զարմանալի անցքը, որ ես մինչև այժմ էլ, չեմ կարողանում մեկնել ինձ»:

— Նա խօսում է, այն մարդի վերայ, որ ընկել էր թնդանօթի բերանը, — ասաց Դագոբեռ:

«Իսկ դու, սիրական Եւա», շարունակեց Ռօզը կարդալով «այն օրից սկսած երբ եկել էր քո մօտ երիտասարդ և գեղեցիկ կինը, որ քո մայրը, ինչպէս նա հաւատացնում էր, տեսել էր դեռ ևս իւր մօր մօտ քառասուն տարի յառաջ»:

Որբերը զարմացած նայեցան Դագոբեռի վերայ:

— Ո՛չ ձեր մայրը, ո՛չ գեներալը ասել էին ինձ երբ և իցէ այդ մասին. և այդ բանը ինձ էլ այնքան զարմանալի է, որքան ձեզ. — պատասխանեց Դագոբեռը:

Ռօզը, շարունակեց իւր կարդալը զգացողութենով և աճող հետաքրքրութենով:

«Այսպէս իմ աննման Եւայ. երբեմն ըստ երևութիւն շատ անհասկանալի բաները, մեկնվում էին շատ անգամ չնչին պատահմունքով, նմանութենով կամ բնութեան խաղով: Հրաշալին, շատ ան-

գամ տեսաբանական խաբէութիւն է, կամ ծնունդ արդէն խանգարված երևակայութեան. Հասանումէ այդ բանի վերայ սառն աչքով նայելու բոպէն, և ահա այն անցքը, որ յառաջ երևումէր գեր մարդկային, գերբնական, ստանումէ իսկական մարդկային, իսկական բնական մեկնութիւն:

— Գիտէք զաւակներս,— ասաց Դագոբեռը ընդհատելով ընթերցանութիւնը — յառաջուց հրաշալի կը թուի, իսկ յետոյ դուրս կը գայ շատ պարզ բան... բայց այսու ամենայնիւ երբեմն երկար ժամանակ ոչինչ բան չես հասկանում:

«Վերջապէս իմ անգին Նեայ, ես սկսանումեմ հպարտանալ այս Ջալմայովը, երբ մտածումեմ, թէ նորա երակների մէջ խաղումէ ֆրանսիական արիւնի մասն: Քանի տարի սորանից յառաջ, նորա հայրը ամուսնացել է մի օրիորդի հետ այնպիսի տնից, որ ունէր ֆրանսիական ծագումն, և որ շատ ժամանակ յառաջ գաղթել էր Բատավիա, Եավա կղզու մէջ: Իմ ծերունի բարեկամի դրութեան և իմ դրութեան այս նմանութիւնը առաւել ևս զօրացուց իմ սէրը դէպ ի նա. պատճառ, և քո ցեղը իմ Նեայ նոյնպէս ծագումէ ֆրանսիականից և շատ ժամանակ է արդէն, որ բնակվումէ օտար աշխարհներում: Դժբաղդաբար արդէն քանի տարի է, որ հնդկական արքայազնը զրկված է իւր ամուսնուց, որ պաշտումէր: Երևակայիր քեզ իմ սիրական Նեայ, ձեռքս դողումէ այս խօսքերը գրելու ժամանակ, այդ թուլութիւն է, անմտութիւն է, բայց առաջ սիրտս ակամայ ճնշվումէ... եթէ և ինձ հասանէր այդպիսի անբաղդութիւն... Ա՛հ Աստուած իմ: Ի՛նչ կը լինի այն ժամանակ մեր խեղճ երեխայի վիճակը... առանց քեզ... առանց ինձ... այդ օտար երկրումը... ո՛չ, ո՛չ, այս յիմար կասկած է... բայց ինչ զարհուրելի տանջանք— անծանօթութիւնը... դու ո՞ւր ես, ի՞նչ ես առնում, ինչպէս ապրումես, ոչինչ չ'գիտեմ... ներիր ինձ. այս մառախլապատ մտածութիւնքը... շատ անգամ ընդդէմ իմ կամքին տիրումեն ինձ... սարսափելի... զարհուրելի... բոպէներ: Երբ այս մառախլապատ մտածութիւնքը չեն գիշատում իմ սիրտը, այն ժամանակ հանգիստ մտածումեմ.— ես անբաղդ չուառ, բայց գո՛նէ աշխարհի միւս ծայրումը երկու սիրտ զարկումէ իմ համար — քո սիրտը իմ անգին Նեայ, և մեր երեխայի սիրտը....

Ռօզը հազիւ թէ կարողացաւ աւարտել այս խօսքերը. արդէն մի քանի ժամանակ էր, որ հեկեկանքը ընդհատումէին նորա ձայնը: Եւ ճշմարիտ, գեներալ Սիմոնի կասկածելու և դառն ճշմարտութեան մէջ կար տխուր համաձայնութիւն. և ինչպէս սրտաշարժ են այս կրքերի պարզասիրտ դուրս թափելը, որ գրված էին պատերազմից

յետոյ, բանակի մէջ վառած լուսով, տղամարդի ձեռքով, որ այս կերպով աշխատումէր մխիթարել իւրեան այս ծանր բաժանման մէջ. չ՚գիտելով, որ այդ բաժանումը արդէն յաւիտենական էր։

— Խեղճ գեներալ... նա չ՚գիտէ մեր անբաղդութիւնը, — ասաց Դագոբեռը մի փոքր լռելուց յետոյ, — բայց դորա փոխանակ նա և չէ գուշակում, որ մի երեխայի տեղ, ունէր երկու դուստր. այս բանը գ՚նէ մի փոքր կը մխիթարէ նորան.... Այժմ Բլանշ դու կարդա՛, պատճառ քո՛յրդ վաստակեցաւ և բաց ի դորանից շատ ամբոխված է։ Եւ արդարութիւնը ևս պահանջումէ, որ դուք միասին բաժանորդ լինէիք այս ընթերցանութեանը և ախորժականին և անախորժին։

Բլանշը վեր առեց նամակը. Րօզը սրբեց իւր արտասուքով լցված աչքերը և իւր կարգով դրեց իւր փոքրիկ գլուխը քրոջ ուսի վերայ, իսկ Բլանշը սկսեց կարդալ։

«Այժմ ես մի փոքր հանգստացայ սիրական Եւայ. դադարեցի մի րոպէ գրելուց և ցրուեցի իմ տխուր մտածութիւնքը, խօսենք այլ ևս քո հետ։

«Հերիք է խօսել Հնդկաստանի վերայ, մի քանի խօսք ես ասեմ Եւրոպայի մասին։ Երեկ երեկոյեանը մեզանից մինը, մի շատ յուսալի մարդ, վերադարձաւ մեր յառաջապահի մէջ և բերեց ինձ նամակ, որ Ֆրանսիայից հասել էր Կալկաթայ։ Վերջապէս ծանօթութիւն ստացայ հօրիցս և այժմ հանգիստ եմ նորա մասին։ Այս նամակը գրած է անցեալ տարւայ օգոստոսին։ Նամակի բովանդակութենից երևումէ, որ շատ ուրիշ նամակներ, որոնց մասին հայրս յիշումէ կամ ուշացել են կամ բոլորովին կորսվել. պատճառ, արդէն երկու տարի է, որ ես և մի տող գիր ևս չէի ստացած նորանից, և անչափ անհանգիստ էի նորա մասին։

Հազուագիւտ հայր. միշտ մի օրինակ է. նա գրումէ ինձ թէ հասակը ամենևին չէ փոխել նորան, բնաւորութիւնը նոյնպէս հաստատ է, առողջութիւնը նոյնպէս լաւ, ինչպէս յառաջ։ Նա դարձեալ աշխատումէ առաջվայ նման և պարծենումէ նորանով։

«Նա գրումէ ինձ նոյնպէս բարի համբաւներ, ինչպէս իսկոյն կ՚իմանաս, մեր ծերունի Դագոբեռի... մեր բարեկամի... ընտանիքի մասին։ Ճշմարիտ իմ անգին Եւայ իմ վիշտը փոքրանումէ, մինչ յիշումեմ, թէ այդ պատուական մարդը գտանվումէ քո մօտ.... Ինչ անգին սիրտ կայ այդ զինուորի մէջ, չ՚նայելով նորա արտաքին կոշտ կերպարանքին.... ով գիտէ ինչպէս սիրումէ նա մեր երեխային...»

Այս տեղ Դագոբեռը երկու երեք անգամ հազաց և ճկվեցաւ որպէս թէ որոնումէ իւր կարմիր և կապոյտ ցանցերով փոքրիկ թաշկինակը յատակի վերայ. իսկ թաշկինակը ընկած էր նորա ծնկերի

վերայ։ Մի քանի րոպէ մնաց նա այս դրութեան մէջ, յետոյ վեր բարձրացաւ, սրբեց ընչացքը։

— Ինչպէս մեր հայրը լաւ ճանաչումէ քեզ։

«Նա զգացել է, որ դու մեզ սիրումես։

— Բարի է, բարի է իմ զաւակներս, բաց թողէք այդ տեղը.... անցէք ուղիղ դէպ ի այն տեղը, ուր գեներալը խօսումէ իմ Ագրիկօլի և Գաբրիէլի մասին, իմ կնոջ որդեգրի.... իմ խեղճ կին.... երբ մտածումեմ, երեք ամսից կարելի է... կարդացէք զաւակներս, կարդացէք, — յաւելացրեց զինուորը աշխատելով ծածկել իւր զգացմունքը։

«Ես միշտ ակամայ յոյս եմ կապում սիրական Եւայ, որ մի ժամանակ այս թերթերը կը հասանեն քո ձեռքը. և այս պատճառով գրումեմ այս տեղ ամենայն ինչ, որ վերաբերումէր Դագոբեռին։ Երևի թէ նորա համար շատ մխիթարական մի բան կը լինի, իմանալ, թէ ինչպէս ապրումէ նորա ընտանին։ Իմ հայրը, որ գլխաւոր գործաւոր է բարի, պարոն Հարդիի գործարանումը տեղեկութիւն է տալիս ինձ, թէ պարոն Հարդին, իւր մօտ է վեր առել մեր բարի Դագոբեռի որդին։ Ագրիկօլը աշխատումէ հօրս ձեռքի տակ և ծերունին զմայլած է նորանով։ Հայրս գրումէ, թէ Ագրիկօլը հասած, առողջ կտրիճ է, և պտուտումէ իւր ծանր դարբնի մուրճը ինչպէս մի գրիչ։ Նա շատ հասկացող, աշխատասէր, և բաց ի դորանից միշտ ուրախ է. մի խօսքով այդ գործարանի մէջ, ողջից առաւել լաւ գործաւոր է։ Ամբողջ օրը աշխատելուց յետոյ, վերադառնալով մօր մօտ, որին անչափ սիրումէ, Ագրիկօլը շարադրումէ երգեր և շատ լաւ ոտանաւորներ, ինչպէս ասումէ հայրս շատ վեր, և հոգով լցուած»։ — Դու ինչպէս պէտքէ հպարտանաս քո որդովը Դագոբեռ, — ասաց Րօզը զարմանալով, — որ նա երգեր է շինում։

«Իհարկէ այդ բոլորը գեղեցիկ է.... բայց ինձ առաւել ախորժ է լսել որ նա բարի է դէպ ի մայրը և կտրիճ է աշխատելու մէջ.... բայց ո՞ր տեղ սովորել է այդ լակոտը երգեր շինել... Երևի թէ դպրոցումը, ուր գնումէր, ինչպէս կ՚իմանաք նամակիցը, իւր եղբայրագրի — Գաբրիէլի հետ։

Գաբրիէլի անունը յիշեցուց որբերին նոցա գաղափարական էակը, որ անուանումէին իւրեանց պահապան — հրեշտակ, և նոցա հետաքրքրութիւնը զօրացաւ, ուշադրութիւնը կրկնապատկվեցաւ.... Բլանշը շարունակեց կարդալ։

«Ագրիկօլի եղբայրագիրը, աղքատ, անտէր մանուկ, որին մեր Դագոբեռի կինը այնպիսի մեծահոգութենով առել էր իւր ընտանիքի մէջ, հօրս ասելով, շատ հակառակ բնաւորութենով զանազան-

վումէն Ագրիկօլի հետ, ո՛չ թէ սրտի կողմից, նոքա երկուսը ևս հաւասար բարի սիրտ ունին. բայց Ագրիկօլը անչափ աշխոյժ, ուրախ, գործունեայ կտրիճ է. իսկ Գաբրիէլը մտածող և երևակայող. հայրս ասումէ, թէ նոցա երեսները բոլորովին համաձայն են նոցա բնաւորութեան հետ: Ագրիկօլը բարձրահասակ է, պինդ կազմուածքի տէր, ունի սև մազեր, ուրախ և համարձակ կերպարանք. Գաբրիէլը բարձրահասակ չէ, քնքոյշ կազմուածքով խարտեաշ, պարկեշտ ինչպէս մատաղահաս օրիորդ. նորա երեսի վերայ պատկերանումէ հրեշտակային հեզութիւն....

Որբերը զարմացած, նայեցան միմեանց վերայ, յետոյ երկուքը ևս դարձուցին դէպ ի Դագոբերը իւրեանց անմեղ երեսները և Ռօզը ասաց — լսեցէ՛ր Դագոբեր. մեր հայրը ասումէ, թէ քո Գաբրիէլը ունի խարտեաշ մազեր և հրեշտակային դէմք... մի և նոյն, ինչպէս մեր Գաբիէլը:

— Լսեցի, լսեցի, այդ պատճառով ձեր երազը ինձ այնպէս զարմացուց:

«Ինչպէս կը ցանկանայի իմանալ կապո՞յտ էին արդեօք նորա աչքերը». ասաց Ռօզը:

— Ես երաշխաւոր կարող եմ լինել այդ մասին, թէ և գեներալը չէ յիշում նորա աչքի գոյնը, խարտեաշները միշտ կապոյտ աչքեր կ՚ունենան. բայց ինչպէս և լինէին նորա աչքերը, կապոյտ թէ սև, նա չէ նայում նորանցով մատաղահաս օրիորդների երեսը: Շարունակեցէք կարդալը և իսկոյն կ՚իմանաք այս ասածիս պատճառը:

Բլանշը շարունակեց ընթերցանութիւնը: «Գաբրիէլի դէմքի վերայ պատկերանումէ հրեշտակային հեզութիւն: Աբեղաներից մինը, որ գտանվումէին քրիստոնէական դպրոցի մէջ, ուր գնումէր Գաբրիէլը Ագրիկօլի և այլ տղաների հետ, նկատելով Գաբրիէլի հազուագիւտ ընդունակութիւնը և բարութիւնը, գովեց նորան մի հզօր պաշտպանի առաջև. այս անձը, որ երևելի տեղ ունէր, խնամք տարաւ Գաբրիէլին և տեղաւորեց նորան Սեմինարի մէջ, և ահա արդէն երկու տարի է, որ Գաբրիէլը քահանայ է: Նա ցանկանումէ քարոզիչ դառնալ և շուտով կարելի է կ՚երթայ Ամերիկա:

— Քո Գաբրիէլը քահանայ է. — ասաց Ռօզը նայելով Դագոբեռի վերայ: «Իսկ մերը, հրեշտակ է», յաւելացրեց Բլանշը:

— Նշանակումէ ձերը, աստիճանով բարձր է, — պատասխանեց Դագոբերը, — բան չունիմ խօսելու, ամենայն տեղ կան լաւ մարդիկ... ամենայն մարդ իւր ճաշակը ունի. բայց այսու ամենայնիւ ես ուրախ եմ, որ ո՛չ Ագրիկօլը այլ Գաբրիէլը հագել է սև վերարկուն: Սիրտս փառաւորվումէ, երբ մտածումեմ, որ իմ որդին

կաշեայ առաջակալով, թևերը վեր քարշած կուրիճի նման բաղխումէ իւր մրճով. Նորանով աշխատումէ, ո՛չ պակաս քան թէ ձեր պապը, այս ինքն հայրը, Մարշալ Սիմոնի և Լէյնի զօրագլխի։

«Այժմ եթէ իմ օրագիրը հասանէ քո ձեռքը, պատուական Եւայ» շարունակեց Բլանշը ընթեռնուլ, «դու կարող ես միամտեցնել Դագոբեռը իւր կնոջ և որդու մասին որ թողեց մեր համար։ Արդեօք մի ժամանակ կարողութիւն կ՚ունենա՞նք վարձատրել այսպիսի զոհաբերութիւնը։ Բայց դու իմ Եւայ, որ հրեշտակի նման բարի ես, երևի թէ կը մտածես նորա համար մի վարձ։

«Մնաս բարեաւ... դարձեալ մնաս բարեաւ այս օրվայ համար, իմ պատուական Եւայ։ Ես մի քանի ժամանակ ընդհատումեմ իմ օրագիրը, պիտոյ է գնալ ճայլմայի տաղաւարը։

«Նա քնումէր հանգիստ, հայրը նստած էր նորա մօտ և ձեռքով նշանացի արեց ինձ, որ ես անհանգիստ չ՚լինիմ։ Այդ մատաղահաս կուրիճը այժմ վտանգի մէջ չէ։ Աստուած տայ, որ էգուցվայ պատերազմը խնայէր նորան։ Մնաս բարեաւ իմ Եւայ. գիշերը լուռ է և խաղաղ, պահանորդական կրակները սկսանումեն մարիլ. մեր խեղճ լեռնականքը հանգչումեն այս արիւնահեղ օրվայ աշխատութեններից յետոյ. մի միայն լսվումեն մեր պահապանների ձայնը....

«Այս այլալեզու ձայնարկութիւնքը ծակումեն իմ սիրտը յիշեցնելով ինձ այն, թէ ես օտար երկրում էի... քեզանից և մեր երեխայից հեռի. խեղճ սիրականք, արդեօք ինչպէս ապրումէք... և ապագայումը ինչ է գալու ձեր գլուխը։ Ա՜հ եթէ միայն կարողանայի գո՛նէ յետ դարձուցանել ձեզ մեդալիոնը, որ դժբաղդաբար ես հետս էի առել Վարսաւիայից, գուցէ դու մի հնար կը գտանէիր Ֆրանսիայ վերադառնալ, կամ գո՛նէ ուղարկել մեր երեխայն Դագոբեռի հետ. դու գիտես թէ ո՛րքան հարկաւոր է այս... բայց ինչ հարկաւոր է այսպիսի յիշողութեններով մեծացնել մեր վշտերը... տարիները թռչումեն. կը հասանէ ճակատագրական օրը և իմ վերջին յոյսը ձեր վիճակը բարւոքելու համար, կ՚անյայտանայ... բայց ես չ՚կամիմ այս օրը վերջացնել տխուր մտածութենով։ Մնաս բարով իմ պաշտական Եւայ, իմ տեղ գրկիր մեր երեխայն, լից նորան համբոյրներով, որ ուղարկումեմ իմ աքսորանքի տեղից։

«Էգուց պատերազմից յետոյ դարձեալ կը սկսեմ գրել»։

Այս սրտաշարժ ընթերցուածքից յետոյ հետևեցաւ երկար լռութիւն։ Րօզի և Բլանշի թշերի վերայով կամաց գլորվումէին արտասուքը։

Դագոբեռը գլուխը դրած ձեռքերի վերայ մնել էր տխուր մտածութեան մէջ։ Դրսումը քամին փչումէր նոր զօրութենով. խիտ ան-

ձրեւը բաղխումէր պատուհանի ապակիները, պանդոկի մէջ թագաւո-րել էր խոր լռութիւն.........................:

Այն միջոցին, երբ գեներալ Սիմոնի դստերքը քնքուշ զգաց-մունքով կարդումէին իւրեանց ծնողքի օրագրի հատուածները, մի օտարոտի եւ խորհրդական անցք անցանումէր Մօրօկի գազանանոցում:

IX.

ՎԱՆԴԱԿՆԵՐԸ:

Մօրօկը զրահաւորվեց. նա իւր կաշեայ հանդերձի վերայից հագաւ պողպատից հիւսած եւ կտաւի նման ձգական զրահ, որ իւր ամրութե-նովը հաւասարվումէր ադամանդի. վերջապէս ձեռքերը ծածկեց ձեռնոց-ներով, ոտքերը ոտնոցներով, հագաւ երկաթապատ կօշիկներ եւ ծած-կելով այս պաշտպանողական զրահաւորութիւնը լայն վարտիկի եւ մուշտակի տակ, որ խնամով կոճկեց, վեր առեց ձեռքը մինչեւ սպի-տակիլը տաքացրած պողպատի երկայն թռուագուռը, որ ամրացրած էր փայտեայ կոթի մէջ: Մօրօկը իւր յաջողակութենով եւ ոգեւորու-թենով վաղուց ահա հնազանդեցուցել էր իւր կամքին Վագր Յու-դան, Առիւծ Կայէնը եւ Ինձ Մահը, բայց պիտոյ է ասել, որ նոքա շատ անգամ հնարեցան ազատվիլ նորա իշխանութեան տակից, եւ շատ անգամ փորձեցին նորա վերայ իւրեանց ճանկերը եւ ատամները, բայց մուշտակի տակում ծածկած նորա զրահաւորութիւնը, փրկու-մէր նորան, նոքա բթացնումէին իւրեանց ճանկերը նորա պողպատեայ թեփերի վերայ եւ փշրումէին ատամները, հանդիպեցնելով նորա եր-կաթեայ ձեռքերին ու ոտքերին, իսկ գազանների կաշին ծխվումէր Մօրօկի մետալական թռուագուռի ամենափոքր հպաւորութենից, որ պատճառումէր նորանց չարատանջ այրեցողութիւն:

Գազանները փորձով ճանաչելով իւրեանց աշխատութեան զուր լինելը, այլ եւ յիշողութիւն ունելով, հասկացան, որ ոչ ճանկով եւ ոչ ատամներով կարող էին վնասել այս անվիրաւորելի մարդուն. նոցա երկիւղած հնազանդութիւնը վերջապէս մինչեւ այն աստիճան հասաւ, որ այցելուների առաջեւը, նոքա դողալով պառկումէին եւ սո-ղումէին, մինչ Մօրօկը ցուցանումէր նորանց մի հասարակ թռուագուռ պատած կրակի գոյն թղթով:

Մօրօկը, կատարելապէս զրահաւորված եւ ձեռքում բռնած մինչեւ սպիտակիլը ջերմ մետալեայ թռուագուռը, ցած իջաւ սանդուղքի վե-րայով դստիկոնից, որ շինած էր մեծ ախոռի վերայ, ուր տեղաւոր-ված էին նորա գազանների վանդակները: Տախտակեայ պատը բաժա-

նումէր այս ախոռը այն ախոռից, ուր կանգնած էին Մօրօկի ձիանքը։ Լապտերը, որ կախած էր այն տեղ, արձակումէր իւր պայծառ լոյսը վանդակների վերայ։ Չորս հատ էին այս վանդակները, որոնց առաջևի պատը բաղկանումէր երկաթի ցանցառ հիւսուածից. այս հիւսուածը մի կողմից ամրացուցած էր այն կարգով ինչ կարգով կախվումեն դռները առ հասարակ, այս պատճառով սոքա ևս բացվումէին և փակվում ինչպէս դուռն, երբ հարկաւոր էր ներս տանել գազանը կամ դուրս արձակել վանդակից։ Վանդակների փայտեայ յատակները ամրացած էին երկու առանցքների վերայ, որ վերջանումէին չորս երկաթի փոքրիկ անիւներով։ Այս կերպով հեշտ էր մօտ տանել վանդակները այն ծածկութաւոր սայլին, որով ճանապարհորդումէին այս կենդանիքը։ Վանդակի մինը դատարկ էր. մնացած երեքի մէջ նստած էին, ինձը, վագրը և առիւծը։

Յաւա կղզուց բերած ինձը, իւր զարհուրելի և կատաղի կերպարանքով, կարելապէս արդարացնումէր իւր, Մահ անուանակոչութիւնը. նա պառկած էր գուճ եկած վանդակի խորքումը, նորա բրդի սև գոյնը խառնվելով շրջապատած խաւարի հետ չէր երևում նա ինքը գազանը. մի միայն լուսափայլումէին երկու պայծառ անշարժ կէտեր — նորա մեծ, դեղնագոյն, և փոսփորանագոյն աչքերը, որ բորբոքվումէին գիշեր ժամանակում. պատճառ ամենայն կատուի ցեղի պատկանող գազանքը, լաւ տեսանումեն գիշերով։

Մօրօկը լուռ ու մունջ ներս մտաւ ախոռը. նորա մուշտակի մուգ կարմիր գոյնը, զգալի կերպով որոշվումէր անհարթ, բաց տեղին գունով նորա խոզական մազերից և երկայն մօրուքից։

Բաւական բարձր կախած լապտերը, բոլորովին լուսաւորումէր նորան, և պայծառ լոյսը խառնված թանձր ստուերների հետ, առաւել զգալի ցոյց էր տալիս նորա ոսկորոտ և թթու դէմքի անհարթութիւնը։ Նա յամր քայլերով մօտեցաւ վանդակին. նորա չէկ բըբերի չորս կողմի սպիտակագոյն շրջանակը, թըվումէր, թէ լայնացան, նորա աչքերը նոյնպէս փայլուն էին և անշարժ ինչպէս ինձի փայլակնացայտ աչքերը. . . .

Ինձը պառկած էր դարձեալ մթնի մէջ. նա արդէն սկսանումէր զգալ իւր տիրոջ կախարդիչ հայեացքի ազդեցութիւնը. երկու անգամ գազանը արագութենով փակեց աչքերը արձակելով մի խուլ և բարկացոտ մռնչիւն, բայց յետոյ նորա աչքերը որպէս թէ ակամայ բացվեցան և անյաղթելի հակամիտութենով ուղղվեցան դէպ ի Մօրօկի աչքերը։ Այն միջոցին Մահի բոլորշի ականջները պառկեցան գանգի վերայ, որ տափակ էր ինչպէս մողեսի գլուխ, ճակատի կաշին ցնցվելով ժողովվեցաւ, խոզական երկայն մազերով ծածկված

գունչը ձգվեցաւ և բերանը, զրահաւորված ահագին ատամներով, երկու անգամ բացվեց ու փակվեց առանց ձայն հանելու։ Մարդու և գազանի աչքերի մէջ սկսվեց մի մագնիսականի նման հաղորդակցութիւն։ Մորօկը պարզեց դէպ ի վանդակը կրակացրած Թռռագուռը և ընդհատված բայց հրամայողական ձայնով ասաց. «Մահ — այս տեղ»։ Ինձը վեր բարձրացաւ, բայց այնպէս սեղմված էր, որ նորա փորը և ծնկները դիպչումէին յատակին։ Նա ունէր երեք ոտնաչափ բարձրութիւն և հինգ ոտնաչափ երկայնութիւն. մուգ և ձգական ողնաշարը, խորը ներս ընկած կուրծքը, դուրս պրծած ահագին և ջլային Թիկունքը, կարճ Թաթերը, այս բոլորը ցոյց էին տալիս, այս սարսափելի գազանի անչափ զօրութիւնը և օտարոտի յաջողաշարժութիւնը։

Մօրօկը, բռնելով դէպ ի յառաջ երկաթի Թռռագուռը, մի քայլ արեց դէպ ի Ինձը. Ինձը յառաջ շարժեցաւ մի քայլ դէպ ի Գէտը... սա կանգնեցաւ. կանգնեցաւ և գազանը... Այս միջոցին վագրը, դէպ ի որը Մօրօկը կանգնած էր քամակով, սաստիկ վեր Թռաւ, որպէս Թէ նախանձելով, որ տէրը ուշադրութիւն չէր դարձուցել նորա վերայ, այլ նայել էր ընձին. վագրը արձակեց մի խուլ և ընդհատական մռնչիւն և գլուխը մի փոքր բարձրացրած, դուրս դրեց իւր աչարկու եռանկիւնի ծնօտի ներքին մասը և կարօղ կեղտոտ — սպիտակագոյն կուրծքը, որի հետ խառնվումէր նորա չէկ բրդի պղնձի գոյնը, որ խայտաբղետացած էր սև սև խազերով. Նորա պոչը, հաստ, օձի նման կարմրագոյն և սև շրջանակներով, երբեմն սեղմվումէր դէպ ի կողքերը, երբեմն կամաց և նոյնաչափ զարկումէր նորանց. Նորա կանաչագոյն, Թափանցիկ և լուսաւոր աչքերը, ուղղվեցան դէպ ի Մօրօկը։ Այնքան մեծ էր այս մարդու ազդեցութիւնը գազանների վերայ, որ վագրը իսկոյն ձայնը կտրեց, որպէս Թէ վախեցած իւր յանդգնութենից. բայց նորա շնչառութիւնը անկանոն և աղաղակաւոր էր։

Մօրօկը դարձաւ դէպ ի նա և մի քանի վայրկեան նայեց նորա վերայ։ Ինձը ազատվելով այս միջոցին Մօրօկի հայեացքից վերադարձաւ դէպ ի իւր խաւար անկիւնը և դարձեալ պառկեցաւ։ Այս միջոցին առիւծի վանդակից լսվեցաւ մի ձայն, այն ձայների նման, որ լսվումեն մինչ մեծամեծ կենդանիք մի բան էին կրծում. այս բանը Մօրօկի ուշադրութիւնը դարձուց կայէնի վերայ։ Գէտը, Թողեց վագրը և մօտեցաւ առիւծի վանդակին։ Մի միայն երևումէր վանդակից առիւծի շիկաբուրդ քամակը. բարձերը սեղմված էին նորա տակում, Թանձր բաշը բոլորովին ծածկումէր նորա գլուխը, կողքի մկնակները ձգված դողում էին, ողնաշարը դուրս էր պրծնում. այս նշաններից դժուար

չէր հասկանալ, որ նա մեծ զօրութիւն է գործ դնում բերանով և առաջևի թաթերով։ Այս բանը կատաղեցրեց Մօրօկը. նա կարծեց, թէ Գօլիաթը կարելի է իւր հրամանի հակառակ ձգել է առիւծի առաջևը կրծելու ոսկոր։

Որպէս զի հաւաստի լինի այս բանում, նա հաստատ և ընդհատված ձայնով ասաց. կայէն.... բայց կայէնը տեղից ևս չ՛շարժեցաւ։ — Կայէն... այս տեղ, ասաց Մօրօկ աւելի բարձր ձայնով. առիւծը չէր հնազանդվում և փշրելու ձայնը շարունակվումէր։ Կայէն, այս տե՛ղ, ասաց Մօրօկը երրորդ անգամ և դրեց կրակացրած թոռագուալի ծայրը առիւծի ազդրին։

Հազիւ թէ թեթև ծուխը բարձրացել էր Կայէնի շիկագոյն բրդերից, գազանը անհաւատալի արագութենով շուռ եկաւ, ո՛չ չորս թաթերի վերայ, այլ կանգնած յետքի թաթերի վերայ և նետի նման յարձակվեցաւ դէպ ի վանդակի երեսը — ցանցատեսակ երկաթի հիւսուածը... գեղեցիկ.... ահարկու։ Մօրօկը կանգնած էր վանդակի անկիւնի մօտ։ Կատաղած առիւծը դարձաւ ուղղակի դէպ ի նա, կողքովը սեղմելով երկաթի հիւսուածին և դուրս հանելով հիւսուածի միջով մինչև արմուկը, ձգված մկնակներով իւր ահագին թաթը, որ բարակ չէր Գօլիաթի բազուկից։

— Կայէն... պառկիր... գանչեց Մօրօկը արագութեամբ մօտեցած վանդակին։ Առիւծը չէր հնազանդվում.... Նորա շրթունքը, որ կատաղութենից բարձրացել էին, ցոյց էին տալիս նորա լայն, երկայն և վարազի ժանիքի նման սուր ատամները։ Մօրօկը մի բարակ մօտեցրեց կրակացրած երկաթը Կայէնի շրթունքին.....։

Առիւծը զգաստացած սաստիկ ցաւից և իւր իշխանաւորի նորից գանչելուց չ՛համարձակվեցաւ մռնչել. մի խուլ ձայն արձակեց և այս ահագին մարմինը ցածացաւ, գուճ եկաւ և պառկեցաւ ամենահնազանդ դրութենով։ Մօրօկը վեր առեց լապտերը պատից կամելով իմանալ, թէ ի՞նչ էր կրծում Կայէնը — առիւծը սաստիկ սոված լինելով բարձրացրել էր յատակի սփռոցը և սկսել էր կրծել։

Խոր լռութիւն թագաւորումէր բաւական ժամանակ գազանանոցի մէջ։ Մօրօկը ձեռքերը մէջքին դրած գնումէր մի վանդակից դէպ ի միւսը և ուշադրութենով նայումէր իւր գազանների վերայ, որպէս թէ իսկոյն չ՛կարողանալով ընտրութիւն առնել։ Նա շատ անգամ կանգնումէր ախոռի մեծ դուռի մէջ, որ բացվումէր դէպ ի պանդոկի գաւիթը, և ինչպէս երևումէր ականջ էր դնում։ Վերջապէս դուռը բացվեցաւ և ներս մտաւ Գօլիաթը. Նորա հանդերձներից աղբիւրի նման թափումէր ջուրը։

«Ի՞նչ եղաւ», հարց արեց Մօրօկը։

— Մի փոքր դժուար էր! Լաւ որ դեռ գիշերը շատ մութն էր, քամին սաստիկ և անձրևը թափումէր գետի նման։

«Ոչինչ կասկածանք չյառաջացաւ?»

— Ոչինչ։ Ինչպէս պատմել էիք ինձ, այնպէս ևս երևեցաւ բանից։ Ցան ղուռը նայումէ դէպ ի դաշտը, ուղիղ աղջկերքի պատուհանի տակ։ Երբ դուք սուլեցիք, թէ ժամանակ է, ես առի վերելեակը, որ յատուկ պատրաստել էի և գնացի աշխատել. դրեցի նորան պատի մօտ, վեր ելայ.... իմ բարձրութիւնը վեց ոտնաչափ է, իսկ վերելեակինը երեք, բոլորը ի միասին ինն ոտնաչափ այնպէս, որ ես կարողացայ արմուկներս հաստատել պատուհանի վերայ.... ես մի ձեռքով բռնեցի պատուհանի կափարիչը, իսկ միւսովը դանակը. կտրեցի երկու ապակի և որքան ույժ ունէի այնքան սաստկութենով զարկեցի կափարիչը պատուհանին։

«Նոքա կարծեցին, թէ քամի՞ն էր դորա պատճառը»։

— Այո, այդպէս։ Թէ և դուք ինձ տաւար անուանեցիք, բայց ես դեռ ևս այնքան անմիտ տաւար չեմ!... Յետոյ ես շուտով ցած իջայ և վերառած այն տեղից վերելեակը հեռացայ, ապա թէ ոչ, անիծած շունը հոտով կը ճանաչէր ինձ դուռի քամակից։

«Նա այժմ այն ձիանոցումն է, ուր և ձին է... յետոյ ինչ եղաւ»։

— Լսեցի, որ պատուհանը և կափարիչը դարձեալ փակվեցան. ես դուրս եկայ, դարձեալ դրեցի վերելեակը և բարձրացայ. զգուշութեամբ բացի կափարիչը, բայց ջարդած ապակիների տեղերը կալած էր մուշտակով. լսումեմ, որ խօսումէն սենեակի մէջ, բայց ոչինչ չեմ տեսանում. ես մի բարակ յետ քարշեցի մուշտակը և այն ժամանակ ինձ տեսանելի եղաւ.... աղջկերքը պառկած են մահճի վերայ երեսները դէպ ի ինձ. ծերունին նստած է նոցա ոտքի տակ քամակով դէպ ի պատուհանը։

«Բայց նորա ճանապարհակիրը?...։ ճանապարհակիրը. այդ է գլխաւոր բանը»։

— Նորա ճանապարհակիրը պատուհանի տակ ընկած էր սեղանի վերայ կանթեղի մօտ, եթէ ձեռքս պարզէի անպատճառ կը հասանէի նորան։

«Ի՞նչ լսեցիր»։

— Դուք պատուիրեցիք ինձ մտածել միմիայն ճանապարհակրի վերայ, այս պատճառով իմ միտքս է միայն այս, որ խօսումէին ճանապարհակրի վերայ։ Ծերունին ասումէր, թէ այն տեղ են նորա թղթերը, մի գեներալի նամակ և խաչը։

«Բարի... յետոյ ինչ իմացար։

— Ինձ յաջող չէր ձեռքումս պահել մուշտակը. այս պատճառով դուրս սահեցաւ ձեռքիցս.... ես կամեցայ վերստին բռնել նորան, բայց երևի թէ ձեռքս շատ ներս էի կոխել.... աղջիկներից մինը տեսաւ.... սաստիկ աղաղակեց և մատով ցոյց տուեց դէպ ի պատուհանը....

«Անիծեա՛լ. բոլոր գործը աւերեցիր», գանչեց Մօրօկը գունաթափած բարկութենից:

— Ամենևին ո՛չ. ոչինչ չեմ աւերել. համբերեցէք և լսեցէք ինձ.... լսելով այս աղաղակը, ես ցած թռայ և թաքնվեցայ տանը մէջ: Շունը չ՛կար արդէն, այս պատճառով ես դուռը բոլորովին չ՛փակած լինելով լսումեմ, որ ծերունին բացեց պատուհանը, յետոյ գետնի վերայ տեսանումեմ լոյս.... այդ ծերունին էր, որ պատուհանից դուրս էր կախվել կանթեղը ձեռքին.... Նայեց չորս կողմը և ասաց. «սանդուղք չէ երևում, իսկ պատուհանը այնքան բարձր է, որ հասարակ հասակով մարդը չէ հասանելու...:»

«Եւ նա դարձեալ կարծեց, որ այդ քամի՞ն էր...: Դու այնքան յիմար չես, որքան ես կարծումէի»:

— Ահա՛ այդ է բանը. գայլը աղուէս է դարձել: Այժմ գիտեմ ես թէ ո՛ւր են արծաթը և թղթերը.... սորանից առաւել ոչինչ բան չ՛կար ինձ առնելու.... ահա այն պատճառով եկած եմ այժմ ձեր մօտ:

«Գնա վերև, բեր ամենաերկար գեղարդը»:

— Իսկոյն:

«Եւ կարմիր մահուդի ծածկոցը»:

— Շատ բարի:

«Գնա՛»:

Գոլիաթը սկսեց բարձրանալ սանդուղքների վերայով, բայց կէս ճանապարհումը կանգնեց:

— Իմ տէր, չ՛բերե՞մ արդեօք.... Մահի համար.... մի կտոր միս: Ասումեմ ձեզ, որ նա կը չարանայ իմ վերայ.... բոլոր մեղքը իմ վերայ կը դնէ.... և եթէ պատահի....

«Քեզ ասումեն բերել գեղարդը և ծածկոցը», գանչեց Մօրօկը բարկացած:

Մինչ դեռ Գոլիաթը բարկացած և քթի տակից խօսելով կատարումէր իւր պարոնի պատուէրը, Մօրօկը մի փոքր բացեց ախոռի դուռը, նայեց գաւիթը և սկսեց ականջ դնել:

— Ահա ձեզ գեղարդը և ծածկոցը — ասաց Գոլիաթը սանդուղքից ցած գալով — այժմ ի՞նչ էք հրամայում անել:

«Գնա՛ դարձեալ այն տունի մօտ, բարձրացիր դէպ ի պատուհանը և երբ ծերունին դուրս կը վազէ սենեակից....

— Բայց ո՞վ դուրս կը բերէ նորան։

«Քեզ ասացի, որ դուրս կը վազէ»։

— Յետոյ ի՞նչ անեմ։

«Դու ասացիր, որ կանթեղը դրած է ո՛չ շատ հեռի պատուհանից»։

— Շատ մօտ, սեղանի վերայ ճանապարհակրի մօտ։

«Երբ ծերունին դուրս կը վազէ, շուտով բաց պատուհանը, ցած ձգիր կանթեղը. և եթէ մնացածը ևս կատարես շուտով և աջողակութեամբ.... տասն ֆլորինը քո՛ն է.... իմանում ե՞ս լաւ....»

— Իմանում եմ, իմանում։

«Աղաղակը և մութը մինչև այն աստիճան կը վախեցնեն աղջկերքին, որ նոցա ձայնը չի դուրս գայ»։

— Հանգիստ կացէք. գայլը աղուէս է դարձել. նա օձ ևս կը դառնայ։

«Այդ դեռ բոլորը չէ»։

— Ի՞նչ կայ այլ ևս։

«Այս ախոռի ծածքը շատ բարձր չէ, մինչև պատուհանը հասնելը դժուար չէ.... գիշերը մութն է.... փոխանակ դաւթից անցանելու....»

— Ես պատուհանից ներս կը մտանեմ։

«Բայց նայիր աղաղակ չ՚բարձրացնես»։

— Մի վախեցիք, օձի նման կը մտանեմ։

Նա հսկայն դուրս գնաց։

«Այո՛», ասաց Մօրօկը ինքը ինքեան երկար լռութենից յետոյ, «սոքա յուսալի հնարներ են.... հարկաւոր ևս չէ մտածել.... ես մի կոյր և անտեղեակ գործիք եմ.... չ՚գիտեմ իմ ստացած հրամանների պատճառները.... բայց դատելով այն խօսքերի վերայ, որ ինձ ասացին... նայելով ինձ յանձնարարութիւն առնողի վիճակին պիտոյ է մտածել, որ շատ երևելի գործ է.... որ յարաբերութիւն ունի դա դրամական օգտի և վնասի, որ յարաբերութիւն ունի շատ մեծ և շատ բարձր առարկաների։ Բայց ի՞նչ կերպով այդ համարեա թէ աղքատ աղջկերքը, այդ արհամարհելի զինուորը կարող են տէր եղած լինել այդպիսի մեծ գործերի....։ Իմ գործ չէ մտածել դորա վերայ», յաւելացրեց նա հեզութեամբ, «ես միայն ձեռք եմ, որ պիտոյ է գործ կատարէ, իսկ պատասխանատու է գլուխը, որ մտածումէ և հրամայումէ»։

Շուտով դուրս եկաւ Մօրօկը ախոռից, առնելով իւր հետ կարմիր մահուդի ծածկոցը և շուռ եկաւ դէպ ի փոքրիկ ձիանոցը, ուր կանգնած էր Ուրախը։ Անպիտան դուռը փակած էր առանց կպղի։

Տխուրը օտար մարդ տեսածի պէս յարձակվեցաւ նորա վերայ, բայց նորա ատամները խրվեցան երկաթապատ հանդերձի մէջ. և չ՛նայելով, որ շունը խածանումէր ամենայն զօրութենով, Մօրօկը բռնեց Ուրախի սանձից, փաթաթեց ձիու գլուխը ծածկոցովը այնպէս, որ նա չ՛կարողանայ տեսանել և հասկանալ, դուրս հանեց այս կերպով ձիանոցից, տարաւ իւր գաղանանոցը և փակեց դուռը վերայից։

X.

ՅԱՓՇՏԱԿՈՒԹԻՒՆ։

Որբերը, իւրեանց հօր օրագրի ընթերցանութիւնը աւարտելով, լուռ նստած էին մի քանի ժամանակ տխուր մտածութեան մէջ մտած և նայումէին այս ժամանակի ազդեցութենից դեղնած թերթերի վերայ։

Դագոբեռը մտածումէր իւր կնոջ և որդու վերայ, որոնցից այնքան երկար ժամանակ էր, որ բաժանվել էր և որոնց յոյս ունէր այժմ շուտով տեսանել. յետոյ ընդհատելով լռութիւնը, որ տևել էր արդէն մի քանի րոպէ, նա վեր առեց թերթերը Բլանշի ձեռքից, զգուշութեամբ ծալեց նորանց և ասաց որբերին։

«Իմ զաւակներ, դադարեցէք տխրելուց, արիացէք... տեսաք ահա, թէ ինչպէս քաջ հայր ունիք. մտածեցէք միայն այն մասին, թէ ինչպէս քաղցր պիտոյ է լինի ձեզ գրկել նորան և մի մոռանաք այն երիտասարդ մարդու անունը, որին պարտական պիտոյ է լինէիք ձեր այդ բաղդաւորութեան համար. պատճառ, եթէ նա չ՛լինէր, ձեր հայրը մեռած կը լինէր Հնդկաստանում»։

— Նորա անունը Ճայլմա է. ո՛հ. այդ անունը մէք երբէք մոռանալու չենք, — ասաց Րօզը — «և եթէ մեր բարի հրեշտակ Գաբրիէլը դարձեալ գայ մեզ մօտ, այն ժամանակ կը խնդրենք նորանից, որ և Ճայլմային ևս պահպանէ ինչպէս մեզ», շարունակեց Բլանշը։

«Հերի՛ք է զաւակներս, ես հաւատացած եմ ձեր զգացողութեան և գիտեմ, որ դուք այդ չէիք մոռանալու.... Ես արդէն ասացի ձեզ, որ ձեր մօր մօտ գիւղումը, ուր նա բնակվումէր.... եկաւ այն զարմանալի ճանապարհորդը։ Նա տեսել էր գեներալին մի ամիս յետոյ այն անցքերից, որոնց մասին դուք կարդացիք, այս ինքն այն ժամանակ, երբ ձեր հայրը դարձեալ պատրաստվումէր պատերազմ գնալ ընդդէմ Անգլիացոց։ Ձեր հայրը այս տեսաւորութեան ժամանակ յանձնել էր նորան իւր թղթերը և մեդալիոնը»։

— Բայց մեզ ինչ բանի պէտք կը լինի այդ մեդալիոնը — հարց արեց Բլանշը։

«Եւ ինչ է նշանակում նորա վերայի բառերը», ասաց Բօղը հանելով ծոցից մեդալիոնը։

— Այդ նշանակում է, իմ զաւակներ, որ 1832 ին փետրուարի 13 ին մեք պիտոյ է գտանվինք Փարիզ, Սուրբ Ֆրանսիսկի փողոցում, երեք համարով տան մէջ։

«Բայց ինչ պատճառով»։

— Ձեր խեղճ մայրը յանկարծ հիւանդանալով չ՚կարողացաւ ինձ պատմել. գիտեմ միայն, որ այդ մեդալիոնը անցել էր նորա ձեռքը նորա ծնողքից. այդ մեդալիոնը մասունքի նման պահվումէր նոցա գերդաստանի մէջ աւել քան թէ հարիւր տարի։

«Ի՞նչպէս ուրեմն անցել էր մեր հօր ձեռքը»։

— Երբ նա հարկադրված էր որքան կարելի է շուտով դուրս գնալ Վարսաւիայից.... ծառաները նորա բաները կառքի մէջ դնելու ժամանակ սխալմամբ դրել էին և ձեր մօր փոքրիկ արկղը, որի մէջ էր այդ մեդալիոնը։ Այն ժամանակից սկսած գեներալը ոչինչ կերպով չէր կարողանում յետ ուղարկել նորան, որովհետև ոչինչ հնար չ՚կար հաղորդակցութեան։

«Ուրեմն այդ մեդալիոնը շատ հարկաւոր է մեզ?»

— Երևի թէ այդպէս է. ձեր մայրը, ասել չէ կարելի, թէ ինչպէս ուրախացաւ, երբ ճանապարհորդը տուեց նորան այդ մեդալիոնը.... Ահ, այժմ իմ երեխաների վիճակը ապահոված է, ասումէր նա ուրախութեան արտասուքը աչքերում։ Ես կ՚երթամ նոցա հետ միասին Ֆրանսիայ. բայց թէ հիւանդանամ, մեռանիմ, այն ժամանակ դու տար դորանց, Դագոբեռ. հարկաւոր է շուտով ճանապարհ ընկնիլ. պատճառ առանց այլ ևս ուշանալու, արդէն թանգ ժամանակը բաւական կորած էր....։ Եթէ դուք կանուխ չ՚հասանէք քան թէ փետրուարի 13, այն ժամանակ այս ծանր բաժանումը, այդ դժուար ճանապարհորդութիւնը, ոչինչ օգուտ չեն բերելու։

«Ի՞նչպէս. եթէ մեք մի օրով ուշանայինք?»

— Ձեր մայրը ասումէր, որ թէ մեք Փարիզ հասանէինք 14 ին փոխանակ 13 ի, այն ժամանակ ևս արդէն ուշ էր. նա յանձնեց ինձ մի մեծ ծրար և հրամայեց ինձ Ֆրանսիա ուղարկել նորան ճանապարհի վերայ առաջին քաղաքից, որի միջով պիտոյ է անցանէինք.... ես ևս այդպէս ուղարկեցի։

«Բայց դու ինչ կարծումես, կը հասանենք մեք 13 ին։

— Պիտոյ է հասանել. դեռ ևս յոյս կայ։ Վատ չէր լինելու, եթէ այդ շատ չէր վաստակեցնում ձեզ, իմ զաւակներ, եթէ երբեմն երկու ընթացք կատարէինք օրվայ մէջ. պատճառ, առանց մի արգելք ևս պատահելու օրվայ մէջ հինգ միլ ճանապարհ կատա-

բելով մեք Փարիզ կը հասանենք փետրուարի սկզբումը, բայց հարկաւոր էր մի փոքր վաղ հասանել:

«Բայց մեր հայրը Հնդկաստանումն է և չէ կարող Ֆրանսիայ վերադառնալ, որովհետև դատապարտված էր դէպ ի մահու պատիժ, ուրեմն երբ կը տեսանենք նորան»:

—Ու՞ր:

«Այդ ճշմարիտ է.... բայց դուք դեռ ևս շատ բան չ՚գիտէք, իմ զաւակներ: Երբ ճանապարհորդը տեսել էր ձեր հօրը, գեներալը չէր կարողանում այն ժամանակ Ֆրանսիայ վերադառնալ.... այդ ճշմարիտ է. բայց այժմ կարո՛ղ է»:

—Ի՞նչ պատճառով:

«Նորա համար, որ Ֆրանսիայի մէջ շատ փոփոխութիւնք եղան. նոր թագաւոր, նոր ցեղից.... անցածը մոռացված է.... այս բանի լուրը երևի թէ շուտով հասաւ Հնդկաստան, և ձեր հայրը առանց ժամանակ կորուսանելու ճանապարհ ընկաւ և կը սպասէ ձեզ Փարիզում. նա հաստատ գիտէ, որ դուք կը լինէք այն տեղ մինչև գալոց տարու փետրուարի տասն երեքը.... և ձեր մօր հետ»:

—Ա՜յժմ ես հասկանում եմ— ասաց Րօզը հառաչելով,—մեք դեռ կարող ենք տեսանել նորան:

«Գիտես արդեօք Դագոբեռ, ինչ էր այն ճանապարհորդի անունը»:

Ո՛չ զաւակներս, չ՚գիտեմ. բայց ինչպէս և լինէր նորա անունը, բայց նա լաւ մարդ էր: Երբ նա հրաժարված գնումէր, ձեր մայրը արտասուքը աչքերում շնորհակալ էր լինում նորա բարեսրտութեան, նորա բարեկամութեան համար դէպ ի գեներալը, ինքը, և իւրեանց զաւակները: Նա սեղմեց ձեր մօր ձեռքը և ասաց այնպիսի սրտաշարժ ձայնով, որ մինչև անգամ իմ սիրտը շարժեց: «Ի՞նչ բանի համար հարկաւոր է ինձանից շնորհակալ լինել. մի՞թէ ասված չէ. սիրեցէք միմեանց»:

«Դագոբեռ, այդ ո՞ր տեղ է ասած»:

—Ես ո՞վ է ասել:

«Չ՚գիտեմ. միայն հիանալի լաւ ասաց նա այդ խօսքերը. բաց ի գորանից այդ նորա վերջին խօսքերը եղան»:

— Սիրեցէք միմեանց — ասաց Բլանշը մտածմունքի մէջ ընկած:

«Ի՜նչ գեղեցիկ խօսքեր են», յաւելացրեց Րօզը:

—Դէպ ի ո՞ւր գնաց այդ ճանապարհորդը:

«Նա ասաց թէ շատ հեռի է գնում. դէպ ի Հիւսիս: Երբ նա գնաց, ձեր մայրը ասաց ինձ. Նորա հեզ և տխուր խօսքերը մինչև անգամ շարժեցին իմ արտասուքը. Նորան լսելով ես զգումէի, որ

լինումէի առաւել բարի, լաւ, որ առաւել շատ էի սիրում իմ ամուսինը և զաւակներս. բայց ինչպէս երեւումէր այս զարմանալի մարդու երեսից, կարելի է կարծել, որ նա երբէք չէր ժպտում և երբէք չէր լաց լինում: Երբ նա հեռացաւ ես և ձեր մայրը երկար ժամանակ կանգնած դուռի մօտ ճանապարհ էինք ձգում նորան աչքի տեսութենով: Նա գնումէր գլուխը կախած, նորա գնացքը դանդաղ էր, հանգիստ, հաստատ, որպէս թէ համարումէր իւր քայլերը. բաց ի սորանից ես նկատեցի մի առաւել օտարոտի բան»:

— Ի՞նչ բան Դագոբեռ:

«Ձեզ յայտնի է. ճանապարհը, որ հանումէր դէպ ի մեր տունը, միշտ թաց էր լինում աղբիւրից, որ մօտ տեղում գտանվումէր....»

— Այո՛, միտքերս է:

«Կաւեղէն հողի վերայ մնումէին նորա հետքը, և ես նկատեցի, որ նորա գարշապարի վերայ գամեր զարկած են այս կերպով», ասաց Դագոբեռը եօթն անգամ զարկելով մատը վերմակի վերայ, «տեսանումէ՞ք, որ սա խաչի ձև ունի»:



— Այդ ի՞նչ է նշանակում Դագոբեռ:

«Չ՚գիտեմ, կարելի է պատահաբար.... բայց ինչպէս և եղած լինի այդ խորհրդական ճանապարհորդի գալը մի վատ բան էր գուշակում: Այն օրից սկսած փորձանք փորձանքի քամակից թափվեցան մեր վերայ»:

Ո՛հ, ճշմարիտ է. մեր մայրը վախճանեցաւ:

Դեռ ևս դորանից յառաջ.... մեզ հարկաւոր էր, որքան կարելի է շուտով փարիզ գնալ, բայց զանազան հանգամանք.... հարկադրեցին մեզ գնալ բոլորովին դէպ ի հակառակ կողմ.... Ձեր մայրը ասումէր, «գիտութեամբ արգելք են լինում մեզ ժամանակին փարիզ հասանելու....» Նա բոլորովին ընկաւ յուսահատութեան մէջ. ճշմարիտ ցաւելի էր նորա վերայ նայելը»:

— Գուցէ և այդ վշտացուցիչ պատճառներից ևս, մեր մայրը հիւանդացաւ:

«Ո՛չ, իմ սիրականք. նորան խօլերա կպաւ.... այն անիծած հիւանդութիւնը! Յանկարծ յայտնվումէ և չ՚գիտես, թէ ո՞ր տեղից.... նա ևս մի տեղից միւս տեղ է գնում նոյնպէս.... և կայծակի պէս անակնկալ զարկումէ: Դուք տուն վերադարձաք այն օտարոտի հիւրի գնալուց երեք ժամից յետոյ. դուք դեռ վազեցիք եկաք ուրախ և զուարթ ձեռքերումդ ծաղիկներ, այնպէս չէ՞... չէ՞ք մոռացել.... ձեր մայրը արդէն մահուան դռնումն էր և փոխվել էր այնպէս, որ ճանաչել չէր կարելի....»:

«Գիւղումը երևեցաւ խօլեռայն. արդէն մինչև երեկոյ հինգ մեռել կային: Ձեր մայրը ձեր վիզը անցուց մեդալիոնը. ինձ յանձնեց ձեզ երկուսիդ, հրամայեց որքան կարելի է շուտով ձեզ փարիզ հասուցանել... այսքան. խեղճը առաւել ոչինչ չկարողացաւ ասել: Երբ նա արդէն մեռած էր, հանգամանքները փոխվեցան.... և մեք ճանապարհ ընկանք»:

Ծերունի զինուորը չ՚կարողացաւ աւարտել. նա ծածկեց ձեռքերով աչքերը, իսկ որբերը գրկելով միմեանց լալիս էին: Այս ողբալի լռութենից մի քանի րոպէ յետոյ, Դագոբերը հպարտ հպարտ բարձրացրեց գլուխը և ասաց. «այս դիպուածումը, իմ սիրական զաւակներ, ապացուցիք, որ դուք արժանի դստերք էիք քաջ գեներալի: Զ՚նայելով զարհուրելի վտանգաւորութեան վերայ, ձեզ չ՚կարողացան հեռացնել հանգուցեալ մօր մարմնից. դուք մինչև վերջին րոպէն մնացիք նորա մօտ, ինքներդ փակեցիք նորա աչքերը, ամբողջ գիշեր նստաք մարմնի մօտ և համաձայնեցաք այն ժամանակ միայն հեռանալ, երբ ես կանգնեցուցել էի արդէն կաղնու փայտից խաչը նորա գերեզմանի վերայ:

Դագոբերը յանկարծ դադարեց խօսելուց.... լսվեցաւ մի օտարոտի, յուսահատ խրխինջոց և յետոյ կատաղի և զարհուրելի մռնչիւն: Ծերունին վեր թռաւ աթոռից, գունաթափեցաւ և գանչեց. «այո՛, այդ Ուրախն է, իմ խեղճ Ուրախը, այդ ինչ են անում նորան:

Դագոբերը յարձակվեցաւ դէպ ի դուռը և ցած իջաւ սանդուղքներից:

Որբերը մինչև այն աստիճան վախեցել էին Դագոբերի այս անակնկալ դուրս վազելուց, որ սեղմված միմեանց կուրծքի մինչև անգամ չ՚կարողացան տեսանել, թէ ինչպէս ահագին ձեռքը ներս կոխած կոտրած ապակիների տեղով բացեց բոլորովին պատուհանը և ցած ձգեց կանթեղը, որ դրած էր սեղանի վերայ Դագոբերի ճանապարհակրի մօտ:

Օրիորդքը մնացին խաւարի մէջ:

XI.

ՈՒՐԱԽԸ ԵՒ ՄԱՀԸ:

Մօրօկը ձին գաղանանոցը տանելով հանեց նորա գլխից ծածկոցը, որի տակ ոչինչ չէր կարողանում տեսանել կամ հոտ առնուլ: Վագրը, առիւծը և ինձը, տեսանելով նորան, կատաղութեամբ յարձակվեցան դէպ ի իւրեանց վանդակների ցանցատեսակ հիւսուած

կողմը։ Խեղճ ձին ահ ու սարսափի մէջ ընկած, վիզը երկարացուցած, աչքերը տնկած կանգնած էր անշարժ այնպէս, որպէս թէ հաստատած էր գետնի վերայ․ սառն քրտինք դուրս զարկեց նորա մարմնի բոլոր մակերևութի վերայ։ Սոված առիւծը և վագրը զարհուրելի մռնչելով թռչոտումէին վանդակի մէջ։ Ինձը ձայն չէր հանում, բայց նորա լուռ ու մունջ կատաղութիւնը առաւել զարհուրելի էր։ Նա կատաղաբար յարձակվեցաւ վանդակի քամակի պատից դէպ ի նորա ցանցատեսակ կողմը և զարկվեցաւ դէպ ի նա գլխով, յետոյ կամաց յետ գնաց և նոր կատաղութենով ընկաւ ցանցի վերայ որպէս թէ կամելով խորտակել նորան։ Երեք անգամ կատարեց նա այս գործը.... լուռ.... սարսափելի, մինչ յանկարծ ձին, անցանելով կառած ու կապած վիճակից դէպ ի յուսահատութիւն, սկսեց խրխնջել և ամենայն արագութենով յարձակվեցաւ դէպ ի դուռը, որ տեղից բերել էին նորան․ տեսանելով, որ փակած էր այն, Ուրախը փոքր ինչ ճկեց ոտքերը, դունչը կոխեց այն բաց տեղը, որ մնացած էր դուռի տախտակի և գետնի մէջ, որպէս թէ կամենումէր մի փոքր ազատ օդ շնչել․ յետոյ երկիւղից սարսափած դարձեալ սկսեց խրխնջալ և առաջևի սմբակներովը դուռին զարկել։ Մօրօկը մօտեցաւ Մահի վանդակին այն ակնթարթում, երբ Ինձը նստել էր, որ վերստին յարձակվի։ Մօրօկը երկայն գեղարդովը բացեց վանդակի փակը և մի վայրկենում բարձրացաւ մինչև կէսը սանդուղքների, որ դստիկոնն էր հանում...։ Այս տեղ վագրի և առիւծի մռնչիւնքը և ձիու խրխնջոցը բարձրացան բոլոր պանդոկի մէջ։ Ինձը նոր կատաղութենով յարձակվեցաւ ցանցաշէն դուռի վերայ, դուռը բացվեցաւ և Մահը դուրս թռաւ ախոռի մէջ տեղը։

Լապտերի լոյսը խաղումէր նորա մոյգ և սև բծերով զարդարած փայլուն մորթու վերայ։ Յառաջ Ինձը մնաց առանց շարժողութեան, ժողովված և վիզը երկարացուցած գետնի վերայ որպէս թէ հաշուելով ու համարելով իւր թռչելը... և յանկարծ յարձակվեցաւ Ուրախի վերայ։ Խեղճ ձին տեսանելով, որ գազանը դուրս թռաւ վանդակից, որքան կարող էր, ամենայն զօրութենով և բոլոր մարմնով յարձակվեցաւ դէպ ի դուռը, որպէս թէ յուսալով խորտակել նորան․ բայց դուռը դրսի կողմից դէպ ի ներս բացվող լինելով դիմացաւ այս հարուածին։ Յետոյ շուռ եկաւ Ուրախը բարձրացաւ ետևի ոտքերի վերայ և կանգնեցաւ համարեա թէ ուղիղ, բայց Ինձը, արագ ինչպէս փայլակ, կախվել էր արդէն նորա վզից և խրել էր իւր սուր ճիրանքը նորա կուրծքի մէջ։ Ձիու շնչերակը բացվեցաւ, արիւնը աղբիւրի նման թափվումէր գազանի ատամների տակից․ Ինձը հաստատվելով ետևի թաթերի վերայ դուռին սեղմեց իւր զօհը

և առաջևի թաթերովը պատառոտումէր խեղճ Ուրալի կողքը . . . : Ձիու միսը կտոր կտոր կախ էր ընկած: Նորա խեղդամահ խրխնջոցը անտանելի եղաւ . . . : Յանկարծ դուռի քամակից ձայն լսվեցաւ. «Ուրալ! Ուրալ! Ես այս տեղ եմ! Այդ Դագոբեռի ձայնն էր: Ծերունի զինուորը ամենայն զօրութենով աշխատումէր բանալ դուռը, որ ծածկումէր նորա աչքերից այս սարսափելի պատերազմը:

«Ուրալ! Ես այս տեղ եմ! . . . օգնեցէք», գանչումէր նա յուսահատութեամբ:

Խեղճ ձին լսելով այս ծանօթ ձայնը, արդէն վերջին շնչումը զօրութիւն էր գործ դնում դարձուցանել գլուխը դէպ ի այն կողմը, ուր կանգնած էր իւր տէրը, պատասխանումէր նորան թոյլ և ողորմելի խրխնջոցով և չդիմանալով ինձի զօրութեանը ընկաւ յառաջ ծունկերի վերայ յետոյ կողքի վերայ այնպէս, որ քամակը և վիզը սեղմեցին դուռը և չէին թողում բացվելու: Այս տեղ ամենայն բան աւարտված էր. ինձը թռաւ Ուրալի վերայ, բռնեց իւր անբաղդ զոհը բոլոր չորս թաթերով և արիւնոտ դնչովը խառնումէր նորա պատառոտած փորոտիքը:

«Օգնեցէք . . . . փրկեցէք իմ ձին», գանչեց Դագոբեռը կատաղաբար զարկելով դուռի փակին: «Մի զէնք ևս չ՛կայ», յուսահատ կատաղութենով յաւելացրեց նա:

— Զգոյշ կա՛ց, գանչեց Մօրօկը և դուրս կախվելով պատուհանից, որ նայումէր դէպ ի գաւիթը յաւելացրեց. — բարւո՛ք է, որ չ՛աշխատիս ներս մտանել, ապա թէ ո՛չ քեզ ևս լաւ չի լինի . . . . իմ ինձը սարսափելի չար է . . . . :

«Բայց իմ ձին! . . . ձին! . . .», գանչեց Դագոբեռը:

— Նա դուրս է եկել գիշերը ձիանոցից, մտել է ախոռը. ինձը տեսանելով նորան խորտակել է վանդակը և յարձակվել է նորա վերայ . . . : Դու պատասխանատու ես այս բոլոր բաների մասին, որ կը պատահէին, — ասաց Մօրօկը սպառնալիքով. — այժմ ես ինքս պիտոյ է մեծ վտանգաւորութեան ենթարկվիմ, որ փակեմ Մահը վանդակի մէջ:

«Իմ ձին? . . . . . փրկեցէք իմ ձին!», գանչեց Դագոբեռը աղաչաւոր ձայնով:

Մօրօկը հեռացաւ պատուհանից:

Գազանների մռնչիւնքը, Դագոբեռի աղաղակը զարթեցրեցին «Սպիտակ Բազէի» բոլոր իջևանողքը: Այս տեղ և այնտեղ պատուհանները լուսաւորվեցան և բացվեցան: Շուտով սպասաւորքը լապտերներով վազեցին գաւիթը, շրջապատեցին Դագոբեռին և հարցանումէին, թէ ինչ էր պատահած:

«Ա՛յն տեղ է իմ ձին.... այս անիծածի գազաններից մինը դուրս է պրծել վանդակից!» գանչեց զինուորը շարունակելով շարժեցնել դուռը։ Այս խօսքերի վերայ սպասաւորքը վախեցած սարսափելի մանչիւնից ահուդողով վազեցին դէպ ի զանազան կողմ և շտապեցին ծանօթութիւն տալ պանդոկատիրոջը։

Կարելի է երևակայել, թէ ինչպէս էր Դագոբերի դրութիւնը, քանի դուռը բացված չէր։

Նա գունաթափած, հազիւ հազ շունչ առնելով ականջը դրել էր դուռի փակին և լսումէր...։ Փոքր առ փոքր մանչիւնը դադարեց, լսվումէր միայն մի խուլ ձայն և Մորոկի գանչելը, որ ընդհատ, բայց սուր ձայնով ասումէր. Մահ!... այս տեղ! Մահ!... այս տեղ!...

Գիշերը շատ մութն էր. Դագոբերը չնկատեց, թէ ինչպէս Գոլիաթը զգուշութեամբ սողալով կղմինդրով ծածկած տանիքի վերայով մտաւ գստիկոնը նորա պատուհանից։

Շուտով գլխաւոր շինութեան դուռը դէպ ի գաւիթը դարձեալ բացվեցաւ. Երևեցաւ պանդոկատէրը իւր ծառաներով. Նա կարբինայն ձեռքումը բռնած յառաջ էր քայլում զգուշութեամբ. Նորա մարդիկը զրահաւորված էին հեծանոցներով և փայտերով։

«Ի՞նչ պատահել է այս տեղ», ասաց նա մօտենալով Դագոբերին. «ինչ աղաղակ է, ինչ ամբոխմունք է իմ պանդոկի մէջ...։ Սատանայն առնու բոլոր գազանանոց պահողներին, այո, և նորանց ևս որ չ՛գիտեն մարդավարի ձի կապել...։ Եթէ ձեր անասունը վիրաւորված է, ձեզ մեղադրեցէք.... ինչ պատճառով չ՛պահպանեցիք նորան։

Դագոբերը չ՛պատասխանելով այս մեղադրանքներին շարունակումէր լսել, թէ ինչ էր անցանում ախոռի մէջ և ձեռքով նշանացի էր առնում որ աղաղակ չ՛գործեն։ Յանկարծ լսվեցաւ մի կատաղի մանչիւն. Մորոկը սաստիկ գանչեց, իսկ յետոյ ինձը ողբաձայն մանչեց։

«Ա՜հա, դուք էք այս անբաղդութեան պատճառը», ասաց զարհուրած պանդոկատէրը, դառնալով դէպ ի Դագոբերը. լսեցէք այդ աղաղակը, երևի թէ Մորոկը վտանգաւոր վիրաւորված է։

Դագոբերը կամենումէր պատասխանել, բայց ախոռի դուռը բացվեցաւ. Գոլիաթը երևեցաւ սեամի վերայ և ասաց. — այժմ կարելի է ներս մտանել, վտանգը անցած է։

Գազանանոցի ներսը երևեցնումէր մի սոսկալի պատկեր. գունաթափ Մորոկը զուր տեղը աշխատումէր ծածկել իւր ալեկոծութիւնը արտաքին հանգստութեան դիմակի տակ, մի փոքր հեռի ինձի վանդակից, նա կացած էր ծունկի վերայ, խոնարհ կերպով. Նորա

շրթունքի շարժվածքից կարելի էր եզրափակել, որ նա աղօթք էր անում։ Մօրօկը տեսանելով պանդոկատիրոջը և նորա ծառաներր վեր կացաւ և ասաց հանդիսական ձայնով. «գո՛հ եմ քեզանից Տէր Աստուած իմ, որ ես այլ անգամ ևս կարողացայ յաղթել, քո, ինձ պարգևած զօրութեամբը։

Յետոյ լռեց նա. կուրծքին դրեց ձեռքերը և հպարտ կերպարանքով, հրամայական հայեացքով երևումէր, թէ զուարճանումէր իւր յաղթութեան վերայ, որ կատարել էր զսպելով Մահը, որ պառկել էր վանդակի խորքումը և ողբաձայն մռնչումէր։

Այս անցքի ականատես մարդիկը, չգիտելով, որ Մօրօկի մուշտակի տակ ծածկված է պողպատեայ զրահը, որ նա հագել էր, և ինձի աղաղակը երկիւղի միայն վերագրելով, չէին կարողանում խելքերը գլուխները հաւաքել զարմանալով այս մարդու աներկիւղութեան և գերբնական կարողութեան վերայ։ Մօրօկի քամակումը մի փոքր հեռի նորանից կանգնած էր Գօլիաթը, թիկնը տուած երկայն գեղարդին...։ Վերջապէս ոչ հեռի վանդակից ընկած էր անբաղդ Ուրախի մարմինը լողալով իւր արիւնի մէջ։ Դագօբեռը տեսանելով այս արիւնոտ և պատառոտված մնացորդքը, մի քանի րոպէ անշարժ մնաց կանգնած. Նորա խոշոր և սառն երեսի վերայ նկարագրվեցաւ խորին տխրութիւն...։ Յետոյ ծունկի վերայ ընկած բարձրացրեց նա Ուրախի գլուխը։ Ծերունի զինուորը, նայելով ձիու խաւար, ապակիացած կիսափակ աչքերին, որոնք դեռ ևս մի փոքր յառած ուրախ ուրախ նայումէին սիրական տիրոջ վերայ, ակամայ ձայն արձակեց հարկադրված այս անտանելի ցաւից։ Նա մոռացաւ իւր բարկութիւնը, այս անցքի կորստական հետևանքները խեղճ որբերի համար, որ զրկվել էին ճանապարհորդութիւնը շարունակելու հնարից. Նա մոռացաւ բոլորը, և մտածումէր միայն իւր անբաղդ ձիու սարսափելի մահի վերայ, այն ձիու, որ իւր հին ընկերն էր աշխատանքների և պատերազմի մէջ, այն հաւատարիմ կենդանու, որ իւր հետ միասին երկու անգամ վիրաւորվել էր և արդէն այնքան տարի համարեա թէ անբաժան էին մնացել միմեանցից...։ Այս դառն զգացմունքը այնպէս ճիշդ և սրտաշարժ կերպով երևեցան զինուորի երեսի վերայ, որ պանդոկատէրը և նորա ծառայքը սկսեցին ափսոսալ խեղճ ծերունու վերայ, որ լուռ ու մունջ յուսահատութեամբ ընկած էր ծունկի վերայ մեռած ձիու առաջևը։

Բայց երբ մտածելով իւր ցաւի վերայ Դագօբեռը յիշեց, որ Ուրախը նորան ընկեր էր եղած հալածանքի մէջ, թէ որբերի մայրը, ինչպէս և նորա դստերքը, կատարել էին այդ ձիով երկար և դժուար ճանապարհորդութիւն, այս կորստի ճակատագրական հետևանքները

յանկարծ նորա մտքի առաջևը հանդիսացան — ցաւալի կարեկցութիւնը և ափսոսանքը փոխարինվեցան կատաղութենով։ Վեր թռաւ Դագոբեռը և բարկութենով վառված աչքերով, յարձակվեցաւ Մօրօկի վերայ, մի ձեռքով բռնեց նորա պուկից իսկ միւսով զինուորականի սովորութենով հասցրեց նորա կուրծքին վեց բռնցի հարուած. բայց զրահը, որ հագել էր Մօրօկը համարեա թէ անզգալի էր կացուցանում նորան այս հարուածները։

«Աւազակ! դու պատասխանատու կը լինիս ինձ իմ ձիու մահի համար», գանչեց զինուորը, շարունակելով իւր ուղղագործող պատիժը։

Սատուժ և ջիլ կազմուածքով Մօրօկը չ'կարողացաւ դիմանալ Դագոբեռին, որ իւր ահագին հասակից ջոկ, ունէր և մի անսովոր ոյժ և զօրութիւն։ Գոլիաթը և պանդոկատէրը արժան համարեցին պահել Մօրօկի կողմը և ազատել նորան ծերունի զինուորի ձեռքից։

Մի քանի րոպէից յետոյ բաժանեցին նորանց։ Մօրօկը մեռածի նման էր չարութենից։ Այժմ սորան հարկաւոր էր բռնել, արգելք լինել նորան գեղարդը առնելու, որով կամենումէր զարկել զինուորին։ Դագոբեռը կանգնած էր մունջ յուսահատութենով, ցնցողական կերպով սեղմելով իւր բռունցքները իւր ճաղատ ճակատին։

«Այս արդէն մի բանի կարգում չէ», գանչեց պանդոկատէրը դառնալով դէպ ի նա. «ձեր շնորհքով փոքր մնաց, որ այս պատուելի մարդուն պատառոտէին նորա գազանքը, իսկ դուք դեռ ևս կամիք ջարդել նորան...։ Արժան էր արդեօք մի մարդու, որի մօրուքը սպիտակել էր, այսպէս վարել իւրեան։ Ի՞նչ է. հրաւիրե՞նք քաղաքական կառավարութիւնը. կարծես թէ մի փոքր սորանից յառաջ դուք առաւել խելացի էիք»։

Այս խօսքերը յետ բերին Դագոբեռի ուշը. նա զղջումէր իւր բարկանալու վերայ, մանաւանդ որ այդ բանը շատ գլխացաւութիւն կարող էր պատճառել նորան, որպէս մի օտարական մարդու. հարկաւոր էր նորան ինչպէս և իցէ ստանալ իւր ձիու փոխարէնը, որ կարող լինէր շարունակել ճանապարհորդութիւնը, որի յառաջադիմութիւնը կարող էր քանդվել կործանվել մի օր ևս ուշանալով։ Նա յուսահատ բռնութիւն գործ դրեց իւր վերայ և յաջողեցաւ նորան ամրանալ։

«Ձեր ասածը ճշմարիտ է.... ես լաւ չ'արեցի, որ այդպէս տաքացայ», ասաց զինուորը պանդոկատիրոջը փոխված ձայնով, աշխատելով, որքան կարելի է հանդարտ երևիլ. «ինձ արժան էր տանել այս ամենայն բաներին ինչպէս փոքր ինչ սորանից յառաջ. բայց

ինքներդ դատեցէք, պարտական չէ՞ արդեօք այս մարդը հատուցանել ինձ իմ ձիու գինը:

— Որովհետև դուք այդ բանը յանձնումէք իմ դատաստանին, ուրեմն ես պարզ ասումեմ ձեզ, որ ես ամենևին համաձայն չեմ ձեր դատողութեանը: Դուք ինքներդ մեղաւոր էք ամենայն կողմից. դուք չէք իմացել մարդավարի կապել ձեր ձին.... Նա մտել է ախոռը, իսկ դուռը երևի թէ փակված չէ եղած, — պատասխանեց պանդոկատէրը, յայտնի յայտնի պահելով Մօրօկի կողմը:

«Իհարկէ այդպէս է. ես ինքս մի փոքր բացի դուռը, որ օդ ներս թողուի, վանդակները ամուր էին, ոչինչ բանից վախենալու պատճառ չ՚կար!» ասաց Գօլիաթը:

— Ճշմարիտ է! — ասացին շատերը:

«Ինձը այն մասին կատաղել է և կոտրել է վանդակը, որ ձի է տեսել», ասաց մի մարդ:

— Շուտով Մօրօկը կարող է գանգատել, քան թէ զինուորը — յաւելացրեց մի այլ մարդ:

«Ինչ կամիք ասացէք», պատասխանեց Դագօբեռը, որի համբերութիւնը հատնումէր արդէն, «բայց ինձ տուր կամ գինը կամ ձի և շուտով. ես մի րոպէ ևս չ՚կամիմ մնալ այս անիծած տեղումը»:

— Իսկ ես ասումեմ, որ դու պարտական ես ինձ փոխարէն հատուցանել! — գանչեց Մօրօկը, դուրս հանելով մուշտակի թևից իւր բոլորովին արիւնաթաթաւ ձախ ձեռքը. Նա երևի գիտութեամբ վերջին էր պահել այս թատրոնական հանդէսը: — Ես ցուցէ իմ բոլոր կեանքումս կը մնամ պակասաւոր, — շարունակեց նա, — տեսէք ի՞նչ է բերել ինձը իմ գլուխը:

Վէրքը այնքան մեծ չէր, որքան կամէր ցոյց տալ Մօրօկը, բայց այնու ամենայնիւ բաւական խոր էր: Այս բանը գրաւեց բոլորի սիրտը:

Պանդոկատէրը յուսալով, որ այս դիպուածը կարող է վերջացնել գործը, որի մասին պատրաստ էր ամենայն կերպ իբրև իւր գործի համար, շուռ եկաւ դէպ ի ձիապանը և ասաց. «այժմ ոչինչ առաւել չէ մնում անել, քան գնալ և հրաւիրել պարոն Քաղաքապետը այս տեղ. Նա կը վճռէ. ո՞վ է արդարը և ո՞վ մեղաւորը:

— Այս ևս կամէի ասել, — յաւելացրեց Դագօբեռը, — պատճառ ինձ անհնար է իմ կողմը վճռել գործը:

«Ֆրից, գնա՛ Քաղաքապետի քամակից!» ասաց պանդոկատէրը:

Փոքրաւորը գնաց. պանդոկատէրը երկիւղ կրելով, որ ինքը ևս մի պատասխանատուութեան տակ չ՚ընկնի, որովհետև օրամուտը չէր պահանջել զինուորի անցաթուղթը, ասաց. «Քաղաքապետը

շատ բարկացած է լինում, երբ անհանգիստ էին առնում նորան գիշերով: Ես չկամիմ ձեր պատճառով յանդիմանութիւն լսել, ուրեմն գնացէք ձեր թղթերի քամակից և բերէք այս տեղ, եթէ նոքա օրինաւոր կարգով են...: Ես շատ վատ արեցի, որ դեռ երեկ, մինչ խոկոյն եկած էիք չպահանջեցի ձեզանից ձեր թղթերը:

— Իմ թղթերը վերևումն են ճանապարհակրիս մէջ. իսկոյն կ՚երթամ և կը բերեմ, — ասաց զինուորը և գնաց դէպ ի իւր որբերը:

Դագոբեռը անցանելով Ուրսուլի դիակի մօտից, երեսը դարձուց և ծածկեց աչքերը ձեռքով: Մօրօկը հանդիսական կերպով նայեց նորա քամակից և ասաց ինքը իւրեան. — այժմ դա մնացած է առանց ձիու, առանց արծաթի, առանց թղթերի... Առաւել ոչինչ չմնաց ինձ անել. չէ հրամայած.... հրամայած է, որքան կարելի է ներգործել խորամանգութեամբ առանց խռովութեան և տարաձայնութեան.... ինչարկէ ամենեքեան մեղաւոր կը կացուցանեն զինուորը: Այժմ զինուորը գոնէ մի քանի օր հարկադրված է մնալ այս տեղ. իսկ ամենահարկաւորը, այս է. պատճառ, սորա և այդ աղջկերքի ուշանալու հետ կապակից է մեծ և երևելի օգուտ, դրամական գործ:

Մօրօկի մտածողութենից քառորդ ժամ յետոյ, Կարոլոսը, որին ինչպէս տեսանք հրամայել էր Մօրօկը ամբողջ գիշեր թաք կենալ, դուրս եկաւ իւր բունից և գնաց Լէյբցիգի ճանապարհով, մի նամակ իւր հետ, որ Մօրօկը շուտով գրեց և հրամայեց նորան իսկոյն սուրհանդակ տալ: Նամակի հասցէն այսպէս էր գրած.

A Monsieur	Ողորմած Պարոնի,
Monsieur Rodin,	Պարոն Րօդէնի,
Rue du Milieu-des-Ursins, № 11,	Միջ-Ուրզինեան փողոցում № 11,
A Paris,	Փարիզի մէջ.
France.	Ֆրանսիա;

XII.

ՔԱՂԱՔԱՊԵՏԸ:

Դագոբեռի անհանգստութիւնը առաւելանումէր հետ զհետէ: Նա հաստատ հաւատացած էր, թէ իւր ձին ինքը իւրեան չէր մտած ախոռը և վերագրումէր այս բանը Մօրօկի դաւաճանութեանը. բայց ո՛չ մի կերպով չէր կարող հասկանալ, թէ ինչ պատճառով այսպէս ընդդէմ իւրեան զինուորվել էր այս անպիտանը, և սարսափանքով մտա-

ծումէր, որ իւր գործը որքան և արդար լինէր այնու ամենայնիւ պի-տոյ է կախվէր դատաւորի հոգու տրամադրութենից, որին հանել էին մահճից, և որ կարող էր դատապարտել գինուորը արտաքին խաբե-բայ նշաններովը:

Որոշելով, որքան հնար է երկար ժամանակ ծածկել որբերից նոր անբաղդութիւնը, որ հալածումէր նորանց, գինուորը մօտեցաւ սենեակի դուռին, և յանկարծ գայթակղվեցաւ Ցխուրի վերայ. շունը ջերմեռանդութեամբ, բայց ի զուր, պաշտպանել էր Մօրօկի ընդդէմ իւր ընկեր Ուրախը և յետոյ վերադարձել էր կրկին իւր տեղը...:

«Լաւ որ, դեռ շունը այս տեղ է! գոնէ նա պահպանել է իմ խեղճերը!» մտածեց Դագոբեռ և բացեց դուռը: Բայց անչափ զար-մացաւ տեսանելով, որ սենեակի մէջ խաւար է բոլորովին:

«Իմ զաւակներ», գանչեց նա. ի՞նչ պատճառով խաւար է այս տեղ:

Պատասխան չ՚ստացաւ այս խօսքին: Սարսափած բոլորովին վա-զեց խարխափելով դէպ ի մահճակալը, բռնեց քուրերի մինի ձեռքը, — ձեռքը սառն էր իբրև սառոյց:

«Ռօզ!.... իմ սիրականք!» գանչեց նա. «Բլանշ! խօսեցէք Աստուծոյ սիրուն... դուք ինձ ահաբեկումէք!»

Ո՛չ ոք չէր պատասխանում. ձեռքը, որ նա բռնել էր, անկեն-դան էր, և հնազանդվումէր գինուորի բոլոր շարժողութեանը, որ-պէս մի անհոգի մարմին: Այս ակնթարթում լուսինը դուրս եկաւ սև ամպերի տակից և լուսաւորեց սենեակը և մահճակալը, որ դրած էր պատուհանի հանդէպ. այս տեղ միայն Դագոբեռը կարողացաւ տե-սանել, որ օրիորդքը ընկած են անզգայ: Լուսնի կապտագոյն լոյսը առաւել ևս զօրացնումէր նոցա գունատութիւնը: Նոքա պառկած էին գրկախառնած. Ռօզը դրել էր իւր գլուխը Բլանշի կուրծքին:

«Երևի թէ ուշաթափած են սոքա.... վախեցել են մի բանից», ասաց Դագոբեռը և վազեց, որ գտանէ իւր ճանապարհական շիշը: «Խեղճ ողորմելիք», ասումէր նա ինքը իւրեան». այս ծանր օր էր նոցա համար. խելքից հեռի չէ....

Նա թրջեց ջրով թաշկինակի ծայրը, ընկաւ ծունկի վերայ սկսեց տրորել օրիորդների քունքերը, և դնումէր նոցա փոքրիկ քթե-րին թաշկինակը թրջած ոգիով (սպիրտով)...: Ծունկի վերայ ըն-կած, խոնարհեցուցած դէպ ի որբերը իւր թուխ և խառնված դէմքը, նա մի քանի վայրկեան սպասումէր, կրկին անգամ գործ չ՚դնելով մի-միայն հնարը, որ կար իսկոյն նորա ձեռքում:

Ռօզի հազիւ հազ նկատելի շարժողութիւնը մի յոյս ծագեց գինուորի սրտումը. Ռօզը շրջեց բարձի վերայ իւր գլուխը և հա-

ռաչեց. մի փոքր ժամանակից յետոյ, նա ցնցվեցաւ, բացեց աչքերը, որոնց մէջ նկարված էին զարմանք և երկիւղ. նա չ՛ճանաչելով Դագոբեռը գանչեց «քուրիկ» և ընկաւ Բլանշի վզին։ Բլանշը նոյնպէս սկսել էր զգայանալ։ Ռօզի ձայնը զգայուն վիճակի մէջ բերեց նորան բոլորովին. նա նոյնպէս վախեցաւ ինքը ևս չ՛հասկանալով, թէ ինչից և փաթաթվեց քրօջը։

«Բացվեցան» մտածեց Դագոբեռը. «այս բոլորից գլխաւորն է։ Այժմ կը փարատվի զուր երկիւղը։ Յետոյ աշխատելով որքան կարելի է քնքշացնել իւր ձայնը, ասաց.

«Այժմ իմ սիրականք.... արիացէք.... այժմ դուք լաւ էք.... այս ես եմ, Դագոբեռը»։

Որբերը շուռ եկան, դարձուցին դէպ ի Դագոբեռը իւրեանց գեղեցիկ երեսները և երկուսը միասին պարզեցին դէպ ի նա իւրեանց ձեռքերը բացագանչելով. — այդ դո՛ւ ես Դագոբեռ.... ո՜վ, մեք այժմ փրկված ենք!...

«Այո՛ զաւակներս, ես եմ!» պատասխանեց զինուորը, ուրախութեամբ սեղմելով նոցա ձեռքերը. «երևի թէ, իմ չեղած ժամանակը մի բան վախեցրեց ձեզ»։

— Ո՛հ, մեք սաստիկ վախեցանք!... Եթէ միայն իմանայիր դու!... Աստուած իմ! եթէ դու իմանայիր....։

«Բայց ինչ պատճառով մարել է ձեր կանթեղը?»

— Մեք չ՛գիտենք....

«Այժմ իմ զաւակներս վախենալու բան չ՛կայ. հանգստացէք և պատմեցէք ինձ.... Այս իջևանի մէջ կարծես թէ լաւ չէ.... լաւ որ մեք շուտով կ՛երթանք այս տեղից.... Թեթևութեամբ չ՛մտայ ես այս տեղ!... բայց այլ իջևան չ՛կայ ևս այս տեղ.... Այդ ինչ պատահեց ձեզ»։

— Իսկոյն, որ դու դուրս գնացիր, յանկարծ բոլորովին բացվեցաւ պատուհանը և կանթեղը սարսափելի թնդոցով թռաւ ընկաւ յատակի վերայ։ Ասել չէ կարելի, թէ ինչպէս վախեցանք մեք. աղաղակեցինք.... մանաւանդ մեզ թուեցաւ, թէ մի բան ման է գալիս այս տեղ.... և մեք երկիւղից անզգայացանք։

Դագոբեռը դժբաղդաբար հաւատացած էր, թէ քամին և սկզբումը կոտրեց ապակիները և դղրդեց պատուհանը. նորան խելքին մտաւ թէ երևի լաւ չէ փակել պատուհանը, և մրրկի սաստկութենից բացվել է դարձեալ։ Այս պատճառով նա կարծումէր, թէ օրիորդները վախեցած լինելով, համարել էին, թէ մի մարդ ման է գալիս սենեակի մէջ։

Այժմ արդէն անցած բան է, դադարեցէք դորա վերայ մտածելուց իմ սիրականք... հանգստացէք», ասաց զինուորը։

— Բայց ի՞նչ պատճառով այնպէս շտապով դուրս վազեցիր այս տեղից?

«Այո՛, այո՛, այժմ միտքս ընկաւ. այնպէս չէ՞ քուրիկ. յանկարծ լսվեցաւ մի աղաղակ.... Դագօբեռը գանչեց. իմ ձի՛ն!... ի՞նչ է պատահել իմ ձիուն. և յանկարծ դուրս վազեց»։

— Երևի Ուրախն էր, որ խրխնջումէր?

Այս հարցմունքները վերստին շարժեցին մի ամբոխված զգացմունք ողորմելի ծերունու հոգու մէջ. Նա սարսափեցաւ պատասխանել այս հարցմունքներին և ասաց պլլալած. «այո՛, այդ Ուրախն էր խրխնջում.... բայց այդ ոչինչ չէր նշանակում։ Բայց մեզ հարկաւոր է ճրագ վառել։ Դուք չ՚տեսաք արդեօք, ուր դրեցի ես երեկ երեկոյին իմ լուցկիքը? Ի՞նչ եմ ասում ես. լուցկիքը գրպանումս է։ Լաւ որ դեռ ճրագ ունինք. պէտք է ճրագ վառել, ինձ հարկաւոր է հանել ճանապարհակրից մի քանի թղթեր»։

Դագօբեռը ճրագ վառեց և տեսաւ, որ արդարև պատուհանը բաց էր. սեղանը շուռ տուած և կանթեղի մօտ ընկած էր իւր ճանապարհակիրը։ Նա փակեց պատուհանը, բարձրացրեց սեղանը, դրեց նորա վերայ իւր ճանապարհակիրը և բացեց նորան, որ հանէ այն տեղից իւր թղթակիրը, որ խաչի և քսակի հետ միասին դրված էր ճանապարհակրի մի առանձին գրպանում, կաշու և աստառի մէջ. դժուար էր նկատել, որ բացել էին ճանապարհակիրը. պատճառ, մեծ հոգաբարձութենով կապած էին դարձեալ նորա կաշեայ կապերը։ Նա կոխեց ձեռքը այս գրպանը և ոչինչ չ՚գտաւ այնտեղ։ Կայծակից զարկվածի նման, նա, համարեա թէ, մեռաւ, վեր թռաւ և գանչեց. «ոչի՛նչ... բայց ի՞նչ եղաւ, ո՞ւր գնաց»։

— Դագօբեռ, ի՞նչ պատահեց քեզ, — հարց արեց Բլանշը։

Ծերունին չ՚պատասխանեց։ Նա անշարժ կանգնած էր կորացած սեղանի վերայ և ձեռքը չ՚հանելով գրպանից.... յետոյ ակամայ զուր յոյս կապելով,... ըստ որում անտանելի ճշմարտութիւնը անհնարին էր թըվում նորան, նա շուտով հանեց ճանապարհակրի միջից, ինչ որ գտանվումէր այդ տեղ և թափեց սեղանի վերայ, իւր հին նշանազգեստը, որ մասունքի նման պահումէր։ Բայց զուր տեղը քըքրումէր, շրջումէր և թափումէր իւրաքանչիւր մի կտորը, ոչ մինի մէջ չ՚կար, ո՛չ քսակը, ո՛չ թղթակիրը, որի մէջ դրած էին նորա թղթերը, գեներալ Սիմոնի նամակները և խաչը։

Մարդ յուսահատութեամբ մի բան որոնելով երբեմն գործումէ շատ ծիծաղելի բաներ, որ հանգիստ ժամանակում խելքին ևս չէին գալու. Դագօբեռը բռնեց իւր ճանապարհակրի անկիւններից և ամենայն զօրութենով սկսեց թափել.... իհարկէ ոչինչ դուրս չ՚ընկաւ։

Դագօբեռը կանգնած էր քամակը դէպ ի որբերը և նոքա չ՛հասկանալով, թէ ինչի համար լուռ է մնում և ինչ է անում, անհանգիստ կերպով նայումէին միմեանց երեսի։ Վերջապէս Բլանշը երկիւղով հարց արեց։

«Ի՞նչ պատահեց քեզ Դագօբեռ? Ի՞նչ պատճառով չես պատասխանում մեր հարցմունքներին? Ի՞նչ ես որոնում այդ տեղ ճանապարհակրի մէջ?»

Դագօբեռը առանց մի խօսք ասելու քրքրումէր իւր գրպանները, շրջումէր նորանց, բայց ի զուր.... գուցէ առաջին անգամ իւրեանց կեանքումը որբերը, որոնց զինուորը անուանումէր իւր զաւակներ, պատասխան չէին ստանում սորանից իւրեանց հարցմունքներին։ Արտասուքի խոշոր կաթիլներ յայտնվեցան Ռօզի և Բլանշի աչքերում։ Համարելով, թէ Դագօբեռը բարկացած է իւրեանց վերայ, նոքա չէին համարձակվում այլ ևս անհանգիստ անել նորան իւրեանց հարցմունքներով։

«Չ՛կայ և.... չ՛կայ.... անկարելի է.... անհնարին է...», կրկնումէր խեղճ զինուորը, տրորելով ճակատը և աշխատելով միտք բերել, թէ ո՞ւր է դրել այս թանգագին բաները. նա դեռ չէր կարող մտածել, թէ կորել էին այդ բաները.... Յանկարծ ուրախութեան ճառագայթ փայլեցաւ նորա աչքերումը...։ Նա վազեց դէպ ի աթոռը, որի վերայ ընկած էր որբերի փոքրիկ պայհիւսակը. նորա մէջ կային մի քանի կտաւեք, երկու սև հանդերձներ և չ՛ներկած, մի հասարակ փայտեայ, փոքրիկ արկղ. այս արկղի մէջ պահվումէր որբերի հանգուցեալ մօր քթի թաշկինակը, երկու գէս նորա մազերից և սև ժապաւէնը, որ նա կրումէր իւր վզի վերայ։

Դագօբեռը դուրս հանեց ինչ որ կար այն տեղ, շրջեց թափեց, տեղ չ՛թողուց պայհիւսակի մէջ, որ չ՛նայէր չ՛քրքրէր.... ոչինչ.... ամենևին ոչինչ չ՛գտանվեցաւ...։ Բոլորովին ոչնչացած, խոնարհեցաւ սեղանի վերայ...։ Ծերունի զինուորը, այնպէս առողջ, հաստատ հոգով և մարմնով, զգաց, որ քաղվումէն իւր զօրութիւնքը.... նորա երեսը վառվումէր, բայց սառն քրտինքը թափվումէր կարկուտի նման.... նորա ոտքերը ծալվումէին։ Ասումեն, թէ ջուրը ընկնողը յարդից կը բռնէ. այսպէս է յուսահատութիւնը, որ ամենևին չ՛կամի յուսահատվիլ։

Դագօբեռը դեռ ևս մխիթարումէր իւրեան մի այլ յուսով, մի չնչին, յիմար և անհնարին յուսով.... շուռ եկաւ դէպ ի որբերը և չ՛մտածելով, որ իւր երեսը և ձայնը բոլորովին փոխված էին, յանկարծ գանչեց։

«Ձեզ չ՛տուեցի՞ ես պահելու.... պատասխանեցէք!»

Ռօզը և Բլանշը փոխանակ պատասխանելու, ահաբեկ եղած զինուորի գունաթափութենից և դէմքի նկարագրից, աղաղակեցին.

— ա՛հ, Աստուած! ի՞նչ պատահեց քեզ Դագօբեռ, — ասաց վերջապէս Ռօզը:

«Պատասխանեցէք. ձեր մօտ է արդեօք, թէ ո՛չ?» կրկնումէր անբաղդը ինքը իւրեան կորցրած. «այո՛, կամ ո՛չ, ապա թէ ո՛չ կը կոխեմ դանակը կողքս.... և բանը կը վերջանայ!...»

— Դագօբեռ, դու միշտ այնպէս բարի էիր.... Ներէ՛ր մեզ եթէ անգիտութեամբ քո ընդդէմ մի բան գործել ենք....

«Դու միշտ մեզ սիրումէիր..:. իհարկէ չէս ցանկալ մեզ մի վատութիւն պատճառել»:

Եւ որբերը ծովացան արտասուքով, աղաչաւոր երեսով պարզելով դէպ ի ծերը իւրեանց փոքրիկ ձեռքերը:

Զինուորը նայումէր նոցա վերայ մութ — կոխած աչքերով և ոչինչ չէր տեսանում: Յետոյ րոպէական խաւարը փարատվեցաւ և սարսափելի ճշմարտութիւնը պարզ ու յայտնի երևեցաւ նորա մտքին, իւր բոլոր կորստական հետևանքներով. ձեռքը ձեռքին զարկելով ընկաւ զինուորը ծունկի վերայ որբերի մահճի մօտ, դրեց գլուխը մահճի վերայ և նորա սիրտ կտրատող հեկեկանքներից — որովհետև այս երկաթի մարդը հեկեկումէր — լսվումէին միայն անորոշ խօսքեր. «Ներեցէք... ներեցէք... ես չ՚գիտեմ.... ո՛հ, ի՛նչ անբաղդութիւն է!... ի՛նչ անբաղդութիւն! ներեցէք!...»

Այս անփարատելի տխրութեան յորձանքում, որի պատճառը չէին հասկանում որբերը, գրկեցին իւրեանց ձեռքերով Դագօբեռի ալևոր գլուխը և արտասուքով լցուած ասումէին: — Նայիր մեր վերայ պատմի՛ր մեզ, ի՞նչ բան է, որ այդպէս վշտացնումէ քեզ... մեք չենք դորա պատճառը!....»

Սանդուղքների վերայ լսվեցան ոտնաձայնք, նոյն ակնթարթում լսվեցաւ տխուրի հաչելը, որ դուռի քամակում պառկած էր: Որքան մօտից լսվումէին ոտքի ձայները, այնքան կատաղաբար հաչումէր շունը, որ երևի թէ պատրաստվումէր յարձակվիլ. պատճառ, պանդոկատէրը գանչեց խիստ ձայնով. «է՞յ, ո՞վ կայ այդ տեղ.... գանչեցէք ձեր շանը կամ սաստեցէք. պարոն Քաղաքապետը գալիս է....»

— Դագօբեռ!... լսումե՞ս... Քաղաքապետը գալիս է! — ասաց Ռօզը:

«Սանդուղքի վերայով գալիս են... մի մարդ այս տեղ է գալիս», յաւելացրեց Բլանշը:

՝Քաղաքապետ խօսքը, Դագօբեռի մտքը ձգեց բոլոր անցածը և լըացուց նորա յուսահատ դրութեան պատկերը. ձին սպանված,

ինքը, մնացած առանց անցագրի և արծաթի, մինչ մի օրվայ, միմիայն մի օրվայ արգելքը ոչնչացնումէ անբաղդ օրիորդների յոյսերը և դժուար, շարունակ ճանապարհորդութիւնը լինումէ անօգուտ։

Հաստատ բնաւորութենով մարդիկը, ինչպէս նաև Դագոբեռն էր միշտ նախապատիւ են համարում յայտնի և վճռական, մեծ վտանգները, ահարկու վիճակը, քան թէ անորոշ վտանգաւորութիւնքը, որ նախընթաց են լինում անբաղդութեններին։

Դագոբեռը իւր առողջ դատողութենով և որբերին անչափ սիրելով իսկոյն հասկացաւ, որ չէ մնում իւրեան այլ յոյս, բաց ի քաղաքապետի արդարադատութենից. և որ պարտական է ինքը գործ դնել ամենայն կարելի հնար, քաղաքապետի բարեհաճ տրամադրութիւնը շահելու։ Նա մահճի վերայի սփռոցովը սրբեց աչքերը, վեր կացաւ տեղից, ուղղվեց, ստացաւ հանդիստ, վճռական կերպարանք և ասաց որբերին.

«Ոչինչ բանից երկիւղ մի կրէք զաւակներս.... Նա կը փրկէ մեզ.... պիտի, որ մի մարդ պաշտպանէ մեզ»։

— Կը սաստես քո շանը թէ ոչ. — գանչեց պանդոկատէրը, որ դեռ կանգնած էր սանդուղքի վերայ. պատճառ, Տխուրը որպէս հաւատարիմ պահապան չէր թողում նորան ներս մտանել։ — կատաղած չէ՞ արդեօք. կապիր նորան. դու արդէն առանց նորա ևս բաւական փորձանք պատճառեցիր այս տեղ! քեզ ասումեն, որ պարոն քաղաքապետը գալիս է, հարց ու փորձ անել քեզ, յառաջուց հարցու փորցած լինելով Մօրօկը։

Դագոբեռը, յարդարեց ձեռքով մազերը և ընչացքը կոճկեց օձիքը, ուղղեց հանդերձի թևերը, մի խօսքով գեղեցկացաւ, որքան կարելի էր. զգալով, որ որբերի վիճակը կախված էր իւր քաղաքապետի հետ խօսակցութենից։ Նորա սիրտը սաստիկ զարկեց, երբ ձեռքը դրեց դուռի փակի վերայ ասելով, այսքան անցքերից առաւել և առաւել սարսափած որբերին, «լաւ ծածկվեցէք մահճի մէջ.... եթէ անպատճառ հարկաւոր լինի թոյլ տալ մի մարդու, որ մտանէր այս տեղ, միմիայն թոյլ կը տամ քաղաքապետին»։

Յետոյ բացեց նա դուռը, դուրս եկաւ սանդուղքի վերայ և ասաց. «Տխուր! լռիր! այս տեղ»! Շունը ակամայ հնազանդվեցաւ։ Դագոբեռը հարկադրվեցաւ երկու անգամ կրկնել իւր հրամանը, որ շունը չ՚յարձակվի պանդոկատիրոջ վերայ, որ մի ձեռքում բռնած գլխարկը իսկ միւսումը լապտեր պատուաւոր կերպով լուսաւորումէր քաղաքապետի ճանապարհը։ Քաղաքապետի քամակումը, մի քանի աստիճան ցած սանդուղքի վերայ, երևումէին հիտաքրքիր սպասաւորների կերպարանքը։ Դագոբեռը ներս թողեց շունը սենեակի մէջ,

փակեց նորա վերայից դուռը և դուրս եկաւ սանդուղքի գլխի հրապարակիկը, որ այնքան լայն էր, որ քանի մարդ միասին շատ յարմարութենով կարող էին կանգնիլ նորա վերայ. այս փոքրիկ հրապարակի մի պատի մօտ դրած էր մի փայտեայ նստարան, քամակի յենարանով։ Քաղաքապետը, որ արդէն կոխել էր սանդուղքի վերին աստիճանը, ինչպէս երևումէր, զարմացաւ, որ Դագոբերը փակումէ սենեակի դուռը և չ'կամի ներս թողուլ նորան։

«Ի՞նչ պատճառով դուռը փակումես դու?» հարց արեց Քաղաքապետը բաւական բարկացած։

— Ա՛յն պատճառով, որ այն տեղ կան երկու օրիորդք, որ յանձնված էին ինձ. բաց ի սորանից, եթէ դուք սկսէիք ինձ հարցու փորձել նոցա ներկայութեանը, այդ շատ անհանգիստ կ'առնէր խեղճ ողորմելիքը. — պատասխանեց Դագոբերը։ — Նստեցէք այս տեղ պարոն Քաղաքապետ, և հրամայեցէք հարցանել ինձանից.... ձեզ համար մի և նոյն է, ուր և լինէր։

«Դու ինչպէս համարձակվումես հրամայել ինձ, թէ ուր հարցանէի քեզ» ասաց Քաղաքապետը խիստ կերպարանքով։

— Ի՞նչ էք հրամայում. ես ի՞նչպէս կը համարձակվիմ հրամայել ձեզ պարոն Քաղաքապետ պատասխանեց Դագոբերը. շատ լաւ հասկանալով, որ ամենայն բանից յառաջ պիտոյ է զգուշանալ, իւր դատաւորը բարկացնելուց։ — Միայն խեղճ օրիորդքը մահճումը և այնպէս արդէն դողումեն երկիւղից. ես հաւատացած եմ, թէ դուք այնքան բարի էիք, որ կը համաձայնէիք այս տեղ հարցափորձել ինձ։

«Հըմ! արեց Քաղաքապետը. «ահա այս շատ ախորժ բան է! հարկաւոր էր, որ գիշերով հանէիք ինձ մահճից!» յետոյ դառնալով դէպ ի պանդոկատէրը ասաց. «դիր լապտերը նստարանի վերայ և ինքդ գնա այս տեղից!»

Պանդոկատէրը կատարեց հրամանը և հեռացաւ իւր բոլոր սպասաւորներովը որոնք շատ բարկանումէին, որ չէ յաջողում իւրեանց լսել, թէ ի՞նչպէս հարց ու փորձ կ'առնէին ծերունի զինուորը։ Դագոբերը մնաց միայն Քաղաքապետի հետ։

XIII.

ԴԱՏԱՍՏԱՆ։

Մօկկերնի պատուելի Քաղաքապետը, հագած էր լայն վերարկու և մահուդի գլխարկ։ Նա ծանր նստեց փայտեայ նստարանի վերայ։

Հաստ մարդ էր Քաղաքապետը, վաթսուն տարեկան կապոյտ

անախորժ երեսով: Նա ստէպ տրորումէր իւղոտ և կարմիր բռունցքով իւր աչքերը, որոնք քնից կշտացած չ՚լինելով կարմրել էին:

Դագոբերը կանգնած էր պատվող և խոնարհ կերպով, շրջումէր իւր ձեռքի մէջ գլխարկը և աշխատումէր գուշակել քաղաքապետի սառն երեսից, կարօ՞ղ էր արդեօք մի բան վաստակել նորանից, իւր օգտի, այս ինքն որբերի օգտի համար: Այս տարակուսական րոպէումը խեղճ զինուորը ժողովեց իւր բոլոր սառնասրտութիւնը, իւր բոլոր բանականութիւնը, բոլոր գեղեցկախօսութիւնը, բոլոր վճռականութիւնը. և այս այն ժամանակ, մինչ խեղճ զինուորը քսան անգամ մահին ընդ առաջ էր գնացել սառն արհամարհանքով, միշտ հանգիստ և անպղտոր. Նա երբէք չէր կորացուցել իւր աչքը յաղթահարվելով Նապոլէոնի արծուի հայեացքից. Նապոլէոնի, իւր հերոսի, իւր Աստուծոյ.... բայց այժմ նա դողդողումէր, երկիւղ էր կրում, չ՚գիտէր ինչ խօսի, ինչպէս կանգնի այս գեղջուկ քաղաքապետի առաջև....:

«Ի՞նչ բան կ՚ասես քեզ արդարացնելու համար?... ասա՛ շուտով», ասաց քաղաքապետը, անհամբերաբար յօրանջելով:

— Ինձ չէ պիտոյ արդարանալ... ես ինքս կամիմ գանգատել. — պատասխանեց Դագոբերը հաստատ ձայնով:

«Ինչպէս երևումէ դու կամիս ուսուցանել ինձ, թէ ինչ հարցմունքներ արժան էր ինձ առաջարկել քեզ?» գանչեց քաղաքապետը այնպիսի բարկացած դէմքով, որ անբաղդ զինուորը իսկոյն զղջացաւ, որ լաւ քաղաքավարութենով չ՚սկսեց իւր խօսակցութիւնը, այս պատճառով շատ մեծ հեզութեամբ շարունակեց:

— Մի բարկանաք պարոն քաղաքապետ. ես զինուոր մարդ եմ, ես խօսելու վարժ չեմ բայց ես կամէի ասել, որ ես ամենևին յանցաւոր չեմ այս տեղ:

«Իսկ Գէտը բոլորովին հակառակն է հաստատում»:

— Գէ՞տը.... — կրկնեց զինուորը, կարծիքական ձևով:

«Գէտը, բարեպաշտ և հաղուագիւտ ազնուութեան տէր մարդ է. նա անընդունակ է սուտ խօսելու» պատասխանից դատաւորը:

— Դորա ընդդէմ ոչինչ չեմ կարող ասել, բայց դուք այնպէս արդար էք և բարի էք պարոն քաղաքապետ, որ երևի թէ չէիք յօժարելու յանցաւոր կացուցանել ինձ, առանց, ինձ ևս լսելու: Դուք այնպէս մարդ չէք, որ անարդարութիւն գործէիք.... այդ իսկոյն երևումէ:

Դագոբերը վճռած լինելով ակամայ կեղծաւորվել, կարելի կերպով աշխատումէր կակղեցնել իւր կտրուկ ձայնը և իւր սառն երեսին տալ քաղցր, պատուող և ժպտող կերպարանք:

— Ձեր պէս մարդը, — յաւելացրեց զինուորը առաւել փաղաքշանքով — այդպիսի պատուելի դատաւորը. . . ոչ մի ականջով այլ երկուսով ես լսումէ:

«Բանը ականջի մէջ չէ, այլ աչքերում. իսկ իմ աչքերս այնպէս կսկծումեն, որ կարծես թէ տրորել էի եղինճով. . . այսու ամենայնիւ ես տեսայ, որ Մօրոկի ձեռքը սաստիկ վիրաւորված է»:

— Այո՛, այդպէս է, պարոն քաղաքապետ. դուք ճշմարիտ էք ասում, բայց ինքներդ բարեհաճեցէք դատել, եթէ նա լաւ փակած լինէր իւր վանդակները և դուռը, այս բանը երբէք պատահելու չէր:

«Դատարկ բաներ են, դու բոլորովին մեղաւոր ես, դու պիտոյ է լաւ կապէիր քո ձին. . . .»:

— Ճ՚շմարիտ էք խօսում պարոն քաղաքապետ, բոլորովին ճշմարիտ. — մեք երբ կարող ենք ձեզ հետ վիճել. պատասխանեց Դագոբեար առաւել պատուելի ձայնով. — բայց թէ մի մարդ գիտութեամբ արձակել էր իմ խեղճ ձին և տարել էր նորան գաղանանոցը, դատեցէք ինքներդ, ես էի արդեօք մեղաւորը. . . այս ինքն դատեցէք, եթէ բարեհաճիք, իմ գործ չէ ձեզ հրամայել. — յաւելացրեց նա առաւել հեզութեամբ քան թէ յառաջ:

«Բայց ինչ բանի համար. և ո՞վի բանը գործը կորվել էր դուրս բերել քո ձին?

— Չ՚գիտեմ պարոն քաղաքապետ. բայց. . . .

«Չ՚գիտես. . . . ես ևս չ՚գիտեմ», պատասխանեց քաղաքապետը անհամբերութեամբ: Որքան դատարկ խօսակցութիւնք եղան մի սատակած ձիու համար:

Խեղճ զինուորի երեսը կորուց իւր սուտ փաղաքուշ դէմքը և ընդունեց դարձեալ խիստ կերպարանք:

— Գաղանները կերան իմ ձին, իհարկէ նա այժմ սատակած է, այդ բոլորը ճշմարիտ է. բայց մի ժամ յառաջ թէ և նա մի փոքր ծեր էր այնու ամենայնիւ, բարի և հասկացող ձի էր: Նա ուրախ ուրախ խրխնջումէր իմ ձայնը լսածի պէս և ամենայն երեկոյ լիզումէր օրիորդների ձեռքերը, այն օրիորդների, որոնց ամբողջ օրը տանումէր իւր վերայ ինչպէս նաև նոցա մօրը: Այսուհետև նա ոչոքի ևս չէ տանելու իւր վերայ. նորան իւրեան կը տանին դաշտը, այն տեղ շուները կ՚ուտեն նորան, այսպէս ևս կը վերջանայ: Կարելի էր մի փոքր կակուղ խօսել նորա վերայ պարոն քաղաքապետ. պատճառ, ես շատ սիրումէի իմ խեղճ ձին: —

Այս խօսքերը ասվեցան այնպիսի պարզ և սրտաշարժ արժանաւորութեամբ, որ քաղաքապետի սիրտը ակամայ շարժվեցաւ և սկսեց զղջալ, այնպէս կոշտ խօսածի համար:

«Ես հասկանումեմ, որ դու ցաւումես քո ձիու համար», ասաց նա արդէն փաղաքշանքով. «բայց ի՞նչ անես. այդ անբաղդութիւն է»:

— Այդպէս է, անբաղդութիւն է, պարոն քաղաքապետ, մեծ անբաղդութիւն. օրիորդքը, որոնց հետ ճանապարհորդակից եմ, այնպէս թոյլ են, որ չեն կարող շատ ոտքով գնալ, իսկ սայլ վարձել անհնարին է. նոցա արծաթի բանը չէ.... բայց և այնպէս մեզ անպատճառ հարկաւոր է Փարիզում լինել մինչև փետրուար ամիսը..... ես խոստացել եմ նոցա մօրը, որ անպատճառ հասուցանելու էի այդ խեղճերին Փարիզ. նոքա այժմ ոչ ոք չունին բաց ի ինձանից....

«Ուրեմն դու նոցա....»

— Ես նոցա հաւատարիմ սպասաւորն եմ, պարոն քաղաքապետ, իսկ այժմ մինչ ձեռքիցս հանեցին իմ ձին, ի՞նչ կը հրամայէք ինձ անել. խղճացէք, դուք այդպէս բարի մարդ էք. գուցէ, գուցէ դուք ինքներդ ևս ունիք զաւակներ...: Մտածեցէք, եթէ ձեր զաւակները եղած լինէին այսպիսի վիճակի մէջ ինչ վիճակի մէջ են իմ որբերը. եթէ բոլոր աշխարհի երեսին ոչ ոք չ՚ունենային.... բաց ի մի ծերունի զինուորից, որ նորանց շատ սիրումէր և ծեր ձիուց, որ նորանց տանումէր իւր վերայ.... եթէ նոքա շատ անբաղդութենների պատահէին.... այո՛, մեծ անբաղդութենների. պատճառ, նոքա աքսորված ծնողքի դստերք են.... իսկ նոցա վիճակի փոխվելու համար հարկաւոր է, որ նոքա ժամանակին Փարիզ հասանէին մինչ յանկարծ հարկադրված են նոքա դադարել ճանապարհի մէջ տեղումը զրկվելով իւրեանց ձիուց.... Ասացէք ողորմածաբար, պարոն քաղաքապետ, մի՞թէ այսպիսի անբաղդութիւնքը չէին շարժում ձեր սիրտը?... Մի՞թէ կրկնելու չէիք ինձ հետ, որ անփոխարինելի էր ձիու կորուստը?.... —

«Իհարկէ» ասաց քաղաքապետը, որ բաւական բարի հոգի ունէր, և սիրտը ակամայ շարժվեցաւ. «այժմ ես հասկանումեմ, որ այդ կորուստը արդարև քո համար շատ մեծ էր. բաց ի սորանից ես ցաւումեմ քո որբերի համար: Քանի՞ տարեկան են նոքա?

— Տասն և հինգ տարեկան և երկու ամսական, նոքա երկուորեակ են....

«Տասն և հինգ տարեկան և երկու ամսական? Համարեա թէ իմ Ֆրիդերիկ դստեր հասակակից են»:

— Դուք այդ հասակի դո՞ւստր ունիք: Եւ այսպէս, պարոն քաղաքապետ, այժմ իմ որբերի վիճակը առաւել չէ անհանգստացնում ինձ.... Դուք արդար կը լինիք դէպ ի մեզ....

«Արդար լինել, իմ պարտականութիւնն է: Ինչպէս ևս չ՚դատես այնու ամենայնիւ այս գործումը երկու կողմը ևս հաւասարա-

չափ մեղաւոր են. դու ամուր չես կապել քո ձին. իսկ Մօրօկը չէ փակել դուռները։ Նա դորա հանդէպ ասումէ, որ վիրաւորվել էր.... իսկ դու պատասխանումես, որ զրկված էիր ձիուցդ.... և ինձ շատ պատճառներով թըվումէ, որ քո կորուստը անփոխարինելի էր։

— Պարոն Քաղաքապետ, դուք իմ փոխանակ ասումէք նոյն բանը, որ ես պիտոյ է ասէի, միայն դուք առաւել լաւ էք ասում։ — պատասխանեց ջինուորը խոնարհ և փաղաքշական ժպիտով։ — Ինչպէս բարեհաճումէք ասել, պարոն Քաղաքապետ, իմ բոլոր հարստութիւնը այդ ձին էր. այդ իհարկէ մաքուր ճշմարտութիւն է։

«Անտարակոյս», ասաց Քաղաքապետը, ընդհատելով նորա խօսքը. «քո արդարաբանութիւնքը շատ հիմնաւոր են։ Գէտը, պատուելի և բարեպաշտ մարդ է.... բաց ի սորանից նա շատ խորամանգութեամբ դէպ ի իւր կողմը մեկնեց գործը.... այս ես պիտոյ է ասել, որ ես

. . . .

շատ ժամանակ է ճանաչումեմ նորան։ Բայց այդ իհարկէ ամենևին չէ փոփոխում գործի զօրութիւնը և դու բոլորովին արդար ես. բայց ուղիղը պէտք է ասել, ես մտադրութեամբ գալիս էի այս տեղ....։

— Դէպ ի նորա կողմը վճռել գործը? այնպէս չէ՞ պարոն Քաղաքապետ. — ասաց Դագոբեռը, արդէն աւելի սրտապնդութեամբ։

— Դորա պատճառը այն է, որ դուք այն միջոցին դեռ ես բոլորովին զգաստացած չէիք քնից.... ձեր արդարադատութիւնը նայումէր դեռ ես այն ժամանակ մի աչքով։

«Պիտոյ է ճշմարիտը խոստովանել, համարեա՛ թէ այդպէս էր», պատասխանեց Քաղաքապետը պարզմտութեամբ. «ես մի փոքր հասկացուցի ես Մօրօկին, թէ իմ կարծիքով, արդար էր նա բոլորովին. Մօրօկը շատ մեծահոգութեամբ պատասխանեց ինձ, եթէ դուք դէպ ի իմ կողմը վճռումէք գործը, ուրեմն ես չկամիմ ծանրութիւն տալ իմ հակառակորդին. ես լուռ կը մնամ մի քանի բանի մասին»։

— Իմ համար?

«Պէտք է որ այդպէս լինի. բայց նա չ՚պատմեց ինձ, երբ լսեց, թէ միտք ունէի պարտաւորել քեզ, հատուցանել բաւական մեծաքանակ փոխարէն, այն մասին, որ նա վիրաւորված էր։

— Ահա տեսանումէ՞ք պարոն Քաղաքապետ, ինչպէս երբեմն շատ խելօք և արդարադատ մարդիկը ես կարող են սխալվիլ. — ասաց Դագոբեռը շարունակելով իւր կեղծաւորութիւնը դէպ ի Քաղաքապետը։

«Ճշմարիտ է քո ասածը. բայց այժմ ես այլապէս բոլորովին հասկացայ գործը. երկու կողմը ես հաւասարաչափ մեղաւոր են, և վնասքը փոխադարձաբար հատուցանվումեն.... նա վէրք է ստացել, դու զրկվել ես ձիուցդ. ուրեմն դուք առնելիք տալիք չունիք.

— Ուրեմն, ո՛րքան արծաթ պարտական է նա ինձ, — հարց արեց զինուորը մի օտարոտի պարզութենով։

«Ինչպէս?»

— Այնպէս, պարոն քաղաքապետ, ո՛րքան կը հատուցանէ այժմ նա ինձ։

«Ինչ թէ որքան?»

— Իհարկէ այդպէս է. բայց յառաջ, քան թէ դուք նշանակել էիք, թէ ո՛րքան արծաթ պատկանումէր ինձ, ես յայտնումեմ ձեզ, որ իհարկէ ես իրաւունք ունիմ բոլոր ստանալի արծաթս գործ չ՚դնել ձի գնելու համար.... ես հաստատ գիտեմ, որ Լէյպցիգի մօտերումը գիւրին գնով կարող եմ գնել շինականներից մի որպիսի և իցէ ձի։ Եւ ճշմարիտը ասել, եթէ մի լաւ էշ ես պատահէր.... ես սնափառ մարդ չեմ.... լաւ ես կը լինէր. պատճառ, խեղճ Ուրախից յետոյ, ինձ աւելի ախորժ չէր մի այլ ձիու հետ քարշ գալ.... այս մտքով, ես....։

«Ասա՛ խնդրեմ» խօսեց քաղաքապետը, ընդհատելով Դագոբեռի խօսքը. «ինչեր ես խօսում, արծաթի, իշու և այլ ձիու մասին։ Կարծես, թէ յայտնի ասումեմ ձեզ, որ ո՛չ դու և ո՛չ Գէտը ոչինչ պարտական չէք միմեանց»։

— Մի՞թէ նա ոչինչ հատուցանելու չէ՞ ինձ։

«Սիրելի քո գլուխը հաստ է. բայց կարծես ամենայն ինչ լաւ հասկանալի է. մի կողմից Մօրօկի գազանքը սպանեցին քո ձին, միւս կողմից Մօրօկը ինքը ծանր վիրաւորված է.... Եւ այսպէս դուք հատուցած էք միմեանց. կամ այլ տեսակ կրկնեմ քեզ. դու պարտական չես փոխարէն հատուցանել նորան և ո՛չ նա քեզ.... այժմ հասկացա՞ր»։

Դագոբեռը զարմանալով այս խօսքերի վերայ մի քանի րոպէ չ՚կարողացաւ պատասխանել. և անասելի անհանգստութենով նայումէր քաղաքապետի վերայ. այս դատակնիքը քանդումէր բոլոր նորա յոյսերը։

— Այսու ամենայնիւ պարոն քաղաքապետ, — ասաց նա վերջապէս փոխված ձայնով, — ձեր խիստ արդարադատութիւնը երևի թէ թոյլ չ՚տայ ձեզ ուշ չ՚դնել մի հանգամանքի, թէ և Մօրօկը վիրաւորված է, բայց դորանով, նա իւր գործով պարապելու հնարից չ՚զրկվեցաւ. դորա հակառակ ես, կորուսի ձիս և չեմ կարող շարունակել իմ ճանապարհորդութիւնը. այս պատճառով, պիտոյ է նա փոխարէն հատուցանէ ինձ.... —

Դատաւորը կարծումէր, թէ առանց դորան ևս շատ բան էր արած զինուորի համար, Մօրօկի վիրաւորվելու մասին պատասխա-

նատուսւթենից ազատելով. պատճառ, Մօրօկը ինչպէս արդէն ասացինք.... մեծ ազդեցութիւն ունէր այն տեղի բնակիչների վերայ և մանաւանդ նոցա կանանց վերայ. բաց ի սորանից այդ բնակիչքը գիտէին, որ հզօր պաշտպաններ ունի Մօրօկը: Այս պատճառներով, զինուորի նոր պահանջողութիւնը, շատ վշտացուց դատաւորին և նա ընդունելով իւր առաջվայ բարկացոտ կերպարանքը, ասաց խստութենով:

«Ճշմարիտ, դու շուտով կը հարկադրես ինձ զղջալ իմ անկողմնապահութեան վերայ: Փոխանակ, որ շնորհակալ լինէիր, դու անհանգստացնումես ինձ քո պահանջողութիւններով:

— Բայց պարոն քաղաքապետ, ես խնդրումեմ այն, ինչ որ պատկանումէր ինձ իրաւունքով.... ես ուրախութեամբ յանձնառու էի ստանալ այնպիսի վէրք, ինչպէս ստացել է Գէտը, միայն թէ կարելի լինէր ինձ յառաջ խաղալ իմ ճանապարհի վերայ:

«Ես և լսել չկամիմ, թէ յոժարումեիր կամ ոչ.... ես այսպէս վճռեցի գործը.... և վերջացած է»:

— Բայց...:

«Լռիր, քեզ ասումեն, լռիր...: Այժմ անցանենք դէպ ի միւս գործը.... ո՞ւր է քո անցաթուղթը»:

— Իմ անցաթուղթը. բայց աղաչումեմ ձեզ պարոն քաղաքապետ, խղճացէք իմ որբերի վերայ....: Հնար տուեցէք մեզ շարունակել մեր ճանապարհորդութիւնը և....

«Ինչ որ կարելի էր, ես բոլորը արեցի.... մինչև անգամ գուցէ և աւելի ևս, քան թէ արժան էր.... ցոյց տուր ինձ շուտով քո անցաթուղթը»:

— Թոյլ տուեցէք ինձ յայտնել ձեզ յառաջուց....

«Ի՞նչ յայտարարութիւնք են. այս տեղ բեր անցաթուղթը.... թէ կամիս, որ բանդի մէջ դնեմ քեզ, որպէս փախստական....»

— Բանդի մէջ! ինձ:

«Եթէ դու ցոյց չտաս ինձ քո անցաթուղթը, նշանակումէ, որ չունէիր.... իսկ առանց անցաթղթի մարդերին բռնումեն, մինչև որ բարձրագոյն իշխանութիւնը կարգադրութիւն անէ....: Տուր քո անցաթուղթը, ժամանակ է աւարտելու այս բոլոր գործը և տուն դառնալու»:

Գեադրեւի դրութիւնը այն պատճառով առաւել զարհուրելի էր, որ նա սկզբումը յոյս ունէր գործի լաւ ընթացքի վերայ: Այս վերջին հարուածն էր, իբրև յաւելուած այն բոլորին, որոնց համբերել էր ծերունի զինուորը այս գործի սկզբից. այս մի չարչարիչ և վտանգաւոր փորձութիւն էր մի մարդու համար, որ ունէր ուղիղ,

հաստատ, աղնիւ, բայց անսահման բնաւորութիւն. մի մարդու համար, որ երկար ժամանակ զինուոր էր եղած, ծառայել էր յաղթական բանակի մէջ և սովորել էր ամէնի հետ իւր կերպով, զինուորականի կերպով, վարվելու: «Անցաթուղթ» խօսքի վերայ, նա գունաթափեցաւ, բայց աշխատեց պահել իւր արտաքին հանգստութիւնը, յուսալով, որ այս լաւ տպաւորութիւն կը գործէ քաղաքապետի վերայ:

— Պարոն քաղաքապետ, երկու խօսքով ես կը յայտնեմ ձեզ բանի զօրութիւնը.... շատ պարզ բան է.... ամենայն մարդու հետ կարող է պատահել.... կարծես թէ ես չէի նմանում աղքատի կամ փախստականի?... Ինքներդ բարեհաճեցէք տեսանել.... Այլ և քննեցէք ողորմածաբար, այն մարդը, որ ճանապարհորդակից էր երկու օրիորդների....

«Կը վերջացնես արդեօք այդ դատարկաբանութիւնը: Տուր այստեղ քո անցաթուղթը, ապա թէ ոչ....

Այս միջոցին զինուորը ստացաւ մի բոլորովին անակնունելի օգնութիւն: Որբերը լսումէին, որ Դագօբերը մի մարդու հետ խօսումէ սանդուղքի վերայ, այս սկսել էր սաստիկ անհանգստացուցանել նորանց. Նոքա վերկացան մահճից, շուտով հագնվեցան և այն րոպէին, երբ քաղաքապետը բարկացոտ ձայնով արտաբերեց, «տուր այստեղ քո անցաթուղթը ապա թէ ոչ....» Նոքա ձեռք ձեռքից բռնած դուրս եկան սենեակից: Քաղաքապետը տեսանելով այս գեղեցիկ օրիորդքը, որ առաւել սիրուն էին երևում իւրեանց չքաւոր հագուստով, զարմացած միանգամայն, պատուաւոր կերպով բարձրացաւ իւր տեղից: Որբերը հետևելով իւրեանց սրտերի մի օրինակ ձգտողութեանը բռնեցին Դագօբերի ձեռքերից և կանգնեցան նորա երկու կողմումը, պարզ հոգով և անհանգստութենով նայելով քաղաքապետի վերայ: Ծերունի զինուորը և երկու գեղեցիկ և անմեղ որբերը, որոնց որպէս թէ ներկայացնումէր իւր դատաւորին, կազմեցին մի այնպիսի սրտաշարժ տեսարան, որ քաղաքապետը վերստին խղճաց, Դագօբերը նկատեց այս բանը: Նա բռնելով որբերի ձեռքերից մօտեցաւ քաղաքապետին և ասաց:

— Ահա խեղճ որբերը, պարոն քաղաքապետ, նայեցէք նոցա վերայ: Սորանից յետոյ, ինչ անցաթուղթ հարկաւոր է ինձ?

Ու ծերունի զինուորը, ճնշված այսքան անակնկալ և ծանր զգացողութեններով, որ աշխատումէր ծածկել իւր սրտի խորքումը, զգաց, որ արտասուքը փայլումէ աչքերումը: Քաղաքապետը բնական բաւական կոշտ մարդ էր, իսկ այժմ դեռ սիրտը ևս վերան չէր, որովհետև խանգարել էին նորա քունը այնու ամենայնիւ նա մօտ-

ծող և բարի էր։ Նա հասկանումէր, որ չէ կարելի չհաւատալ այնպիսի մի մարդու, որի ձեռքումը կային երկու այսպիսի որբեր։

«Խեղճեր», ասաց քաղաքապետը, կարեկցութեամբ նայելով նոցա վերայ, «այսպէս մատաղահաս, բայց արդէն որբացել էին.... Հեռու տեղից են դոքա»։

— Այո, պարոն քաղաքապետ....— պատասխանեց Գագօբերը, ահա ամբողջ ամիս է, որ ճանապարհի վերայ ենք, թէ և արագ չենք գնում, բայց չենք մնում մի տեղում։ Համաձայնեցէք ինքներդ, որ այս շատ ծանր է այսպիսի մատաղահաս օրիորդների համար.... աղաչումեմ ձեզ նոցա անունով...։ Օգնականութեան ձեռք տուեցէք նոցա.... Նոքա շատ անբաղդ են.... փորձանք, փորձանքի քամակից...։ Ահա ինչպէս այժմ.... սկսանումեմ որոնել իմ թղթերս.... և չեմ գտանում.... Թղթակիրը, որի մէջ պահվումէին թղթերը և իմ խաչը, կորել ու անյայտացել է...։ Հաւատացէք պարոն քաղաքապետ, ես չեմ պարծենում.... ես խաչ ունէի, որ ինքը Կայսրը իւր ձեռքովը կապել էր իմ վիզը պատերազմի դաշտումը.... Դուք ինքներդ գիտէք, որ այդպիսի զինուորը, չէր կարող լինել մի արպիսի և իցէ անպիտան մարդ, թէ և կորուսած էր իւր անցաթուղթը.... և քսակը.... պատճառ իմ բոլոր բաները կորան. և ահա, թէ ինչ պատճառով այնքան թախանձանքով խնդրումէի ձեզանից վարձ նշանակել ինձ....—

«Ինչ կերպով և ո՞ւր պատահեցաւ այդ կորուստը։

— Այս ինքս ես չգիտեմ պարոն քաղաքապետ։ Ես շատ լաւ յիշումեմ, որ երեկ չէ միւս օրը, երեկոյեան իջևանումը արծաթ հանեցի, երեկ ամբողջ օրվայ հերիքացաւ ինձ այն և ես այս պատճառով չբացի ճանապարհակիրս....

«Իսկ ուր էր ճանապարհակիրը երեկ և այսօր»։

— Իմ որբերի սենեակումը. բայց այս գիշեր....

Գագօբերը չվերջացրեց խօսքը. պատճառ, մի մարդ գալիս էր սանդուղքների վերայով։ Այդ մարդը Մօրօկն էր։ Նա կանգնած էր սանդուղքի վերայ մի մութն տեղում, լսել էր բոլոր խօսակցութիւնը, երկիւղ կրելով, որ քաղաքապետը իւր թուլութեամբ չխանգարէ Մօրօկի բոլոր մտածողութիւնքը, որ սկսանումէին կատարվիլ։

XIV.

Վ Ճ Ի Ռ։

Մօրօկի ձախ ձեռքը կապած էր։ Կամաց կամաց վեր ելաւ նա սանդուղքից և պատուաւոր կերպով գլուխ տուեց քաղաքապետին։

Օրիորդքը փախեցան այս մարդու զարհուրելի երեսից, և յետ յետ գնալով, առաւել ևս սեղմվեցան դէպ ի իւրեանց պաշտպանը: Դագոբերը ունքերը հաւաքեց. նորա սրտումը դարձեալ եռաց չարութիւնը Մօրօկի ընդդէմ, որ միմիայն պատճառ էր Դագոբերի այսքան անբաղդութեանը (բայց դեռ ևս չ'գիտէր նա, որ Գոլիաթը այս մարդու հրամանով գողացել էր թղթերը և քսակը):

«Մօրօկ, ի՛նչ հարկաւոր է քեզ» ասաց քաղաքապետը կէս քաղցր կէս խիստ ձայնով». ես հրամայեցի արդէն պանդոկապետին, որ ինձ չ'խանգարէին:

— Ես եկել եմ ձեզ ծառայութիւն ցոյց տալու, պարոն քաղաքապետ:

«Ծառայութիւն»:

— Այո՛, և մեծ ծառայութիւն. առանց դորան ես չէի համարձակվելու անհանգիստ առնել ձեզ: Խիղճս տանջեց ինձ. չ'գիտեմ՝ արդեօք լա՞ւ արեցի....

«Ի՞նչ կայ»:

— Արդեօք լա՞ւ արեցի, որ չ'ասացի ձեզ իմ կարծիքը այս մարդու մասին: Ես արդէն շատ անգամ մեղք եմ գործել անտեղի կարեկցութենով:

«Ասա՛, ի՛նչ բան է»:

Մօրօկը մօտեցաւ քաղաքապետին և բաւական երկար միջոց մի բան շշնջեց նորա ականջին: Սկզբումը, քաղաքապետի երեսի վերայ նկարագրվեցաւ զարմանք, յետոյ մի անհանգիստ զգացմունք. ժամանակ առ ժամանակ բացագանչումէր այնպէս, որ ցոյց էր տալիս, թէ դեռ ևս չէր հաւատում բոլորովին Մօրօկի ասածներին և քթի տակից նայումէր զինուորի և որբերի վերայ: Նորա աչքերից, որ հետ զհետէ անհանգստանալու նշան էին ցոյց տալիս և ընդունումէին խիստ կերպարանք, յայտնի նկատվումէր, որ գաղտնի գանգատը սաստիկ տպաւորութիւն էր գործում նորա վերայ, և թէ այն կարեկցութիւնը որ նա սկսել էր ցոյց տալ զինուորին և որբերին դառնումէր մի անհաւատութիւն և թշնամական զգացմունք: Դագոբերը նկատեց այս փոփոխութիւնը, և վտանգաւորութիւնքը, որ արդէն անցել էին, նոր ի նորոյ սկսեցին անհանգստացնել նորան: Ռօզը և Բլանշը, ոչինչ չ'հասկանալով այս համր տեսարանից, անհանգստութենով նայումէին իւրեանց պաշտպանի վերայ:

Վերջապէս քաղաքապետը յանկարծ վեր թռաւ նստարանից գանչելով «Վա՛տ է. ի՛նչպէս իմ խելքին չ'եկաւ այդ բանը: Չեմ հասկանում ի՛նչ պատահեց ինձ. բայց զարմանք չէ.... գիշերով մարդու հանումէն մահճից. կամայ ակամայ գլուխը կը ծանրանայ: Այո՛, ճշմարիտ ես ասում, դու ինձ ծառայութիւն ես ցոյց տալիս:

Պոէտը. — միայն ինձ թըվում է, որ հեշտ կարող էր լինել...

Մի և նոյն է. կարելի է դաշն բռնել, որ քո ասածը ճշմարիտ է։ Ես միայն գուշակում եմ նայելով մի քանի հանգամանքների. բայց իմ կարծիքը առաջնորդում է ուղղակի դէպ ի ճշմարտութիւն.... խօսք չկայ պիտոյ, է մեծ սխալանք գործել...։ Այս ինչ պատահեց ինձ։

— Երբեմն դժուար է չհաւատալ խաբեբայ երևութին։

«Ինչ որ ճշմարիտ է, ճշմարիտ է, սիրական Մօրօկ...։

Այս գաղտնի խօսակցութեան ժամանակ Դագօբերը տարաւ անտանելի չարչարանքի։ Նա գուշակում էր, որ կայծակ է պատրաստւում, և մի միայն մտածում էր, թէ ինչպէս զսպէ իւր ընդաբոյս ջերմ բնաւորութիւնը։

Պոէտը դարձեալ մօտեցաւ քաղաքապետին և աչքերովը ցոյց տալով որբերի վերայ վերստին սկսեց ցած ձայնով խօսել։

«Ի՞նչ», գանչեց քաղաքապետը արհամարհանքով, «դու արդէն չափիցը անցար...»։

— Ես չեմ հաստատում, միայն կարծում եմ, դատելով.... և դարձեալ սկսեց քաղաքապետի ականջին շշնջել։

«Բայց», ասաց քաղաքապետը ձեռքերը վեր բարձրացնելով, «կարելի բան է։ Այդպիսի մարդիկը ամենայն բանի ընդունակ են...։ Այդ մարդը ասում է, որ բերել էր նորանց Սիբիրից.... բայց գուցէ այդ բոլորը հնարած բաներ են, խաբեբայութիւնք. բայց երկու անգամ չէ կարող խաբել», գանչեց նա բարկացած։

Ինչպէս այլ ամենայն թոյլ, փոփոխական բնաւորութեամբ մարդիկը, սա ևս արդէն անխիղճ էր դէպ ի նոքա, որոնք ինչպէս իւրեանց թըվում էր խաբէութենով շարժել էին նորա կարեկցութիւնը։

— Բայց պարոն քաղաքապետ, մեծ երևելի համարում մի ունենաք իմ խօսքերի վերայ. — ասաց Մօրօկը կեղծաւորեալ հեզութեամբ։

— Դժբաղդաբար ես այնպիսի անախորժ յարաբերութենների մէջ եմ դէպ ի այդ մարդը, — յաւելացրեց նա ցոյց տալով Դագօբերի վերայ, — որ կարող են մտածել, թէ չարութեամբ վատ բաներ էի ասում նորա վերայ, այն պատճառով, որ ես չարչարվել էր նորա շնորհքով. գուցէ արդարև ես ակամայ անձնատուր էի այդ դատապարտելի զգացմունքին.... բայց ինձ թըվում է, թէ մի միայն հնազանդվում էի արդարութեան ձայնին և սուրբ ատելութեանը դէպ ի սուտը...։ Աստուած ինքը թող ների ինձ, մեղաւորիս, եթէ ես մոլորված էի...։ Այսու Ամենայնիւ դատաստանը կը վճռէ այդ գործը.

եթէ նոքա անմեղ են, մի կամ երկու ամսից նոքա դարձեալ ազատութիւն կը ստանան:

«Ոչինչ մտածելու բան չկայ, այդ բոլորովին անհրաժեշտ զգուշութիւն է...: Այս տեղ նոքա կենդանի կը մնան: Որքան շատ մտածումես այս մասին, այնքան հաւատալի է թւում: Արդարև նա պիտոյ է լրտես լինի, ֆրանսիական ապստամբներից...: Այդ մարդիկը ամենայն տեղ ցրւած են: Շատ ժամանակ չէ, որ դոքա խռովութիւն էին հանել Մայնի վերայ — Ֆրանգֆորտում:

— Բաց ի դորանից մի լաւ նայեցէք այդ մարդու վերայ, — ասաց Մօրօկը կիսաձայն, — դուք ինքներդ կը նկատէք իսկոյն, որ նորա երեսի վերայ կայ մի կասկածաւորութիւն:

Հասկանալի էր, որ նա խօսումէր Դագոբեռի վերայ: Խեղճ ծերը, լարել էր իւր հոգու բոլոր զօրութիւնքը, որ միմիայն կարողանայ զսպել իւր բարկութիւնը և դուրս չգայ պատշաճից. բայց հարկադրանքը, որ նա այնպիսի կամակոր հաստատութենով դնումէր իւր վերայ, այն ժամանակից սկսած, երբ ոտք էր կոխել այս անիծած տեղը, և մանաւանդ Մօրօկի խորհրդական զրպարտութեան ժամանակ, արդէն անտանելի էր լինում. այս արդէն նորա կարողութենից վեր էր: Բաց ի սորանից նա տեսանումէր պարզ, որ իւր աշխատութիւնքը, դատաւորը իւր կողմը հակամետեցուցանելու, բոլորովին զուր էին անցանում և Մօրօկի կորստական ազդեցութիւնը, ոչնչացնումէր նորա ճգնութեան պտուղը: Համբերութիւնը կորուսանելով, զինուորը, կուրծքին դրած ձեռքերը, մօտեցաւ Մօրօկին և ասաց:

«Դու իմ մասին էիր խօսում պարոն Քաղաքապետի հետ:

— Այո՛, — պատասխանեց Մօրօկը, նայելով ուղղակի, Դագոբեռի աչքերին:

«Բայց ինչ պատճառով չ՛խօսեցար լսելի կերպով:

Այս խօսքերը արտաբերելու ժամանակ Դագոբեռը ևս նայեց ուղղակի Գէտի աչքերին. Նորա թանձր ընչացքի ցնցողական շարժողութիւնը ցոյց էր տալիս, որ մեծ պատերազմ կար նորա մէջ իւր անձին հետ: Մօրօկի արհամարհական լռութիւնը ևս առաւել կատաղեցուց նորան:

«Ես քեզանից հարցանումեմ», ասաց նա առաջվանից բարձր ձայնով, «ինչ պատճառով շշնչեցի՞ր դու պարոն Քաղաքապետի ականջին, ինչ ժամանակ բանը իմ վերայ էր:

— Այն պատճառով, որ կային բաներ, որ անպատշաճ էին ամենեցուն լսելի կերպով պատմելու. — պատասխանեց Մօրօկը:

Դագոբեռը մինչև այս միջոցը կանգնած էր ձեռքերը կուրծքին

գրած, բայց այս տեղ արձակեց նա ձեռքերը բռունցքները սեղմելով: Այս անակնկալ շարժողութիւնը այնպէս զգալի եղաւ, որ որբերը գանչեցին երկիւղից և վազեցին նորա մօտ:

«Պարոն քաղաքապետ, շնորհ արեցէք», ասաց Դագոբերը կատաղութենից ատամները սեղմելով, «հրամայեցէք նորան դուրս գնալ.... ապա թէ ոչ ես երաշխաւոր չեմ լինում իմ մասին....»

— Ի՞նչպէս. դու համարձակվումես դեռ ես կարգադրութիւնք առնել այս տեղ. կը համարձակվիս:

«Դուրս վարեցէք դորան», ասաց զինուորը, բոլորովին կորուսանելով իւր անձին վերայ իշխանութիւնը, «ապա թէ ոչ զգուշացէք!...»

— Դագոբեռ, Դագոբեռ! — գանչեցին օրիորդքը, — ի սէր Աստուծոյ հանդարտիր, մի՛ բարկանար!

«Փախստական, կամ գուցէ առաւել ես վատթար, բայց մտածումէ խելք ուսուցանել», գանչեց քաղաքապետը սաստիկ բարկացած: «Դու ասումես, թէ կորուսել էիր քո թղթերը և մտածումես, թէ ես ես իսկոյն հաւատացի քեզ: Քարշ ես ածում հետդ աղջկերքը.... նոքա անմեղութիւն են հանդիսացնում, բայց ինքեանք կարելի է....

— Թշուառական դու! գանչեց Դագոբեռը, կտրելով քաղաքապետի խօսքը այնպիսի ահարկու շարժողութեններով, որ քաղաքապետը չհամարձակվեցաւ խօսքը վերջացնել:

Զինուորը, բռնեց որբերի ձեռքից և թոյլ չտալով նոցա և մի խօսք ես արտաբերել, ներս ձգեց նորանց սենեակի մէջ, փակեց դուռը և բանալին դրեց գրպանը: Յետոյ մօտ գնաց քաղաքապետին. իսկ քաղաքապետը, ահաբեկ եղած զինուորի բարկացայտ դէմքից, յետ թռաւ և բռնեց սանդուղքի յենարանից:

«Լսեցէք», գանչեց նա բռնելով քաղաքապետի ձեռքից, «մի փոքր յառաջ այս անպիտանը արեան վիշտ հասցրեց ինձ», շարունակեց նա ցոյց տալով Մօրօկի վերայ: «Ես բոլորին համբերեցի, որովհետև գործը վերաբերումէր ինձ միմիայն: Մի փոքր յառաջ ես համբերաբար լսեցի, ձեր բոլոր վշտացուցիչ խօսքերը. պատճառ, ինձ թըվումէր, թէ դուք կարեկցումէիք այդ անբաղդ օրիորդներին. բայց այժմ տեսանումեմ, որ ձեզանից յուսալ չէ կարելի ոչ ազնիւ զգացմունք, ոչ կարեկցութիւն, ոչ արդարութիւն.... յառաջուց ասումեմ ձեզ, որ առանց նայելու ձեր քաղաքապետական արժանաւորութեանը.... ես կը ջարդեմ ձեզ ինչպէս այս շունը (և դարձեալ ցոյց տուեց Մօրօկի վերայ). եթէ համարձակվիք յանդուգն խօսել այս օրիորդների հետ. և եթէ չյարգէք նորանց իբրև ձեր սեպհական դստերքը.... լսեցի՞ք»:

— Ինչպէս համարձակվեցար.... — գանչեց Քաղաքապետը կակազելով բարկութենից, — համեմատել այս քարշ եկողները.... իմ զաւակների հետ։

«Գլխարկդ հանի՛ր.... երբ խօսումէիր Մարշալ և Դուքս դը Լիյնի զաւակների մասին», բացագանչեց զինուորը, յափշտակելով Քաղաքապետի գլխից գլխարկը և նետելով յատակի վրայ։

Այս գործողութեան ժամանակ, Մօրօկը ցնցվեցաւ ուրախութենից։ Եւ արդարև Դագօբեռը, կորուսանելով իւր բոլոր յոյսը, անձնատուր եղաւ բարկութեան, որ այնքան ժամանակ զսպումէր։ Քաղաքապետը աննկարագրելի զարմանքով, նայեցաւ Մօրօկի վերայ, որպէս թէ չհաւատալով իւր աչքերին և ականջներին, որպէս թէ չհասկանալով, որ իւր հետ այդպէս յանդուգն վարվումէին։

Դագօբեռը զղջալով իւր արածի վերայ և զգալով, որ այսու հետև ոչինչ հնար չէր մնացել հաշտութեան, շուտով մի չորս կողմը նայեց և մի քանի քայլ յետ գնալով, մօտեցաւ սանդուղքի առաջին աստիճաններին։ Քաղաքապետը կանգնած էր նստարանի մօտ, փոքրիկ հրապարակի անկիւնում. Մօրօկը, որ կապել էր ձեռքը, որպէս զի մեծ համարում տայ իւր վէրքին, կանգնած էր նորա մօտ։ Քաղաքապետը, նկատելով Դագօբեռի շարժողութիւնը, մտածեց, թէ նա փախեցել էր, այս պատճառով գանչեց։

«Այ դու ծեր աղուէս. դու իմ վերայ ձեռք բարձրացրեցիր, իսկ այժմ կամիս ուղղել քո գործը.... Ո՛չ եղբայր սպասի՛ր....»

— Պարոն Քաղաքապետ ներեցէք ինձ, — ասաց Դագօբեռը խոնարհական կերպով գլուխը կախելով, — ես չկարողացայ դիմանալ, բայց այժմ ինքս զղջումեմ, որ այդպէս ընթացել էի։

Ո՛չ այսուհետև ես ողորմելու չեմ քեզ. դու դարձեալ կամիս շարժել իմ սիրտը, քո խոնարհական դէմքովը. զուր է եղբայր. այժմ չես կարող խաբել. այժմ ես ճանաչումեմ.... դու ամենևին այն չես, ինչ որ կամիս երևել.... և հեշտ կարող է պատահել, որ այս տեղ մի Ցէրութենական գործ կայ». յաւելացրեց Քաղաքապետը, երևելի դիպլոմատի երեսով։ «Այն մարդերի համար որ աշխատումեն խռովել բոլոր Եւրոպան ամենայն հնարը լաւ է։ Նոքա շատ ընտրել չունին....»

— Ես հասարակ խեղճ զինուոր եմ, պարոն Քաղաքապետ, դուք այդպէս ողորմած էք, խղճացէք ինձ անբաղդիս վերայ։

«Դու յանդգնեցար ձեռք բարձրացնել Քաղաքապետի վերայ....»

— Դորա բոլորի պատճառը դու ես, — շարունակեց Դագօբեռը դառնալով դէպ ի Մօրօկը, որ խօսումէր, — դուք, ասումեն բարի մարդ էք, խնդրեցէք իմ մասին պարոն Քաղաքապետից։

«Այս արդէն ասացի նորան.... ինչ որ հարկաւոր էր», հեգնական ձեւով պատասխանեց գաղաններ զսպողը։

Իհարկէ այժմ խոնարհել ես, ծեր փախստական! — ասաց Քաղաքապետը մօտենալով զինուորին. — դու դարձեալ յոյս ունիս շարժել իմ սիրտը քո առակներով։ Չէ, սիրելիս, միւս անգամ չես կարող խաբել.... մեք կ'ապացուցանենք քեզ, որ Լէյպցիգումը փառաւոր բանտեր կան լրտեսների և աղջիկների համար, որ գուցէ թէ բոլորովին քարշ եկողք էին.... չէ պիտոյ քո հետ երկար բարակ խօսել. անցի՛ր յառաջ! — յաւելացրեց նա, հպարտ հպարտ. — իսկ դու Մօրօկ....

Նա ատակ չունեցաւ խօսքը վերջացնել։ Գագոբեռը, քանի րոպէ սպասումէր արդէն մի յաջող ժամանակի և նայումէր սենեակի կիսափակ դուռին, որ նոյն փոքրիկ հրապարակի վերայ էր, իսկ և իսկ այն սենեակի հանդէպ, ուր բնակվումէին որբերը։ Նա մի բարեյաջող րոպէ գտանելով, փայլակի արագութեամբ յարձակվեցաւ Քաղաքապետի վերայ, բռնեց նորա պուկից, և այնպէս սաստիկ զարկեց դուռին, որ Քաղաքապետը չկարողացաւ մինչև անգամ ձայն հանել և ընկաւ քամակով մութն սենեակի մէջ։ Յետոյ դարձաւ նա դէպ ի Մօրօկը, որ նկատելով, թէ ազատ էր սանդուղքը արդէն յարձակվել էր փախչել ազատվիլ. բայց Գագոբեռը բռնեց նորա երկայն մազերից, քարշեց իւր մօտ, և բռնելով նորան իւր երկաթի ձեռքերովը, փակեց նորա բերանը և չնայելով նորա յուսահատ ընդդիմութեանը, նետեց նորան ևս այն սենեակի մէջ, ուր Քաղաքապետը ջարդված ցնորված ընկած էր յատակի վերայ։ Գագոբեռը կպղեց նոցա վերայից դուռը, դրեց բանալին գրպանը և ցած վազեց սանդուղքից։ Սանդուղքը դուրս էր գալիս պաշտգամբը, որ նայումէր դէպ ի գաւիթը. պանդոկի դարպասքը փակ էին. այս ճանապարհով անկարելի էր փախչել։ Անձրևը թափվումէր գետի նման։ Ներքին դահլիճի պատուհանից տեսաւ զինուորը, որ պանդոկատէրը և նորա ծառայքը ջերմանալով յատուկ վառած կրակի չորս կողմումը սպասումէն Քաղաքապետի վճռին։ Մի ակնթարթում նա փակեց պաշտգամբի դուռը այնպէս, որ ոչ ոք չէր կարող այնուհետև գաւիթը դուրս գալ և յետոյ վազեց դարձեալ իւր որբերի մօտ։

Մօրօկի ուշը վերայ եկած գանչումէր ամենայն զօրութենով. բայց եթէ մարդիկը այդքան հեռի ևս չլինէին, այսու ամենայնիւ մրրիկը և անձրևը կը ծածկէին նորա աղաղակը։ Գագոբեռը այս կերպով մի ժամ միջոց ունէր. որովհետև պանդոկատէրը և սպասաւորքը իհարկէ դեռ ոչ շուտ կը սկսէին զարմանալ զինուորի խօսակցութեան երկարելուն Քաղաքապետի հետ. բաց ի սորանից բա-

ւական ժամանակ հարկաւոր էր կոտրելու համար դուռերը, որ փակել էր Դագոբեռը։

«Իմ զաւակներ, այժմ հասել է վճռական րոպէն! ապացուցէք, որ զինուորական արիւն է խաղում ձեր երակների մէջ», ասաց Դագոբեռը, յանկարծ սենեակը մտանելով որբերի մօտ, որոնք ահաբեկ էին եղած սանդուղքի վերայ գործված աղաղակից։

— Աստուած իմ, ի՞նչ պատահեցաւ Դագոբեռ, — գանչեց Բլանշը։

«Ի՞նչ են պահանջում մեզանից», հարց արեց Ռօզը։

Մի բառ ևս չպատասխանելով, զինուորը վազեց մահճի մօտ, յափշտակեց սփռոցներ, պինդ կապեց նորանց միմեանց. մեծ կապ շինեց մի ծայրումը և ամրացրեց նորան պատուհանի փեղկի մէջ։ Այս կերպով ամրացած կապը չէր կարող դուրս գալ փեղկի միջից, իսկ միւս ծայրը հասանում էր մինչև ի գետինը։ Պատուհանի միւս փեղկի միջով, որ բաց էր, հեշտ կարելի էր անցանել։ Ծերունի զինուորը առեց իւր ճանապարհակիրը, օրիորդների պայուսակը, եղնի մորթուց մուշտակը, դուրս ածեց նորանց պատուհանից և նշանացի առնելով շանը, ուղարկեց դուրս այդ բաները պահպանելու համար։ Շունը հնազանդվեցաւ և մի ոստիւն կատարելով, դուրս թռաւ պատուհանից։ Ռօզը և Բլանշը սաստիկ զարմացած, ամենևին լուռ, նայում էին Դագոբեռի վերայ։

«Այժմ իմ զաւակներս», ասաց նա, «արիացէք.... դարպասները փակ են.... պիտոյ է պատուհանից փախչել, ապա թէ ոչ մեզ կ՚արգելուն. ինձ մի բանդ կը դնեն, իսկ ձեզ միւսի մէջ.... և մեր ճանապարհորդութիւնը անօգուտ կը լինի»։

— Կ՚արգելո՞ւն.... բանդի մէջ կը դնե՞ն, — գանչեց Ռօզը։

«Եւ առանց քե՞զ», յաւելացրեց Բլանշը։

— Այո՛, խեղճ ողորմելիք.... մեր Ուրախին սպանեցին... պիտոյ է ինչպէս և իցէ ոտով հասանել մինչև Լէյպցիգ...։ Երբ դուք վաստակիք, ես ձեզ փոփոխակի կը տանիմ ձեռքի վերայ.... բայց եթէ ուշանանք այս տեղ մի քառորդ ժամ, այն ժամանակ բոլորը կորած էր.... ինձ ապաւինեցէք։ Ապացուցէք, որ գեներալ Սիմոնի դստերքը երկչոտ չէին.... և մեք դեռ ևս կարող ենք յուսալ...։

Ակամայ համակրութենով, օրիորդքը բռնեցին ձեռք ձեռքից, որպէս թէ կամելով միանալ ընդհանուր վտանգաւորութեան ընդդէմ. այսքան սաստիկ զգացողութեններից գունաթափած նոցա գեղեցիկ երեսները այս րոպէին ցոյց էին տալիս համարձակ վճռականութիւն, որ յառաջանում էր զինուորի մտերմութեանը կուրօրէն հաւատալուց։

«Հանգիստ եղիր Դագոբեռ.... մեք չենք վախենում....» ասաց Բօզը հաստատ ձայնով։

— Ի՞նչ հարկաւոր էր առնել, — յաւելացրեց Բլանշը նոյնպէս։

«Ես հաւատացած էի», ասաց Դագոբեռը, «իւրեանց հօրն են նմանել.... ուրեմն դէպ ի ճանապարհ.... դուք մի փետուրից առաւել ծանր չէք, սփռոցները ամուր են, մինչև գետինը ութն ոտնաչափ է. Ցխուրը սպասումէ ձեզ ցածումը»։

— Յառաջ ինձ պիտոյ է գնալ, ես եմ այսօր երեցը! — գանչեց Բօզը քնքշութեամբ գրկելով Բլանշին։

Այս ասելով մօտեցաւ պատուհանին, որ ինքը առաջին անգամը հանդիպի վտանգին, եթէ կար. Դագոբեռը հասկացաւ այս շտապելու պատճառը։

«Սիրական զաւակներ», ասաց նա, «ես հասկանումեմ ձեր միտքը, բայց աւելորդ էր ձեզ երկիւղ կրել միմեանց մասին, ոչինչ վտանգաւորութիւն չ՚կայ.... ես ինքս ամրացուցի սփռոցը։ Ուրեմն Բօզ իջիր շուտով։

Թռչնակի նման թեթև օրիորդը վեր թռաւ պատուհանի վերայ, յետոյ Դագոբեռի օգնականութեամբ բռնեց սփռոցից և կամաց կամաց սկսեց ցած իջանել հետևելով զինուորի պատուէրներին, որ դուրս կախված պատուհանից քաջալերումէր նորան։

— Մի վախիր քուրիկ, — ասաց Բօզը կիսաձայն, երբ կոխել էր գետնի վերայ, — շատ հեշտ է ցած իջանելը. Ցխուրը այս տեղ է և լիզումէ ձեռքերս։

Բլանշը աներկիւղութեան մասին, պակաս չ՚մնաց իւր քրոջից, նա ևս իսկոյն թռաւ պատուհանի վերայ և ապահովութեամբ ցած իջաւ։

«Խեղճ զաւակներ! ինչու համար այսքան անբաղդութեններ են տանում։ Սատանայական բան է։ Ճակատագիրը ասես թէ հալածումէ այս խեղճ գերդաստանը», գանչեց Դագոբեռը վշտացած, նայելով խեղճ օրիորդի յետքից, երբ նա անյայտացաւ գիշերվայ մառախուղի մէջ, որ առաւել սարսափելի էր զարհուրելի մրրկից և սաստիկ անձրևից։

— Դագոբեռ, քեզ ենք սպասում.... արի շուտով ասացին որբերը հանդարտ ձայնով, երկուսը միասին կանգնած պատուհանի տակ։

Զինուորը օգուտ քաղելով իւր բարձր հասակից ցած չ՚գնաց սփռոցից բռնելով, այլ մի անգամից թռաւ պատուհանից գետնի վերայ։

Քառորդ ժամ ևս չ՚անցաւ այն միջոցից երբ Դագոբեռը և որբերը փախան «Սպիտակ բաշէի» պանդոկից, մինչ ամբողջ տան մէջ բարձրացաւ սարսափելի ձայն և աղաղակ։

Դուռը չ՚կարողացաւ դիմանալ Քաղաքապետի և Մօրօկի գործ դրած ուժերին. Նոքա խորտակեցին նորան մի ծանր սեղանով։

Այս տեսանելով որբերի սենեակումը, նոքա յարձակվեցան դէպ ի այն տեղ. սենեակը դատարկ էր։ Մօրօկը նկատելով, որ սփռոցներ ամրացուցած էին պատուհանից գանչեց, «Պարո՛ն Քաղաքապետ, նոքա պատուհանից են փախել. նոքա ոտով են.... այսպիսի խաւար և մրրկոտ գիշերով հեռի չեն կարող գնալ!։

— Իհարկէ.... մեք կը հասանենք նոցա քամակից.... պանդոկապետ!... մոմեր, լապտերներ.... ես կը հանեմ նոցանից վրէժը. գործը մեր պատուին է վերաբերում....

«Իմ պատուի համար մի խօսք ևս չէ պիտոյ. բայց այս տեղ իմ համար առաւել գլխաւոր գործ կայ, Պարոն Քաղաքապետ», պատասխանեց Մօրօկը բարկացած, յետոյ ցած իջանելով սանդուղքից բացեց դուռը դէպ ի գաւիթը և ամենայն զօրութենով գանչեց.

«Գողիաթ!!.... արձակիր շները!... պանդոկապետ!... մոմեր, լապտերներ!..։ զրահաւորիր քո սպասաւորքը.... հրամայիր բանալ դարպասները.... Շուտ, ճանապարհ. փախստականների քամակից!...

Այո՛, կենդանի, կամ մեռած, նոքա կ՚ընկնին իմ ձեռքը։

ԹԱՓԱՌԱԿԱՆ ՀՐԷԱՅ

—

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆ

—

ՄԻՋ.-ՈՒՐՋԻՆԵԱՆ ՓՈՂՈՑԸ

I.

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՔ։ 1)

Մօրօկ, գազանների զսպողը, տեսանելով Դագօբեռը զրկված իւր ձիուց, Թղթերից, արծաթից, և հաւատացած լինելով, որ չէ կարող նա յառաջ գնալ իւր ճանապարհի մէջ, նախ, քան թէ տեսած էր Քաղաքապետը, Ճանապարհորդեց կարոլոսը դէպ ի Լէյպցիգ, ուղարկելով նորա հետ մի նամակ ճանապարհի վերայ առաջին պատահած քաղաքումը փօստայ ձգելու համար։ Այսպէս էր նամակի հասցէն.

A Monsieur Rodin rue du Milieu-des-Ursins

à Paris.

---

1) Մարդ, կարդալով Ցիսուսեան կարգի կանոնների մէջ մակագրով «De formula scribendi» (Inst. II. XI, p. 125—129) կարգադրութիւնների ութերրորդ մասի ծանօթութիւնքը, զարհուրում է այն բազմաթիւ նամակների, յայտարարութիւնների, ցուցակների և ամենայն տեսակ գրուածների վերայ, որ պահված են ընկերութեան արձանագրութիւնների մէջ։ Սա մի պօլիցիա է, անչափելի շատ ճիշտ և առաւել բազմատեսակ քան թէ երբ և իցէ եղել է մի թագաւորութեան պօլիցիա։ Նոյն իսկ

Միչ-Ուրզինեան անմարդաբնակ և շատ փոքր յայտնի փողոցի կիսումը կար այն ժամանակ մի հասարակ տուն, մի նեղ բակի խորքում, որ բաժանվումէր փողոցից սլաքաւոր դռնով և հաստ երկաթներով պատած երկու պատուհանով, մի շինութեամբ։ Այս առանձնական բնակարանը զարդարած էր շատ հասարակ կարասիքներով, ինչպէս երևումէր գլխաւոր շինութեան ներքին յարկի բաւական մեծ դահլճից։ Պատերը ծածկած էին սևացած և հին բարակ տախտակներով, ներկած յատակը շատ խնամքով սրբած էր մոմով. պատուհաններում կախած էին հասարակ կտաւեայ վարագոյրք։

Սենեակի միւս ծայրումը հնոցի առաջևը, կաղնու փայտի պատուանդանի վերայ դրած էր մի գունդ, չորս ոտնաչափ տրամագծով։ Այս աշագին գունդի վերայ, աշխարհի ամենայն մասնումը ցրված էին ցիր ու ցան կարմիր խաչերի բազմութիւն, հիւսիսից դէպ ի հարաւ, արևելքից արևմուտք. ամենավայրենի երկիրներից, ամենահեռաւոր կղզիներից մինչև ամենալուսաւոր աշխարհները, մինչև Ֆրանսիա. չ՛կար մի աշխարհ, ուր ցրուած չ՛լինէին այս խաչերը, որ ծառայումէին նշանի փոխանակ։

Պատի մօտ ո՛չ շատ հեռի հնոցից դրած էր սև փայտեայ մի սեղան, թղթերով լցուած և նորա հանդէպ մի դատարկ աթոռ. առաւել հեռի պատուհանների մէջ կար ընկուզի փայտից մի գրասեղան, և նորա վերայ պահարան հաստ թղթեայ արկղներով։

1831 ի Հոկտեմբերի վերջերումը առաւօտ ութն ժամին մի մարդ նստած այս գրասեղանի մօտ գրումէր։ Այս մարդը Պարոն Րոդէնն էր, դաղանները զսպողին—Մօրօկին—յանձնարարութիւնք առնողը։

Վենետկի կառավարութիւնը տեսանումէր իւր անձը առաւել թոյլ, քան թէ Ցիսուսեանների կառավարութիւնը էր։ Երբ նա արտաքսեց նորանց 1606 թուականին, ձեռք ձգեց բոլոր նոցա թղթերը և յանդիմանեց նոցա մեծ և չափից դուրս խորամանկ հետաքրքրութիւնը։ Այս պօլիցիայն, այս ծածուկ դատաքննութիւնը, որ հասուցած էին այդպիսի կատարելութեան աստիճանի, հասկացնումէն մեզ, թէ ինչպէս մեծ կարողութիւն ունէր մի կառավարութիւն, այդպէս քաջ տեղեակ իրողութեններին, այդպէս հաստատ կացող իւր առաջարկութեններին վերայ, այդպէս հզօր իւր միութենովը, և ինչպէս աստուեն կարգադրութիւնքը, իւրեանց անդամների միաբանովը։

Առանց դժուարութեան հասկանալի է, թէ ի՛նչքան անչափելի զօրութիւն ստանումէ այս ընկերութեան կառավարութիւնը և թէ ի՛նչպէս Ցիսուսեանների Գեներալը կարող էր ասել Բրիզակեան դուքսին, թէ «այս սենեակից, ով պարոն, ես կառավարում եմ ոչ թէ միայն Փարիզը այլ և Չինաստանը. և ոչ միայն Չինաստանը այլ և ամբողջ աշխարհը. և ոչ ոք չգիտէ, թէ ինչպէս է լինում այս բանը»։ (Les Constitutions des Jésuites avec les Déclarations, texte latin, d'après l'édition de Prague, p. 476 á 478. — Paris. 1834).

Սա յիսուն տարեկան կը լինէր արդէն. հագած էր կանաչագոյն, կեղտոտ օձիքով մի սիւրտուկ. վիզը կապած էր մի քթի թաշկինակ փողպատի փոխանակ. բաճկոնը և վարտիկը սև, և բոլորովին մաշված. Նորա ոտքերը հաստ և իւղով օծած մաշիկների մէջ հանգչումէին կանաչ գորգի վերայ, որ սփռած էր կարմիր ներկած յատակի վերայ: Նորա ալեխառն մազերը յարդարած էին նորա քունքերի վերայ և շրջապատումէին նորա ճաղատ ճակատը. ունքերը հազիւ հազ յայտնի. վերին արտևանունքները տափակ և կախված սողունների աչքերի թաղանթի նման ծածկումէին նորա սև և փայլուն աչքերի մինչև կէսը. Նորա անգոյն և բարակ շրթունքը համաձայն էին նորա վատուժ և մեռելատիպ երեսին, որի վերայով դուրս էին պրծած սուր քիթը և սուր կզակը: Այս անգոյն դիմակը, համարեա թէ առանց շրթունքի, առաւել զզուելի էր նորանով, որ անշարժ էր ինչպէս մեռելի երես. եթէ Պ. Բօդէնի մատների յաջողաշարժ ընթացքը չլինէր, որ կորացած սեղանի վերայ ջերմեռանդութեամբ գրումէր, նորան կարելի էր մեռեալ մարմին համարել:

Բանալեքի (գաղտնի այբուբենի) օգնութեամբ, որ դրած էր նորա առաջևը, նա դուրս էր գրում մի քանի տեղեր մի երկար գրած երեսից. այնպէս, որ նորա նամակը բոլորովին անհասկանալի էր նորա համար, որ չունէր իւր մօտ այս բանալին, այս այբուբենը: Զարհուրելի էր նայել այս սառուցի երեսով մարդու վերայ, որ նկարումէր խորհրդական նշաններ խորին լռութեան մէջ, որից այս մեծ, դատարկ և ցուրտ սենեակը երևումէր առաւել տխուր:

Ժամացոյցը զարկեց ութն ժամը: Մուրճը բաղխեց դարպասը, յետոյ երկու անգամ լսվեցաւ փոքրիկ զանգակի ձայնը. մի քանի դուռեր բացվեցան փակվեցան, սենեակը ներս մտաւ մի նոր մարդ: Պ. Բօդէնը տեսածի պէս վեր կացաւ տեղից, գրիչը բռնեց ատամներովը, խորին յարգութեան կերպով գլուխ տուեց և լուռ լուռ դարձեալ սկսեց շարունակել իւր գործը: Այս երկու մարդերի մէջ կար մի զարմանալի հակադրութիւն. նոր եկածը երևումէր առաւել երիտասարդ, քան թէ էր իսկապէս. ինչպէս երևումէր նա կը լինէր այսպէս երեսուն վեց կամ երեսուն ութն տարեկան: Նա բարձրահասակ էր, բայց շատ գեղեցիկ կազմուածքով. դժուար էր դիմանալ նորա յղկած պողպատի նման փայլող, գորշ աչքերի կրակին. Նորա սկզբումը լայն քիթը վերջանումէր համարեա թէ քառանկիւնի տափակութենով. Նորա դուրս-ընկած կզակը ածիլած էր մաքուր. այս ածիլած տեղի կապոյտ գոյնը շատ զգալի կերպով հակադիր էր նորա կարմիր թուշերին և սպիտակ ատամներին: Հանելով գլխարկը, որ հագնի սեղանի վերայ դրած թաւիշեայ սև արախչինը, ցոյց տուեց

նա իւր շագանակագոյն մազերը, որոնց դեռ ևս արծաթաջրել չէր հասակը: Նա հագած էր երկայն սիւրտուկ բոլորովին կոճկած վերից մինչև վայր: Այս մարդու թափանցողական հայեացքը և մեծ ճակատը յայտնումէին նորա մեծ խելքը. իսկ բարձր կուրծքը և լայն թիկունքը ցոյց էին տալիս նորա ֆիզիկական կազմութեան ամրութիւնը: Նորա գեղեցկութիւնը, խնամքը, որով հագել էր նա իւր կօշիկները և ձեռնոցները, թեթև անուշահոտութիւնը, որ գալիս էր նորա հանդերձից և մազերից, նորա բոլոր շարժողութենների ազատութիւնը և յաջողակութիւնը ցոյց էին տալիս, որ նա աշխարհային մարդ էր, որ կարող է, կամ կարող էր մտածել ամենայն յառաջադիմութենների վերայ, սկսած շատ դատարկ բաներից մինչև շատ երևելի գործերի մէջ: Այս շատ հազուագիւտ միաւորութիւնը մտքի կարողութեան, մարմնի ամրութեան և անսովոր յաջողակութեան բաղկացնումէր մի ամբողջ, մանաւանդ նշանաւոր, որ այս ոգևորված երեսի վերին մասի աւելորդ հրամայողական երևոյթը թուլանումէր ախորժ ժպիտովը. ժպիտով, որ մշտական էր, բայց ո՛չ միաձև, որովհետև հանգամանքների համաձայն այս ժպիտը երբեմն քաղցր, երբեմն խորամանգ, երբեմն ուրախ կամ միամիտ, կամ հրապուրական առաւել ևս մեծացնումէր կախարդող գեղեցկութիւնը այս մարդու, որին միանգամ տեսած լինելով չէր կարելի մոռանալ: Բայց չ՛նայելով այս գեղեցիկ որակութենների անսովոր միաւորութեանը, դուք, ակամայ հնազանդվելով այս մարդու անյաղթելի հրապուրողականութեանը, կը զգայք մի անհանգստութիւն. կը թուի, որ նորա յաջողակութիւնը և քաղաքավարութիւնը, նորա բարակ կեղծաւորութիւնը, նորա քաղցր ժպիտը ծածկումէն իւրեանց տակ մի վտանգաւոր խորամանգութիւն. և դուք անձնատուր լինելով անընկճելի ձգտողութեանը դէպ ի նա չէք կարող ինքներդ ձեզ հաշիւ ու համար տալ, թէ դէպ ի ի՞նչ բան ձգտումէիք. դէպ ի բարին, թէ չարը:

Ռ. Ռօզէնը, այս նշանաւոր մարդու քարտուղարը, շարունակումէր իւր գրելը:

«Նամակներ չե՞ն ուղարկել Դիւնկիրխենից, հարց արեց այս օտարոտի մարդը»:

— Գործակատարը դեռ չէ երևել:

«Իմ մօր դրութիւնը այնքան չէ անհանգստացնում ինձ. պատճառ վերջին լուրերին նայելով, նա սկսել էր առողջանալ. բայց բոլորովին չեմ հանգստանալու մինչև այն ժամանակ, երբ նամակներ կը ստանայի նորա բարեկամից, Դը-Սէն-Դիզիէ իշխանուհուց...: Երևի թէ այսօր բարի լուր կը ստանամ»:

— Ցանկալի էր, — ասաց հեզ, խոնարհ, խաղաղ և փոքր խօսող քարտուղարը:

«Այո՛, ես կարծումեմ. իմ կեանքի մի շատ երջանիկ օրերից մինը համարումեմ այն օրը, երբ Դը-Սէն-Դիզիե իշխանուհին կը յայտնէր ինձ, թէ այդ անակնկալ և վտանգաւոր հիւանդութիւնը անցել էր բարի իշխանուհու քնքոյշ հոգաբարձութեամբ.... Եթէ այս չ՛լինէր ես իսկոյն կ՛երթայի նորա կալուածքը, թէ և իմ ներկայութիւնը շատ հարկաւոր էր այս տեղ»։

Յետոյ մօտենալով իւր քարտուղարի սեղանին հարց արեց.

«Օտարասահման թղթակցութենների հաշիւը պատրա՞ստ է արդեօք»։

— Ահա արտագրութիւնքը։

«Բոլո՛ր նամակները ուղղված էին դէպ ի նշանակած տեղերը և ճշդութեամբ ուղարկված այս տեղ?»

— Բոլորը։

«Կարդացէք օրագիրը. եթէ հանդիպին այնպիսի լուրեր, որոնց ես ինքս պիտոյ է պատասխանէի, կ՛ասեմ իսկոյն»։

Ձեռքերը քամակին դրած նա ճեմել սկսեց սենեակի մէջ յետ և յառաջ, և իւրաքանչիւր յօդուածի վերայ վճիռ էր նշանակում, որ և Պ. Ռօդէնը իսկոյն գրումէր։ Քարտուղարը առեց մի բաւական հաստ տետրակ և սկսեց կարդալ։

— Դօն Ռամօն Օլիվարեսը Կադիկսից յայտնումէ 19 համարով նամակի ստանալը. նա խոստանումէ յարմարվիլ նորա հետ և հաստատ մնալ այն բանում, թէ մասնակից չէր յափշտակութեանը։

«Լաւ. միաւորեցէք գործի հետ»։

— Ռիգայումը, Ռօմանով կոմսը նեղ դրութեան մէջ է գտանվում։

«Ասացէք Դիւպլեսսուն, որ հասուցանէ նորան յիսուն լուիդօր. ես իբրև կապիտան ծառայումէի կոմսի գնդումը և այն օրից շարունակ նա հասուցանումէ մեզ օգտակար ծանօթութիւնք»։

— Ֆիլադելֆիայում վերջին անգամ ստացված Ֆրանսիացոց պատմութիւնը, որ յատուկ վերաշինած էր Պապականների համար, բոլորը բաժանվել է. վերստին խնդրումեն։

«Այդ մասին ծանօթութիւն տալ Դիւպլեսսուն. յետո՞յ։

— Սպինդլերը Նամիւրից ուղարկումէ գաղտնի յայտարարութիւն որ նորանից պահանջվումէր պարոն Արդուէնի մասին։

«Քննել և մատուցանել»։

— Պարոն Արդուէնը նոյն տեղից ուղարկումէ նորանից պահանջված գաղտնի յայտարարութիւնը պարոն Սպինդլերի մասին։

«Քննել»։

— Նոյն տեղից բժիշկ Վան-Օստադը ուղարկել է գաղտնի յայտարարութիւնք պարոն Սպինդլերի և պարոն Արդուէնի մասին։

«Համեմատել միւսերի հետ. շարունակեցէք»։

— Մալիպիերրի կոմսը գրում է Տուրինից, թէ մեր օգտի համար խոստացած երեք հարիւր հազար ֆրանկի կտակը ստորագրված է։

«Տեղեկութիւն տալ Դիւպլեսսուն»։

— Դոն Ստանիսլաւը արքայազն Մարիա Էրնեստէնի հետ գնացել է Բադընի ջրերը։ Նա գրում է, թէ երախտապարտութեամբ կ՚ընդունէ խոստացած խրատները, և կը պատասխանէ իւր ձեռքով գրելով․․․։

«Նշան գրեցէք․․․։ Ես ինքս կը գրեմ արքայազն Մարիային»։

Այն միջոցին, երբ Պ. Ռօդէնը գրում էր եզրակացութիւնքը, Նորա իշխանաւորը ուղիղ և խոտորնակի ճեմելով սենեակի մէջ գտանվեցաւ կարմիր խաչերով լցած գունդի առաջևը։ Նա կանգնեցաւ և նայելով նորա վերայ մտածմունքի մէջ մտաւ։

Պ. Ռօդէնը շարունակեց․

— Հայր Օրսինին գրում է Միլանից, թէ յարմարվելով Իտալիայի մի քանի մասերում եղած մարդերի խելքերի տրամադրութեանը, օգտակար կը լինէր ցրուել այն տեղ մի տետրակ, որի մէջ մեր հայրենակից Ֆրանսիացիք ցոյց տրված լինէին, անաստուած, անբարոյական, և արեան արբու գիշատող․․․։

«Գեղեցիկ մտածութիւն է։ Այդ տետրակի շարադրելը յանձնել Ժակ Դիւմուլէնին։ Այդ մարդը լցված է լեղիով ու թունով, զարհուրելի բան կը լինի այդ տետրակը․․․ ես իմ կողմից մի քանի ծանօթութիւնք կը հասուցանեմ նորան․․․ բայց չէ պիտոյ վարձ տալ նորան ձեռագիրը չստացած։

— Տարակոյս չկայ․․․ եթէ յառաջուց արծաթ տրվի նորան, այն ժամանակ նա ամբողջ շաբաթ կը թաւալի մի տեղում մեռածի նման արբեցած։ Այդ մի նոր բան չէ․ երկու անգամ հարկադրվեցանք հատուցանել նորան, ուսուցչապետ Մարտէնի փիլիսոփայական վարդապետութեան, [illegible] ուղղութեան ընդդէմ, ծիծաղելի գործի համար։

«Նշանակեցէք և շարունակեցէք»։

— [illegible] յայտնում է, թէ փոխանորդը համարեա թէ պատրաստ է ուղարկել [illegible] հաշիւ տալու ում հարկն է։ (Ռօդէնը նոտր գրով տպած խօսքերը մի առանձին կերպով արտաբերեց)։ Բայց փոխանորդը դարձեալ խղճահարվում է։

Իշխանաւորի երեսի վերայ թափվեցաւ անախորժ և վշտացուցիչ զգացողութիւն. և մի րոպէ լռելուց յետոյ ասաց․

«Չ՚դադարել փոխանորդի երևակայութեան վերայ ներգործելուց. լռութենով և հեռացնելով․․․ շարունակեցէք»։

— Սիգնէյի կինը Դրեզդէնի մէջ սպասում է հրամանի։ Նախանձը ծնուցել է արդէն հայր ու որդու մէջ սաստիկ խռովութիւն. փոխադարձ ատելութիւն ունելով մինը միւսի վերայ նոքա պատմում են Սիգնէյի կնոջը, ինչ որ գիտէին միմեանց մասին. բայց բոլոր այս խօսքերից նա չէ կարողացել դեռ ևս քաղել մի բան, որ մօտ լինէր ծանօթութեններին, որ պահանջվում էին նորանից։ Մինչև այսօր Սիգնէյի կինը մի կերպով կառավարվում էր երկուսի հետ ևս. բայց այլ ևս մնալ այս դրութեան մէջ, առանց մի կասկած ծնուցանելու, անկարելի է։ Նա հարցանում է նորանցից որին պիտոյ է նախապատիւ համարէ, հօրը թէ որդուն։

«Որդուն.... ծերունու մէջ առաւել սաստիկ կը լինի նախանձի բորբոքը, քան երիտասարդի մէջ և վարվելով իւր բաղդաւոր հակառակորդից վրէժ հանելու ցանկութենով, կարելի է որ դուրս հանէ նա այն բանը, որ երկուսին ևս հարկաւոր էր ծածկել։ Յետոյ?

— Այսպէս մի երեք տարվայ մէջ, երկու աղախինքը Ամբրոսիայի, որ Վալեզեան սարերի փոքրիկ եկեղեցու մէջ կարգել էինք, կորել էին անյայտ. այժմ երրորդ աղախինը կորել է նոյնպէս։ Աւետարանականք ամբոխվում են.... խօսում են սպանութեան վերայ.... սարսափելի մանրամասնութիւնք են պատմում։

«Մինչև յանցաւորութիւնը կատարելապէս և անհերքելի կ'ապացուցանվի պաշտպանել Ամբրոսիային հերձուածի գարշելի բամբասանքներին ընդդէմ. հերձուածին, որ միշտ առատ է լինելու ամենայլանդակ մտածողութեններով»։

— Լիվերպօօլի մէջ վերջապէս յաջողել է Տօմպսօնին գործակատար կարգել Ժիւստէնը Լօրդ Ստեվարտի Իրլանդացի հարուստ պապականի մօտ, որի գլուխը առաւել և առաւել թուլանում է։

«Եթէ ստոյգ է այդ, ուրեմն վարձ ուղարկել Տօմպսօնին յիսուն լուիդօր։ Այս կարգադրութեան մասին տեղեկութիւն տալ Դիւպլեսսուն»։

— Ֆրանկ Դինկենշտէյնը Վիեննայից գրում է (ասաց Րօդէնը), որ նորա հայրը խօլերայից վախճանել է մի փոքրիկ գիւղում, մօտ..... քաղաքի. պատճառ այդ ցաւը գալիս է հիւսիսից Ռուսսիայից, Լեհաստանի վերայով....։

«Այո՛, այդ ճշմարիտ է». ասաց Րօդէնի իշխանաւորը ընդհատելով. «Աստուած տար միայն, որ այս սարսափելի պատիժը խնայէր Ֆրանսիային....»

— Ֆրանկ Դինկենշտէյնը, — շարունակեց Պ. Րօդէն, ծանուցանում է, թէ նորա երկու եղբարքը միտք ունին պահանջել, որ ոչնչանայ կտակը, որով իւրեանց հայրը իւր բոլոր կայքը կտակել էր մեր կարգի օգտի համար.... բայց ինքը Ֆրանքը համաձայն չէ այս բանին...։

«Խօսել մեր գործերի կառավարիչների հետ.... յետոյ?»

— Կարդինալ իշխան դ'Ամալֆին ընդունումէ մեր գրութեան առաջին երրորդ յօդուածքը, բայց խնդրումէ թոյլտուութիւն չորրորդ յօդուածը ընդունելու մի քանի սահմանափակութեամբ։

«Առանց սահմանափակութեան! Նա պիտոյ է առանց պայմանի համաձայնի. ապա թէ ոչ պատերազմ կը լինի. և ասացէք, որ պատերազմ կը լինի անհաշտելի անխնայ նորա և նորան հետևողների ընդդէմ.... շարունակեցէք»։

— Ֆրա Պաօլօն յայտնումէ, թէ դաւաճանների գլուխ Բօկկարին յուսահատվելով, որ նորա ընկերքը մեղաւոր էին կացուցանում նորան որպէս ուխտադրուժ, այն կասկածի հիման վերայ, որ Ֆրա Պաօլօն ճարտարութեամբ հրատարակել էր, անձնասպան է եղել, հրացան կրակելով իւր վերայ։

«Բօկկարին! կարելի է արդեօք հաւատալ այդ լուրին. Բօկկարին! վճռական Բօկկարին մեր համար այն շատ վտանգաւոր մարդը...։

— Այո, այն մարդը, — պատասխանեց քարտուղարը, իւր սովորական խաղաղ սառնութենով։

«Տեղեկութիւն տալ Դիւպլեսսուն, որ նա ուղարկէ Ֆրա Պաօլօին յիսուն լուիդօր.... նշանակեցէք»։

Հաուսմանը տեղեկութիւն է տալիս, թէ Ֆրանսիացի կաքաւող Ալբերտին Դիւկօրնէ աղջիկը այժմեան Դուքսի սիրականն է. Նա չափից դուրս մեծ ազդեցութիւն ունի Դուքսի վերայ, բայց դժբաղդաբար ամենայն գործի մէջ հետևումէ խորհրդին, որ տալիս էր նորան նորա սիրողը, որ Ֆրանսիայի մէջ դատապարտված էր նա դէպ ի ծառայութիւն, խաբեբայութեան համար։

«Հաուսմանին գրել, որ խօսի այդ մարդու հետ և եթէ նա շատ չպահանջէ, այն ժամանակ կարելի է բանը շինել։ Տեղեկանալ, արդեօք Ալբերդին Դիւկօրնէ կաքաւողը ազգականք չունի՞ Փարիզի մէջ։

— Դ'Օրբանօ դուքսը խոստանումէ, որ նոր շինութիւն կարգելու հրամանը կը տվի. բայց արդէն յայտնված պայմաններով։

«Մեք չկամինք ոչինչ պայման ընդունել.... այո, կամ ոչ.... Այս կերպով գոնէ մեք որոշումենք մեր բարեկամները թշնամիներից։ Որքան անախորժ էին հանդամանքները, այնքան շատ հարկաւոր էր կամքի և բնաւորութեան հաստատութիւն։ Եթէ մեք ինքներս մեզ չպատուէինք, կը զրկվէինք այն ժամանակ և այն պատուից, որ ուրիշներից պիտոյ է հասանէր մեզ։

— Կարձնալ նա յայտնումէ, թէ դիպլոմատները օգնումեն պահանջողութեան հօրը, այն Աւստրանական օրիորդին, որ թաքնվել էր Պապական վանքում և համաձայնումէր դուրս գալ այն պատճառով միայն, որ ամուսնանար հօր կամքին ընդդէմ իւր սիրողի հետ։

«Դիպլոմատները օգնումեն նորան?»

— Այո՛, այդպէս։

«Ուրեմն, թող պատասխանեն, թէ հոգևոր իշխանութիւնը չէ կախվում քաղաքական իշխանութենից»։

Այս միջոցին դրսի դռներումը լսվեցաւ երկու անգամ մուրճի բախելը։

«Տեսէք, ո՛վ է այն տեղ», ասաց իշխանաւորը։

Պ. Բօդէնը վեր կացաւ և դուրս գնաց։

Նորա իշխանաւորը շարունակելով ճեմել սենեակի մէջ դարձեալ կանգնեցաւ գունդի հանդէպը. և մի քանի ժամանակ լուռ լուռ գննումէր անհամար կարմիր խաչերը, որ մի մեծ ուռկանի նման ծածկել էին աշխարհի ամենայն կողմը։ Երևի թէ նա մտածումէր իւր իշխանութեան անտեսանելի ներգործութեան վերայ, որ տարածվումէր բովանդակ աշխարհի վերայ։ Նորա դէմքը կենդանացաւ. աչքերը փայլակներ էին ցայտում. Նորա այրական երեսի վերայ երևեցաւ վերին աստիճանի ոգևորութեան, համարձակութեան և հպարտութեան նշան։

Հպարտ հպարտ մօտեցաւ նա գունդին և դրեց իւր կարող ձեռքը բևեռի վերայ։ Այս շարժողութիւնը կատարելու ժամանակ կարելի էր մտածել, թէ նա իշխան է ամբողջ այս գունդին, որի վերայ հրամայողի աչքով նայեցաւ և ձեռքը դրեց այնպիսի հպարտ և հրամայողական ձևով։ Այս տեղ նա չէր ժպտում արդէն։ Նորա լայն ճակատը սաստիկ կնճռվեց. աչքերումը փայլատակումէր կայծակը. անհնար էր գտանել մի առաւել գեղեցիկ օրինակ նկարագրելու համար խորամանգութեան և հպարտութեան դևը, անյագ իշխանութիւնասէր դժոխային հոգին։

Երբ վերադարձաւ Պ. Բօդէնը, Նորա իշխանաւորի դէմքը ընդունեց իւր սովորական կերպարանքը։

— Գործակատարը եկաւ, — ասաց Պ. Բօդէնը ցոյց տալով ձեռքումը բռնած նամակները, — Դիւնկիրխենից ոչինչ չ'կայ։

«Չ'կա՞յ», գանչեց իշխանաւորը, և Նորա վշտալից կերպարանքը երևեցնումէր շատ պարզ և զարմացուցիչ հակադրութիւն այն յաղթական հպարտութեանը, որ ո՛չ շատ յառաջ փայլումէր Նորա երեսի վերայ։

«Ոչինչ ծանօթութիւն չ'կա՞յ մօրս մասին», շարունակեց նա։ «Դարձեալ օր ու կեսվայ չարչարանք»։

— Ես կարծումեմ, որ թէ ձեր մօր վիճակը վատթարանար, այն ժամանակ իշխանուհին կը յայտնէր ձեզ։ Երևի թէ ձեր մօր առողջութիւնը նորոգվումէ։

«Այո՛, պէտք է որ այդպէս լինի.... այսու ամենայնիւ այդլռութիւնը ինձ անհանգիստ է առնում։ Եթէ եգուց նամակ չստանամ, ուրեմն ես կ'երթամ իշխանուհու կալուածը...։ Ահ Աստուած իմ. ափսոս, որ մայրս ցանկացաւ աշունը այն տեղ անցուցանել։ Ես վախումեմ, որ Դինկիրխենի օդը անառողջ լինի նորա համար։

Մի փոքր ժամանակ լուռ մնալուց յետոյ ասաց նա, շարունակելով ճեմել սենեակի մէջ։

«Նայեցէք այդ նամակները. ո՛ր տեղից են»։

Պ. Բօդէնը նայելով փոստայի դրած կնիքների վերայ ասաց.

— Այս չորս նամակներից երեքը մեդալիոնների մասին, երեւելի գործի յարաբերութիւն ունին։

«փառք Աստուծոյ», բացագանչեց նորա իշխանաւորը, «միայն այդ ծանօթութիւնքը մեզ համար ախորժ եղան», յաւելացրեց նա անհանգիստ կերպարանքով, որ յայտնի ապացուցանումէր, թէ ինչ արժանաւորութիւն տալիս է նա այս գործին։

— Մինը Զարլզտունիցն է, երեւի թէ Գաբրիէլ քահանայի մասին, — ասաց Պ. Բօդէն. — միւսը Բատավիայից, պէտք է որ Հնդկացի Ճալմայի մասին լինի։ Այս Լէյպցիգիցն է.... երեւի թէ երեկվայ ծանօթութեան հաստատութիւնը, որ այն գազաններ զսպողին, Մօրօկին, յաջողել էր կատարել գեներալ Սիմոնի աղջկերքին արգելելու համար հրամանը և թէ նոքա չէին կարող շարունակել իւրեանց ճանապարհորդութիւնը. և այս այնպէս, որ ինքը Մօրօկը չէր ընկել ամենևին կարծիքի տակ։

Գեներալ Սիմոնի անունը տուածի պէս, իշխանաւորի երեսի վերայ փայլեցաւ մի թեթև բարկութիւն։

II.

ՀՐԱՄԱՆՆԵՐ։ [1]

Պ. Բօդէնի իշխանաւորը յաղթելով ակամայ ամբոխմունքին, որ պատճառել էր նորա մէջ գեներալ Սիմոնի անունը կամ նորա մասին յիշողութիւնը, ասաց։

---

1) Գաւառի տները (Յիսուսեան կարգի գաւառական կառավարութիւնքը) նամակակից են Փարիզի մէջ եղած տների հետ. նոքա ուղղակի հաղորդակցութիւն ունին նոյնպէս կարգի Գեներալի հետ, որ ունի իւր կացութիւնը Հռովմի մէջ։

Յիսուսեանների նամակակցութիւնը, լինելով այնքան ժրաջան, այնքան բազմա-

«Սպասեցէք, մի բանաք Լէյպցիգից, Չարլզտունից և Բատավիայից ստացված նամակները։ Լաւ է կարդալ նոցա մէջ պարունակված տեղեկութիւնքը իւր ժամանակին, երբ կը գտանվի նոցայարմարաւոր տեղը. այդ կերպը կ՚ազատէ ձեզ զուր ժամանակ կորուսանելուց։

Քարտուղարը նայեց նորա վերայ բան չհասկանալով։ Իշխանաւորը շարունակեց.

«Աւարտեցի՞ք դուք մեդալիոնների մասին գրութիւնը»։

— Աւարտեցի.... ես այս րոպէիս դուրս գրեցի շիֆրով (գաղտնի այբուբենով)։

«Կարդացէք ինձ ձեր գրութիւնը, և նորա մէջ գրեցէք պատշաճեալ տեղումը այդ նամակներով հասած ծանօթութիւնքը»։

— Իհարկէ շատ պատշաճ է այդ ծանօթիւնքը ևս գրել այն տեղ։

«Ես կամիմ տեսանել, թէ բաւական պա՞րզ էր և կատարեա՞լ

տեսակ և այնպիսի հրաշալի կերպով կարգադրած, ունի այն խորհուրդը, որ հասուցանէ իւր մեծաւորներին բոլոր տեղեկութիւնքը, որոնց կարող էին նոքա կարօտ լինել. ամենայն օր Գեներալը ստանումէ անչափ բազմութիւն յայտարարութենների, որ ստուգվում են մինը միւսով։ Գտանվումեն կենդրոնական տան մէջ Հռովմումը անչափելի շատ ցուցակներ, ուր գրված են բոլոր Յիսուսեանների անունները և բոլոր նոցա ընկերութեան մէջ ընդունվածների և այն բոլոր երևելի մարդերի թէ բարեկամների և թէ թշնամիների, որոնց հետ նոքա գործ ունին։ Այս ցուցակների մէջ յայտնած են առանց փոփոխութեան, առանց ատելութեան, առանց ախտի բոլոր իրողութիւնքը, որ վերաբերվումէին ամենայն անհատ մարդու կեանքի։ Այս է առաւել հսկայ հաւաքածոյն վարքագրական, որ երբ և իցէ ձևաւորված է։ Մի թեթևամիտ կնոջ բարք ու վարք, մի թագաւորական մարդու ծածուկ սխալանքները պատմած են այս գրքի մէջ մի սառն անկողմնապահութեամբ։ Այս վարքագրութիւնքը, որ գրած էին այն խորհրդով, որ օգտաբեր լինին, պիտոյ է հարկաւորապէս ճիշտ լինին։ Երբ որ պէտք էր ներգործել մի առանձնական մարդու վերայ, այնուհետև բացումէն այս գիրքը և իսկոյն ճանաչումեն նորա կեանքը, նորա բնութիւնը, նորա յատկութիւնքը, նորա պակասութիւնքը, նորա առաջարկութիւնքը, նորա ընտանիքը, նորա բարեկամքը և նորա ամենագաղտնի կապակցութիւնքը։ Հասկանումէ՞ք դուք պարո՛ն, այն գերագոյն ազդեցութիւնը, որ տալիս է մի ընկերութեան այս ահագին Պօլիցիական գիրքը, որ բովանդակումէ իւր մէջ բոլոր աշխարհը։ Ես թեթևապէս չեմ խօսում ձեր հետ այս ցուցակների մասին. սա հասել է ինձ մի այնպիսի մարդու ձեռքով, որ տեսած է այս շտեմարանը, որ և կատարելապէս ճանաչումէ Յիսուսեանները. սորանից ստացել եմ ես այս իրողութիւնքը։ Մտածելու բան էր այն գերդաստանների համար, որ հեշտութեամբ ընդունումէին իւրեանց մէջ մի հասարակութեան անդամներ, ուր վարքագրութեան ուսումնասիրութիւնը այդպէս յաջողակութեամբ գործ է դրուած։ (Libri, membre de l'Institut, *Lettres sur le Clergé*).

ձեր գրութիւնը։ Ձեզ յայտնի է, որ նա, որի համար պատրաստվումէ այդ գրութիւնը, չէ պիտոյ իմանալ ամենայն բան»։

— Այո՛, այդպէս է. ես այդ խորհրդով ես գրել եմ։

«Ուրեմն կարդացէք»։

Պ. Բոդէնը սկսեց շատ դանդաղ և հասկանալի կերպով կարդալ հետևեալը։

«Հարիւր յիսուն տարի սորանից յառաջ, մի ֆրանսիական
«գերդաստան Աւետարանական դաւանութենով յառաջուց գուշակե-
«լով Նանդեան էդիկտի փոփոխութիւնը և ցանկանալով փախչել
«խիստ օրինադրութիւններից, որ տրված էին արդէն Հուգենոտների
«կամ Աւետարանականների ընդդէմ, իւր յօժար կամքովը թողեց
«ու հեռացաւ հայրենիքից։ Այս գերդաստանի անդամներից, ոմանք
«սկզբումը բնակվեցան Հօլլանդա, իսկ յետոյ Հօլլանդական գաղ-
«թականների մէջ. ոմանք Լեհաստան, ոմանք Գերմանիա, Անգլիա
«և ոմանք Ամերիկա։ Ստոյգ լուրերից այժմ իմացվեցաւ, որ եօթը
«ժառանգ մնացել են կենդանի այս գերդաստանից, որ օտար աշխարհ-
«ներում պատահել էր բաղդի ամենայն տեսակ հալածանքներին. այժ-
«մուս ներկայ ժառանգները գտանվումեն հասարակաց սանդուղքի
«ամենայն աստիճանների վերայ, սկսած թագաւորից մինչև արհեստա-
«ւորը։ Այս ժառանգները սոքա են»։

«ՄԱՅՐԱԿԱՆ ԿՈՂՄԻՑ»։

«Ընչափահաս օրիորդք Րօզ և Բլանշ Սիմոն. (գեներալ Սիմոնը
«ամուսնացել է Վարսավիայումը, վերոյիշեալ գերդաստանից յա-
ռաջացած մի օրիորդի հետ»)։

«Ֆրանսուա Հարդի — ձեռագործարանի տէր Պլեսսիումը, Փարիզի մօտ»։

«Իշխան Ճալմա, Հաճի-Սինգի որդին Մօնդիու թագաւո-
«րին (Հաճի-Սինգը 1807 թուականին ամուսնացել է մի օրիորդի
«հետ, որ նոյնպէս ծագումէր այդ գերդաստանից, որ այն ժամանակ
«բնակվումէր Բատավիայում Հօլլանդայի պատկանած Եաւա կղզու
մէջ)»։

«ՀԱՅՐԱԿԱՆ ԿՈՂՄԻՑ»։

«Արհեստաւոր Ժակ րեննըպօն, մականունով կուշ-տու-նիւ»։

«Օրիորդ Ադրիեն դը Կարդովիլ, կոմս րեննըպօն դը Կարդովիլի դուստրը»։

«Գաբրիէլ ըէննըպօն, օտար երկիրների քարոզիչ քահանայ»:

«Այս գերդաստանի իւրաքանչիւր անդամքը ունին, կամ պիտոյ է ունենան բրօնզեայ մեդալիօն, որի վերայ գրուած էր հետևեալ մակագիրը»:

Victime	A Paris
de	Rue Saint François, № 3.
L. C. D. J·	Dans un siècle et demi
Priez pour moi.	Vous serez
—	Le Février 13, 1832.
Paris.	—
Le 13 Février 1682.	Priez pour moi,

«Այս խօսքերը և թուականները նշանակումեն, որ նոցա իւրաքան-
«չիւրների համար չափից դուրս շատ հարկաւոր է ներկայ լինել Փա-
«րիզում 1832 ի Փետրուարի 13 ին. և ոչ փոխանորդի կամ գոր-
«ծակալի ձեռքով, այլ անձամբ անձին, ով և լինէին նոքա. չափահաս
«թէ անչափահաս կանամբիք, արամբիք, կամ ամուրիք և օրիորդք:
«Բայց այլ մարդերի համար չափից դուրս հարկաւոր է, որ այս գերդա-
«տանի անդամներից ոչ մինը ներկայ չ՚լինի Փարիզումը Փետրուարի
«տասներեքին, բաց ի օտար երկիրների քարոզիչ Գաբրիէլ քահա-
«նայ ըէննըպօնից: Այս պատճառով անշուշտ պէտք է, ինչպէս և լինի, այն-
«պէս կարգադրել, որ միայն Գաբրիէլը ներկայ լինի հարիւր յիսուն տարի յա-
«ռաջ նշանակուած այս տեսակցութեան ժամանակ: Արդէն շատ հնարներ
«գործ են դրուած, որ արգելք լինին այս գերդաստանի միւս վեց ան-
«դամներին Փարիզում գտանվելուն կամ ժամանակին այն տեղ հա-
«սանելուն. բայց դեռ շատ աշխատութիւն պիտի, որ ապահովվի այս
«գործի յառաջադիմութիւնը, որ սոյգ քննութեններից յետոյ հա-
«մարվումէ մեր ժամանակներումը ամենամեծ գործ»:

—Այդ բոլորը ճշմարիտ է, — ասաց Պ. Րօդէնի իշխանաւորը մտածմունքի մէջ ընկած, գլուխը շարժելով: — Յաւելացրէք ևս, թէ յառաջադիմութեան հետևանքները անթիւ են. իսկ անյաջողութեան հետևանքներ չեն համարձակվում ևս մտածել...: Մի խօսքով բանը գնումէ լուծանելու այս խնդիրը, լինել, թէ չ՚լինել շատ տարիների ընթացքում: Այս պատճառով, յառաջադիմութիւն ստանալու համար անշուշտ հարկաւոր է գործ դնել ամենակարելի հնարներ, ոչինչ հնարից չ՚վախենալ.... բայց ներգործել առանց կասկածանքի տակ ընկնելու:

«Պատրաստ է», ասաց Պ. Րօդէն, գրելով իւր իշխանաւորի թելադրածը:

—Շարունակեցէք:

Պ. Րօդէնը դարձեալ սկսեց կարդալ:

«Այս գործի յառաջադիմութիւնը թեթևացնելու և հաստա-
«տելու համար անպատճառ հարկաւոր է իմանալ այս գերդաստանի
«ժառանգների մի քանի մասնաւոր և գաղտնի մանրամասնութիւնքը:
«Ծանօթութենների ստուգութեան մասին երաշխաւոր են լինում.
«բայց թէ հարկը պահանջէ կարելի է լրացուցանել ամենանուրբ տե-
«ղեկութեններով. պատճառ շատ ծանօթութիւնք հաւաքված են այս
«մասին, որ ստուգվումէին մինը միւսերով: Տեղեկութիւնքը յա-
«ռաջ են բերվում այս տեղ կարգով, իւրաքանչիւրի համար առանձին
և խօսվումէ միայն արդէն կատարված անցքերի մասին»:

№ 1.

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ:

Օրիորդք Ռօզ և Բլանշ Սիմօն երկուորեակ են, տասն և հինգ տարեկան, գեղեցիկ և այնքան միմեանց նման, որ դժուար է որոշել մինը միւսից. բնաւորութենով, հեզ և երկչոտ, բայց հակամիտ դէպ ի զմայլումն. կրթված են Սիբերիայումը մի յանդուգն հոգով և ամենաստուածեան գաղափարի հետևող մօր ձեռքով. Նոքա բոլորովին չ՚գիտեն մեր սուրբ կրօնի խրողութիւնքը: Գեներալ Սիմօնը յառաջ քան իւր զաւակների ծնունդը հեռացած լինելով իւր կնոջից և մինչև այժմ ևս չ՚գիտէ, որ երկու դուստր ունէր: Աշխատելով արգելք լինել սոցա, նշանակած ժամանակին Փարիզ հասանելու, մօրը ուղարկեցին առաւել հեռի.... ուր մեռաւ նա շուտով. իսկ այն մարդը, որ մեր հաւատարիմն էր.... մի դժբաղդ սխալանքով կարծելով, թէ բանը վերաբերումէր միմիայն գեներալ Սիմօնի կնոջը, թոյլ է տուել նորա դուստրերին Փրանսիա գնալ մի զինուորի հետ: Այս մարդը ձեռներէց, հաւատարիմ և վճռական է. Նա նշանակված է «վաճառական: Սիմօն օրիորդքը» անունով: Նայելով բոլոր հանգամանքներին պիտոյ է կարծել, որ նոքա արգելված լինէին Լէյպցիգի շրջակայքումը:

— Այս ծանօթութենների լրութեան համար կարդացէք այժմ Լէյպցիգից ստացված նամակը, ասաց Պ. Րօդէնի իշխանաւորը:

Պ. Րօդէնը կարդաց և բացագանչեց:

«Շատ լաւ համբաւներ են: Օրիորդքը և նոցա առաջնորդը փախչելու վերայ են եղել Սպիտակ Բաղէի պանդոկից, բայց հասել են նոցա քամակից և ոչ շատ հեռի Մօկկերնից բռնելով, ուղարկել են Լէյպցիգ և բանդ դրել որպէս փախստական. բաց ի սորա-

նից զինուորը յանցաւոր է համարված, որ չէ հնազանդվել տեղական իշխանութեան, ձեռք է դրել աստիճանաւորի վերայ և զրկել է նորան ազատութենից»։

— Գերմանիայի մէջ դատաստանական գործերի ընթացքը շատ յամրաքայլ է. բաց ի սորանից դեռ ևս կարելի է գործ դնել օգնական հնարներ, որ այդ օրիորդքը ամենևին չհասանէին փարիզ մինչև փետրուարի տասներեքը, — ասաց պ. Բօդէնի իշխանաւորը։ — Գրեցէք այս ձեր ծանօթութեան տակ, որպէս յաւելուած։

Մի րոպէից պ. Բօդէնը ասաց «պատրաստ է», և շարունակեց կարդալ։

№ 2.

«ՊԱՐՈՆ ՖՐԱՆՍՈՒԱ ՀԱՐԴԻ, ՁԵՌԱԳՈՐԾԱՐԱՆԻ ՏԷՐ ՊԼԵՍՍԻՈՒՄԸ ՓԱՐԻԶԻ ՄՕՏ»։

«Քաջ, հարուստ, խնլացի, գործունեայ, առաքինի և կրթված մարդ. նորա մշակները կուռքի տեղ պաշտումեն նորան, գտանվումէ ծաղկեալ հասակում։ Սակաւ պարապումէ մեր սուրբ կրօնով. նա նշանակված է շատ վտանգաւոր. բայց այլ գործարանի տէր մարդերի մանաւանդ Պարոն Բառօն Տրիպօի նախանձը և ատելութիւնը շատ հեշտ կարելի է գործ դնել նորա ընդդէմ։ Եթէ հարկաւոր լինին այլ եղանակներ նորա վերայ կամ նորա ընդդէմ ներգործելու, այն ժամանակ կարելի է քաղել նորա մասին կազմած գործից, որ շատ ընդարձակ է. այս մարդու վերայ շատ ժամանակ է, որ նայումէին քննողի և լրտեսի աչքով։ Որ ինչ վերաբերումէ մեդալիօնին, այնպէս ճարտարութեամբ ընթացել են, որ նա մինչև անգամ չգիտէ, թէ ինչ մեծ արտօնութիւնք տալիս է այդ մեդալիօնը. այսու ամենայնիւ շատ խիստ հետևումեն նորա քամակից և նա ինքը ակամայ և առանց զգալու խոնարհումէ օտար ազդեցութեան. նորա ամենամերձ բարեկամներից մինը անհաւատարիմ է նորան և նորա միջնորդութենով յայտնի են մինչև անգամ Ֆրանսուա Հարդի Պարոնի ամենածածուկ մտքերը։

№ 3.

«ԻՇԽԱՆ ՃԱՅԼՄԱ»։

«Ցասն և ութ տարեկան, հաստատ և վեհանձն բնաւորութեամբ երիտասարդ. հպարտ, անկախ և վայրենի հոգու տէր, սիրելի գեներալ Սիմոնի, որ առաջնորդումէր նորա հօր Հաճի-Սինգի բանակին

Անգլիացոց ընդդէմ պատերազմի մէջ Հնդկաստանումը: Ճայլմայի մասին խօսվումէ այս տեղ միմիայն յիշելու համար. պատճառ, նորա մայրը վախճանեցաւ երիտասարդ հասակում մինչ դեռ կենդանի էին նորա ծնողքը, որ մնումէին Բատավիայում: Նոքա ևս շուտով վախճանեցան. ո՛չ Ճայլմա՛ն, ո՛չ նորա հայրը չպահանջեցին նորանցից յետոյ փոքրիկ ժառանգութիւնը. պատճառ, համարեա թէ հաստատ է, որ երկուքը ևս չգիտեն, թէ ինչ երևելի օգուտներ կապակից էին մեդալիոնի հետ, որ գտանվումէր Ճայլմայի մօր ձեռքումը»:

Իշխանաւորը ընդհատեց ընթերցանութիւնը և ասաց Պ. Րօդէնին.

— Կարդացէք այժմ Բատավիայից ստացված նամակը Ճայլմայի մասին ծանօթաբանութիւնը կատարելագործելու համար:

«Գւարձեալ բարի նորութիւնք», ասաց Պ. Րօդէնը, հարևանցի կարդալով նամակը». Պարոն Ժօսիւէ Վան Դաեօլ վաճառականը Բատավիայում (նա կրթվել է Պօնտիշարում մեր վարժարանի մէջ) իմացել է իւր Կալկաթայում ունեցած գործակալի ձեռքով, որ ծերունի Հաճի-Սինգը, Հնդկական Թագաւորը, սպանված է իւր վերջին պատերազմումը, որ ընդդէմ Անգլիացոց. նորա որդին Ճայլմա՛ն զըրկված է հայրենի աթոռից և այժմ բռնված է մի Հնդկական ամրոցի մէջ:

— Հոկտեմբերը արդէն վերջանումէ, — ասաց Պ. Րօդէնի իշխանաւորը, — եթէ մինչև անգամ յաջողէր Ճայլմային ազատվիլ ամրոցից և իսկոյն ճանապարհ ընկնել դէպ ի Ֆրանսիա, այսու ամենայնիւ հազիւ թէ կարող էր Փարիզ հասանել մինչև փետրուար:

«Պարոն Ժօսիւէ Վան Դաեօլը շատ ցաւումէ», ասաց Պ. Րօդէն, «որ այս դիպուածումը չէ կարողացել ապացուցանել իւր ջերմեռանդութիւնը: Եթէ Ճայլմա իշխանը միանգամայն անակնկալ ազատութիւն ստանայ կամ փախչի ամրոցից, այն ժամանակ երևի թէ Բատավիա կը գնայ, մօրից յետոյ ժառանգութիւն ստանալու համար, որովհետև նա ոչինչ հարստութիւն չունի այժմ: Այն ժամանակ կարելի է հաստատ յոյս ունենալ Պարոն Ժօսիւէ Վան Դաեօլի դէպ ի մեզ մտերմութեան վերայ... Նա որպէս վարձատրութիւն խնդրումէ ստոյգ ծանօթութիւն տալ ինքեան, ձեռագործարանի տէր և սեղանաւոր Պարոն Բառօն Տրիպօի վիճակի մասին, որի հետ առևտրական գործ ունի Պարոն Վան Դաեօլը»:

— Հրաժարական կերպով պատասխանեցէք այդ պահանջողութեններին. պատճառ Պարոն Ժօսիւէ Վան Դաեօլից բաց ի խօսքերով միայն ջերմեռանդութենից դեռ ևս ոչինչ տեսած չենք: Լրացուցէք Ճայլմայի մասին ծանօթաբանութիւնը.... այս նորութեններով...:

Պ. Բօդէնը սկսեց գրել: Մի քանի վայրկեանից յետոյ նորա իշխանաւորը հարց արեց մի օտարոտի ձևով:

«Պարոն Ժօսիւէ վան Դաեօլը ոչինչ չէ՞ խօսում գեներալ Սիմոնի մասին, նկարագրելով Հաճի-Սինգի մահը և խօսելով նորա որդու բանդարգելութեան վրայ»:

«Ամենևին», պատասխանեց Պ. Բօդէն, շարունակելով կարդալը: Նորա իշխանաւորը լռեց և սկսեց մտածելով ճեմել սենեակի մէջ: Մի րոպէից յետոյ, Պ. Բօդէնը ասաց «պատրաստ է»: Շարունակեցէք խօսքը, եղաւ դորա պատասխանը:

№ 4.

ԺԱԿ ՐԵՆՆԸՊՕՆ, ՄԱԿԱՆՈՒՆՈՎ ԿՈՒՇ-ՏՈՒ-ՆԻՒ:

Մշակ գործարանի պարոն Բառօն Տրիպօի, Ֆրանսուա Հարդի պարոնի հակառակորդի: Այս արհեստաւորը արբեցող, ծոյլ, խռովարար և վատնող մարդ է: Նա բնածին խելք ունի, բայց խանգարվել է անկանոն կեանքից: Մի շատ յաջողակ գործակատար, որին կարելի է դրականապէս հաւատալ, ծանօթութիւն է սկսել Սեֆիզ Սօլիվօի հետ, որ անուանվում Բագոսեան Թագուհի, որ այս մշակի սիրականն է: Այս օրիորդի միջնորդութենով գործակատարը ծանօթացել է և Ժակ Րեննըպօնի հետ. այժմ թըվում թէ այս մարդը չէ պիտոյ շատ հոգաբարձութիւն ունենայ այն օգուտների մասին, որ կարող էր ստանալ անձամբ անձին ներկայ գտնվելով Փարիզի մէջ փետրուարի 13 ին:

№ 5.

ԳԱԲՐԻԷԼ ՐԵՆՆԸՊՕՆ ՔԱՀԱՆԱՅ. ՔԱՐՈԶԻՉ ՕՏԱՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒՄ:

Հեռի ազգակից է վերյիշեալ մարդուն, բայց ամենևին չգիտէ այդ ազգակիցը և մինչև անգամ չէ մտածում թէ ունէր ազգակից: Նա դուրս ձգած որբ էր, որին վեր առեց և դարմանեց Ֆրանսիսկա Բօդուէն, Դագոբեռ մականունով զինուորի կինը: Եթէ այդ զինուորը մի անակնկալ կերպով Փարիզ վերադառնայ, այն ժամանակ կարելի է նորա վրայ ներգործել նորա կնոջ ձեռքով: Նա շատ պարզ, բարեհոգի կին է. անչափ աստուածավախ և բոլորովին մեզ անձնատուր: Այս կնոջ միջնորդութենով համոզեցին Գաբրիէլին մտանել հոգևոր կոչման մէջ: Գաբրիէլը քսան և հինգ տարեկան է.

Նորա երեսի կերպարանքը և բնաւորութիւնը հրեշտակային. Նա շատ հազուագիւտ առաքինութիւնք ունի, բայց դժբաղդաբար միասին կրթված է Դագօբեռի որդու Ագրիկօլի հետ: Այս Ագրիկօլը բանաստեղծ է և մշակ Ֆրանսուա Հարդի Պարոնի գործարանումը. տագորված է ամենագարշելի փիլիսոփայութեամբ. Աստուծոյ տեղ պաշտումէ իւր մայրը, բարի է, աշխատասէր, բայց զուրկ ամենէին կրօնական զգացմունքից: Նա նշանակված է սաստէկ ֆրանկմասոն: Այս պատճառով ես աշխատեցան հեռացնել Գաբրիէլը այս երիտասարդից: Գաբրիէլը այնու ամենայնիւ իւր գերազանց որակութեններովը ցոյց է տալիս մի տեսակ վտանգաւորութեան նշաններ: Նորա բոլորովին բացվելու ժամանակը դեռ չէ հասած. և այս դիպուածում մի սխալը կարող է նորան շատ ֆրանկմասոն մարդ շինել: Նորա հետ շատ զգուշութեամբ պիտոյ է վարվիլ, գոնէ մինչև փետրուարի տասներեքը. կրկնումենք դարձեալ, նորա վերայ և նորա այն միջոցին Փարիզ գտանվելու վերայ հիմնվումեն ահագին յոյսեր և ոչ պակաս նորանցից ահագին օգուտներ: Աշխատելով պահպանել նորան և իւր կողմը քարշել, հարկադրվեցան համաձայնել նորա Ամերիկեան առաքելութեան մէջ մտանելու ցանկութեանը: Նորա հեզ բնաւորութեանը յարակից է սառն անվեհերութիւն և համարձակ միտք հակամէտ դէպ ի արկածներ. այս պատճառով ես նորան սիրելի է եղել քարոզչական կեանքը լցուած վտանգաւորութեններով: Նորա իշխանաւորներին, որ Չարլզտօունումն էին, սաստիկ հրամայած է զգուշանալ նորա թանգագին կեանքին: Նոքա պարտական են Փարիզ ուղարկել նորան մի կամ երկու ամիս յառաջ քան թէ փետրուարի տասներեքը:

Պ. Ռօդէնի իշխանաւորը դարձեալ ընդհատեց ընթերցմունքը և ասաց.

«Այժմ կարդացէք Չարլզտօունից ստացված նամակը և լրացուցէք այդ ծանօթութիւնը»:

— Օրէ օր սպասումեն Գաբրիէլի ապառաժուտ սարերից վերադառնալուն, ուր հարկադրված էին ուղարկել նորան, կատարելով նորա անխորտակելի կամքը քարոզել Աստուծոյ բանը այն տեղ:

«Ինչ անզգուշութիւն է!» բացագանչեց Պ. Ռօդէնի իշխանաւորը»:

— Երևի թէ նա չէ ենթարկվել ոչ մի վտանգաւորութեան. նա ինքը ծանուցել է, թէ շուտ յետ կը գայ Չարլզտօուն: Նա պիտոյ է վերադառնայ այն տեղ այս ամսի կիսի մօտ. և իսկոյն մինչ նա վերադարձած էր կ'ուղարկեն նորան այս տեղ:

«Գրեցէք այդ նորա մասին ծանօթութեան մէջ»:

— Գրված է, ասաց պ. Բօդէն մի քանի րոպէից յետոյ․ «Կարդացէք հետևեալը, ասաց պ. Բօդէնի իշխանուարը»։ Եւ պ. Բօդէնը շարունակեց։

№ 6.

«ՕՐԻՈՐԴ ԱԴՐԻԵՆ ԲԵՆՆԸՊՕՆ ԴԸ ԿԱՐԴՈՎԻԼ»։

«Նա հեռաւոր ազգակից է կուշ-տու-նիւ ասված ժակ բեննըպօնին և բեննըպօն Գաբրիէլ քարոզիչ քահանային․ բայց ինքը չ'գիտէ ամենևին իւր այս ազգակցութիւնքը։ Այս օրիորդը շուտով քսան մի տարեկան կը լինի։ Նա անօրինակ գեղեցիկ է, թէ և չէկ էին նորա մազերը․ նորա խելքը նշանաւոր է իւր յատկութեններովը․ նա շատ հարուստ է և նորա մէջ կերպարանագործված են մարմնական բոլոր բնական ազդեցութիւնքը։ Գիտելով այս օրիորդի բնաւորութեան անվեհերութիւնը սարսափելի է և մտածել, թէ ինչ կը լինէր նա ապագայումը։ Լաւ որ Պարոն Բառօն Տրիպօ՛ն (Բառօնական արժանաւորութիւնը ստացել է նա 1829 թուականին, յառաջ կառավարիչ էր կոմս բեննըպօն Դուքս դը Կարդովիլի կալուածքին) պատրաստ է այս օրիորդի հօր քրոջ համար առնել ամենայն ինչ և համարեա թէ կախվումէ այդ կնօջից։ Կարելի է բոլորովին յոյս ունենալ այս պատուելի կնօջ վերայ․ պիտոյ է մտածել, որ այս կնօջը և Պարոն Տրիպօին կը յաջողի կանգնեցնել և պահել այս օրիորդը պատշաճի սահմանի մէջ․ պատճառ, այդ օրիորդը և այժմ ևս իւր վճռական և ազատ բնաւորութեամբը արդէն չէ թագուցանում իւր ամենայանդուգն և անկարգ մտադրութիւնքը, որ դժբաղդաբար չէ կարելի օգտակար կերպով գործ դնել յայտնի գործին մէջ․․․։

Պ. Բօդէնը չ'կարողացաւ առաւել կարդալ․ նորա ընթերցանութիւնը ընդհատվեցաւ մուրճի երկու հարուածովը, որ պարկեշտաբար բաղխեց դուռը։ Քարտուղարը վեր կացաւ գնաց որ իմանայ դուռը բաղխողը․ մի փոքր ժամանակ մնաց միւս սենեակումը, յետոյ վերադարձաւ երկու նամակ ձեռքին և ասաց։

«Իշխանուհին օգուտ է քաղել սուրհանդակի դուրս գնալուց և ուղարկել է․․․․

— Տուր այս տեղ իշխանուհու նամակը, գանչեց պ. Բօդէնի իշխանուարը, ընդհատելով նորա խօսքը․ — վերջապէս մի բան կ'իմանամ մօրս մասին, — յաւելացրեց նա։

Հազիւ թէ կարդացել էր նամակի առաջին տողերը, մինչ մահու գունաթափութիւն ծածկեց նորա երեսը․ վիշտ և զարմացք նկարագրվեցան նորա դէմքի բոլոր գծագրութեան վերայ։

Երևի դարձեալ մի անբաղդութիւն է պատահել», հարց արեց Պ. Բօդէնը, անհանգիստ դէմքով վեր կանգնելով իւր տեղից, իւր գլխաւորի վշտալի բացագանչութենից:

— Մօրս դրութիւնը դարձեալ վատթարացել է. — պատասխանեց նորա իշխանաւորը, — նա յուսահատ դրութեան մէջ է. համարեա թէ ամենևին յոյս չկայ նորա առողջանալուն: Նա անդադար գանչումէ ինձ և բժիշկը կարծումէ, թէ իմ գնալը գուցէ թէ կարող է փրկել նորան: Մայրս ասումէ, թէ հանգիստ չէր մեռանելու եթէ հրաժարական ողջոյն տուած չէր ինձ վերջին անգամ...: Ո՛հ, նորա ցանկութիւնը սուրբ է...: Չ՛կատարել նորա ցանկութիւնը, նշանակումէ սպանել նորան...: Աստուած իմ. միայն թէ ժամանակին կարողանայի հասանել...: Մի րոպէ դադար չառնելով կը հասանես երկու օրից:

«Ա՛հ Աստուած իմ. ի՛նչ անբաղդութիւն է». ասաց Պ. Բօդէնը ձեռքերը կուրծքին կպցնելով և աչքերը դէպ ի երկինք բարձրացուցած:

Պ. Բօդէնի իշխանաւորը զարկեց զանգակը և ասաց դուռի մէջ երևեցած ծերունի ծառային.

— Շուտով տեղաւորիր իմ ճանապարհական կառքի մէջ անհրաժեշտ բաները և հրամայի՛ր դռնապանին սայլորդ վարձել և որքան կարելի է շուտով գնալ սուրհանդակի ձիերի քամակից. մի ժամից ինձ պիտոյ է ճանապարհումը լինել:

— Ա՛հ մայրիկ.... մայրիկ.... մի՞թէ ես առաւել չեմ տեսանելու նորան...: Ո՛հ այդ սարսափելի բան է, — բացագանչեց Պ. Բօդէնի իշխանաւորը, սաստիկ վշտից թուլացած ընկնելով աթոռի վերայ և ձեռքերով ծածկելով երեսը:

Այս սաստիկ տխրութիւնը կեղծաւորեալ չէր. այս մարդը սաստիկ սիրումէր իւր մօրը. այս սուրբ զգացողութիւնը փոխված չէր, թուլացած չէր, նորա կեանքի ոչ մի հանգամանքներում.... որ շատ անգամ յանցաւոր էր....

Մի քանի րոպէից յետոյ Պ. Բօդէնը համարձակվեցաւ ասել իւր իշխանաւորին ցոյց տալով երկրորդ նամակը.

«Ահա մի նամակ ևս, Պարոն Դիւպլեսսուց. շատ հարկաւոր նամակ, որ չէր կարող ամենևին յետ գրվիլ»:

— Կարդացէք և պատասխանեցէք ինքներդ.... իմ գլուխը այժմ այդ բաներով չէ պարապած:

«Այս գաղտնի գրութիւն է....» ասաց Պ. Բօդէն նամակը տալով իշխանաւորին. «և ես չեմ կարող բանալ նորա կնիքը.... Այդ դուք ինքներդ կարող էք տեսանել ծրարի վերայի յայտնի նշանից....

Այս խորհրդական նշանը տեսածովը, Պ. Բօդէնի իշխանաւորի դէմքը ստացաւ մի երկիւղի և պատուելու անհասանելի գծագրութիւն. Նա դողդոջուն ձեռքերով բացեց կնիքը։

Նամակի մէջ գրած էր.

«Թողնելով բոլոր գործերը.... առանց մի րոպէ ուշանալու.... ճանապարհորդեցէք դէպ ի այս տեղ.... Պարոն Դիւպլիսսին կը կատարէ ձեր պաշտօնը. Նա հրաման ստացել է արդէն»։

— Մեծ Աստուած! — գանչեց այս մարդը յուսահատութեամբ, — գնալ առանց մօրս տեսանելու այդ զարհուրելի է.... այդ նշանակումէ նորան սպանել.... այո՛, այդ ծնողասպանութիւն է!

Այս խօսքերը ասելով յանկարծ իւր հայեացքը ուղղեց գունդի վերայ, որ լցուած էր կարմիր խաչերով։ Այս տեսութենից յառաջացաւ նորա մէջ անակնկալ և արագ փոփոխութիւն. երևումէր, որ նա զղջումէր, որ ազատութիւն տուեց իւր զգացմունքներին. Նորա դեռևս տխուր երեսը կամաց կամաց առաջվայ պէս հանգիստ և հպարտ դարձաւ։ Նա քարտուղարին տալով ճակատագրական նամակը և բռնելով իւր հառաչանքը ասաց նորան, «գրեցէք հրամանի համարը»։

Պ. Բօդէնը առեց գիրը, համար դրեց նորա վերայ և դրեց մի առանձին պահարան։

Իշխանաւորը, մի քանի րոպէ լուռ մնալուց յետոյ, շարունակեց. «Այսուհետև Դիւպլիսսուց կը ստանաք դուք հրամաններ և կ'աշխատէք նորա կարգադրութեանների ազդեցութեանով։ Մատուցէք նորան մեդալիոնների մասին գրուածքը. Նա գիտէ, թէ ում արժան էր ուղարկել։ Պատասխաններ ուղարկեցէք Բատավիա, Լէյպցիգ և Չարլզտոուն այն մտքով, որ ասացի ձեզ։ Ամենայն հնար գործ դնել գեներալ Սիմոնի աղջկերքը Լէյպցիգում արգելելու համար։ Գաբրիէլին որքան կարելի է շուտով ուղարկել այս տեղ։ Եթէ անակնկալ կերպով Ճայլմա՛ն Բատավիա գայ, այն ժամանակ թող Պարոն Ֆօսիւե-Վան-դաեօլը ապացուցանէ իւր ջերմեռանդութիւնը արգելելով նորան տեղ։

Անհասանելի էր խելքի այս մարդու սառնասրտութիւնը այս րոպէում, մինչ նորա սիրական մայրը, որ մեռանումէր ահա, զուր տեղը հրաւիրումէր նորան իւր մօտ. Բոլոր հարկաւոր պատուէրները տալով քարտուղարին առանձնացաւ նա դէպ ի իւր սենեակը, իսկ Պ. Բօդէնը սկսեց պարապիլ թղթերի շարադրութեանով և գաղտնի տառերով արտագրելով։ Երեք քառորդ ժամից յետոյ լսվեցան սուրհանդակի ձիերի զանգակների ձայնը։ Ծառայն բաղխեց դուռը և ներս մտաւ։ «կառքը պատրաստ է», ասաց նա։ Պ. Բօդէնը նշանացի արեց նորան գլխով և ծառայն դուրս գնաց։

Քարտուղարը հանդարտութեամբ բաղխեց իր իշխանաւորի սենեակի դուռը և իշխանաւորը դուրս եկաւ ամենևին սառն կերպարանքով բայց սաստիկ գունաթափած. Նա մի նամակ էր բռնել ձեռքումը։ «Մօրս կ՚ուղարկէք», ասաց նա, Պ. Բօդէնին տալով նամակը. «շուտով ուղարկեցէք առանձին սուրհանդակով»։

— Իսկոյն, — պատասխանեց քարտուղարը։ «Նամակները դէպ ի Լէյպցիգ, դէպ ի Բատավիա և Չարլզտօուն այսօր ուղարկեցէք այնպէս, ինչպէս միշտ։ Դուք գիտէք որքան մեծ նշանակութիւն ունին այդ նամակները մեր համար։

Այսպէս եղան այս մարդու վերջին խօսքերը։

Նա, անժխտելի հնազանդութեամբ կատարելով անժխտելի հրամանները, ճանապարհ էր ընկնում մինչև անգամ առանց տեսութեան մօրը։ Քարտուղարը պատուաւոր կերպով առաջնորդեց նորան մինչև կառքը։

«Ո՞ր ճանապարհով կը հրամայէք գնալ», հարց արեց ձիավարը, դէմքը դարձուցած դէպ ի կառքը։ — Իտալիայի ճանապարհով, — պատասխանեց իշխանաւորը. բայց այս խօսքը ասելու ժամանակ չ՚կարողացաւ բռնել իր յօգոցը, որ նման էր հեկեկալու։ Կառքը վազեց։ Պ. Բօդէնը պատուաւոր կերպով գլուխ տուեց և վերադարձաւ սառն և մերկ դահլիճը։

Այս մարդու դէմքը, գնացքը, բոլոր կերպարանքը թըվումէր բոլորովին փոխված. Նա որպէս թէ աճեցաւ։ Նա արդէն աւտոմատ չէր, կոյր հնազանդութենով առաջնորդված։ Դէմքի գծագրութիւնքը մինչև այժմ անախտ, կիսափակ աչքերը կենդանացան սատանայական խորամանգութենով. սարդոնիկեան ժպիտը ծռեց նորա չոր, գունաթափ շրթունքը. չար ուրախութենով լցվեցաւ նորա մեռելանման երեսը։ Նա նոյնպէս իր կարգով կանգնեցաւ գունդի առաջևը։ Նա ևս զննումէր նորան ինչպէս մի փոքր յառաջ նորա իշխանաւորը...։ Յետոյ խոնարհեցաւ գունդի վերայ, բռնեց նորան ձեռքերով, ուղղեց նորա վերայ իր հայեացքը ինչպէս զեռուն, յետոյ սկսեց իր մատներով շօշափել գունդի հարթ հաւասար մակերևոյթը, զարկեց իր տափակ և աղտոտ եղունգներով երեք տեղ, որ նշանակած էին մանր կարմիր խաչերով։ Այս կերպով ցոյց տալով քաղաքները, որ գտանվումէին զանազան կողմերում, նա բարձր ձայնով անուանեց նորանց զարհուրելի ծիծաղով. Լէյպցիգ... Բատավիա... Չարլզտօուն...։ Յետոյ յաւելացրեց. «այս բոլոր երեք քաղաքների մէջ, որ այսքան հեռի են միմեանցից, գտանվումեն մարդիկ, որոնք և չեն անգամ մտածում, թէ այս տեղից, այս անմարդաբնակ փողոցից, այս սենեակից նայումէին նոցա քամակից.... քննումէին նոցա

բոլոր շարժողութիւնը.... թէ այս տեղ յայտնի էին բոլոր նոցա ընթացքը, գործերը.... թէ այս տեղից ուղարկվումէին հրամաններ որ յարաբերումէին նոցա և պիտոյ է անպատճառ կատարվէին.... պատճառ գործը կապակից է օգուտների, որ սաստիկ ազդեցութիւն ունէին բոլոր Եւրոպայի վերայ.... բոլոր աշխարհի վերայ...: Բայց մի լաւ բաղդով մեր բարեկամքը ցրուած են ամենայն տեղ, և Լէյպցիգում, և Բատավիայում և Զարլզտոունում»:

Այս ծեր մարդը աղտոտ կերպարանքով, գունաթափ մեռելատիպ երեսով, որ, այսպէս ասել, սողումէր գունդի վերայ, երևումէր առաւել զարհուրելի քան թէ նորա իշխանաւորը, երբ նա հպարտ դէմքով և հրամայաբար ձեռքը դրեց երկրագունդի վերայ, որպէս թէ տիրելով նորան: Մինը նմանումէր արծուի, որ վերևից թռչումէ իւր զոհի վերայ. միւսը օձի, որ փաթաթումէ զոհը իւր օղերի մէջ: Մի քանի րոպէից յետոյ Պ. Ռօդէնը գնաց իւր սեղանի մօտ, ուրախ ուրախ շօշափելով ձեռքերը, և բանալիքի օգնութենով, որ մինչև անգամ յայտնի չէր և նորա իշխանաւորին, գրեց հետևեալ նամակը:

«Փարիզ. առաւօտեան ժամը 9 և ¾»:

«Նա գնաց, բայց երկմտեցաւ!!»

«Հրամանը ստացվեցաւ նոյն իսկ ժամանակը, երբ մեռանող մայրը գանչումէր նորան իւր մօտ. նորան գրել էին մինչև անգամ, թէ գնալովը կարող էր փրկել իւր մայրը: Հրամանը կարդալուց յետոյ նա բացագանչեց. չ'գնալ մօրս տեսութիւն!... այդ արդէն ծնողասպանութիւն է»:

«Այսու ամենայնիւ նա գնաց, բայց երկմտեցաւ»:

«Ես միշտ նայումեմ նորա քամակից»:

«Այս տողերը Հռոմ կը հասանեն նորա հետ մի ժամանակ»:

«Յ. Գ. Ասացէք Իշխան-կարդինալին, որ կարող է հաստատ յոյս ունենալ իմ վերայ. բայց որպէս զի նա ժրաջանութեամբ աշխատի իմ օգտի վերայ»:

Պ. Ռօդէնը ծալեց իւր նամակը, կնքեց և դրեց գրպանը:

Տասն ժամը զարկեց: Պ. Ռօդէնը առ հասարակ այս ժամումը նախաճաշիկ էր առնում:

Նա հաւաքեց իւր թղթերը, պահեց նորանց արկղի մէջ և բանալին առաւ իւր հետ. յետոյ հանդերձի թևերով յարդարեց իւր իւղոտ գլխարկը, վեր առեց բոլորովին կարկատանոտ հովանոցը և դուրս գնաց [1].........................:

---

1) Յիսուսեանների կարգադրութիւնքը և Պարոն Լիբրի մատենագրի պատուական և վստահ նամակները վկայ բերելուց յետոյ, մեր պարտականութիւն է յիշա-

Այն միջոցին երբ այս երկու մարդիկը իւրեանց մռայլոտ ապաստանարանի խորքումը որոգայթներ էին պատրաստում, որոնցով կամէին կապել մի երբեմն հալածական գերդաստանի եօթն ժառանգները.... մի խորհրդական, հրաշալի պաշտպան մտածումէր օգնել այս գերդաստանին, որպէս իւր սեպհական ազգակիցներին:

III.

ԹԱՓԱՌԱԿԱՆ ՀՐԷԱՅՆ:

Վայրենի.... և անապատ տեղ....

Բարձր բլուր, ծածկած կրաքարի ահագին բեկորներով, որոնց մէջ այս և այն տեղ երևումէն աշնան ազդեցութենից արդէն դեղնած տերևներով կաղնիներ և թխտենիներ. այս բարձր ծառերը նկարվումէն այն կարմիր փայլողութեան մէջ, որ արեգակը թողել էր արևմուտքում, որպէս հրայրեացքի լուսաւորութիւն:

Բլրից աչքի տակ ընկնումէ խոր, ստուերապատ, արգաւանդ հովիտ, որ մինչև կէսը ծածկած էր երեկոյեան թեթև մառախղով: Մռայլոտ մարգերը, թաւ ծառերի բազմութիւնը, դաշտերը, որ զրկված էին արդէն հասունացած հունձերից, այս բոլորը միացած կազմումէն մի միօրինակ և մռայլոտ տեսարան, բոլորովին հակառակ երկնքի կապտագոյն թափանցկութեանը:

Այս հովտի խորքից տեղ տեղ բարձրանումէն սև սալից կամ գորշ քարերից շինած զանգակատների սուր գագաթները: Այն տեղ հիւսիսից արևմուտք ընկած երկայն ճանապարհի վերայ շինած են աւաններ, գեղեր:

Այդ հանգստեան ժամ էր, ժամ, երբ իւրաքանչիւր խրճթի պատուհանը լուսաւորվումէ գիւղական խարուկի պայծառ լուսովը և լուսաւոր երևումէ հեռուից մառախուղի և ծառերի տերևների միջով մինչ ծուխը յորձանքով դուրս գալով կամաց կամաց ցրվումէ օդի մէջ:

տակել նոյնպէս այնքան շատ համարձակ և բարեխիղճ գրուածք Յիսուսեանների ընկերութեան վերայ, որ նորումս հրատարակված են Պարոն Դիւպէն (երեցի) Միշլէ, Էդուարդ Քինէ, Ժենէն, կոմս դը-Սէն-Պրիեստ հեղինակների ձեռքով. մի բարձր և անկողմնապահ իմացականութեան հեղինակութիւնք, ուր գտանվումէին շատ զարմանալի կերպով մերկացուցած և խայտառակված այս կարգի տխուր մտաւոր հայեացքը: Մեք մեր անձը բաղդաւոր կը համարենք, որ կարողացել ենք մի քար յաւելացնել այն հզօր և ինչպէս յոյս ունինք տևողական ամբարտակի վերայ, որ այս ազնիւ սրտերը և այս ազնիւ հոգիքը բարձրացուցել են մի պիղծ և միշտ ահարկու հեղեղի առաջև:

Եւժէն Սիւ:

Բայց — զարմանալի բան — կը կարծես, թէ այս տեղում բոլոր խարոյկները մարած են և խրճիթները դատարկացած։ Առաւել զարմանալի, որ ամենայն զանգակատնից լսվումէ թաղման զանգահարութիւն...։ Բոլոր գործունէութիւնը, բոլոր շարժողութիւնը, բոլոր կեանքը թըվումէր թէ կենդրոնացած էին զանգակի տխուր ձայնի մէջ, որ լսվումէր և հեռի։

Եւ ահա այս աւանների մէջ, որ յառաջ խաւար էին, տեղ տեղ յայտնվումեն լուսաւոր կէտեր. բայց այս գիւղական ուրախ խարուկի պայծառ լոյսը չէ...։ Այս կարմրագոյն լոյսը առաւել նման է այն կրակին, որ վառումեն հովիւները և որ երևումէ երեկոյեան մառախղի միջից։ Բաց ի սորանից այդ լուսաւոր կէտերը հաստատ չեն մնում մի տեղ նոքա դանդաղ շարժումեն դէպ ի գեղերի գերեզմանատները։

Թաղման զանգահարութիւնը սաստկանումէ. օդը դողումէ զանգակի հարուածներից և հազիւ երբեմն հասանումեն մինչև բլուրի կատարը թաղման երգեցողութեան թոյլ ձայները։

Ի՞նչ պատճառով այդ տեղ շատ թաղում կայ։

Այդ ինչ ողբալի հովիտ է, ուր ուրախ երգերը, որ սովորաբար լսվումեն օրական աշխատութեան աւարտվելուց յետոյ, փոխանակվումեն թաղման երգեցողութենով, ուր երեկոյեան դադարը փոխանակվումէ յաւետենական հանգստութենով։ Աւաղ! մահացութիւնը այնքան արագ է, այնքան սաստիկ է, այնքան զարհուրելի է, որ հազիւ ատակ են լինում մեռելները թաղելու...։

Ցերեկով, յետ ձգրվող աշխատութիւնը կենդանի մնացողներին գանչումէ դէպ ի դաշտ. միմիայն երեկոյեան ժամանակ, վերադառնալով դաշտերից վաստակած օրական աշխատութենից, կարողանումեն նոքա այլապէս վարել երկիրը, ուր դրվումէին նոցա եղբարքը այնպէս ստէպ, որպէս սերմերը արօտադրած հողի մէջ։

Եւ միայն այս հովիտը չէ, որ ենթարկված է այս սարսափելի թշուառութեանը։

Անբաղդ տարիներում շատ կը գտնվէին գեղեր, կամ քաղաքներ և մինչև անգամ լայնատարած գաւառներ, ուր տան խարոյկը մարումէին և բնակութիւնքը դատարկանում, ինչպէս այս հովտի մէջ, ուր ուրախութիւնը փոխանակվումէր լացով և հեկեկանքով, խնջոյքների աղաղակը — թաղման զանգահարութենով. ուր մի օրում լաց են լինում շատ մեռելների վերայ և թաղումեն նորանց գիշերները կերոնների լուսով, որ ամենայն տեսանող սարսափեցնումէ։

Այդ անբաղդ տարիներում, սարսափելի թափառականը դան-

գաղ քայլերով անցաւ բեւեռից մինչև բեւեռ, Հնդկաստանի և Ասիայի խորքերից մինչև հիւսիսի սառոյցները. հիւսիսից մինչև ովկիանոսի եզերքը, որ լուանում է արևմտեան Եւրոպայի եզերքը...։

Այս Թափառականը, խորհրդական ինչպէս մահ, դանդաղ ինչպէս յաւիտենականութիւն, անողոքելի ինչպէս ճակատագիր, էր....

Խաւար!!

Զանգակների հնչիւնը, Թաղման երգեցողութեան ձայնը, դեռ ևս բարձրանումէին հովտի խորքից մինչև բլրի գագաթը, որպէս հսկայի ողբալի ձայն. կերոնների կարմիր լոյսը դեռ ևս երևումէր հեռուից երեկոյեան մառախուղի միջով։

Երեկոյեան վերջալոյսը դեռ ևս շարունակվումէր. սա մի զարմանալի ժամանակ է, երբ ամենայայտնի կերպարանքները ստանումեն անորոշ, անըմբռնելի, գերբնական գծագրութիւն։

Բայց աչա սարի այն քարոտ և հնչող գետնի վերայ լսվեցան դանդաղ, հաւասար և հաստատ քայլերու ձայներ.... սևացած ծառերի միջով անցաւ մի մարդ։

Բարձրահասակ էր նա, գնումէր գլուխը կախած. Նորա երեսը ազնիւ, հեզ և տխուր։ Նորա մինը միւսին խառնված յօնքերը անցանումէին մի քունքից դէպ ի միւսը, Թըվումէր Թէ նորա ճակատը կրումէր իւր վերայ չարաբաղդութեան ճակատագրական կնիքը։

Ինչպէս երևումէր, նա չէր լսում հեռուի այդքան Թաղման զանգակահարութեան ձայնը.... երկու օր նորանից յառաջ անցել էր նա այդ գիւղերից և այն ժամանակ Թագաւորումէր այն տեղ հանգստութիւն, երջանկութիւն, առողջութիւն, ուրախութիւն, բայց այժմ նորա անցանելուց յետոյ տարածվեցան այն տեղերում սուգ և ամայութիւն։

Բայց Թափառականը յառաջ էր գնում դարձեալ խորացած իւր մտածմունքների մէջ։

«փետրուարի տասն և երեքը կոխումէ», մտածումէր նա, մօտենումեն այն օրերը, երբ իմ սիրական քրոջ ժառանգները, մեր ցեղի վերջին շառաւիղքը պիտոյ է Փարիզ ժողովվին....

«Աւաղ! հարիւր յիսուն տարի սորանից յառաջ հալածանքը երրորդ անգամ ցրուեց բոլոր աշխարհի վերայ այն գերդաստանը, որի քամակից դարից դար հետևումէի ես քնքոյշ խնամարկութենով. տասն և ինն դարերի ընթացքում.... բոլոր գաղթականութենների, հալածանքների մէջ. հաւատի, կոչման, դրութեան և անունի փոփոխութեան մէջ»։

«Ո՞րքան մեծութիւն, անարգութիւն, անյայտութիւն, փայլ, տառապանք և փառք այդ ազգատոհմի մէջ, որ յառաջացած էր իմ սիրական քրոջից, խեղճ արհեստաւորի 1) քրոջից:

«Ո՞րքան յանցաւորութեամբ արատաւորվեցաւ նա, ո՞րքան բարեգործութեամբ փառաւորվեցաւ: Այդ գերդաստանի պատմութիւնը — է բոլոր մարդկութեան պատմութիւնը: Անցանելով ցեղից ցեղ աղքատի և հարստի, իմաստունի և յիմարի, երկչոտի և քաջի երակներից իմ քրոջ արիւնը մինչև այժմ պահպանվեցաւ: Եւ այս գերդաստանից.... ո՞րքան մարդ մնումէ այսօր»:

«Եօթն ժառանգ».

«Երկու որբք, հալածական հօր և հալածական մօր դստերք»:

«Աթոռից զրկված իշխան»:

«Խեղճ քարոզիչ քահանայ»:

«Մի հասարակ վիճակից մարդ»:

«Մատաղահաս երևելի և հարուստ օրիորդ»:

«Մի արհեստաւոր»:

«Եւ սոցա մէջ ահա կենդրոնանումեն, քաջութիւն և ցածութիւն, մեծութիւն, մեր ցեղի տառապանքը»:

«Եւ ճակատագիրը ցրուեց նորանց ամենայն տեղ.... Սիբիրիայում.... Հնդկաստանում.... Ամերիկայում.... և Ֆրանսիայում....:»

«Բնական ազդեցութիւնը յայտնումէ, երբ նորանցից մինը գտանվումէ վտանգի մէջ, այն ժամանակ ես գնումեմ հիւսիսից հարաւ, արևելքից արևմուտք, գնումեմ հասանելու նոցա. երեկ բևեռային սառուցների մէջ, այսօր բարեխառն գօտու մէջ, էգուց հասարակածի այրող երկնքի տակ. բայց աւա՜ղ. շատ անգամ, մինչ իմ ներկայութիւնը կարող էր փրկել նորանց, աներևոյթ ձեռքը հարկադրումէ ինձ երթալ, մրրիկը յափշտակումէ ինձ և.... գնա՜... գնա՜...: Բայց թոյլ տուր ինձ կատարել իմ գործը. գնա՜... Միայն մի ժամ.... կանգնիմ, դադարիմ. գնա՜...: Աւաղ, որոնց սիրումեմ ես գտանվումեն անդունդի բերանում.... գնա՜... գնա՜...:

---

1) Աւանդութիւնը ասումէ, թէ թափառական հրէայն էր մի Երուսաղեմացի աղքատ կօշկակար: Քրիստոս տանելով իւր խաչը արհեստաւորի տնի առաջևից խնդրումէ, որ թոյլ տայ մի րոպէ հանգստանալ նորա դրան մօտի քարի վերայ — գնա՜... գնա՜... — ասումէ նորան հրէայն լիբբ և անարգական կերպով. «Ու դու էլ գնաս մինչև դարձիս վերջինը», պատասխանումէ նորան Քրիստոսը խիստ և տխուր կերպով: Voir, pour plus de détails, l'éloquente et savante notice de M. Charles Magnin, placée en tête de la magnifique épopée *d'Ahasverus*, par M. Ed. Quinet.

«Ա՛հա իմ պատիժը. սարսափելի պատիժ է.... բայց իմ յանցանքը առաւել զարհուրելի էր: Ուշ բացվեցան աչքերս.... ուշ ճանաչեցի ես ապաշխարութիւն, ուշ հասկացայ ես սէրը դէպ ի մերձաւորը, ուշ վերջապէս խելամուտ եղայ Աստուածային խօսքերին, որ պիտոյ է օրէնք լինին ընդհանուր մարդկութեան համար»:

«Սիրեցէք միմեանց»:

«Զուր տեղը, այնքան դարերի մէջ, աշխատելով ներողութիւն գտանել, և, ոյժ և հաւատ ստանալով այդ Աստուածային խօսքերից, ես լցուցի կարեկցութենով և սիրով շատ սիրտ, որ լցուած էին յառաջուց բարկութեամբ և նախանձով, զուր տեղը բորբոքեցի ես հոգիներ հրաժարվիլ բռնութենից և անարդարութենից...: Ողորմութեան օրը դեռ չ՛հասաւ!...:

Եւ ինչպէս առաջին մարդը իւր պատուիրանազանցութենովը իւր յետնորդքը մատնեց դատապարտութեան, այսպէս ասումեն որ ես արհեստաւորս բոլոր արհեստաւորքը մատնեցի յաւիտենական տխրութեան և նոքա իմ յանցանքը քաւումեն, որովհետև նոքա միայն տասն և ութ դար դեռ ես չէին ազատված:

Տասն և ութ դարերի միջոցում հզօր և երջանիկ մարդիկը ասումեն այս մշակ ազգին.... այն, ինչ որ ես ասացի աղաչաւոր և չարչարված քրիստոսին, գնա՜!... գնա՜!...

Եւ այս ազգը խորտակված նեղութեններով ինչպէս նա, կրելով ծանր խաչը..., ասումէ ինչպէս նա դառն տխրութենով. ո՜հ խնայեցէք.... մի քանի րոպէ հանգստութիւն.... մեք վաստակած ենք....— գնա՜!!: Բայց եթէ մեռանինք մեք տառապանքից ինչ կըլինի մեր փոքր երեխաների և ծեր ծնողների վիճակը: — գնա՜!... գնա՜!... Եւ այսքան դարերի միջոցում նոքա և ես գնումենք և չարչարվումենք և ո՛չ մի մարդասէր ձայն չէ ասել մեզ թէ բաւական էր!!!:

Աւա՛ղ, այսպէս է իմ պատուհասը. անհաշտելի սարսափելի և կրկնապատիկ է այս պատուհասը...:

Ես չարչարվումեմ մարդկութեան համար, չարչարվումեմ տեսանելով ողորմելի՜ ազգեր, որ միշտ և հանապազ անձնատուր էին անշահ և կոշտ աշխատանքների — չարչարվումեմ իմայնոց համար, խեղճ, թափառական, ես չեմ կարող միշտ օգնութիւն հասանել իմ սիրական քրոջ ժառանգներին: Բայց երբ վիշտը առաւելանումէ քան թէ իմ կարողութիւնը.... երբ ես զգումեմ, որ իմայինք գտանվումեն վտանգի մէջ, այն ժամանակ իմ միտքը թռչելով անցանելով աշխարհներից դիմումէ դէպ ի այն կինը.... այն թագաւորական օրի-

որդը [1]) որ, ինչպէս ես, գնումէ.... գնումէ, և պիտոյ է գնայ մինչև դարերի վերջը....

Հարիւր տարին մի անգամ, [illegible] [illegible] մեք հանդիպումենք ինչպէս երկու մոլորակներ իւրեանց յաւիտենական ընթացքում, և այս տեսաւորութենից յետոյ, որ լի է տխուր և ծանր յիշատակութեններով և աննկարագրելի դառնութեամբ, մեք մոլորական աստղերս շարունակումենք մեր ճանապարհը:

Նու այս կինը, որ միմիայն է աշխարհի երեսին ինձ նման, ներկայ է լինում իւրաքանչիւր դարու վերջանալուն, արտաբերելով ճակատագրական բառը, Այլ ևս! այդ կնոջ միտքը համաձայն է իմ մտքին...: Նա միմիայն բաժանորդ է իմ վարհուրելի վիճակին, նա կամեցաւ մասնակից լինել և միմիայն պաշտպանութեանը, որ մխիթարումէ ինձ այսքան դարերի մէջ...: Նա սիրումէ նոյնպէս իմ սիրական քրոջ ժառանգները, նա, նոյնպէս, պաշտպանումէ նորանց: Նա, նորանց համար նոյնպէս, հիւսիսից հարաւ, արևելքից արևմուտք, գնումէ գալիս է...: Բայց աւաղ! անտեսանելի աջը և նորան քշումէ յառաջ, մրրիկը և նորան տանումէ.... Գնա!...: Բայց թոյլ տուր ինձ կատարել միայն իմ գործը ասումէ նա.... Գնա!...: Միայն մի ժամ.... մի ժամ դադարիմ.... Գնա!...: Նոքա, որոնց սիրումեմ ես գտնվումեն անդունդքի բերանում.... Գնա!... Գնա!...:»

Այն միջոցին, երբ այս մարդը գնումէր սարի վերայ խորացած մտածմունքի մէջ, քամին սկսեց սաստկանալ, փայլակները փառվումէին երկնքում, մրրկի խուլ և շարունակ սուլելը գուշակումէր կայծակի մօտենալը: Յանկարծ այս մարդը, որ դատապարտութիւն և անէծք էր կրում իւր վերայ, այս մարդը, որ չէր կարող ո՛չ լալ և ո՛չ ժպտիլ.... ցնցվեցաւ: Ֆիզիկական ցաւ անծանօթ էր նորան, բայց այս միջոցին յանկարծ ձեռքը դրեց սրտին, որպէս թէ ստացել էր սաստիկ հարուած:

— Ո՛հ, — գանչեց, — ես զգումեմ...: Այս ժամումը իմ սիրական քրոջ ժառանգներից շատերը չարչարվումեն և ընկնումեն մեծ վտանգների մէջ.... ոմանք Հնդկաստանում.... ոմանք Ամերիկայում.... ոմանք այս տեղ Գերմանիայում...: Պատերազմը նորոգվումէ.... գարշելի ախտերը դարձեալ եռ եկան...: Հերովդիադա, դու, ինձ նման, դատապարտված ես անէծքով, ինձ նման գնումես աշխարհի

---

1) Մի շատ փոքր յայտնի աւանդութեան հիման վերայ, որ ստացել ենք մեք, շատ բարեացակամ Պարոն Մօրից'ը, որ է գլխաւոր օգնական գրապետի ինստիտուտի, Հերոդիադա դատապարտվեցաւ այն պատժով, որ մինչև վերջին աւհեղ դատաստանը թափառի, որովհետև նա պահանջել էր Յովհաննէս մկրտչի գլուխը:

վերայ․․․։ Հերովդիադա, օգնիր ինձ պաշտպանել նորանց․․․։ Դու այժմ Ամերիկայի անապատներումը ես․․․․ Թո՛ղ Թուչի հասանի դէպ ի քեզ իմ աղաչանքը․․․ Թո՛ղ հասանենք մեք իւր ժամանակին!․․․։

Այս տեղ մի կարգից դուրս (գերբնական) բան կատարվեցաւ։

Գիշերը կոխեց արդէն։ Այս մարդը դարձաւ, որ աւելի շուտով գնա դէպ ի արեւմուտք, բայց աներեւոյթ զօրութիւնը բռնեց նորան և ուղղեց դէպ ի հակառակ կողմը․․․։ Այս միջոցին մրրիկը կատաղեցաւ իւր բոլոր սարսափելի կարողութեամբ։ Մինը այն մրրիկներից, որ հանումեն ծառերը արմատով և դղրդումեն ապառաժները, հասաւ կայծակի դղրդիւնի հետ միասին։

Մրրկի սասանեցուցիչ գոչիւնի, փայլակի փայլողութեան մէջ սարի զառիվայրումը երեւումէր մի մարդ սև գծով ճակատի վերայ․ նա գնումէր շտապելով քարերի վերայով ծառերի միջից, որ խոնարհել էին մրրկի ուժի տակ։ Նա գնումէր, բայց այժմ ոչ դանդաղ քայլերով հանդիստ, հաստատ ինչպէս յառաջ այլ արագ և անհաւասար քայլերով, որպէս թէ մի անյաղթելի զօրութիւն քարշումէր նորան հակառակ նորա կամքին կամ թէ իւր ընթացքումը քշէր տանէր սարսափելի փոթորիկը։

Զուր տեղը բարձրացնումէր այս մարդը դէպ ի երկինք իւր աղաչաւոր ձեռքերը․ նա անյայտացաւ շուտով գիշերվայ խաւարի և մրրկի սարսափելի աղաղակի մէջ։

ԵՐՐՈՐԴ ՄԱՍՆ

ԽԵՂԴՈՂՆԵՐԸ

I.

ԱԺՈՒՊԱ:

Այն միջոցին, մինչ պ. Ռօդէնը ուղարկումէր իւր նամակները աշխարհի ամենայն կողմը..., Փարիզի Միջ-Ուրգինեան փողոցի խորքերից. այն միջոցին, երբ Դագօբեռ և գեներալ Սիմոնի դստերքը Սպիտակ Բազէի պանդոկից փախչելուց յետոյ դրվեցան Լէյպցիգի բանդը, նոյն այդ միջոցին կամ կարելի է ասել այդ իրողութիւններին հետ զուգահեռաբար, այլ անցքեր, որ շատ բան էին նշանակում այս մարդերի համար, կատարվումէին աշխարհի միւս մասնումը, Ասիայի խորքում, Եավա կղզու մէջ, Բատավիա քաղաքի մօտ, ուր իւր հաստատ կացութիւնը ունէր Պարոն Ժօսիւէ-Վան-Դաեօլը, Պարոն Ռօդէնի գործակալը:

Եավա!! այդ մի շռայլ և կորստական աշխարհ է, այն տեղ ամենագեղեցիկ ծաղիկները ծառայումեն զզուելի զեռուններին որպէս բնակարան, հրապուրիչ պտուղները ունին իւրեանց մէջ ամենասաստիկ թոյն. այն տեղ բուսանումեն ծառեր, որոնց գրաւող զովութիւնը մարդ է սպանում. այն տեղ Վամպիրը (ահագին չղջիկը) ծծումէ իւր անբաղդ զոհերի արիւնը, սաստկացնելով նոցա քունը զովութենով և անուշահոտութենով իւր թևերի, որով ներգործումէ առաւել յաջող քան թէ ամենայն հովարար:

1831 Թուականի Հոկտեմբերը վերջանումէր: կէս օր էր, այս համարեա թէ մահաբեր ժամ է այն մարդու համար, որ յանդգնաբար ենթարկվել էր այրող արևի ներգործութեանը, որ մուգ կապոյտ երկնակամարում թափումէ իւր պարզ լուսի հեղեղքը:

Աժուպայն, մի տեսակ տաղաւար փախաթի եղեգներից հաստ բամբուկեան գաւազանների վերայ, որոնք հաստատապէս ամրացուցած էին գետնի մէջ, երևումէ կապտագոյն ստուերների միջից, որ պարզ կանաչ յախճապակու նման տերևներով ծառերը ձգումէին. այս ծառերը, որ ստանումէին զանազան ձևեր, երբեմն բոլորականումեն կամարի նման, երբեմն ցցվումեն դէպ ի վեր որպէս գեղարդ, երբեմն տարածվումեն հովանոցի նման. բայց նոցա տերևքը այնպէս թանձր են, այնպէս հիւսվել են միմեանց հետ, որ մինչև անգամ անձրևը չէ կարող անցանել այս ծառակամարից:

Գետինը, չնայելով դժոխային ջերմութեանը, միշտ ճախնային անյայտանումէ բաղեղի խիտ հիւսուածի, վայրենի խոտի և թանձր եղեգնաբոյսի տակերում. այս բոլորը աճումեն անհաւատալի զօրութեամբ, փայլումեն կուրացուցիչ թարմութեամբ և հասանումեն համարեա թէ աժուպայի կատարին, որ ծածկվումէր այս կանաչեղէնների տակ, որպէս թռչունի բուն արօտների մէջ:

Ոչինչ առաւել խեղդողական չէ կարող լինել այս օդից, որ լցուած է եփած ջրի շոգիների նման խոնաւ արտաշնչութեններով, սաստիկ և ամենաթափանցիկ հոտերով. որովհետև կինամոնի, կոճապղպեղի ծառերը, և այլ անուշահոտ բուսականները միասին այն ծառերի և խոտերի հետ լցնումեն օդը սուր անուշահոտութեամբ:

Աժուպայն վերևից ծածկած է բանանի լայն տերևներով. մի ծայրումը թողած է քառակուսի ծակ, որ ծառայումէ պատուհանի տեղ և որ շատ անգամ հիւսված է լինում բուսական թելերով, որ չկարողանան մտանել աժուպայի մէջ թունաւոր միջատները և զեռունները:

Աժուպայի ծածկոցին հպաւորվումէ չորացած ծառի միջնաճիւղը, որ բարձրացած էր այն խիտ կանաչների միջից. այս միջնաճիւղը դեռ ևս չէ վայր ընկած, բայց արդէն բաւական ծռվել է. նորա ամեն մի սև, մամռապատ և ճաքճքած կաշու ճեղքուածքներից դուրս է գալիս մի օտարոտի համարեա թէ երևակայական ծաղիկ, թեթև ինչպէս թիթեռնակի թև, նկարված նոյնպիսի պարզ կարմիր գունով, նոյնպիսի թաւիշեայ, սև ծաղիկով, մտացածին թռչունների ձևերը, որոնք երբեմն երևումեն երազում առաւել օտարոտի և զարմանալի չեն քան թէ այս բուսականքը, թեւաւոր ծաղիկները, որ թրվումեն, թէ կամէին ահա թռչել իւրեանց բարակ և տերևազուրկ ծղօտների

վերայից, երկայն, ձգական, բոլորակացած հնդկաթզենիքը սողունի նման շրջապատումեն ծառի այս միջնաճիւղը, և կախումեն նորա վերայ իւրեանց կանաչ շառաւիղքը լցուած ծաղիկների լայն արծաթագոյն բաժակներով, որ ներսի կողմից ստուերագրած էին պարզ կարմիր գունով. այս ծաղիկները արձակումեն վանիլի սաստիկ հոտ։

Փոքրիկ օձը, կարմիր աղիւսագոյն, հաստութեամբ որպէս մեծ գրիչ, հինգ բթաչափ երկայնութենով դուրս է հանում իւր տափակ գլուխը այն անուշահոտ աչագին ծաղկի միջից, ուր գալարված թաք էր կացել....

Աժուպայի մէջ մի երիտասարդ մարդ, պառկած փսիաթի վերայ, շատ խոր քնումէ։ Նորա երեսի թափանձիկ և ոսկեայ-դեղին գունին նայելով կարելի էր համարել նորան պղնձեայ արձան, որի վերայ խաղումէր արևի ճառագայթը. Նորա դրութիւնը պարզ և շնորհալի. Նորա ծալած աջ ձեռքը պահումէ նորա մի փոքր բարձրացուցած և դէպ ի մի կողմ ծռած գլուխը. Նորա լայն սպիտակ բեհեզեայ և կախված թևերով հանդերձի տակից երևումէին նորա կուրծքը և ձեռքերը արժանի Անտինոյի. մարմարոնը առաւել պինդ, առաւել հարթ հաւասար չէ քան թէ նորա կաշին, որի ոսկու գոյնը որոշակի բաժանվումէ նորա սպիտակ բեհեզեայ հալաւից։ Նորա լայն և դուրս ընկած կուրծքի վերայ երևումէ խոր սպի։

Այս վէրքը, պատճառված կրակ ցանող զէնքից, ստացաւ նա պաշտպանելով գեներալ Սիմոնը, Բօզի և Բլանշի հայրը։ Նորա վզից կախած է փոքրիկ մեդալիոն, նոյնպէս, ինչպէս որբերը ունին։

Սա Հնդկացի Ճայլմա՛ն է։

Նորա դէմքի գծագրութիւնը շատ ազնիւ և վայելուչ. Նորա կապոյտ սևագոյն մազերը, բաժանված ճակատի վերայով, արձակված են ուսերի վերայ, կակուղ բայց ոչ խոպոպած գանգուրներով. Նորա բարակ յօնքերը նոյնպէս սև ինչպէս աչքի թերթերուկները, որ ստուեր են ձգում նորա անմազ թշերի վերայ. Նորա պայծառ կարմիր շրթունքը կիսաբաց. Նա ծանր է շնչում. Նորա քունը վաստակեցուցիչ, անհանգիստ. պատճառ, ջերմութիւնը առաւել և առաւել դառնումէ խեղդողական։

Տաղաւարի դրսումը թագաւորումէ խոր լռութիւն, չէ լսվում և հանդարտ հողմի ամենափոքր շարժողութիւնը։ Բայց, մի քանի րոպէից յետոյ, չնայելով այս խորին խաղաղութեան վերայ, աչագին վայրենի խոտերը, որ ծածկումէին գետինը, համարեա թէ աննկատելի կերպով շարժվեցան, որպէս թէ մի սողացող մարմին շարժեցնումէ նոցա ծղօտների ստորին մասները։ Երբեմն երբեմն այս թոյլ շարժողութիւնը յանկարծ դադարումէր և շուտով թագաւորումէր

դարձեալ անշարժութիւն: Այս կերպով, շարժողութիւնը երբեմն դադարումէր և երբեմն նորոգվում. յետոյ ո՛չ շատ հեռի ծառի չոր միջնաճիւղից, եղեգների միջից դուրս երևեցաւ մարդու գլուխ:

Այս մարդու զարհուրելի երեսը կանաչ-բրօնզագոյն. երկայն սև մազերը հիւսած գլխի չորս բոլորը. աչքերը վառվումէին մի վայրենի կրակով. Նորա դէմքի գծագրութիւնը, նշանաւոր, մտացի և կատաղի: Նա շունչը բռնելով մի րոպէ մնաց անշարժ. յետոյ սողաց ձեռքերի և ծնկերի վերայ հեռացուցանելով տերևները այնպէս հանդարտ, որ չէր լսվում և ամենաթոյլ աղաղակ. Նա յառաջ երթալով դանդաղ և զգուշութեամբ հասաւ ծռված ծառի միջնաճիւղին, որի կատարը համարեա՛ թէ հպաւորվումէր աժուպայի ծածկոցին:

Այս մարդը, Մալայեցին, որ պատկանումէր խեղդողների աղանդին դարձեալ սկսեց ականջ դնել և յետոյ համարեա թէ բոլորովին դուրս եկաւ թփերի միջից. հագուստ ասացեալը չկար այս մարդու վերայ բաց ի ճերմակ, բամբակեղէն, կարճ վարտիկից, որ ձիգ քարշած էր նորա գօտկատեղումը, պայծառ պիսակ գօտիով. Թանձր իւղը ծածկումէր նորա բրօնզագոյն, ձգական և ջլուտ անդամքը:

Մալայեցին, դուրս գալով բոլորովին զուգահեռաբար ահագին միջնաճիւղին տաղաւարի հակառակ կողմից, և այս կերպով բոլորովին ծածկվելով չորացած ծառի հաստութեան քամակում, որ պատած էր բաղեղանման բուսով, հանդարտութեամբ և ամենայն զգուշութեամբ վեր ելաւ մի զարմանալի համբերութենով: Այս մարդը, իւր մարմնի շարժողութենովը և ձգականութենովը, իւր ուժովը, որ զարհուրելի էր, նմանումէր վագրի, որ խորամանգութեամբ և գաղտուկ մօտենումէ իւր զոհին: Աննկատելի կերպով հասանելով միջնաճիւղի այն բաժնին, որ ծռված համարեա թէ կպչումէր տաղաւարի ծածկոցին, նա գտանվումէր արդէն մի ոտնաչափ հեռի պատուհանից: Զգուշութեամբ գլուխը երկարացնելով, նա զննեց աժուպայի ներսը, և աշխատումէր հնար գտանել ներս մտանելու:

Տեսանելով Ճայլմա՛ն խոր քնի մէջ խեղդողի աչքերը առաւել ևս փայլատակեցան, ցնցողական շարժողութիւնը կամ, լաւ ասել համր և կատաղի ծիծաղը, վեր բարձրացնելով նորա շրթունքի անկիւնները մինչև թշերի վերին մասը բացեց երկու կարգ եռանկիւնիներով վերջացած ատամները, որ նման էին սղոցի ատամների և ներկած փայլուն սև ներկով:

Ճայլմա՛ն այնպէս մօտ էր պառկած դուռին, (որ դուրսից ներս էր բացվում) որ եթէ մի մարդ աշխատէր դուռը բանալ նա իսկոյն պիտոյ է զարթէր:

Խնդդողը, ծառովը ծածկված, կամէր մի լաւ զննել աժուպայի ներսը, մի քանի անգամ դարձեալ նայեցաւ, թեթև թիկնը տալով ծակի շրջանակին, որ պատուհանի տեղ էր ծառայում. այս բանը շարժեցրեց հնդկաթզենու մեծ ծաղիկը, որի մէջ թաքնված էր օձը. սա դուրս յարձակվեցաւ և նոյն րոպէին փաթաթվեցաւ խնդդողի ձեռքի թաթին:

Ցաւից թէ անզգուշութենից, նա արձակեց մի թոյլ ձայն.... և յետ քարշվեցաւ դարձեալ բռնած մնալով ծառը, և նոյն իսկ րոպէին նկատեց, որ Ճայլմա՛ն շարժեցաւ:

Արդարև, երիտասարդ հնդկացին չփոխելով իւր շնորհալի դրութիւնը կիսով չափ բացեց աչքերը, դարձուց գլուխը մի փոքր այն կողմը ուր պատուհանն էր և խորը օդ ներս շնչեց. պատճառ ջերմութիւնը կենդրոնացած այս կանաչեղէն թանձր կամարի տակ համարեա թէ անտանելի էր:

Նոյն իսկ րոպէին երբ Ճայլմա՛ն շարժեցաւ ծառի քամակից լսվեցաւ սուր, հնչող և ընդհատական ձայն, որպէս արձակում է դրախտահաւը բարձրանալով օդի մէջ, ձայն, նման փասիանի ձայնի: Այս ձայնը շուտով կրկնվեցաւ, բայց առաւել թոյլ, որպէս թէ այդ թռչունը թռել էր: Ճայլմա՛ն կարծելով թէ հասկացել էր աղաղակի պատճառը, որ զարթուցել էր իւրեան, մի փոքր պարզեց ձեռքը, որի վերայ հանգչում էր նորա գլուխը և դարձեալ քնեց, համարեա թէ չփոխելով իւր դրութիւնը:

Մի քանի րոպէ այս անապատի մէջ դարձեալ թագաւորեց խոր լռութիւն և ամենայն ինչ անշարժացաւ:

Խնդդողը թռչունի ձայնի արուեստական նմանաձայնութեամբ ուղղեց իւր անզգոյշ բացագանչութիւնը, որ չկարողացաւ պահել մինչ օձը խայթեց նորա ձեռքը:

Նա, համարելով թէ Ճայլմա՛ն քնեց, դարձեալ նայեցաւ աժուպայի ներսը և արդարև տեսաւ, որ երիտասարդ հնդկացին քնում է խոր քնով:

Այն ժամանակը Մալայեցին առաջվայ զգուշութեամբը ցած իջաւ ծառից, թէ և նորա օձի խածած ձախ ձեռքը բաւական սաստիկ ուռել էր, և անյայտացաւ եղեգնաբոյսերի մէջ:

Նոյն այս րոպէին հեռուից լսվեցաւ միակերպ և վհատ երգեցողութեան ձայն: Խնդդողը վեր բարձրացաւ և սկսեց ուշադրութեամբ ականջ դնել. Նորա երեսի վերայ նկարագրեցաւ զարմանք և գազանական կատաղութիւն: Երգեցողութիւնը լսվում էր առաւել մօտ դէպ ի տաղաւարը: Մի քանի վայրկեանից յետոյ երևեցաւ Հնդկացին, որ ուղղակի գալիս էր դէպ ի այն տեղը, ուր թաքնված էր խնդդողը:

Այն ժամանակ Մալայեցին առաւ երկայն և բարակ չուանը, որ փաթաթած էր մէջքին. չուանի մի ծայրումը ամրացուցած էր հաւի հաւկթի մեծութեամբ և համարեա թէ նոյն ձևով արճիճ։ Այս չուանի միւս ծայրը ամուր փաթաթելով աջ ձեռքին, խեղդողը դարձեալ սկսեց ականջ դնել. յետոյ ծածկվելով բարձրահասակ խոտերի մէջ, սողաց Հնդկացու առաջ, որ կամաց կամաց գալիս էր չ՛կտրելով իւր հանդարտ և վհատ երգը։

Սա մի պատանի տղայ էր, ոչ աւելի քան թէ քսան տարեկան, ճայլմայի ստրուկը. նորա երեսը բրօնզագոյն. պիսակ գօտին փաթաթած էր մէջքին նորա կապոյտ բամբակեղէն հանդերձի վերայով. գլուխը հագած էր ո՛չ շատ մեծ կարմիր չալմա. ականջներումը և ձեռքերումը արծաթի օղեր։ Նա նամակ էր տանում իւր պարոնին, որ, ցերեկվայ սաստիկ ջերմութեան ժամանակ, սովորաբար հանգչումէր ածուպայի մէջ, որ բաւական հեռի էր նորա տնից։

Հասանելով այն տեղ, ուր ճանապարհը երկու էր բաժանվում, նա առանց մի րոպէ ևս ուշանալու գնաց այն ճանապարհով, որ տանումէր դէպ ի տաղաւարը, և գտնվումէր արդէն այսպէս ո՛չ աւելի քան թէ քառասուն քայլ հեռի։

Նավայեան այն ահագին թիթեռնակներից մինը, որոնց բացած թևերը վեց կամ ութն բթաչափ երկայնութիւն ունին և զարդարած են երկու կապոյտ գծերով երկնագոյն տեղի վերայ, թռչոտումէր մի տերևից դէպ ի միւս տերև և վերջապէս նստաւ անուշահոտ թփի վերայ ոչ շատ հեռի պատանի Հնդկացուց։ Պատանին դադարեց երգելուց, կանգնեցաւ, զգուշութեամբ յառաջ-շարժեց նախ ոտքը, յետոյ ձեռքը.... և բռնեց թիթեռնակը։

Յանկարծ նորա առաջև երևեցաւ խեղդողի սարսափելի երեսը. խեղճ ստրուկը լսեց մի սուլելու ձայն, զգաց, որ չուանը ձգած աներևակայելի ուժով և արագութեամբ երեք անգամ փաթաթվեցաւ նորա վզին, և արճիճը սաստիկ զարկեց նորա ծոծրակին։

Յարձակումը այնպէս անակնկալ եղաւ, այնպէս արագ, որ ճայլմայի ծառան չ՛կարողացաւ մինչև անգամ կանչել կամ հեկեկանք արձակել։

Նա շարժվեցաւ.... խեղդողը սաստիկ քարշեց չուանը...։

Հնդկացու բրօնզագոյն երեսը շուտով դարձաւ մոյգ լերդագոյն, և ընկաւ ծնկի վերայ ձեռքերը շարժելով։ Խեղդողը դրեց նորան գետնին, քարշեց չուանը այնպէս սաստիկ, որ արիւնը դուրս ցայտեց նորա զոհի վզից.... Հնդկացին կատարեց մի քանի ցնցողական շարժողութիւն և ահա ամենայն ինչ կատարված էր...։

Այս կարճ բայց սաստիկ պատերազմի միջոցում մահի հետ, մար-

դասպանը ծնկի վերայ ընկած իւր անբաղդ զոհի առաջևը քննումէր նորա և ամենափոքր շարժողութիւնը, ուղղումէր իւր բոցավառ անշարժ աչքերը և ինչպէս երևումէր ընկած էր մի գաղանական զուարճութեան մէջ. . . . Նորա պինչքը լայնանումէին, երակները քունքերի և վզի վերայ լարվեցան և նոյն իսկ սարսափելի ծիծաղը, որ ծռեց նորա շրթունքը երբ նա տեսել էր քնած Ճայլմա՛ն, դարձեալ բացեց նորա սև և սուր ատամները, որոնք բաղխումէին մինը միւսին ծնօտի ջլային դողոցից։

Բայց շուտով դրեց նա իւր ձեռքերը շուտ բարձրացող կուրծքի վերայ, կախեց գլուխը և հանդարտ ասումէր մի բան, որ նման էր աղօթքի. . . . յետոյ դարձեալ գաղանաբար սկսեց նայել դիակի վերայ. . . ։

Այս մարդու արիւնածարաւ, վայրենի հայեացքը առաւել ահարկու և սարսափելի էր քան թէ բորենու և վագրի հայեացքը, երբ նոքա, պատրաստվելով գիշատել իւրեանց աւարը, զուարճանումեն նոցա չարչարանքի վերայ նստելով նոցա մօտ. . . ։

Բայց յիշելով, որ իւր գործը դեռ չէ աւարտված, նա ցաւելով բաժանվեցաւ այս իւր համար քաղցր տեսարանից. հանեց Հնդկացու վզից իւր չուանը, փաթաթեց իւր գոտին, հեռի տարաւ ճանապարհից մեռած մարմինը, և առանց հանելու արծաթի օղերը, ծածկեց նորան թանձր եղեգնաբոյսերի մէջ։

Յետոյ փորի և ծնկերի վերայ դարձեալ սողաց դէպ ի Ճայլայի տաղաւարը, չինած փսիաթից և ամրացուցած բամբուկեայ գաւազանների վերայ։

Մի քանի ժամանակ խեղդողը ականջ էր դնում, հանեց գոտիից դանակը, որ փաթաթած էր բանանեան տերևի մէջ և կտրեց փսիաթը երեք ոտնաչափ տարածութենով։ Այս այնպէս յաջողակութեամբ կատարվեցաւ և այնպիսի սուր դանակով, որ ալմասի թեթև ձայնը ապակու վերայ առաւել լսելի կարող էր լինել. . . ։

Տեսանելով այս ծակից, որ Ճայլմա՛ն ինչպէս և յառաջ քնած էր շատ խորը, խեղդողը անհաւատալի յանդգնութեամբ մտաւ աժուպայի մէջ։

II.

ԴՐՈՇՄԵԼԸ։

Երկինքը, յառաջ թափանցիկ-կապտագոյն, փոքր առ փոքր դարձաւ գորշ-կանաչագոյն և արևը ծածկվեցաւ կարմրագոյն մգով։

Այս զարհուրելի լոյսը տալիս էր ամենայն առարկայի մի օտարոտի գոյն, որպէս թէ նայումէիր կարմիր-պղնձագոյն ապակու միջով։

Այն կողմերումը այս երեւոյթը ջերմութեան սաստկանալու ժամանակ միշտ կայծակ է գուշակում։ Երբեմն երբեմն տարածվումէր օդի մէջ ծծմբային հոտ.... տերեւները թեթեւ շարժված էլեկտրական հոսանքով դողդողումէին իրեանց ծղօտների վերայ.... յետոյ դարձեալ տիրումէր առաջվայ լռութիւնը եւ մեռելական անշարժութիւնը։ Բորբոքված օդի ծանրութիւնը լցված սուր անուշահոտութեններով լինումէր անտանելի. քրտինքը խոշոր կաթիլներով դուրս էր երեւում Ճայլմայի Ճակատի վերայ, որ քնումէր սպառնացուցիչ քնով.... այս հանգստանալ չէր նորա համար, այլ ծանր թուլութիւն։

Խեղդողը սողաց ինչպէս զեռուն աժուպայի մէջ, հասաւ մինչեւ փսիաթը, որի վերայ պառկած էր Ճայլմա՛ն, եւ նստաւ նորա մօտ սեղմված, աշխատելով որքան կարելի է փոքր տեղ բռնել։ Այս տեղ սկսվեցաւ մի տեսարան, որ զարհուրելի էր իւր խորհրդականութեամբը եւ խոր լռութեամբը։ Ճայլմայի կեանքը կախված էր խեղդողի կամքից.... սա գուճ նկած, թիկնը տուած ծնկերին եւ ձեռքերին, վիզը երկարացուցած, անշարժ նայումէր լայնացած բիբերով, ինչպէս գիշատող գազան, որ պահապան է նստում իւր աւարի մօտ.... միայն ծնօտների թեթեւ, ցնցողական դողոցը քարշ-քարշումէր նորա բրօնզեայ երեսը։

Բայց շուտով նորա զզուելի դէմքի վերայ երեւեցաւ սաստիկ պատերազմ նորա հոգու մէջ. ծարաւը.... սպանութեան ախտը, որ բորբոքված էր մի փոքր յառաջ սորուկի սպանութեամբը, պատերազմումէր նորա պարտականութեան հետ...։ Նորան արգելված էր դաւաճանել Ճայլմայի կեանքը, թէ եւ խորհուրդը, մտադրութիւնը, որ բերել էր նորան աժուպայի մէջ, մահից աւելի սարսափելի էր իշխանի համար։ Խեղդողը, որի հայեացքը բորբոքվեցաւ գազանական կատաղութեամբ, թիկնը տալով մի միայն ձախ ձեռքին, աջովը երկու անգամ յափշտակեց մէջքի չուանը.... եւ երկու անգամ դարձեալ թողեց ձեռքից, մարդասպանութեան ցանկութիւնը, հնազանդվումէր հրամայող կամքին, որին սովորել էր Մալայեցին հնազանդվիլ։

Երեւի թէ նորա մարդասպանութեան ախտը հասանումէր մինչեւ խելագարութիւն, պատճառ, այս երկմտութեան միջոցին, կորուսանումէր նա թանգագին ժամանակը։ Ճայլմա՛ն ամենայն րոպէ կարող էր զարթել. իսկ նա հռչակված էր իւր ուժովը, յաջողաշարժութենովը եւ անվախութենովը. մինչեւ անգամ առանց զէնքի եւս, նա խեղդողի համար զարհուրելի թշնամի կարող էր լինել։ Վերջապէս Մալայեցին սրտապնդեց, եւ թաքուցանելով սրտումը ափսոսանքի յո-

գոյը, սկսեց պատրաստվիլ իւր գործի համար, որ ուրիշ ամենայն մարդու համար ամենևին անկարելի էր։

Երեսը դարձուցած ձախ կողմը, Ճայլմա՛ն պառկած էր գլուխը դրած ծալած ձեռքի վերայ. նախ և յառաջ հարկաւոր էր առանց զարթեցնելու նորան հարկադրել երեսը դարցուցանել աջ կողմը, այս ինքն դէպ ի աժուպայի դուռը, այն պատճառով, որ թէ զարթէր, նորա առաջին հայեացքը չհանդիպէր խեղդողին, որ պիտոյ էր դեռ ևս մի քանի րոպէ մնար աժուպայի մէջ իւր մտադրութիւնը կատարելու համար։

Երկինքը առաւել և առաւել թխպումէր. ջերմութիւնը հասանումէր ամենաբարձր աստիճանի. ամենայն ինչ տրամադրումէր Ճայլմային դէպ ի թուլութիւն և յաջողումէր խեղդողին.

Խեղդողը ելաւ ծնկի վերայ և իւր ձգական և իւղ քսած մատերի ծայրովը սկսեց շփել Ճայլմայի ճակատը, քունքերը և թերթերունկները, բայց այնպէս քնքուշ, որ հպաւորութիւնը համարեա թէ անզգալի էր լինում։

Այս մագնիսացնելու առանձին կերպը շարունակվեցաւ մի քանի վայրկեան. քրտինքը առատութեամբ դուրս հոսեց Ճայլմայի ճակատի վերայ. ՛քնած իշխանը դուրս արձակեց մի խուլ յոգոց. յետոյ նորա երեսի մկանները երկու երեք անգամ ցնցվեցան. պատճառ այս խըտտղոցը, թէ և իւր թեթևութեամբը չէր կարող զարթեցնել նորան, այսու ամենայնիւ պատճառումէր նորան շատ անախորժ զգացողութիւն։

Խեղդողը, ուղղելով իւր ամբոխված, ուտող աչքերը, շարունակումէր իւր շփելը այնպիսի համբերութեամբ, այնպիսի ճարտարութեամբ, որ Ճայլմա՛ն չզարթելով, բայց չկարողանալով տանել առաւել այս անորոշ, գրգռիչ զգացողութիւնը, մեքենաբար բարձրացրեց ձեռքը, որպէս թէ ցանկանալով քշել միջատը, որ թըվումէր նորան, թէ ման է գալիս նորա ճակատի վերայ...։ Բայց ոյժ չկար նորանում, թուլացած և ծանրացած ձեռքը ընկաւ նորա կուրծքի վերայ։

Խեղդողը, տեսանելով, որ հասանումէր իւր նպատակին, դարձեալ սկսեց շարունակել շփողութիւնը առաջին զգուշութեամբ և յաջողակութեամբ, և Ճայլմա՛ն բոլորովին չարչարված ծանր քնից, առաւել ոյժ կամ կամք չունենալով բարձրացնել ձեռքը դէպ ի երեսը, մեքենաբար դարձուց գլուխը, որ թուլացած լինելով իջաւ աջ ուսի վերայ, նա երևի թէ այս շարժողութենովը ազատվիլ կամէր այն անախորժ ազդեցութենից, որ հետևումէր նորան...։

Խեղդողը, այս քանին հասանելով, կարող էր ազատապէս ներգործել։

Որպէս զի սաստկացնէ քունը, որ Ճայլմա՛ն խանգարել էր, խեղդողը, նմանելով վամպիրի, այն արիւն ծծող ջղջիկին, սկսեց շարժել ձեռքերը հովարարի նման, երիտասարդ հնդկացու այրվող երեսի վերայ։

Այս յանկարծական զովութիւնը զգալու միջոցին, որ շատ քաղցր է այնպիսի բորբոքված ջերմութեան ժամանակ, Ճայլմայի երեսի վերայ երևեցաւ մի բաւականութիւն։ Նորա շրթունքը կիսով չափ բացվեցան, ներս շնչելով քաղցրահոտ զովութիւնը, և իշխանը մտաւ խոր քնի մէջ, որովհետև յառաջ անհանգստացել էր, բայց այժմ բոլորովին անձնատուր եղաւ նորա պատճառած քաղցր զգացողութեանը։

Աժուպայի վերայի կանաչեղեն մութն կամարը յանկարծ լուսաւորվեցաւ փայլակի կարմրագոյն լուսով։ Խեղդողը, երկիւղ կրելով, որ Ճայլմա՛ն չզարթի կայծակի առաջին զարկելուց, շտապեց աւարտել սկսած գործը։

Ճայլմա՛ն պառկած էր մէջքի վերայ՛, նորա գլուխը խոնարհած էր աջ ուսի վերայ, իսկ ձախ ձեռքը պարզած։

Խեղդողը, որ նստած էր նորա մօտ ձախ կողմից, փոքր առ փոքր սկսեց դադարեցնել իւր ձեռքերի շարժողութիւնը. յետոյ անհաւատալի յաջողակութեամբ բարձրացրեց նորա ձախ թևի բեհեզեայ հագուստը մինչև արմուկը։

Հանելով իւր վարտիկի գրպանից փոքրիկ պղնձեայ տուփը, խեղդողը հանեց նորա միջից շատ բարակ և շատ սուր ասեղ և մի սևագոյն արմատ. մի քանի անգամ ծակեց ասեղովը այս արմատը և իւրաքանչիւր ծակելու ժամանակ դուրս էր գալիս արմատի միջից մի սպիտակ խեժային հեղանիւթ։ Երբ ասեղի վերայ բաւական հեղանիւթ կանգնեցաւ, խեղդողը սկսեց կամաց փչել Ճայլմայի ձեռքի ներսի կողմը, որ նոր ի նորոյ պատճառէ նորա մէջ զովութիւն. յետոյ համարեա թէ աննկատելի սկսեց գծագրել ասեղով Ճայլմայի ձեռքի կաշու վերայ խորհրդական և բան նշանակող նշաններ։ Այս կատարվեցաւ այնպիսի արագութեամբ, ասեղը այնպէս սուր էր, որ Ճայլմա՛ն չզգաց այս թեթև գործողութիւնը, որ կատարվումէր նորա կաշու վերայ։

Շուտով խեղդողի նկարած նշանները երևեցան գունատ-վարդագոյն, հազիւ երևելի գունով մազի նման բարակ գծերով. բայց հեղանիւթը, որով տոգորած էր ասեղը, ունէր այնպիսի դանդաղ, ուտող ոյժ, որ փոքր առ փոքր մտանելով կաշու տակ մի փոքր ժամանակից յետոյ պիտոյ է երևցնէր պայծառ-ծիրանագոյն նշաններ։

Խեղդողը, այսպէս յաջողութեամբ կատարելով իւր գործը, դարձեալ նայեցաւ գաղանական կատաղութենով Հնդկացու վերայ։

Յետոյ սողալով հասաւ մինչև ծակը, դուրս եկաւ նորա միջով և, սեղմելով նորա եզերքը որքան կարելի է միմեանց մօտ, որպէս զի կտրած տեղը յայտնի չլինի, անյայտացաւ այն ժամանակ մինչ որոտմունքը սկսել էր որոտալ դեռ ևս հեռուից։ 1)

Victor Jaquemont, իւր Հնդկաստանի մասին գրած նամակների մէջ, այսպէս է խօսում խեղդողների կարգից դուրս յաջողակութեան վերայ:

«Նոքա սողումեն փոսերի, խրամների մէջ, դաշտումը, նմանեցնումեն շատ տեսակ ձայների, արձակելով երբեմն ճագարի երբեմն թռչունի ձայն, նոքա ծածկումեն գործով իւրեանց մի որ և իցէ անյաջող շարժողութեան աղաղակը. յետոյ լուռ են լինում, իսկ նոցա ընկերներից մինը մի փոքր հեռի առաջին տեղից կրկնումէ այն կենդանու ձայնը, բայց բաւական թոյլ, որպէս թէ հեռանումէր կենդանին: Խանգարելով քունը աղաղակով կամ կպչելով, նոքա հարկադրումեն քնողին տանել այնպիսի դրութիւն, որ առաւել յարմար էր իւրեանց մտադրութիւնը կատարելու համար»:

Պարոն Կոմս Էդուարդ դը-Վարրենը, իւր գեղեցիկ աշխատութեան մէջ Անգլիական Հնդկաստանի մասին, նոյնպէս զարմացած խօսումէ այս խեղդողների ան հասանելի յաջողակութեան վերայ:

«Նոքա այնպէս յաջողակ են, որ կը կողոպտեն ձեզ մինչ դուք քնած էիք, մինչև անգամ կը հանեն ձեր վերայի վերմակը, որի մէջ փաթաթված էիք. bheel'ը շարժումէ, որպէս օձ, դուք քնած էք ձեր տաղաւարի մէջ, ծառայն պառկած է ձեր դուռի մօտ, bheel'ը գալիս է մինչև տաղաւարի մօտ, և նստումէ մի մութն անկիւնում, այնպէս մօտ, որ լսումէ բոլորի շնչառութիւնը: Միայն թէ Եւրոպացին քնի, այն ժամանակ նա հաւատի է իւր յաջողութեան մէջ. պատճառ Ասիացին երկար չէ դիմանում առանց քնելու: Երբ բոլորը քնեցին, bheel'ը նոյն իսկ տեղումը, ուր նստած էր կտրումէ տաղաւարի պաստառը, և նորա համար այս հերիք է ներս մտանելու: Նա շարժվումէ որպէս ուրուական, ոչինչ բան ձայն չէ տալիս նորա տակին: Նա բոլորովին մերկ է և նորա բոլոր մարմինը իւղած. նորա վզից կախած է դաշնակը: Նա կը նստի ձեր մօտ և զարմանալի սառնութեամբ, անհաւատալի յաջողակութեամբ, կը սկսի ծալել վերմակը, նոյն իսկ ձեր մարմնի մօտ, մանր, մանր ծալքերով, այնպէս, որ ինչքան կարելի է փոքր տեղ բռնէ. յետոյ անցանումէ դէպ ի միւս կողմը և թեթև խտտղեցնումէ, որպէս թէ մագնիսացնումէ քնած մարդը, այնպէս, որ ակամայ, մեքենաբար, փոքր առ փոքր դէպ ի հեռի շարժումէ. վերջապէս շուռ է գալիս, և թողումէ իւր քամակումը ծալած վերմակը: Բայց եթէ քնողը զարթի և սկսի աշխատել գողը բռնելու, այն ժամանակ նա կը հանդիպի բոլորովին հարթ հաւասար մարմնի, որ փախչումէ ձեռքից, որպէս էլէքտրական ձուկն. իսկ եթէ առաւել շատ ջանք դնէ, այն ժամանակ — վա՜յ սորան, bheel'ը կը զարկէ ուղիղ նորա կրծքին իւր դաշնակը, անբաղդը կը լողայ իւր արիւնի մէջ, իսկ սպանողը կ'անյայտանայ:

III.

ՄԱՔՍԱՆԵՆԳԸ։

Վաղուց արդէն առաւօտեան մրրիկը դադարել էր։ Արեւը մայրն
էր մտանում։ Քանի ժամ էր անցել նորանից յետոյ, մինչ խեղդողը,
մտանելով ճայլմայի տաղաւարը, դրոշմել էր նորա ձեռքի վերայ մի
խորհրդական նշան։

Մի ձիաւոր սաստիկ վազումէ երկայն ճանապարհի վերայ, որ
երկու կողմից ծածկած էր թանձր ծառերով։

Հազարաւոր թռչնակներ ծածկվելով այս անթափանցելի կա-
նաչեղէն կամարի տակ ողջունումէին գեղեցիկ երեկոյն իւրեանց ու-
րախ զրուցովը և խաղալովը. կանաչ և կարմիր թութակները վեր
էին ելանում իւրեանց կարթաձև կտուցների միջնորդութեամբ վար-
դեղէն ակացիների վերայ. գեղեցիկ խօսուն մեծ թռչունները լեղա-
կադոյն. մոյգ ոսկեգոյն խառնուրդով վզերի վերայ և երկայն պո-
չով վազումէին թաւիշեայ սև փետուրներով, ստուերարկած կարմիր
գունով սարօկների քամակից. բազմա-շուշանագոյն կօլօեան աղաւ-
նիքը գուրգուռումէին դրախտահաւերի մօտ, որոնց փայլուն փետուր-
ները ցոյց էին տալիս զմրուխտի, յակինթի, տպազիոնի և շափիւ-
ղայի գոյն։

Այս մի փոքր բարձր ճանապարհից երևումէր մի ոչ մեծ լճակ,
որի մէջ տեղ տեղ բացարձակվումէր տամարինտինների և այլ ծա-
ռերի կանաչ ստուերը. խաղաղ և թափանցիկ ջրի մէջ երևումէին
ձկներ կապոյտ կամ լեղակագոյն և կարմիր թևերով. նոքա այնպէս
անշարժ էին, որ թըվումէին թէ դրած են կապտագոյն կրիստալի
մէջ. պառկելով ջրի մակերևութի վերայ, ուր խաղումէին արևի կու-
րացուցիչ ճառագայթքը, նոքա առանձին բերկրութեամբ լուացվու-
մէին օրվայ այն ջերմ և լուսափայլ միջոցին. հազարաւոր միջատներ,
լողացող թանգագին գոհարներ, հրեղէն թևերով, սահումէին, թըռ-
չումէին, երգումէին թափանցիկ ջրի երեսին, որի խորքումը շատ
յայտնի բացարձակվումէին բազմագոյն ներկերը տերևների և ջրային
ծաղիկների, որոնցով լցուած էին եզերքը։

Անհնար է նկարագրել կախարդիչ տեսարանը այս շռայլ բնու-
թեան, որ, այսպէս ասել, ծառայումէր շրջանակի փոխանակ երիտա-
սարդ, յաջող ձիաւորին, որ գնումէր ճանապարհի վերայով։ Այս
պատանի ձիաւորը էր ճայլմա՛ն։ Նա և չ՚իմացաւ անգամ, թէ խեղ-
դողը նկարել էր նորա ձեռքի վերայ անջնջելի նշաններ։

Նորա Նաւայեան մատակը, էր միջակ հասակով, բայց շատ կրակոտ և աշխոյժ, սև որպէս գիշեր. նեղ կարմիր գորգը փոխանակում թամբը: Ճայլմա՛ն չափաւորում էր իւր ձիու կատաղութիւնը փոքրիկ պողպատեայ դանդանաւանդով, որի կապը կարմիր մետաքսից թեթև էր որպէս գերձան:

Ոչ մինը, այն զարմանալի ձիաւորներից, այնպիսի ճարտարութենով նկարած Պարտենոնեան Ֆրիզի վերայ, չէ նստած ձիու վերայ այնպէս հպարտ, այնպէս շնորհալի ինչպէս այս պատանի Հնդկացին:

Նորա գեղեցիկ երեսը, լուսաւորված մտանող արևի ճառագայթներովը, փայլում էր երջանկութեամբ, աչքերը լցուած են ուրախութեամբ. նա լայնացուցած պինչքը շրթունքը բացած մի փոքր վայելում թարմ օդ լցուած ծաղիկների անուշահոտութեամբ տերևների բուրելովը, որ թաթացել էին դեռ ևս կայծակից յետոյ եկած մեծ անձրևովը: Կարմիր գլխարկը, նման յունականին Ճայլմայի մազերի վերայ ևս առաւել մեծացնումէր նորա ոսկեգոյն երեսի փայլողութիւնը. նորա վիզը բաց. նա հագած է սպիտակ բեհեզեայ հանդերձ լայն թևերով և կարմիր գոտիով, որ գեղեցիկ շրջապատում նորա իրանը. նորա լայն վարտիկը նոյնպէս սպիտակ պաստառից կիսով չափ բաց էին թողում նորա դեղնագոյն և հարթ սրունքը. մաքուր, հաղուագիւտ նոցա կերպարանքը նկարվումէն մատակի ագռաւագոյն կողերի վերայ, որ սեղմում Ճայլմա՛ն իւր ջլուտ ծնկերով. ասպանդակներ չկային. նորա փոքրիկ և նեղ ոտքերը հագած էին կարմիր սաֆիանից հողաթափներ:

Նորա մտածողութիւնքը, երբեմն ջերմ, երբեմն սառն, երևումէին նորա ձիու քայլուածքից, որին հարկադրումէր գնալ իւր հոգու տրամադրութեանը համաձայն: Նորա մատակը երբեմն վազումէր արագ, որպէս անսանձ երևակայութիւն, երբեմն գնումէր հանգիստ, չափաւոր, որպէս մտածողութիւն հետևեալ յանդուգն տեսութենից յետոյ: Այսպիսի անհաւասար գնացքում բոլոր նորա շարժողութիւնը լցուած էր հպարտ, ազատ և մի փոքր վայրենի գեղեցկութեամբ:

Ճ՛այլմա՛ն, զրկված Անգլիացոց ձեռքով ժառանգական տէրութենից և արգելված ամրոցի մէջ հօրը մահից յետոյ, որ ընկաւ զէնքը ձեռքին, արձակվել էր յետոյ, ինչպէս տեսանք մէք Ժօսիւե Վանդաեօլի, Պ. Րօդէնին գրած նամակից: Գեներալ Սիմոնը, բոլոր ժամանակը Ճայլմայի արգելված մնալուն, գտնվումէր այն ամրոցի շրջակայքումը, ուր փակված էր Ճայլմա՛ն. յետոյ երկուսը ևս թողեցին Հնդկական ցամաքահողը և եկան Բատաւիա, Ճայլմայի մօր հայրե-

նիքը, որ Հաճի-Սինգի որդին յոյս ունէր ստանալ մի փոքրիկ ժառանգութիւն մնացած իւր մօր կողմի ազգականներից։

Այս ժառանգութեան մէջ, որ երկար ժամանակ բանի տեղ չէր դնում կամ մոռանումէր, գտանվեցան շատ հարկաւոր թղթեր և մեդալիօն, բոլորովին նման Բօզի և Բլանշի ունեցած մեդալիօնին։

Գեներալ Սիմոնը, զարմացած և ուրախացած այս յայտնագործութեամբը, որ ապացուցանումէր նորա կնոջ ազգակցութիւնը Ճայլմայի մօր հետ և խոստանումէր իշխանին ապագայումը մեծ օգուտներ, թողեց Ճայլմային Բատավիայի մէջ, իսկ ինքը գնաց դէպի — Սումատրա կղզին. նա յոյս ունէր նաւ գտանել այն տեղ, որ շուտով գնալու էր ուղիղ Եւրոպա. պատճառ, այժմ պատանի իշխանին անպատճառ հարկաւոր էր 1832 թուականի փետրուարի 13ին փարիզ գտանվիլ։

Գեներալ Սիմոնը, Եւրոպա գնացող նաւ գտանելուց յետոյ, պիտոյ է վերադառնար, որ Ճայլմային ևս առնու. այս պատճառով իշխանը ամենայն օր գնումէր նաւահանգիստը յուսալով, որ Բօզի և Բլանշի հայրը կը վերադառնայ Սումատրեան նաւով։ Այս տեղ անպատճառ հարկաւոր է ասել մի քանի խօսք Հաճի-Սինգի որդու մանկական և պատանեկական հասակին վերաբերութեամբ։

Նորա մայրը մեռաւ, երբ շատ փոքր էր դեռ ևս Ճայլման։ Պարզ և սառն կրթութիւն ստանալով, նա դեռ ևս երեխայ ժամանակից, հօրը հետ միասին գնումէր վագր որսալու, որ նոյն քան զարհուրելի էր և վտանգաւոր, որքան պատերազմը. պատանեկութեան հասակը մտած, նա, հօրը հետ միասին պաշտպանումէր իւր տէրութիւնը, մասնակից էր լինում սաստիկ և արիւնահեղ պատերազմերի...։ Այս կերպով մօրը մահից յետոյ, նա բնակվումէր իւր ծննդական անտառներում և սարերում. Նորա զօրեղ և պարզ հոգին, պահումէր, իւր կուսական անմեղութիւնը, և բոլորովին արժանի էր «Մեծահոգի» մականունին։ Նա իշխան էր, այս բառի բուն նշանակութեամբը, և, գտանվելով բանդի մէջ, շահել էր անգլիական բանդապետների դէպ ի իւր անձը յարգութիւնը իւր գովելի լռութենովը։ Երբէք չէին լսում նորանից գանգատ կամ մեղադրանք. ընդդէմ, անարդարութեան և խիստ վարեցողութեան, նա դնումէր միմիայն իւր հպարտ, մելամաղձական հանգստութիւնը։

Այս կերպով սովորելով իւր հայրենիքի լեռնականների նահապետական, զինուորական կեանքին, յետոյ քանի ամիս բանդի մէջ մնալով, Ճայլման ոչինչ տեղեկութիւն չունէր լուսաւորեալ ազգերի կեանքի մասին։

Թէ և Ճայլման իւր բարոյական որակութիւնների մէջ պա-

կասութիւն չունէր յատկապէս, բայց նոցա հետեւանքը չափից անցանումէին, անյողդողդ հաստատ իւր տուած խօսքին, միշտ պատրաստ իւր կեանքը դնել բարեկամի համար, հաւատացող կուրօրէն, բարի մինչեւ բոլորովին ինքը իւրեան մոռանալ, այսպիսի յատկութեններով նա անողոքելի էր լինում դէպ ի այն մարդը, որ երեւել էր դէպ ի նա ուխտադրուժ, խաբեբայ եւ անշնորհակալ։ Նա չէր խնայելու մատնողի կամ ուխտադրուժի կեանքին. պատճառ, նա արդարութիւն էր համարում, մատնութեան կամ երդմնազանցութեան մեղքը մահով քաւել տալը։ Մի խօսքով, բոլոր զգացողութիւնը նորա մէջ էին ամբողջ եւ անսահման. այսպիսի մարդը, իհարկէ, արժանի հարգասիրութեան առարկայ էր ուսանելու պատերազմի մէջ ստութեան, անձնօգտութեան, խաբեբայութեան, խորամանգութեան, եւ կեղծաւորութեան ընդդէմ. բարակացած, ինչպէս զօրօրինակ Փարիզի հասարակութիւնն է, երեսպաշտութեան ընդդէմ։ Մեք այսպէս կարծումէնք այն պատճառով, որ, այն օրից, երբ մտադիր էր գնալ Ֆրանսիա Ճայլմայի շարունակ եւ սիրելի մտածութիւնը էր բնակվիլ Փարիզի մէջ.... այն կախարդական քաղաքի մէջ, որի մասին Ասիայում՝ այն կախարդական աշխարհում, խօսվումէին շատ հրաշալի պատմութիւնք։

Բայց ողջից առաւել բորբոքումէին պատանի Հնդկացու վառ, կուսական երեւակայութիւնը Փարիզի կանայքը, գեղեցիկ, կախարդող, կանայքը, գեղեցկութեան, շնորհքի, հիանալի օրինակները, որոնք, ինչպէս պատմումէին նորան, ծածկումէին իւրեանց գեղեցկութենով լուսաւորեալ աշխարհի մայրաքաղաքի բոլոր գեղեցկութիւնը, եւ այն րոպէին այն շռայլ երեւակայեանը, Ճայլման շրջապատած ծաղիկներով եւ զմայլած անուշահոտութեններով, որ առաւել եւս արագացնումէին նորա մատաղ եւ վառ սրտի զարկը, մտածումէր այս կախարդիչ ստեղծուանների վերայ, որոնց մասին մտածումէր շատ վերացական կերպով։ Նորան երեւեցաւ, որ ճանապարհի ծայրումը, շրջապատած թանձր կանաչով եւ ծառերով, ման են գալիս սպիտակ թեթեւ ստուերներ, հիանալի, հեշտախտական ուրուականներ, որոնք կախարդող ժպիտներով, ուղարկումէին իւրեանց վարդեղէն մատների ծայրերովը բորբոքողական համբոյրներ։ Ճայլմա՛ն անձնատուր լինելով բորբոքված զգացմունքների, որ մի քանի րոպէ առաջ ամբոխումէին նորան, յափշտակված անյաղթելի ուրախութենից, արձակեց մի քանի այրական, խորին, վայրենաձայն բացագանչութիւնք եւ անխելք զուարճութեան մէջ հարկադրումէր ձիուն խաղալ իւր տակին....

Այս ակնթարթում, արեւի պայծառ ճառագայթը ներս թափան-

ցելով ճանապարհի մութն կամարից լուսաւորեց Ճայլմային ոտքից մինչև գլուխ:

Մի քանի րոպէ էր արդէն, որ մի մարդ արագ գալիս էր նեղ ճանապարհովը, որ խաչաձև կտրումէր մեծ ճանապարհը, որի վերայով գնումէր իշխանը: Այս մարդը կանգնած տուների մէջ զարմացած զննումէր Ճայլմային:

Եւ արդարև, հիանալի էր տեսանել այս պայծառ օդի մէջ գեղեցիկ՝ աշխոյժ, պատանին, սպիտակ փրփուրի նման հանդերձով, որ յաջող նստած էր հպարտ սև ձիու վերայ, որ ծածկումէր իւր կարմիր սանձը սպիտակ փրփուրով և որի երկայն պոչը և թանձր բաշը ծածանումէին հողմից: Բայց ընդ հակառակը, որ միշտ գնումէ մարդկային բոլոր ցանկութենների քամակից, Ճայլմա՛ն, մտաւ յանկարծ անորոշ և խաղաղ մելամաղձութեան մէջ. տարեց ձեռքը իւր թաց՝ կիսափակ աչքերին և թողեց ձեռքից սանձը իւր հնազանդ ձիու վզի վերայ:

Ձին իսկոյն կանգնեցաւ, երկարացրեց իւր կարապի վիզը և դարձուց գլուխը դէպ ի մարդը, որ տեսաւ թփերի քամակից:

Այս մարդը, մաքսանենգ Մահալը, հագնված էր այնպէս, ինչպէս սովորաբար հագնվումեն եւրոպական նաւաստիքը: Նորա վերայ կար բաճկոն, և սպիտակ կտաւից վարտիկ. լայն կարմիր գոտի և յարդից շինած գլխարկ շատ ցած բարձրութեամբ. Նորա երեսը թուխ, որոշ գծագրութենով և բոլորովին անմօրուք, թէ և նա քառասուն տարեկան էր:

Մի րոպէից Մահալը գտնվեցաւ պատանի Հնդկացու մօտ:

«Դո՞ւք էք իշխան Ճայլմա՛ն», հարց արեց նա վատ Ֆրանսիական լեզուով, յարգութեամբ ձեռքը դնելով գլխարկին:

— Ի՞նչ կամիս, — ասաց Ճայլմա՛ն:

«Դուք Հաճի-Սինդի որդին էք»:

— Դարձեալ.... ի՞նչ պիտոյ է քեզ:

«Գեներալ Սիմոնի բարեկա՞մը»:

— Գեներալ Սիմոնի! — բացագանչեց Ճայլմա՛ն:

«Դուք նորա հանդէպ էք գնում՝ ինչպէս սովորաբար ամենայն երեկոյ սկսած այն օրից՝ որ օրից սպասումէիք նորան Սումատրա կղզուց»:

— Այո՛.... դու ի՞նչ տեղից գիտես, — ասաց Ճայլմա՛ն զարմանալով և հարցասիրութեամբ նայելով մաքսանենգի վերայ:

«Նա՝ էգուց կամ մինչև անգամ այսօր պիտի Բատավիա վերադառնայ»:

— Արդեօք նա ուղարկած չէ՞ քեզ:

«Կարելի է՛» ասաց Մահալը երկբայական կերպով. «Յուրեմն արդարև դուք Հաճի-Սինգի որդին էք»։

— Քեզ ասումեն, այո՛.... բայց ո՞ւր տեսար դու գեներալ Սիմոնը։

«Եթէ դուք իսկապէս Հաճի-Սինգի որդին էք, ասացէք ինձ, ձեզ ինչ մականուն էին տուել», հարց արեց Մահալը, դարձեալ նայելով ճայլմայի վերան կասկածոտ կերպով։

— Իմ հօրս անուանումէին Հայր Մեծահոգի, — պատասխանեց պատանի Հնդկացին, և տխրութեան ամպը ծածկեց նորա գեղեցիկ երեսը։

Երևումէին, որ այս խօսքերը սկսանումէին հաւատացնել Մահալին, որ պատանի Հնդկացին էր արդարև ճայլմա՛ն. բայց առաւել ևս կամելով հաւաստել հարց արեց։

«Երեք օր յառաջ դուք պիտոյ է նամակ ստանայիք գեներալ Սիմոնից Սումատրա կղզուց»։

— Յայդպէս է.... բայց ինչ պատճառով առաջարկվումէին այս հարցմունքները։

«Որ ստուգեմ, թէ արդարև դուք էիք Հաճի-Սինգի որդին.... և կատարեմ հրամանը որ ստացել էի....

— Ովի՞ց։

«Գեներալ Սիմոնից»։

— Բայց ո՞ւր է նա։

«Ես ձեզ այն ժամանակ կասեմ, երբ դուք կ՚ապացուցանէք ինձ, թէ արդարև դուք էիք իշխան ճայլմա՛ն ճշմարիտ է ինձ ասացին, որ դուք հեծնումէք սև մատակ կարմիր սանձով.... բայց....»

— Յասա՛, ինչ ասումես։

«Ես բոլորը կը պատմեմ ձեզ, եթէ գիտէք դուք թէ ինչ տպած թուղթ կար գեներալ Սիմոնի նամակի մէջ, որ ուղարկել էր Սումատրայից»։

— Հատուած բան, մի Ֆրանսիական օրագրից։

«Ի՞նչ լուրեր կային այդ օրագրի մէջ, յաջո՞ղ, թէ անյաջող վերաբերութեամբ դէպ ի գեներալը»։

— Յաջող, այնտեղ ասված էր, գեներալի բացակայութեան ժամանակ Ֆրանսիական կառավարութիւնը ճանաչել վաւերական էր, աստիճանը և պատուանունը, որ շնորհել էր կայսրը, այսպէս էին վարվել և գեներալի ընկերների հետ, որոնք նոյնպէս աքսորականք էին։

«Յայո՛, արդարև, դուք ճայլմա իշխանն էք», ասաց մաքսանենգը,

մի փոքր մտածելով, «այժմ ես կարող եմ ասել.... գեներալ Սիմոնը այսօր ցամաք դուրս եկաւ բայց մի անապատ տեղ....»

— Անապատ տեղ։

«Այո՛, նա հարկադրված է թաքնվիլ»։

— Գեներալ Սիմոնը! — գանչեց Ճայլմա՛ն սաստիկ զարմացած... թագնվի՛լ.... բայց ի՛նչ պատճառով....։

«Չ՛գիտեմ»։

— Բայց ո՞ւր է նա այժմ, — հարց արեց Ճայլմա՛ն, գունաթափվելով անհանգստութենից։

«Երեք լիեօ այս տեղից.... ծովեզրի մօտ.... Զանդի աւերակներում»։

— Նա հարկադրված է թաքնվիլ.... — կրկնեց Ճայլմա՛ն և նորա երեսի վերայ երևեցան զարմանք և անհանգստութիւն, որ առաւել և առաւել զօրանումէին։

«Ես հաստատ չ՛գիտեմ, բայց երևումէ, որ նա Սումատրայումը մենամարտութիւն է ունեցել», ասաց մաքսանենգը խորհրդական կերպով։

— Մենամարտութի՛ւն.... բայց ո՞վի հետ....։

«Չ՛գիտեմ. հաստատապէս չեմ կարող ասել. բայց գիտէ՛ք դուք Զանդի աւերակները»։

— Գիտեմ։

«Գեներալը այն տեղ սպասումէ ձեզ. նա հրամայեց ծանօթութիւն տալ ձեզ այս մասին»։

— Այն տեղ մի թէ դու նորա հետ եկար Սումատրայից։

«Ես ղեկավար էի մի ոչ մեծ մաքսանենգական նաւի, որով եկաւ գեներալը, իսկ այսօր գիշերով ցամաք դուրս եկաւ այն անապատ տեղումը։ Նա գիտէր, որ դուք համարեա թէ ամենայն երեկոյ նորա հանդէպ էք գնում, և ես հաստատապէս կարծումէի, որ կը գտանեմ ձեզ նաւահանգստի ճանապարհի վերայ։ Որպէս զի դուք հաւատաք, որ ես ուղարկված էի նորանից, նա ասաց ինձ նորա ձեզ գրած նամակի բովանդակութիւնը, որ դուք ստացել էիք։ Գիր գրել այժմ նա չ՛կարողացաւ։

— Նա չ՛ասա՞ց քեզ, թէ ի՛նչ բան հարկադրումէ նորան թաքնըվիլ։

«Ոչ. բայց եզրակացնելով նորա մի քանի խօսքերից կարծումեմ, որ նա մենամարտութիւն ունեցած պիտի լինի»։

Ճայլմա՛ն, գիտելով գեներալ Սիմոնի քաջութիւնը և ջերմ բնաւորութիւնը, համարեա թէ հաւատացած էր, որ կարող էր այդպէս եղած լինել։

Մի փոքր լռութենից յետոյ հարց արեց նա. — կարո՞ղ ես արդեօք ձիս տուն տանել: Իմ տունը քաղաքից դուրս, ահա այն տեղ ծառերի մէջ նոր մզկիթի մօտն է.... Ձիով բարձրանալ Զանդի սարի վերայ յաջող չէ, ոտքով ես առաւել շուտ կ՚երթամ...:

«Ես գիտեմ, թէ ո՛ւր բնակվումէիք դուք. ինձ պատմել էր գեներալ Սիմոնը.... ես ուղղակի այն տեղ գնալու էի եթէ այս տեղ չ՚գտանէի ձեզ...: Յանձնեցէք ինձ ձեր ձին»:

Ճա՛յլմա՛ն ցած իջաւ ձիուց, տուեց սանձը Մահալին, քակեց իւր գօտիի ծայրը, հանեց այն տեղից մի փոքրիկ մետաքսեայ քսակ և ձգելով նորան դէպ ի մաքսաննեգը ասաց. — դու հաւատարիմ ես և հնազանդ.... ա՛ռ: Այդ շատ չէ. բայց ինձ մօտ առաւել չ՚կայ:

«Օ՜, ուր տեղը չեն անուանել Հաճի-Սինգին հայր Մեծահոգու—», ասաց մաքսաննեգը, յարգութեամբ գլուխ տալով, և գնաց Բատավիայի ճանապարհով, տանելով Ճայլմայի ձին:

Իշխանը խորացաւ թանձր անտառի մէջ և գնաց արագ քայլերով դէպ ի Զանդի աւերակները: Յառաջ քան թէ գիշերը նա չէր կարող հասանել այն տեղ:

IV.

ՊԱՐՈՆ ԺՕՍԻՒԷ ՎԱՆ ԴԱԵՕԼԸ:

Պարոն Ժօսիւէ վան Դաեօլը, հօլլանդական վաճառական, պարոն Բօդէնի գործակալը: ծնած էր Բատավիայի մէջ (որ Եավայի մայրաքաղաքն էր): Նորա ծնողքը ուղարկեցին նորան Պօնդիշէր վաղուց ահա Յիսուսեանների ձեռքով հիմնված ուսումնարանը: Այն տեղ մտաւ նա Յիսուսեան ընկերութեան մէջ, որպէս ունկնդիր երեք ուխտերի 1) Պարոն վան Դաեօլը յայտնի էր որպէս շատ պատուաւոր մարդ. միշտ նշանաւոր էր գտանվում ամենայն գործերի մէջ իւր ճշդութենովը, սառն նախատեսութեամբ, զգուշութեամբ և գերազանց խելօքութեամբ. Նորա դրամական գործողութիւնքը համարեա թէ միշտ յառաջադէմ էին որովհետեւ նորա գաղտնի պաշտպանքը ծանօթութիւն էին տալիս նորան այն ամենայն անցքերի մասին, որ ազդեցութիւն ունէին առեւտուրի ընթացքի վերայ:

Պօնդիշէրի մէջ գտանված Յիսուսեան տունը մասնակից էր լի-

1) Թէ ինչ է նշանակում այդ անունը ընթերցողը կարող է իմանալ կարդալով այս հատորի 35 երեսը, Յիսուսեանների մասին գրուած յօդուածների մէջ:

Մ. Ն.

նում նորա գործերին, նորան իրաւունք էր տալիս դուրս տանել և փոխարինել այն բոլոր ապրանքները, որ այն լայնատարած երկրից հաւաքումէր Յիսուսեան տունը։

Պարոն Ժօսիէ վան Դաեօլը խօսումէր փոքր, լսումէր շատ, երբէք վէճ չէր բանում, մարդու հետ վարվելու մէջ պահումէր վերին աստիճանի քաղաքավարութիւն, շատ հազիւ ընծայ էր տալիս, բայց միշտ ժամանակին և յարմար։

Նա եթէ շահած չէր ընդհանուրի մտերմութիւնը դէպ ի ինքը, գոնէ շահել էր նորա սառն յարգութիւնը, որ միշտ ցոյց է տրվում խիստ կանոնի տէր մարդերին։ Նա ո՛չ թէ անձնատուր չէր գաղթականների ազատ կամ մինչև անգամ անառակ բարքերի ազդեցութեանը, այլ, սորա հակառակ վարումէր մի ամենաչափաւոր կեանք։

Հետևեալ անցքը անցանումէր Բատավիայում այն ժամանակ, երբ Ճայլմա՛ն գնաց դէպ ի Ջանգի աւերակները, յուսալով տեսանել այն տեղ գեներալ Սիմոնը։

Պարոն վան Դաեօլը առանձնացաւ իւր ոչ մեծ առանձնական սենեակի մէջ, ուր կային հաստ թղթից շինած շատ արկղներ լիքը թղթերով և մեծ մեծ հաշուի մատեաններ դրած սեղանների վերայ։ Մի միայն պատուհանը, այս սենեակի, որ գտնվումէր ներքին յարկումը, նայումէր դէպ ի մի դատարկ գաւիթ և դուրսից պաշտպանված էր երկաթի վանդակով. Ճաւայի ջերմ եղանակի պատճառով այս պատուհանը չունէր ապակիով շինած շրջանակ, բայց փակվումէր պատուհանը հարկ ժամանակին տախտակեայ պաշտպանարանովը։ Գտնելով իւր սեղանի վերայ մոմեղէն ճրագը, վան Դաեօլը նայեցաւ ժամացուցին և ասաց. ինն ժամ է, Մահալը շուտով կը գայ։

Նա դուրս եկաւ առանձնարանից, անցաւ նախասենեակից և բացեց հաստ դուռը, զգուշութեամբ դուրս եկաւ փոքրիկ գաւիթը, որ մարդիկը չ՛լսէին, և բացեց գաղտնի փակը մեծ պատին, որ ունէր վեց ոտնաչափ բարձրութիւն և ծածկած էր գամերով։ Յետոյ փակեց դռնակը, վերադարձաւ առանձնարանը և ճանապարհի վերայ խնամով փակեց դարձեալ բոլոր դռները։

Պ. վան Դաեօլը նստաւ իւր սեղանի մօտ, առաւ գաղտնի արկղից նամակը կամ, լաւ ասել, գրուածքը, որ շատ ժամանակ է սկսել էր և շարունակումէր ամենայն օր (ինքն ըստ ինքեան հասկացվումէ, որ Պ. Բօդէնի ստացած նամակը, գրված էր Ճայլմայի բանդից արձակվելուց և Բատավիա գալուց յառաջ)։

Մ՛եր յիշած գրուածը նոյնպէս պատրաստվումէր Պ. Բօդէնի համար. Պ. վան Դաեօլը շարունակեց այս գրուածը այս օրինակ։

«Ես արդէն յայտնեցի ձեզ որ յաջողեցաւ ինձ նամակակցու-

թիւն ունենալ գեներալ Սիմոնի հետ։ Ես կարդումէի նորա բոլոր նամակները և յետոյ ուղարկումէի Ճայլմային առանց կնքելու։ Այս կերպով ես իմացայ, որ գեներալը պիտոյ է շուտով վերադառնայ։ Այս պատճառով ես հարկադրված էի զօրեղ հնարներ գործ դնել, բայց այնպէս յառաջուց մտածած, որ ոչինչ կերպով չէ կարող մեր վերայ կասկած ընկնել։ Ես մանաւանդ որոշեցի այսպէս ներգործել, որովհետև յոյս ունէի մեծ ծառայութիւն ցոյց տալ մարդկութեանը։ Բաց ի սորանից ես և չէի կարող այլապէս ներգործել մինչ նոր վտանգ էր սպառնում։ Շոգեշարժ նաւը «Րիւտէր» երեկի հասաւ այս տեղ և էգուց դարձեալ կ'երթայ։ Այս նաւը հաղորդակցումէ մեր տեղը Եւրոպայի հետ Արաբական ծովածոցի վերայով։ Նորա նաւորդքը ցամաք են դուրս գալիս Սուեզեան ծովապարանոցի եզրումը և Աղեքսանդրիայումը նստումեն այլ շոգեշարժ նաւ, որ տանումէր նորանց ուղղակի Ֆրանսիա։ Այս կերպով կարելի է այս տեղից Եւրոպա հասանել մի ամիս և կէս ժամանակից։ Այժմ Հօկտեմբերը վերջանումէ, ուրեմն Ճայլմա իշխանը կարող էր Ֆրանսիա հասանել Յունուարի սկզբումը, իսկ նայելով ձեր հրամաններին, որոնց պատճառը ծածկած է ինձանից, բայց որոնք ես կատարումեմ հնազանդութեամբ և ամենամեծ ջերմեռանդութեամբ, անպատճառ հարկաւոր էր արգելել նորան. պատճառ, ինչպէս դուք ասումէք, մեծ վնաս կը կրէ ընկերութիւնը, եթէ Ճայլմա իշխանը Փարիզում լինի 1832 թուականի փետրուարի 13 օրումը։ Եթէ, ինչպէս յոյս ունիմ, յաջողի ինձ բանը այնպէս բռնել, որ անհնար լինի նորան Րիւտէրով գալ, այն ժամանակ նա ոչինչ կերպով չէ կարող Ֆրանսիայում լինել Ապրելից յառաջ. որովհետև միմիայն Րիւտէրը գնումէ ուղղակի, իսկ միւս նաւերը հասանումեն Եւրոպա ոչ կանուխ, քան թէ չորս կամ հինգ ամսից»։

«Բայց յառաջ, քան թէ նկարագրել էի այն հնարները, որ գործ եմ դնում Ճայլմա իշխանը արգելելու համար, հարկաւոր եմ համարում յայտնել ձեզ մի քանի նախընթացական ծանօթութիւնք»։

«Անգլիական Հնդկաստանումը շատ ժամանակ չէ, որ յայտնագործեցին մի հասարակութիւն, որի անդամքը անուանվումեն բարի գործի եղբարք, կամ Ֆանզիկարք»։ 1)

«Այս մարդասպանքը արիւն չեն թափում, այլ խեղդումեն իր-

1) Ֆանզիկար, նշանակումէ խեղդող, այս բառի սկիզբն է Ֆանզի, որ հնդացոց լեզուով իմացվումէ խեղդել. մեք հետևեալ թերթերումը մանրամասնութեամբ կը նկարագրենք այս եղբայրութիւնը, որ յայտնի է անունով, "եղբայրութիւն բարի գործի"։

եանց ղոչերը, ո՛չ այն դիտաւորութեամբ, որ կողոպտեն նորանց, այլ, որ հաճոյանան մի դժոխային Աստուածուհու, որ անուանումեն Բոհվանի։ Որպէս զի հասկացնեմ ձեզ այս սարսափելի աղանդը, ես արտագրումեմ այս տեղ գնդապետ Սլիմենի յայտարարութեան սկիզբը, այն գնդապետը անդուլ հետեւողութեամբ որոնումէր այս գաղտնի հասարակութիւնը»։

«1822 ից մինչև 1824 թուականը, երբ ինձ յանձնված էին «դատաստանական իշխանութիւնը և քաղաքական կառավարութիւնը «Ներզինդպուրեան գաւառի» ասումէ նա. «ոչ մի մարդասպանութիւն, «ոչ մի չնչին գողութիւն չպատահեցաւ, դուրս չեկաւ մի հասարակ «աւազակ ևս, որ ես իսկոյն չիմանայի. և եթէ մի մարդ ասէր ինձ, «թէ ահա այս ժամանակ ժառանգական մարդասպանների խումբը «բնակվումէ Կինդելի գիւղաքաղաքում, ոչ աւելի, քան թէ չորս «հարիւր մետր հեռի իմ բնակութենից, թէ Մանդսուր գեղի (որ «ոտքով գնալու համար մի օրվայ ճանապարհ էր ինձանից). գեղեցիկ «անտառի մէջ, բնակվումէ մինը այս մարդասպանների սարսափելի ժո- «ղովքից, թէ խեղդողները ամենայն տարի հաւաքվումեն այն տեղ «Հնդկաստանից և Դեկանից, որպէս թէ մեծ հանդիսաւոր տօն կա- «տարելու համար, կատարումեն իւրեանց ատելի գործը ամենայն ճա- «նապարհների վերայ, որ հանումէր դէպ ի այդ տեղը, — ես կը մտա- «ծէի, թէ այդ մարդը շաղփաղփումէ, կամ թէ կամի վախեցնել ինձ «իւրեան յիմար պատմութեններովը. բայց այս բոլորը կենդանի «ճշմարտութիւնք էին, ամենայն տարի հարիւր ճանապարհորդք թաղ- «վումէին Մանդսուրեան անտառներում. սպանողների ամբողջ ազգը «բնակվումէր իմ մօտ մինչ ես կառավարումէի այս գաւառը և տա- «րածումէր իւր կորստաբեր ներգործութիւնը մինչև Պօօնահ և Հի- «դերաբադ։ Երբէք ջնջվելու չէ իմ մտքից այն րոպէն, երբ խեղ- «դողների գլխաւորներից մինը, որ մատնեց իւր ընկերքը, առաւել «ապացուցութեան համար, փորեց հանեց տասն և երեք հատ մեռած «մարդու մարմին նոյն իսկ տեղից, որի վերայ շինած էր իմ տաղա- «ւարը, և առաջարկեց հանել դեռ ես շատ մեռելներ շրջակայ տե- ղերից»։ 1)

«Գնդապետ Սլիմենի այս խօսքերը կարող են արդէն հերիք ծանօթութիւն տալ ձեզ այս զարհուրելի հասարակութեան մասին, որ ունի իւր սեպհական օրէնքները, իւր պարտականութիւնքը, որ անհամաձայն էին և Աստուածային և մարդկային օրէնքներին։ Նոքա

---

1) Այս յայտարարութիւնը դուրս է գրված Պ. կոմս Էդուարդ դը Վարրենի հոյակապ գործից, որ գրել է Անգլիական Հնդկաստանի վերայ 1831 թուականում։

անչափ հարազատ են միմեանց, անպայման հնազանդվումեն իւրեանց իշխանաւորներին, որոնք քարոզումեն իւրեանց անձը անմիջական փոխանորդ իւրեանց խաւար աստուածութեանը. ատելութիւն ունին դէպ ի այն ամենայն, որ չէր պատկանում նոցա, և ամենայն տեղ զարմանալի հեշտութեամբ գտանումեն իւրեանց գործակիցք. սոքա գաղտնի քարոզիչք են սպանութեան կրօնի, բայց արագ տարածումեն իւրեանց վարդապետութիւնը և ծածկումեն բոլոր Հնդկաստանը աշագին ցանցով»:

«Նոցա գլխաւոր առաջնորդներից երեքը և մի հատ հասարակ հետևող, փախչելով Անգլիական Նահանգապետի հետազօտութեննից թաքնվել են Հնդկաստանի հարաւային ծայրումը, Մալակայի ծովածոցի մօտ, ոչ հեռի մեր կղզուց: Մի մաքսաննենգ մանաւոր և աւազակ, Մահալ անունով, որ պատկանումէր նոցա ընկերութեանը, բերել է այս մարդերին իւր նաւովը այս տեղ, և նոքա կարծումեն, որ մի ժամանակ ամենևին անվտանգ կարող են մնալ այս տեղ. պատճառ, մաքսանենգի խորհրդով թաքնվել են թանձր անտառի մէջ, ուր կան մի քանի տաճարի աւերակներ և նոցա տակումը գետնափոր, որ անվտանգ ապաստանարան էր խեղդողների համար»:

«Այս երեք առաջնորդքը շատ խելացի մարդիկ են, բայց մանաւանդ նորանցից մինը Փարինգէա անունով բնութենից ստացած է մի անսովոր աշխոյժ և հաղուագիւտ ընդունակութիւնք. նա շատ վտանգաւոր մարդ է: Փարինգէա — Մեստիս, այս ինքն որդի սպիտակի և հնդկացու, երկար ժամանակ գտանվել է այն քաղաքներում ուր կային եւրոպական հաշուատունք, և շատ լաւ խօսումէ Ֆրանսիարէն և անգլիարէն. միւս երկուսը — մինը խափշիկ, միւսը հնդկացի, նոցա հետևողը մալայեցի»:

«Մաքսանենգ Մահալը, գիտելով, որ բաւական վարձ կը ստանայ, եթէ մատնէ այս մարդասպանքը կառավարութեան ձեռքը, եկաւ իմ մօտ: Նա լսել էր, որ ես կապակցութիւն ունիմ մի անձին հետ, որ մեծ ազդեցութիւն ունի մեր Նահանգապետի վերայ. երեք օր յառաջ Մահալը խոստացաւ մատնել չորսին ես, մի քանի պայմաններով: Ահա նորա պայմանքը, նա խնդրումէ բաւական շատ արծաթ, և որ ուղարկեն նորան որքան կարելի է շուտով Եւրոպա, որովհետև այս տեղ մնալով ամենևին փրկվելու չէր խեղդողների անողոքելի վրիժառութենից»:

«Իհարկէ, ես ուրախութեամբ օգուտ քաղեցի այս առաջարկութենից, մատնել այս գարշելի չարագործքը արդարադատութեան ձեռքը, և խոստացայ խնդրել Մահալի մասին Նահանգապետից, բայց նոյնպէս մի քանի պայմաններով, բոլորովին անմեղ պայմաններով,

որ յարաբերումէին ճայլմային...։ Ես կը գրեմ ձեզ մանրամասն եթէ իմ մտադրութիւնքը կատարվին, իսկ այդ բանը շուտով կ՚իմանամ, որովհետև Մահալը պիտոյ է այս րոպէիս գայ իմ մօտ։ Այս գրուածը կ՚ուղարկվի Բիւտէր շոգեշարժ նաւով. այդ նաւի մէջ ես տեղ վարձել եմ Մահալի համար. ես նորան ես կ՚ուղարկեմ, եթէ յառաջադիմութեամբ կատարէ իմ յանձնարարութիւնը բայց այս տեղ խօսեմ ձեզ հետ մի այլ, բաւական երևելի գործի վերայ»։

«Իմ վերջին նամակի մէջ, ուր գրեցի ձեզ, թէ ճայլմայի հայրը սպանված է, իսկ ինքեան ճայլմային Անգլիացիք փակեցին ամրոցի մէջ, ես այլ բաների հետ, խնդրել էի ձեզանից տեղեկութիւն տալ ինձ փարիզեան սեղանաւորի և ձեռագործապետի Պ. Բառօն Տրիպօի վաճառականութեան մասին, որ Կալկաթայումը հաշուատուն ունի։ Այժմ այդ տեղեկութիւնքը հարկաւոր չեն. եթէ ինչ որ ես լսել եմ, դժբաղդաբար ճշմարիտ է, եթէ այդ հաստատ է, ուրեմն բարեհաճեցէք կարգադրութիւն առնել յարմարվելով հանգամանքներին...»։

«Նորա Կալկաթեան հաշուատունը պարտական է մեզ, այսինքն ինձ և մեր Պօնդիշէրի հաշուատանը, շատ մեծագումար արծաթ. իսկ համբաւ է տարածված, թէ Պ. Բառօն Տրիպօի գործերը շատ խառնափնդորված են, թէ նա գործարան է բացել այն պատճառով, որ իւր հակառակութեամբը վնասէ և կործանէ Ֆրանսիսկոս Հարդի պարոնի հին գործարանը. թէ նա ահագին գումար է գործ դրել այս բանի վերայ և կորուսել է իւր կարողութիւնը։ Իհարկէ նա մեծ հարուած հասուց դորանով իւր հակառակորդին, բայց դորա փոխանակ աւերեց իւր կարողութիւնը. իսկ թէ նա սնանկանայ, այն ժամանակ այդ բանը մեծ կը վնասէ և ինձ և մերոնց»։

«Գործերը այս դրութեան մէջ լինելուց յետոյ շատ ցանկալի է, որ ներգործական և զանազան հնարներ, որ ունէիք դուք ձեր ձեռքի տակ, գործ դրվէին Հարդի պարոնի վաճառական տունը բոլորովին կործանելու համար, որ արդէն սաստիկ դղրդված է Պ. Բառօն Տրիպօի կամակոր հակառակութեամբ. այն ժամանակ Պ. Բառօն Տրիպօ՛ն կարճ միջոցի մէջ յետ կը դարձնէր իւր բոլոր կորուստը. հակառակորդի աղքատանալը կը հաստատէր Պ. Բառօն Տրիպօի բարեվիճակութիւնը և կ՚ապահովէր նորա, մեզ ունեցած պարտականութիւնը»։

«Արդարև, ցաւելի, շատ տխուր բան է ձեռք առնուլ այսպիսի հնարներ, մեր կարողութիւնը չ՚կորուսանելու համար. բայց ի՞նչ պիտոյ է առնել. երբեմն ակամայ ձեռք կ՚առնուս նոյն զէնքը, որ ամենայն օր գործ են դնում մեր ընդդէմ։ Մեք հարկադրված ենք, մարդ-

կային անարդարութենից և չարութենից, այսպէս ընթանալ. մեզ ոչինչ չէ մնում անել եթէ ոչ հնազանդվիլ մեր ճակատագրին, որովհետև մեք աշխատումենք պահպանել աշխարհային բարին Աստուծոյ անունը փառաւորելու համար, իսկ այդ աշխարհային բարին մեր թշնամիների ձեռքումը կը լինէին միմիայն հրապուրանքի և հոգեկորոյս գործիք»:

«Բաց ի դորանից այս մի հեզ առաջարկութիւն է, որ համարձակվումեմ առաջարկել ձեր բարեմիտ վերահասութեանը: Եթէ ես և կարող լինէի կատարել այս մտադրութիւնը, և այն ժամանակ ես չէր համարձակվէի անել առանց ձեր կամքին. պատճառ, իմ կամքը իմը չէ.... ոչ, իմ կամքը և ինչ որ ես ունիմ, նորանցն է, որոնց ուխտել եմ անսահման և անփոփոխ հնազանդութիւն»:

Մի թեթև աղաղակ, տան դրսումը, գրաւեց Պ. վան Դաեօլի ուշադրութիւնը. նա իսկոյն վեր կացաւ և մօտեցաւ պատուհանին. մի մարդ զգուշութեամբ երեք անգամ բաղխեց պաշտպանարանը:

«Այդ դո՞ւ ես Մահալ», ասաց Պ. վան Դաեօլը հաստ և ցած ձայնով:

— Ես եմ, — պատասխանեց նա նոյնպիսի ձայնով:

«Ի՞նչ շինեց Մալայեցին»:

— Կատարեց ամենայն ինչ որպէս հարկաւոր էր....:

«Մի՞թէ!» բացագանչեց Պ. վան Դաեօլը զուարճութեամբ, «դու ստո՞յգ գիտես»:

— Ստոյգ, յաջողակութեան և խորամանգութեան մէջ նա յետ չէ մնում սատանայից:

«Ապա Ճայլմա՞ն»:

— Ես ասացի նորան գեներալ Սիմոնի նամակի բովանդակութիւնը. այդ հաւատացուց նորան, թէ ես իսկապէս գեներալից էի ուղարկված և թէ նա կը գտանէ նորան Չանդի աւերակներումը:

«Ուրեմն, այժմ Ճայլման....»

— Չանդիումն է: Այն տեղ կը հանդիպի խափշիկին, Ֆարինգէա — մեղիսին և հնդկացուն: Նոքա սպասումեն այն տեղ մալայեցուն, որ դրօշմեց իշխանին, մինչդեռ նա քնած էր:

«Մտա՞ր դու գետնափորը»:

— Երեկի այն տեղ էի.... արձանի պատուանդանի մի քարը շուռ է գալիս.... սանդուղքը լայն է.... հեշտ կարելի է անցանել....:

«Եւ խեղդողքը ամենեին չեն կակածում քեզանից»:

— Ամենեին.... ես այսօր առաւօտ տեսայ նորանց. յետոյ մալայեցին եկաւ ինձ մօտ իւր յաջող գործակատարութիւնը պատմելու,

իսկ երեկոյեանը գնաց Նոյա մօտ. ցերեկով Նա վախեցաւ գնալ, վասնորոյ և թաքնվեցաւ թփերի մէջ։

«Եթէ այդ բոլորը ճշմարիտ է, եթէ քո աշխատութենովը ամենայն ինչ վերջանայ ինչպէս հարկն է, դու կ'ստանաս ներողութիւն և առատ պարգև.... ես արդէն տեղ վարձել եմ քո համար բիւտէրի մէջ։ Դու էգուց ես կարող ես գնալ և այս կերպով ազատվիլ խեղդողների վրիժառութենից. այս տեղ հանգստութիւն տեսանելու չէիր դու Նոյա ձեռքից, որովհետև Նախախնամութիւնը ընտրել է քեզ, որ մատնես այդ չարագործքը արդարադատութեան ձեռքը...։ Աստուած կը վարձատրէ քեզ դորա փոխանակ.... այժմ գնա Նահանգապետի մօտ և սպասի՛ր ինձ Նորա տան մօտ.... ես ինքս կը Ներկայացնեմ քեզ Նորան. սա այնպիսի մեծ գործ է, որ կարելի է անհանգիստ առնել Նորան և գիշերով.... գնա՛ ուրեմն շուտով. ես իսկոյն կը գամ քո քամակից։

Պատուհանից լսվեցան գնացող Մահալի ոտքի ձայները, և դարձեալ տան չորս կողմումը թագաւորեց լռութիւն։

Պ. վան Դաեօլը մօտեցաւ դարձեալ իւր սեղանին և շտապով յաւելացրեց իւր Նամակի մէջ հետևեալ խօսքերը։ «Այժմ ճայլմա՛ն չէ կարող դուրս գնալ Բատավիայից.... ինչ կամի թող պատահի, իսկ Նա փետրուարի տասն և երեքին չէ կարող փարիզ գտանվիլ.... հաւատի եղէք.... ես և այնպէս կարծումէի, որ ամբողջ գիշերը կ'անցուցանեմ ոտքի վերայ. ես գնումեմ Նահանգապետին. էգուց մի քանի խօսք ես կը յաւելացնեմ իմ երկար գրուածքի վերայ և կ'ուղարկեմ բիւտէրով»։

Պ. վան Դաեօլը փակեց սեղանը, զանգը զարկեց, դուրս եկաւ տնից, որով զարմացուց իւր ծառայքը, և շտապով գնաց կղզու Նահանգապետի մօտ։

Այժմ մեք մեր ընթերցողքը կը տանենք Զանդի աւերակները։

V.

ԶԱՆԴԻ ԱՒԵՐԱԿՆԵՐԸ։

Յերեկվայ մրրկից յետոյ, որ այնպէս օգնեց խեղդողին, կոխեց խաղաղ և պարզ գիշեր. լուսինը կամաց կամաց դուրս էր լողում փառահեղ աւերակների քամակից, որ ընկած էին բլրի վերայ անտառների մէջ, երեք լիեօ հեռի Բատավիայից։

Քարեայ լայն հիմքը, աղիւսեայ բարձր պատերը, կրծված ժամանակից, ընդարձակ պատշգամբները ծածկված արօտներով, որոշակի

նկարվումեն լուսնի արծաթափայլ լուսի մէջ, որ միանումէ երկնքի թափանցիկ կապուտակի հետ։ Մի քանի ճառագայթ անցանելով մի պատշգամբի ծակի միջով լուսաւորումեն երկու հսկայամարմին արձաններ, որ կանգնեցուցած են պատուանդանի մօտ ահագին սանդուղքի, որի ճաքճքած աստիճանքը համարեա թէ բոլորովին ծածկվումեն կանաչով, մամուռով և ծաղկաւէտ թփերով։ Արձաններից մինի ջարդված կտորները, որ երկու էին բաժանված, ընկած են գետնի վերայ. միւսը պահել է դեռ ևս իւր ամբողջութիւնը և կանգնած է իւր տեղում, ներկայացնելով մի ահարկու տեսարան, այս մի ահագին մեծութենով այր մարդու պատկեր է։ Մի միայն գլուխը երեք ոտնաչափ. նորա դէմքի գծագրութիւնը շատ թթու. աչքերը սև և փայլուն սալաքարից ներս դրած են գորշ երեսի վերայ. նորա լայն բերանը չափից դուրս բացված. զեռունները նորա քարեայ շրթունքների մէջ բոյն են դրել և լուսնի լուսովը երևումէ, թէ ինչպէս զզուելի շարժվումեն ու խլրտումեն։

Արձանը գօտևորած է լայն գօտիով, որի վերայ նկարած են խորհրդական նշաններ. աջ բարձի վերայ կախված է երկայն սուր. ունի չորս, պարզած ձեռքեր. մինովը բռնել է Փիլի գլուխ, միւսերով գալար գալար օձ, մարդու գանգ և մի արագիլի նման թռչուն։ Լուսինը կողքից լուսաւորելով այս արձանը շատ որոշակի գծագրումէ նորա կիսադէմը, որով առաւել զարհուրելի է թըվում նա։ Տեղ տեղ կիսաւեր պատերի վերայ երևումեն համարձակ ձեռքով քարի վերայ քանդակած նկարներ. որոնց մինը, որ ազատված էր ժամանակի աւերութենից, ցոյց է տալիս մի մարդ Փիլի գլխով, ջղջիկի թևերով, որ ուտումէր մի երեխայ։ Այս աւերակները, շրջապատած թանձր ծառերի մութն կանաչով, և լուսաւորված լուսնի ճառագայթներով գիշերի մահանման խաղաղութեան մէջ, ցոյց էին տալիս մի սարսափելի տեսարան։ Մի պատի մօտ այս տաճարի, որ երևի թէ նուիրված էր մի խորհրդական, արեանարբու եավայեան աստուծու, շինած էր մի փոքրիկ բնակարան, կոշտ ձևով շարված քարերի և աղիւսների բեկորներից։ Նորա դուռը, եղեգնից շինած վանդակով, փակած չէ. այս բնակարանի մէջ լոյս է երևում, որ կարմիր գոյն է տալիս բարձրահասակ արօտին, որոնցով շրջապատած է գետինը առ հասարակ։

Երեք մարդ նստած են այս բնակարանի մէջ հողից շինած լապտերի լուսով, որի մէջ կակօսեան թելերից շինած պատրոյգը վառվումէ կանթեղի իւղով։

Այս երեք մարդերից առաջինը հագած է եւրոպական, բայց աղքատ հագուստ. նա կը լինի քառասուն տարեկան. նորա երեսի

գունաթափ համարեա թէ սպիտակ գոյնը ցոյց է տալիս, որ նա մետիսներից է. արդարև նորա հայրը սպիտակ էր, իսկ մայրը հնդկացի։ Միւսը աֆրիկացի խափշիկ պինդ կազմուածքով, հաստ շրթունքներով, լայն ուսերով և չոր ոտքերով. նորա ոլորուն մազերը սկսել են սպիտակիլ. նորա հագուստը բոլորը կարկատաններից. նա նստած է մետիսի մօտը։ Երրորդը քնումէ, ընկած փսիաթի վերայ, բնակարանի անկիւնումը։ Այս երեք մարդիկը խեղդողների գլխաւորքն են, հալածականք հնդկաստանի ցամաքահողի վերայ. սոքա, մաքսանենգ Մահալի օգնականութեամբ, փախան եկան Եաւա կղզին։

«Բայց մինչև այժմ դեռ ևս չէ երևում մեր մալայեցին», ասաց Ֆարինգէա-մեդիսը, այս սարսափելի աղանդի բոլոր գլխաւորներից ամենազարհուրելին, «կարելի է, որ ճայլմա՞ն սպանեց նորան, մինչև նա կատարումէր մեր հրամանը»։

— Մի փոքր յառաջ պատահած կայծակից յետոյ բոլոր սողունքը դուրս եկան գետնից, — ասաց խափշիկը, — գուցէ մեր մալայեցուն խայթեց մի գեռուն և այժմ նորա մարմնի մէջ օձերն են բնակվում։

«Բարի գործին ծառայելով, չէ պիտոյ մահից վախենալ», ասաց Ֆարինգէա՛ն մռայլոտ դէմքով։

— Եւ ո՛չ սպանութենից, — յաւելացրեց խափշիկը։

Այս միջոցին լսվեցաւ մի խուլ աղաղակ և նորա քամակից մի քանի ընդհատված և անհասկանալի խօսքեր։ Խափշիկը և մետիսը նայեցան իւրեանց քնող ընկերի վերայ, որ երեսուն տարեկան էր. ոչ աւելի։ Նորա պղնձէ-դեղնագոյն անմօրուք երեսը, հագուստը կօշտ գործուածքներից, ո՛չ մեծ փակեղը, դեղին և մեխակագոյն խազերով, ցոյց են տալիս, որ նա պատկանումէ իսկապէս հնդկական ցեղի. նորա քունը ինչպէս երևումէ աղմկված է սարսափելի երազներով, քրտինքը խոշոր կաթիլներով դուրս էր գալիս նորա երեսի վերայ, որ զարհուրանք էր ցոյց տալիս։ Նա խօսումէր երազի մէջ դողդոջուն և ընդհատված ձայնով. նորա անդամքը երբեմն երբեմն քարշվումէին։

«Դարձեալ տանջումէ նորան երազը», ասաց Ֆարինգէա՛ն, «նորան դարձեալ երևումէ այն անիծած մարդը։

— Ի՞նչպէս մարդ, — հարց արեց խափշիկը։

«Մտքո՞ւմդ է, հինգ տարի սորանից յառաջ, կեննեդի գնդապետը, խեղճ հնդկացոց խիստ կորուսանողը, եկել էր Գանգէսի եզերքը վագր որսալու համար. նորա հետ կային քսան ձի, չորս փիլ և յիսուն ծառայ»։

— Այո՛, այո՛, ինչպէս միտքս չէ, — պատասխանեց խափշիկը, —

իսկ մեք երեքով նորանից լաւ որսացինք. կեննեդին, իւր ձիերովը փիլերովը և ծառաներովը, չսպանեց իւր վագրը… իսկ մեք մերը սպանեցինք, — յաւելացրեց նա գաղանական հեգնութեամբ։ Այո՛, կեննեդին, մարդու երեսով վագրը, ընկաւ մեր որոգայթի մէջ, և բարի գործի եղբարքը մատուցին այս գեղեցիկ զոհը իւրեանց Բոհվանի աստուածուհուն։ Մտքումդ է մինչ վերջին անգամ քարշեցինք կեննեդու վզի չուանը, մեք նկատեցինք մի անցորդ մարդ…. նա տեսաւ մեզ. հարկաւորեցաւ և նորան ուղարկել այն տեղ…։ Այն օրից այդ մարդը գիշատում է սորան քնի մէջ», յաւելացրեց Ֆարինդէա՛ն, ցոյց տալով իւր քնող ընկերի վերայ։

— Այո՛, քնի մէջ և արթնութեան ժամանակ, — ասաց խափշիկը, նայելով Ֆարինդէայի վերայ։

«Լսիր, ասաց Ֆարինդէա՛ն, ցոյց տալով հնդկացու վերայ, որ անհանգիստ քնի մէջ դարձեալ սկսեց խօսել ընդհատական ձայնով. «լսիր, ահա նա սկսանում է կրկնել Թափառականի պատասխանները, երբ մեք թողեցինք նորա ընտրութեանը կամ մեռանիլ կամ մեր հետ միասին ծառայել բարի գործին…։ Խեղճը բոլորովին ցնորվել է…։»

Արդարև, հնդկացին կրկնումէր քնի մէջ մի տեսակ հարցաքննութիւն, երկու մարդու տեղ խօսելով։

— Թափառական, արտաբերեց նա խուլ և դողդոջուն ձայնով, — ինչի համար քո ճակատի վերայ սև գիծ կայ, որ ձգվում է մի քունքից դէպ ի միւսը. այդ լաւ նշան չէ։ Քո հայեացքը տխուր է, ինչպէս մահ…։ Մի թէ դու վշտացած ես ուրիշների չարութեններից?… միացիր մեր հետ…։ Բոհվանին վրէժխնդիր է չարութեան։ — Դու տանջվեցար?

«Ես շատ տանջվեցայ»։

— Երկա՞ր ժամանակ։

«Շատ երկար»։

— Այժմ ևս տանջվումես?

«Այո՛, տառապել»։

— Դու ինչ ես պատրաստում այն մարդուն, որ հասուց քեզ հարուածը։

«Կարեկցութիւն»։

— Կամի՞ս վճարել հարուածը հարուածով։

«Կամիմ ատելութիւնը սիրով վճարել»։

— Բայց դու ո՞վ ես, որ բարի ես հատուցանում չարի փոխարէն։

«Ես այն եմ, որ սիրում, չարչարվում և ներում»։

— Լսում՞ս եղբայր, — ասաց Ֆարինգեա՛ն խափշիկին, — նա մի խօսք ևս չէ մոռացել, ինչ որ Թափառականը ասաց մեզ մահից յառաջ:

«Երազը դեռ ևս ամբոխում է նորան...: Լսի՛ր նա դարձեալ սկսանում է խօսել»:

— Նա ինչպէս սաստիկ գունաթափ է:

Հնդկացին դեռ ևս տանջվելով զարհուրելի երազատեսութեամբ, շարունակեց.

— Թափառական, մեք երեք հոգի ենք, մեք անվախ ենք, մահը մեր ձեռքումն է. դու տեսար թէ ինչպէս ծառայեցինք մեք բարի գործին: Ընկերացիր մեզ, ապա թէ ո՛չ մա՛հ քեզ.... Մահ.... Մահ.... Ո՛հ ինչ հայեացք է...: Մի նայի՛ր.... մի նայիր իմ վերայ այդպէս...:

Հնդկացին արտաբերելով այս խօսքերը, կատարեց յանկարծ մի շարժողութիւն, որպէս թէ կամէր հեռացնել մի բան, որ մօտենում էր նորան և վախից զարթեցաւ:

Նա ձեռքը տարաւ քրտինքով ծածկված ճակատին և անխելացած աչքերով նայեց իւր չորս կողմը:

«Եղբա՛յր», ասաց Ֆարինգեա՛ն, քեզ դարձեալ տանջում է առաջվայ երազը...: Դու կորիճ որսորդ ես մարդերի, իսկ քո գլուխը թոյլ է, լաւ որ սիրտդ և ձեռքերդ ամուր են...»:

Հնդկացին յառաջ չպատասխանեց և նստաւ, երեսը ծածկելով ձեռքերով. յետոյ ասաց, շատ ժամանակ է, որ նա երևեցած չէր ինձ երազում.... նա...:

«Նա մեռաւ», ասաց Ֆարինգեա՛ն թիկունքը վեր քարշած, «դու ինքդ չէի՞ր չուանը նորա վիզը ձգողը»:

— Այո՛, — պատասխանեց հնդկացին դողալով:

«Կարծես, մեք ինքներս գերեզման փորեցինք նորա համար կեննեդի գնդապետի գերեզմանի մօտ. ինքներս թաղեցինք նորան, որպէս և անգլիական դահիճը, աւազի և եղեգնաբոյսերի տակ», յաւելացրեց խափշիկը:

— Այո՛, մեք ինքներս գերեզման փորեցինք նորա համար աւազի և եղեգնաբոյսերի մէջ, — կրկնեց հնդկացին, բոլոր մարմնով դողալով, բայց չնայելով դորա վերայ, մի տարի յառաջ, նստել էի ես երեկոյեան ժամանակ Բոմբայի քաղաքադուռի մօտ և սպասում էի մերոնցից մինին: Արևը արդէն մայրն էր մտանում, բլուրի վերայ.... ինչպէս այժմ տեսանումեմ...: Եւ ահա նստած եմ ես.... յանկարծ լսումեմ ոտնաձայն, դանդաղ, հանգիստ, հաստատ...: Նայումեմ չորս կողմս, նա դուրս է գալիս Բոմբայի քաղաքադուռից:

«Տեսիլք», ասաց խափշիկը, «միանգամայն տեսիլք է»։

— Կամ պատահական նմանութիւն, — յաւելացրեց Փարին-գէա՛ն։

«Ես լաւ ճանաչեցի նորան ճակատի վերայի սև գծից», շարունակեց հնդկացին, «իսկապէս նա էր.... ես քարացայ զարհուրելուցս.... նա կանգնեցաւ, ուղղեց իմ վերայ իւր հեզ, տխուր հայեացքը.... ես ակամայ գանչեցի, սա նա՛ է»։

— Այո՛, ես եմ, — պատասխանեց նա իւր խաղաղ ձայնով. և բոլորը, որոնց դու տեսնում, կենդանանում նոյնպէս, ինչպէս ես։ Եւ նա ցոյց տուեց երկինքը։

Ի՞նչ հարկաւոր է տեսնել.... լսիր! Ես փախել եմ Եգիպտոսից, գնում եմ աշխարհի մի ծայրը յաւիտենական ստուերների կողմերը.... այն տեղ ուր այս տեղ, կրակը ուր անսպառ աշխարհներում, միշտ ես կը լինեմ.... այնտեղ և նոյն հոգիները, որոնց դու տեսնում ես լուսնով.... այս տեղ ուր այն տեղերկինքում.... այս ուր այն շրջապատում.... հոգին միշտ հոգի կը մնայ.... դու նորան չես կարող տեսնել։ Ի՞նչ հարկաւոր է ուրեմն տեսնել։

Եւ գլուխը շարժելով անցաւ մօտիցս, գլուխը կախելով.... բարձրացաւ բլրի վերայ, ուր շինած էր մեհեանը. ես նայումէի նորա քամակից, բայց շարժել տեղիցս չկարողացայ։ Արեգ մայրն էր մտանում. նա հասաւ մինչև բլրի գլուխը և կանգնեցաւ. նորա երկայն կերպարանքը բացարձակվեցաւ երկնքի վերայ և նա անյայտացաւ....

«Ո՛հ, դա նա էր, նա էր», յաւելացրեց հնդկացին երկար լռութենից յետոյ, բոլոր մարմնով դողալով։

Արդէն շատ անգամ պատմել էր նա իւր ընկերներին այս խորհրդական անցքի մասին և միշտ բոլորովին միակերպ։ Այս բանը վերջապէս գրգռեց նոցա անհաւատութիւնը, կամ գոնէ հարկադրեց նորանց որոնել բնական պատճառը, որ կարող էր մենել այս գերբնական անցքը։

— Կարելի է, — ասաց Փարինգէա՛ն մտածելով, — կարելի է, որ շունչը մի կերպով լաւ չէր քարշված, և նորա մէջ մնացել էր կենսական շունչ. օդը անցել է եղեգնաբոյսի միջով, որ ձգել էինք նորա գերեզմանի վերայ և նա կենդանացել է։

«Ո՛չ, ոչ», պատասխանեց հնդկացին, գլուխը շարժելով, «այդ մարդը չէ նմանում հասարակ մարդերի»։

— Ի՞նչպէս։

«Ես այժմ հասկացայ»։

— Հասկացա՞ր։

«Լսեցէք!» շարունակեց հնդկացին յաղթական ձայնով, «ըղհերի Թիւը, որ Բոհվանի աստուածուհու որդիքը բերել են նորան

գարերի սկզբից, ոչինչ բան է համեմատելով մեռածների և մեռանողների թըվի հետ, որ իւր գնացքումը թողումէ իւր քամակից այս զարհուրելի թափառականը»:

— Նա՞, — բացագանչեցին խափշիկը և ֆարինգէա՛ն:

«Այո՛ նա», պատասխանեց հնդկացին այնպիսի հաւատութեամբ, որ զարմացուց նորա ընկերքը: «Լսեցէք և դողացէք երբ պատահեցայ ես այս թափառականին Բոմբայի քաղաքագռնումը.... Նա գնումէր Ջավայից, գնումէր դէպ ի հիւսիս.... Նա ինքը ասաց ինձ...: Միւս օրը Բոմբայի մէջ կատաղեցաւ խօլերան և շուտով լուր հասաւ այն տեղ, որ յառաջ երևել է այս տեղ Ջավայում»:

— Այո՛, այդ ճշմարիտ է, — ասաց խափշիկը:

«Լսեցէք», շարունակեց հնդկացին, «ես գնումեմ դէպ ի հիւսիս, յաւիտենական սառոյցների կողմը, ասաց նա.... խօլերան նոյնպէս գնաց դէպ ի հիւսիս.... անցաւ Մասկատից, Սպահանից, Թաւրիզից.... Թիֆլիզից և հասաւ մինչև Սիբիրիա»:

— Ճշմարիտ է, — ասաց ֆարինգէա՛ն և ընկաւ մտածմունքի մէջ:

«Եւ խօլերան, մարդու նման, անցաւ մի միայն հինգ կամ վեց լիեօ ամենայն օր.... Նա երբէք չերևեցաւ երկու տեղում մի և նոյն ժամանակ.... և գնաց հանդարտ, միաչափ.... մարդու նման...»:

Այս որոշ նմանութեան ժամանակ հնդկացու ընկերքը նայեցան միմեանց երես խնլքերը բանի չհասուցանելով: Րոպէական լռութենից յետոյ խափշիկը սարսափանքով հարց արեց հնդկացուց, ուրեմն դու կարծումես....

«Ես կարծումեմ, որ մեք մինչ սպանեցինք այդ մարդը, մի աստուածութիւն դարձուցել է նորան կեանք և նշանակել է տանել ամենայն երկիր այս սոսկալի ցաւը.... և տարածել իւր չորս կողմը մահ, որ կորուստ չէր սպառնում ինքեան տարածողին...: Միտքերդ բերէք», յաւելացրեց նա մռայլոտ դէմքով, «միտքերդ բերէք, այդ զարհուրելի թափառականը անցաւ Ջավայից.... խօլերան ամայացուց Ջավա՛ն.... անցաւ Բոմբայից.... խօլերան ամայացուց Բոմբայն.... գնաց դէպ ի հիւսիս.... խօլերան ամայացուց հիւսիսը...»:

Եւ նա դարձեալ մտաւ խոր մտածողութեան մէջ: Խափշիկը և ֆարինգէա՛ն բռնված էին մռայլոտ զարմանքից:

Հնդկացին ճշմարիտն էր ասում այս առեղծուածական, և մինչև այժմ անհասկանալի, այս սարսափելի պատժի գնացքի մասին. երբէք չէր անցանում մի օրվայ մէջ առաւել քան թէ հինգ կամ վեց լիեօ և ոչինչ ժամանակ չէր երևում երկու տեղում մի ժամանակ: Ակա-

մայ զարմանումես նայելով աշխարհացոյցի վերայ այս թափառական ցուլի այն ժամանակվայ դանդաղ և անընդհատ ընթացքին. Նորա տեղից տեղ անցանելու ժամանակ երևումէ մարդու գնացքի բոլոր կամապաշտութիւնքը և պատահմունքները. Թըվումէր, թէ նորա ճանապարհը այս ուղղութենով էր. ո՛չ, նա գնումէ այլ ուղղութենով.... ընտրումէ երկրի մէջ գաւառ.... գաւառների մէջ քաղաքներ.... քաղաքների մէջ թաղ.... թաղի մէջ փողոց.... երբեմն փողոցի մէջ մի տուն.... երբեմն երբեմն կանգնումէ որպէս թէ հանգստանալով.... և յետոյ դարձեալ սկսանումէ իւր դանդաղ, խորհրդաւոր և ահարկու գնացքը:

Հնդկացու խօսքերը, որ նկարագրեց այս սարսափեցուցիչ օտարոտի բանը, անպատճառ պիտոյ է սաստիկ ներգործէին նորա ընկերների վերայ, կատաղի մարդերի, որոնց ատելի վարդապետութիւնը հասուցել էր նորանց մինչև մարդասպանական խելագարութեան:

Այո՛, այդ տարակուսի չէ ենթարկվում, Հնդկաստանում հասարակութիւն կար մարդերի, որոնք մարդ էին սպանում ամենեին սառնասրտութեամբ առանց պատճառի, սպանումէին մի միայն այն պատճառով, որ սպանեն.... որովհետև այդ գործողութեան մէջ մի զուարճութիւն և բերկրանք էին զգում.... սպանումէին նորա համար, որ կեանքը մահով փոխանակեն.... որ կենդանի մարդերից դիակներ շինեն, ինչպէս նոքա ինքեանք ասացին մի հարցաքննութեան ժամանակ...»:

Մարդկային միտքը չէ կարող հասանել այս գաղանական յայտնութեան պատճառներին, ի՞նչ հանգամանքներ, ի՞նչ հարկադրութիւնք պատճառ են եղել, որ մարդիկ նուիրել են իւրեանց անձը մահի ծառայութեան: Առանց ամենայն տարակուսի է, որ այսպիսի վարդապետութիւնը կարող էր իւրեան հետևող գտանել մի աշխարհում, որի մէջ, որպէս Հնդկաստանում, կայ ամենածանր ամենացած ստրկութիւն: Այսպիսի վարդապետութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ո՛չ սաստիկ հարստահարվածների ատելութեան ցոյցը դէպ ի մարդկային ցեղը: Արժանի է ուշադրութեան այն, որ այս ընկերութեան մէջ մի անթարգմանելի շաղկապ միաւորումէ նորա բոլոր անդամները միմեանց հետ, հեռացնելով նորանց ուրիշ այլ մարդերից. խեղդողների մէջ կան նոցա սեպհական օրէնքները, իւրեանց սովորութիւնքը. նոքա օգնումեն ընկերներին, պաշտպանումեն միմեանց, պատրաստ են մինչև անգամ իւրեանց կեանքը տալ իւրեանց եղբօր համար. իսկ նոցա համար չ՛կայ հայրենիք և ո՛չ ընտանիք. նոքա գտանվումեն խաւար, խորհրդական իշխանութեան ազդեցութեան տակ, որի հրաման-

ներին առանց հակառակաբանութեան հնազանդվումեն կուրօրէն և նորա կամքով ցրվումեն ամենայն տեղ, որ Թխուգներ չինեն...: 1)

Մի քանի ժամանակ ֆանզիկարները լուռ մնացին. լուսինը թափումեր աւերակների փառահեղ մեծութեան վերայ արծաթափայլ լուսի շառաւիղքը և երկայն կապտագոյն ստուերներ. երկնքումը փայլումէին աստղերը. հազիւ երբեմն թեթև հողմը խաղումեր արմաւենու և բանանների հաստ և փայլուն տերևների հետ:

Պատուանդանը ահագին արձանին, որ, ամբողջ մնալով, կանգնած էր պատշգամբի ձախ կողմումը, ամրացած էր լայն տախտակների վերայ, կիսով չափ ծածկված թփերով:

Յանկարծ մինը այս տախտակներից ցած գնաց գետնի տակ. ծակից, որ այս կերպով բացվեցաւ, առանց ամենայն աղաղակի դուրս եկաւ կիսով չափ նշանազգեստով մի մարդ, նայեցաւ չորս կողմը և սկսեց ականջ դնել: Նկատելով, որ բնակարանի մէջ վառվող կանթեղի լոյսը փայլումէ բարձր արօտի վերայ նա շուռ եկաւ և ձեռքով նշանացի արեց. յետոյ նա և երկու ուրիշ այլ գինուորներ, ամենամեծ խաղաղութեամբ, ամենամեծ զգուշութեամբ բարձրացան

---

1) Ահա Գ. կոմս դը Վարրենի արժանի հարցասիրութեան գրքի, 1831 թուականում անգլիական Հնդկաստանի վիճակի մասին, այն տեղը:

«Բաց ի աւազակներից, որ սպանումեն ճանապարհորդներին, յուսալով մի բան կողոպտել նորանցից, գտանվումէ դեռ ևս մի առանձին կարգ (կացութիւն, классъ) մարդասպանների, որ մի մասնաւոր հասարակութիւն են կազմում, որի մէջ կան. նորանց սեպհական իշխանաւորքը, նորա գիտութիւնը, Ֆրանկ Մասօնականութիւնը (հասարակ ժողովրդի խօսածով, ֆարմազօնութիւն), նորա սեպհական կրօնը, մոլակրօնքը, գործակալքը, աշխատակիցքը, զօրք, և բարեգործ — անդամները, որ օգնումեն բարի գործին իւրեանց նուիրագործութեններով: Այս Ցուգն'երի կամ ֆանզիկարների հասարակութիւնն է (խաբեբաների կամ խեղդողների. թուգն, նշանակումէ խաբել, իսկ ֆանսա, խեղդել). կրօնական և վնասակարար հասարակութիւն, որի վատակը է կորուսանել մարդկային ազգը: Այս հասարակութեան սկզբնաւորութիւնը ծածկվումէ ժամանակի մառախղի մէջ: Մինչև 1810 թուականը, այս հասարակութեան լինելը յայտնի չէր ոչ թէ միայն եւրոպական տիրապետողներին, այլ և տեղացի կառավարութեններին: 1810—1830, շատերը նոցա ընկերութենից բռնըվեցան գործողութեան վերայ և արժանի պատիժը ստացան. բայց մինչև վերջին ժամանակները, ինչ որ պատմումէին նոցա վերայ զանազան գիտնական անգլիական աստիճանաւորք, այնքան օտարոտի էր երևում, որ ոչ ոք չ'կամէր հաւատալ. ոչ ոք մինչև անգամ ուշադրութիւն չէր դարձնում այս բանի վերայ. այս պատմութիւնքը համարումէին խանգարված երևակայութեան հեղինակութիւնք, մինչև արդէն շատ տարիներ համարեա կէս դար այս հասարակական ցաւը ուտումէր մարդկային ազգը և սարսափելի կերպով տարածվումէր Հիմալայից մինչև Կօմորին հրուանդանը, Կուաչայից մինչև Աս-

գետնատակի սանդուղքի վերջին աստիճանների վերայ և թաքնվեցան աւերակների մէջ. մի քանի ժամանակ դեռ ես նոցա շարժող շուքերը երևեցան տեղ տեղ, որ լուսաւորումէր լուսինը. յետոյ անյայտացան բոլորովին կիսաւեր պատերի քամակում:

Այն միջոցին, երբ հաստ տախտակը գալիս էր իւր առաջին տեղը, երևեցան գլուխներ և մի քանի այլ զինուորների, որ թաքնըված էին գետնափորում:

Մեսրոպը, հնդկացին և խափշիկը, նստելով աւերակներում և մտած լինելով խոր մտածողութենների մէջ, ոչինչ չնկատեցին:

VI.

ԴԱՐԱՆ

Մեսրոպ Փարինգեան, ինչպէս երևումէր, ցրուել կամելով սև մտածողութիւնքը, որ տիրել էր նորան հնդկացու խօսելից, խօլեռայի խորհրդաւոր գնացքի մասին, յանկարծ խօսակցութիւնը փոխեց այլ առարկայի վերայ: Նորա աչքերը փայլատակեցան դժոխային կրակով,

սամ»: «Վերջապէս 1830 թուականին ֆանզիկարների երևելի առաջնորդներից մինը, որին ներողութիւն և ողորմութիւն էր խոստացված, եթէ մատնէր նա իւր ընկերքը, լիակատար ծանօթութիւն տուեց իւրեանց կարգի մասին: Խեղդողների և խաբեբաների ընկերութեան հիմքը է կրօնական հաւատաւորութիւն, պաշտելութիւն մի սև, Բոհվանի անունով աստուածութեան, որ սիրումէ միայն սպանութիւն և ատումէ ամբողջ մարդկային ազգը: Նորա ամենախորժ զոհը է մարդասպանութիւն, մի մարդ որքան շատ մարդ սպանէ, այնքան շատ կը վարձատրվի միւս կեանքում, այնքան շատ կին կը ստանայ, միշտ գեղեցիկ և միշտ նոր բերկրութիւնք, ֆանզիկարը, ընկնելով եղափոտի վերայ, մեռանումէ ոգևորութեամբ որպէս մարտիրոս, հաստատ հաւատով, որ վարձը սպասումէ նորան: Աշխատելով հաճոյանալ իւր աստուածային հրամայողին նա սպանումէ սառնասրտութեամբ առանց խղճի խայթոցի, և ծերը և կինը և մանուկը. իւր ընկերների յարաբերութեան մէջ, նա բարի, կարեկից, մեծահոգի, բոլորովին անձը դրած նոցա համար, պատրաստ է կիսել նոցա հետ, ինչ որ ունի, որովհետև և նոքա, նորա նման են. Բոհվանի աստուածուհու որդիք, նորա հրամանակատարքը: Ֆանզիկարի խորհուրդը է սպանել իւր նմանները, եթէ նոքա չէին պատկանում նորա ընկերութեանը, ոչնչացնել մարդկային ազգը. չարասիրութիւնը այս տեղ երկրորդական բան է. աւարը, նորա կարծիքով, մի հանգամանք է, ինչարկէ բոլորովին ախորժ, բայց օտար, չնչին. սպանութիւնը պարտականութիւն է, նորա կեանքի խորհուրդը:

«Իմ որ 1831 և 1832 թուականներին պատահած է Հնդկաստան, նորա միտքը կը լինի թէ ինչ աննկարագրելի զարհուրանք տարածվեցաւ բոլոր հասարակութեան մէջ երբ յայտնագործեցին այս դժոխային հասարակութիւնը»:

նորա դէմքի գծագրութիւնը ընդունեց յանկարծ կատաղի յաղթականութեան կերպարանք և գանչեց. «մարդկանց աներկիւղ որսորդներ, որ միշտ Բոհվանու պաշտպանութեան տակ էք, արիացէք եղբարք! Աշխարհը լայն է.... մեր համար ամենայն տեղ զոհեր կան.... մեք առաջնորդք ենք բարի գործի եղբայրութեանը...: Անգլիացիք հալածումեն մեզ Հնդկաստանից!... Ի՞նչ փոյթ. այն տեղ մնումեն մեր եղբարքը այնքան շատ, այնքան աներևոյթ, այնքան ահարկու, ինչպէս սև կարիճներ, որոնք մահաբեր խայթելովը իմացնումեն իւրեանց ներկայութիւնը: Հալածանքը մեծացնումէ մեր տէրութիւնը...: Եղբա՛յր, քեզ Ամերիկա՛ն», ասաց նա հնդկացուն ոգևորութեամբ: «Եղբա՛յր քեզ Աֆրիկա՛ն», շարունակեց նա դառնալով դէպ ի խափշիկը...: «Եղբա՛րք ինձ Եւրոպա՛ն! Ամենայն տեղ, ուր որ կային մարդիկ կը գտանվին դահիճներ և զոհեր.... ամենայն տեղ, ուր որ կային զոհեր, կը գտանվին ատելութեամբ լցված սրտեր. մեր գործը, արծարծել այս ատելութիւնը և փոխարկել նորան դէպ ի վրէժխնդրութեան անզովանալի ծարաւ: Մեք, Բոհվանու պաշտօնեայքս, պարտական ենք գործ դնել խորամանգութիւն, հրապոյր, մեր կողմը քարշելու համար նորանց, որոնց ջերմեռանդութիւնը, արիութիւնը, անվեհերութիւնը կարող են մեզ օգուտ բերել. մեր մէջ և մեր համար, մեք պարտական ենք պաշտպանել միմեանց, օգնական լինել միմեանց: Թող մեզ զոհ լինին բոլոր մեր հակառակորդքը. բաժանվինք բոլորից, վերկանգնենք բոլորի ընդդէմ ողջին հակառակ, հայրենիք կամ ընտանիք չ՛կան մեր համար. մեր եղբարքը մեզ ընտանիք, բովանդակ աշխարհը, հայրենիք»:

Այս վայրենի գեղեցկախօսութիւնը սաստիկ ներգործեց խափշիկի և հնդկացու վերայ. Նոքա համարեա թէ միշտ հնազանդվումէին Ֆարինգէայի հանճարին, որ գերազանցումէր քան թէ իւր ընկերները իւրեան մտացի ընդունակութեններովը, թէ և այս երկուքը ևս պատկանումէին այս արեան ծարաւ հասարակութեան գլխաւորների շատ երևելիներին:

— Այո՛, եղբայր, դու ճշմարիտ ես ասում, — ասաց հնդկացին, նոյնպիսի ոգևորութեամբ որպէս և Ֆարինգէա՛ն, — բովանդակ աշխարհը մեզ է պատկանում, բայց մեք այս տեղ ևս Ճավայում կը թողունք մեր ներկայութեան հետքերը...: Մինչև մեր գնալը մեք բարի գործի հիմը կը դնենք և այս տեղ.... Նա շուտով կը ծաղկի. պատճառ, այս տեղ շատ աղքատութիւն կայ: Հօլլանդացիք այնպէս ագահ են ինչպէս Անգլիացիք...: Եղբայր, այս տեղ ջերմ դաշտերում, որ մահաբեր է մշակողների համար, ես տեսայ մարդիկ, որոնց հարկադրումէ կարօտութիւնը ձեռք տալ այդ կորստական աշխատու-

թեանը. Նոքա աղքատ են ինչպէս դիակ. միւսերը, տկարացած ծանր աշխատութիւններից, կերակրի պակասութենից, ընկնումեն և այլ չեն վեր կանգնում.... եղբայր, բարի գործը կ'ընդունվի այս աշխարհում:

«Շատ ժամանակ չէ, երեկոյեան», ասաց Մետիսը, «ես կանգնած էի լճի եզրումը թաքնված ապառաժի քամակում.... և ահա գալիս է մի մատաղահաս կին. նորա վատուժ, արևից այրված մարմինը ծածկված է միմիայն քուրձերով. նորա գրկումը պահած էր մի երեխայ. կինը արտասուք թափելով սեղմումէր մանուկը իւր չորացած կուրծքին: Նա երեք անգամ գրկախառնեց նորան և ասաց, գոնէ դու այնքան անբաղդութիւնք քաշելու չես որքան քո հայրը քաշեց.... և ձգեց իւր մանուկը ջուրը:

Երեխայն գանչեց, անյայտանալով ալիքների տակ, և կոկոդիլոսքը խաղացին ուրախութենից...: Եղբա՛րք, այս տեղ մայրերը սպանումեն իւրեանց զաւակները նորանց սիրելուց...: Բարի գործը կը ծաղկի այս տեղում»:

— Այսօր առաւօտ, — ասաց Խափշիկը, — մի Բատավիացի վաճառական, տկարանձն ծերիկ քաղաք էր վերադառնում իւր քաղաքից դուրս տնից. այն միջոցին, երբ նորա ստրուկներից մինի մարմինը ջարդումէին խարազանով, նա, նստած պատգարակի վերայ, ընդունումէր կշտացած սառնասրտութեամբ իւր կանանոցից երկու մատաղահաս խեղճ ողորմելի աղջկերքի հարկադրական փաղաքշանքը. Նա այս աղջկերքը գնումէ նոցա մայրերից, որ հնար չունէին իւր զաւակները կերակրելու: Քսան հատ պատանի, առողջ ստրուկներ տանումէին ուսի վերայ պատգարակը, որի մէջ նստած էր ծերիկը իւր աղջիկներով: Եղբա՛րք, այս տեղ մայրեր կան, որոնք աղքատութենից վաճառումէին իւրեանց դստերքը, կան ստրուկներ, որոնց պարոն կարող է գիշատել, ինչպէս խելքին փչէ. կան մարդիկ, որ անասունի նմանելով իւրեանց վերայ տանումեն այլ մարդիկ...: Եղբա՛րք, բարի գործը այս տեղ կ'արմատանայ:

«Այժմ մեզ մնումէ միայն, ինչպէս Մահալը խորհուրդ է տալիս, համոզել Ճայլմա՛ն, որ պաշտօնեայ դառնայ Բոհվանուն», ասաց Հնդկացին, «այն ժամանակ մեր այս տեղ եղածը կրկին օգուտ կը բերէ, որովհետև, մեր այս տեղից գնալուց յառաջ, մեք միաւորումենք մեր հասարակութեան հետ այդ վճռական և երևելի պատանի մարդը, որ այնքան պատճառներ ունի ատել մարդիկ»:

— Նա պէտք է շուտով գայ.... գրգռենք նորա արհամարհութիւնը, յիշեցնենք նորա հոր մահը:

«Նորա բոլոր ազգականների սպանվելը»:

— Նորա բանդի մէջ դրվիլը։

«Միայն թէ յաջողէր արծարծել նորա սրտի մէջ ատելութեան լափող բոցը։

Խափշիկը, որ, բաւական ժամանակ է, ոչինչ չէր խօսում, որպէս թէ թաղված լինելով մտածմունքների մէջ, յանկարծ ասաց. — եղբարք, բայց եթէ այդ Մահալը մեզ խաբում է։

«Խաբո՞ւմ է», բացագանչեց հնդկացին համարեա թէ արհամարհանքով, դու մոռանում ես, որ նա ընդունեց մեզ իւր նաւի մէջ, հնար տուեց մեզ Հնդկաստանից փախչելու. յետոյ խոստացաւ տանել մեզ դարձեալ նաւը, որ պիտոյ է վարէ, և տանի Բօմբայ՝ ուր կը գտանենք մեք Աֆրիկա, Ամերիկա, և Եւրոպա գնացող նաւեր»։

— Բաց ի սորանից, նորա օգուտը ինչ է մեզ խաբելուց, — ասաց Ֆարինգէա՛ն։

«Նա արդէն գիտէ, որ այն ժամանակ չէ ազատվելու Բոհվանու զաւակների սարսափելի վրէժխնդրութենից»։

— Վերջապէս, — յաւելացրեց խափշիկը, նա ինքը չ՛խոստացաւ մեզ նենգաւորութեամբ այս տեղ բերել Ճայլմա՛ն. բայց երբ նա կը գայ այս տեղ, այն ժամանակ կամայ ակամայ պիտոյ է մնայ մեր հետ։

«Նոյնպէս ինքը Մահալը ասաց մեզ, հրամայեցէք մալայեցուն մտանել Ճայլմայի տաղաւարը և փոխանակ, որ սպանէ նորան (որ շատ հեշտ էր), նկարել նորա ձեռքի վերայ Բոհվանու անունը։ Այս բանը ցոյց կը տայ նորան մերայնոց բոլոր աջողակութիւնը, հնազանդութիւնը, և անվեհերութիւնը. նա կը հասկանայ, որ այսպիսի մարդերից պիտոյ է զարհուրիլ եթէ չէ պատկանում նոցա ընկերութեանը։ Յարգելուց թէ երկիւղից նա այնու ամենայն մեզ կը պատկանի»։

— Բայց եթէ նա, չնայելով, որ կատարեալ իրաւունք ունի մարդիկը ատելու, չ՛կամենայ մտանել մեր ընկերութեան մէջ?

«Այն ժամանակ.... Բոհվանին կը վճռէ նորա վիճակը», ասաց Ֆարինգէա՛ն մռայլոտ դէմքով, «ես գիտեմ այն ժամանակ իմ գործը. .»։

— Բայց կարո՞ղ է արդեօք մեր մալայեցին դրոշմել Ճայլմային նորա քնած ժամանակը, — ասաց խափշիկը։

«Հազիւ թէ գտանվի նորանից համարձակ, յաջող և արագ», ասաց Ֆարինգէա՛ն։ «Միանգամ նա մտաւ սև ընձի որջի մէջ այն ժամանակ երբ նա ծիծ էր տալիս իւր ձագերին. սպանեց մայրը, յափշտակեց ձագերը և վաճառեց մի եւրոպական կապիտանի. .»։

— Մալայեցին կատարել է իւր գործը յաջողութեամբ, — գանչեց Հնդկացին, լսելով մի օտարոտի աղաղակ, որ լսվեցաւ գիշերի և անտառների լռութեան մէջ։

«Այո՛, այդ անգղի ձայն է մինչ նա յափշտակումէ իւր զոհը», ասաց Հնդկացին, ականջ դնելով ձայնին, «նշանակումէ, մալայեցին աւարտել է իւր գործը յաջողութեամբ»։

Մի քանի ժամանակից յետոյ մալայեցին երևեցաւ բնակարանի դռնումը։ Նա փաթաթված էր մի տեսակ բամբակեայ պայծառ զանազան գունով ներկած պաստառի մէջ։

— Ի՞նչպէս են բաները, — անհանգստութեամբ հարց արեց խափշիկը։

«Ճ՚այլմա՛ն, մինչև իւր կեանքի վերջը, պիտոյ է կրէ իւր վերայ Բօրէ-Գօրծէ նշանը, հպարտ պատասխանեց մալայեցին. կամելով մտանել նորա տաղաւարը ես հարկադրված էի զոհ բերել Բոհվանուն ճանապարհի վերայ ինձ հանդիպող մարդը... Նորա դիակը ընկած է թփերի մէջ ոչ շատ հեռի աժուպայից, և Ճայլմա՛ն պիտոյ է կրէ յաւիտեան իւր ձեռքերի վերայ մեր նշանը։ Մահալը առաջինը լուր ստացաւ այս մասին»։

— Ու Ճայլմա՛ն չզարթեցաւ, — հարց արեց Հնդկացին զարմանալով մալայեցու յաջողակութեան վերայ։

«Եթէ նա զարթէր», պատասխանեց մալայեցին հանգստութեամբ, — այն ժամանակ ես պիտոյ է մնաս բարով ասէի իմ կեանքին, որովհետև ինձ հրամայած չէր նորան սպանել։

— Այն պատճառով, որ նորա կեանքը մեզ առաւել օգուտ կը բերէ քան թէ նորա մահը, — ասաց Մետիսը։ Յետոյ դառնալով դէպ ի մալայեցին, ասաց, — եղբա՛յր, դո՛ւ, կեանքդ վտանգի մէջ ձգելով բարի գործին համար, այն գործը կատարեցիր այսօր, ինչ որ մեք կատարեցինք երեկ, և ինչ որ պիտոյ է կատարենք էգուց։ Այսօր հնազանդվումես դու ուրիշների կամքին, էգուց ինքդ կը հրամայես ուրիշներին։

«Մեք բոլորս Բոհվանու պաշտօնեայ ենք», պատասխանեց մալայեցին, «այլ ինչ է պահանջվում ինձանից ես պատրաստ եմ»։

Այս ասելով մալայեցին կանգնած էր երեսով դէպ ի բնակարանի մուտքը։

— Ճ՚այլմա՛ն գալիս է, արտաբերեց նա կիսաձայն, — Մահալը չխաբեց մեզ։

Հարկաւոր է, որ նա չտեսանէ ինձ», ասաց Ֆարինդէա՛ն, մտանելով բնակարանի մութն անկիւնը և թաքնվելով փսիաթի տակ. աշ-

խատեցէք համոզել նորան. եթէ նա չհամաձայնի.... ես արդէն գիտեմ իմ գործը...»:

Հազիւ թէ ֆարինգէա՛ն թաքնվեցաւ, մինչ Ճայլմա՛ն մօտեցաւ բնակարանի դուռին: Ճայլմա՛ն տեսանելով այս գազանական երեսներով երեք մարդիկը յետ յետ գնաց. յետոյ չկարծելով, թէ այս մարդիկը պատկանէին խեղդողների աղանդին, և գիտելով, որ այս կողմերումը, ուր դեռ ևս չկային պանդոկներ, ճանապարհորդքը գիշերումէին տաղաւարների և աւերակների մէջ, որ պատահումէին նոցա ճանապարհի վերայ, մօտեցաւ նոցա: Հանդերձից և երեսի գունից ճանաչելով, որ այս մարդերից մինը հնդկացի է, Ճայլմա՛ն ասաց նորան հնդկերէն. — Ես կարծումէի, թէ կը տեսանեմ այս տեղ մի Եւրոպացի, Ֆրանսիացի:

Հասկանալով Ճայլմայի հարցմունքից, թէ ինչ հնար էր գործ դրել Մահալը, որ յօժարեցնէ նորան դարանը գալ, հնդկացին, յոյս ունէր, թէ առանց հանելու նորան այս մոլորութենից, առաւել լաւ կարող են երկար պահել նորան այն տեղ:

«Դու գիտե՞ս նորան», հարց արեց Ճայլմա՛ն:

— Նա ո՛չ միայն քեզ այլ և մեզ նշանակել է այս տեղ տեսաւորութիւն, — պատասխանեց հնդկացին:

«Ինչ բանի համար», հարց արեց Ճայլմա՛ն առաւել ևս զարմացած:

— Կ'իմանաս.... երբ նա կը գայ:

«Գեներալ Սիմոնը հրամայել է ձեզ այս տեղ հաւաքվիլ?» հարց արեց Ճայլմա՛ն, զարմանքով, որ հետ զհետէ սաստկանումէր:

— Այո՛, գեներալ Սիմոնը:

Այս խօսքից յետոյ մի քանի րոպէ լռութիւն տիրեց: Ճայլմայի բոլոր ջանքը, մեկնելու մի կերպով այս օտարոտի պատահմունքը, զուր գնացին:

«Ի՞նչ մարդիկ էք դուք», հարց արեց Ճայլմա՛ն կասկածոտ դէմքով. որովհետև հնդկացու ընկերների մռայլոտ լռութիւնը կասկածանք յառաջացուցին Ճայլմայի սրտում:

— Ով ենք մեք? — պատասխանեց հնդկացին, — մեք քո՛ն ենք.... եթէ դու համաձայնիս մերը լինել:

«Դուք ինձ հարկաւոր չէք.... ես ձեզ հարկաւոր չեմ»:

— Այդ յայտնի չէ:

«Ինձ յայտնի է...»:

— Ո՛չ, յայտնի չէ.... Անգլիացիք սպանեցին քո հայրը.... նա իշխան էր.... իսկ քեզ բանդի մէջ դրեցին.... այժմ դու ոչինչ չունիս...:

Այս խիստ յիշատակութեան ժամանակ Ճայլմայի երեսը ստացաւ մռայլոտ կերպարանք։ Նա ցնցվեցաւ.... դառն ժպիտը խաղաց նորա շրթունքների վերայ։

Խնդրողը շարունակեց, «քո հայրը արդարադատ, քաջ մարդ էր. հպատակները պաշտումէին նորան.... անուանումէին նորան հայր մեծահոգւոյ, և արժէր.... և դու առանց վրէժխնդրութեան թողումես նորա մահը....։ Միթէ ատելութիւնը, որ աղմկումէ քո սիրտը, պտուղ չէ բերելու։

— Իմ հայրը մեռաւ զէնքը ձեռքին, ես իմ վրէժը առի Անգլիացիներից, որոնց հարուած հասուցի պատերազմի դաշտումը...։ Նա, որ ինձ հօր փոխանակ եղաւ և պատերազմեցաւ հօրս տեղ, ասաց ինձ, թէ անխելքութիւն է իմ այժմեան դրութեան մէջ Անգլիացոց հետ պատերազմ մտանել և թէ ոչինչ կարելութիւն չ՛կայ խլել նոցանից իմ տէրութիւնը...։ Երբ նոքա ինձ արձակեցին, ես ուխտեցի միւս անգամ չ՛վերադառնալ Հնդկաստան.... և սովորած եմ հաւատարմութեամբ կատարել իմ խոստմունքը։

«Նոքա, որ զրկեցին քեզ ամենայն բանից, բանդի մէջ պահեցին քեզ և սպանեցին քո հայրը.... մարդիկ են.... կը գտանվին այլ մարդիկ, որոնցից կարող ես քո վրէժը առնուլ...»։

— Մի մոռանար, որ դու ինքդ ևս մարդ ես։

«Այս, և նոքա, որ նման էին ինձ, վեր են հասարակ մարդերից.... մեք վերաբերութեամբ դէպ ի մարդկային ազգը նոյն ենք, ինչ որ անվախ որսորդքը վերաբերութեամբ դէպ ի վայրենի գազանքը, որոնց քամակից վազումեն անտառների մէջ։

— Քո խօսքերը, քանի գնումեն, առաւել անհասկանալի են դառնում.... ես դէպ ի ո՛չ ոք ատելութիւն չունիմ...։ Եթէ թշնամիս արժանի է ինձ, ես պատերազմումեմ նորա հետ.... իսկ թէ նա երկչոտ է, ես արհամարհումեմ նորան...։ Այս պատճառով իմ սիրտը ատելութիւն չէ զգում ոչ դէպ ի քաջերը և ոչ վատերը։

«Դաւաճանութիւն!» գանչեց յանկարծ խափշիկը, դուռը ցոյց տալով. պատճառ հնդկացին և Ճայլմա՛ն հեռացել էին նորանից և գտանվումէին այն ժամանակ բնակարանի անկիւնում։ Լսելով խափշիկի բացագանչութիւնը, Ֆարինգէա՛ն, որին չէր նկատել Ճայլմա՛ն առաջ մղեց փխաթը, յափշտակեց դաշնակը, ցայտկեց որպէս վագր և մի ակնթարթում գտանվեցաւ բնակարանի դրսումը։ Տեսանելով, որ զինուորների խումբը զգուշութեամբ մօտենումէր բնակարանին, նա մահաբեր հարուածով զարկեց նորանցից մինին, երկու ուրիշ այլ զինուորների ցած ձգելով թաքնվեցաւ աւերակների մէջ։ Այս բաները այնպէս շուտով կատարվեցան, որ երբ Ճայլմա՛ն չորս կողմը

նայեց, Մետիսը չ՚կար: Մի քանի զինուորք ընկան նորա քամակից վազելով, միւսերը յարձակվեցան դէպ ի բնակութեան դուռը և բռնեցին Ճայլմային և երեք խեղդողներին:

Խափշիկը, մալայեցին և հնդկացին, տեսանելով, որ չէ կարելի հակառակվել, մի քանի խօսք ասացին միմեանց և յետոյ պարզեցին ձեռքերը՛ դէպ ի չուանը, որ բերել էին զինուորքը:

Այս միջոցին մտաւ բնակարանի մէջ հօլլանդեան կապիտանը, խումբի հրամանատարը:

— Բայց սորան ինչի՞ չէք կապում, — ասաց նա զինուորներին, որ կապումէին Ֆանզիկարների ձեռքերը:

«Կարգը և նորան կը հասանի», պատասխանեց մի ծեր սերժանտ:

Ճայլմա՛ն քարացել էր զարմանքից և չէր հասկանում, թէ ինչ է լինում իւր չորս կողմը: Բայց նկատելով, որ մի սերժանտ և երկու զինուոր մօտենումէն իւրեան չուաններով, որ կապեն, նա վերին աստիճանի արհամարհանքով մղո՛ն տուեց նորանց և յարձակվեցաւ դէպ ի դուռը, ուր կանգնած էր օֆիսիերը: Զինուորքը կարծելով, որ և Ճայլմա՛ն կը հնազանդի, ինչպէս միւսերը, ամենեին չէին սպասում այսպիսի ընդդիմադրութեան, յաղթահարված նորա ազնուութենից և փառահեղ դէմքից, նոքա մի քանի քայլ յետ յետ գնացին:

— Ի՞նչ պատճառով կամիք ինձ կապել, ինչպէս այդ մարդերին... — հարց արեց նա հնդկերէն, դառնալով դէպ ի օֆիսիերը, որ շատ ժամանակ ծառայելով հօլլանդական գաղթականների մէջ, շատ լաւ գիտէր այդ լեզուն:

«Ինչ բանի համար կամին քեզ կապել, արհամարհելի դու?» բացագանչեց կապիտանը, «այն պատճառով, որ դու ևս երևի պատկանումես այդ մարդասպանների ընկերութեանը: Ի՞նչ էք կանգնել» շարունակեց նա հօլլանդերէն դառնալով դէպի զինուորքը. «ամուր կապեցէք դորան, մինչև որ դորա վիզը անցուցանեն այլ չուան»:

— Դուք սխալվումէք, — ասաց Ճայլմա՛ն սառնութեամբ և արժանաւորութեամբ, որ զարմացուցին օֆիսիերը, — ես քառորդ ժամից աւելի չէ, որ այս տեղ եմ...: Ես չեմ ճանաչում այդ մարդիկը.... և եկած եմ այս տեղ յուսալով գտանել մի Ֆրանսիացի...:

«Դու դեռ ևս պիտոյ է հաւատացնես, որ նոյնպէս խեղդող չես, որպէս և նոքա? և ո՞վ կը հաւատայ քո պատմութեանը», ասաց օֆիսիերը:

— Ինչպէս! — բացագանչեց Ճայլմա՛ն և այնպիսի ամբոխմունք ցոյց տալով, որ կապիտանը իսկոյն նշանացի անելով դադարեցրեց իւր զինուորքը, որ մօտենումէին Ճալմային չուաններով, որ կապեն

Հաճի Սինդի որդին. — Նոքա պատկանումեն արհամարհելի մարդասպանների ընկերութեանը!... և դուք կարծումէք, ես նոցա ընկեր եմ?... այդ դիպուածումը ես բոլորովին հանգիստ եմ, — յաւելացրեց պատանի իշխանը, արհամարհանքով Թիկունքը վեր քարշելով։

«Այդ դեռ հերիք չէ, որ ասումես, որպէս Թէ հանգիստ էիր», պատասխանեց օֆիսիերը, «մեզ այժմ յայտնի է, Թէ ինչ նշաններով ճանաչվումէ խեղդողը»։

— Ասումեմ ձեզ, որ ես ձեզանից պակաս չեմ արհամարհում այդ գարշելի մարդասպանքը, — ասաց Ճայլմա՛ն, — և եկայ այս տեղ այն պատճառով, որ....։

«Դու ճշմարիտ ես ասում», ասաց խափշիկը օֆիսիերին, կտրելով Ճայլմայի խօսքը, «բարի գործի պաշտօնեայքը ճանաչվումեն նշաններից, որ նկարած էին նոցա մարմնի վերայ...։ Մեր ժամը հասած է. մեք պատրաստ ենք դէպ ի կախաղան.... մեք և առանց դորան ևս շատ սպանեցինք մարդիկ, որ չէին ծառայում բարի գործին.... քննի՛ր մեր ձեռքերը, յետոյ, և նորանը։

Օֆիսիերը հակառակ հասկանալով, ինչ որ ասաց խափշիկը, ասաց Ճայլմային, — ի հարկէ, եԹէ, ինչպէս ասումէ այս խափշիկը, քո ձեռքի վերայ նկարած չէ նոցա խորհրդական նշանը... իսկ այդ մեք իսկոյն կը վճռենք.... եԹէ դու բաւականացուցիչ կերպով կը մեկնես, Թէ ինչ կերպով մտել էիր այս տեղ, այն ժամանակ երկու ժամից յետոյ մեք կ՚արձակենք քեզ։

«Դու չ՚հասկացար իմ ասածը», ասաց խափշիկը. «իշխան Ճայլմա՛ն մերն է, նորա ձեռքի վերայ նոյնպէս նկարած է Բոհվանու անունը։

— Այո՛, նա ևս նոյնպէս պաշտօնեայ է բարի գործին, — յաւելացրեց մալայեցին։

«Նա նոյնպէս խեղդող է!» ասաց հնդկացին։

Նարկանալով Ճայլմայի վերայ, որ նա այնպիսի զզուանք ցոյց տուեց, լսելով որ նոքա խեղդողք էին, այս երեք մարդիկը դժոխային ուրախութեամբ աշխատումէին վտանգի մէջ ձգել նորան, ապացուցանելով, որ նա ևս Փանզիկար է։

Ի՞նչ պատասխան կը տաս սորա ընդդէմ, — հարց արեց օֆիսիերը։

Ճ՚այլմա՛ն արհամարհանքով Թիկունքը վեր քարշեց և, մերկացնելով ձախ Թեւը, ցոյց տուեց իւր մերկ ձեռքը։

«Ինչ անսովոր յանդգնուԹիւն!» բացագանչեց օֆիսիերը։

Մի փոքր խաղեց ցած Ճայլմայի ձեռքի ներսի կողմումը, պարզ, հնդկական տառերով, պայծառ կարմիր գունով գրված էր Բոհվանու անունը։ Օֆիսիերը վազեց մալայեցու մօտ, մերկացուց ձեռքը, նորա ձեռքի վերայ ևս նոյն նշանները կային.... չ՚հերիքանալով այս-

չափով, նա քննեց և խափշիկի և Հնդկացու ձեռքերը, և նոցա վերայ ևս գտաւ նոյն նշանները: «Չարագործ!» բացագանչեց նա կատաղութեամբ, մօտենալով Ճայլմային, «դու առաւել ևս արժանի ես պատուհասի քան թէ քո ընկերքը: Կապեցէք դորան», ասաց նա զինուորներին, «պրկեցէք դորան որպէս արհամարհելի չարագործ, որ գերեզմանի բերանում սուտ է խօսում, նորան շատ չէ մնում այլ ևս ապրել:

Ճ՚այլման քարացած զարմանքից, ուղղեց իւր անշարժ աչքերը այս ճակատագրական նշանների վերայ, առանց ամենևին ձայն հանելու: Նորա բանականութիւնը խաւարեցաւ, տեսանելով այս անհասանելի փոխակերպութիւնը:

—Չ՚կամիս արդեօք հաւատացնել դարձեալ, թէ քո վերայ չ՚կային այդ նշանները?— գանչեց օֆիսիերը:

«Ես չեմ կարող հաւատացնել, թէ չ՚կայ այն բանը, ինչ որ իրօք կայ.... ինչ որ ամենքին տեսանումեն», պատասխանեց Ճայլման, բոլորովին վհատած:

— փառք Աստուծոյ, հազիւ թէ խոստովանեցաւ, — ասաց օֆիսիերը. — լաւ պահպանեցէք դորան, — յաւելացրեց նա դառնալով դէպ ի զինուորները, — դուք ձեր գլխով երաշխաւոր էք ինձ նորա մասին:

Այս բոլոր անցքը երազ էր թըվում Ճայլմային: Նա մի խօսք չ՚ասաց, ոչինչ հակառակութիւն ցոյց չ՚տուեց, երբ կապեցին նորա ձեռքերը և տարին:

Օֆիսիերը մի քանի զինուորով մտաւ աւերակների մէջ Ֆարինգէային գտանելու. բայց մի ժամ զուր որոնելով, գնաց Բատավիա, ուր մնացած զինուորքը նորանից յառաջ տարել էին այն տեղ բռնըված գերիքը:

Նորանից մի քանի ժամ յետոյ Պ. Ժօսիւե Վան Դաեօլը վերջացնումէր իւր երկայն գրուածքը, որ պատրաստումէր Պ. Բօդէնի համար:

«Հանգամանքները այնպէս էին», գրումէր նա, «որ չ՚կարողացայ այլապէս ընթանալ: Բայց մի մեծ բան չէ, մի փոքրիկ չարութիւն մեծ բարութեան համար, աւելի ոչինչ: Երեք մարդասպանք տրված են իրաւադատութեան ձեռքը. իսկ Ճայլմայի արգելված մնալը միմիայն առաւել յայտնի ցոյց կը տայ նորա անմեղութիւնը: Ես արդէն այսօր առաւօտ գնացի նահանգապետին, որ խօսեմ իշխանի մասին: Դուք այժմ պարտական էք ինձ այն բանի համար, որ այն երեք սարսափելի մարդասպանքը այժմ ձեր ձեռքումն են, ասացի ես նորան, ուրեմն ապացուցէք ինձ ձեր գոհութիւնը, աշխատեցէք, որքան կարելի է շուտով հրապարակել իշխանի անմեղութիւնը, նա ըստ ամե-

նայնի արժանի է յարգութեան իւր յատկութենների և տարաբաղդութենների պատճառով։ Ի հարկէ, յաւելացուցի ես. երեկի յայտնելով ձեզ, որ խեղդողները հաւաքվել են Զանդի աւերակներումը, ես ամենևին չէի կարծում, որ, որդեգիրը գեներալ Սիմոնի, այն պատուական մարդու, որի հետ մի քանի ժամանակ է անընդհատ կապակցութիւն ունիմ, բանվէր որպէս զզուելի չարագործ։ Անպատճառ հարկաւոր է մեկնել այդ առեղծուածը, թէ ինչ կերպով յայտնվեցան Ճայլմայի ձեռքի վերայ այդ խորհրդական նշանները, որ ձգեցին նորան այսպիսի վտանգաւոր վիճակի մէջ։ Ես այնպէս հաւաստի եմ նորա անմեղութեան մասին, որ մինչև անգամ և չեմ մտածում նորան ողորմութիւն խնդրել։ Նա իւր կողմից, երևի թէ, նոյնպէս հանգստութեամբ և արժանաւորութեամբ կը սպասէ բանդի մէջ այն ժամանակին, երբ պիտոյ է հրապարակվէր նորա անմեղութիւնը։

«Դուք տեսանումէք, որ ես կատարեալ ճշմարիտն եմ ասում և այս բոլոր բանի ընթացքում չեմ կարող մեղադրել ինձ և ամենափոքր սուտութեան համար. պատճառ ո՛չ ո՛ք ինձանից լաւ չգիտէ, թէ արդարև Ճայլմա՛ն անմեղ էր։

«Նահանգապետը պատասխանեց, ինչպէս և ես սպասումէի, որ բարոյապէս նա ևս նոյնպէս հաւատացած է երիտասարդ իշխանի անմեղութեանը. որ նա կը հրամայէ նորա հետ վարվել որքան կարելի է լաւ. բայց դատաստանի ընթացքը չէ պիտոյ խանգարել, պատճառ, միմիայն այս կերպով կարելի է ապացուցանել դատապարտութեան անարդարութիւնը և յայտնագործել, թէ ինչ անհասանելի հրաշքով այս խորհրդաւոր նշանը երևել է Ճայլմայի ձեռքի վերայ։

«Բայց Մահալը, որ միմիայն կարող էր յայտնել իսկական ճշմարտութիւնը այս գործի մէջ, մի ժամից յետոյ դուրս կը գնայ Բատավիայից և կը նստի Բիւտեր շոգեշարժ-նաւը, որ կը տանի նորան Եգիպտոս. նա նամակ է ստացել ինձանից նաւապետի վերայ, որի մէջ վկայումեմ, թէ Մահալը արդարև այն մարդն է, որի համար տեղ էի վարձել շոգեշարժ-նաւի մէջ։ Նա նոյնպէս կը տանի այն տեղ այս երկայն գրուածքը. պատճառ, նաւը դուրս է գնում մի ժամից և փոստա՛ն տարված է այն տեղ արդէն օրամից։ Բայց ես չկամեցայ աւարտել իմ յայտարարութիւնը նահանգապետին չտեսած։

«Ուր այսպէս Ճայլմա իշխանը, հակառակ նորա կամքին կ՛արգելվի այս տեղ մի ամիս ժամանակ. չպատահելով Բիւտերին, նա արդէն ոչինչ կերպով չէ կարող Փարիզ հասանել գալոց տարու փետրուարի 13ին։

«Դուք տեսանումէք, ես կուրօրէն կատարեցի ձեր հրամանը և գործ դրեցի գորա համար բոլոր հնարները, որ միայն կարող էի,

աչքիս առաջև ունենալով միմիայն նպատակին հասանելը, որ միմիայն կարող է արդարացնել նորանց. պատճառ ինչպէս դուք ասում էք, այս տեղ բանը գնում է կարգի երևելի օգուտների մասին։

«Ձեր ձեռքումը ես եղայ այնպէս, ինչպէս պարտական էինք լինել մեր իշխանաւորների ձեռքում. . . . մի հասարակ գործիք. . . . պատճառ Աստուծոյ մեծ փառքին համար, մեր իշխանաւորքը, թէև, դառած մարմին չինուածն մեզ վերաբերութեամբ դէպ ի մեր կամքը։ 1)

«Խող հընդունին մեր կարողութիւնը և մեր միահոգութիւնը. ժամանակները մեր համար լաւ չեն այժմ, բայց փոփոխվումեն միմիայն դիպուածքը. իսկ մեք երբէք չենք փոփոխվելու։

«Հնազանդութիւն և արիութիւն, Թաքնութիւն և համբերութիւն, խորամանգութիւն և համարձակութիւն, միահոգութիւն և փոխադարձ անձնազոհութիւն Թագաւորումեն մեր մէջ։

«Մեր համար հայրենիք — ամբողջ աշխարհը, ընտանիք — մեր եղբարքը, և մեր Թագաւորը — Հռովմ»։

Ժ. Վ։

Առաւօտեան տասը ժամին, մաքսանենգ Մահալը ստացաւ Պ. Վան Դաեօլից կնքած ծրարը և գնաց դէպ ի Ռիւտեր։

Սորանից մի ժամ յետոյ մաքսանենգ Մահալի մարմինը, խեղդված ֆանզիկարների սովորութենով, պահվեցաւ եղեգնաբոյսերի մէջ անմարդաբնակ ծովեզերքում, ուր գնացել էր նա իւր նաւակի քամակից, որ նորանով գնայ Ռիւտեր շոգեշարժ-նաւը։

Իսկ երբ շատ յետոյ Ռիւտերի նաւելուց գտան Մաքսանենգի մարմինը, Պ. Ժօսիւե Վան Դաեօլը զուր տեղը յոյս ունէր յետ ստանալ իւր յայտարարութիւնը, ո՛չ յայտարարութեան ծրարը և ոչ միւս նամակը, նաւապետի վերայ, որով Մահալը, որպէս նաւորդ, պիտոյ է տեղ ստանար Ռիւտերի վերայ, մեռած մարմնի մօտ չգտանվեցան։

Բոլոր կղզու մէջ խնդրակներ ուղարկվեցան, որ ֆարինգէայի բնակութիւնը յայտնագործեն, բայց բոլոր հարց ու խնդիրները, բոլոր աշխատութիւնքը անցան առանց յառաջադիմութեան։

Այն օրից, այլ ևս, ոչ ոք չտեսաւ ֆանզիկարների այս վտանգաւոր առաջնորդին։

1) Ցայտնի է, որ կրաւորական և ամենևին հնազանդութեան ուսումը, գլխաւոր հաստարանը, որի վերայ շարժվումէ Ցիսուսեան ընկերութիւնը, համառօտվումէ այս ահարկու բառերովը, որ խօսած է Լօյոլան մեռանելու ժամանակին. «Այս կարգի ամենայն անդամը պէտք է լինի իւր մեծաւորների յետևումը այնպէս, ինչպէս մի դիակ։ (perinde ac cadaver.)

ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍ՛Ն

—

ԿԱՐԴՈՎԻԼԵԱ՛Ն ԱՄՐՈՑԸ

I.

ՊԱՐՈՆ ՐՕԴԷՆԸ։

Երեք ամիս անցան արդէն այն օրից, երբ ճայլմա՛ն որպէս անդամ ֆանզիկարների մահաբեր ընկերութեանը, դրվեցաւ Բատավիայի բանդի մէջ։ Հետևեալ անցքը անցանումէր, փետրուարի սկզբումը 1832 թուականին, Կարդովիլ ամրոցի մէջ, այն հին բնակարանի մէջ, որ Պիկարդիու ապառաժուտ ծովեզերքում շինած էր ոչ շատ հեռի Սէն-Վալերից վտանգաւոր տեղում, ուր համարեա թէ ամենայն տարի մի քանի նաւ բոլորովին կորսվումէն հիւսիսային-արևմտեան մրրրիկներից, որոնք ծովագնացների համար սարսափելի են կացուցանում լուղալը լա-Մանշի վերայով։ Ամրոցի սենեակներումը լսվումէ ինչպէս շնչումէ մրրիկը, որ դեռ գիշերից էր սկսվել. երբեմն երբեմն զարհուրելի աղաղակ, թնդանօթների դրնդիւնի նման, որոտումէ հեռի տեղում, և կրկնվումէ եզերքի արձագանքով. այդ ծովն է, որ կատաղութեամբ զարկվումէ բարձր ապառաժներին, որոնց վերայ շինած է ամրոցը։ առաւօտեան եօթն ժամի մօտ էր. ցերեկվայ լոյսը դեռ ևս չէ մտանում ամրոցի ներքին յարկում շինած մեծ սենեակի պատուհաններից. այս կանթեղով լուսաւորված սենեակի մէջ, մի վաթսուն տարեկան կին, բարի և պարզահոգի դէմքով, հագնված ինչպէս սովորաբար հագնվումէն Պիկարդիու մէջ տուն կամ պանդոկ վարձով բռնող հարուստ կանայքը, չ՛նայելով, որ դեռ ևս կանուխ էր ժամանակը, նա պարապումէր կար կարելով։ Մի փոքր հեռի, այս կնոջ

ամուսինը, համարեա թէ նոյն հասակի, նստած է մեծ սեղանի առաջև, որոշում և լցնում փոքրիկ քսակների մէջ ցորենի և վարսակի հատիկները։ Այս սպիտակամազ մարդու կերպարանքը խելացի, պարզ. նորանում երևումէր առողջ դատողութիւն և ուղիղ հոգի, որի մէջ թեթև կերպով խառնված էր ծաղրախօսութիւն և կատակախօսութիւն. նորա վերայ կայ, կանաչ մահուդից բաճկոնի պէս կարճ հանդերձ. մեծ ճախնային կօշիկները ծածկումէն մինչև կէսը նորա սև թաւիշեայ վարտիկը։

Սարսափելի մրրիկը, որ փչումէր այս բնակութեան պատերի դրսումը, առաւել զմայլեցողութիւն էր տալիս այս ընտանեկան խաղաղ պատկերին։ Սպիտակ մարմարոնից շինած մեծ հնոցի մէջ վառվլումէ կրակը, նորա լոյսը ուրախադէմ ցոլանումէ խնամով յղկած յատակի վերայ։ Ուրախացուցիչ և զուարճալի է նայել տան պատերի վերայ մածուցած թղթերի և հին պաստառից շինած վարագոյրների վերայ, դուռերի վերայի հովուական պատկերների վերայ Վատտօի ճաշակով։ Սեղանի վերայի ժամացոյցը սերվեան յախճապակուց, կարասիքը վարդի փայտից, կանաչ զարդարանքներով, որ ներս էին դրած փայտի մէջ, այս բոլորը միասին լրացնումէն այս սենեակի զարդարանքը։

Դրսի մրրիկը չէր կտրվում. ժամանակ առ ժամանակ շնչումէր հնոցի ծխնելուզից կամ շարժեցնումէր պատուհանքը։

Մարդը, որ պարապումէր հացի տեսակները որոշելով, Դիւպօնն էր, ամրոցի և ագարակի կառավարիչը։

Սուրբ Աստուածածին! ինչ զարհուրելի կայծակ է! — ասաց նորան կինը։ — Այդ պարոն Րօդէնը, որ, ինչպէս գրումէ դը-Սէն-Դիզիե իշխանուհու երեսփոխանը, պիտոյ է այս առաւօտ գայ, լաւ ժամանակ է ընտրել ճանապարհորդութեան համար։

«Այո՛, ճշմարիտը պիտոյ է ասել. ինձ շատ սակաւ է պատահել տեսանել այսպիսի մրրիկ...։ Եթէ պարոն Րօդէնը երբէք ծով տեսած չէր կայծակի ժամանակ, ուրեմն այսօր կատարելապէս կարող է զուարճանալ այս տեսարանով»։

— Ի՞նչ պատճառով գալիս է նա այս տեղ։

«Ճշմարիտ չգիտեմ։ Իշխանուհու երեսփոխանը ասումէ ինձ նամակի մէջ, թէ ես պարտական եմ ցոյց տալ նորան ամենայն կարելի յարգանք և հնազանդութիւն, որպէս իմ սեպհական պարոններին։ Թող Պ. Րօդէնը հրամայէ, ես կը կատարեմ նորա հրամանները. պատճառ նա գալիս է դը-Սէն-Դիզիե իշխանուհուց»։

— Բայց արժան էր, որ նա գար մեր տիրուհի օրիորդ Ադրիեննից. պատճառ այս ագարակը, նորա հօր, հանգուցեալ կոմս և զօ-

բավար դը-կարդովիլի մահից յետոյ, սեպհականաբար պատկանումէ նորան։

Այդ այդպէս է. բայց իշխանուհին նորա հօրաքոյրն է. բաց ի սորանից իշխանուհու երեսփոխանը կառավարումէ և մեր օրիորդ տիրուհու գործերը, այս պատճառով մի և նոյն է, ովից որ գար այդ պ. Ռօդէնը, օրիորդ տիրուհուց թէ իշխանուհուց»։

— Կարելի է այդ պարոնը միտք ունի գնել այս ագարակը.... բայց արդէն ամրոցը շատ հաւանական էր եղած այն հաստ տիրուհուն, որ եկել էր, մ՞տքդ է, անցեալ շաբաթ Փարիզից, յատկապէս նայելու և քննելու նորան։

Այս խօսքերի վերայ կառավարիչը ծիծաղեցաւ։

— Ի՞նչ բանի վերայ ծիծաղումես դու, — հարց արեց նորա կինը, որ բարի, բայց ոչ հեռատես և բան չ՚ճանաչող կին էր։

«Ես յիշեցի այն հաստ և մեծ կերպարանքը...։ Սատանայն առնու! այդպիսի բարեդէմ անձնաւորութեանը, կարծես թէ արժան չէ անուանվիլ տիրուհի դը-Սէն կօլոմբ...։ Մի խօսքով քառասուն լիտրանոց տակառ է, խօսումէ կերկերեալ հաստ ձայնով, սպիտակ ընչացքը որպէս ծեր հեծելազօրականի. ես գաղտուկ ականջ դրեցի երբ նա ասաց իւր ծառային. ապա տեսանեմ շարժիր, դու երկարահասակ և այդպիսի կինը անուանվումէ Սէն-կօլոմբ»։

— Ի՞նչ զարմանք մարդ ես Դիւպոն! անուն ասացեալը ինքեանք չեն ընտրում...։ Բաց ի սորանից նա մեղաւոր չէ, եթէ նորանում աճումեն ընչացք...։

«Բայց նա մեղաւոր է նորանով, որ անուանվել է Սէն-կօլոմբ. դու կարծումես, թէ այդ նորա ստոյգ ազգանունն է...։ կատարինէ, ինչ գիւղական պարզամտութիւն է!»։

— Իսկ դու Դիւպոն, ամենևին չես կարող, որ պատահած ժամանակը չարախօսութիւն չ՚առնես ովի վերայ և իցէ. այդ տիկինը, կարծես թէ այնպէս պատուելի է...։ Իսկոյն, երբ եկած էր, ողջից յառաջ հարց արեց, ուր է այս տեղ տան միջի եկեղեցին, որի մասին արդէն ասել էին նորան.... մինչև անգամ ասաց, որ նորի նման կը շինէ նորան։ Բայց երբ ասացի ես նորան, որ մօտ տեղերում չ՚կայ ժողովրդական եկեղեցի, նա շատ վշտացաւ դորանով։

«Այո՛, այդպիսի չնչին վիճակից յառաջացածները միշտ սիրումեն կոտրատվիլ, գիւղական եկեղեցիների մէջ, ցոյց տալ իւրեանց երևելի տիկնի տեղ։

— Տիրուհի Սէն-կօլոմբը կարօտութիւն չունի ցոյց տալ իւրեան երևելի տիկին, մինչ արդարև նա ծագումեր երևելի տոհմից։

«Նա ծագումէ երևելի տոհմից?»

—Ի հարկէ. հարկաւոր է նայել միայն, թէ ինչպէս հագնըվումէր նա, հանդերձը կարմիր, ձեռնոցները շուշանագոյն, ինչպէս կրումէն եպիսկոպոսքը, բայց երբ հանեց նա գլխարկը, նորա խարտեաշ գեղծամի վերայ երեւեցաւ նորա բռիլլիանտեայ ծաղիկը. ականջի օղերը ահագին բռիլլիանտներով, բռիլլիանտեան մատանիքը ասես թէ վառվումէին նորա մատների վերայ: Տարակոյս չ՛կայ, որ հասարակ կինը չէր կրելու ցերեկով այսքան բռիլլիանտ...:

«Ինչ ասել կամի, շատ գեղեցիկ է.... երեւումէ որ շատ ես հասկանում այդ բանի մէջ»:

—Դեռ այդ բոլորը չէ...:

«Ինչ այլ ես կայ»:

—Նա անդադար խօսումէր միմիայն զօրավարների, մարկիզների, կոմսերի, երեւելի և հարուստ պարոնների վերայ, որ միշտ գնումէն նորա մօտ և մերձաւոր բարեկամք են, իսկ երբ տեսաւ գաղանոցի մէջ կիսով չափ այրված ապարանքը, որ հանգուցեալ կոմսը չ՛հրամայեց շինել, հարց արեց ինձանից, «այդ ինչ աւերակներ են» և ես պատասխանեցի — տիրուհի, այդ ապարանքն է, որ այրվեցաւ դաշնակից զօրքերի ձեռքով, — նա գանչեց». Ա՛հ դաշնակիցների ձեռքով, բարի և սիրական դաշնակիցք!... ես իմ բաղդի համար պարտական եմ նոցա և մեր Լուդովիկոս XVIII ին. այս տեղ ահա ես իսկոյն հասկացայ, որ նա մի մեծ կին պիտոյ է լինի:

«Տիկին Սէն-կոլոմբ!» գանչեց Դիւպոնը ծիծաղից թուլանալով, «Ահ իմ խեղճ կին, իմ խեղճ կին»:

—Դու, երեք տարի Փարիզում բնակված լինելով, արդէն ամենագէտ համարումես քեզ...:

«Հերի՛ք է այդ մասին խօսել Կատարինէ. ով գիտէ կարելի է դեռ մի յիմար բան ես ասեմ. իսկ բաներ կան, որոնց մասին քեզ նման պատուաւոր և բարի կանայքը չէ պիտոյ լսեն»:

—Ես չ՛գիտեմ, թէ ինչ կամիս ասել դորանով.... բայց առաւել լաւ է այսուհետև չափաւորել քո չարախօս լեզուդ. տիկին Սէն-կոլոմբը գուցէ կը գնէ այս ագարակը.... իսկ դու, տարակոյս չ՛կայ, որ կը ցանկանայիր նորա կառավարիչը լինել.... այնպէս չէ?

«Ի հարկէ, մեք քեզ հետ արդէն երիտասարդ չենք. քսան տարի բնակվեցանք այս տեղ, իսկ ծերութեան համար ոչինչ պաշար չ՛հոգացինք, պատուաւորութիւնը արգելումէր առնուլ օտարինը, և ճշմարիտը պիտոյ է ասել բաւական դժուար կը լինի այլ տեղ որոնել, և դեռ ով գիտէ, գուցէ և չ՛գտանվի ես: Ափսոս, որ մեր տիրուհի օրիորդը մտածել է վաճառել այս ագարակը...: Ասումեն, որ նա մտածել է այս գործը, իսկ իշխանուհին խորհուրդ չէ տուել»:

— Իսկ քեզ ինչպէս է թըւում, Գիւպոն, օտարոտի մի բան չէ՞, որ Ադրիէնն օրիորդը այդպիսի պատանի հասակում իւր կամքով տնօրինում է այսպիսի աճագին ագարակի մասին։

«Ինչ զարմանալու բան կայ, շատ բնական է։ Մեր տիրուհի օրիորդը, որբ մնալով, տէր է իւր կալուածքին. բացի սորանից նա խելացի գլուխ ունի։ Միտքդ է, կոմսը մի ամառ բերել էր նորան այս տեղ տասն տարի սորանից յառաջ։ Ի՞նչ երեխայ էր նա. . . այնպէս խելացի։ Բայց աչքերը, աչքերը ասես թէ վառւում էին։

— Արդարև նորա աչքերում երևում էր մի բան, ոչ երեխայական, ամենևին անհամաձայն նորա հասակին։

«Եթէ նա տգեղացած չէ, ուրեմն այժմ պիտոյ է շատ գեղեցիկ լինի, չնայելով, որ նորա մազերի գոյնը խսկոյն աչքի տակ է ընկնում. Ճշմարտապէս ասելով, մեր միջում, եթէ նա երևելի օրիորդ չլինէր, այլ հասարակ տեղացի աղջիկ, այն ժամանակ կարելի էր մինչև անգամ շէկ ևս անուանել նորա մազերը»։

— Դարձեալ չարախօսութիւն!

«Ընդդէմ մեր տիրուհի օրիորդին? Աստուած մի արասցէ!. . . Դատելով, թէ ինչպէս էր նա յառաջ, պիտոյ է կարծել, որ նա ոչ միայն գեղեցիկ պիտոյ է լինի այլ և անսովոր բարի։ Ես չարախօսութեան համար չասացի, որ նորա մազերը շէկ են. . . . դորա հակառակ այժմ ես իմ մտքումս է, որ նորա մազերը կակուղ, փայլուն և ոսկեգոյն էին, այնպէս որ արժէր նոցա վերայ նայել, այնպէս յարմար էին նորա ձիւնի պէս սպիտակ երեսին և սև աչքերուն, որ Ճշմարիտ այլ գոյն մազերի և ցանկանալ չէր կարելի. և ես հաւատացած եմ, այդ շիկագոյն մազերը, որ ուրիշ օրիորդի վերայ անախորժ կը թըվէին, տալիս են նորա երեսին առաւել գեղեցկութիւն. Նա պիտոյ է գեղեցիկ դևիկ լինի»։

— Այո, թէ նա իսկական դևիկ է չեմ վիճում. . . ։ Միշտ վազում էր գաղանանոցի մէջ, վեր ելանում էր ծառերի վերայ, այնպէս որ դայեակը չգիտէր թէ ինչ անէ։

«Համաձայն եմ, որ նա մարմնացեալ դևիկ էր, բայց դորա փոխանակ ինչպէս խելօք, խորամանգ և մանաւանդ բարի էր, մտքումդ է»։

— Դորա հակառակ ես մի խօսք չեմ ասում! Նա աղքատի տուեց միանգամ իւր արկանելին և հանդերձը, որ դեռ բոլորովին նոր էր, և դարձաւ ամրոցը միմիայն ներքին հանդերձով և մերկ ձեռքերով...։

«Այո, նորա սիրտը աննման է, բայց դորա փոխանակ և գլուխը. . . . այդպիսիք սակաւ են պատահում»։

— Խօսք չկայ, նա այնպէս անխելք էր. և չէր ես կարելի որ

մի լաւ վերջ ունենար, ասումեն, որ նա այժմ այնպիսի բաներ է առնում փարիզում, այնպիսի....։

«Ի՞նչ բան»։

— Ճշմարիտ, իմ բարեկամ, ես մինչև անգամ և չեմ համարձակվում ասել։

«Ասա՛»։

— Պատմումեն, — պատասխանեց այս պատուաւոր կինը ամբոխված, որ յայտնի ցոյց էր տալիս, որ նա մինչև անգամ զարհուրումէր հաւատալ այսպիսի սարսափելի բանի, — պատմումեն, որ նա երբէք եկեղեցի չէ գնում.... բնակվումէ միայն իւր հօր քրոջ գազանանոցի ծայրի հեթանոսական տաճարի մէջ.... որ նորա քամակից ման են գալիս դիմակաւորված կանայք, նորան հագցնումեն որպէս մի աստուածուհի և թէ նա ամբողջ օրը ճանկումէ նորանց. պատճառ միշտ արբած է լինում.... իսկ գիշերները հնչումէ մի ոսկուց շինած փող.... Դու կարող ես հասկանալ, որ այս, յուսահատութեան մէջ է ձգում նորա խեղճ հօրաքրոջը։

— Կառավարիչը ծիծաղեց և ընդհատեց կնոջ պատմութիւնը։

«Ասա խնդրեմ, ո՞վ պատմեց քեզ այդ չեղած ու հնարած բաները»։

— Ինձ ասաց Բինեօյի կինը, նա փարիզ էր գնացել որդեգրի քամակից և մտել էր իշխանուհու տունը տեսանել իւր կնքամայր տիկին Գրիվուա՛ն.... Դու գիտես տիկին Գրիվուային, իշխանուհու առաջին աղախինն է.... և ահա այդ տիկին Գրիվուա՛ն պատմել է նորան բոլորի ներկայութեանը, իսկ նա արդէն տարակոյս չ՛կայ որ գիտէ թէ ինչ անցք է անցանում այն տեղ. նա միասին է բնակվում օրիորդ տիրուհու հետ։

«Ինչ ասել կամի, այդ Գրիվուա՛ն պակաս պտուղ չէ։ Նա յառաջ այնպէս խարդախ էր, որ բանի պէտք չէր, իսկ այժմ դարձել է կեղծաւոր աստուածապաշտ որպէս և իւր տիրուհին...։ «Ըստ խոզի հարսնացելոյ կոյաջուր բաղանիք...»։ Իշխանուհին այժմ միայն դարձել է այդպիսի խիստ, և աստուածապաշտ.... իսկ յառաջ ասել չէ պիտոյ, որ փառաւոր ապրեցաւ.... տասն և հինգ տարի սորանից յառաջ! Մի՞տքդ է այն հուսարեան գնդապետը, որ իւր գունդի հետ լինումէր Աբեվիլլում.... դեռ այնպէս գեղեցիկ.... որ երբեմն ծառայել էր Ռուսսիայում, իսկ յետոյ դեռ Բուրբոնեանք գունդ էին տուել նորան»։

— Այո՛, այո՛, միտքս է.... հերիք է դու արդէն սկսումես աւելորդաբանել։

«Ամենևին ո՛չ, ես ճշմարիտն եմ ասում։ Գնդապետը բնակվու-

մէր, համարեա թէ միշտ, մեր ամրոցում, և լուր էր ման գալիս, որ նա շատ մօտ է իշխանուհուն, այժմեան սուրբ ձևացողին...: Բայց շատ լաւ ժամանակ էր այն միջոցը: Ամենայն երեկոյ լինումէր ամրոցի մէջ կամ խնջոյք կամ թէատրոն...: Բայց ինչպէս ուրախ մարդ էր այդ գնդապետը, ինչպէս զուարճախօս...: Ինչպէս լաւ խաղումէր կատակերգութիւն.... ահա միանգամ...»:

Կառավարիչը չկարողացաւ խօսքը աւարտել:

Հաստ աղախինը պիկարտեան հանդերձով ներս վազեց սենեակը և ասաց իւր տիրուհուն, «տիրուհի մի պարոն ասումէ, որ նորան շատ հարկաւոր է այս րոպէիս տեսանել իմ պարոնը.... նա եկել է Սէն-Վալերիուց, նա ասումէ, որ անուանվումէ պարոն Բօդէն»:

— Բօդէ՞ն, — ասաց կառավարիչը վեր կանգնելով տեղից, — խնդրիր շուտով նորան ներս հրամայել:

Մի րոպէից յետոյ ներս մտաւ Պ. Բօդէնը: Նա իւր սովորութենով որքան կարելի է պարկեշտ էր հագնված և շատ յարգութեամբ գլուխ տուեց կառավարչին և նորա կնոջը:

Դիւպօնը նշանացի արեց կնոջը և նա դուրս գնաց:

Պ. Բօդէնի մեռելատիպ գունաթափութիւնը, նորա համարեա թէ աննկատելի շրթունքը, նորա կիսափակ և որպէս օձի թառամած արտևանունքներով աչքերը, նորա աղտոտ և մաշված հանդերձը, տալիս էին նորան ամենևին անախորժ կերպարանք: Բայց հարկ եղումը, այս մարդը գիտէր մի առանձին սատանայական ճարտարութեամբ ցոյց տալ իւրեան «ինչպէ» խստակ սրտով մարդ, «ինչպէ» բարեհոգի, նորա խօսակցութիւնքը լինումէին փաղաքշական, քնքոյշ համոզողական, որ փոքր առ փոքր անախորժ տպաւորութիւնը, որ գործել էր նորա կերպարանքը, յարդարվումէր և, վերջապէս, նա համարեա թէ միշտ պարանումէր իւր զոհը իւր ձգական, քաղցր, խորամանգ խօսակցութեան ուռկանով, զլուելլին և չարը ունի իւր հրապոյրը, նոյնպէս, ինչպէս գեղեցիկը և բարին...: Պատուաւոր կառավարիչը նայումէր այս մարդու վերայ զարմանալով: Դատելով դը Սէն-Դիզիէ իշխանուհու երեսփոխանի նամակով, որ այնպիսի յարգութեամբ խօսումէր Պ. Բօդէնի մասին, Դիւպօնը երևակայումէր նորան բոլորովին ուրիշ կերպ: Նա աշխատութեամբ ծածկեց իւր զարմանքը և ասաց.

«Կարծես, ես շնորհ ունիմ խօսել պարոն Բօդէնի հետ?»:

— Այո՛, այդպէս.... և ահա ձեզ մի այլ նամակ դը Սէն-Դիզիէ իշխանուհու երեսփոխանից:

«Խոնարհաբար խնդրումեմ ձեզանից մօտ նստել հնոցին, մինչև կարդամ ես այս նամակը: Եղանակը այնպէս վատ է», ասաց կառա-

վարիչը շատ քաղաքավարի կերպով, «չէք հրամայում արդեօք պատուասխանել ձեզ մի բանով»:

— Շատ շնորհակալ եմ, մի ժամից, ինձ պիտոյ է ճանապարհումը լինել:

Այն միջոցին, երբ Գիւլոնը կարդում էր, Պ. Բօդէնը զննում էր ամբողջ սենեակը. նա որպէս յաջողամիտ մարդ շատ անգամ դուրս էր բերում շատ օգտակար եզրակացութիւնք արտաքին, երբեմն չնչին նշաններից. պատճառ, նոքա շատ անգամ ցոյց են տալիս ճաշակ, սովորութիւն և հասկացնումն բնաւորութիւն. բայց այս անգամ նորա հետազօտութիւնը անպտուղ մնաց:

«Շատ բարի», ասաց կառավարիչը կարդալով նամակը, «իշխանուհու երեսփոխանը դարձեալ գրում է, որ ես կատարեմ ձեր բոլոր հրամանները»:

— Իմ պահանջողութիւնքը շատ սահմանափակ են, և ես չէ պիտոյ երկար անհանգիստ առնեմ ձեզ իմ այցելութեամբը...:

Ինչ էք խօսում.... ինձ շատ քաղցր է, որ շնորհ ունիմ...»:

— Ես գիտեմ, որ դուք շատ պարապմունք ունիք, մտանելով ամրոցի մէջ, ես զարմացայ այն մեծ կարգի վերայ, որ, ամենայն բանի մէջ, պահվում է այս տեղ. այդ արդէն ապացուցանում է թէ ինչ հաւագիւտ հոգաբարձութեամբ կառավարում էք դուք այս ագարակը:

«Շատ շնորհակալ եմ ձեզանից.... բայց, ճշմարիտ, դուք երեսպաշտութիւն էք անում»:

Ե՞ս երեսպաշտութիւն եմ անում!... ամենևին ոչ: Իմ հասակումը արդէն երեսպաշտութիւն անելու ցանկութիւնը և յօժարութիւնը անցանում է...: Բայց անցանենք դէպ ի մեր գործը: Այս տեղ կայ մի սենեակ որ կանաչ է կոչվում:

«Այո՛, այդպէս է, այդ սենեակը կոմս և զօրաւար դը Կարդովիլի առանձնարանն էր»:

— Աշխատութիւն կրեցէք առաջնորդել ինձ այն տեղ:

«Դժբաղդաբար այդ անկարելի է...: Կոմսի մահից յետոյ բոլոր թղթերը պահված են մի պահարանի մէջ, որ այն սենեակումն է, իսկ սենեակի բանալիքը Փարիզ տարեցին»:

— Բանալիները իմ մօտ են, — ասաց Պ. Բօդէնը, ցոյց տալով մի մեծ և մի փոքր բանալիներ մինը միւսից կապած:

«Ա՛, այդ այլ բան է...: Դուք ի հարկէ եկած էք թղթերի քամակից»?

— Այո՛, ինձ հարկաւոր է առնուլ մի քանի թուղթ և փոքրիկ փայտեայ արկղը, արծաթի կապերով, գիտէք այդ արկղիկը:

«Գիտեմ. ես ստէպ տեսանումէի նորան կոմսի գիր գրելու սեղանի վերայ.... նա պիտոյ է այն պահարանի մէջ լինի, որի բանալին ձեր մօտ է»:

— Ուրեմն խնդրեմ առաջնորդեցէք ինձ դէպ ի այդ սենեակը.... դը-Սէն-Դիզիե իշխանուհին յանձնել է ինձ մտանել այդ սենեակը:

«Շատ բարի: Առո՞ղջ է իշխանուհին»:

— Շատ առողջ.... նա շատ բարեկամացել է Աստուծոյ մասին մտածութեան հետ:

«Իսկ մեր օրիորդ տիրուհին?»

— Աւա՜ղ, սիրելի բարեկամ, — ասաց պ. Ռօդէնը, խորը յոգոց հանելով, որպէս թէ կարեկցութենից:

«Աստուած իմ, արդեօք մի անբաղդութիւն պատահած չէ՞ մեր բարի տիրուհու, օրիորդ դը-Կարդովիլի հետ»:

— Դուք ինչ էք կարծում:

«Հիւանդ չէ՞ արդեօք նա»:

— Ո՛հ, ո՛չ. նա մի չար բաղդով, նոյնպէս առողջ է ինչպէս գեղեցիկ...:

«Չար բաղդով?» կրկնեց բարի կառավարիչը զարմացած:

— Պատճառ, եթէ գեղեցկութիւնը, երիտասարդութիւնը և առողջութիւնը միանումեն անհնազանդ և ապստամբ հոգու հետ.... չ՛լսուած բնաւորութեան հետ.... այն ժամանակ առաւել լաւ է չունենալ այդ վտանգաւոր արժանաւորութիւնքը, որոնք առաջնորդումեն դէպ ի հոգեկան կորուստ.... բայց, խնդրումեմ ձեզանից սիրելի բարեկամ մի այլ բանի վերայ խօսենք...: Այդ խօսակցութիւնը անախորժ կերպով ներգործումէ իմ սրտի վերայ, — ասաց պ. Ռօդէնը դողդոջուն ձայնով և տարաւ ձախ ճկոյթը դէպ ի աջ աչքը, որպէս թէ կամէր սրբել աչքի արտասուքը:

Կառավարիչը արտասուք չ՛տեսաւ, բայց նկատեց պ. Ռօդէնի այս շարժողութիւնը և զարմացաւ նորա ձայնի փոխվելու վերայ, պատճառ նա խօսեցաւ անկեղծ զգացողութեամբ:

«Ներեցէք եթէ ես անգիտութեամբ յիշեցուցի ձեզ մի անախորժ բան.... ես չ՛գիտէի...»:

— Ես պիտոյ է ներողութիւն խնդրեմ ձեզանից: որ այսպէս անտեղի փղձկեցայ.... ծերերի արտասուքը հազուագիւտ է.... բայց եթէ և դուք, ինչպէս ես, վկայ եղած լինէիք այդ պատուելի իշխանուհու յուսահատութեանը.... իշխանուհու, որ մի միայն յանցաւոր է նորանով, որ շատ բարի է.... շատ ներողամիտ է դէպ ի իւր եղբօր դուստրը.... և դորանով, որպէս թէ քաջալերումէր նորան... բայց դարձեալ խնդրումեմ փոխենք մեր խօսակցութիւնը:

Րոպէական լռութենից յետոյ, մինչ թըւումէր, թէ Պ. Բօդէնը կամենումէր հանդարտել, ասաց Դիւպոնին.

— Եւ այսպէս կանաչ սենեակի մասին, իմ յանձնարարութեան մի մասը արդէն կատարված է, մնումէ երկրորդը, բայց յառաջուց ես պիտոյ է յիշեցնեմ ձեզ մի բան, որ գուցէ դուք և մոռացել էք ես.... յատկապէս այս, որ տասն և վեց տարի սորանից յառաջ այս ամրոցի մէջ հիւր էր դ'Էգրինիւ մարկիզը, գնդապետը հուսարեան գնդի, որ այն ժամանակ լինումէր Աբեվիլում:

«Ո՜հ ինչ գեղեցիկ մարդ էր այդ գնդապետը: Ես այս րոպէիս խօսումէի կնոջս հետ նորա մասին: Նա ուրախութիւն բերեց իւր հետ մեր ամրոցը: Եւ ինչպէս գեղեցիկ խաղումէր նա թէատրոնում, մանաւանդ պատանի մարդիկ ձևացնելու ժամանակ...: Զոր օրինակ Երկու Եդմոնդ անունով կատակերգութեան մէջ նա անտանելի ծիծաղաշարժ էր, արբած զինուորը ձևացնելով.... և ինչ գեղեցիկ ձայն ունէր: Նա այս տեղ երգեց ձևացնելով Ժօկոնդը. Ճշմարիտ Փարիզում ոչ ոք այդպէս չէ կարող երգել:

Պ. Բօդէնը, բարեհաճութեամբ լսելով Դիւպոնի բոլոր ասածները, ասաց նորան.

— Ի հարկէ յայտնի կը լինի ձեզ նոյնպէս, որ իւր զարհուրելի մենամարտութենից յետոյ բօնապարտեան աներկիւղ գեներալ Սիմոնի հետ, դ'Էգրինիւ մարկիզը (որի մօտ շնորհ ունիմ ես քարտուղար լինելով) հրաժարվեցաւ աշխարհից և մտաւ հոգևոր կոչումն:

«Մի՛ թէ.... այդ գեղեցիկը, գնդապետը?»

Այո՛, այդ քաջ, երևելի, հարուստ, ամենին յարգելի, ամենին սիրելի գնդապետը փոխեց այդ բոլոր արտօնութիւնքը աղքատին սև վերարկուի հետ, և, չնայելով, իւր փառքի, իւր դրութեան, իւր յարակցութենների վերայ, չնայելով, որ նա մեր գեղեցկախօս քարոզիչներից մինն է, նա և այժմ ես նոյն է ինչ որ տասն և չորս տարի սորանից յառաջ....- մի հասարակ աբեղայ.... այն ժամանակ մինչ ուրիշները, որ չունին ոչ նորա ընդունակութիւնքը, ոչ նորա բարեգործութիւնքը, արդէն արքեպիսկոպոս կամ կարդինալ են դարձած:

Պ. Բօդէնը խօսեցաւ այնպիսի խատակ-սրտութենով այնպիսի համոզողութեամբ, նորա պատմութիւնը ոգևորված էր այնպիսի մաքուր ճշմարտութենով, որ Դիւպօնը չկարողացաւ բռնել իւրեան և գանչեց.

«Բայց այդ հազուագիւտ բան է...»:

— Ամենևին ոչ, — ասաց Պ. Բօդէնը, մի աննմանելի պարզմտութեամբ, — այդ շատ բնական է.... այնպիսի սիրտ ունենալուց յետոյ, ինչպէս մարկիզ դ'Էգրինիէն... բայց նորա շատ ազնիւ ունակութենների մէջ մինը մանաւանդ երևելի է, նա երբէք չէ մո-

ւանում բարի, պատուաւոր, և խղճմտանքով մարդիկը.... և շատ անգամ յիշել է և ձեզ:

«Ինչպէս! մարկիզը բարեհաճ էր դէպ ի ինձ...»:

— Երեք օր յառաջ ես նամակ ստացայ նորանից, որի մէջ յիշումէ նա ձեզ:

«Ուրեմն մարկիզը Փարիզումն է?»

— Շուտով այն տեղ կը լինի. երեք ամիս է, որ գնացած է Իտալիա...: Այս ճանապարհորդութեան միջոցին նորան դժբաղդութիւն պատահեցաւ, վախճանեցաւ նորա պատուելի մայրը, որ աշնանը բնակվումէր դը-Սէն-Դիզիէ իշխանուհու ագարակներից մինի մէջ:

«Ո՜հ Աստուած իմ, ես չ՚գիտէի ևս...»:

— Այո, այդ բանը մեծ վիշտ պատճառեց նորան, բայց պիտոյ է իմանալ հնազանդվիլ աստուածային նախախնամութեան անքննելի տնօրինութեններին:

«Ասացէք խնդրեմ ինչ դիպուածով մարկիզը գրել էր ձեզ իմ մասին?»

— Իսկոյն կը պատմեմ ձեզ.... բայց յառաջուց ձեզ պիտոյ է իմանալ, որ այս ամրոցը վաճառված է իմ Փարիզից դուրս գալու օրամտումը:

«Ո՜հ, այդ բանը շատ անհանգիստ է անում ինձ»:

— Ի՞նչ պատճառով:

«Ես կասկած ունիմ, որ նոր պարոնները չ՚թողուն ինձ այս տեղ իմ պաշտօնի մէջ»:

— Ի՞նչ բաղդաւոր դիպուած է. ես այդ մասին ևս կամէի խօսել ձեր հետ:

«Մի՞թէ»:

— Այո, գիտելով, որ մարկիզը խնամք ունի ձեր վերայ, ես ցանկանումեմ.... բոլոր սրտով ցանկանումեմ, որ դուք մնայիք այս տեղ, ես ամենայն զօրութեամբ պատրաստ եմ օգնել ձեզ, եթէ....:

«Ո՜հ», գանչեց Դիւպօնը ընդհատելով Պ. Բօդէնի խօսքը ես ի՜նչպէս շնորհակալ եմ ձեզանից, Աստուած ինքը ուղարկել է ձեզ այս տեղ»

— Այժմ դուք ինձ երեսպաշտութիւն էք անում, սիրելի բարեկամ: Նախ և յառաջ ես պիտոյ է պարզ ասեմ ձեզ, որ կ՚օգնեմ ձեզ միայն մի պայմանով...:

«Ասացէք, ասացէք միայն, ի՞նչ բանով կարող եմ ծառայութիւն ցոյց տալ ձեզ.... ես իսկոյն...»:

— Այս տեղ պիտոյ է բնակվի մի ծերունի կին, արժանի ամենայն յարգանքի, տիկին դը-Սէնտ Կօլոմբ:

«Միթէ տիկին դը-Սէնտ-կօլոմբը գնել է այս ամրոցը»:

Միթէ ճանաչումէք դուք նորան:

«Այո՛, մի շաբաթ սորանից յառաջ նա եկած էր տեսանել այս ագարակը.... իմ կինը հաւատացնումէ, թէ այդ տիկինը երևելի կին է.... բայց մեր մէջ թող մնայ.... նայելով մի քանի խօսքերից.... ինձ թըվումէ...»:

— Դուք շատ բան հասկացող էք, իմ սիրական Դիւպօն, դը-Սէնտ-կօլոմբ տիկինը երբէք երևելի կին եղած չէ, ինձ թըվումէ մինչև անգամ, որ նա երբեմն, Պալէ-Րօյալի փայտաշէն խանութներումը պահումէր կնոջ հանդերձեղէնների վաճառանոց: Դուք տեսանումէք, որ ես ձեր հետ խօսումեմ բաց սրտով:

«Իսկ նա պարծեցել է, թէ այն ժամանակ նորա տունը գնումէին գալիս էին երևելի Փրանսիական և օտարական պարոններ:

Այդ շատ հաւատալի է, նոքա գնումէին գլխարկ ապսպարել իւրեանց կանանց համար: ինչպէս և եղած է այդ բաները, նա մեծ կարողութիւն է շինել իւր համար: երիտասարդութեան և միջին հասակներում, նա ամենևին չէր մտածել իւր փրկութեան համար, բայց այժմ դորա փոխանակ դարձել է սրբութեան և բարեպաշտութեան ճանապարհը: Եւ ահա այս պատճառով ասացի ձեզ, որ նա արժանի է ամենայն յարգանքի, պատճառ, ճշմարիտ և անյողդողդ ապաշխարութեննից առաւել ոչինչ պատուելի բան չ՚կայ. բայց նորան կատարելապէս ամրացնելու համար փրկութեան գործում, մեզ հարկաւոր է ձեր օգնութիւնը սիրելի Դիւպօն:

«Ի՞մ.... ես ի՞նչ կարող եմ անել»:

— Խիստ շատ բան: Ահա ինչ կերպով. այս գեղի մէջ եկեղեցի չ՚կայ, բաց ի սորանից գեղը հաւասարաչափ հեռաւորութիւն ունի երկու դրացի եկեղեցիներից: Տիկին դը-Սէնտ-կօլոմբը ի հարկէ երկու քահանաներից մինը կը շինէ իւր խոստովանահայր և, չ՚գիտելով որը նորանցից ընտրել ի հարկէ կը դիմէ դէպ ի ձեզ, որովհետև երկար ժամանակ դուք այս տեղ բնակվումէք:

«Այդ դժուար բան չէ վճռել, Դանիկուրեան քահանայն պատուական մարդ է»:

— Իսկապէս այդ բանը չէ պիտոյ ասել նորան:

«Ի՞նչպէս»:

— Դորա հակառակ հարկաւոր է ինչքան կարելի է շատ և ինչքան կարելի է ստէպ գովել Րօվիլեան քահանային, որպէս զի տիկին դը-Սէնտ-կօլոմբը նորան խոստովանահայր շինէ:

«Ի՞նչ պատճառով դորան և ո՛չ միւսը:

— Ինչ պատճառով? ես իսկոյն կը մեկնեմ ձեզ: Եթէ դուք

ձեր կնոջ հետ միասին կը համոզէք տիրուհի դը․Սէնտ-կօլոմբը Րօավիլեան քահանայն իւրեան խոստովանահայր ընտրել, այն ժամանակ դուք հաւատացած եղէք, որ կը մնաք այս տեղ ձեր կառավարչական պաշտօնի մէջ . . . ։ Պատուաւոր խօսք եմ տալիս ձեզ․ իսկ ինչ որ ես մի անգամ խոստացել եմ, այն միշտ կատարումեմ։

Ի հարկէ դուք կարող էք այդ անել», ասաց Դիւպօնը, զարմացած Պ. Րօդէնի հաստատապէս խօսելու վերայ, «բայց ես կը ցանկայի իմանալ . . .»։

—Լսեցէք ինձ, ասաց Պ. Րօդէնը, կտրելով նորա խօսքը, — ես սիրումեմ յայտնի ներգործել և յօժարակամ կ՚ասեմ ձեզ, թէ ինչ պատճառով ցանկանումեմ։ Ինձ մինչև անգամ շատ անախորժ ես կը լինէր, եթէ դուք այս իմ առաջարկութիւնը համարէիք մի որպիսի և իցէ խռովասիրութիւն։ Այս տեղ բանը մի լաւ գործի վերայ է։ Մարկիզ դ՚Էգրինիեն մեծ մասնակցութեամբ խնամք ունի Րօավիլեան քահանայի վերայ։ Այս քահանայն շատ աղքատ է, և դարմանումէ իւր պառաւ մայրը։ Եթէ տիկին դը-Սէնդ-կօլոմբը նորան խոստովանահայր ընտրէ, այն ժամանակ նա ամենայն ուրիշ քահանայից շուտով կարող է գնել նորան փրկութեան ճանապարհի վերայ․ պատճառ նա ունի համոզող գեղեցկախօսութիւն և անսովոր համբերութիւն։ Բաց ի սորանից նա խոստովանահայր դառնալով տիկին դը-Սէնտ-կօլոմբին, արդէն ինքն ըստ ինքեան հասկացվումէ, որ օգուտ ես կը ստանայ, որ շահաւէտ էր նորա ծերունի մօրը։ Ահա, այդ ըստ երևութին սարսափելի դաւաճանութեան մեկնութիւնը։ Իմանալով, որ այդ դը-Սէնտ-կօլոմբ տիկինը միտք ունի գնել այս գիւղը, որ դրացի է մեր բարի քահանայի ծուխի հետ, ես գրեցի մարկիզ դ՚Էգրինիեին․ նա իսկոյն ձեզ յիշեց և յանձնեց ինձ խնդրել, որ դուք ցոյց տաք նորան այս չնչին ծառայութիւնը, որ ինչպէս տեսանումէք դուք չէ մնալու առանց վարձատրութեան։ Կրկնումեմ ձեզ և կ՚ապացուցանեմ գործով, որ ես կարող եմ թողուլ ձեզ ձեր կառավարչական պաշտօնի մէջ։

«Լսեցէք ինձ», ասաց Դիւպօնը, րոպէական մտածութենից յետոյ, «դուք այնպէս բաց էք ձեր խօսակցութեան մէջ այնպէս երախտապարտող, որ ես չ՚կամիմ բան ծածկել ձեզանից և պիտոյ է մաքուր սրտով խօսեմ ձեզ։ Դանիկուրեան քահանային այս տեղ շատ սիրումեն և յարգումեն, մինչ Րօավիլեան քահանայից բոլորը փախչումեն հեռանումեն․ պատճառ նա սարսափելի մոլակրօն է . . . . և բաց ի դորանից . . .»։

—Ինչ?

«Բաց ի դորանից ասումեն . . .»։

Ի՞նչ են ասում։

«Ասումեն, որ նա.... Յիսուսեան է»։

Պ. Բոդէնը այս տեղ այնպէս պարզահոգութեամբ ծիծաղեցաւ, որ կառավարիչը բոլորովին խառնվեցաւ. Պ. Բոդէնի երեսը մի օտարոտի կերպարանք ունէր մինչ նա ծիծաղումէր։

— Յիսուսեան!! — կրկնեց նա, շարունակելով ծիծաղել, — Յիսուսեան!?...։ Իսկ սիրական Դիւպոն մի թէ դուք խելացի և մտածող մարդ լինելով, հաւատումէք այդպիսի յիմարութեններին? կարելի՞ է արդեօք հաւատալ այդ անարգ լուրերին, որ տարածումէին Յակոբեանները, այդ հին ազատամիտքը։ Երևի թէ այդ բանը դուք կարդացել էք Constitutionel'ի մէջ։

«Բայց ասումեն»։

— Ա՜հ, Տէր Աստուած, շատ բան են ասում! Բայց խելացի և լուսաւոր մարդիկը ուշադրութիւն չեն դարձնում այդպիսի պատմութենների վերայ, նոքա կը պարապին իւրեանց գործով, ոչ ոքին վնաս չհասուցանելով, նոքա այդպիսի չնչին բաների զոհ չեն բերում իւրեանց լաւ տեղը, որ ապահովումէ նոցա ամբողջ կեանքի բարեկեցութիւնը. պատճառ, յայտնի և ցաւելով ասեմ ձեզ, որ եթէ չկարողանաք համոզել տիկին դը-Սէնտ-Կօլոմբը, որ նա խոստովանահայր շինէ Բօավիլեան քահանային, այն ժամանակ դուք ոչինչ կերպով չէք մնալու այս տեղ որպէս կառավարիչ։

«Բայց», ասաց խեղճ Դիւպոնը, «ես ինչով յանցաւոր կը լինեմ, եթէ այդ կինը, լսելով, որ ամենքին գովումէին Դանիկուրեան քահանային, կամենայ նորան իւր խոստովանահայր շինել և ոչ նորան, որին տիրութիւն էք անում?»

Ի հարկէ այդպէս է, բայց եթէ դորա հակառակ արժանահաւատ անձինք, որ երկար ժամանակ արդէն բնակվումէին այս կողմերում և որոնց դը-Սէնտ-Կօլոմբ տիկինը տեսանումէր ամենայն օր, սկսանէին գովել Բօավիլեան քահանային և պարսաւէին Դանիկուրեանը, այն ժամանակ, տիկինը անտարակոյս կ'ընտրէր առաջինը և դուք կը մնայիք կառավարչական պաշտօնի մէջ։

«Բայց այդ բամբասանք կը լինի», գանչեց Դիւպոնը։

— Ա՜հ սիրելի Դիւպոն, — ասաց Պ. Բոդէնը վշտացած կերպով և բարեկամական մեղադրանքով, — ինչպէս կարող էք դուք մտածել, որ ես այդպիսի ատելի խորհուրդներ տայի ձեզ?... Ես մի միայն այդպէս կարծումեմ։ Դուք ցանկանումէք մնալ այս տեղ ձեր պաշտօնի մէջ և ես տալիս եմ ձեզ ահա ամենահաստատ հնար այդ բանի համար.... արդէն այդ ձեր գործն է մտածել ամենայն բանի վերայ և որոշել արժանը։

«Բայց...»:

— Լսեցէք, ահա երկրորդ պայմանը, որ նոյնպէս երևելի է, ինչպէս առաջինը: Մի չար բաղդով շատ անգամ պատահել է, որ եկեղեցու անարժան սպասաւորքը, ազդեցութիւն ստանալով իւրեանց հոգևոր զաւակների խելքերի վերայ, օգուտ էին քաղում դորանից, որ մի կերպով ձեռք ձգէին զանազան շահաւէտութիւնք իւրեանց և ազգականների համար. քահանայն, որի մասին մեք հոգաբարձութիւն ենք առնում, ի հարկէ անընդունակ է այդպիսի ցած գործերի.... բայց իմ կողմից ամենայն պատասխանատուութենից ազատ մնալու համար նոյնպէս և ձեր կողմից ազատութեան համար, եթէ դուք գործակից կը լինիք քահանայի յառաջանալուն, ես կամիմ, որ դուք ամենայն շաբաթ գրէք ինձ, որքան կարելի է մանրամասն, այն ամենայն փոփոխութենների մասին, որ կը տեսանէք տիկինի բնաւորութեան, սովորութենների, յարաբերութենների մէջ, և մինչև անգամ յայտնէք ինձ, թէ ինչ է կարդում նա. պատճառ, հոգևոր հօր ազդեցութիւնը ցոլանումէ մարդկային կեանքի ամենայն մասնաւոր բաների մէջ: Ես կամիմ շարունակ նկատել մեր քահանայի բոլոր ներգործութիւնքը, բայց այնպէս, որ նա չ'իմանայ այդ նկատողութիւնը.... և եթէ դուք իմանայիք մի դատապարտելի բան, ես այն ժամանակ իսկոյն կը տեղեկանայի ձեր նամակներից:

«Բայց այդ լրտեսութիւն է!» գանչեց անբաղդ կառավարիչը:

— Ո՛հ սիրելի Դիւպօն, ինչպէս կարող էք դուք այդպիսի արհամարհելի անուն տալով աղճատելով մարդկային ամենաբարձր ձգտողութիւնը – հաւատարմութիւնը. պատճառ, ես պահանջումեմ ձեզանից մի միայն, որպէս ապացոյց ձեր դէպ ի ինձ ունեցած հաւատարմութեան, անկեղծ և մանրամասն նկարագրութիւն այն ամենայն բաներին, որ անցանումէին այս տեղ...: Այս երկու պայմանների վերայ, որ անբաժան էին մինը միւսից, դուք հանգիստ կարող էք մնալ ձեր պաշտօնի մէջ.... դորա հակառակ, թէպէտ և ինձ շատ ցաւելի է, ես հարկադրված կը լինիմ այլ մարդ կարգել ձեր տեղը:

«Ի սէր Աստուծոյ», ասաց Դիւպօնը, «այնքան մեծահոգի եղէք, որ առանց պայմանի.... Ես կնոջս հետ միմիայն այս պաշտօնատարութեամբ ապրումենք. մեր երեկոյացեալ հասակը թոյլ չէ տալիս մեզ այլ տեղ որոնել: Իմ քառասուն տարվայ պատուաւորութիւնս մի ձգէք այդպիսի սարսափելի փորձութեան մէջ, մի հարկադրէք ինձ, աղքատութենից ազատվելու համար, գործ կատարել ընդդէմ խղճմտանքիս:

— Սիրելի Դիւպօն, դուք և ծերութեան հասակում դեռ ևս երեխայ էք.... լաւ մտածեցէք.... և մի շաբաթից յետոյ տուեցէք ինձ ձեր վճռական պատասխանը:

«Ա՛հ, կարեկից եղէք...»:

Այս խօսակցութիւնը ընդհատվեցաւ խլացուցիչ աղաղակից, որ կրկնումէր ծովեզրի արձագանքը:

— Այս ի՞նչ բան է, — հարց արեց Պ. Րօդէնը:

Հազիւ կարողացել էր նա ասել այս խօսքերը, մինչ աղաղակը կրկնվեցաւ նոր զօրութեամբ:

«Թնդանօթի ձայներ են», գանչեց Դիւպոնը տեղից վեր կանգնելով, «Թնդանօթի ձայներ են, երեւի թէ վտանգի մէջ եղած նաւը օգնութիւն է խնդրում:

— Սիրական, — ասաց նորա կինը շտապով ներս մտանելով սենեակը, «Պատշգամբից երեւումէ ծովի վերայ մի շոգեշարժ և մի առագաստաւոր նաւ, համարեա թէ առանց կայմերի... ալիքները ուղղակի դէպ ի ծովեզր են քշում նորանց, նաւը իմաց է տալիս իւր անտարակոյս կորուստը.... նա կտոր կտոր կը լինի ապառաժներին զարկվելով:

«Ո՛հ, այդ սարսափելի է.... անհնար է օգնել.... մի՛թէ սառն սրտով տեսանող լինիմ նաւաբեկութեանը...» գանչեց Դիւպոնը, յափշտակելով գլխարկը և կամելով դուրս գնալ:

— Մի՛ թէ ոչինչ չէ՞ կարելի հոգալ նոցա համար, — հարց արեց Պ. Րօդէնը:

«Եթէ մրրիկը և ծովը քշեն այդ նաւերը ուղղակի ծովեզերեայ ապառաժների վերայ, այն ժամանակ, ոչինչ մարդկային ույժ և կարողութիւն չէ կարող փրկել նորանց. օր ու գիշերվայ հաւասարութենից սկսած այս տեղ երկու նաւ կորան արդէն:

— Ի՛նչպէս. խեղդվեցան բոլորովին ինչ որ կային չ՛կային նաւերի վերայ, այդ սոսկալի է! — ասաց Պ. Րօդէնը:

«Այսպիսի մրրկի ժամանակ, անբաղդ նաւորդների համար համարեա թէ ոչինչ փրկութիւն չկայ...: Ինչպէս և իցէ» ասաց կառավարիչը իւր կնոջը, ես կը վազեմ մեր մարդերով դէպ ի ծովեզրը, կը նայեմ կարելի չէ՞ արդեօք նաւորդներից մի մարդ ազատել. դու այս միջոցին մի քանի սենեակում հրամայիր հնոցները վառել... պատրաստիր կտաւէք, հանդերձ և ջերմ ըմպելիք...: Մինչև անգամ յոյս չունիմ մի մարդ ևս ազատելու, բայց այսու ամենայնիւ պիտոյ է աշխատել...: Դուք ևս կամի՞ք գնալ եմ հետ պարոն Րօդէն...»:

— Պարտականութիւն կը համարէի ինձ, եթէ կարողանայի օգտակար լինել. բայց ես արդէն այնպէս ծեր եմ և թոյլ, որ չեմ կարող մասնակից լինել այդ բարի գործին... — պատասխանեց Պ. Րօդէնը, որ ամենեւին տրամադրութիւն չունէր ենթարկվել մրրկի ահին ու սարսափանքին, — Ձեր ամուսինը կ՛աշխատի ցոյց տալ ինձ կա-

նաչ սենեակը, ես կ՚առնում այն տեղից ինչ որ հարկաւոր է և շուտով կ՚երթամ Փարիզ. պատճառ, շատ շտապումեմ։ —

«Ինչպէս կամիք։ Կատարինէն ցոյց կը տայ ձեզ». ասաց Դիւպոնը. իսկ դու հրամայիր կոչնակ զարկել», յաւելացրեց նա դառնալով դէպ ի աղախինը, «որպէս զի ագարակի բոլոր մարդիկը ինձ մօտ վազեն դէպ ի ծովեզր, չուաններով և երկաթի գաւազաններով»։

— Շատ բարի, սիրելիս, միայն Աստուծոյ սիրուն զգուշացիր քեզ, — պատասխանեց նորա կինը։

«Գրկախառնիր ինձ, այդ բաղդ կը բերէ ինձ», ասաց կառավարիչը և յետոյ դուրս վազեց սենեակից ասելով, «շուտով շուտով, գուցէ երկու նաւերից մի տախտակ ևս մնացած չ՚լինի այժմ»։

— Աշխատեցէք խնդրեմ, առաջնորդել ինձ դէպ ի կանաչ սենեակը, — ասաց Պ. Բօդէնը անշփոթ սառնասրտութեամբ։

«Շնորհ բերէք այս կողմ», պատասխանեց Կատարինէն, սրբելով աչքի արտասուքը, որ գլորվումէր աչա. պատճառ գիտելով ամուսնու աներկիւղութիւնը նա շատ երկիւղ էր կրում նորա կեանքի մասին։

II.

ՄՐՐԻԿԸ։

Սարսափելի էր ծովը....

Ահագին մոյգ կանաչ ալիքները խառնված սպիտակ փրփուրով, երբեմն բարձրանալով երբեմն ցածանալով, նկարագրվումեն լայն կարմիր գծի վերայ հորիզոնում։ Նորա վերայ հաւաքվումեն սև կպրագոյն ամպերի ծանր մարմինքը, որ հալածվումեն կատաղի մրրկից. կարմրագոյն գորշ ամպիկները փախչումեն այս որոտալիր երկնքի վերայով։ Ձմեռնային գունաթափ արևը դանդաղ բարձրանալով մեծ մեծ ամպերի քամակից արձակումէ իւր թեք ճառագայթքը կատաղի ծովի վերայ և տեղ տեղ ոսկեզօծումէ ամենաբարձր ալիքների թափանցիկ կատարները։ Ձիւնի գոյն փրփուրը եփվումէ և ման է առնում ջրի տակի քարերի մօտով, որոնցով լցուած է այս վտանգաւոր ծովեզրը։

Հեռի տեղում, զառ ի վայրի վերայ ապառաժուտ հրուանդանի, որ բաւական հեռի մտած է ծովի մէջ, երևումէ Կարդովիլ ամրոցը. արևի ճառագայթքը խաղումեն նորա պատուհանների ապակիների վերայ. նորա աղիւսեայ պատերը և սրածայր ապխտեան ծածկոյթները անորոշ գծագրվումեն թանձր մառախուղի մէջ։

Մի մեծ նաւ, ջարդված մեքենաներով, գնալով մի միայն առա-

գաստների ուժով, որոնք դեռ ես բռնված են կայմերի բևեռների վերայ, քշվումէ դէպ ի ծովեզրը։ Երբեմն բարձրանումէ նա այլանդակ ալիքների կատարների վերայ և երբեմն անդունդք է իջանում նորա հետ միասին։ Փայլակը փայլակեց.... իսկոյն նորա քամակից լսուեցաւ մի խուլ դրնդիւն, հազիւ թէ լսելի մրրկի աղաղակից.... այդ թնդանօթի արձակումն — վերջին նշանն է, վերջին օգնութիւն գանչելը նաւին, որ կորսվումէ և ակամայ յառաջ է մղվում դէպ ի ծովեզրը։

Այս միջոցին մի շոգենաւ, որի վերայ ծածանումէր սև ծուխի սուլթանը արևելքից արևմուտք էր գնում, ամենայն ջանք գործ դնելով, որ կարողանայ հեռի պահպանել իւրեան որքան հնար է եզերքից։ Առագաստաւոր նաւը, յառաջ մղվելով դէպ ի ապառաժները, դէպ ի ուր տանումէին նորան մրրիկը և ալիքները, անշուշտ պիտոյ է անցանէր շոգենաւի քթի տակից։ Յանկարծ ծովի հզօր կատաղութիւնը դրեց շոգեշարժ նաւը կողքի վերայ. ահագին կատաղի ալիքը խորտակվեցաւ նորա տախտակամածի վերայ. մի ակնթարթում դուրս ընկաւ ծխափողը, մի անիւը իւր պաշտպանարանով դուրս թռաւ իւր տեղից ջարդած ու փշրած...։ Երկրորդ ալիքը, որ հետևեց առաջինին զարկեց շոգեշարժ նաւի կողքին և այնպիսի աւերածք պատճառեց, որ նաւը չկարողանալով այնուհետև կառավարել իւր ընթացքը մղվումէր դէպ ի ծովեզրը մի և նոյն ուղղութենով, ինչպէս երեք կայմաւոր նաւը։

Երեք կայմաւոր նաւը առաւել հեռի էր ապառաժներից, բայց մեծ տարածութիւն գնելով մրրկի և ալիքների առաջևը, քան թէ շոգեշարժ նաւը, առաւել արագ մղվեցաւ և մի քանի ժամանակից յետոյ այնքան մօտեցաւ նորան, որ երկիւղ կար սոցա միմեանց զարկվելու.... այս մի նոր վտանգ էր, որպէս կատարելագործութիւն անփախչելի նաւաբեկութեանը։

Երեք կայմաւոր նաւը անգլիական էր Black Eagle (Բլակք-Իգլ) անունով, որ գալիս էր Ալեքսանդրիայից. Նորա մէջ կային նաւորդներ, որ Հնդկաստանից և Եավայից Րիւտեր շոգեշարժ նաւով հասած, դուրս էին եկել, որ ցամաք ճանապարհով անցանեն սուէզեան պարանոցը։ Բլակ-Իգլը դուրս գալով Գիբրալտարեան ծովածոցից հանդիպեց Ազօրեան կղզիները, որ տեղից վերադառնումէր այժմ.... Նա նաւեց դէպ ի Պօրտսմուտ երբ զարկեց նորան հիւսիսային-արևմտեան մրրիկը, որ կատաղաբար փչումէր այն ժամանակ Մանշեան ջրանցքում։

Շոգեշարժ նաւը, որ անուանվումէր Guillaume-Tell (Գիյլեօմ-Տէյլ) գալիս էր Էլբայի վերայով Գերմանիայից, մտաւ նա Համբուրգ և

այն տեղից ուղղեց իւր ընթացքը դէպ ի Հավր։ Այս երկու նաւերը խաղալիք դարձած ահագին ալիքներին, հալածված մրրկից, քարշված ծովի մակընթացութենից, սարսափելի արագութեամբ դիմումէին դէպ ի ծովի տակի ապառաժները։ Այս երկու նաւերի տախտակամածները հանդիսացնումէին մի սոսկալի տեսարան. բոլոր նաւորդների մահը թըվում էր անփախչելի. պատճառ, ծովը կատաղութեամբ զարկվումէր ապառաժներին, որ սեպացած էին ուղղահայեաց և քարքարոտ ծովեզրի վերայ։

Բլակք-Իգլի նաւապետը, կանգնած նաւի վերջումը, ձեռքը ձգած ջարդված կայմին, այս սարսափելի հանգամանքների մէջ, այրական սառնասրտութեամբ տալիս էր վերջին հրամանները։ Ալիքները տարել էին փոքրիկ նաւակները. չէր կարելի այլ ևս մտածել մակոյկ իջուցանել ծովը. փրկութեան համար մնումէր միայն մի հնար, եթէ նաւը ջարդ ու փշուր չ՚լինէր առաջին անգամ ապառաժներին զարկվելուց, մալուխ ձգելով ապառաժների վերայ մի լաստի նման բան շինել. այս մի ամենավտանգաւոր կապակցութիւն էր ծովեզրի և խորտակված նաւի մէջ։

Տախտակամածը ծածկված էր նաւորդներով, որոնց աղաղակը և յուսահատութիւնը աւելացնումէին ընդհանուր շփոթութիւնը։ Ոմանք բռնված աննկարագրելի զարհուրանքից, գրկած հաստ չուանների ցանցերը, սպասումէին մահին անխելք անզգայութեամբ. միւսերը յուսահատութենից կոտրումէին իւրեանց ձեռքերը կամ գլորվումէին տախտակամածի վերայ անէծք և հայհոյութեններ թափելով։ Այս տեղ կանայք ծունկ չոքած ուղարկումէին իւրեանց ջերմ պաղատանքը դէպ ի երկինք. այն տեղ միւսերը ծածկումէին իւրեանց երեսը ձեռքերով, որպէս զի չ՚տեսանեն մահի սարսափելի մօտենալը. մի մատաղահաս մայր, գունաթափ որպէս ուրուական, պինդ սեղմած կուրծքին իւր երեխայն գնումէր մի նաւաստուց դէպ ի միւսը և առաջարկումէր մի քսակ ոսկով լիքը և իւր բոլոր թանգագին ինչքը նորան, որ յանձնառու կը լինէր փրկել նորա մանուկը։ Այս աղաղակները, յուսահատութիւնը, արտասուքը բոլորովին հակադիր էին նաւաստիների, իւրեանց ճակատագրի մառախլապատ և լուռ ու մունջ հնազանդութեանը։ Գիտելով վտանգի անփախչելի լինելը, ոմանք հանումէին իւրեանց հագի վերնազգեստը, սպասելով այն րոպէին, երբ պիտոյ էր վերջին զօրութիւնը գործ դնել կատաղի ալիքների ձեռքից իւրեանց կեանքը կորզելու համար. միւսերը, հրաժարվելով ամենայն յոյսից ստոյիկեան սառնասրտութեամբ նայումէին մօտեցող մահի վերայ։

Տեղ տեղ այս սրտաշարժ կամ զարհուրելի անցքերը նկարա-

գրվումն, այսպէս ասել յուսահատութեան մառախլապատ ստուերի վերայ, մի երիտասարդ մարդ, այսպէս, տասն և ութն տարեկան, սև ու փայլուն մազերով, ուղիղ և գեղեցիկ դէմքի գծագրութենով նայումէր այս վշտի և զարհուրանքի պատկերի վերայ, այնպիսի մարդու հանգստութեամբ, որ սովորել էր ամենայն վտանգ արհամարհել։ Փաթաթված իւր վերարկուի մէջ, նա կանգնած էր, մէջքը տուած վանդակներին։ Ցանկարծ անբաղդ մայրը, որ, երեխայն բռնած մի ձեռքումը իսկ ոսկով լիքը քսակը միւսումը, զուր տեղը դիմել էր արդէն շատ նաւաստիների, խնդրելով նորանց փրկել իւր որդին, տեսաւ այս դեղնագոյն երեսով պատանի մարդուն, ընկաւ նորա առաջև ծունկի վերայ և պարզեց դէպ ի նա իւր երեխայն աննկարագրելի յուսահատութեամբ։ Երիտասարդ մարդը ընդունեց մանուկը, տխրութեամբ գլուխը շարժելով, ցոյց տուեց կատաղած ալիքները, բայց մի այլ հասկացնող շարժողութեամբ, թըվումէր, թէ խոստանումէ փրկել նորան, եթէ կարելի լինի...։ Այն ժամանակ անբաղդ մայրը, անխելք յուսով, ցօղեց նորա ձեռքերը երախտագիտական ջերմ արտասուքով։ Մի փոքր հեռի, Բլակք-Իգլի մի այլ նաւորդ, թըվումէր, թէ ոգևորված է շատ գործունեայ կարեկցութենով։ Ինչպէս երևումէր նա քսան և հինգ տարեկանից առաւել չէր. խարտեաշ մազերը թափվումէին գանգուրներով նորա հրեշտակային դէմքի չորս կողմումը։ Նորա հագին կար սև կապայ և սպիտակ կրծակալ. դառնալով դէպ ի սաստիկ յուսահատվածները, անցանելով մինից դէպ ի միւսը, նա խօսումէր կրօնական և նախախնամութեան կամքին հնազանդութեան խօսքեր։ Տեսանելով, որ նա մխիթարումէ միները, քաջալերումէ միւսերը խօսքերով, որ լցուած էին բարեպաշտ զգացմունքով, հեզ հաւատով և դէպ ի մերձաւորը Քրիստոնէական կարեկցութենով, կը կարծես, որ ինքը ամենևին չէ ենթարկվում վտանգի։ Նորա գեղեցիկ և հանգիստ երեսի վերայ երևումէր սառն աներկիւղութիւն և կրօնական սառնութիւն դէպ ի ամենայն ինչ երկրաւոր. երբեմն երբեմն բարձրացնումէր նա իւր կապոյտ բաց աչքերը դէպ ի երկինք, որոնք փայլումէին սիրով, երախտագիտութենով և հոգու մաքրութենով, որպէս թէ շնորհակալ լինելով Աստուծուց այն մասին, որ նա մատնեց նորան մի այնպիսի փորձութեան, որոնց մէջ աներկիւղ, և մարդկութեան սիրով վառված, մարդը կարող է նուիրել իւրեան մերձաւորի ծառայութեանը և, եթէ չփրկէ նոցա բոլորին, գոնէ նոցա հետ միասին կը մեռանի երկինքը ցոյց տալով նոցա...։ Նա նման էր Արարչից ուղարկված հրեշտակի, որ ամոքէ անողոքելի բաղդի տուած հարուածների խստութիւնը...։

Ինչ օտարոտի հակադրութիւն է! ոչ շատ հեռի հրեշտակի նը-

ման մարդուց գտանվումէր մի այլ մարդ նման չարութեան հոգու։ Նա համարձակ վեր ելաւ կոտրած կայմի վերայ և բռնելով պարանից, թագաւորումէր այս սարսափելի տեսարանի վերայ, որ անցանումէր տախտակամածի երեսին։ Նորա անհարթ և դեղնագոյն երեսի վերայ երևումէր վայրենի և կատաղի ուրախութիւն. Նորա հագին կար քաթանի շապիկ և քաթանի վարտիկ. վզից կախած էր մի մետալեայ փողովակ, ինչպէս երևումէր, թղթերով լիքը։ Որքան մեծանումէր վտանգը, որքան առաւել սպառնումէին նաւին ապառաժները և շոգեշարժ նաւի հետ զարկվիլը, որ արագութեամբ մօտենումէր, և որ պիտոյ է սարսափելի լինէր, մինչ երկու նաւերը պիտի գնային ծովի յատակը, առանց դեռ ևս ծովի տակի ապառաժների վերայ ջախջախվելու, այնքան որոշակի երևումէր սարսափելի յորձանքներով այս մարդու դժոխային ուրախութիւնը։ Թըվումէր, թէ նա կատաղի անհամբերութեամբ սպասումէր անփախչելի և զարհուրելի կործանմանը։ Տեսանելով, թէ ինչ ագահութեամբ բերկրումէ այս մարդը նորա աչքի առաջև եղած վշտերովը, չարչարանքներովը և յուսահատութենով կը կարծես, որ դա պաշտօնեայ է մի արեանարբու աստուածութեան, որոնք բարբարոսական աշխարհներում համարվումեն պաշտպան սպանութեան և արիւնհեղութեան։ Շուտով Բլակ-Իգլը, հալածված մրրկից և ահագին ալիքներից, այնպէս մօտեցաւ Գէյլիօմ-Տէյլին, որ նաւի տախտակամածից կարելի էր տեսանել նաւորդքը, հաւաքված շոգեշարժ նաւի տախտակամածի վերայ, որ նոյնպէս համարեա թէ ջարդված էր բոլորովին։ Շատ չէին այդ նաւորդքը։ Ալիքը, որ կործանեց շոգեշարժ նաւի մի անիւը իւր պաշտպանարանով, տարաւ նոյնպէս իւր հետ այն կողմի տախտակամածի շրջանակի մեծ մասը. ալիքները ներս մտանելով այս լայն ծակից լուանումէին տախտակամածը և իւրաքանչիւր անգամ տանումէին իւրեանց հետ մի քանի զոհ։ Նաւորդների կարգումը, որոնք կարծես ազատվել էին այս բանից այն պատճառով միմիայն, որ ջարդվէին ապառաժներին զարկվելով կամ երեք կայմաւոր նաւի հետ զարկվելու ժամանակ ճընշվէին և այնպէս մեռանէին, կար մի նաւորդների հատուած, ողջից առաւել արժանի ամենաքնքոյշ և ցաւալի կարեկցութեան։

Հեռացած նաւի յետնակողմը, մի բարձրահասակ, ճաղատ ծերունի ալեխառն ընչացքներով, փաթաթումէր իւր չորս կողմը չուանով և, այս կերպով ամրանալով տախտակամածի վերայ, նորա շըրջանակի մօտ, գրկումէր և սեղմումէր իւր կուրծքին երկու օրիորդք տասն և հինգ կամ տասն և վեց տարեկան, որոնք կիսով չափ ծածկված էին եղնի մորթուց մուշտակով. . . ։ Մեծ չէկ շունը, որից ջուրը թափվումէր, կանգնած էր նորա ոտքումը և կատաղաբար հաչումէր

ալիքների վերայ: Օրիորդքը շրջապատած ծերունու ձեռքերովը, բաց ի սորանից սեղմվել էին միմեանց. բայց նոցա աչքերը չէին յածում այս և այն կողմը զարհուրանքով, այլ ուղղված էին դէպ ի երկինք, որպէս թէ, լցուած հաստատ յուսով և պարզահոգի հաւատութենով, հաւատացած էին, որ մի որպիսի և իցէ գերբնական զօրութիւն կը փրկէ նորանց: Ցանկարծ զարհուրանքի, յուսահատութեան, սարսափելի աղաղակը, բոլոր նաւորդների բերանից մի և նոյն ժամանակ դուրս թռած, մի րոպէ խլացուց մրրկի գոռում գոչիւնը: Այն ակնթարթում, երբ շոգեշարժ նաւը անդունդք իջանելով, դարձաւ իւր կողքովը դէպ ի երեք կայմաւոր նաւի քիթը, նաւը բարձրացած ջրային սարով մինչև անչափելի բարձրութիւն, մի վայրկեան ժամանակ ասես թէ կախված էր շոգեշարժ նաւի վերայ և յետոյ սուզեցաւ դէպ ի ցած. . . :

Լինումեն վերին-զարհուրելի տեսարաններ, որ նկարագրել չէ կարելի. բայց այս արկածքների պատահելու ժամանակ, որոնք արագ են ինչպէս միտք, երբեմն աչքի առաջև ներկայանումեն այնպիսի վայրկենական պատկերներ, որ թըվումե որպէս թէ տեսանումեիր նորանց փայլակի լուսով: Այսպէս, այն րոպէին, մինչ Բլակ-Իգլը, բարձրացած հսկայամարմին ալիքով, դիմումեր Գիյլեօմ Տէյլի վերայ, երիտասարդ մարդը, որ նման էր հրեշտակի, կանգնած էր մեծ կայմի առաջևը և պատրաստվումեր ծովը նետվիլ մի որպիսի և իցէ զոհ փրկելու համար. . . : Ցանկարծ շոգեշարժ նաւի տախտակամածի շրջանակի մօտ, որի վերայ նայումեր հսկայամարմին ալիքի բարձրութենից, տեսաւ նա երկու օրիորդք, որ պարզումեին դէպ ի նա իւրեանց աղաչաւոր ձեռքերը: Թըվումեր թէ ճանաչեցին նորան և նայեցան նորա վերայ մի տեսակ ուրախութեամբ և երկիւղածական սիրով: Չ'նայելով մրրկի աղաղակի և մօտակայ նաւաբեկութեան վերայ, այս երեք էակների հայեացքը հանդիպեցան միմեանց:

Այն ժամանակ երիտասարդ մարդու երեսի վերայ երևեցաւ խորին կարեկցութիւն, պատճառ օրիորդքը, ձեռնամած կացած, թըվումեր թէ աղաչումեին նորան, որպէս շատ ժամանակից արդէն սպասած ազատողի. . . : Ծերունին գլորված մի մեքենայի ընկնելուց պառկած էր առանց զգացողութեան տախտակամածի վերայ: Շուտով ահա ամենայն ինչ աներևութացաւ: Սարսափելի ջրակոյտը հոսեց Բլակ-Իգլը Գիյլեօմ Տէյլի վերայ, եռացող փրփուրների ամպերի մէջ:

Փայտեղէն և երկաթեղէն մարմինների սարսափելի շռինդի հետ, որ ճնշվեցան և ջարդվեցան միները միւսերով, լսվեցաւ միայն մի սարսափելի աղաղակ. . . յուսահատութեան և մահի աղաղակ, որ

արձակեցին մի և նոյն ժամանակ հարիւր կենդանի էակներ, որ կուլ գնացին ալիքներին.... և յետոյ ոչինչ չ՚երևեցաւ...։

Մի քանի րոպէից յետոյ ալիքների խոր տեղերում կամ գագաթներում երևեցան երկու նաւերի ջարդված բեկորները.... տեղ տեղ դուրս էին ելանում ջրից յնցողութեամբ սեղմված ձեռքեր կամ լերդագոյն գունաթափ երես մի որպիսի և իցէ անբաղդի, որ ոյժ էր թափում լողալ մինչև ապառաժները, մոռանալով, որ կատաղութենով նոցա վերայ խորտակվող ալիքները, կարող էին ճնշել նորան իւրեանց ծանրութենով։

III.

ԱԶԱՏՎԱԾ ՆԱՒՈՐԴՔԸ։

Այն միջոցին, երբ կառավարիչը, իւր մարդերի հետ միասին, գնաց ծովի եզրը օգնութիւն հասուցանելու նորանց որ ազատվել էին մահից անփախչելի նաւաբեկութեան ժամանակ, Պ. Բօդէնը, կատարինէի առաջնորդութեամբ, գնաց կանաչ սենեակը այն բաների քամակից, որ մտածումէր փարիզ տանել իւր հետ։

Նա երկու ժամ մնաց այն տեղ ամենևին հոգս չ՚առնելով վտանգաւոր նաւորդների փրկութեան մասին, որ այն միջոցին շատ սաստիկ պարապեցուցել էր ամրոցի բոլոր բնակիչքը. յետոյ վերադարձաւ նա կառավարչի սենեակը, որ կից էր երկայն պատշգամբին։ Այն տեղ ոչ ոք չ՚կար։ Պ. Բօդէնը տանումէր իւր թևի տակ մի փոքրիկ արկղ արծաթի կապերով, որոնք սևացել էին ժամանակից։ Նորա կիսով չափ կոճկած սիւրտուկի տակից դուրս էր երևում սափիանեայ մեծ թղթակրի ծայրը. որ դրել էր նա իւր կողքի գրպանը։ Եթէ Հ. դ՚Էգրինիէի քարտուղարի սառն և մռելատիպ երեսը կարողանար ուրախութիւն ցոյց տալ այլապէս քան թէ հեգնական ժպիտով, ապա ուրեմն կը փայլէր նորա երեսը բերկրութեամբ. պատճառ, նորա գլխումը տարուբերվումէին շատ ախորժ մտածողութիւնք։ Փոքրիկ արկղը դնելով սեղանի վերայ, նա սասց ինքը ինքեան. «ամենայն ինչ այնպէս լաւ է գնում, որ առաւել չէր կարելի։ Շատ խելօք բան արեցին, որ մինչև այժմ չ՚առեցին այս տեղից այդ թղթերը. պատճառ, միշտ պիտոյ է զգուշանալ այդ Ադրիեն դը-Կարդովիլլի սատանայական խելքից, նա որպէս թէ գուշակումէ այն բանը, որ երբէք չէր կարող իմանալ։ Լաւ որ.... շուտով վախի տեղ չենք ունենալու նորանից։ Նորա վիճակը սարսափելի կը լինի, բայց այդ անպատճառ հարկաւոր է։ Այդպիսի հպարտ և անկախ բնաւորութեամբ

մարդիկը, արդէն մի միայն իւրեանց այդ յատկութեան պատճառով, մեր համար թշնամի ծնած-թշնամի են: Ինչ պիտոյ է նորանցից սպասել, եթէ նոքա, առանձին հանգամանքների պատճառով վնասակար են մեզ և վտանգաւոր? Ինչ որ վերաբերումէ այդ Սէնտ-կօլոմբին, ես բոլորովին հանգիստ եմ, կառավարիչը — մերն է.... պատերազմը այն բաների, որ այդ յիմարը անուանումէ խղճմտանք, և, երկիւղի մէջ, ծերութեան ժամանակ հացի վերջին կտորից զրկվելու, երկարատև չէ լինելու: Ինձ համար շատ թանգ է այդ մարդը. պատճառ, ամենայն ուրիշ մարդուց առաւել լաւ կարող է ծառայել մեզ. նա քսան տարի է բնակվումէ այս տեղ, այս պատճառով այդ յիմար և զզուելի Սէնտ-կօլոմբը շուտով կը հաւատայ նորա խօսքերին: Այդ կինը ընկնելով միանգամ մեր Բօավիլեան քահանայի ձեռքը, միւս անգամ չէ դուրս գալու մեր ճանկից: Այդ անպիտան, գարշելի կանայքը ամենեքին մի ճանապարհով են գնում: Երիտասարդութեան ժամանակ նոքա ծառայումեն սատանային, միջին հասակում, ուրիշներին հարկադրումեն ծառայել նորան, իսկ ծերութեան ժամանակ սաստիկ վախենումեն նորանից: Նորան այնպէս երկիւղ պիտոյ է տալ, որ նա մեզ կտակէ իւր Կարդովիլեան ամրոցը: Այդ շինուածքը, իւր առանձին դրութեամբը, շատ յարմար է դպրոցի համար.... և այսպէս ամենայն ինչ շատ լաւ է գնում.... Ինչ որ վերաբերումէ մեգալինների գործին, փետրուարի տասն և երեքը մօտենումէ, իսկ Վան-Դաեօլից ոչինչ լուր չկայ.... Նշանակումէ Անգլիացիք դեռ ևս չեն ազատել ճայլմա իշխանը. եթէ ազատած լինէին Վան-Դաեօլը կը յայտնէր ինձ.... գեներալ Սիմոնի դստերքը երևի թէ մի ամիս դեռ ևս կը նստին Լէյբցիգի բանդումը: Ուրեմն օտար աշխարհներում մեր գործերը շատ լաւ վիճակի մէջ են, իսկ Փրանսիայի միջի եղածները...»:

Պ. Րօդէնի մտածողութիւնքը ընդհատվեցան Դիւպօնի կնոջ գալովը: Նա շատ ջերմեռանդութեամբ պարապելով ազատված նաւորդներին անհրաժեշտ դարմաններ պատրաստելու համար, ներս մտաւ սենեակը, աղախնուն պատուէրներ տալով:

«Այժմ», ասաց նա աղախնուն, «պատկից սենեակի հնոցը վառիր. դիր այն տեղ այս ջերմ գինին. երևի թէ, պարոնդ շուտով կը վերադառնայ»:

— Յոյս կայ այդ անբաղդներից մի մարդ ազատելու?— հարցրեց Պ. Րօդէնը Դիւպօնի կնոջից:

«Մինչև այժմ դեռ ևս յայտնի չէ. ահա երկու ժամ կը լինի արդէն, քանի որ իմ մարդը գնացել էր: Այդ բանը շատ անհան-

գիտ է առնում ինձ. Նա այնպէս աներկիւղ և անզգոյշ մարդ է։ Իւրեան չէ խնայում, երբ հարկաւոր էր ծառայել ուրիշին...»։

— Աներկիւղութիւն մինչև անզգուշութեան աստիճան.... լաւ բան չէ, — ասաց անհամբերութեամբ Պ. Բօդէնը ինքը ինքեան։

«Ես պատրաստեցի արդէն չոր և ջերմ կտաւիք, ջերմ խմելիք» — շարունակեց Դիւպօնի կինը, «Աստուած տար միայն, որ այս պատրաստութիւնքը զուր չլինէին»։

— Չէ պիտոյ յոյսը կտրել, — ասաց Պ. Բօդէնը, — ես շատ ցաւումեմ որ իմ հասակը և նուազ առողջութիւնը թոյլ չտուեցին ինձ մասնակից լինել ձեր ամուսնու բարի գործին...։ Նոյնպէս ցաւելի է ինձ, որ չեմ կարող սպասել նորա վերադարձին և շնորհաւորել նորա յառաջադիմութիւնը.... Ժամանակ չ՛կայ, ինձ պիտոյ է իսկոյն գնալ...։ խնդրեմ հրամայեցէք լծել իմ կառքը։

«Իսկոյն»։

Լսեցէք, սիրելի տիկին Դիւպօն, դուք խելացի և բան հասկացող կին էք...։ Ես հնար առաջարկեցի ձեր ամուսնուն, որով կարող է մնալ այս տեղ իւր կառավարչական պաշտօնի մէջ։

«Ո՜հ, միթէ?... ինչպէս գոհ ենք մեք ձեզանից...։ Չ՛գիտեմ ինչ պիտոյ է առնէինք մեք այս հասակում զրկվելով այս տեղից»։

— Բայց դորա հետ միասին ես առաջարկեցի նորան երկու պայմաններ.... շատ չնչին բաներ. Նա կը պատմէ ձեզ...։

«Ա՜հ, դուք մեր փրկիչն էք»։

— Ինչ բան է որ. ինձ շատ քաղցր է... միայն թէ այդ երկու պայմանքը...։

«Թէ և ամբողջ հարիւր լինէին այդ պայմանները և այն ժամանակ ևս կը համաձայնէինք կատարել առանց պատճառաբանութեան։ Դուք ինքներդ գտեցէք, կորուսանելով այս տեղը, մեք առանց հացի կը մնայինք մեր ծերութեան օրերում...»։

— Այսպէս, ես իմ յոյսը կը դնեմ ձեր վերայ.... բարի ցանկանալով ձեր ամուսնուն.... աշխատեցէք համոզել նորան։

«Տիկին.... պարօնը գալիս է», գանչեց աղախինը, սենեակը ներս վազելով։

— Շա՞տ մարդ կայ նորա հետ։

«Ոչ ոք, նա միայն է...»։

— Ի՞նչպէս միայն.... անհնարին է։

«Հաւատացէք ինձ տիկին, ես իմ աչքերովս տեսայ»։

Մի քանի րոպէից յետոյ սենեակը ներս մտաւ Դիւպօնը. Ջուրը աղբիւրի նման թափվումէր նորա հալաւներից. գլխարկը կապած էր

փողպատով, որ սաստիկ մրրիկը չթռցնէ. կօշիկները ծածկած էին սպիտակագոյն ցեխով:

— Հազիւ թէ իմ սիրելի վերադարձար դու. ես երկիւղ էի կրում քո մասին, — գանչեց նորա կինը, քնքշութեամբ գրկախառնելով նորան:

«Մինչև այժմ դեռ միայն երեք հոգի ազատեցինք..»:

— Դորա համար ես փառք Աստուծոյ, սիրելի Դիւպօն, գոնէ հնարագործութիւնքը առանց յառաջադիմութեան չմնացին, — ասաց Պ. Բօդէնը:

«Երեք հոգի.... միայն երեք հոգի, ողորմած Աստուած!» գանչեց կատարինէն:

Երեք հոգի, ես ինքս տեսայ փոքրիկ ծոցում. պիտոյ է մտածել, որ այլ տեղերում, ուր ծովեզրը մի փոքր լաւ է, փրկեցին դեռ ևս մի քանի մարդ:

«Ի հարկէ.... լաւ է, որ ծովեզրը ամենայն տեղ այնպէս վտանգաւոր չէ»:

— Ապա ուր են այդ անբաղդները? — հարց արեց Պ. Բօդէնը, որ որոշեց մի քանի րոպէ յետ դնել իւր գնալը:

«Նոքա ծովեզրն են ելանում.... մեր մարդերի օգնականութեամբ: Նոքա հազիւ հազ քայլումեն, իսկ ես վազելով յառաջեցի, որ միամտեցնեմ իմ կինը և անեմ մի քանի կարգադրութիւնք.... նախ, պիտոյ է կնոջ զգեստներ պատրաստել»:

— Ուրեմն կան և կանայք?

«Երկու մատաղահաս օրիորդք, տասն և հինգ կամ տասն և վեց տարեկան.... դեռ ևս իսկապէս երեխայք.... և այնպէս գեղեցիկ են!»:

— Խեղճ ողորմելիք, ասաց Պ. Բօդէնը, կեղծաւոր զգացմունքով:

«Նա, որ փրկեց նորանց, նոյնպէս նոցա հետ է... Ահա նորա համար կարելի է ասել որ կտրիճ է»:

— Կտրիճ:

«Այո՛, երևակայիր քեզ...»:

— Ժամանակ կը գտանես պատմելու.... Յառաջ հագիր գոնէ մի չոր գիշերայնոց.... դու բոլորովին թրջված ես.... և խմիր ջերմացուցած գինի.... առ ահա:

«Այդ ես լաւ է, ճշմարիտը ասել, ես բոլորովին մրսեցայ.... ես արդէն ասացի քեզ, որ երիտասարդ մարդը, որ ազատեց այդ օրիորդքը, ստուգապէս կտրիճ է: Ինչ խելք չհասուցանելի անվախութիւն...: Ես գնացի այս տեղից մեր մշակների հետ.... մի կերպով վայր իջանք ապառաժից նեղ ճանապարհով և վերջապէս հասանք մինչև ծովեզրը.... մինչև փոքրիկ ծոցը.... այն տեղ մի փոքր

խաղաղ է․ պատճառ այդ ծոցը շրջապատումեն հինգ կամ վեց ահա-գին ապառաժներ, որ շատ հեռի ներս են մտնում ծովի մէջ։ Ցան-կարծ տեսանումենք ծոցի ծայրումը.... դու ինչ կը կարծէիր եր-կու օրիորդք ուշաթափ ընկած.... նոցա ոտքերը դեռ ևս ջրի մէջն էին, իսկ ինքեանք թէք ընկած էին քարի վերայ, որպէս թէ հանել ու այդպէս նստեցրել էին այդ տեղ»։

— Խեղճ ողորմելիք, ինչպէս ափսոս է, — ասաց Պ. Բօդէնը, իւր սովորութեամբ աջ աչքի անկիւնի մօտ տանելով, ձախ ճկոյթը, որպէս թէ կամէր սրբել չեղած արտասուքը։

«Նոքա այնպէս նման էին միմեանց, որ միմիայն սովորութիւնը կարող է ուսուցանել ճանաչել նորանց», շարունակեց կառավարիչը։ «Խոստովանումեմ, այդպիսի անսովոր նմանութիւնը զարմացուց ինձ»։

— Երևի երկուորեակ են, — ասաց նորա կինը։

«Այդ օրիորդներից մինը սեղմել էր իւր ձեռքի մէջ մի բրօն-զեայ մեդալիօն, որ կախած էր նորա վզից նոյն մետալից շղթայով»։

Պ. Բօդէնը առ հասարակ ծռած էր պահում իւր իրանը. իսկ լսելով Գիւպօնի այս խօսքերը յանկարծ ուղղվեցաւ և մի թեթև կարմրութիւն ծածկեց նորա թշերի մակերևոյթը.... ամենայն ու-րիշ մարդու վերայ այս ամբոխմունքի նշանները շատ մի մեծ բան չէին երևում. բայց Պ. Բօդէնի վերայ, որ մանկութեան հասակից սովորել էր կեղծաւորվիլ և իշխել իւր զգացմունքներին, այդ պատ-ճառով ցոյց էին տալիս նորա ամենամեծ զարմանքը։ Մօտենալով կառավարչին, նա մի փոքր դողդոջուն ձայնով, բայց ամենևին սառն կերպով, ասաց. — այդ, երևի մի սրբազան մեդալիօն է.... դուք ոչինչ բան չնկատեցիք նորա վերայ։

«Ո՛չ.... իմ խելքիս ևս չեկաւ նայել...»։

— Եւ դուք ասումէք, որ այդ օրիորդքը շատ զարմացուցիչ նմանութիւն ունէին միմեանց?...

«Այո՛, մեծ նմանութիւն, այնպէս, որ չէ կարելի զանազանել մինը միւսից.... նոքա ինչպէս երևումէ պիտոյ է որ լինին, եր-կուսը ևս խոր սգազգեստ են...»։

— Սգազգեստ! — գանչեց Պ. Բօդէնը նոր շարժողութեամբ։

«Այհ, Աստուած իմ, այդպէս մատաղահասք բայց արդէն որ-բացած» ասաց կառավարչի կինը սրբելով արտասուքը։

— Նոքա ուշաթափած էին, — շարունակեց կառավարիչը, — մեք մի փոքր հեռի տարեցինք նորանց չոր աւազի վերայ.... այս միջոցին ապառաժների մինի քամակից երևեցաւ մի մարդու գլուխ.... նա աշխատումէր վեր ելանել քարի վերայ, բռնելով նորանից մի ձեռքով.... մեք վազեցինք դէպ ի նա և դեռ ևս ժամանակով հա-

ռանք. . . . Նորա զօրութիւնքը արդէն քաղվել էին և նա անզգայ ընկաւ մեր մարդերի ձեռքերի վերայ։ Ես նորան ահա անուանեցի կորիճ, հերիք չէ, որ զարմանալի աներկիւղութեամբ փրկել էր երկու օրիորդքը, նա ցանկանումէր դեռ ևս երրորդ մարդը ազատել և այդ պատճառով դարձեալ իջաւ ապառաժների վերայ, որոնց լուանումէր կատաղած ծովը. . . . բայց նորա զօրութիւնքը քաղված էին, և առանց մեր մարդերի, ալիքները անտարակոյս կը տանէին նորան քարի վերայից, ուր աշխատումէր վեր ելանել։

«Խօսք չ՛կայ, հազուագիւտ քաջութիւն է», գանչեց Կատարինէն։

Պ. Բօդէնը գլուխը կախած կուրծքի վերայ, թըվլումէր, թէ ոչինչ չէ լսում։ Որքան առաւել նա մտածումէր, այնքան առաւելանումէին նորա վհատութիւնը և զարհուրանքը։ Ազատված օրիորդքը տասն և հինգ տարեկան էին, կրումէին սև հագուստներ և բոլորովին նման էին միմեանց. մինի վզից կախած էր բրօնզեայ մեդալիոն, արդէն տարակոյս չ՛կար, որ դոքա գեներալ Սիմոնի դստերքն էին։ Բայց ինչ կերպով ընկան նոքա այն մարդերի մէջ, որ հանդիպեցան նաւաբեկութեան։ Ի՞նչ պատճառով ծանօթութիւն չտուեցին իւրեանց այդ մասին։ փախա՞ն նոքա, թէ արձակեցին նորանց. ինչպէս ապա ծանօթութիւն չ՛տուեցին նորան այդ բաների վերայ։ Բայց այս բոլոր երկրորդական մտածողութիւնքը, որոնք բազմութենով կերպարանագործվումէին Պ. Բօդէնի գլխումը, խաւարումէին գլխաւոր իրողութեան առաջևը։ Գեներալ Սիմոնի դստերքը ֆրանսիայումն են են! բոլոր նորա հնարագործութիւնքը, որ այնքան շատ աշխատութիւն և հոգաբարձութիւն արժէին, արդէն ոչինչ բանի պէտք չէին։

Կառավարիչը, չ՛նկատելով Պ. Բօդէնի մտածմունքի մէջ ընկնելը, ասաց իւր կնոջը,

«Լսելով իմ պատմութիւնը դու երևի թէ այդ երկու օրիորդների ազատող մարդուն երևակայումես քեզ մի որպիսի և իցէ հերքուլէս. ամենևին ո՛չ. համարեա թէ մանուկ է. . . . պատանի, գեղեցիկ, խարտեաշ. . . ։ Ես տուեցի նորան իմ վերարկուս, որովհետև նորա վերայ կար միայն շապիկ, կարճ սև վարտիկ և նոյնպէս սև մաղեղէն գուլբայ. . . ։ Այդ ինձ շատ օտարոտի երևեցաւ»։

— Ճ՛շմարիտ որ այդ օտարոտի է, — ասաց Կատարինէն, — նաւաստիքը այդպէս չէն հագնվում։

«Թէ և նաւը, որով նաւումէր նա, անգլիական էր, իսկ նա երևումէ, որ Ֆրանսիացի է, որովհետև ֆրանսիարէն խօսումէ այնպէս ինչպէս մեք քո հետ. . . ։ Օրիորդքը մինչև արտասուիլ շարժեցին իմ սիրտը, երբ ուշերը վերայ եկան։ Նոքա տեսանելով իւր-

եանց ազատարարը, ծունկի վերայ ընկան նորա առաջև, նայումէին նորա վերայ երկիւղածութենով և առանց մի խօսք ևս արտաբերելու, որպէս թէ շնորհակալ էին լինում Աստուծուց...: Յետոյ սկսեցին նայել իւրեանց չորս կողմը, մի խօսքով մի մարդ էին որոնում. խօսեցան միմեանց յետ, լացին և ընկան միմեանց գիրկ»:

— Ի՞նչ անբաղդութիւն է, Աստուած իմ, ես կարծումեմ որքան մարդ կորաւ:

«Երբ հեռացանք մեք ծովեզրից, ծովը դուրս էր ձգել արդէն եօթը մեռած մարմին.... մի քանի արկղ... ջարդված բեկորներ...: Ես այդ մասին ծանօթութիւն տուեցի մաքսատան վերակացուներին...: Նոքա ամբողջ օր կը մնան ծովի ափում և եթէ մի այլ ոք դուրս ըղայ ծովից, կը բերեն այս տեղ...: Բայց լսումե՞ս.... աղաղակ.... խառնված ձայներ...: Երևի թէ բերումեն այն անբաղդները»:

Կառավարիչը և նորա կինը վազեցին դէպ ի երկայն պատշգամբի դուռը, իսկ Պ. Րօդէնը ցնցողական կերպով կրծումէր իւր տափակ եղունգները և բարկացոտ անհամբերութեամբ սպասումէր ազատված նաւորդների գալուն: Սրտաշարժ պատկերը շուտով յայտնվեցաւ նորա աչքի առաջևը:

Երկայն պատշգամբի ծայրումը, որ բաւական մութն էր, որովհետև միայն նորա մի կողմից կային, բաւական ցանցառ սլաքաւոր պատուհաններ, մի շինական բերումէր երեք մարդ: Նոքա շատ կամաց էին գալիս: Դոքա էին երկու օրիորդքը և երիտասարդ մարդը, որ այնպիսի աներկիւղութեամբ մահից էր ազատել նորանց.... Րօզը և Բլանշը քայլումէին իւրեանց ազատարարի երկու կողմից: Սա, դըժուարութեամբ յառաջ շարժելով իւր ոտքերը, մի փոքր ընկնումէր նոցա ձեռքերի վերայ, թէ և արդէն քսան տարեկան էր նա, բայց իւր քնքուշ երեսի պատճառով երևումէր աւելի մատաղահաս: Նորա բաց-խարտեաշ թաց մազերը, հարթ գէսերով ընկած էին մուգ-մեխակագոյն վերարկուի լայն օձիքի վերայ: Չէ կարելի նկարագրել զմայլեցուցիչ բարութիւնը այս գունաթափ և հեզ երեսի, որ գեղեցիկ էր, ինչպէս Ռաֆայէլի գաղափարական ստեղծուածը: Մի միայն այդ մեծ ճարտարագէտը կարող էր իւր գրիչով հասկացնել այդ կախարդիչ երեսի մելամաղձական գեղեցկութիւնը, այդ երկնային հայեացքի պայծառութիւնը, մաքուր և կապոյտ, որպէս հրեշտակի.... կամ մարտիրոսի հայեացք, որովհետև այդ գեղեցիկ գլխի չորս կողմը կար արիւնոտ սպի...: Տխրալի էր նայել, նորա խարտեաշ յօնքերի վերայ ընկած էր վէրքի սպին, որ, ինչպէս երևումէ, մի քանի ամիս յառաջ էր ստացված. ցրտից այդ սպիի գոյնը առաւել պայծառացել էր այնպէս որ շրջապատումէր նորա գեղեցիկ ճա-

կատը որպէս կարմիր ժապաւէնով։ Նորա ձեռքերը և ոտքերը ծակած էին...։ Դժուար էր նորան քայլել, որովհետև նորա վէրքերը բացվել էին, երբ նա ազատելով խեղդվողները վեր էր ելել սուր ապառաժների վերայ։

Այդ երիտասարդ մարդը օտար աշխարհների քարոզիչ էր, Դագոբեռի կնոջ որդեգիրը։ Գաբրիէլը և քահանայ էր և մարտիրոս. պատճառ և մեր օրերումը կան մարտիրոսք, ինչպէս և այն ժամանակները, երբ առաջին քրիստոնեաներին ձգումէին կրկէսի մէջ առիւծների և վագրների կերակուր դառնալու համար։ Եւ մեր ժամանակներումը կան մարդիկ, որոնք, հնազանդվելով իւրեանց մեծահոգի սրտի ձգտողութեանը, գնումեն աշխարհի ամենայն մասները Աստուծոյ բանը քարոզելու և, պարզահոգի աներկիւղութեամբ ենթարկվումեն մահի չարչարանքների։ Դոցանից ո՛րքանը կորել են, երկու աշխարհների անապատներումը զոհ եղած, որ այժմ անյայտ են և մոռացված...։ Բայց երբ Խաչի այս անզէն զինուորքը վերադառնումեն, (թէ և շատ սակաւ է պատահում այդ) այդպիսի մարդերի համար լուսաւոր աշխարհներում չեն պատրաստված պատուաւոր և արդիւնաբեր տեղեր։ Երբէք ծիրանին կամ սաղաւարտը չեն զարդարում դոցա վիրաւոր ճակատը, նոցա խեղացուցած անդամքը, և մինչև անգամ հայրենիքում ևս մեռանումեն նոքա անյայտութեան մէջ։ 1)

Գեներալ Սիմոնի դստերքը, դարձեալ զգայութիւն ստանալով, ոչ ոքի չկամեցան տալ աշխատութիւնը, պահպանելու անհաստատ քայլերը նորա, որ խլել էր նորանց անտարակոյս մահի բերանից։ Բօզի և Բլանշի սև զգեստներից թափվումէր ջուրը. Նոցա գունաթափ երեսը ցոյց էին տալիս խորին տխրութիւն. Թշերի վերայ մնումէին դեռ ևս մի փոքր յառաջ թափված արտասուքի հետքերը։ Աչքերը

1) Մեք սրտերս շարժվելով մտաբերումենք միշտ այն նամակի վերջը, որ երկու կամ երեք տարի յառաջ, մինը այս պատանի և քաջ առաքեալներից, որ էր Լաբէոս գաւառի անբաղդ շինականներից, գրումէր իւր մօրը Խափնիայի խորքից. նա այսպէս էր վերջացնում իւր նամակը.

«Բարեաւ մնաս իմ քաղցր մայր».

«Ասումեն թէ շատ վտանգ կայ այն տեղ, ուր ինձ ուղարկումեն. խնդրիր «Աստուծուց իմ համար, և ասա իմ բոլոր բարեկամ դրացիներին, թէ ես սիրու«մեմ նորանց և շատ յաճախ մտածումեմ նոցա վերայ»։

Այս տղայական անկեղծութեամբ լցուած յանձնարարութիւնը ուղարկվելով Ասիայի միջից դէպ ի աղքատ շինականներ մի Ֆրանսիական գեղի, միթէ շատ սիրտ շարժող չէր իւր պարզութեամբ։

կորացուցած վհատութեամբ, դողալով ցրտից և ներքին ամբոխմունքներից, օրիորդքը յուսահատութեամբ մտածումէին, որ այնուհետև այլ ևս տեսանելու չէին բարի Դագոբերին, իւրեանց ճանապարհորդակցին և բարեկամին.... Նորան էր, որ Գաբրիէլը զուր տեղը պարզումէր իւր ձեռքը, որ օգնէ նորան ապառաժի վերայ ելանելու. մի չար բաղդով երկուքի զօրութիւնքը ևս քաղված էին և յետ վազող ալիքը տարաւ իւր հետ խեղճ Դագոբերին:

Պ. Ռօդէնը մի փոքր կողքի գնաց, որ աւելի յարմարութեամբ նայի բոլորի վերայ: Տեսանելով Գաբրիէլին, բայց այս մի ախորժ զարմացք էր.... Պ. Ռօդէնը շատ ուրախացաւ, որ քարոզիչը ազատվել էր համարեա թէ անփախչելի մահից և այս ուրախութիւնը մի փոքր ամոքեց այն անախորժ տպաւորութիւնը, որ գործվել էր նորա վերայ գեներալ Սիմոնի աղջկերքի այդ տեղ երևելովը: (ընթերցողքը երևի թէ յիշումեն, որ Պ. Ռօդէնի մտադրութենների կատարվելուն համար Գաբրիէլը պիտոյ է անպատճառ փարիզ գտանվէր 1832ի փետրուարի 13 թուականին):

Կառավարիչը և նորա կինը, սրտերը շարժված, որբերին տեսանելուց, մօտեցան նոցա կարեկցութենով:

«Պարո՛ն.... պարո՛ն.... բարի համբաւ», գանչեց մի մշակ, ներս վազելով սենեակը, «երկու այլ մարդ ևս յաջողեցաւ ազատել»:

— Փառք աստուծոյ, փառք Աստուծոյ, — արտաբերեց քարոզիչը:

«Ապա ո՞ւր են նոքա», հարց արեց կառավարիչը, գնալով դէպ ի դուռը:

— Նոցանից մինը կարող է դեռ ևս քայլել.... Նա գալիս է իմ քամակից, Յուստինոսը առաջնորդումէ նորան. իսկ միւսը շատ ջարդվել է ապառաժներին զարկվելով, նորան բերումեն պատգարակով...:

«Ես կ'երթամ հանգստացնել նորան, ներքին դահլիճում, իսկ դու Կատարինէ հոգա այս օրիորդ տիկինները», ասաց կառավարիչը գնալով:

— Ապա ո՞ւր է նա, որ կարող է քայլել, — հարց արեց Կատարինէն:

«Ահա՛ նա», պատասխանեց ռամիկը, ցոյց տալով մի մարդու վերայ, որ արագ քայլերով գալիս էր ճեմելիքի ծայրից: Երբ ասացինք նորան, թէ օրիորդ տիկինները, որոնց հանել էին ջրից, այս տեղ են, թէպէտ և ծեր է և վիրաւորված գլխով, այնպէս քայլեց, որ ես հազիւ հասայ նորա քամակից»․

Ռամիկը դեռ ևս չ'աւարտած իւր խօսքը, Ռօզը և Բլանշը հնա-

զանգվելով մի և նոյն ձգտողութեան, երկուքը միասին վեր թռան և վազեցին դէպ ի դուռը։ Նոքա հասան դուռի մօտ մի և նոյն ժամանակ Դագոբեռի հետ...։ Ծերունի զինուորը մի խօսք ևս չկարողացաւ արտաբերել.... ընկաւ դուռի մէջ ծունկի վերայ և պարզեց ձեռքերը դէպ ի գեներալ Սիմոնի դստերքը, իսկ Ցխուրը վազելով նոցա մօտ լիզումէր նոցա ձեռքերը...։ Բայց ուրախութիւնը անչափ սաստիկ էր Դագոբեռի համար։ Փակելով որբերը իւր գրկի մէջ, Դագոբեռը շարժվեցաւ, նորա գլուխը քամակ ընկաւ և նա կ՚ընկնէր գետնի վերայ եթէ ռամիկները չպահէին։ Նորան տարեցին միւս սենեակը և օրիորդքը գնացին նորա քամակից, չնայելով, որ Դիւպոնի կինը կամէր չթողուլ նորանց, ասելով թէ նոցա ևս հարկաւոր էր հանգչել։

Զինուորի երևելովը, Պ. Րոդէնի երեսը ցնցողական կերպով կարկամեցաւ, նա մտածումէր թէ գեներալ Սիմոնի աղջկերքի ճանապարհորդակիցը կենդանի չէ արդէն։ Քարոզիչը չարչարված վաստակելուց թիկնը տուած էր աթոռին և դեռ չէր նկատել, որ Պ. Րոդէնը այն տեղ է։ Սենեակը ներս մտաւ այլ ևս մի մարդ, անհարթ դեղնագոյն երեսով, և մշակը որ ուղեկից էր նորան, ցոյց տուեց նորան Գաբրիէլի վերայ։ Այս մարդը, որին հագուցել էին ռամիկները շինականի հանդերձ, մօտեցաւ Գաբրիէլին և ասաց նորան ֆրանսիարէն բայց օտար ազգի արտաբերութեամբ, «Ջալմա իշխանը բերված է այս տեղ.... Նա հարց արեց ձեր մասին, իսկոյն երբ աչքը բացել էր»։

— Նա՛ ինչ է ասում, — գանչեց Պ. Րոդէնը սարսափելի ձայնով.... Ջալմայի անունը լսածի պէս նա չհամբերեց և յարձակվեցաւ դէպ ի Գաբրիէլը։

«Պարոն Րոդէն!» ասաց Գաբրիէլը, յետ յետ գնալով զարմացքից։

— Պարոն Րոդէն? — կրկնեց նոր եկած մարդը, և, այս րոպէից բռնած, նա աչքը չհեռացուց այն մարդից, որին նամակ էր գրել Պ. Ժօսիւս Վան-Դաեօլը։

«Դուք.... այս տեղ էք....» ասաց Գաբրիէլը, պատուաւոր կերպով և մի տեսակ երկիւղով մօտենալով Պ. Րոդէնին։

«Ի՞նչ ասաց ձեզ այդ մարդը, — ասաց Պ. Րոդէնը փոխված ձայնով, — ինձ լսվեցաւ Ջալմա իշխանի անունը։

«Ջ՚ալմա իշխանը մեր հետ միասին գտանվումէր անգլիական նաւի վերայ, որ գալիս էր Ալեքսանդրիայից և հանդիպեցաւ այս տեղ աղեկոծութեան.... այս նաւը կանգնեցաւ Ազօրեան կղզիներում, ուր այն միջոցին գտանվումէի ես։ Նաւը, որով եկած էի ես այն

տեղ Զարլզտոունից հարկադրված էր կանգնիլ այդ կղզումը, որով-հետև վնասված էր, և ես դուրս եկայ նորանից և մտայ Բլակ-Իգլի մէջ, ուր իշխան Ճայլմա՛ն էր։ Մէք նաւեցինք Պօրտսմուտ. իսկ այն տեղից մտադրութիւն ունէի վերադառնալ Ֆրանսիա»։

Պ. Րօդէնը արգելք չեղաւ Գաբրիէլի խօսելուն. նորա բանա-կանութիւնը որպէս թէ համրացել էր այս նոր ցնցողութենից. վեր-ջապէս մարդ, որ գործ է դնում վերջին նկրտողութիւնը, թէ և գիտէր արդէն, որ այդ ոչինչ օգուտ բերելու չէր, նա հարց արեց Գաբրիէլից.

— Իսկ դուք գիտէք, ո՞վ է այդ իշխան Ճայլմա՛ն։

«Նա շատ բարի և քաջ երիտասարդ տղայ է, որդի հնդկա-կան իշխանի, որից խլեցին Անգլիացիք նորա տէրութիւնը», յետոյ դառնալով դէպ ի դեղնագոյն երեսով մարդը, քարոզիչը հարց արեց շատ կարեկցութեամբ, «ինչպէս է իշխանի առողջութիւնը, նորա վէրքերը վտանգաւոր չե՞ն»։

— Նա սաստիկ ջարդոտված է, բայց նորա կեանքը ոչինչ վտանգի չէ ենթարկվում, — պատասխանեց սա։

«Փառք Աստուծոյ, ասաց քարոզիչը դառնալով դէպ ի Պ. Րօ-դէնը, «ահա մի այլ ևս անբաղդ, մահից ազատված»։

— Շատ ուրախ եմ, — ընդհատված կերպով պատասխանեց Պ. Րօդէնը։

«Ես կամէի տեսանել նորան», ասաց Գաբրիէլը խոնարհաբար, «դուք ոչինչ բան չունէի՞ք ինձ հրամայելու»։

— Կարող կը լինէ՞ք արդեօք ճանապարհորդել.... երկու կամ երեք ժամից, չնայելով, որ վաստակած էիք։

«Եթէ այդ անպատճառ հարկաւոր է.... կ՚երթամ»։

— Անպատճառ...։ Դուք ինձ հետ միասին կ՚երթաք։

Գաբրիէլը գլուխ տուեց և դուրս գնաց շինականի հետ։ Պ. Րօ-դէնը ուժաթափ ընկաւ աթոռի վերայ, Դեղնագոյն երեսով մարդը այնպէս սեղմվեցաւ անկիւնում, որ Պ. Րօդէնը չէր տեսանում նո-րան։ Այս մարդը էր Մէտիս-Ֆարինգէա՛ն, խեղդողների գլխաւոր-ներից մինը, որ անյայտացաւ, մինչ զինուորքը որոնումէին նորան Զանդի աւերակներում։ Նա սպանեց մաքսանենգ Մահալին, վեր առեց նորա մօտից Պ. Վան-Դաեօլի նամակը, գրված Պ. Րօդէնի անունով, և միւս գիրը, որով մաքսանենգը տեղ էր ստացել Րիւտերի վերայ։ Ճայլմա իշխանը բանդից ազատվելով (այդ յետոյ կը պատմվի) տե-սաւ Ֆարինգէային Նաւի մէջ և չ՚իմացաւ որ նա խեղդողների գլխա-ւոր էր, որովհետև Զանդի աւերակներումը չէր տեսած նորան. Նա

վարվումէր նորա հետ բոլոր նաւագնացութեան միջոցին, որպէս հայրենակցի հետ:

Պ. Ռօդէնը գունաթափ, անշարժ աչքերով, կատաղութեամբ կրծումէր եղունգները մինչև մարմինը, չ՚նկատելով Մետիսին:

Ֆարինգէա՛ն կամաց մօտեցաւ նորան, բարեկամաբար զարկեց նորա թիկունքին և ասաց,—ձեր անունը Պ. Ռօդէն է?

«Ինչ?» հարց արեց սա ցնցվելով և գլուխը բարձրացնելով խկոյն:

—Ձեր անունը Պ. Ռօդէնը է?—կրկնեց Ֆարինգէա՛ն:

«Այո՛.... ինչ պէտք է ձեզ»:

—Դուք բնակվումէք Միջ-Ուրզէնեան փողոցում Փարիզի մէջ?

«Այո՛.... բայց ինչ հարկաւոր է ձեզ?»

—Այժմ դեռ ես ոչինչ.... եղբայր.... բայց, ժամանակով—շատ բան!»

Եւ Ֆարինգէա՛ն դանդաղ քայլերով հեռացաւ:

Պ. Ռօդէնը զարհուրեցաւ. այս մարդը, որ ոչինչ բանից չէր զարհուրում, սարսափեցաւ, Ֆանզիկարի կատաղի հայեացքից և մռայլոտ կերպարանքից:

IV.

ՉՈՒ ԴԷՊ Ի ՓԱՐԻԶ:

Խոր խաղաղութիւն թագաւորումէր Կարդովիլեան ամրոցում. մրրիկը փոքր առ փոքր նստումէր. մի միայն հեռի տեղերում լսվումէր խուլ հարուածը ալիքների, որոնք ծանր ծանր լողումէին դէպ ի ափը:

Դագոբեւին և որբերին տեղաւորեցին ջերմ և հանդիստ սենեակների մէջ ամրոցի երկրորդ յարկումը: Ճայլմա՛ն այնպէս ծանր վիրաւորված էր, որ չէր կարելի վերև տանել նորան, այս պատճառով նա մնաց ցածի դահլիճում: Նաւաբեկութեան ժամանակ մի անբաղդ մայր յանձնել էր նորան իւր երեխայն: Նա ամենայն զօրութենով աշխատեցաւ ազատել մանուկը անփախչելի մահից. այդ բանը դժուարացնումէր նորա շարժողութիւնը. նա դուրս ձգվեցաւ ալիքների զարկուածքով և փոքր մնաց որ չ՚մեռաւ ապառաժների վերայ: Ֆարինգէա՛ն, որ դեռ ես լողալու ժամանակ կարողացել էր հաւատացնել նորան իւր դէպ ի իշխանը մտերմութեան մէջ, մնաց նորա մահճի մօտ, որ սպասաւորէ նորան: Գաբրիէլը Ճայլմայի հետ խօսելուց յետոյ, վեր գնաց սենեակը, որ նշանակել էին նորա համար. հաւատարիմ մնալով իւր խոստմունքին, երկու ժամից յետոյ

գնալ Պ. Բօղէնի հետ, նա չկամեցաւ մահճում հանգստանալ. չորացնելով իւր հանդերձը, քնեց նա, բարձր քամակով աթոռի վերայ, վառվող հնոցի առաջև։ Նորա սենեակը կից էր այն սենեակին, ուր իջևանել էին Դագոբեռը և որբերը։ Տխուրը, երևի թէ մտածելով, որ այսպիսի օրինաւոր ամրոցում պատճառ չկար երկիւղ կրել, հեռացաւ Բօղի և Բլանշի դուռից և, որպէս զի տաքանայ, պառկեցաւ հնոցի մօտ, որի առաջևը նստած էր Քարողիչը։ Գլուխը դնելով առաջևի երկարացուցած թաթերի վերայ, Տխուրը մեծ ախորժանքով զուարճանումէր հանգստութեամբ այնքան ծովի և ցամաքի վերայ ճանապարհորդութեննից յետոյ։ Չ'կամինք պնդել, որ նա մտածումէր միշտ իւր առաջվայ ընկերի վերայ, ծերունի Ուրախի վերայ, բայց պիտոյ է ասել, որ յառաջ նա ամենևին չէր դիպչում ինչ գոյն և իցէ ձիերի, իսկ այժմ, երևի թէ իւր առաջվայ ընկերի յիշատակի համար, անողորմաբար յարձակվումէր ամենայն սպիտակ ձիու վերայ։

Մի քանի րոպէից յետոյ այս սենեակի դռներից մինը բացվեցաւ և երկու քուրերը կամաց ներս մտան։ Նոքա հանգստացել էին արդէն, հագնվել էին և անհանգստութեամբ մտածումէին Դագոբեռի մասին։ Կառավարչի կինը, տանելով օրիորդքը դէպ ի իւրեանց սենեակը, գնացել էր յատկապէս Դագոբեռի մօտ, որ իմանայ նորա առողջութիւնը և, վերադառնալով այն տեղից, ասել էր նոցա, որ գիւղական բժշկի ասելով, նորա վէրքը վտանգաւոր չէ և առ հասարակ նորա առողջութեան վիճակը ոչինչ վատ բան չէ գուշակում. բայց այսու ամենայնիւ չնայելով այս կնոջ հաւատացնելու վերայ, նոքա դուրս եկան իւրեանց սենեակից, որ ամրոցի բնակիչներից մինին հարցանեն իւրեանց բարի ճանապարհորդակցի մասին։ Հին ձևով շինած աթոռի քամակը, որի վերայ քնած էր Գաբրիէլը, բոլորովին ծածկումէր նորան. բայց որբերը տեսանելով, որ Տխուրը պառկած է այս աթոռի մօտ, մտածեցին, թէ այնտեղ երևի քնած էր Դագոբեռը։ Նոքա մատների ծայրերի վերայ քայլելով մօտեցան նորան և սաստիկ զարմացան տեսանելով, որ այս, Գաբրիէլն էր և որ նա քնած էր։ Երկիւղ կրելով, մի գուցէ զարթեցնեն նորան, նոքա չէին համարձակվում շարժվիլ և կանգնել էին անշարժ մի տեղում։

Քարողչի երկայն, բաց-խարտեաշ մազերը, չորանալով, թափվումէին գանգուրներով նորա վզի և ուսերի չորս կողմումը. Նորա երեսը թըվումէր առաւել գունաթափ, հանդչելով մուգ-մօրագոյն թաւիշի վերայ, որով զարկած էր այդ աթոռը։

Գաբրիէլի գեղեցիկ երեսը, նկարագրումէր այս րոպէին մի դառն

մելամաղձութիւն, այն պատճառով, որ նա տեսանումէր ծանր երազ, թէ այն պատճառով, որ վշտացուցիչ զգացմունքները, որ առ հասարակ ծածկում էր նա, հրապարակվումէին նորա կամքի հակառակ նորա քնած ժամանակը։ Չնայելով այս խորին տխրութեան վերայ, նորա երեսի գեղեցիկ գծագրութիւնքը, պահումէին իւրեանց սովորական, հրեշտակային հեզութեան կերպարանքը, որ անասելի կերպով մօտ քարշող էին.... պատճառ, ոչինչ առաւել սրտաշարժ չ'կայ քան թէ չարչարված բարութիւնը։

Օրիորդքը կորացուցին իւրեանց աչքերը, երկուքը միասին կարմրեցան, յետոյ նայեցան միմեանց երես, ցոյց տալով միմեանց, քնած քարոզչի վերայ։

«Քուրիկ, նա քնումէ», ասաց Ռօզը շշնջելով։

— Առաւել լաւ է, — պատասխանեց Բլանշը նոյնպէս, նշանացի առնելով Ռօզին, — մեք առաւել լաւ կը նայենք նորա վերայ։

«Մենք չ'համարձակվեցանք նայել նորա վերայ, երբ նորա հետ միասին ծովից գալիս էինք այս տեղ...»։

— Նայի՛ր ինչ բարի դէմք ունի...։

«Ինձ թըվումէ, որ մեք զորան իսկապէս տեսած էինք երազում»։

— Նա խոստացաւ մեզ իւր պաշտպանութիւնը...։

«Արդէն այս անգամ կատարեց նա իւր խոստմունքը»։

— Այժմ գո՛նէ մեք տեսանումենք նորան։

«Ոչ այնպէս, ինչպէս Լէյպցիգեան բանդի մէջ.... այն սարսափելի մութն գիշերով...»։

— Նա դարձեալ փրկեց մեզ։

«Առանց նորան, այսօր առաւօտ, մեք անտարակոյս կը կորչէինք»։

— Միայն ինձ թըվումէ, քուրիկ, որ երբ տեսանումէինք նորան երազում, նորա երեսը փայլումէր մի հրաշալի լուսով։

«Այո՛, այդպէս է, որ այդ լոյսը համարեա թէ կուրացնումէր մեր աչքերը»։

— Բաց ի սորանից նա այդպէս տխուր չէր։

«Այն պատճառով, որ այն ժամանակ նա երկնքից էր գալիս, իսկ այժմ երկրի վերայ է նա»։

— Քուրիկ իմ միտքս չէ, որ այն ժամանակ նորա ճակատի վերայ լինէր այդ վարդագոյն սպին։

«Ի հարկէ չ'կար.... ապա թէ լինէր, մեք տեսած կը լինէիք»։

— Ապա նորա ձեռքերի վերայ, նայի՛ր, ինչ վէրքեր են....։

«Ուրեմն եթէ նա վիրաւորված է.... ապա չէ պիտոյ, որ հրեշտակ լինի!»

— Ի՞նչ պատճառով. գուցէ նա ստացել է այդ վէրքերը, մինչ կամէր արգելք լինել չարին, կամ օգնումէր մարդերի, որ կորչումէին ինչպէս մեք քո հետ։

«Ճշմարիտ է քո ասածը.... եթէ նա, օգնելով ուրիշներին, ինքը չենթարկվէր ոչինչ վտանգի, այդ այնքան գեղեցիկ չէր լինելու նորա կողմից...»։

— Ինչպէս ցաւալի է, որ նա աչքերը չէ բացում։

«Նորա հայեացքը այնպէս բարի է, քնքուշ է...»։

— Ի՞նչ պատճառով ոչինչ չասաց մեզ մեր մօր մասին, երբ գալիս էինք նորա հետ։

«Երևի չկամեցաւ. մեք միայն չէինք նորա հետ»։

— Իսկ այժմ միայն ենք...։

«Եկ խնդրենք նորանից, որ մի բան պատմէ մեզ նորա մասին»։

Եւ որբերը զմայլեցուցիչ պարզահոգութեամբ նայեցան միմեանց երես, որպէս թէ խորհուրդ կատարելով. նոցա գեղեցիկ երեսները ծածկվեցան թեթև կարմրութեամբ և կուսական կուրծքերը խաղաղ դողդողումէին սև հանդերձի տակին։

— Եկ խնդրենք։

«Աստուած իմ. քուրիկ, ինչպէս ձեր սիրտը զարկումէ և ինչպէս ախորժ է այս. իսկապէս այնպէս է, որպէս թէ մի մեծ բաղդաւորութիւն պատահելու էր մեր հետ», ասաց Բլանշը, կարծելով, և ոչ առանց հիմքի, որ Րօզը մասնակից էր նոյնպէս այս բոլոր զգացմունքին»։

Երկու քուրերը մահճերի ծայրերի վերայ մօտեցան աթոռին և կցելով ձեռքերը, ծունկ չոքեցին, երիտասարդ քարոզչի մինը աջ կողմից, իսկ միւսը ձախ կողմից։ Հիանալի տեսարան էր։

Բարձրացնելով իւրեանց գլուխները Գաբրիէլի վերայ, նոքա ասացին, շատ խաղաղ, քնքուշ և ինչպէս իւրեանց տասն և հինգտարեկան երեսները, թարմ ձայնով,—Գաբրիէլ, խօսի՛ր մեզ, մեր մօր մասին։

Այս խօսքերը ասվելու ժամանակ քարոզիչը կատարեց մի թեթև շարժողութիւն, մի փոքր բացեց աչքերը և քունը գլխին, որ միշտ նախընթաց է լինում կատարելապէս զարթելուն, չկարողացաւ հասկանալ, թէ ինչ է անցանում իւր աչքերի առաջևը. նա զմայլեցաւ մի րոպէ այս դէպ ի ինքը դարձած երեսներից, որ անունով գանչումէին նորան։ «Ով է գանչում ինձ?» ասաց նա բոլորովին զարթելով և գլուխը բարձրացնելով։

— Մե՛նք։

«Մե՛նք, Րօզը և Բլանշը»։

Այս տեղ Գաբրիէլը կարմրեցաւ. պատճառ, ճանաչեց օրիորդքը, որոնց ազատել էր մահից։

— Վե՛ր կացէք, սիրական քուրիկներ, — ասաց նա, — մի միայն Աստուծոյ առաջև ծունկ կը չոքեն։

Որբերը հնազանդվեցան և կանգնեցան նորա մօտ բռնելով միմեանց ձեռքից։

«Դուք գիտէք իմ անունը?» հարց արեց քարոզիչը ժպտելով։

— Այո՛, մեք երբէք չենք մոռանալու նորան։

«Ով ասաց ձեզ իմ անունը?»։

— Դուք ինքներդ։

«Ես?»։

— Երբ դուք գալիս էիք մեր մօտ մեր մօր կողմից։

«Եւ ասումէիք, որ նա է ուղարկել ձեզ և թէ դուք պիտոյ է միշտ պաշտպան լինէիք մեզ»։

— Ես?—ասաց քարոզիչը ոչինչ չ՚հասկանալով այս խօսքերից.— դուք երևի սխալվել էք. ես ձեզ այսօր առաջին անգամ տեսայ։

«Ապա երազի մէջ?»

Միտքերդ բերէք, մեք ձեզ երազում տեսանք։

«Առաջին անգամ Գերմանիայում.... երեք ամիս յառաջ.... մի լաւ նայեցէք մեր վերայ»։

Ռօզի և Բլանշի պարզահոգութիւնը, որոնք անպատճառ ցանկանումէին, որ քարոզիչը միտքը բերէր, նոցա իւրեանց երազի մէջ տեսածը, ակամայ ժպիտ շարժեց Գաբրիէլի բերանի վերայ։

— Դուք տեսել էք ինձ երազում? — հարց արեց նա։

«Այո՛, դեռ ևս դուք տուեցիք մեզ այնպիսի գեղեցիկ խրատներ»։

— Եւ մինչ յետոյ մեզ վիշտ պատահեց.... բանդի մէջ.... մեք յիշումէինք ձեր խօսքերը և նոքա պահպանումէին, մխիթարումէին մեզ։

«Մի թէ դուք չէիք, որ հանեցիք մեզ Լեյպցիգեան բանդից.... այնպիսի մութն գիշերով, որ մեք չ՚կարողացանք մինչև անգամ ձեզ ևս տեսանել»։

— Ես?...։

«Ապա ով ձեզանից առաւել այնպէս յարմար ժամանակ օգնութիւն կը հասանէր մեզ և մեր ծերունի բարեկամին»։

— Մեք միշտ ասումէինք նորան, որ դուք կը սիրէք նորան ևս այն պատճառով, որ նա մեզ սիրումէ։

«Այդ էր պատճառը, որ այսօր առաւօտ, մրրկի ժամանակ, մեք համարեա թէ չէինք զգում ոչինչ երկիւղ»։

— Մեք սպասումէինք ձեզ։

«Այսօր առաւօտ, Աստուած իւր անպատմելի բարութեամբը, ուղարկեց ինձ ձեզ օգնելու։ Ես գալիս էի Ամերիկայից. բայց երբէք չեմ եղած Լեյպցիգում.... և չեմ հանել ձեզ բանդից...։ Ասա-

ցէք ինձ քուրիկներ», շարունակեց նա, բարեհոգութեամբ ժպտելով, «ո՞վլի տեղ ընդունումէք դուք ինձ»։

— Մի բարերար հրեշտակի տեղ, որ տեսած էինք երազում և որ մեր մայրը ուղարկել էր մեզ պաշտպանելու համար։

«Սիրական քուրիկներ, ես մի խեղճ քարոզիչ եմ և առաւել ոչինչ.... գուցէ իմ մէջ կայ պատահական նմանութիւն հրեշտակի, որ տեսել էիք դուք երազում, այլապէս և չէիք կարող դուք հրեշտակ տեսանել ևթէ ոչ երազում, պատճառ արթնութեան մէջ մեզ տեսանելի հրեշտակներ չ՛կան»։

— Մի՞թէ չէ կարելի հրեշտակներ տեսանել արթնութեան մէջ, ասացին քուրերը, տխրութեամբ նայելով միմեանց վերայ։

«Մի տխրէք, իմ սիրականք», ասաց Գաբրիէլը, փաղաքշելով բռնելով նոցա ձեռքից։» Երազները.... որպէս և ամենայն ինչ աշխարհի երեսին.... տրվումեն Աստուծուց...։ Որովհետև այդ երազի հետ միաւորված է ձեր մօր յիշատակը, այս պատճառով պիտոյ է մանաւանդ թանգ լինի այն ձեր համար»։

Այս միջոցին դուռը բացվեցաւ և ներս մտաւ Դագոբերը։

Որբերը, հպարտանալով նորանով, որ հրեշտակ պաշտպան ունէին, բոլորովին մոռացել էին, որ Դագոբերի կինը ունէր որդեգիր, որ անուանվումէր Գաբրիէլ և քարոզիչ քահանայ էր։

Զինուորը թէ և կամակորութեամբ պնդումէր, որ իւր վէրքը հասարակ սպիտակ վէրք է (ինչպէս ասումէր գեներալ Սիմոնը), այսու ամենայնիւ շինական բժիշկը պատեց նորա վէրքը. սևագոյն կապը կիսով չափ ծածկումէր նորա երեսը, որով տալիս էր նորան առաւել անհամբոյր կերպարանք։ Նա դահլիճը ներս մտանելով սաստիկ զարմացաւ, որ մի օտար մարդ բռնումէ Ռօզի և Բլանշի ձեռքերից։ Նորա այսպիսի զարմանքը շատ հասկանալի է, Դագոբերը ամենևին չ՛գիտէր, որ քարոզիչը փրկել էր որբերին և աշխատել էր փրկել և իւրեան։ Առաւօտը, մրրկի ժամանակ, մինչ ալիքները այս և այն կողմը ձգումէին Դագոբերին և սա զուր տեղը աշխատումէր բռնել ապառաժից, այն միջոցին հարևանցի միայն տեսել էր գաբրիէլին, որ, դուրս հանելով ծովից որբերին, պարզումէր դէպ ի նա օգնականութիւն, թէ և առանց յառաջադիմութեան։

Նւաղբեկութենից յետոյ, Դագոբերը, գտանելով իւր որբերը ամրոցի ներքին յարկի դահլճում, ընկաւ, ինչպէս արդէն ասվեցաւ, ուշաթափ վաստակած լինելուց և ամբոխմունքից, որ մասնաւորապէս պատճառվումէր և վէրքից, և այս պատճառով չէր կարողացել նկատել Գաբրիէլի ներկայութիւնը։ Ծերունի զինուորը արդէն հաւաքումէր իւր ալեխառն յօնքերը, տեսանելով, որ մի օտար մարդ այդ-

պէս բարեկամաբար խօսումէ իւր գեներալի աղջկերքի հետ, բայց որբերը վազեցին դէպ ի նա, գրկեցին նորան և լցին նորան իւրեանց անկեղծ երեխայական փաղաքշանքներով: Նորա տհաճութիւնը մի ակնթարթում ցրւեցաւ որբերի դէպ ի զինուորը այս քնքոյշ սիրու նշաններով. բայց այսու ամենայնիւ երբեմն երբեմն տհաճութենով նայումէր Գաբրիէլի վրայ: Քարոզիչը վեր էր կացել արդէն. բայց Դագոբեռը չէր կարողացել դեռ ևս մի լաւ զննել նորա դէմքի գծագրութիւնքը:

«Ինչպէս է քո վէրքը?» հարց արեց Րօզը կարեկցութեամբ, «մեզ ասացին որ անվտանգ է»:

— Բայց սաստիկ ցաւ չէ պատճառում՝ արդեօք քեզ այդ վէրքը?— հարց արեց Բլանշը:

«Ո՛չ, զաւակներս, այս տեղի բժիշկը այդպէս կամեցաւ կապել ինձ. . . : Եթէ մինչև անգամ իմ ամբողջ գլուխը կտրէին թուրերով և այն ժամանակ ես սորանից առաւել չէին փաթաթելու. կը մտածեն, որ ես ծերունի քնքշացող եմ. այս հասարակօրէն [illegible] վէրք է»: Եւ զինուորը բարձրացրեց ձեռքը դէպ ի վիրակապը:

— Հերիք է քեզ,— ասաց Րօզը, բռնելով Դագոբեռի ձեռքը.— դու ինչպէս թեթևահաւատ մարդ ես և դեռ այդպիսի հասակում:

«Լաւ է, լաւ է, զաւակներս, մի բարկանաք իմ վերայ, թող ձեր ասածի պէս լինի. ես թողումեմ, որ մնայ վիրակապը»:

Յետոյ տանելով որբերը դէպ ի անկիւնը ասաց նոցա շշնջելով, աչքերով ցոյց տալով քարոզչի վերայ.— Այդ ի՞նչ մարդ է, նա բռնել էր ձեր ձեռքից, երբ ես ներս մտայ. . . . Նա պիտոյ է կրօնաւոր լինի, զգուշացիք զաւակներս. . . . որովհետև, կարելի է, որ նա. . . :

«Նա!!» բացագանչեցին Րօզը և Բլանշը, դառնալով դէպ ի Գաբրիէլը, «բայց գիտե՞ս արդեօք դու, եթէ նա չ՚լինէր մեք այժմ գրկելու չէինք քեզ»:

— Ինչպէս?— գանչեց զինուորը, ուղղւելով բոլոր իրանով և նայելով քարոզչի վերայ:

«Դա մեր պահապան հրեշտակն է», ասաց Բլանշը:

— Առանց նորան, մեք կը խեղդւէինք այսօր առաւօտ,— յաւելացրեց Րօզը:

«Նա. . . ինչպէս նա!. . .»:

Դագոբեռը, առաւել ոչինչ չ՚կարողացաւ խօսել. աչքերը արտասուքով, իսկ, սիրտը երախտագիտական զգացմունքով լցւած վազեց քարոզչի մօտ և պարզելով դէպ ի նա իւր ձեռքերը գանչեց այնպիսի շնորհակալ կերպով, որ չէ կարելի խօսքերով նկարագրել:

— Օրհնած պարոն, դուք ազատեցիք այս երեխայքը մահից. . . .

ես զգումեմ թէ որչափ երախտապարտ եմ ձեզ.... ես առաւել ոչինչ չեմ ասում.... պատճառ, այս խօսքերով արդէն բոլորը ասվեցան։

Յետոյ միտքը բերած անցեալը, յաւելացրեց զինուորը, — բայց ասացէք խնդրեմ.... դուք չէի՞ք, մինչ ես աշխատումէի բռնել ապառաժից, որ ալիքները չ՚տանէին ինձ.... միտքս է գալիս, դուք ձեռք պարզեցիք դէպ ի ինձ.... այո՛, այո՛.... ձեր խարտեաշ մազերը.... ձեր պատանի երեսը.... այո՛, այդպէս, այժմ ճանաչեցի ես ձեզ...։

«Դուք չէք սխալված, այդ ես էի», պատասխանեց քարոզիչը, «բայց դժբաղդաբար զօրութիւնքս քաղված էին և ես ցաւելով տեսայ թէ ինչպէս ծովը ընկաք դարձեալ»։

— Ես այլ բան չունիմ ձեզ ասելու, շնորհակալութիւնս յայտնելու համար.... բաց ի նորանից, որ արդէն ասել էի, — շարունակեց Դագոբեռը սրտաշարժ պարզահոգութեամբ, — այս զաւակների կեանքը փրկելով, դուք ինձ առաւել մեծ պարգև արեցիք, քան թէ կարող էիք անել իմ իսկ կեանքը փրկելով.... բայց ինչ քաջութիւն.... ինչ աներկիւղութիւն.... ասումէր զինուորը զարմացքով, — իսկ ինքը այդպէս պատանի և գեղեցիկ, ինչպէս օրիորդ...։

«Մի՞թէ», գանչեց Բլանշը ուրախութեամբ, «մեր Գաբրիէլը և քեզ փրկեց?»

— Գաբրիէլ! — կրկնեց Դագոբեռը ընդհատելով Բլանշի խօսքը. յետոյ, դառնալով դէպ ի քարոզիչը, ասաց, — Ձեր անունը Գաբրիէլ է։

«Այո՛, այդպէս է»։

— Գաբրիէլ! կրկնեց դարձեալ զինուորը սաստիկ զարմացքով, — դուք քահանա՞յ էք։

«Քահանայ օտար աշխարհների առաքելութեանց»։

— Ո՞վ ապա սնուցել է ձեզ?

«Մի բարի, գեղեցիկ կին, որ շատ խոր յարգումեմ, որպէս ամենալաւ ծնող մայր, որովհետև նա գթացաւ իմ վերայ, մինչ ես դուրս ընկած էի և խնամեց ինձ որպէս իւր որդուն..»։

— Ֆրանսիսկա Բօդուէն.... այնպէս չէ? — ասաց սաստիկ շարժված զինուորը։

«Այո՛, նա», պատասխանեց Գաբրիէլը սաստիկ զարմացած, բայց դուք ո՞ր տեղից գիտէք»։

— Զինուորի կինը? — շարունակեց Դագոբեռ։

«Այո՛, քաջ զինուորի, որ, իւր շնորհակալու, հազուագիւտ մտերմութեամբը դէպ ի իւր իշխանաւորը, անցուցանումէ այժմ իւր կեանքը օտար աշխարհում.... հեռի իւր կնոջից և որդուց.... այս ինքն իմ եղբօրից.... որովհետև ես պարծենումեմ այն իրաւունքով, որ ունիմ, նորան իմ եղբայր կոչելու...»։

— Իմ Ագրիկօլը՛... իմ կինը՛... երբ.... բաժանվեցաք դուք.... նոցանից...:

«Ինչպէս? դուք Ագրիկօլի հայրն էք.... մի՛, ես դեռ ես չեմ հասկացած կատարելապէս, թէ որքան ողորմած է իմ վերայ Տէր Աստուածը», արտաբերեց Գաբրիէլը. ձեռքերը կցելով:

— Կինս?... որդիս?... հարցանումէր Դագոբեռը դողդոջուն ձայնով, — առողջ են արդեօք նոքա, չէք ստացել արդեօք նոցա մասին մի որպիսի և իցէ ծանօթութիւն?

«Ես նամակ ստացայ նորանցից երեք ամիս սորանից յառաջ. նոքա առողջ էին այն ժամանակ և գործերը լաւ էին գնում...»:

— Ո՛հ, ո՛չ, այս արդէն չափազանց ուրախութիւն է մի անգամից, այո՛, չափազանց շատ:

Ներոնի զինուորը չկարողացաւ շարունակել իւր խօսքը, սաստիկ ամբոխմունքը կտրեց նորա ձայնը և նա ընկաւ աթոռի վերայ:

Այս տեղ միայն Ռօզը և Բլանշը յիշեցին, որ իւրեանց հայրը գրումէր մի դուրս ձգած երեխայի մասին, որ անուանվումէր Գաբրիէլ և որ Դագոբեռի կինը առել էր իւր մօտ սնունդ տալու համար: Նոքա չկարողացան ծածկել, իւրեանց պարզահոգի սրտի զեղմունքը....

«Ուրեմն մեր Գաբրիէլը և քոն է.... մի և նոյնը?... ինչ բաղդաւորութիւն է՛» գանչեց Ռօզը:

— Այո՛, սիրական զաւակներս, նա և ձերն է և իմը, մեզանից իւրաքանչիւրը իրաւունք ունի նորա վերայ...:

Յետոյ, դառնալով դէպ ի Գաբրիէլը, զինուորը յաւելացրեց սաստիկ զգացմունքով, «ուրեմն, բարեկամ, ձեռքդ տուր...: Առանց երկարաբանութեան՛ հասարակ կերպով ասումեմ քեզ, դու.... որպէս իմ Ագրիկօլի եղբօր»:

Ո՛հ, ինչպէս բարի էք դուք՛

«Ահա այդպէս է.... դու դեռ ես շնորհակալ կը լինիս ինձանից.... այն բանից յետոյ, որով մեք պարտական ենք քեզ»:

— Իսկ ձեր ամուսինը գիտէ, որ դուք գալիս էք? — ասաց Գաբրիէլը, որ ազատվի գովասանութիւններ լսելուց:

«Ես գրել էի նորան, հինգ ամիս սորանից յառաջ, թէ շուտով գալիս էի ահա, բայց թէ գալիս էի միայն.... իսկ թէ ինչ պատճառով այդպէս էի գրել յետոյ կասեմ քեզ: Նա դարձեալ բնակվումէ Բրիզ-Միշ փողոցում? Այն տեղ ծնած է իմ Ագրիկօլս»:

— Այո՛, դարձեալ այն տեղ:

«Ուրեմն նա պիտոյ է անտարակոյս ստացած լինի իմ նամակս: Ես կամէի գրել նորան և Լէյպցիգի բանդից, բայց ոչինչ կերպով չէր կարելի»:

— Բանդից? միթէ դուք բանդում էիք?

«Այո՛, մեք այժմ Գերմանիայից գալիս ենք, եկանք Էլբայով Համբուրգ. գուցէ և այժմեւս նստած կը լինէինք Լէյպցիգի բանդում, եթէ չպատահէր այն անցքը, այնպիսի անցք, որ ակամայ կը հարկադրվիս հաւատալ թէ աշխարհի երեսին կան գևեր, միայն բարի գևեր»:

— Դորանով ինչ կամիք ասել? մեկնեցէք խնդրեմ:

«Այնպէս շատ հեշտ չէ այդ գործը, ես և ինքս ոչինչ չեմ հասկանում այս տեղ.... նոքա ահա (և նա ժպտելով ցոյց տուեց Ռօզի և Բլանշի վերայ), նոքա ահա ասումեն թէ գիտէին, թէ մեր հրեշտակը մեզ օգնութիւն հասաւ. իսկ դու յառաջ միշտ ասումէիր, թէ ոչ ոք ձեզ չէ կարող այնպէս պաշտպանել, որպէս Տխուրը»:

— Գաբրիէլ, ես սպասումեմ! ասաց մի հրամայական ձայն, որից սարսափեցաւ խեղճ քարոզիչը:

Իսկ նա և Դագոբեռը և որբերը յանկարծ նայեցան...:

Տխուրը հաչեց:

Դրան մէջ, որ հանումէր դէպ ի մեծ պատշգամբը, կանգնած էր Պ. Ռօդէնը: Նորա դէմքի գծագրութիւնքը չէին ցոյց տալիս անհանգստութիւն կամ կիրք: Նա արագ, բայց թափանցողական հայեացքով, նայեցաւ որբերի և զինուորի վերայ:

«Այս ո՞վ է. ինչ կամի քեզանից», հարցարեց Դագոբեռը, առաջին անգամից զգալով մի տեսակ զզուանք Պ. Ռօդէնից, որի դէմքի գծագրութիւնը ամենեին անհաւան երևեցաւ նորան:

— Ես նորա հետ գնումեմ, — պատասխանեց Գաբրիէլը ցաւելով: Յետոյ դառնալով դէպ ի Պ. Ռօդէնը յաւելացրեց, — ներեցէք, ես իսկոյն պատրաստ կը լինիմ:

«Ինչպէս, դու գնո՞ւմես», ասաց Դագոբեռը սաստիկ զարմացած, «երբ մեք դեռ ևս նոր էինք տեսել միմեանց...: Ո՛չ, սատանայն առնու. այդ անհնարին է.... ես չեմ թողում քեզ.... մեք միասին կ'երթանք.... և ուրախ կ'անցուցանենք ժամանակը...:

— Չէ կարելի.... նա իմ իշխանաւորն է.... ես պարտական եմ հնազանդվելու:

«Իշխանաւոր?... ապա ինչ պատճառով այլապէս է նորա հանդերձը:

— Նա պարտական չէ կրել հոգևորականի հանդերձ:

«Ուրեմն, եթէ նա նշանագգեստով չէ.... բայց ձեզանում չեն արգելում.... ուրեմն ասա նորան...»:

— Հաւատացէք, որ եթէ և մի փոքր ևս կարելութիւն լինէր այս տեղ մնալու, այն ժամանակ տարակոյս չկայ, որ ես գործ կը դնէի այդ հնարը:

«Օ՜ուր չէր, որ նորա դունչը այնպէս անհաճոյ երևեցաւ ինձ, ասաց Դագոբեռը, ատամների միջով»։

Յետոյ, ցաւագին անհամբերութեամբ, յաւելացրեց նա, բայց շատ կամաց, — կամիս ես կ՚ասեմ նորան, որ նա շատ պարտական կը կացուցանէր մեզ եթէ շնորհ անէր, միայնակ գնալով այս տեղից։

Ո՛հ, աղաչումեմ, մի ասացէք....» պատասխանեց Գաբրիէլը, «այդ բոլորովին անօգուտ է. ես գիտեմ իմ պարտականութիւնքը — իմ սեպհական կամքը պարտական է հնազանդվելու իշխանութեան կամքին...։

«Երբ դուք Փարիզ հասած էիք ես կը գամ տեսանելու ձեզ և իմ բարի մօրը և սիրելի Ագրիկօլ եղբօրը»։

— Երևի.... ամենայն ինչ անօգուտ է։ Ես ինքս զինուոր եմ եղած և լաւ գիտեմ այդ կարգերը, — ասաց Դագոբեռը, որին շատ անախորժ էին այս բոլոր բաները։ — Ուրեմն մեք կը տեսանենք միմեանց էգուց չէ միւս օր առաւօտ Բրիզ-Միշ փողոցում?... այնպէս չէ? Ասումեն, որ մեք էգուց երեկոյ Փարիզ կը հասանենք...։ Մեք այժմ իսկոյն ճանապարհ կ՚ընկնենք...։ Բայց ինչպէս երևումէ ձեր կարգերը ևս շատ խիստ են։

«Ո՛հ, այո, մեծ.... և խիստ են», ասաց Գաբրիէլը ցնցվելով և խեղդելով իւր ակամայ հառաչանքը։

— Ուրեմն գրկիր ինձ և մնա բարեաւ մինչև վերստին շուտով տեսութիւն...։ Այս ևս պիտոյ է ասել, որ տեսանում ես չես ինչպէս կ՚անցանեն օրերը։

«Մնաք բարեաւ, մնաք բարեաւ», ասաց քարոզիչը անհաստատ ձայնով, գրկելով ծերունուն։

— Մնացէք բարեաւ Գաբրիէլ! — ասացին որբերը արտասուքը աչքերում։

Մնացէք բարեաւ սիրական քուրիկներ», ասաց Գաբրիէլը և դուրս գնաց Պ. Րօդէնի հետ, որ և մի խօսք ևս չ՚մոռացաւ այս բոլոր խօսակցութենից։

Երկու ժամից յետոյ Դագոբեռը և որբերը հրաժարվեցան հիւրընկալ ամրոցից և ճանապարհ ընկան դէպ ի Փարիզ, չգիտելով, որ Ճայլմա՛ն մնաց Կարդովիլ ամրոցում։ Նա այնպէս տկար էր, որ չէր կարող դեռ ևս գնալ։ Մեսիս Ֆարինգէա՛ն մնաց իշխանի հետ, ասելով, թէ չ՚կամի թողուլ իւր երկրացին։

Այժմ կը տանենք մեր ընթերցողները Բրիզ-Միշ փողոցը Դագոբեռի կնոջ մօտ։

ԹԱՓԱՌԱԿԱՆ ՀՐԷԱՅ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍ

ԲՐԻՔ-ՄԻՇ ՓՈՂՈՑԸ

I.

ԴԱԳՈԲԵՐԻ ԿԻՆԸ։

Հետևեալ անցքերը անցանումէն փարիզի մէջ միւս օրը այն օրին, երբ Բլակք-Իգլի և Գիլեօմ Տեյլի նաւորդներից կենդանի մնացողքը ընդունվեցան կարդովիլեան ամրոցի մէջ։

Բրիզ-Միշ փողոցից առաւել մռայլոտ և տխուր փողոց չկայ։ Մի ծայրումը նա ութն ոտնաչափից աւելի չէ, և ընկած է երկու աշագին, սև, կեղտոտ և ճաքճքած պատերի մէջ. սոքա այնքան բարձր են, որ զրկումէն փողոցը և լուսից և օդից. մի միայն երկայն օրերում արեգակը թոյլ կերպով լուսաւորումէ և այն շատ կարճաժամանակեայ. այս պատճառով ձմեռնային խոնաւ եղանակներում, այս երկայն և ցեխոտ հորի նման փողոցը միշտ լցուած է սառն շոգիներով, որ թափանցումէին մինչև ոսկերքը։

Երեկոյեան ութն ժամի մօտ էր. լապտերի թոյլ լուսաւորութեամբ, որի կարմրագոյն լոյսը հազիւ հազ անցանումէր մառախղի մէջից երկու մարդ կանգնած այս աշագին պատերի անկիւններից մինի մօտ խօսումէին միմեանց հետ։

«Ուրեմն այդպէս, չմոռանաս», ասաց մինը, «կաց այս տեղ, մինչև որ նոքա մտանեն հինգ համարով տունը»։

— Չեմ մոռանում, չեմ մոռանում:

«Իսկ յետոյ, առաւել հաստատութեան համար, մօր Ֆրանսիսկա Բօդուէնի մօտ....

— Որպէս թէ որոնումէի Վակխանկայի քոյրը:

«Լաւ և մանրամասն իմացիր սապատող կար կարողաղջկանից, ո՞ւր է բնակվում այդ ցած կենդանին. այդ շատ հարկաւոր է: Այդպիսի կանայք անդադար փոխումեն իւրեանց բնակութիւնը. և այդ կերպով ես այդ աղջիկը ծածկվեցաւ մեզանից»:

— Հանգիստ կացէք. որքան ևս դժուար չլինի, ես անպատճառ կ՚իմանամ սապատող կար կարողից նորա քրոջ բնակութիւնը:

«Իսկ ես, քեզ առաւել ժրաջանութիւն տալու համար, կը սպասեմ վանքի առաջևի գինետան մէջ, և երբ կը վերադառնաս մեք մի մի բաժակ տաքացրած գինի կը խմենք»:

— Այդ շատ լաւ կը լինի. պատճառ այժմ և խոնաւ է և ցուրտ:

«Այո՛, այնպէս ցուրտ է, որ այսօր ջուրը սառել էր իմ մշտիկի վերայ. իսկ ես մումիայի նման նստել էի աթոռի վերայ եկեղեցու դռնումը: Ճշմարիտը պիտոյ է ասել, բաւական դժուար է անցաւորներին օրհնած ջուր տալ»:

— Այդպէս է, բայց դորա փոխանակ կայ մի փոքր եկամուտ:

«Բան ասաց!... Նայիր չմոռանաս հինգ համարը.... Ներկարարի խանութի մօտ:

— Գիտեմ:

Եւ նոքա բաժանվեցան միմեանցից: Մինը գնաց դէպ ի վանքի առաջևի հրապարակը, միւսը փողոցի հակառակ կողմը և շուտով գտաւ այն տունը, որ նորան հարկաւոր էր, մի նեղ և բարձր տուն, որպէս այս փողոցի միւս տները ամենևին մռայլոտ և տխուր կերպարանքով: Այն ժամանակ այս մարդը սկսեց յետ և յառաջ ճեմել այս տան մուտքի մօտ: Այս տան ներսը առաւել խեղճ վիճակի մէջ էր քան թէ նորա արտաքին կերպարանքը, այնպէս որ անհնար է նկարագրել այն գարշելի անմաքրութիւնը, որ ամենայն տեղ երևումէր. հինգ համարով տունը առաւել նշանաւոր էր իւր այսպիսի անմաքրութեամբը: Պատերի միջով թափվումէր խոնաւութիւնը, և ջուրը աղբիւրի նման վազումէր կեղտոտ և մութն սանդուղքներից. երրորդ յարկումը, փոքրիկ հրապարակի վերայ, յարդ էր ձգած ոտքի ցեխը նորա վերայ յստակելու համար, բայց այդ յարդը ինքը արդէն ցեխ էր դարձած և սաստկացնումէր ևս առաւել այն զզուելի, անասելի հոտը, որ յառաջանումէր օդի սակաւութենից, խոնաւութենից և արտաշնչութենից. պատճառ մի քանի ցանցառ փոքրիկ պատուհաններ, որ շինած էին սանդուղքի վերայ, հազիւ հազ ներս էին արձակում գու-

նաձափ լոյսը։ Այս ցուրտ, խոնաւ, անառողջ զզուելի տների մէջ, այս Փարիզի բազմամարդ թաղում, բնակվումեն մշակ մարդիկ։ Ներքին յարկումը տան, որի մասին խօսեցանք, բնակվումէր մի ներկարար. նորա գործարանից դուրս եկած վնասակար արտաշնչութիւնքը առաւել ևս սաստկացնումէին այս տան գարշահոտութիւնը։ Միւս յարկերումը, փոքրիկ սենեակների մէջ բնակվումէին արհեստաւորք, որ տանը աշխատումէն։ Չորրորդ յարկումը էր Ֆրանսիսկա Բօդուէն, Դագոբեաի կնոջ բնակութիւնը։

Այս աղքատին բնակութիւնը, որ թոյլ կերպով լուսաւորված էր այն ժամանակվայ վառված ճրագով, բաղկանումէր մի ոչ մեծ և միւս փոքրիկ սենեակից։ Ագրիկօլը բնակվումէր մի փոքրիկ սենեակում դստիկոնի մէջ։ Պատը, որի մօտ դրած էր մահճակալը, պատած էր հին մոխրագոյն թղթով. պատուհանները ծածկվումէին վարագոյրներով, որ շարժումէին երկաթեայ թելերի վերայ. յատակը, մոմ չ'քսած բայց մաքուր լուացած, պահպանումէր իւր կարմիր աղիւսագոյնը։

Մի անկիւնում կանգնեցուցած էր բոլորշի երկաթեայ հնոց կաթսայով, որի մէջ կերակուր էին պատրաստում. հասարակ փայտից շինած կոմոտի վերայ (գզրոց պահարան), որ ներկած էր տեղին գունով, դրած էր փոքրիկ երկաթեայ տուն Ագրիկոլի, Դագոբեաի որդու արհեստի և համբերութեան գեղեցիկ գործը։ Գաճեայ խաչելութիւնը, շրջապատած ուռիներով, և մի քանի այլ պատկերներ կրօնական բովանդակութեամբ, ցոյց էին տալիս, որ տան տիկինը հաւատաւոր կին էր. մեծ ընկուզեայ փայտից շինած և ժամանակից սևացած պահարանը, որ Փարիզի մէջ շատ հասարակ կարասիք է, կանգնեցուցած էր երկու պատուհանների մէջ տեղը. հին աթոռներ, ծածկած կանաչագոյն ուտրեխտեան թաւիշով (Ագրիկօլի, իւր մօրը արած, առաջին պարգևը), մի քանի եղեգնահիւս աթոռներ և բանելու սեղան, որի վերայ ընկած էին մի քանի սև կտաւից քսակներ, ահա բոլոր զարդարանքը այս խեղճ սենեակի, որի մաշված դուռը լաւ չէր փակվում. միջնապատի միւս կողմումը պահվումէին խոհանոցի կարասիքը և այլ տնային անօթներ։ Որչափ և խեղճ է, որչափ ողորմելի այս տնային կեցութինը, այնու ամենայնիւ Փարիզի մէջ ամենայն մարդ այս ևս չէ կարող ձեռք ձգել, ի հարկէ արհեստաւորների վերայ է խօսքը. պատճառ մահճակալի վերայ ընկած էին երկու անկողին, սպիտակ սփռոցներ և ջերմ վերմակ. մեծ կոմոտի մէջ պահվումէին կտաւիքը. բաց ի սորանից Դագոբեաի կինը ինքը միայն բնակվումէր այս սենեակը, որպիսի սենեակի մէջ շատ անգամ տեղաւորվումէն քանի արհեստաւորների ընտանիք և քնումէն միասին։ Երջա-

նիկ են նոքա դեռ ևս եթէ աղջիկներին և տղաներին կարողանումէին տալ առանձին մահճակալ և երբ վերմակը և սփռոցներից մինը գրաւ դրված չեն Mont-de-Piété ասացեալ տեղումը:

Ֆրանսիսկա Բօդուէնը, նստած հնոցի մօտ, որ այս ցուրտ և խոնաւ ժամանակը փոքր էր ջերմացնում անպիտան պատուհաններով և դռներով սենեակը, ընթրիք էր պատրաստում իւր Ագրիկօլ որդու համար: Յիսուն տարեկանից աւելի չէր Դագոբեռի կինը. նա հագած էր կապոյտ պաստառից հանդերձ և սպիտակ գլխարկ, որ կապվումէր կզակի տակով: Նորա երեսը վատուժ և գունաթափ, գծագրութիւնքը ուղիղ, նորա դէմքը ցոյց էր տալիս կատարեալ բարութիւն և հնազանդութիւն դէպ ի իւր ճակատագիրը: Նա շատ բարի և ժրագլուխ մայր էր, ապրուստի ոչինչ հնար չունելով բաց ի իւր աշխատանքից, նա ոչ թէ միայն սնոյց իւր որդի Ագրիկօլը, այլ և Գաբրիէլը, դուրս ձգած մանուկը, որ զարմանալի կարեկցութեամբ առել էր իւր մօտ. իւր երիտասարդութեան հասակում, նա, յառաջուց ծախել էր իւր առողջութիւնը. պատճառ, տասներկու տարի աշխատել էր առանց դադարելու և դրել էր իւր վերայ ամենակարելի, ամենածանր զրկանքներ, դորա փոխանակ այդ ոսկեայ տարիներ էին համեմատութեամբ այժմեաններին, նա մինչև քսուն Սու ստանումէր օրը. այդ արծաթով ահա սնոյց նա իւր որդին և որդեգիրը...: Այս տասներկու տարիներից յետոյ նորա առողջութիւնը արդէն խանգարվել էր, զօրութիւնքը քաղված էին. բայց գոնէ նորա զաւակները ոչինչ բանի կարօտութիւն չունեցան և դարմանվեցան, որքան այս կարգի մարդերին կարելի էր. Ագրիկօլը աշակերտ մտաւ Ֆրանսիսկոս Հարդի պարոնի մօտ, իսկ Գաբրիէլը պատրաստվեցաւ մտանել հոգևոր դպրոցը, ջերմեռանդ հոգաբարձութեամբ Պ. Բօդէնի, որ 1820 թուականից սկսած մօտ կապակցութիւն ունէր Ֆրանսիսկա Բօդուէնի խոստովանահօր հետ, քահանայի հետ այն կնոջ, որի անսովոր աստուածապաշտութիւնը, որ չէր առաջնորդվում լուսաւոր բանականութեամբ, արդէն դարձել էր բնաւորութեան մի թոյլ յատկութիւնը:

Ֆրանսիսկա Բօդուէնը մինն էր այն պարզ և աննկարագրելի բարի կնիկ մարդերից, որոնց անձնազոհ լինելու պատրաստութիւնը հասանումէ մինչև աւելի վերին աստիճանի և որոնց սրտի բնական ազդեցութիւնը փոխանակումէ խելքը: Նորա առանձին յատկութիւնը, յառաջացած կոյր խտակ-սրտութենից, էր նորա անյողդողդ հաստատութիւնը, երբ նա պարտականութիւն էր համարում կատարել իւր խոստովանահօր կամքը, որին շատ ժամանակից ահա սովորել էր հնազանդվիլ. Նորա կամքը միշտ երևումէր այս կնոջը պատուելի, ան-

ժըլատելի, սուրբ. ոչինչ մարդկային իշխանութիւն, ոչինչ զօրութիւն աշխարհի վերայ չէին կարող յետ պահել նորան այդ կամքի հրամանները կատարելուց. ոչինչ բան չէր կարող խախտել նորա միտքը այս մասին. Նորա ընդդիմութիւնը, առանց բարկութեան, առանց բորբոքողականութեան, նոյնպէս հեզ էր, ինչպէս նորա բնաւորութիւնը, խաղաղ, ինչպէս նորա խիղճը, բայց դորա փոխանակ նոյնպէս անյողդողդ: Մի խօսքով Ֆրանսիսկա Բօդուէնը մինն էր այն կարճատես և թեթևահաւատ կնիկ մարդերից, որ իւրեանց կամքի հակառակ կարող են սարսափելի գործիք լինել ճարտար և վտանգաւոր մարդերի ձեռքերում:

Արդէն բաւական խանգարված առողջութիւնը և մանաւանդ տեսութեան տկարութիւնը հարկադրումէին նորան ակամայ հանգստանալ. պատճառ նա կարող էր միմիայն օրը երեք ժամ աշխատել և ոչ աւելի.. մնացած ժամանակը անցուցանումէր նա եկեղեցումը:

Մի քանի րոպէից յետոյ Ֆրանսիսկա Բօդուէնը վեր կացաւ տեղից, հաւաքեց իւր քսակները և ջերմեռանդութեամբ, մայրական հոգաբարձութեամբ սեղան պատրաստեց իւր որդու համար:

Նա հանեց պահարանից մի ոչ մեծ կաշեայ պարկ, որի մէջ պահվումէին մի հին արծաթեայ գաւաթ և թեթև արծաթեայ դանակ, պատառաքաղ և դգալ այնպէս մաշված, այնպէս բարակ, որ դգալի եզերքը բոլորովին սրվել էին. լուաց, սրբեց որքան կարելի է մաքուր և դրեց որդու պնակի մօտ այս արծաթեղէնքը, որ իւր ամուսինը ընծայել էր նորան իւրեանց հարսանիքի օրումը: Սոքա նորա բոլոր ունեցած բաներից, ամենաթանգագինքն էին, որպէս իւրեանց գնովը նոյնպէս և այն յիշատակութեամբը, որ միանումէր սոցա հետ. այս պատճառով Ֆրանսիսկայն միշտ լաց էր լինում դառն արտասուքով, երբ սաստիկ կարօտութեան պատահելով հիւանդութեան կամ անգործութեան պատճառով հարկադրվումէր գրաւ դնել այս բոլորը, որ մի սուրբ բան էր դարձած նորա համար:

Յետոյ առաւ նա պահարանից ջրով լիքը մի շիշ և միւս ես շիշ երեք քառորդաչափը գինով լցած, դրեց այս ամենը սեղանի վերայ և յետոյ դարձեալ սկսեց պարապել կերակրի պատրաստութեամբ: Թէ և Ագրիկօլը դեռ ևս շատ փոքր ուշացել էր սովորական ժամանակից, այսու ամենայնիւ մօրը երեսի վերայ նկատելի էր անհանգստութիւն և տխրութիւն. Նորա կարմրած աչքերից երևումէր որ նա շատ լացել էր: Խեղճ կինը հաւատացած էր արդէն, որ երկար ժամանակ չկամէր հաւատալ, թէ նորա շատ ժամանակից արդէն թուլանալ սկսված տեսութիւնը շուտով ահա թոյլ տալու չէր նորան մինչև անգամ օրը երկու երեք ժամ աշխատել, ինչպէս աշխատու-

մէր յառաջ։ Նա երբեմն շատ լաւ կար կարող էր. տեսութեան թուլանալուն համեմատ, նա հարկադրվումէր յանձն առնուլ առաւել պարզ առաւել խոշոր աշխատութիւն, դորա հետ միասին ի հարկէ փոքրանումէր և ստանալի վարձը. վերջապէս, նա հարկադրված էր կարել զօրքի հասարակ պարկեր. նորան վճարումէին իւրաքանչիւր պարկի համար երկու Սու։

Դժուար աշխատութիւն էր. նա պիտոյ է երկու Սուի համար տասն երկու ոտնաչափ կար կարէր և այն իւր դերձանով. նա չէր կարող օրը երեք պարկից աւելի կարել, ուրեմն օրական ստանումէր միայն վեց Սու։

Ակամայ կը սարսափիս մի միայն մտածելով, թէ շատ կը գտանվին այսպիսի խեղճ և անբաղդ կանայք, որոնք իւրեանց զօրութեան թուլութենից, մաշված ծերութենից և հիւանդութիւններից, հազիւ հազ կարողանումեն վաստակել և այս չնչին գումարը, որ հերիք չէր մինչև անգամ օրական ապրուստի համար. . . Նոցա կարօտութիւնը մեծանումէ օր ըստ օրէ, պատճառվելով ծերութենից և ցաւագարութենից։

Մի լաւ բաղդով, Ֆրանսիսկայն որդի ունէր, որ նորա յուսալի նեցուկն էր. որպէս լաւ արհեստաւոր, օգուտ քաղելով այն հնարներից, որ Պ. Ֆրանսիսկոս Հարդին տուել էր իւր մշակներին, Ագրիկօլը ստանումէր իւր աշխատութենից օրը մինչև վեց Ֆրանկ. այս ինքն երկու անգամ կամ առաւել ևս աւելի քան թէ ուրիշ գործարանների մշակները։ Այս պատճառով եթէ Ֆրանսիսկայն ոչինչ ևս չվաստակէր այնու ամենայնիւ նոքա բաւական լաւ կարող էին ապրիլ։

Բայց այս աղքատ կինը, զրկելով իւր անձը ամենայն բանից, շատ արծաթ էր ծախսում եկեղեցու վերայ, սկսած այն օրից երբ սկսել էր ամենայն օր եկեղեցի գնալ։

Համարեա թէ օր չէր անցանում, որ նա մի երկու պատարագ առնել չտար և չտնկէր մոմերի բազմութիւն երբեմն Դագոբեռի առողջութեան համար, որից շատ ժամանակ է բաժանված էր, երբեմն իւր որդու հոգու փրկութեան համար, որ Ֆրանսիսկայի կարծիքով հոգեկան մահի ճանապարհումն էր։ Ագրիկօլը այնպէս բարի այնպէս մեծահոգի էր, նա այնպէս սիրումէր և յարգումէր իւր մայրը, որի ձգտողութիւնքը այնպէս սրտաշարժ էին, որ նա երբէք չէր տրժգոհում, որ իւր ռոճիկը, որ իւրաքանչիւր շաբաթ օր բերումէր մօրը, մեծ մասով ծախվումէր Ֆրանսիսկայի պատճառով։ Երբեմն, բայց քնքշութեամբ և խորին յարգութեամբ, ասումէր Ագրիկօլը իւր մօրը, թէ շատ ցաւելի էր իւրեան տեսանել, որ նա իւր անձը ենթարկումէ

ծանր և մինչև անգամ նորա հասակում և առողջութեան վիճակին նայելով վնասակար զրկանքներ, չ՛կամելով սահմանաւորել իւր միւս ծախքերը։ Բայց կարելի՞ էր արդեօք ընդդիմաբանել բարի մօրը՝ երբ սա ասում էր արտասուքը աչքերում։

«Սիրական, այդ բոլորը լինումեն քո և քո հօր փրկութեան համար»։ Ագրիկօլը չէր համարձակվում պատասխանել սորան։

Դռնումը լսվեցաւ թեթև բաղխիւն և ֆրանսիսկայն ասաց «ներս մտէք»։ Դուռը բացվեցաւ։

II.

ՍՊԱՆԴԱՐԱՄԵՏԱԿԱՆ ԹԱԳՈՒՀՈՒ ՔՈՅՐԸ։

(La soeur de la reine Bacchanal).

Դագոբերտի կնոջ սենեակը ներս մտաւ տասն և ութ տարեկան մի աղջիկ, ոչ բարձր հասակով և սաստիկ վշտացած բնութենից. չէր կարելի ասել որ նա սապատող էր բոլորովին, բայց նորա իրանը շատ ծռված էր, մէջքը կորացած, կուրծքը ներս ընկած, գլուխը որպէս թէ ներս էր թաղված ուսերի մէջ. նորա դէմքը, բաւական կանոնաւոր, երկայն, վատուժ, ամենևին գունաթափ և ծաղկաւեր, ցոյց էր տալիս խորին տխրութիւն և մեծ հեզութիւն. նորա աչքերը լցուած էին խելքով և բարութեամբ մի օտարոտի ցանկութեան պատճառով, երկայն փառաւոր մոյգ շագանակագոյն մազերը, որով մի գեղեցիկ կին կարող էր պարծենալ, հաստ գէսով փաթաթված էին այս խեղճ աղջկայ գլխի մօտ։ Նորա ձեռքումը կար մի հին կողով։

Նա հագնված էր շատ աղքատօրէն, բայց մաքրութիւնը և ճըշտութիւնը նորա հագուստի մէջ պատերազմումէր որքան կարելի է աղքատութեան հետ. չ՛նայելով ցուրտ եղանակին, նա հագած էր միայն մի մաշած անորոշ գունով հանդերձ, սպիտակագոյն բիծերով. այնքան լուացվել էր պաստառը որ նորա առաջին գոյնը և նկարը բոլորովին անհետացել էին։

Այս անբաղդ աղջկայ վշտահար, բայց հանդիստ երեսի վերայ շատ որոշակի նկարագրած էր սովորութիւնը դէպ ի ամենայն զրկանք, ամենայն վիշտ, մինչև անգամ դէպ ի արհամարհանքը ուրիշների կողմից իւրեան. ծաղրը հալածումէր նորան, նորա ծնելու ցաւալի րոպէից սկսած։ Մեք արդէն ասացինք, որ բնութիւնը զրկել էր նորան սովորական կազմուածքից, և ահա այս պատճառով հասարակաբար նորան զանչումէին Մայեօ (սապատողն), և ամենայն ոք սովորած էր այդ անունին, որ անգադար խեղճ աղջկայ երեսին էր զարկում նորա

խնդանդամութիւնը, մինչև անգամ Ֆրանսիսկայն և Ագրիկօլը, որ այնպէս բարի էին և կարեկից նորան, ամենևին չէին գանչում նորան այլ անունով:

Մայսօն, մեք և այսպէս պիտոյ է անուանենք, ծնել էր այս տան մէջ, ուր Դագոբեռի կինը քսան տարի է ահա բնակվումէր. այս պատճառով կարելի է ասել, որ խեղճը զարգացել էր Ագրիկօլի և Գաբրիէլի հետ միասին: Լինումեն այսպիսի անբաղդ արարածք, որոնք որպէս թէ ծնած են վատաբաղդութեան համար: Մայսօի քոյրը շատ գեղեցիկ աղջիկ էր և վայելումէր բոլոր քնքշութիւնը, կոյր և անխտրոր սիրոյ իւրեանց մօր, որ այրի էր մի աղքատացած չնչին վաճառականի. Նորա միւս դուստրը (Մայսօն) այդպէս վշտացած բնութենից ստանումէր իւր մօրից մի միայն արհամարհանք և անդադար կոպիտ յանդիմանութիւնք:

Խեղճ Մայսօն սովորաբար գալիս էր Ֆրանսիսկայի մօտ իւր անբաղդութիւնը լալու. Ֆրանսիսկայն մխիթարումէր նորան, արիացնումէր, և որպէս մի զբօսանք ուսուցանումէր նորան գրել կարդալ և կարել:

Ագրիկօլը և Գաբրիէլը, մօր օրինակից սովորած լինելով կարեկից լինել, սիրումէին և պաշտպանումէին Մայսօին ուրիշ տղաների երեսից, որոնք ծաղր էին անում նորան, չարչարումէին և մինչև անգամ ծեծումէին նորան:

Նա տասն և հինգ տարեկան էր, իսկ նորա Սեֆիզ քոյրը տասն և եօթը, երբ նոցա մայրը մեռաւ, թողնելով աղջկերքը վերջին աղքատութեան մէջ: Սեֆիզը, խելացի, գործունեայ, յաջողաշարժ աղջիկ էր և իւր բնութեամբը ամենևին չէր նմանում իւր քրոջը, եռ էր գալիս նորա կենդանութիւնը, նորան հարկաւոր էին օդ, շարժողութիւն, զուարճութիւն. բայց նա բարի սիրտ ունէր, թէ և մայրը սաստիկ երես էր տուած նորան: Սեֆիզը սկզբումը լսումէր Ֆրանսիսկայի գեղեցիկ խրատները, զօրանումէր, հնազանդվումէր իւր ճակատագրին, ուսել էր կար կարել և ամբողջ տարի աշխատումէր իւր քրոջ հետ միասին. բայց չկարողացաւ տանել այս վիճակին, անհնարին էր նորան այդքան սարսափելի զրկանքները, որոնց ենթարկումէր նորան աշխատութեան չնչին վարձը, այնպիսի զրկանքներ, որ հասանումէին երբեմն մինչև այն աստիճան, որ նա հարկադրվումէր տանել և ցրտի և սովի: Մատաղահաս, գեղեցիկ, աշխոյժ Սեֆիզը ընդունեց վերջապէս փաստաբանի մօտ ծառայող մի նոտարի փառահեղ առաջարկութիւնը, փառաւոր մի միայն նորա Սեֆեզի համար. պատճառ նա շատանումէր նորանով, որ նոտարը հնար էր տալիս նորան կուշտ կերակուր ուտելու, ցրտից չդողալու և տասն և հինգ ժամ

օրը չաշխատելու մութն և հոտած սենեկում: Մի քանի ժամանակից յետոյ, նոտարը թողեց նորան. նա յարակցութիւն բացեց մի գործակալի հետ և օրինակ առած լինելով նոտարից, ինքը Սեֆիզը, թողեց գործակալը և յետոյ սկսեց տալ իւր սիրտը սորանից նորան:

Մի խօսքով, մի քանի այսպիսի փոփոխութիւններից յետոյ, երկու տարւայ մէջ, Սեֆիզը, պաշտելու կուռք դարձաւ երիտասարդ աղջկերքի և վաճառականների գործակալների համար. իւր խելքովը վճռական բնութենովը, իւր անյագ ախտովը դէպ ի ամենայն տեսակ զուարճութիւն, նա քաղաքից դուրս պատահած խնջոյքների մէջ այնպիսի վարկ էր ստացել հասարակութեան կողմից, որ անուանումէին նորան սպանդարամետական թագուհի (La reine Bacchanal) և նա ամենայն իրաւունքով արժանի էր այս մականունին:

Այն օրից ահա խեղճ Մայեօն շատ հազիւ լուր էր ստանում իւր քրոջ մասին, բայց միշտ ցաւումէր նորա վերայ և շարունակումէր ջերմեռանդութեամբ աշխատել, ստանալով իւր աշխատութենից, շաբաթը չորս ֆրանկ: Նա շապիկ էր կարում զօրքի և հասարակ մարդերի համար, երեք ֆրանկ ստանալով ամենայն տասներկու շապիկի համար: Օրը տասներկու կամ տասն և հինգ ժամ գործի գլխին նստելով, նա հազիւ հազ կարողանումէր տասն և չորս կամ տասն և վեց շապիկ կարել շաբաթը, ուրեմն բոլոր նորա եկամուտը աւելի չէր քան թէ չորս ֆրանք շաբաթը:

Նա սնանումէր մի միայն հացով և կանաչեղենով, որոնցից թանի նման մի բան էր պատրաստում. բայց խնայելով վառելիքը, մի և նոյն թանը մի օր ուտումէր ջերմ միւս օր սառն. Այսու ամենայնիւ չնայելով այսպիսի վերին աստիճանի տնտեսութեան վերայ նա ամենայն շաբաթ ծախս ունէր, կերակրի, ճրագի, դերձանի, ասեղի վերայ երեք ֆրանկ, ինն հարիւրերորդ, այս կերպով ամենայն շաբաթ նորան մնումէր իննսուն և մի հարիւր երրորդ. այս արծաթով պիտոյ էր հոգալ հանդերձը և վճարել բնակութեան վարձը:

Բայց Մայեօն դեռ ևս վայելումէր մի հաղուագիւտ բաղդ, նա միայն տասներկու ֆրանկ էր հատուցանում տարին, մի փոքրիկ սենեկի համար դստիկոնումը, ուր տեղաւորված էին մահճակալը, սեղան և աթոռ. Մայեօն և չէր անգամ կարծում, որ բարի Ագրիկօլը, չ՛կամելով վշտացնել նորա անձնասիրութիւնը, ծածուկ խօսել էր տան կառավարչի հետ և վճարումէր մնացորդ տասն և ութն ֆրանկը իւր քսակից. պատճառ բնակութիւնը արժէր ոչ եթէ տասն երկու այլ երեսուն ֆրանկ տարին: Այս կերպով նորան մնումէր հագուստի և այլ կարիքների համար ամիսը մի ֆրանք և եօթանասուն հարիւրերորդ:

Շատ կը գտնվին փարիզում և այնպիսի աշխատաւոր կանայք, որոնք մինչև անգամ կը նախանձէին Մայեօի բաղդին, կան կար-կարողներ, որ ազգական և բնակութիւն չունենալով ամբողջ օրվայ համար գնումեն մի պատառ հաց և մի փոքր գետնախնձոր կամ այլ բուսական, իսկ գիշերը քնումեն երկու Սու հատուցանելով մի մահճի մէջ մի այլ աղջկայ հետ, հիւրանոցներում (chambres garnies), ուր ամենայն սենեկում դրված են սովորաբար չորս կամ հինգ մահճակալ և նորանցից մեծ մասը բռնումեն այր մարդիկ պատճառ պանդոկատէրը չէ կարող բաժանել իւր սենեակները արական և իգական անուններով։ Այս կերպով խեղճ, մաքուր և անարատ աղջիկը հարկադրված է միասին այր մարդերի հետ, մի սենեկում գիշերել։ Եւ հնար չկայ այս բանից ազատվելու, այս բոլոր բաները սեպհական ունենալու համար հարկաւոր է երեսուն կամ քառասուն ֆրանկ, իսկ խեղճ աղջիկը ո՞ր տեղից կարող է գտանել, մինչ նա չորս կամ շատ շատ հինգ ֆրանկ է ստանում շաբաթը։ Այսպիսի ընկերակցական բնակութենից ամօթխածութեան բնական ազդեցութիւնը փոքր առ փոքր բթանումէ, ողջախոհութեան ծննդական զգացողութիւնը, որ միմիայն կարող է պաշտպանել անբաղդ աղջիկը հրապոյրի երեսից, թուլանումէ.... սորա հետեւանքը հասկանալի է ամենայն մարդու։ Ապա եթէ աշխատութիւնը կտրվի? եթէ սակաւակերութիւնը և անառողջ բնակութիւնը պատճառեն մի հիւանդութիւն?... ինչ պիտոյ է առնել այն ժամանակ. սարսափելի է անգամ և մտածել դորա վերայ։

Այս կերպով խեղճ Մայեօն, չնայելով Ագրիկօլի գաղտնի օգնութեան վերայ, ապրումէր վերջին աղքատութեան մէջ։ Նորա և առանց դորան ևս վատ առողջութիւնը, բոլորովին խանգարվել էր անդադար զրկանքներից և անչափ աշխատութենից։ Մայեօն չգիտէր թէ ինչ է առնում Ագրիկօլը իւր համար. այսու ամենայնիւ նորա առաջև մի փոքր շատ էր ցույց տալիս իւր եկամուտը. Նա այն պատճառով այսպէս էր առնում, որ ազատվի նորա օգնութիւն առաջարկելուց, որ կրկին անգամ ծանր պիտոյ է լինէին նորան. առաջին այն պատճառով, որ յայտնի էր նորան ֆրանսիսկայի և Ագրիկօլի նեղութիւնները, երկրորդ այն պատճառով, որ այդ բանը վշտացնումէր նորա ազնիւ հպարտութիւնը, զօրացած ևս առաւել մշտական վշտերից և արհամարհանքներից օտարների կողմից։

Մի հզօրագիւտ դիպուածով, խեղճ Մայեօի խեղաթիւր մարմինը ունէր իւր մէջ մի զգացող և ջերմեռանդ հոգի, լուսաւոր միտք.... կրթված, մինչև անգամ, մինչև բանաստեղծութեան սահմանքը։

Այս անսովոր յայտնութիւնը, պատճառեց Ագրիկօլի օրինակը,

որի հետ միասին համարեա թէ կրթվել էր Մայեօն։ Այս երիտասարդ մարդու մէջ բանաստեղծական շնորհքը կերպարանագործվեցաւ ինքն ըստ ինքեան, և խեղճ աղջիկը կարդումէր նորա առաջին փորձերը դպրութեան մէջ։ Ագրիկօլը ստէպ ստէպ խօսումէր ոգևորութեամբ այն զուարճութեան վերայ, որ ստանումէր բանաստեղծական երևակայութեններից, օրական ծանր մշակութենից յետոյ և խեղճ Մայեօն լինելով խելացի աղջիկ, հասկացաւ, թէ ինչ գեղեցիկ և անուշ զբօսանք կարող էր լինել իւր համար այս պարապմունքը, միշտ միայն լինելով և արհամարհված ուրիշներից։

Մի անգամ, երբ Ագրիկօլը կարդաց նորան իւր ոտանաւորը, բարի Մայեօն կարմրեց, հեզութեամբ ժպտեցաւ և Ագրիկօլի զարմանքի համար ասաց նորան կակազելով իւր ոտանաւորը։ Այս ոտանաւորների մէջ չկային ոտքերի կատարելութիւն և ներդաշնակութիւն բայց պարզ էին և սրտաշարժ, որպէս գանգատ առանց դառնութեան, հաւատացած մի բարեկամ սրտի. . . . Այս օրից ահա նոքա միշտ խորհրդակցումէին միմեանց հետ, մինը քաջալերումէր միւսը. բայց Ագրիկօլից ջոկ ոչ ոք չգիտէր Մայեօի բանաստեղծական փորձերի մասին. Մայեօի, որին, նայելով նորա անչափ հեզ բնութեանը, ամենքին յիմար էին կարծում։ Ուրեմն այս անբաղդ աղջկայ հոգին գեղեցիկ և բարձր հոգի էր, երբ ոչ մի նորա գրուածների մէջ չէր երևում ո՛չ տժգոհութիւն, ո՛չ բարկութիւն և ո՛չ ամենափոքր ատելութիւն դէպ ի իւր ճակատագիրը, որ այնպէս անողորմաբար հալածումէր նորան. Նորա գրուածքը էին տխուր գանգատներ, բայց հեզ, անյոյս, ոչ չար, ձայնարկութիւնք անսահման քնքշութեան, քրիստոնէական կարեկցութեան, հրեշտակային ցաւակցութեան դէպ ի ամենայն էակ, որ Մայեօի նման հարստահարված էին աղքատութենից և տգեղութենից։ Բաց ի սորանցից Մայեօն շատ անգամ ցոյց էր տալիս պարզահոգի և անկեղծ զարմացք գեղեցկութեան վերայ, զարմացք, առանց վշտանալու, առանց նախանձի, նա զմայլումէր գեղեցկութեան վերայ այնպէս ինչպէս արեգակի վերայ. , . .

Բայց Մայեօն շատ ոտանաւորներ ունէր, որ չգիտէր Ագրիկօլը և երբէք գիտելու չէր։ Չէ կարելի ասել, թէ Ագրիկօլի երեսը ունէր հիանալի և կանոնաւոր գծագրութիւն. Նորա դէմքը պատկերացնումէր այրութիւն և մի բաց հոգու ազնուութիւն. Նա գեղեցիկ և քնքուշ սիրտ ունէր, խելք ու միտք անսովոր. բաց ի սորանցից նա շատ բարի էր, աներկիւղ և միշտ պարկեշտաբար ուրախ։ Մայեօն նորա հետ միասին էր մեծացել, սիրումէր նորան, որքան կարող էր սիրել մի անբաղդ և բնութենից վշտացած աղջիկ, որ երկիւղ կրելով անտանելի ծաղրածութենից հարկադրված է ծածկել իւր սէրը սրտի ամե-

նաթաքուն խորքումը։ Մայեօն հարկադրված լինելով միշտ դիմակաւորվիլ բարոյապէս, չէր աշխատում ջնջել այս սէրը. եւ ինչ պատճառով։ Ո՞վ գիտէ այդ մասին։ Այն կենդանի մասնակցութիւնը, որ ցոյց էր տալիս ամենայն բանի մէջ ինչ որ յարաբերումէր Ագրիկօլին շատ թեթև կերպով մեկնվումէր նորա ազգակցական ջերմեռանդութեամբը դէպ ի նա։ Ագրիկօլը նոյնպէս ինչպէս ուրիշները խաբվելով արտաքին կերպարանքից, երբէք և չէր անգամ կասկածում, որ Մայեօն այդպէս սաստիկ սիրէր իւրեան։ Այսպէս աղքատօրէն հագնըված էր աղջիկը, որ ներս մտաւ սենեակի մէջ, ուր Ֆրանսիսկա Բօդուէնը ընթրիք էր պատրաստում իւր որդուն։

«Ա՜, այդ դու ես սիրական Մայեօ», ասաց Դագոբեռի կինը, «ես դեռ ևս տեսած չէի քեզ այսօր առաւօտ։ Առո՞ղջ ես.... եկ գրկախառնիր ինձ»։

Աղջիկը գրկախառնեց նորան և պատասխանեց.

— Շատ շտապ գործ ունէի աւարտելու. չ'կամեցայ և մի րոպէ ևս կորուսանել և այս րոպէիս ահա աւարտեցի...։ Ես ցած եմ գնում ածուխ բերելու։ Արդեօք մի բան հարկաւոր չէ՞ր ձեզ։

«Շնորհակալ եմ, սիրական, դեռ ևս ինձ ոչինչ հարկաւոր չէ. բայց ես շատ անհանգիստ եմ լինում, ահա արդէն ժամը իննի կէսն է, իսկ Ագրիկօլը դեռ ևս չէ գալիս», յետոյ հառաչանքով յաւելացրեց նա, «նա խեղճը մեռանումէ այն տեղ աշխատելով և այդ բոլորը իմ համար։ Աստուած իմ, ինչ անբաղդ կին եմ ես...։ Բոլորովին կուրացայ, քառորդ ժամ աշխատումեմ թէ չէ աչքերս ոչինչ չեն տեսանում.... չեմ կարող մինչև անգամ և այս պարկերը կարել։ Ապրել որդու աշխատութեամբ, նորան ծանրութիւն լինել.... այդ սարսափելի է!

— Ա՜հ, եթէ այդ բոլորը լսէր Ագրիկօլը։

«Ո՛հ, ես գիտեմ, նա բարի որդի է. մի միայն իմ մասին մտածումէ.... բայց այդ բանը ինձ առաւել տխրեցնումէ...։ Բաց ի դորանից միշտ մտածումեմ ակամայ, թէ ես էի պատճառը, որ նա չ'կամէր օգուտ քաղել այն բաներից, որ բարի Պ. Հարդին տալիս էր իւր մշակներին.... փոխանակ այս աղքատին սենեակին, ուր և կէս օրվայ ժամանակ հազիւ մի բան տեսանվումէ, նա կարող էր չնչին գնով ստանալ այն տեղ, լուսաւոր, ձմեռը ջերմ, ամառը հով սենեակ, պատուհանները դէպ ի պարտէզը.... և նա այնքան սիրումէ կանաչ։ Բաց ի դորանից դու գիտես, նոցա գործարանը քաղաքից դուրս է.... միթէ հեշտ է այս տեղից այն տեղ գնալ....»

— Բայց նա մոռանումէ իւր բոլոր հոգնութիւնը երբ հանդիպումէր ձեր առաջին փայփայանքին...։ Բաց ի դորանից, նա գիտէ

թէ ո՛րքան թանգ է ձեր համար այս տունը, ուր ծնել էր նա ինքը։ կարծեմ Պ. Հարդին առաջարկել էր, որ դուք եւ Ագրիկօլի հետ տեղափոխվիք Պլեսսի, այն տան մէջ, որ շինել էր նա իւր արհեստաւորների համար։

«Այո՛, իմ սիրական, բայց դորա համար հարկաւոր էր վիճակվիլ այլ ծուխի, (եկեղեցու) իսկ ես երբէք չեմ կարող համաձայնիլ այդ բանին. . . .

— Ահա և նա գալիս է, — ասաց Մայեօն կարմրելով։

Սանդուղքների վերայ լսուեցաւ ուրախ երգեցողութեան ձայն։

«Որ նա չ'իմանար, թէ ես լացել էի!» ասաց բարի մայրը, աչքերը սրբելով. նա խեղճը մի միայն այս ժամանակ հանգստանումէ. ինչ հարկաւոր է ինձ տխրեցնել նորան։

III.

ԱԳՐԻԿՕԼ ԲՕԴՈՒԷՆԸ։

Դարբին-բանաստեղծը երիտասարդ տղայ էր, քսան չորս տարեկան, բարձրահասակ և առողջ, թուխ և այրված դէմքով, սև մազերով, սև աչքերով, ուղիղ քթով, համարձակ, բան արտայայտող և բաց երեսով։ Նորա Դագոբերի հետ նմանութիւնը, մանաւանդ զարմանալի էր, որ նա այն ժամանակի սովորութեամբ կրումէր ահագին ընչացք. փոքրիկ մօրուքը սրած ծայրով ծածկումէր միայն նորա կզակը, իսկ թշերը ածիլած էին մինչև քունքերը։

Նորա վերայ կային մուգ կանաչ թաւիշեայ վարտիկ. կապոյտ վերայի հանդերձը քուրայի ծուխից դեղնած, սև թաշկինակ առանց ուշադրութեան շրջապատած նորա ջլուտ վզի չորս կողմը և մահուդի գլխարկ կարճ հովանոցով. Նորա ձեռքում կար մի հիանալի մուգ ծիրանագոյն ծաղիկ, արծաթագոյն շիւղերով Ներս մտանելով սենեակը, նա իսկոյն վազեց մօր մօտ և գրկախառնելով նորան ասաց, «Ողջոյն, սիրական մայր», յետոյ բարեկամաբար գլուխը շարժելով յաւելացրեց աղջկանը, «Ողջոյն սիրական Մայեօ»։

— Դու այսօր մի փոքր ուշացար, Ագրիկօլ, — ասաց Ֆրանսիսկան գնալով դէպ ի հնոցը, ուր դրած էր որդու կերակուրը, — ես սկսանումէի արդէն անհանգստանալ։

«Իմ մասին մայրիկ, թէ ընթրիքի»? ուրախ կերպով պատասխանեց Ագրիկօլը, «դու արդէն կը բարկանայիր, եթէ իմ համար ընթրիքը աւելի մնար կրակի վերայ. . . . այն պատճառով, թէ այնքան համեղ լինելու չէր այն ժամանակ»։ Եւ ասելով այս միւս անգամ կամէր գրկախառնել մօրը։

— Հերիք է քեզ, դու ինչ չար ես, — ասաց մայրը կատակով, — շատ դժուար չէ, որ վայր ձգէիր կաթսան։

«Այդ շատ ախորժ բան լինելու չէր, ինչպէս երեւումէ շատ լաւ հոտ է գալիս.... ցոյց տուր»։

— Համբերիր, կը տեսնես։

«Գրաւն եմ բռնում, որ գետնախնձոր է խոզի իւղով, իմ սիրական կերակուրը»։

— Շաբաթ օր? ինչպէս է կարելի, — ասաց Ֆրանսիսկան թեթեւ մեղադրանքով։

«Այո՛, այո՛, ես մոռացել էի», պատասխանեց Ագրիկօլը նայելով Մայեօի վերայ ժպտելով։ «Լաւ որ միտքս ընկաւ, մայրիկ. ահա իմ շաբաթական վարձը։

— Շնորհակալ եմ սիրական, դիր կոմոդը։

«Շատ բարի մայրիկ»։

— Ա՜հ, Աստուած իմ, այդ ինչ գեղեցիկ ծաղիկ է, որ ունիս ձեռքումդ, — գանչեց Մայեօն, երբ Ագրիկօլը մօտեցաւ կոմոդին արծաթը պահելու համար, — ես կեանքիս մէջ տեսած չէի այդպիսի ծաղիկ.... դեռ ես ձմեռով...։

«Նայեցէք մի լաւ.... մայրիկ, ինչպէս է», ասաց Ագրիկօլը, մօրը մօտենալով, որ առաւել մօտից ցոյց տայ ծաղիկը։ «Լաւ նայեցէք, հոտոտեցէք հիանալի բուրումէ վանիլի եւ նարնջի ծաղկի հոտ»։ 1)

— Ճշմարիտ է շատ լաւ է բուրում.... Աստուած իմ ինչ գեղեցիկ ծաղիկ է. — գանչեց Ֆրանսիսկան զարմանալուց ձեռքերը ծափելով, — այդ ո՞ր տեղից գտար։

«Գտա՞յ, մայրիկ», ասաց Ագրիկօլը ծիծաղելով։ Դուք կարծումէք թէ այսպիսի ծաղիկներ ընկած են ճանապարհի վերայ Մենի սահմանից մինչեւ Բրիզ-Միշ փողոցը»։

— Ուրեմն ո՞ր տեղից առիր. — հարց արեց Մայեօն անհամբեր հարցասիրութեամբ։

»Այդ արդէն այդպէս է.... անպատճառ ամենայն բան կամին իմանալ. ինչ պիտոյ է անել, բանից երեւումէ որ պիտի պատմեմ ձեզ իմ անցքը։ Միանգամայն զարմանք է այս օրվայ ինձ պատահածը։ Եւ այդ էր պատճառը մայրիկ, որ այսքան ուշացայ։ Աւարտելով իմ գործը ես շատ շտապումէի դէպ ի տուն եւ արդէն հասել էի Բաբելոնեան փողոցի անկիւնին, մինչ յանկարծ լսումեմ շան, բարակ եւ ողբալի հաչելը։ Նայումեմ.... դեռ այն ժամանակ չէր

---

1) Այս գեղեցիկ ծաղիկը անուանվումէ crinum amabile, եւ պահպանվումէ մի միայն ձմեռնային պարտէզներում։

մթնել բոլորովին.... մի գեղեցիկ շուն, բռունցքի մեծութեամբ, սև, կրակի գոյն բիծերով, բուրդը և ականջը հասնումէին մինչև թաթերը»։

— Երևի մի մարդ կորուսել էր նորան, — ասաց Ֆրանսիսկան։

«Այդպէս ևս էր։ Ես վեր առեցի խեղճ շանը, և նա սկսեց ձեռքերս լիզել։ Նորա վիզը կապած էր լայն ատլասեան կարմիր ժապաւէն։ Այս նշանով դեռ ևս անհնար էր իմանալ, թէ ո՛վին էր այդ շունը։ Նայիմ ժապաւէնի տակ, տեսանեմ որ շղթայակապ ոսկեայ կամ ոսկեջրած վզնոց կայ մի փոքրիկ տախտակով.... ես առի լուցկիքը վառեցի և այն թոյլ լուսովը տեսայ որ տախտակի վերայ գրած է, Ստահակը պատկանումէ դը-Կարդովիլ օրիորդին, Բաբելոնեան փողոցում № 7»։

— Մի և նոյն փողոցում ուր գտել էիր?— հարց արեց Մայեօն։

«Այո՛։ Ես վեր առի շունը, նայեցայ չորս կողմն, երկար գնացի անվերջանալի ծառատունկ պատի մօտով և վերջապէս հասայ մի տան դուռի, որ երևի թէ պատկանումէր մեծ ապարանքին, ծառաստանի միւս ծայրումը։ Վեր նայեցայ և տեսայ դուռի վերայ № 7, որ դեռ շատ ժամանակվայ գրած չէր, քարշումէմ զանգը։ Մի քանի րոպէից.... երևի թէ այդ միջոցին մի ով և իցէ իմ վերայ նայումէր, ինձ թվեցաւ որ դուռի վանդակահիսի միջով փայլումէին երկու աչք.... մի քանի րոպէից բացին դուռը...։ Այսուհետև ահա ամենևին չէք հաւատալու ասածիս։

— Ի՞նչ պատճառով։

«Այն պատճառով, որ այդ ճիշդ կախարդական պատմութիւն է»։

— Կախարդական պատմութիւն?— ասաց Մայեօն։

«Այո՛, ես և այժմ ևս դեռ կուրացած եմ, կախարդված այն բանից, որ տեսայ...։ Մի խօսքով երազում տեսայ, այնպէս գեղեցիկ...»։

— Պատմի՛ր, պատմի՛ր, — ասաց Ֆրանսիսկան։ Այդ պատմութիւնը այնպէս զբաղեցուց նորան, որ մինչև անգամ չնկատեց նա թէ ինչպէս այրվեցաւ կերակուրը, որ պատրաստված էր Ագրիկօլի համար։

«Նախ և յառաջ», շարունակեց երիտասարդ դարբինը, ժպտելով ուրախութենից, որ իւր պատմութեանը գտաւ այդպիսի ականջ դնողներ, «նախ և յառաջ դուռը բացեց մի գեղեցիկ աղջիկ, բայց այնպէս գեղեցիկ, այնպէս պատշաճապէս հագնված, մի խօսքով ամենագեղեցիկ հին պատկեր։ Ես դեռ ևս չէի կարողացել մի խօսք ևս արտաբերել, մինչ նա գանչեց»։

— Ո՜հ, Աստուած իմ, Ստահակը! Դուք երևի գտաք նորան և բերեցիք այս տեղ: Ինչպէս ուրախ կը լինի մեր օրիորդ պարոն, Ադրիենը: Գնանք, գնանք շուտով: Նորան շատ ախորժ կը լինի անձամբ անձին շնորհակալ լինել ձեզանից:

Ես կամէի ահա մի բան պատասխանել, բայց նա նշանացի արեց ինձ ձեռքով որ հետևիմ նորա քամակից: Ա՜հ, սիրական մայրիկ, խօսք չէ կարելի գտանել պատմելու, թէ ինչպէս փառաւոր զարդարած էր փոքրիկ դահլիճը, որի միջով անցայ ես: Ինչպէս գեղեցիկ բուրումնէր. բայց ես չ՚կարողացայ լաւապէս զննել. պատճառ, աղջիկը շատ շուտով գնումէր...: Նա բացեց դուռը.... և ես այս տեղ այնպէս կուրացայ, որ ոչինչ չ՚կարողացայ որոշել, ոչինչ միտքս չէ. ամենայն բան այնպէս փայլումէր, ոսկի, լոյս, բիւրեղ, ծաղիկներ և սոցա բոլորի մէջ տեղը պատանի օրիորդ գեղեցիկ.... ո՜հ, այնպէս գեղեցի՜կ, որ երևակայել չէ կարելի.... Նորա մազերը շէկ, կամ լաւ ասել փայլումէին, ոսկու պէս.... հիանալի մազեր էին. ծնած օրիցս այդպիսի մազեր տեսած չէի...: Նորա հետ միասին սև աչքեր, որդանագոյն շրթունք, անսովոր սպիտակութիւն, այսքան բան միտքս է միայն. ասումեմ ձեզ, ես այնպէս զարմացայ և սքանչացայ այս փայլողութենից, որ աչքերս շլացան...: «Այս պարոնը գտել և բերել է Ստահակը» ասաց աղջիկը, որ առաջնորդել էր ինձ. երբէք մտածելու չէի, թէ նա աղախին էր, այնպէս գեղեցիկ հագնված էր...— Ա՜հ, ինչպէս շնորհակալ իմ ձեզանից! — ասաց ոսկեայ մազերով օրիորդը քնքոյշ արծաթի ձայնով, ես չափազանց սիրումեմ իմ Ստահակը: Յետոյ երևի թէ եզրակացնելով իմ հագուստից մտածեց, թէ կարող էր կամ թէ պարտական էր շնորհակալ լինել ինձանից ոչ եթէ խօսքերով մի միայն և այս պատճառով առնելով իւր մօտակայ սեղանի վերայից ո՛չ մեծ մետաքսեայ քսակը, ասաց, բայց, պիտոյ է խոստովանել, մի կերպ անհամարձակ, ձեզ երևի թէ ճանապարհի վերայ չէր բերել Ստահակը. գուցէ դուք կորուսել էիք ձեր թանգագին ժամանակը.... ուրեմն ներեցէք ինձ.... և նա ինձ տուեց քսակը: «Ա՜հ, Ագրիկօլ», ասաց Մայեօն տխրութեամբ, «ինչպէս խիղճ չէ նորան այդպէս վշտացնել»:

— Լսիր մինչև վերջը.... և քո ատելութիւնը դէպ ի նա կը փարատվի: Նա իսկոյն իմ երեսից հասկացաւ, որ այդ բանը վշտացրեց ինձ. վեր առեց իւր մօտ դրած յախճապակի անօթից ահա այս ծաղիկը և, դառնալով դէպ ի ինձ, ասաց կախարդիչ բարի և քնքոյշ դէմքով, «գոնէ ընդունեցէք այս ծաղիկը»:

— Այո՛, ճշմարիտ է, — ասաց Մայեօն, — անհնար էր այլապէս ուղղել այդ ակամայ սխալը:

Ի՜նչ ազնիւ աղջիկ!» ասաց Ֆրանսիսկայն արտասուքը սրբելով. «Նա ինչպէս լաւ ճանաչել է իմ Ագրիկօլի սիրտը»։

Դուք համաձայն էք իմ հետ, մայրիկ։ Այն րոպէին երբ ես ծաղիկը առի, չհամարձակվելով նայել նորա վերայ, թէ և դուք գիտէք, որ ես շատ երկչոտներից չեմ. բայց չնայելով նորա բոլոր բարութեան վերայ, նորանում կար մի անսովոր գերազանցութիւն, որ հարկաւորապէս պահանջումէր երկիւղած յարգութիւն, նոյն րոպէին դուռը բացվեցաւ և մի այլ աղջիկ, բարձրահասակ, սևամազ, գեղեցիկ հագնված բայց մի օտարոտի ձևով ասաց շիկամազ օրիորդին, տիրուհի, նա էկաւ....։ Օրիորդ դը Կարդովիլը իսկոյն վեր կացաւ տեղից և ասաց ինձ. «Ներեցէք ինձ. հաւատացէք, որ երբէք մոռանալու չեմ թէ պարտական էի մնացած ձեզ. խնդրումեմ ձեզանից, որ միտքերդ պահէք եթէ հարկաւոր լինի, իմ հասցէն. իմ անունը — Ադրիեն դը Կարդովիլ։ Նա գնաց։ Ես ոչինչ չկարողացայ պատասխանել։ Աղջիկը ճանապարհ ձգեց ինձ մինչև դռնակը, սիրելի կերպով գլուխ տուեց և ես գտանվեցայ դարձեալ Բաբելոնեան փողոցում՝, զարմացած, ապշած, որպէս թէ նոր էի դուրս եկել կախարդական ամրոցից....

«Այդ արդարև նման է կախարդական պատմութեան, այնպէս չէ՞ սիրական Մայեօ»։

— Այդ ճշմարիտ է, — պատասխանեց աղջիկը, ցրված և մտածմունքի մէջ ընկած, որ Ագրիկօլը չնկատեց։

«Աղջկից առաւել ինձ ախորժ երևեցաւ այն», ասաց Ագրիկօլը, «որ այդ օրիորդը, թէ և անչափ ուրախացաւ, որ դարձեալ գտաւ իւր շնիկը, այսու ամենայնիւ ինձ չմոռացաւ նորա պատճառով, ինչպէս ուրիշները կ'առնէին, և մինչև անգամ իմ առաջևս չպարապեցաւ նորանով. այդ բանը ապացուցանումէ, որ նա բարի և կրթված սիրտ ունի, այնպէս չէ՞ Մայեօ։ Ես այնպէս հաւատացած եմ, թէ դա բարի և մեծահոգի աղջիկ է, որ, մի որպիսի և իցէ երևելի հանգամանքի մէջ, առանց մտածելու իսկոյն կը դիմեմ դէպ ի նա։

— Ճշմարիտ է, — ասաց Մայեօն, առաւել ցրված կերպով։

Խեղճ աղջիկը սաստիկ չարչարվումէր.... Նա չէր զգում դեռ ևս նախանձ և ատելութիւն դէպ ի այդ անծանօթ օրիորդը, որ իւր գեղեցկութեամբ, հարստութեամբ, իւր վարմունքի քնքշութեամբ, ինչպէս երևումէր, պատկանումէր այնպիսի բարձր աստիճանակարգի, մինչ դեռ ես Մայեօի հայեացքը չէր կարող հասանել այն տեղ...։ Բայց վշտացած ինքը իւրեան գալով, նա առաւել սաստիկ քան թէ երբ և իցէ զգաց աղքատութեան և տգեղութեան ծանրութիւնը...։ Այս ազնիւ աղջիկը այնպէս բարի և հեզ էր, որ միայն մի հանգա-

մանք մի րոպէում զինուորեց նորան Ագրիեն դը-կարդովիլի ընդդէմ, յատկապէս այն, որ նա առաջարկել էր Ագրիկոլին արծաթով քսակը. բայց նա սաստիկ շարժված էր նորանով, որ Ագրիենը այդպէս պատշաճ կերպով ուղղել էր իւր սխալը: Խեղճ Մայեօի սիրտը կոտրվումէր և չէր կարողանում առանց արտասուքի նայել այս փառաւոր, հոտաւէտ ծաղկի վերայ: Այսպիսի ընծայ փառահեղ օրիորդից երևի թէ շատ թանգ արժէր Ագրիկոլի համար:

— Այժմ, մայրիկ, դուք վայելեցիք իմ առաջին պատմութիւնը, ծիծաղելով ասաց Ագրիկօլը, ամենևին չ՚նկատելով անբաղդ Մայեօի անտանելի զգացողութեններին, — դուք իմացաք այժմ իմ ուշանալու մի պատճառը, իսկոյն կը պատմեմ ձեզ և երկրորդը...:

Այս տեղ գալով, սանդուղքների վերայ, ես պատահեցայ մեր ներկարար և դռնապան Լօրիօին: Նորա ձեռքերը մինչև արմուկները թաթախված էին կանաչ ներկի մէջ: Նա կանգնեցրեց ինձ և վախեցած դեմքով ասաց, թէ մի բաւական լաւ հագնված մարդ, շատ ժամանակ է արդէն որ ման է գալիս տան չորս կողմը և որպէս թէ լրտեսումէ...: Բայց քեզ ինչ գործ, եղբայր Լօրիօ, ասացի ես, միթէ դու վախումես, որ նա չ՚լրտեսէր, թէ ինչպէս շինումէիր այդ գեղեցիկ կանաչ գոյնը...:

«Բայց, արդարև ո՞վ է արդեօք այդ մարդը», ասաց Ֆրանսիսկայն:

— Չ՚գիտեմ մայրիկ, և չեմ ցանկանում իմանալ. դուք գիտէք որ Լօրիօն շատախօս է որպէս կաչաղակ. ես նորան խորհուրդ տուեցի գնալ իւր գետնատունը. պատճառ, նորա համար, որպէս և իմ համար, մի և նոյն է լրտեսումէ՞ին արդեօք մեր քամակից թէ ոչ...:

Ագրիկօլը այս ասելով դրեց կոմոդի մէջ կաշեղէն քսակը արծաթով հանդերձ: Ֆրանսիսկայն դրեց կաթսայն սեղանի անկիւնում. այս միջոցին Մայեօն, որպէս թէ զարթեցաւ իւր մտածողական քնից, ջուր լցեց սափորի մէջ և բերեց երիտասարդ արհեստաւորին, ասելով իւր խաղաղ և երկչոտ ձայնով, «Ագրիկօլ, ահա ջուր, լուա ձեռքերդ»:

Շնորհակալ եմ սիրելի Մայեօ.... ինչպէս բարի ես դու! — ասաց Ագրիկօլը. յետոյ առանց ամենայն կեղծաւորութեան յաւելացրեց — առ իմ այս ծաղիկը իբրև վարձ քո աշխատանքին...

«Ինչպէս, դու ինձ ընծայումես նորան!» գանչեց Մայեօն փոխված ձայնով, և պայծառ կարմրութիւնը թափվեցաւ նորա գունաթափ և սիրելի երեսի վերայ: Դու ինձ ընծայումես.... այս գեղեցիկ ծաղիկը.... որ տուել էր քեզ գեղեցիկ, հարուստ, բարի և սիրական օրիորդը....» և խեղճ աղջիկը կրկնումէր սաստկացող ամբոխմունքով, «ինձ ընծայումես.... այս ծաղիկը»:

— Ի՞նչ բանի հարկաւոր է ինձ այն, չես հրամայում արդեօք կրել նորան իմ կրծքումս կամ շինել գնդասեղի նման մի բան, — ասաց Ագրիկօլը: — Ճշմարիտ է ինձ շատ ախորժ երևեցաւ, որ այդ գեղեցիկ օրիորդը այդպէս սիրելի կերպով ցոյց տուեց ինձ իր շնորհակալութիւնը: Ես ուրախացայ, որ գտայ նորա շնիկը, և շատ երջանիկ համարումեմ ինձ, որ կարող եմ ընծայել քեզ այս ծաղիկը, եթէ այդ մի բանի տեղ անցանումէր քո առաջևը.... այսօր շատ բարեյաջող օր էր իմ համար:

Մայեօն, դողդողալով զարմացքից, սաստիկ ամբոխմունքից և երջանկութենից, վեր առեց ծաղիկը, մինչ երիտասարդ դարբինը լուանումէր ձեռքերը, որ այնքան կեղտոտած էին երկաթի խարտածքով և ածուխի ծուխից, որ լուացարանի միջի մաքուր ջուրը մի րոպէում սևացաւ բոլորովին: Աչքերով ցոյց տալով ջրի այսպիսի յանկարծական կերպարանափոխութեան վրայ, նա ժպիտը բերնին ասաց աղջկանը մեղմ ձայնով, «ահա դիւրագին թանաք մեր համար, որ սիրումենք թուղթ ապականել...: Երեկ աւարտեցի ես ոտանաւորս և շատ տժգոհ չեմ: Յետոյ կը կարդամ քեզ»:

Ագրիկօլը այս ասելով սրբեց ձեռքերը ուղղակի իր հանդերձի վրայ, իսկ Մայեօն լուացարանը դրեց կոմմօդի վրայ և նորա եզրումը դրեց զգուշութեամբ իր փառահեղ ծաղիկը:

— Դու չես կարող սրբիչ խնդրել ինձանից, — ասաց Ֆրանսիսկայն, վեր քարշելով թիկունքը. ինչպէս կարելի է ձեռքերը սրբել հանդերձով!

«Ի՞նչ կայ. իմ հանդերձը ամբողջ օրը խորովւումէ քուրայի առաջևը, երբեք վատ չէ երեկոյեան ժամանակ մի փոքր զովանալ: Բայց ես շատ անհնազանդ եմ մայրիկ, այնպէս չէ՞: Մի լաւ յանդիմանիր ինձ!... եթէ միայն չ՚ցաւիս.... ինչ բանի ես սպասում»:

Այս խօսքերի պատասխանի փոխանակ, Ֆրանսիսկայն երկու ձեռքով գրկեց որդու գլուխը, որ գեղեցիկ ցոյց էր տալիս իր գծագրութեան վրայ մաքուր սրտաբացութիւն, վճռականութիւն և անսովոր խելք ու միտք, հպարտ հպարտ նայեցաւ նորա վրայ և յետոյ մի քանի անգամ համբուրեց նորա ճակատը:

— Նստիր այժմ.... դու և ամենայն Աստուծոյ օրը կանգնումես քուրայիդ առաջևը, իսկ այժմ գիշեր է արդէն:

«Դարձեալ քո աթոռը դրել ես.... մեր ամենօրվայ վէճը դարձեալ կը սկսանի. խնդրեմ վեր առ այս տեղից. ինձ և հասարակ աթոռի վրայ ևս լաւ է...»:

Դատարկ ես խօսում. այդ իմ աթոռի վրայ առաւել լաւ կը հանգստանաս քո ծանր աշխատութենից յետոյ:

«Աստուած իմ, այս ինչ անտանելի բռնաւորութիւն է, Մայեօ», ուրախ ուրախ ասաց Ագրիկօլը նստելով, «բայց պիտոյ է ճշմարիտը ասել ես զուր տեղը կոտրատվումեմ, ինձ շատ հանգիստ է նստել քո աթոռի վերայ....»

Ֆրանսիսկա Բօդուէնը, կանգնելով սեղանի մի կողմից, կտրումէր մի հացի պատառ իւր որդու համար, միւս կողմից Մայեօն, առնելով շիշը, գինի էր լցնում արծաթեայ բաժակի մէջ: Շատ սրտաշարժ բան էր տեսանել, թէ ինչ ջերմեռանդութեամբ այս երկու կանայքը աշխատումէին սպասաւորել իւրեանց սիրական Ագրիկօլին:

«Իսկ դու չ՚կամի՞ս ընթրիք ուտել իմ հետ», հարց արեց Ագրիկօլը Մայեօից:

— Ո՛չ, շնորհակալ եմ, Ագրիկօլ, — պատասխանեց խեղճ աղջիկը, աչքերը կորացնելով, — ես շատ ժամանակ չէ, որ ճաշ կերայ:

«Այս ձևի համար միայն հրաւիրեցի քեզ, ես գիտեմ, որ դու ունիս քո առանձին բնաւորութիւնը, դու երբեք չես համաձայնում միասին ուտել մեր հետ.... դու երևի նմանումես իմ մօրը, որ միշտ միայն է ուտում: Նա մտածումէ, որպէս թէ այս կերպով ես չեմ հասկանում, թէ ինչ նպատակի համար լինումէր այդ, և որ նա համարեա թէ ոչինչ բան չէ պատրաստում իւր համար»:

— Ամենևին ո՛չ, սիրական, ինձ, իմ առողջութեան համար անպատճառ հարկաւոր է վաղ ճաշ ուտել...: Ի՞նչպէս է, լա՞ւ է կերակուրը:

«Լա՛ւ.... մի խօսքով շատ հիանալի է.... Մեռլիւշ շողգամո՞վ.... ես սաստիկ սիրումեմ այդ կերակուրը: Ես ծնած եմ ձկնորս լինելու համար»:

Թէպէտև այս կերակուրը անհամ, և մի փոքր այրած, բոլորովին ախորժ չէր սոված Ագրիկօլին, բայց նա, իւր բարեսրտութենովը, ցոյց էր տալիս որպէս թէ ուտումէ մի առանձին բերկրութեամբ, նա գիտէր, որ նորա ծերունի մայրը միշտ ուրախանումէր, երբ նկատումէր, որ իւր որդին յօժարակամ պահումէ պահքը: Ֆրանսիսկայն ուրախութեամբ ասաց.

— Այդ յայտնի է, որ ախորժելով ուտումես իմ որդի: Ես գալոց ուրբաթը և շաբաթը դարձեալ կը պատրաստեմ այդ կերակուրը:

«Շնորհակալ եմ մայրիկ.... միայն երկու օր միմեանց քամակից մի եփիր.... ապա թէ ո՛չ ձանձրացնումէ...: Առաւել լաւ է խօսենք այն բանի վերայ, թէ եգուց որ կիւրակէ է ինչ պիտոյ է առնենք.... Մեզ զիարդ և իցէ հարկաւոր է եգուց մի փոքր ուրախ անցուցանել ժամանակը...: Ես նկատումեմ քանի օր է ահա, որ դու, մայրիկ, կարծես վհատած ես.... իսկ այդ բանը իմ սրտիս

յարմար չէ...: Միշտ թւումէ որպէս թէ դու բարկացած ես իմ վերայ»:

— Քո վերայ, իմ սիրական?... դու հնազանդ որդի...:

«Լաւ է, լաւ է, մայրիկ, եթէ դու ուրախ ես և երջանիկ, ուրեմն ապացուցի՛ր ինձ այդ.... գնանք էգուց զուարճանալու: Գուցէ և մեր Մայեօն կը գայ մեր հետ, ինչպէս անցեալ անգամ», ասաց Ագրիկօլը գլուխ տալով խեղճ աղջկանը:

Մայեօն կարմրատակեցաւ, աչքերը կորացուց, նորա երեսը ընդունեց վշտահար կերպարանք և ոչ մի խօսք ևս չպատասխանեց:

— Դու գիտես իմ սիրական, որ ես ամբողջ օրը պէտք է եկեղեցումը լինիմ, — ասաց Ֆրանսիսկայն իւր որդուն:

«Ուրեմն, գոնէ երեկոյեան...: Թէատրոնի մասին աւելորդ է ես առաջարկութիւն անել, ես գիտեմ, որ չես գնալու. բայց ասումեն կայ մի ձեռնածու որ ցոյց է տալիս զանազան զարմանալի բաներ»:

— Շնորհակալ եմ, որդի», այդ ևս թէատրոն է....:

«Ներէք է մայրիկ այդ արդէն չափից դուրս է.... այդպիսի խստութիւն...»:

— Ես, իմ սիրական, չեմ խլում ոչ ոքի ազատութիւնը.... ով ինչ կամի, թող անէ...:

«Այդ ճշմարիտ է, ներիր մայրիկ: Բայց եթէ լաւ լինի եղանակը, երթանք ճեմելեք զբօսանքի համար. կը հրաւիրենք մեր հետ և բարի Մայեօն, նա արդէն երեք ամիս է, որ մեր հետ ոչինչ տեղ չէ գնացել.... իսկ առանց մեզ ևս առաւել»:

Ո՛չ, գնա ինքդ միայն, սիրական, — ասաց Ֆրանսիսկայն — ուրախացի՛ր գոնէ կիւրակէ օրումը:

«Մայեօ, օգնիր ինձ մորս համոզելու»:

— Դու գիտես, Ագրիկօլ, — պատասխանեց աղջիկը, աչքերը կորացնելով, — որ ինձ անհնար է ման գալ քո հետ կամ քո մօր հետ:

«Ի՞նչ պատճառաւ, ասա խնդրեմ», ուրախ ուրախ հարց արեց Ագրիկօլը:

Պատանի աղջիկը տխուր կերպով ժպտեցաւ և պատասխանեց, — Այն պատճառաւ, որ ես չ՚կամիմ, որ դու իմ պատճառաւ հանդիպէիր անախորժ իրողութենների:

«Ա՛հ, մեղայ!... մեղայ!... սիրական Մայեօ», գանչեց երիտասարդ դարբինը. զարկելով իւր ճակատին ճշմարիտ ատելութեամբ դէպ ի իւր մոռացկոտութիւնը:

Ահա թէ ինչ բանի վերայ ակնարկումէր խեղճ Մայեօն. Նա երբեմն ման էր գալիս Ագրիկօլի և նորա մօր հետ, բայց շատ հազիւ. պատճառ, նա միշտ զգուշանումէր ուրիշին ծանրութիւն լինե-

լուց: Այդ մի իսկական տօն էր խեղճ աղջկայ համար: Նա շատ գիշերներ չէր քնում, շատ օրեր անցուցանումէր առանց կերակրի, որ կարողանայ մի հասարակօրէն գլխարկ գնել իւր համար և մի որպիսի և իցէ Թաշկինակ պարանոցի վերայ, որպէս զի ամօթ չ՚լինի Ագրիկօլին և նորա մօրը իւր հետ ման գալու: Այս հինգ կամ վեց անգամի զբօսանքը այն մարդու հետ, որին իւր սրտի խորքիցը պաշտումէր, նորա կեանքի միջի մի միայն երջանիկ օրերն էին:

Վերջին անգամը մի յանդուգն մարդ զարկվեցաւ նորա հետ այնպէս սաստիկ, որ խեղճ աղջիկը գանչեց ցաւիցը, իսկ յանդուգն մարդը ասաց, — որ սատանան առնուր քեզ անիծած սապատող!

Ագրիկօլը, իւր հօր նման ունէր համբերող բարութիւն, որ զօրութիւնը և անվախութիւնը տալիս են ազնիւ հոգիների. բայց նա չէր դիմանում, եթէ հարկաւոր էր պատժել մի որպիսի և իցէ ցածութիւն և զրկանք: Գրգռված չարութենից և յանդգնութենից այս մարդու, որ հաւասար էր նորան և տարիքով և հասակով և մարմնի ամրութեամբ, Ագրիկօլը արձակեց իւր ձեռքը մօր ձեռքից և երկու սաստիկ և հնչող ապտակ տուեց այս անպիտան մարդու երեսին, այնպիսի ապտակ, որ միմիայն դարբնի կարող ձեռքը երբ և իցէ տուած էր մի մարդու երեսի: Յանդուգն մարդը մի և նոյն կերպով կամէր ահա պատասխանել, բայց Ագրիկօլը կրկնեց իւր խրատը, առաւել զուարճութիւն պատճառելու համար շրջապատող ամբոխին, և լիրբ մարդը անյայտացաւ լսելով ամբոխի բարձրաձայն ծիծաղը և արհամարհանքը: Այս իրողութեան վերայ ահա մտածումէր Մայեօն, ասելով, թէ չ՚կամէր դուրս գնալ Ագրիկօլի հետ միասին, որպէս զի չ՚ենթարկէ նորան զանազան անախորժութենների: կարելի է երևակայել, թէ որքան ցաւումէր բարի Ագրիկօլը, որ յիշեցուց Մայեօին այս անախորժ իրողութիւնը. իսկ այս բանը խեղճ Մայեօի համար առաւել ևս ծանր էր, քան որ կարող էր կարծել Ագրիկօլը. պատճառ խեղճ աղջիկը պաշտումէր նորան և իւր ծիծաղելի տգեղութեամբ, թէ և անմեղութեամբ, պատճառ էր եղել այս անախորժ դիպուածին:

Ագրիկօլը, իւր զօրութեան և վճռականութեան հետ, ունէր և երեխայական զգացողութիւն: Երբ նա լաւ մտածեց, թէ ինչ աստիճանի ծանր պիտոյ է լինի Մայեօի համար այս յիշատակութիւնը, արտասուքը փայլեցան աչքերում, նա եղբայրաբար պարզեց իւր ձեռքը դէպ ի նա և ասաց, մի բարկանար, ի սէր Աստուծոյ, իմ յիմարութեան վերայ.... գրկախառնիր ինձ!...:

Եւ Ագրիկօլը երկու անգամ համբուրեց Մայեօի գունատ և վատուժ Թշերը: Այս բարեկամական գրկախառնութեան միջոցին խեղճ աղջկայ շրթունքը սպիտակացան և նորա սիրտը այնպէս սաստիկ զար-

կեց, որ նա հարկադրվեցաւ բռնել սեղանից։ «Եւ այսպէս դու ներումես ինձ, Մայեօ, այնպէս չէ՞», ասաց Ագրիկօլը։

— Ո՛հ, բոլորովին! և ինչ բանով վշտացուցել էիր ինձ, — պատասխանեց աղջիկը, աշխատելով, որքան կարելի է, յաղթել իւր ամբոխմունքին։ — Ներէ՛ր և ինձ, որ ես այսպէս թոյլ եմ։ Բայց ոչինչ կերպով չեմ կարողանում յաղթահարել անախորժ զգացողութեանը, մինչ յիշումեմ այն անցքը. . . . ես այնպէս վախեցայ այն ժամանակ։ Ապա եթէ ամբոխը պաշտպան դուրս գար այն լիրբ մարդուն!

«Այո՛, այդպէս է», ասաց Ֆրանսիսկայն, օգնելով Մայեօին, թէ և ինքը չգիտէր այդ բանը, «ես ծնած օրիցս տեսած չէի այդպիսի երկիւղ. . .»։

— Բայց դու մայրիկ, — ասաց Ագրիկօլը, խօսակցութիւնը փոխելու պատճառով, որովհետև անախորժ էր այդ և իւրեան և Մայեօին, — դու կին ես քաջ զինուորի, Նապոլէոնեան հեծելազօրի, իսկ ճշմարիտը ասել, այնպէս երկչոտ ես, որ ամենևին բանի պէտք չէր. . . ։ Ո՛հ, իմ բարի և քաջ հայր։ Ո՛չ, չկամիմ և մտածել, որ նա կը վերադառնար շուտով. ես ինքս ինձ մոռանումեմ երբ մտածումեմ այդ մասին։

«Շուտ կը վերադառնայ. . . .» ասաց Ֆրանսիսկայն, «բայց դեռ այդ Աստուած գիտէ. ահա արդէն չորս ամիս է, որ նամակ չենք ստանում նորանից»։

— Մի լաւ միտքդ բեր, մայրիկ, նա իւր վերջին նամակումը, որ մի մարդու գրել էր տուած, որովհետև նա իւր զինուորական անկեղծութեամբ ասումէր, որ կարդալ գիտէ ինչպէս և իցէ, բայց գրելու վարպետ չէ. . . . այդ նամակի մէջ նա ասումէր, որ մեք անհանգիստ չլինէինք նորա մասին, թէ նա Յունուարի վերջումը լինելու է Փարիզի մէջ և երեք կամ չորս օր յառաջ ինձ տեղեկութիւն կը տայ, թէ ո՞ր քաղաքադռնից էր գալիս, որպէս զի կարողանայի ես յառաջ գնալ նորան։

«Այդ բոլորը ճշմարիտ է, իմ սիրական, բայց ահա Փետրուարը կոխեց արդէն, բայց նա չէ երևում դեռ ևս»։

— Նշանակումէ մեզ առաւել փոքր ժամանակ էր մնում նորան սպասելու. ես մինչև անգամ մտածումեմ, որ այդ օրերում կը գայ և մեր բարի Գաբրիէլը. գոնէ այդպէս պիտոյ է մտածել նայելով նորա Ամերիկայից գրած վերջին նամակին։ Ի՜նչ երջանկութիւն էր մայրիկ, եթէ յանկարծ դարձեալ հաւաքվէր մեր ամբողջ գերդաստանը։

«Աստուած տայ. . . . ի՞նչ երջանիկ օր կը լինէր իմ համար!»

— Եւ հաւատացէք, որ շուտով կը հասանի այդ օրը. . . . Հօրս սովորութիւնը միշտ այդպէս է, եթէ լուր չկայ. . . . բարի նշան է։

«Լաւ միտքդ է հայրդ, Ագրիկոլ», ասաց Մայեօն։

— Ուղիղը ասել, միայն լաւ յիշումեմ նորա մեծ գտակը և աչա-գին ընչացքը, որոնցից ես սաստիկ վախենումէի։ Միմիայն նորա խաչի կարմիր ժապաւէնը, նշանազգեստի սպիտակ աստառի վերայ, և փայ-լուն թուրի կոթը մանաւանդ մօտեցնումէին ինձ նորան.... այնպէս չէ մայրիկ։ Ի՞նչ պատահեց քեզ. դու լա՞ց ես լինում։

«Ահ, իմ խեղճ Բօդուէն!... ինչ բաներ, ես կարծումեմ, չէ անցել նորա գլխով.... այդպէս հեռի մեզանից.... այդպիսի հա-սակում.... նա արդէն վաթսուն տարեկանից մեծ է....։ Ահ, որ-դեակ, սիրտս ասես թէ կտրտվումէ, մինչ յիշումեմ, որ նա, այս տեղ և ս պիտի տանի կարօտութեններ»։

— Դուք այդ ի՞նչ բան էք ասում մայրիկ։

«Ո՛հ, աչա ես ոչինչ չեմ կարողանում վաստակել»։

— Մի վշտանար, դու որդի ունիս։ Ահա այս սենեակը կը լինի և նորա և քո համար. սեղան նոյնպէս ձեր երկուսի համար ես.... Միայն աչա ինչ բան կայ մայրիկ, որովհետև մեք խօսեցանք տնտե-սութեան վերայ, — յաւելացրեց Ագրիկոլը, առաւել քնքշացնելով իւր ձայնը, որպէս զի չվշտացնէ մօրը, — Թոյլ տուր ինձ ասել մի քանի բան։

Եթէ հայրս և Գաբրիէլը վերադառնան, այն ժամանակ քեզ հարկաւոր չէն այլ ես յատուկ պատարագ ապսպարել և մոմեր տնկել նոցա համար, այնպէս չէ։

Ահա այդ արծաթները կը մնան մեր գրպանումը. և կարող ենք գործ դնել նորանց հօրս համար գինի և թարմ գնելու. իսկ կիւ-րակէ օրերը պանդոկ կը տանենք նորան ճաշի։

Մի մարդ պարկեշտաբար բաղխեց դուռը և կտրեց խօսակցու-թիւնը։

«Ներս մտէք», ասաց Ագրիկոլը։

Բայց փոխանակ ներս մտնելու դուռը ծեծող մարդը մի փոքր բացեց դուռը և բոլորովին կանաչ ներկած ձեռքը ներս կոխած դուռի բաց տեղով գանչումէր Ագրիկոլին։

«Ահ մեր դրացի Լօրիօ՞ն է, ամենալաւ ներկարարը», ասաց Ագրիկոլը, «եղբայր Լօրիօ ներս արի»։

— Անհնարին անհնար է, սիրական, ներկը ասես թէ թափվումէ ինձանից.... ես ներս մտանելով ձեր պատուելի մօր տան յատակը կանաչ կը ներկեմ բոլորովին։

«Առաւել լաւ, այն ժամանակ մարգի նման կը լինի, իսկ ես շատ սիրումեմ մարգ։

— Առանց կատակի, Ագրիկօլ, ինձ անպատճառ հարկաւոր է այժմ իսկ խօսել քո հետ։

«Դարձեալ այն մարդու համար, որ նայումէ մեր տան չորս կողմը? Թող նորան հանգիստ, նա չէ անհանգստացնում մեզ»։

— Ո՛չ, նորա մասին չէ. նա կարծեմ գնաց կամ գո՛նէ մառաղխի քամակից չէ երևում.... բայց բանը դորա վերայ չէ.... Ե՛կ շուտով այս տեղ, ինձ հարկաւոր է խօսել քո հետ շատ երևելի գործի մասին.... որ մի միայն քեզ է վերաբերում, — յաւելացրեց Լօրիօն խորհրդաւոր կերպով։

«Միայն ինձ?» ասաց Ագրիկօլը, վեր կանգնելով զարմացած. «այդ ի՞նչ պիտոյ է լինէր»։

— Գնա՛ նայիր, սիրական, այդ ինչ բան է! — ասաց Ֆրանսիսկայն։

«Իսկոյն կ՛երթամ, մայրիկ, միայն սատանայն առնու ինձ, եթէ մի բան հասկանումեմ»։

Ու դարբինը դուրս գնաց, թողնելով մայրը Մայեօի հետ։

IV.

ՎԵՐԱԴԱՐՁ։

Հինգ րոպէից յետոյ Ագրիկօլը ներս մտաւ. նորա երեսը գունաթափած էր և փոխված, աչքերումը արտասուք, ձեռքերը դողումէին, բայց նորա հայեացքը ցոյց էր տալիս մի անսովոր ուրախութիւն և հրճուանք։ Մի րոպէ մնաց նա դուռի մէջ որպէս թէ ամբոխմունքը թոյլ չտուեց նորան մօրը մօտենալ։ Ֆրանսիսկայի աչքերը այնպէս վատել էին, որ նա չկարողացաւ սկզբումը նկատել փոփոխութիւնը իւր որդու երեսի վերայ։

«Ի՞նչ կայ իմ որդի, ի՞նչ է պատահել», հարց արեց Ագրիկօլից։ Յառաջ քան թէ դարբինը պատասխանել էր, Մայեօն, որ առաւել նկատող էր, գանչեց.

— Աստուած իմ, Ագրիկօլ, ի՞նչ է պատահել քեզ, ինչպէս գունաթափ ես դու?

«Մայրիկ», ասաց այն ժամանակ դարբինը փոխված ձայնով և առանց Մայեօի հարցմունքին պատասխանելու, մայրիկ, դու պիտոյ է նախապատրաստվիս դէպ ի մի հանգամանք, որ քեզ շատ կը զարմացնէ. խոստացիր ինձ չկորուսանել քո հոգու ներկայութիւնը»։

— Դու ի՞նչ կամիս ասել. ինչպէս դողումես. նայի՛ր իմ վերայ, բայց Մայեօն ճշմարիտը ասաց, դու շատ գունաթափ ես։

«Բարի մայրիկ....» և Ագրիկօլը ծունկ չոքած մօր առաջևը և բռնած նորա ձեռքերից շարունակեց, «Հարկաւոր է.... դու չ՚գիտես, բայց....» Դարբինը չ՚կարողացաւ աւարտել իւր խօսքը ուրախական արտասուքը կտրեցին նորանց։

— Դու լաց ես լինում իմ որդի.... բայց, Աստուած իմ, արդեօք ինչ պատահեց. դու ինձ վախեցնումես։

«Վախեցնումեմ! ո՛չ, ո՛չ! ընդհակառակը» ասաց Ագրիկօլը, արտասուքը սրբելով» դու շատ կ՚ուրախանաս. բայց կրկնումեմ, պիտոյ է հոգու ներկայութիւնը չ՚կորուսանել. պատճառ, սաստիկ ուրախութիւնը երբեմն նոյնչափ վնասակար է, որչափ սաստիկ տխրութիւնը»։

— Ի՞նչպէս։

«Ես քեզ ասել էի որ նա կը գայ շուտով»։

— Ք՞ո հայրը! — գանչեց Ֆրանսիսկայն և ելաւ աթոռից։ Բայց նորա զարմանքը, նորա ամբոխմունքը այնպէս սաստիկ էին, որ նա ձեռքը դրեց սրտի վերայ, նորա զարկը հանդարտեցնելու համար.... յետոյ զգաց, որ թուլանումէ։ Որդին բռնեց նորան և օգնեց դարձեալ աթոռը նստելու։ Բոլոր այս անցքի ժամանակ, որ զբաղեցուցել էր Ագրիկօլին իւր մօր հետ, Մայեօն, իւր պարկեշտութենից, հեռի մնաց. բայց, նկատելով, որ Ֆրանսիսկայի դէմքը շատ փոխվեցաւ, նա երկիւղածութեամբ մօտեցաւ օգնելու մտքով։

«Լսիր մայրիկ, արիացիր», ասաց դարբինը, այժմ հարուածը հասուցած է.... իսկ դորանից յետոյ քեզ մնումէ ուրախութիւն, ղուարճանալ հօրս տեսութեամբ»։

— Իմ խեղճ Բօդուէն, տասն և ութն տարի բացակայութենից յետոյ.... ես չեմ կարող հաւատալ այդ բանին, — ասաց Ֆրանսիսկայն, արտասուք թափելով,—ճշմարիտ է արդեօք այդ. ճշմարիտ է։

«Այդ այնպէս ճշմարիտ է, որ, եթէ դու խոստանաս ինձ հանդարտ մնալ, այն ժամանակ կ՚ասեմ քեզ, թէ երբ կարող էիր տեսանել նորան»։

— «Ո՛հ, այնպէս չէ որ շուտով?

«Այո՛.... շուտով»

— Բայց երբ կը գայ։

«Նա ամենայն րոպէ կարող է գալ.... կարող է պատահել և այսօր»։

—-Այսօր!

«Այսպէս ուրեմն, այսօր, մայրիկ.... վերջապէս պիտոյ է քեզ ասել, — նա գալիս է, — նա եկաւ»։

— Նա! նա! Եւ Ֆրանսիսկայն, որ խօսումէր այս բաները քթի տակից, չ՚կարողացաւ աւարտել իւր խօսքը։

«Իսկոյն.... նա ցածումն է. քեզ մօտ գալուց յառաջ, նա խնդրել էր ներկարարից տեղեկութիւն տալ ինձ, որ ես կարողանայի քեզ պատրաստել. պատճառ, իմ քաջ հայրը վախեցել էր, որ մի գուցէ իւր յանկարծական յայտնութիւնը վնասակար լինի քեզ»։

— Ո՛հ, Աստուած իմ։

«Իսկ այժմ», գանչեց դարբինը անչափ ուրախացած, «նա այն տեղ է, նա սպասում է։ Ահ, մայրիկ.... տասն րոպէ է արդէն, որ ես, ինքս ինձ չգիտեմ, սիրտս այնպէս զարկում է, որպէս թէ կամէր դուրս թռչել կուրծքից»։ Եւ վազելով դէպ ի դուռը բացեց նորան։

Դագոբեռը, Րօզի և Բլանշի ձեռքից բռնած երեւեցաւ շեմքի վերայ։ Ֆրանսիսկայն, փոխանակ որ վազէ դէպ ի ամուսնու գիրկը, ընկաւ ծունկի վերայ.... և աղօթում էր։

Իւր հոգին առ Աստուած բարձրացուցած, նա խորին երախտագիտութեամբ շնորհակալ էր լինում նորանից իւր ուխտերը իւր աղօթքները լսածի և իւր ջերմեռանդ նուիրագործութեանների վարձատրվելու համար։

Այս տեսարանի մէջ ներգործող անձինքը մի վայրկեան ժամանակ մնացին լուռ և անշարժ։

Ագրիկօլը, պատուելուց և քաղաքավարութենից, որ մեծ նեղութեամբ դիմամարտում էին նորա մէջ քնքուշ զգացմունքների յորձանքների հետ, չէր համարձակվում վազել դէպ ի Դագոբեռի վիզը. նա, հազիւ հազ սանձվող անհամբերութեամբ, սպասում էր մօր աղօթքի վերջանալուն։ Զինուորը մի և նոյն զգում էր իւր որդու հետ. երկուքը հասկացան միմեանց, առաջին նայեցուածքը որ հայր և որդի ձգեցին միմեանց վերայ, պատկերացուց նոցա քնքշութիւնը, նոցա երկիւղածութիւնը դէպ ի այս պատուելի կինը, որ միջամուխ եղած լինելով կրօնական զգացմունքների մէջ մոռանում էր արարածքը արարչի համար։

Րօզը և Բլանշը, զարմացած, ամբոխված, նայում էին յարգանքով այս ծունր դնող կնոջ վերայ, այն միջոցին, մինչ Մայեօն, աննկատելի կերպով թափելով ուրախական արտասուք Ագրիկօլի բաղդաւորութեան համար, հեռացել էր տան ամենախաւար անկիւնը, զգալով, որ ինքը աւելորդ էր և շատ բնականաբար.... մոռացված այս ընտանեկան տեսարանի մէջ։

Ֆրանսիսկայն վերկացաւ և մի քայլ արեց դէպ ի իւր ամուսինը, որ ընդունում էր նորան իւր գիրկը։

Կոխեց փառահեղ լռութեան րոպէն։

Դագոբեռը և Ֆրանսիսկայն մի խօսք ևս չասացին միմեանց. լսվում էին միայն հառաչանք, որ ընդհատվում էին հեկեկանքով։ Այն միջոցին մինչ երկու ծերունիքը բարձրացուցին իւրեանց գլուխը, ար-

դէն նոցա երեսները հանգիստ էին և հեզ. պատճառ, պարզ և մաքուր զգացմունքների լռութիւնը երբէք չունի իւր հետ յարակից սաստիկ և տենդային փոփոխութիւն երեսի։

«Իմ զաւակներ», ասաց զինուորը շարժված ձայնով ցոյց տալով որբերին իւր կնոջ վերայ, որ, առաջին ամբոխմունքի անցանելուց յետոյ, նայումէր նոցա վերայ զարմացած, «դա իմ բարի և օրինաւոր կինն է. . . . նա, գեներալ Սիմոնի զաւակների համար, նոյնը կը լինի, ինչ որ ես էի»։

— Ուրեմն տիրուհի, դուք կը վարվիք մեր հետ, որպէս ձեր սեպհական զաւակների հետ, — ասաց Բօզը, մօտենալով Ֆրանսիսկային Բլանշի հետ միասին։

Գեներալ Սիմոնի դստերքը. . . .» գանչեց Դագոբեռի կինը, առաւել և առաւել զարմանալով։

— Այո, բարի Ֆրանսիսկա, այդ նոքա են, և ես հեռի տեղից բերեցի նորանց ոչ առանց մեծ դժուարութենների։ Իւր ժամանակին ես բոլոր բանը կը պատմեմ քեզ։

«Խեղճ զաւակներ, կարելի է կարծել, որ դոքա երկու հրեշտակներ էին!» ասաց Ֆրանսիսկայն, որ նայումէր որբերի վերայ կարեկցութեամբ և զարմանքով։

— Այժմ. . . . մեր կարգն է, — ասաց Դագոբեռը դառնալով դէպ ի որդին։

«Վերջապէս!» գանչեց Ագրիկօլը։

Պիտոյ է հրաժարվիլ Դագոբեռի և Ագրիկօլի կատաղի ուրախութիւնը նկարագրելուց, նոցա գրկախառնութեան անսանձ քնքշութենից, որ ընդհատումէր զինուորը զննելով իւր որդին, երբ առաւել լաւ զննելու համար նորա այրական և բաց երեսը, նորա ամուր և կանոնաւոր իրանը նա թիկնը տալիս էր դարբնի լայն ուսերի վերայ, յետոյ դարձեալ պահումէր նորան իւր կուրծքի վերայ զուարճանալով նորա գեղեցկութեան, փառաւոր կերպարանքի և բարի երեսի վերայ։

Մայեօն, բոլոր այս ժամանակը մնալով սենեակի անկիւնումը, ուրախանումէր Ագրիկօլի երջանկութեան վերայ. բայց երկիւղ կրելով, որ իւր մինչև այն ժամանակ աննկատելի մնացած ներկայութիւնը անպարկեշտութիւն չհամարվի։ Նա կը ցանկանար մի կերպով առանց նկատվելու դուրս գնալ, բայց անհնար էր կատարել այդ ցանկութիւնը, Դագոբեռը իւր որդու հետ համարեա թէ փակել էին դուռը, այդ պատճառով և մնաց նա չկարողանալով հեռացնել իւր աչքերը Բօզի և Բլանշի գեղեցիկ երեսներից։

Մայեօին չէր պատահած երբէք տեսանել այսպիսի գեղեցիկ բան. իսկ երկու քրոջ չափազանց միմեանց նմանութիւնը առաւել ևս յաւելացնումէր նորա զարմանքը. բաց ի սորանից, նոցա թուխ և պարզ հանդերձը ցոյց էր տալիս նոցա չքաւորութիւնը, որով առաւել ևս տրամադրումէին որբերը Մայեօի սիրտը դէպ ի իւրեանց։

«Խեղճ զաւակներ, ցուրտ է նոցա. նոցա գեղեցիկ և փոքրիկ ձեռքերը սառույց են դարձել բոլորովին. մինչ հնոցը բոլորովին մարել է», ասաց Ֆրանսիսկայն։

Եւ այս ասելով աշխատումէր նա ջերմացնել իւր ձեռքերի մէջ որբերի ձեռքերը, այն միջոցին մինչ Դագոբեռը իւր որդու հետ միասին մտել էին խորին քնքշութեան մէջ, որ այնքան երկար ժամանակ յետ էին պահած։

Հազիւ թէ Ֆրանսիսկայն բերանից հանել էր թէ հնոցը մարել է, մինչ Մայեօն, որ շտապումէր իւր սպասաւորութեամբ ներել իւր, գուցէ թէ, զղուեցուցիչ ներկայութիւնը, վազեց դէպ ի փոքրիկ պահարանը, ուր կային ածուխ և փայտ, և հաւաքելով մանր կտորներ, նստաւ ծունկի վերայ հնոցի առաջևը և օգնութեամբ մի քանի նրակոտ ածուխների, որ մնացել էին մոխրի տակ, կրակ վառեց, յետոյ ջուր լցնելով ղահվինոցի մէջ դրեց հնոցի վերայ, մտածելով, որ պատանի օրիորդների համար անպատճառ հարկաւոր կը լինի ջերմ խմելիք։

Մայեօն պարապումէր իւր գործովը այնպէս հանդարտ և շուտ, որ Ֆրանսիսկայն, բոլորովին զբաղված Ռօզի և Բլանշի հետ, նկատեց հնոցի միջի բոցը մի միայն նորա պատճառած լուսաւորութենից և ախորժելի ջերմութենից, իսկ յետոյ եփվող ջրի աղաղակից։

Կրակի երևելը չզարմացուց այն րոպէին Դագոբեռի կնոջը, որ բոլորովին ընկած էր մտածմունքի մէջ այն մասին, թէ ո՞ւր տեղաւորէ օրիորդքը. պատճառ, ինչպէս յայտնի է, զինուորը ամենևին հոգաբարձութիւն չէր արած իւրեանց գալը իմաց տալու համար։

Յանկարծ երեք կամ չորս անգամ լսվեցաւ շան հաչել դուռի տակին։

«Այդ իմ Տխուրն է», ասաց Դագոբեռը, գնալով ներս թողուլ իւր շունը, նա կամի ներս մտանել, նոյնպէս իւր կարգով գերդաստանի հետ ծանօթանալու համար»։

Տխուրը ներս մտաւ ոստոստելով և մի վայրկեանում, որպէս թէ իւր տանն էր, ինչպէս ասումէ հասարակ ժողովուրդը, նա, քոբելով իւր երկայն դունչը Դագոբեռի ձեռքերին, մօտեննումէր կարգով Ռօզին, Բլանշին, Ֆրանսիսկային և Ագրիկոլին. յետոյ տեսանելով որ սակաւ են ուշադրութիւն դարձուցանում իւր վերայ և

նկատելով Մայեօրին, որ սենեակի խաւար անկիւնումը կանգնած էր խեղճ խեղճ, նա կատարեց միւս հասարակաց առածը «մեր բարեկամների բարեկամքը մեր բարեկամք են» այս պատճառով Տխուրը սկսեց լիզել պատանի աղջկայ ձեռքերը, որ այս միջոցին բոլորովին մոռացված էր։

Մի օտարոտի երախտագիտութեամբ այս քծնելը շարժեց Մայեօի մինչև անգամ արտասուքը, նա քանի մի անգամ շփեց շան խելացի գլուխը իւր երկայն, վատուժ և գունաթափ ձեռքով. յետոյ տեսանելով, որ ինքը ամենևին հարկաւոր չէ այնուհետև, պատճառ կատարած էր բոլոր մանր մունր սպասաւորութիւնքը, որ ներված համարումէր ինքեան, նա վեր առեց փառաւոր ծաղիկը, որ Ագրիկօլը ընծայել էր, կամաց բացեց դուռը և դուրս եկաւ այնպէս, որ ոչ ոք չնկատեց նորան։

Քնքուշ զգացողութիւններ փոփոխակի Թափելուց յետոյ, Դագոբեռը, նորա կինը և որդին մտան իրական բաների մէջ։

«Խեղճ Փրանսիսկա՛» ասաց զինուորը ցոյց տալով Ռօզին և Բլանշին իւր կնոջ վերայ, «նա ամենևին չէր սպասում այսպիսի անակնկալ ուրախութեան»։

— Ես ցաւումեմ միայն սիրական, — պատասխանեց Փրանսիսկայն, — որ գեներալ Սիմոնի զաւակների համար այս աղքատին սենեակից առաւել լաւ բնակութիւն չկայ . . . պատճառ Ագրիկօլի դըստիկոնի հետ. . .

«Այս սենեակը մեր ապարանքն է, բայց կայ և դորանից շատ լաւը. բայց, հանգարտիր, խեղճ օրիորդքը սովոր են ոչ ոքի ծանրութիւն չլինել . . . եգուց ես ձեռքերս որդւոյս հետ կապած կերթամ նոցա հետ միասին և կ'ապացուցանեմ քեզ, որ մեր երկուսիցը ո՛չ նա այլ ես կը քայլեմ ուղիղ և հպարտ։ Մեք կը գտանենք Հարդի պարոնի գործարանում գեներալ Սիմոնի հօրը և այն տեղ կը խօսենք գործերի վերայ»։

— Եգուց հայրիկ, — ասաց Ագրիկօլը Դագոբեռին, — դուք չէք գտանելու Հարդի պարոնի գործարանում ոչ մարշալ Սիմոնի հօրը. . . .

«Ինչէ՛ր ես խօսում բարեկամ», ասաց շուտով Դագոբեռը, «մարշալ?»

— Անտարակոյս՛ 1830 Թուականին գեներալ Սիմոնի բարեկամքը, հարկադրեցին ընդունել նորա պատուանունը և աստիճանը, որ շնորհել էր կայսրը Լինի պատերազմից յետոյ։

«Միթէ» գանչեց Դագոբեռը սաստիկ ամբոխված, «բայց ինչ զարմանք այդ չէ պիտոյ ինձ զարմացնէ . . . պատճառ այդ բոլոր բա-

ներից յետոյ դա միմիայն արդարադատութիւն էր, և եթէ կայսրը մի բան ասել էր, ուրեմն ուրիշներին ոչինչ չէ մնում քան թէ կրկնել նորա ասածը. բայց այդ բոլորը մին է, — այդ ուղղակէս յարաբերութիւն ունի դէպ ի իմ սիրտը, այդ բանը շարժումէ ինձ»։

Յետոյ դառնալով դէպ ի մատաղահաս օրիորդքը ասաց, «լսո՞ւմէք իմ զաւակներ, դուք մտանումէք Փարիզ, որպէս դստերք դուքսի և մարշալի։ Ճշմարիտ է այդ ոչ ոք չէ գուշակելու տեսնելով ձեզ այսպիսի պարկեշտ օթևանում, իմ խեղճ դքսուհիք. բայց համբերութիւն, ամենայն բան կը շինվի, գեներալ Սիմոնի հայրը, երևի թէ շատ ուրախացաւ լսելով, որ դարձուցել են իւր որդուն նորա աստիճանը, այնպէս չէ՞ իմ որդի։

— Նա ասաց մեզ, թէ բոլոր աշխարհի երեսի աստիճանքը և պատուանունքը կը տար մի միայն այն բանի փոխարէն, որ կարողանար տեսնել իւր որդուն. պատճառ գեներալի բացակայութեան ժամանակ յաջողեցաւ նորա բարեկամներին խնդրել և ստանալ այդ իրաւադատութիւնը։ Ամենայն րոպէ սպասումեն մարշալ Սիմոնի վերադարձին, որովհետև նորա Հնդկաստանից գրած վերջին նամակները յայտնումէին նորա մօտակայ գալուստը։

Այս խօսքերը խօսվելու ժամանակ Ռօզը և Բլանշը նայեցան միմեանց վերայ. նոցա աչքերը լցվեցան ուրախութեան արտասուքով։

«Գոհանալով Աստուծուց, մեք, երեխաների հետ միասին, յոյս ունինք նորա վերադարձին։ Բայց, ինչ պատճառով էգուց գործարանում չեն լինելու ո՛չ Պ. Հարդին ո՛չ մարշալ Սիմոնի հայրը»։

— Տասն օր յառաջ նոքա գնացին տեսնել և ուսանել մի անգլիական գործարան, որ հաստատված էր հարաւային Դեպարտամենտներից մինի մէջ, բայց նոքա եթէ ո՛չ այսօր, էգուց կը գան։

«Այդ լաւ չէ և խանգարումէ իմ մտածողութիւնքը, ինձ հարկաւոր էր տեսնել գեներալի հայրը, շատ հարկաւոր բաների վերայ խօսելու մասին. բայց այդ ոչինչ, արդէն յայտնի է ուր և ում գրելը այս պատճառաւ մեք էգուց կը ծանուցանենք նորան թոռների գալուստը։ Այս բանին սպասելով իմ զաւակներ», ասաց զինուորը դառնալով դէպ ի Ռօզը և Բլանշը, «իմ բարի կինը կը տայ ձեզ իւր մահիճը, և չուառական կեանքի մէջ պիտոյ է բաւականանալ ամենայն գտնված բանովը, մանաւանդ, խեղճ զաւակունք, ձեզ համար այս տեղ վատ չէ լինելու քան թէ ճանապարհում»։

— Դու գիտես, որ մեզ միշտ լաւ է եթէ միասին էինք քո, կամ քո կնոջ հետ, — ասաց Ռօզը։ «Բաց ի դորանից մեք մտածումենք Փարիզի մէջ միայն բարեբաղդութեան վերայ. պատճառ, շուտով կը տեսանենք մեր հայրը.... շարունակեց Բլանշը։

— Իսկ այդ յոյսի հետ կը գտնուի և համբերութիւն, ես այդ գիտեմ ասաց Դագոբեռը բայց մի և նոյն է. ամենայն բանի մէջ որ ինչ սպասումէիք Փարիզից. . . . դուք պիտոյ է շատ զարմանաք իմ երեխայք: Պիտոյ է խոստովանել, որ նայելով այս սկզբանը դուք չէք կարող անուանել սորան ոսկի քաղաք ինչպէս կարծումէիք նորա մասին. բայց համբերեցէք. համբերեցէք և կը տեսանէք որ Փարիզը այնքան վատ չէ ինչպէս երևումէր առաջին անգամ:

«Բաց ի սորանից», ուրախութենով ասաց Ագրիկօլը, «գեներալ Սիմօնի գալը, Փարիզը կը դարցուցանէ դէպ ի ճշմարիտ ոսկի քաղաք»:

— Ճ՛շմարիտ էք ասում, — Պարօն Ագրիկօլ, — ժպտելով ասաց Բօզը, — դուք իմացաք մեր միտքը:

«Ի՞նչպէս տիրուհի, դուք գիտէք իմ անո՞ւնը»:

— Ը՛նտարակոյս. Պարօն Ագրիկօլ, մեք միշտ խօսումէինք Դագոբեռի հետ ձեր մասին և վերջին ժամանակներումը և Գաբրիէլի հետ ես. — շարունակեց Բլանշը:

— Ը՛հ Աստուած իմ, այդպէս. — ասաց Դագոբեռը ցոյց տալով որբերի վերայ, — մեք եթէ երկու շաբաթ պատմելու լինինք ունինք ձեզ պատմելու բան նորա մասին, և բաց ի դորանից, թէ ինչպէս պատահեցանք մեք Գաբրիէլի հետ: Ամենայն ինչ որ կարող իմ ասել նորա մասին. . . . այս է, որ նա իւր տեղումը արժէ իմ որդուն և նոքա երկուսը արժէ որ սիրէն միմեանց իբրև եղբարք. . . . բարի և գեղեցիկ կին, — ասաց փղձկած Դագոբեռը, — քո գործը գեղեցիկ և ամենագեղեցիկ է: Դու այդպէս աղքատ, և այսու ամենայնիւ ընդունել ես այդ անբաղդ մանուկը, սնուցել ես նորան քո որդու հետ:

«Իմ սիրելի այդպէս մի խօսիր այդ շատ հասարակ բան է»:

— Ճ՛շմարիտ է քո ասածը, բայց մի ժամանակ ես ես կ՚աշխատիմ փոխարէն հատուցանել քեզ այս բանին. կը գայ կարգը, բայց մինչ դեռ սպասումէինք նորան մեք եգուց առաւօտ կը տեսանենք Գաբրիէլը:

«Իմ բարի եղբայրը նոյնպէս եկել է» գանչեց երկաթագործը, «թող այսուհետև ասեն նոյնպէս, թէ բաղդաւորութեան համար նշանակած օրեր չեն լինում. դուք ինչպէս հանդիպեցաք նորան հայրիկ»:

— Ի՞նչպէս, դո՞ւք, միշտ դո՞ւք, այդ ինչ է նշանակում սիրելի, ասա ինձ, արդեօք նորա համար չէ՞ր, որ դու գիտէիր տաղեր յարմարել. ինքդ քեզ այնպիսի մեծ մարդ ես կարծում, որ չես կարող ինձ [illegible] ասել:

«Հայրիկ. . .»: — Այն պատճառաւ դու պիտոյ է ինձ միշտ [illegible] և [illegible] ասես, որ դորանով կարողանաս ինձ վարձահատոյց լինել, այն [illegible] փոխանակ, որ տասն և ութն տարի չես ասել: Ինչ որ

վերաբերումէ Գաբրիէլին, ես իսկոյն կը պատմեմ քեզ նորա մասին, թէ ուր և երբ պատահեցանք միմեանց, բայց եթէ դու մտածումես քնել, ուրեմն սխալվումես. դու ինձ հետ կը բաժանես քո սենեակը և կը սկսենք խօսել։ Ցխուրը միայն կը մնայ դուռի տակ. . . . Նա սովոր է մնալ երեխաների հետ միասին։ «Աստուած իմ. իմ բարեկամ, ես ոչինչ բանի վերայ չեմ մտածում. բայց այսպէս ուշ ժամանակ, եթէ դու և օրիորդ տիկինները կամենումեն ընթրիք ուտել. . . . այն ժամանակ Ագրիկօլը մի բան կը բերէ պանդոկից»։ — Ի՞նչ կամենումէք, երեխայքս։ — «Ոչինչ. շնորհակալ ենք Դագոբեռ, մեք սոված չենք, ոչինչ չ՚կամինք։ — Բայց այսու ամենայնիւ, որ ջերմանաք դուք, սիրելի դստերք, խմեցէք շաքարով գինեխառն ջերմ ջուր — ասաց Ֆրանսիսկայն — դժբաղդաբար աւելի ոչինչ չունիմ։ —։

«Դու ճշմարիտ ես ասում Ֆրանսիսկա, այս սիրական զաւակները վաստակած են, դու տեղ շինիր նորանց համար, որ քնեն. այն միջոցին ես իմ որդու հետ կ՚երթամ նորա սենեակը, և էգուց առաւօտ մինչ դեռ Ռօզը և Բլանշը չեն լինում զարթած, ես կը գամ խօսելու քո մօտ և Ագրիկօլը կը հանգստանայ»։ Այս միջոցին մի մարդ սաստիկ բաղխումէր դուռը։ — Այդ բարի Մայեօն է, եկել է հարցանել, արդեօք հարկաւոր չէր ինքը — ասաց Ագրիկօլը։ «Բայց կարծես նա այս տեղ էր, երբ իմ ամուսինը ներս մտաւ», պատասխանեց Ֆրանսիսկայն։ — Ճշմարիտ է քո ասածը մայրիկ. խեղճ աղջիկը, նա թագուն դուրս գնաց մեր տնից վախեցածիցը, որ մեզ անհանգիստ չ՚առնէ իւր ներկայութենով. նա այնպէս պարկեշտ է, բայց այս նա չէ, որ սաստիկ բաղխումէ։ «Ուրեմն նայիր, Ագրիկօլ, այն ո՞վ է», ասաց Ֆրանսիսկայն։ Յառաջ քան թէ երկաթագործը հասել էր դուռին, դուռը բացվեցաւ և մի պատշաճաւոր հագնված մարդ պատուելի դէմքով մի քանի քայլ յառաջ խաղաց դէպ ի տան մէջը, ձգեց ամենայն բանի վերայ մի հարևանցի հայեացք, մի վայրկեան դադարեցուցած Ռօզի և Բլանշի վերայ։ «Պարո՛ն, թոյլ տուեցէք ինձ ասել ձեզ», ասաց Ագրիկօլը յառաջ գնալով նորա հանդէպ, «որ, դուռը բաղխած, դուք կարող էիք սպասել մինչև ձեզ ներս կը հրաւիրէին, վերջապէս. ի՞նչ կամիք», — Ներեցէք ինձ պարո՛ն — ասաց շատ քաղաքավարի կերպով այս մարդը, որ շատ ցած էր խօսում այն պատճառաւ, որ երկար մնայ տան մէջ, միլլիոն անգամ ներողութիւն եմ խնդրում ձեզանից, ես յուսահատված եմ իմ անպարկեշտութենից, ինձ շատ զգալի է։ «Շատ հաւատումեմ պարոն», ասաց Ագրիկօլը անհամբերութենով, «բայց ի՞նչ կամիք դուք»։ — Պարո՛ն, արդեօք այս տեղ չէ՞ բնակվում կար կարող կուզ Սօլիվօ աղջիկը։ «Ո՛չ պարոն, նա բնակվումէ առաւել վերևում», ասաց Ագրիկօլը։ — Ա՛հ ապ-

տուած իմ, — ասաց քաղաքավարի մարդը նորոգելով իւր ներողութիւն խնդրելը, — ես ամաչումեմ իմ անպարկեշտութենից.... ես մտանելով այս տեղ կարծեցի, թէ նորա մօտն եմ մտանում, որին կամենումէի գործ առաջարկել մի շատ պատուելի տիկինից։ «Այժմ շատ ուշ է», ասաց Ագրիկոլը զարմացած», բայց այն երիտասարդ կար կարող աղջիկը մեղ ծանօթ է, եգուց եկէք, իսկ այսօր դուք չէք կարող նորան տեսանել, նա արդէն քնած է»։

— Ուրեմն, պարոն, թոյլ տուեցէք ինձ կրկնել իմ ներողութիւն որոնող խօսքերը։ «Շատ բարի պարո՛ն, ասաց Ագրիկոլը մի քայլ առնելով դէպ ի դուռը։ — Ես խնդրումեմ ձեզանից տիկին, ձեզանից, աղջիկ պարոններ, նոյնպէս այս պարոնից.... հաւատացէք.... «Պարո՛ն, եթէ դուք երկար պիտոյ է շարունակէք», ասաց Ագրիկոլը, «ուրեմն դուք պիտի երկարէք ձեր ներողութիւն խնդրելը, որ երբէք վերջանալու չէր»։ Ագրիկոլի այս խօսքերի վերայ, որ շարժեց Ռօզի և Բլանշի ժպիտը, Դագոբեռը ոլորումէր իւր ընչացքը։ «Ճշմարիտ, յիմար չէ մեր որդին», ասաց նա մեղմ ձայնով իւր կնոջը, «բայց այս քեզ չէ զարմացնում, դու արդէն սովորած ես նորան»։

Այս միջոցին կոտրատվող մարդը դուրս գնաց, ուղղելով իւր շարունակական, երկար հայեացքը երկու քրոջ, Ագրիկօլի և Դագոբեռի վերայ։ Մի քանի րոպէից յետոյ, այն միջոցին երբ Ֆրանսիսկայն սփռել էր յատակի վերայ մահիճը իւր համար և ծածկած էր սպիտակ սփռոցով մի այլ անկողին որբերի համար, մայրական հոգաբարձութենով ներկայ էր լինում նոցա ընկողմանելուն, Դագոբեռը Ագրիկօլի հետ գնաց դստիկոն։ Այն րոպէին, երբ Ագրիկօլը ճրագը ձեռքին գնալով հօր առաջևից անցանումէր Մայեօի դուռնի մօտով, աղջիկը կիսով չափ ծածկված ստուերի մէջ շուտ և ցած ձայնով ասաց նորան. «Ագրիկօլ, քեզ սպառնումէ մի մեծ վտանգ.... ինձ հարկաւոր է խօսել քո հետ»։

Այս խօսքերը արտաբերվեցան այնպէս շուտ և հանդարտ, որ Դագոբեռը չ՚լսեց. բայց երբ Ագրիկօլը դողալով փոքր ինչ կանգ առաւ, զինուորը ասաց նորան, — ի՞նչ կայ սիրելի. — «ոչինչ, հայրիկ, պատասխանեց երկաթագործը, ես կասկածումէի, որ լաւ չեմ լուսաւորում քո ճանապարհը»։ — Հանգիստ կացիր, այսօր յիսունամեայ են աչքերս և ոտքերս։ — Եւ զինուորը չ՚նկատելով իւր որդու զարմանքը, մտաւ նորա հետ միասին մի փոքրիկ մառան, ուր պիտոյ է գիշերէին երկուսը ևս։

Մի քանի րոպէ տանից դուրս գնալուց յետոյ քաղաքավարի կերպերով մարդը, որ եկած էր Դագոբեռի կնոջից հարցանել Մայեօին, հասած գտանվեցաւ Բրիզ-Միշ փողոցի ծայրումը։

Նա մօտեցաւ կառքին, որ կանգնած էր Սէն-Մէրի վանքի փոքրիկ հրապարակումը։ Այս կառքի մէջ փաթաթված իւր վերարկուով նստած էր Պ. Բօդէնը։

«Ի՞նչ կայ», ասաց նա հարցական ձևով։

— Երկու աղջկերքը և ալեխառն ընչացքով մարդը, գնացին Ֆրանսիսկա Բօդուէնի մօտ, — պատասխանեց միւսը։ — Ցառաջ քան թէ բաղխել էի դուռը, մի քանի րոպէ ականջ էի դնում նոցա խօսակցութեանը.... այս երեկոյ աղջկերքը պիտոյ է քնեն Ֆրանսիսկայի սենեակում, բայց ծերունին, ալեխառն ընչացքով, գտնվում երկաթագործի հետ։

«Շատ բարի», ասաց Պ. Բօդէն։

— Ես չհամարձակեցայ պնդել, որ տեսանեմ կուզին սպանդարամետական թագուհու գործի համար, յաւելացրեց քաղաքավարի մարդը, — բայց ես կ'երթամ էգուց, որ իմանամ թէ ինչ ներգործութիւն կ'ունենայ այն նամակը, որ այսօր կը տանեն նորան քաղաքական սուրհանդակով, և որ վերաբերումէ երիտասարդ երկաթագործին։

«Չ'մոռանաք այդ, բայց այժմ թէպէտ և ուշ է, այսու ամենայնիւ իմ անունով գնացէք Ֆրանսիսկա Բօդուէնի քահանային, ասացէք նորան, որ ես սպասումեմ նորան Միշ-Ուրզինեան փողոցում. թող նա գայ այն տեղ կարճ ժամանակի, բայց առանց րոպէ կորուսանելու և ձեր հետ միասին.... մի՛ մոռանաք ասել նորան որ ես շատ հարկաւոր գործի մասին խօսելիք ունիմ նորա հետ»։ — Այդ բոլորը ճշտութեամբ կը կատարվին, — պատասխանեց քաղաքավարի մարդը ստրկաբար գլուխ տալով Պ. Բօդէնին, որի կառքը արագութեննով հեռացաւ։

V.

ԱԳՐԻԿՕԼԸ ԵՒ ՄԱՅԵՕՆ։

Մի ժամ անցանելուց յետոյ այս բաների վերայով, խորին լռութիւն թագաւորեց Բրիզ-Միշ փողոցում։ Թոյլ լոյսը, որ անցանումէր ապակեայ դռնից, ցոյց էր տալիս թէ Մայեօն դեռ ևս չէր քնած. պատճառ, նորա մառախլապատ, առանց օդի և պատուհանի բնակարանի մէջ լոյսը անցանումէր միմիայն այս դռնից, որ բացվումէր նեղ և մութ պատշգամի մէջ, որ նոյնպէս շինած էր գտնվում։ Անպիտան մահճակալ, սեղան, հին բակեղեթ և աթոռ այնպէս լցրել էին սառցապատ սենեակը, որ այն տեղ երկու մարդ այլապէս չէին կարող տեղաւորվիլ եթէ ոչ մինը պիտոյ է նստէր մահճի վերայ։ Փառահեղ ծաղիկը, որ Ագրիկօլը ընծայել էր Մայեօյին, գեղեցիկ դրած էր մի ջրով լիքը բաժակի մէջ, սեղանի վերայ, որ ծածկված էր հաստ

կտաւէքով։ Նա տարածումէր իւր անուշահոտութիւնը և բանումէր իւր ծիրանի պսակը այս աղքատ խոնաւ և թաց պատերով սենեակի մէջ, որ թոյլ լուսաւորված էր իւղային բարակ ճրագով։

Մայեօն բոլորովին հագնված նստած էր իւր մահճի վերայ բոլորովին փոխված երեսով, արտասուքով լիքը աչքերով, թիկնը տուած իւր մահճի բարձին և գլուխը խոնարհեցուցած դէպ ի դուռը տխուր սրտով լսումէր ամենայն վայրկեան, որ ճանաչէ Ագրիկօլի քայլերի ձայնը։

Երիտասարդ աղջկայ սիրտը զարկումէր սաստիկ, նորա առ հասարակ գունատ երեսը, սաստիկ ամբոխմունքից ստացել էր թեթև կարմրութիւն. երբեմն երբեմն նա մի ահ ու դողով ուղղեցնումէր աչքերը նամակի վերայ, որ ունէր ձեռքին. այս նամակը երեկոյեան ստացված սուրհանդակից դրվել էր գաւթապան-ներկարարի ձեռքով Մայեօի սեղանի վերայ, մինչ սա ինքը ներկայ էր Դագոբեռի իւր ընտանիքի հետ տեսութեանը։

Մի քանի րոպէից յետոյ երիտասարդ աղջիկը լսեց որ իւր սենեակի կից դուռը բացվեց։ «Վերջապէս.... ահա՛ և նա», գանչեց Մայեօն. և ճշմարիտ որ Ագրիկօլը ներս մտաւ։

— Ես սպասեցի, որ հայրս քնի — մեղմ ձայնով ասաց երկաթագործը, որի երեսի վերայ երևումէր առաւել հետաքրքրութիւն, քան թէ երկիւղ, ինչ կայ բարի Մայեօ, ինչպէս փոխված է քո երեսը.... դու լալիս ես, ինչ է պատահել, ո՞րպիսի վտանգի մասին կամենումես ինձ հետ խօսել։

Առ.... ընթերցի՛ր.... ասաց նորան Մայեօն դողդոջուն ձայնով և շտապով տուեց նորան կնքաբաց նամակը։ Ագրիկօլը մօտեցաւ ճրագին և ընթերցաւ հետևեալ խօսքերը։

«Մի կին, որ չէ կարօղ յայտնել իւր անունը, բայց որին յայտնի է ձեր աղգակցական սէրը դէպ ի Ագրիկօլ Բօդուէնը, յայտնումէ ձեզ, որ այս երիտասարդ և պատուաւոր արհեստաւորը, երևի թէ էգուց կը բանդարկվի»։ — Ես — գանչեց Ագրիկօլը առանց խելքի նայելով Մայեօի վերայ — այս ինչ բա՛ն է։ «Շարունակի՛ր», ասաց շուտով Մայեօն, ձեռները խաչելով կրծքի վերայ։ Ագրիկօլը սկսեց կարդալ նամակը, իւր աչքերին չհաւատալով։

«Նորա աղաւ մշակներէ երգը համարվել է նորան յանցանք նորա քանի մի օրինակը գտնվել է մի գաղտնի հասարակութեան մէջ, որի գլխաւորքը բռնված են Պրուվերեան փողոցի դաւաճանութենից յետոյ»։

— Աւա՜ղ, — ասաց լալագին Մայեօն, — այժմ ես բոլորը հասկանումեմ. այն մարդը, որի համար ներկարարը ասումէր, որ նայումէ ու քննումէ ներքևումը, այս երեկոյ, երևի թէ լրտես էր, որ սպա-

սումէր քո գալուն ։ «Աստուած քեզ հետ, քիմար դատապարտու-
թիւն,» գանչեց Ագրիկօլը, «մի տանջէ՛ր ինձ այլ ևս սիրական Մայեօ,
ես երբէք քաղաքական գործերով չեմ պարապում, իմ ոտանաւոր-
ները զարթեցնումեն միայն սէր դէպ ի մարդկութիւն, միթէ ես մե-
ղաւո՞ր եմ, որ իմ տաղերը գտնուել են գաղտնի հասարակութեան
մէջ ։ Եւ նա արհամարհանքով ձգեց նամակը սեղանի վերայ։

— Շարունակի՛ր, խնդրումեմ, ասաց նորան Մայեօն, շարու-
նակի՛ր ։ «Եթէ դու ցանկանումես, ինչու չէ. և Ագրիկօլը շարունա-
կեց ։» Ագրիկօլ Բօդուէնի բանդարկութեան հրամանը արդէն ստո-
րագրուած է, անտարակոյս նորա անմեղութիւնը կանուխ թէ ուշ կը
յայտնուի . . . . բայց նորա համար առաւել լաւ է, որքան կարելի
է շուտով թաքնուիլ հալածանքի երեսից, երկու կամ երեք ամիս
բանդարկութենից ազատուելու խորհրդով, որ կայծակի հարուած կը
լինէր նորա մօրը, որի միմիայն նեցուկը և օգնականը էր Ագրիկօլ Բօ-
դուէնը։ «Հարազատ բարեկամ, որ հարկադրուած է անյայտ մնալ»։

Րոպէական լռութենից յետոյ, երկաթագործը թիկունքը վեր
քարշեց, նորա երեսը լուսափայլեցաւ և ծիծաղելով ասաց Մայեօին։

«Հանգստացիր սիրական Մայեօ, կատակողքը սխալուել են հա-
շուի մէջ, այս միանգամայն ապրիլի մինն է»։

— Ագրիկօլ, Աստուծոյ անունով խնդրումեմ քեզանից, այս բա-
նը այդպէս թեթևամտութենով մի իմանար, հաւատա իմ նախա-
զգացութեանը, հետևէ՛ր այդ խորհրդին ։ «Դարձեալ ասումեմ քեզ
խեղճ երեխայ, որ Մշակների Երգը տպած էր երկու ամիս յառաջ, և նա
ամենևին քաղաքական բան չէ, և բաց ի դորանից այսքան երկար չէր
սպասէին . . . . այդ մասին ինձ հալածելու»։

— Բայց մտածի՛ր, որ այժմ հանգամանքները փոխուեցան, մի
միայն երկու օր սորանից յառաջ այդ դաւաճանական խորհուրդը բաց-
ուեցաւ այս տեղից ո՛չ շատ հեռի, Պրուվերեան փողոցում, և եթէ
քո տաղերը մինչև այն ժամանակ անյայտ մնացած բռնուեցան դաւա-
ճան մարդերի մօտ, որոնց կալանաւորեցին, այդպիսի դիպուածում այդ
հերիք է, որ քեզ վտանգի մէջ ձգէ ։ «Ինձ վտանգի մէջ ձգել տա-
ղերի համար . . . . որոնց մէջ ես գովումեմ սէրը դէպ ի աշխատու-
թիւն և գթասրտութիւն . . . . ուրեմն պիտոյ է ասել, որ Փարիզի
մէջ արդարադատութիւնը շատ կոյր է, և վատ չէր լինելու նորան
առաջնորդ առնուլ ինքեան շուն և գաւազան»։

— Ագրիկօլ, ասաց երիտասարդ աղջիկը յուսահատուած երկա-
թագործի կատակներից. այսպիսի րոպէում, աղաչումեմ քեզ լսիր
ինձ. ոչինչ տարակոյս չկայ, որ դու քո տաղերի մէջ քարոզումես
սուրբ սէր դէպ ի աշխատութիւն, բայց նոյնպէս ողբումես դու ողոր-

մելի արհեստաւորների անիրաւ վիճակը, որ առանց յոյսի հարկադրըւած են զոհ բերել կեանքում ամենայն ինչ: Դու քարոզում ես Աւետարանական եղբայրութիւն, բայց քո բարի, և ազնիւ սիրտը ատում է չարերին և նորանց, որ մատնված էին [illegible]. վերջապէս դու ամենայն ջերմութեամբ պաշտպանում ես այն արհեստաւորների ազատութիւնը, որ այնքան երջանիկ չէին, որքան դու, և չունէին այնպիսի մեծահոգի պարօն ինչպէս պարօն Ցարդին է: Ուրեմն սաս Ագրիկոլ այս ներկայ խառն ժամանակներումը, հարկաւո՞ր է արդեօք առաւել քան որ կար կասկածելի լինելու համար, մանաւանդ այդ տաղի շատ օրինակները գտնւած էր բանդարկվածների մօտ:

Այս գեղեցիկ արարածի խելացի և աշխոյժ խօսքերի վերայ, որ իւր գտողութիւնքը դուրս էր բղխեցուցանում իւր սրտից, Ագրիկոլը կատարեց մի շարժողութիւն, նա սկսեց առանց կատակի, այլ ուշադրութենով նայել այս նախազգուշութեան վերայ: Մայեօն տեսանելով նորան շարժված, շարունակեց. «վերջապէս միտքդ բե՛ր Ռեմին, քո ընկերը գործարանի մէջ:

— Ռեմին? «Այո՛ նորա նամակը, և դեռ ես ոչինչ չ՛նշանակող նամակը գտնվել էր մի մարդու մօտ որ անցած տարի մի դաւաճանութեան համար բանդ էր դրված, և նա մի ամբողջ ամիս նստեց բանդի մէջ:

— Քո ասածը ճշմարիտ է, իմ բարի Մայեօ, բայց վերջապէս արդարացուցին նորան և վերադարձուցին նորա ազատութիւնը:

«Մի ամիս բանդարկութենից յետոյ. և ահա նոյն այդ անախորժութենից, խելօքութենով քեզ խորհուրդ են տալիս փախչել. Ագրիկոլ, մտածի՛ր այս մասին. Աստուած իմ, ամիս բանդի մէջ, բայց քո մայրը»:

Մայեօի այս խօսակցութիւնքը սաստիկ տպաւորութիւն գործեցին Ագրիկոլի վերայ, նա առաւ նամակը և ուշադրութենով կարդաց նորան:

«Բայց այն մարդը, որ ամբողջ երեկոյ ման էր գալիս տան չորս կողմը», շարունակեց մատաղահաս աղջիկը, «այդ բանը իմ մտքից չէ գնում. մի անբնական բան է.... աւաղ. Աստուած իմ. ինչ հարուած է քո հօրը, քո խեղճ մօրը, որ ոչինչ չէ կարող վաստակել. միթէ միմիայն դու չես նորանց օգնականը, մտածի՛ր այս մասին, առանց քեզ, առանց քո աշխատութեան ինչ կը լինին նոքա»:

— Ճշմարիտ որ այդ սարսափելի կը լինէր, — ասաց Ագրիկոլ, ձգելով նամակը սեղանի վերայ, — ինչ որ դու ասացիր Ռեմիի մասին ճշմարիտ է, նա նոյնպէս անմեղ էր ինչպէս և ես.... արդարադատութեան սխալն է. անտարակոյս ակամայ սխալ, բայց այսու

ամենայնիւ շատ անտանելի։ Բայց սակայն մարդ չեն բանդարկում առանց նորան լսելու։

«Յառաջ նորան կը բանդարկեն, յետոյ կը հարցանեն», ասաց Մայեօն դառնութեամբ, «յետոյ մի կամ երկու ամսից կը դարձուցանեն նորա ազատութիւնը. բայց եթէ նա ունի կին, երեխայք, որոնց նա պահում էր իւր ամենօրեայ աշխատութենովը, այն ժամանակ ինչ կ՚առնեն նոքա, երբ նա բանդարկված էր։ Նոքա քաղցենումեն, ցուրտ է նոցա, նոքա լաց են լինում»։

Մայեօի այս պարզ, բայց սրտաշարժ խօսքերի վերայ Ագրիկօլը ցնցվեցաւ։ — Ամիս առանց աշխատութեան, ասաց նա տխուր մտածողութեամբ, — բայց մայրս. . . . հայրս և այն երկու դեռահաս որբերը, մինչև որ Մարշալ Սիմօնը Փարիզ վերադառնայ կամ նորա հայրը որոնք պատկանումեն մեր ընտանիքին. Ճշմարիտ դու իրաւունք ունիս. ընդդէմ իմ կամքին, այս մտածողութիւնը ինձ ահացնումէ. . . .

«Ագրիկօլ», գանչեց յանկարծ Մայեօն, «եթէ դու խնդրէիր պարոն Հարդիից, նա այնպէս բարի է, այնպէս գեղեցիկ բնութեան տէր է. . . . նորան այնպէս յարգումեն, որ եթէ երաշխաւոր լինի քո մասին, կարելի է որ քեզ չ՚բանդարկէին ես». — դժբաղդաբար պարոն Հարդին այս տեղ չէ, նա գնացել է Մարշալ Սիմօնի հօր հետ միասին։ Մի փոքր ժամանակ լռութենից յետոյ Ագրիկօլը կամենալով ցրվել իւր վտանգի մէջ եղածի միտքը, շարունակեց — բայց չէ, ես չեմ կարող հաւատալ այս նամակին, այսու ամենայնիւ ողջից լաւ է սպասել այն իրողութեանը որ պիտի պատահի, գոնէ ես կը կարողանամ առաջին հարցմունքի ժամանակ ապացուցանել իմ անմեղութիւնը. պատճառ, վերջապէս, իմ սիրելի Մայեօ, բանդարկված լինեմ և թէ թաքկենամ, այսու ամենայնիւ չեմ կարողանալու բանել իմ ընտանիքի համար։ — «Աւա՜ղ, այդ ճշմարիտ է, ասաց խեղճ աղջիկը բայց ինչ առնես, Աստուած իմ, ինչ պիտոյ է առնել»։ — Ահ իմ բարի հայր, ինքը իւրեան ասաց Ագրիկօլը, եթէ այս անբաղդութիւնը պատահի էգուց, ինչ քնից զարթել կը լինի նորա համար, որ այնպէս երջանիկ քնել էր — և երկաթագործը ծածկեց ձեռներով երեսը։

Դժբաղդաբար Մայեօի երկիւղը մեծացրած չէր, պատճառ, այս պատահեց 1832 թուականին, երբ Պրուվերեան փողոցի դաւաճանութենից յառաջ և յետոյ, արհեստաւորներից շատերը բանդարկված էին, այս դաւաճանական հասարակութեան մտածած և հրատարակած ռամկապետական մտքերի պատճառաւ։ Յանկարծ Մայեօն մի քանի վայրկեան ձգված լռութիւնը միջահատեց, սաստիկ կարմրութիւն ծածկեց նորա երեսը, որի վերայ նկարագրվումէր ցաւի և յոյսի պատերազմը։ «Ագրիկօլ, դու փրկված ես», գանչեց նա։ — Ի՞նչ ես ասում։

«Այն գեղեցիկ օրիորդ տիկինը, այնպիսի բարի, որ տալով քեզ այս ծաղիկը (և Մայեօն ցոյց տուեց ծաղիկը երկաթագործին) գեղեցիկ բարեկամութեամբ գիտացել է ուղղել իւր վշտացուցիչ առաջարկութիւնը քեզ.... երևի նա մեծահոգի սիրտ ունի, հարկաւոր է նորան դիմել...»: Այս խօսքերը ասելու ժամանակ որ ինչպէս երևում է մեծ բռնութիւն գործ ածելով իւր վերայ, արտասուքի երկու մեծ կաթիլներ գլորվեցան Մայեօի թշերի վերայով: Առաջին անգամ իւր կեանքի մէջ նա յաչաղանք զգաց. մի այլ կին այնքան երջանիկ էր, որ կարողանումէր օգնել նորան, պաշտումէր ինքը Մայեօն, ողորմելի արարած, անզօր և խղճալի:

— Դու այդպէս կարծո՞ւմես — ասաց Ագրիկօլը զարմանալով. — այս տեղ ինչ կարող էր անել օրիորդ տիկինը: «Մի թէ նա չ'ասա՞ց քեզ, միտքդ պահիր իմ անունը և ամենայն ժամանակ դիմէ ինձ եթէ բան պատահի: — Անտարակոյս. — «Նա այնպիսի բարձր արժանաւորութենով անպատճառ պիտոյ է որ երևելի բարեկամներ ևս ունենայ, որ կարող էին քեզ հովանաւոր լինել և պաշտպանել, էգուց առաւօտ գտի՛ր նորան, պատմի՛ր նորան ամենայն բան, որ ինչ պատահել էր և խնդրի՛ր պաշտպանութեան մասին: — Բայց դարձեալ հարցանումեմ քեզանից, բարի Մայեօ, նա այս տեղ ինչ կարող է անել, — «լսի՛ր ինձ.... իմ միտքս է որ հայրս մի ժամանակ ասումէր, որ նա իւր մի բարեկամը ազատել էր բանդից, երաշխաւորութիւն առաջարկելով նորա մասին. քեզ հեշտ է հաւատացուցանել նորան քո անմեղութիւնը, թո՛ղ նա քո համար երաշխաւոր լինի, այն ժամանակ ես կարծեմ որ քեզ երկիւղ չ'կար»: — Ա՛հ խեղճ երեխայ, այսպիսի օգնութեան մասին խնդրել այն մարդից, որին ամենևին չ'գիտես, ծանր բան է: — «Հաւատա՛ ինձ Ագրիկօլ», ասաց Մայեօն տխրութեամբ, «ես երբէք խորհուրդ չեմ տալիս քեզ այնպիսի բան, որ ովի և իցէ առաջևը դու ցածանայիր նորանով, և մանաւանդ լսո՞ւմես.... այն տիրուհու առաջև.... այս տեղ բանը նորա վերայ չէ, որ դու արծաթ էիր ուզում, այլ խնդրել նորա երաշխաւորութիւնը, որով դու կարողանայիր շարունակել քո ծառայութիւնը, որպէս զի չ'թողուս քո ընտանիքը առանց օգնութեան: Հաւատա՛ Ագրիկօլ, քո կողմից այսպիսի խնդրագործութեան մէջ չ'կայ այլ բան, եթէ ոչ ազնուութիւն և մեծահոգութիւն, իսկ այն օրիորդ տիկինի սիրտը մեծահոգի է, նա կը ճանաչէ քեզ, նորա համար ոչինչ բան է այդ երաշխաւորութիւնը, բայց քեզ համար այնքան մեծ, որ նորանից կախվումէ քո ընտանիքի կեանքը:

— Քո ասածը ճշմարիտ է, բարի Մայեօ, — ասաց Ագրիկօլը ցաւալի կերպով — կարելի է լաւ կը լինի անել այդ բանը. եթէ օրի-

որդ. տիկինը յօժարի ցոյց տալ ինձ այդ շնորհը, և եթէ նորա երաշխաւորութիւնը ճշմարտապէս ազատէ ինձ բանդարկութենից, այն ժամանակ ես կը պատրաստվիմ դէպ ի ամենայն բան, բայց ո՛չ, ո՛չ— կցորդեց երկաթագործը վեր կանգնելով իւր տեղից—ես երբէք չեմ խնդրելու նորան. ինչ իրաւունքով ես այդ անեմ, ինչ է իմ փոքրիկ ծառայութիւնը ցոյց տուած նորան, համեմատելով նորա հետ, ինչ որ ես պիտոյ է խնդրէի։—

«Մի՞թէ դու կարծումես, Ագրիկոլ, թէ մեծահոգի մարդը իւր շնորհը կը չափէ, կը համեմատէ նոցա հետ, ինչ որ ինքը ստացել էր։ Ինչ որ վերաբերվումէ սրտին, հաւատա՛ ինձ . . . . ես խեղճ արարած եմ, որ ոչ ոքի հետ չեմ կարող հաւասարվիլ, ես ոչինչ եմ, և ոչինչ չեմ կարող, բայց լսի՛ր, ես հաւատացած եմ . . . . այո՛, Ագրիկոլ, հաւատացած եմ, որ այն օրիորդ տիկինը, որ այնքան գերազանցումէր ինձանից իւր վիճակովը, կը զգայ մի և նոյնը ինչ որ ես զգումեմ ներկայ հանգամանքների մէջ։ Այո՛, ինձ նման նա կը հասկանայ, որ քո դրութիւնը պարհուրելի է, նա ուրախութեամբ, յօժարութեամբ և շնորհակալութեամբ կ'անէ քո համար այն, ինչ որ ես կ'անէի եթէ, աւա՜ղ, ես կարողանայի մի բան անել բաց ի անօգուտ մտերմութենից։

Մայեօն ընդդէմ իւր կամքին արտաբերեց վերջին խօսքերը այնպիսի սիրտ կտրատող կերպով, մի այնպիսի զարկողական բան կար այս համեմատութեան մէջ, որ անումէր այս անբաղդ, անյայտ, արհամարհած, թոյլ և հիւանդ աղջիկը իւր և Ադրիեն դը Կարդովիլի հետ, այն երիտասարդութեան գեղեցկութեան և հարստութեան տիպի հետ, որ այս ամենը մինչև արտասուել շարժեցին Ագրիկօլի սիրտը։ Նա ձեռքը պարզած դէպ ի Մայեօն ասաց սրտաշարժ ձայնով։

—Դու ինչպէս բարի ես . . . . ինչքան ազնուութիւն, զգացողութիւն և բարակութիւն կայ քեզանում։—

«Դժբաղդաբար ես ոչինչ առաւել չեմ կարող անել—և քո խորհուրդները կը կատարվին, բարի Մայեօ. նոքա բղխումեն այնպիսի հոգուց, որ բարձր էր քան ամենայն ինչ, որ երբ և իցէ ես իմացած էի . . . . բաց ի սորանից դու քաջալերեցիր ինձ դէպ ի այս գործը, ասելով, որ օրիորդ տիկին դը Կարդովիլի սիրտը արժէր քո սրտին»։—Այս պարզահոգի և անկեղծ մտաւորութեան մէջ, Մայեօն համարեա՛ թէ մոռացաւ իւր բոլոր չարչարանքը, այսպէս նորա ամբոխմունքը անուշ էր և գեղեցիկ. պատճառ, եթէ մի քանի արարածների մէջ, որոնց միանգամայն նախասահմանված էր չարչարանք և տառապանք, կայ այլ մարդերի անյայտ ցաւ և վիշտ, նմանապէս, երբեմն լինումեն հեզ և հանդարտ ուրախութիւններ նոյնպէս ան-

յայտ աշխարհին։ Մի փոքր մտերմական բառը, որ բարձրացնում էր նորանց իւրեանց սեպհական աչքի առաջևը, այնքան բարերար է, այնքան անմոռանալի է այն արարածների համար, որ առհասարակ մատնված էին արհամարհանքի, խստութեան և ծանր երկրայութեան իւրեանց վերայ։

«Ուրեմն այսպէս, վճռած է. դու էգուց առաւօտ կ՚երթաս այն օրիորդ տիկինի մօտ, այնպէս չէ՞», գանչեց Մայեօն, կենդանացած յուսով, «լոյսը բացված, ես կը կանգնեմ դրանը փողոցում և կը նայեմ, արդեօք չէ՞ր մօտ գալիս մի կասկածաւոր մարդ, և իսկոյն կը ծանուցանեմ քեզ։»

— Բարի և գեղեցիկ աղջիկ — ասաց Ագրիկօլը առաւել և առաւել սիրտը շարժված։ Պիտոյ է շտապել գնալու համար մինչև հայրդ զարթել էր քնից. այն փողոցը ուր օրիորդ տիկին դը Կարդովիլը բնակվում էր այնպիսի անմարդաբնակ և ամայի է, որ քո այն տեղ գնալը մի և նոյն է, թէ թաքնված էիր։

Ականջիս գալիս է հօրս ձայնը — ասաց յանկարծ Ագրիկօլը։ Արդարև, Մայեօի սենեակը այնքան մօտ էր Ագրիկօլի դստիկոնին, որ Ագրիկօլը Մայեօի հետ ականջ դնելով դուռից լսեցին, որ Դագոբեռը մթնում խօսում էր։ «Ագրիկօլ, ի՞նչ է. դու քնած ես բարեկամ, բայց ինձանում առաջին քունը արդէն վերջացաւ, իսկ լեզուս ցանկանում էր խօսել. . . .» — գնա՛ շուտով Ագրիկօլ, — ասաց Մայեօն, — քո բացակայութիւնը կարո՛ղ է նորան անհանգիստ առնել. առաւօտ ինձ չտեսած մի գնար տնից. եթէ ես մի կասկածաւոր բան տեսանեմ. . . .

«Ագրիկօլ, դու չկա՞ս ի՛նչ է այս տեղ», ասաց Դագոբեռը առաւել բարձր ձայնով։ — Ես այս տեղ եմ հայրիկ — ասաց երկաթագործը դուրս գալով Մայեօի սենեակից և մտանելով իւր դստիկոնը, — ես փակեցի պատուհանների պաշտպանարանը, որ քամից անդադար զարկվում էին. . . . ես վախեցայ, որ այդ զարկի ձայնը չզարթեցնէ ձեզ։ «Շնորհակալ եմ, բարեկամ, բայց ինձ այդ ձայնը չզարթեցրեց», ուրախ ձայնով ասաց Դագոբեռը, «այլ քեզ հետ խօսելու անզօրվանալի ծարաւը. ա՛հ սիրելի, դու չես հասկանում, թէ ի՛նչ բան է բարի ծերունի հայրը, որ տասն և ութ տարի չէր տեսել իւր որդուն»։

— Կամի՞ս, ես ճրագ կը վառեմ, հայրիկ։ «Ո՛չ, ո՛չ, ի՞նչ շռայլութիւն է. . . . մութն տեղում կը խօսենք, իսկ էգուց առաւօտ երբ կը նայեմ քո վերայ, այն ժամանակ այն ինձ կը լինի մի նոր յայտնութիւն. . . . մի և նոյն, որպէս թէ կրկին տեսանում էի քեզ առաջին անգամ»։ Ագրիկօլի սենեակի դուռը ծածկվեց, և Մայեօն առաւել ոչինչ չլսեց։ Խեղճ աղջիկը առանց հանդերձը մերկանալու ընկաւ

իւր տեղերի վերայ և ամբողջ գիշեր չփակեց իւր աչքերը լուսանալու տխուր յուսով, երբ կարող էր հսկել Ագրիկօլի անվտանգաւորութեան վերայ։ Չ'նայելով սաստիկ անհանգստութեան վերայ լուսանալու օրի մասին, Մայեօն երբեմն յաղթահարվումէր ցաւալի երևակայութենից և համեմատումէր մութն գիշերի մէջ յառաջացած խօսակցութիւնը այն մարդուն, որին ծածուկ սիրումէր, այն խօսակցութեան հետ, որ կարող էր լինել, եթէ ինքը եղած լինէր գեղեցիկ, հիանալի, եթէ իւրեան սիրէին նոյնպէս, ինչպէս ինքը սիրումէր.... անմեղ և բորբոքված սիրով։ Բայց շուտով հասկանալով որ ինքը երբէք վայելելու չէր այսպիսի փոխադարձ սէր, նա գտանումէր իւր մխիթարութիւնը նորանում, որ կարող էր օգտակար լինել Ագրիկօլին։

Լուսացածովը խկոյն Մայեօն հանդարտութեամբ վեր կացաւ և զգուշութենով իջաւ սանդուղքից ցած, տեսանել, արդեօք վտանգ չէ՞ սպասում Ագրիկօլին։

VI.

ԱՌԱՒՕՏ։

Խոնաւ և մառախլապատ եղանակը, որ կանգնած էր գիշերը, առաւօտուն փոխվեցաւ դէպ ի պարզ և ցուրտ։ Ապակեայ շրջանակից, որ Ագրիկօլի բնակութեան պատի վերայ էր, որի մէջ նա հանգըստացուցել էր իւր հայրը, երևումէր կապոյտ երկինքը։

Երիտասարդ երկաթագործի սենեակը ըստ երևութին նոյնպէս աղքատին էր ինչպէս և Մայեօի սենեակը. ամենայն զարդարանքների փոխանակ, ո՛չ մեծ փայտեայ սեղանի վերայ, ուր Ագրիկօլը գրումէր իւր բանաստեղծական ներշնչութիւնքը, երևումէր պատի վերայ զարկած Բէրանժէի պատկերը, այն անմահ բանաստեղծի, որին ժողովուրդը սիրումէ և յարգումէ.... պատճառ, այս հզօրագիտ և գերազանց հոգին սիրումէր և լուսաւորումէր ազգը, երգումէր նորա փառքը և անբաղդութիւնը։

Թէև և նոր էր սկսել արշալոյսը, բայց Դագոբեռը և Ագրիկօլը արդէն վեր էին կացել քնած տեղից։ Այս վերջինս այնքան յաղթող էր իւր անձին, որ ծածկեց իւր անհանգստութիւնը, չ'նայելով նորա վերայ, որ մտածութիւնը ևս առաւել զօրացուց նորա երկիւղը։

Պրուսերեան փաղըցի վերջին հետախուզութենից յետոյ, շատերը բանդ էին դրված, իսկ նորա [illegible] մշակներ երգի մի քանի օրինակ գտանվիլը, արդարև շատ վտանգաւոր կարող էր լինել երի-

տասարդ երկաթագործի համար, բայց ինչպէս ասվեցաւ, նորա հայրը չէր հասկանում և նորա տխրութիւնը։

Զինուորը նստած իւր որդու մօտ, աղքատին մահճակալի վերայ, որ դեռ լոյսը բացված չբացված վեր էր կացել և ածիլել էր երեսը զինուորական սովորութենով, բռնել էր իւր ձեռքի մէջ Ագրիկօլի ձեռքերը, նորա աչքերը փայլումէին ուրախութենով, և չէր կարողանում հեռացնել աչքերը նորանից։ «Դու կը սկսես ծիծաղել ինձ վերայ բարեկամ, բայց ես ասումեմ քեզ, որ ես սրտնեղումէի գիշերի վերայ, որ արգելք էր լինում ինձ նայել քո վերայ այնպէս, ինչպէս այժմ նայումեմ։ Բարի ժամ, որի միջոցին ես ոչինչ չեմ կորուսանում։ Միւս յիմարութիւնը ինձ շատ ախորժ է, այսինքն այն, որ դու կրումես ընչացք. ինչ գեղեցիկ հեծելազինուոր կը լինէիր. երբէք չես ցանկացած զինուոր լինել։ — Ապա մայրս։ — Ճշմարիտ է քո ասածը, մանաւանդ այս ևս պիտոյ է ասել, որ ինչպէս ինձ թըվումէ սուրի այն ժամանակը անցել է, մեք ծերքս, միայն այն բանի պիտանի ենք, որ նստինք հնոցի մօտ, ինչպէս հին ու ժանգոտած կարաբին, բայց մեր համար կար ժամանակ»։

— Այո՛, ձերը քաջութեան և փառքի ժամանակ էր, — ասաց Ագրիկօլը ոգևորված, յետոյ քնքոյշ և սրտաշարժ ձայնով շարունակեց — գիտե՞ս արդեօք, որ գեղեցիկ և բարի է քո որդի լինել։

«Որ ինչ վերաբերվումէ գեղեցկութեանը չգիտեմ, այլ ինչ որ բարի է պիտոյ է որ այնպէս լինի. պատճառ ես շատ սաստիկ սիրումեմ քեզ։ Բայց երբ մտածումեմ, որ այս միայն սկիզբն է, լսիր ինձ Ագրիկօլ, ես նման եմ այն սովածներին, որոնք քանի օրերով բան չէին կերած, նոքա միմիայն փոքր առ փոքր սկսումեն ուզվել, համը տեսանել, այս պատճառաւ և դու պիտոյ է սպասես, որ ես նոյնպէս առաւօտ երեկոյ քո համը տեսանեմ. . . . ամենայն օր . . . . բայց գիտես միայն, որ ես մինչև անգամ չեմ համարձակում և մտածել, թէ ամենայն օր, այդ կը կուրացնէ ինձ, կը շփոթէ, ես չեմ կարող տանել այդ բանին։

Դագոբերի այս խօսքերը վշտալի զգացողութիւններ զարթեցրին Ագրիկօլի մէջ, նա այս խօսքերի մէջ տեսանումէր իւրեանց սպառնացած բաժանման գուշակութիւն։

«Ինչպէս ես այժմ, առաջվայ նման բաղդաւոր Պ. Հարդին դարձեալ սիրումէ քեզ»։ — Նա՞. . . . ասաց երկաթագործը — նորա մէջ կայ ամենայն բան, որ բարի էին, պատուելի և ազնիւ, եթէ դուք գիտացել էիք թէ նա ինչ հրաշքներ է գործել իւր գործարանում. եթէ նորա գործարանը համեմատենք ուրիշների հետ, այն ժամանակ դրախտ կը լինի նա դժոխքի մէջ։ «Միթէ»։ — Ամենայն մարդու մէջ,

որ պարապումն և ծառայումն զուարճութենով և բաւականութեամբ, դուք կը տեսանէք մի միայն բարեկեցութիւն, ուրախութիւն և հպատակութիւն: — Ա՛, ուրեմն քո Պ. Հարդին կախարդ է: «Մեծ կախարդ, հայրիկ. նա կարողացաւ մշակութիւնը շինել գրաւիչ, ահա այդ մեր բաւականութիւնն է: Բաց ի բաւական ռոճիկից, նա նայելով մեր ընդունակութեններին տալիս է մեզ իւր ստացած շահի մի մասը, և այս նորա համար, որ գրգռէ մեզանում աշխատելու ցանկութիւնը, բայց այս դեռ բոլորը չէ. նա շինեց գեղեցիկ և պարունակ տներ, որոնց մէջ մշակները առաւել փոքր վարձով քան թէ մի այլ տեղ կարող էին ուրախ և առողջ բնակութիւն գտնել, օգուտ քաղելով սորա հետ միասին ընկերութեան բոլոր բարեգործութենից, բայց դուք կը տեսանէք, ասումեմ ձեզ.... կը տեսանէք: Ուրեմն ճշմարիտ է որ ասումն, թէ Փարիզը հրաշագործութենների երկիր է: Վերջապէս ես մտայ նորա մէջ, որ աւելի չ'բաժանվիմ նորանից և ո՛չ քեզանից և ո՛չ իմ բարի կնոջից: «Ո՛չ հայրիկ, մեք այլ ևս չենք բաժանվելու», ասաց Ագրիկօլը զսպելով իւր հառաչանքը, մեք մօրս հետ կ'աշխատինք, որ դու մոռանաս քո բոլոր քաշած չարչարանքը: «Չարչարա՛նք. ա՛յ սատանան տանու, ո՞վ է չարչարվել, նայի՛ր իմ երեսին. միթէ նորա վերայ նկարա՞ծ է չարչարանք: Ես այն ինչ Փարիզ մտած և ահա՛ զգումեմ, որ մատաղացած եմ. երաշխաւոր եմ լինում, որ այնպէս կը սկսիմ ման գալ, որ դու քամակիցս չես հասանելու. բայց դու գեղեցիկ ես. հը՛մ. ի՞նչպէս կը սկսեն նայել մեր վերայ. երաշխաւոր եմ լինում, որ նայելով քո սև և իմ ալեխառն ընչացքներին, իւրաքանչիւր ոք կ'ասէ, թէ մի հայր է իւր որդու հետ: Բայց կարգադրենք մեր օրը, դու կը գրես մարշալ Սիմոնի հօրը, որ նորա թոռները եկել հասել էին, որ նորան հարկաւոր է շուտով շտապել դէպի Փարիզ. պատճառ, գործը շատ երևելի առարկաների մասին է նորա համար: Մինչև դու կը գրես, ես ցած կ'իջանեմ և կ'ողջունեմ իմ կինը և մատաղահաս աղջիկները, մի մի կտոր բան կ'ուտենք, իսկ մայրդ կ'երթայ եկեղեցի եթէ միայն չէ մոռացել նա իւր սովորութիւնը, և այն միջոցին մեք քեզ հետ կը զբօսնունք: — Հայրիկ — ասաց Ագրիկօլը շփոթված — այսօր առաւօտ ես չեմ կարո՛ղ քեզ ընթացակից լինել: «Ի՞նչ պատճառաւ չես կարող. այսօր կիւրակէ է»: — Այո՛ հայրիկ, — ասաց Ագրիկօլը անհամարձակ — բայց ես խոստացել եմ առաւօտները գնալ աշխատաւորաց բնակարանը մի շատ և շտապով կատարվելու գործ աւարտելու համար.... եթէ ես չ'երթամ, դորանով Պ. Հարդին կարող է վնաս կրել. յետոյ ես ազատ կը լինեմ: — «Այդ այլ բան է, ասաց զինուորը վշտալի հառաչանքով, ես մտածումէի շրջել քեզ

հետ Փարիզի մէջ այսօր առաւօտ, բայց եթէ անկարելի է, մեք այդ մի ուրիշ ժամանակ կը կատարենք. պատճառ ծառայութիւնը սուրբ է, նորանով դու կերակրումես քո մայրը։ Բայց այդ ողջը մի է, այդ մի ցաւեցուցիչ բան է, շատ ցաւեցուցիչ և մինչև անգամ. . . . ո՛չ, ես անիրաւ եմ, նայիր մարդ ինչպէս շուտով սովորումէ բաղդաւորութեան, ես իբրև հին տրտնջացող բարկանումեմ, որ մեր զուարճութիւնը մի քանի ժամ յետ է գրվում, ես որ տասն և ութ տարի միմիայն յուսով էի ապրում և այն ո՛չ այնպէս հաւաստի յուսով քեզ տեսանելու։ Լսի՛ր ինձ, որ ես միանգամայն հին յիմար եմ, ապրի ուրախութիւնը և իմ Ագրիկօլը։

Եւ իւր մխիթարութեան համար զինուորը ուրախ և բարեկամական ձևով համբուրեց իւր որդին։ Այս փաղաքշանքը տխրեցուց երկաթագործին, որ ամենայն րոպէ վտանգի մէջ էր, եթէ Մայեօի ասածը կատարվելու էր։ «Որովհետև ես այժմ հանգստացայ», ասաց Դագոբեռը ծիծաղելով, «ուրեմն խօսենք գործերի մասին, չգիտե՞ս արդեօք ո՞ր տեղ կարող եմ ես գտանել Փարիզի բոլոր նոտարիուսների հասցէն»։ — Ես այդ չգիտեմ, բայց հեշտ կարելի է գտանել։ «Ահա՛ թէ ինչ բանի համար. ես Ռուսսիայից այս երկու օրիորդների (որոնց բերեցի այս տեղ) մօրը հրամանաւ փոստայով ուղարկեցի շատ հարկաւոր թղթեր Փարիզի մի նոտարիուսի վերայ։ Որովհետև ես այն ինչ Փարիզ հասած պարտական էի նորան տեսանել, վասնորոյ նորա հասցէն գրեցի տետրակիս մէջ, որ ճանապարհին գողացան ինձանից, և որովհետև ես մոռացայ այդ դիւական անունը, վասնորոյ ինձ թըվումէ, որ եթէ բոլոր նոտարիուսների ցուցակում տեսանէի նորա անունը, միտքս կը գար»։

Երկու զարկուած որ տուեցին դստիկոնի դուռին ահ ու դողի մէջ ձգեցին Ագրիկօլը։ Նա ակամայ մտածեց իւր բանդարկութեան վերայ։ Նորա հայրը այս միջոցին գլուխը միւս կողմը շրջած լինելով ընկատեց նորա շփոթվիլը և բարձր ձայնով ասաց «Ներս մտէք»։

Դուռը բացվեցաւ, ներս մտաւ Գաբրիէլը։ Նա հագած էր սև վերարկու և բոլորշի գլխարկ։ Ճանաչել իւր եղբայրագիրը և վազել դէպ ի նորա գիրկը՝ Ագրիկօլի այս երկու շարժողութիւնը այնպէս շուտ եղաւ ինչպէս միտք։ «Եղբայր».—«Ագրիկօլ. Գաբրիէլ».— այսքան երկար միմեանց չտեսանելուց յետոյ. «վերջապէս դու այս տեղ ես»։ Այսպիսի էին երկաթագործի և քարոզիչ քահանայի արտաբերած խօսքերը, սեղմելով միմեանց իւրեանց կուրծքին։ Դագոբեռի սիրտը շարժված և զմայլած այս եղբայրական ողջունատուութեան վերայ զգաց, որ լաց է լինում։ Արդարև մի սրտաշարժութիւն կար այս միասիրտ երիտասարդ մարդերի սիրոյ մէջ, որ բնա-

ւորութեամբ և կերպարանքով այնպէս զանազան էին. պատճառ, Ագրիկոլի այրական կազմուածքը առաւել զգալի էր կացուցանում Գաբրիէլի գեղեցիկ կերպարանքի քնքշութիւնը: «Ինձ հայրս ասել էր յառաջուց քո գալու մասին», ասաց վերջապէս երկաթագործը իւր եղբայրորդին, ես ամենայն րոպէ սպասումէի տեսանել քեզ և այսու ամենայնիւ իմ երջանկութիւնը հարիւր անգամ առաւել է քան թէ ես յոյս ունէի»: — Բայց իմ բարի մայրը, հարց արեց Գաբրիէլը սեղմելով փաղաքշութեամբ Դագոբերի ձեռքը, դուք նորան առո՞ղջ գրութեան մէջ գտաք: — «Այո՛, իմ սիրական որդի, բայց նա առաւել առողջ կը լինի. պատճառ, մեք ամենեքեան միատեղ ենք այժմ, ես ուրախութենից առաւել առողջ բան չգիտեմ». յետոյ դառնալով դէպ ի Ագրիկոլը, որ արդէն մոռացել էր մտածել իւր բանդարկվելու մասին, մի անթարգմանելի սիրով նայեցաւ քարոզչի վերայ, «բայց ի՞նչ ես մտածում, Գաբրիէլը ունենալով պատանի օրիորդի կերպարանք, ունի նոյնպէս առիւծի արիութիւն, պատճառ, ես արդէն պատմեցի քեզ, թէ ի՞նչպէս քաջութեամբ փրկեց նա մարշալ Սիմոնի դստերքը և փորձ էր փորձում ինձ ես ազատելու նոյնպէս»: — Բայց Գաբրիէլ, ի՞նչ է այդ ճակատիդ վերայ, յանկարծ գանչեց երկաթագործը, որ մի քանի րոպէ ուշադրութենով նայումէր քարոզչի վերայ:

Գաբրիելը ներս մտած հանելով իւր գլխարկը գտանվեցաւ բոլորովին պատուհանի տակ, որից սաստիկ լոյսը լուսաւորումէր նորա գունաթափ և հեզ երեսը և այն ժամանակ բոլորովին յայտնի էր լինում կամարաձև սպին յօնքերի վերայ ընկած, մի քունքից մինչև միւսը: Դագոբերը զանազան ամբոխմունքների և պատահարների մէջ որ մինը միւսի քամակից հետևումէին նաւաբեկութենից յետոյ, Կարդովիլի ամրոցումը, իւր կարճ խօսակցութեան ժամանակ Գաբրիէլի հետ, չէր կարողացել նկատել այս սպին, որ պատած էր երիտասարդ քարոզչի ճակատը, բայց այժմ մասնակից լինելով Ագրիկոլի զարմանքին ասաց. «բայց ճշմարիտ, այդ ի՞նչ սպի է ճակատիդ վերայ:»

— Նու ձեռքերի վերայ . . . . նայիր հայրիկ — գանչեց երկաթագործը բռնելով Գաբրիէլի ձեռքը, որ նա ինքը տուել էր Ագրիկոլին նորան հանգստացնելու համար: «Գաբրիէլ, իմ քաջ որդեակ. մեկնի՛ր մեզ այդ. ո՞վ այդպէս վիրաւորեց քեզ», կցորդեց Դագոբերը. և առած քարոզչի ձեռքը, իբրև հասկացող այդ բաներին, նայեց վէրքը և ասաց. «Սպանիայում իմ մի ընկերիս խաչեցին այն գիտաւորութեամբ, որ սպանեն քաղցածութենով և ծարաւով, այն օրից նորա ձեռքի վերայ մնացին սոցա նման սպիներ:»

— Նորա ասածը ճշմարիտ է, ամենայն բանից երևումէ, որ քո

ձեռքերը ծակված են, իմ սիրական եղբայր,—ասաց Ագրիկօլը սաստիկ սիրտը շարժված: «Աստուած իմ, մի մտածէք այդ մասին», ասաց Գաբրիէլը կարմրելով պարկեշտութենից, «ես քարոզիչ էի վայրենիների մէջ, գայլախաղոտ սարերում, նոքա ինձ խաչեցին. սկսել էին քերթել իմ կաշին, մինչ . . . . Նախախնամութիւնը ազատեց ինձ նոցա ձեռքից»:—Անբաղդ որդեակ, դու ուրեմն անզէ՛ն էիր, քեզ հետ չկային բաւականին թիկնապահք,—ասաց Դագոբերը: «Մեք չենք կարող զէնք կրել», ասաց Գաբրիէլը մի հեզ ժպիտով, «և մեզ հետ երբէք չեն լինում թիկնապահք:»

—Եւ քո ընկերքը, նոքա որ քեզ հետ միասին էին, ինչո՞ւ նոքա չպահպանեցին քեզ—գանչեց Ագրիկօլը կատաղած: «Ես միայն էի եղբայր»—միայն: «Այո՛ միայն, ուղեցուցի հետ:»

—Ի՞նչպէս դու միայն և անզէն գնացիր այդ բարբարոսների մէջ—կրկնեց Դագոբերը չկարողանալով հաւատալ այն բանին, ինչ որ լսումէր: «Ահա՛ ճշմարիտ մեծութիւնը», ասաց Ագրիկօլը:—Բռնութենով չէ կարելի մարդիկ դարձուցանել դէպ ի հաւատ, ասաց Գաբրիէլը պարզահոգութենով,—այն խեղճ վայրենիների մէջ միմիայն համոզութեան միջնորդութենով կարելի է տարածել Աւետարանի շնորհը: «Բայց եթէ չյաջողի համոզել նորանց?» ասաց Ագրիկօլը:—Դու ինչ ես կամենում եղբայր. այն ժամանակ կը մեռանեն հաւատի վերայ, չարչարվելով նոցա համար, որ չէին ընդունում հաւատը. պատճառ, նա մի բարերար շնորհ է մարդկութեան համար:

Այս պատասխանից յետոյ, որ ասվեցաւ սրտաշարժ պարզութենով, տիրեց խոր լռութիւն: Դագոբերին բոլորովին յայտնի էր թէ ինչ է քաջութիւնը: Վասն որոյ նա և լիապէս գնահատումէր այս վսեմ և խոնարհ քաջութիւնը, նա իւր որդու նման նայումէր Գաբրիէլի վերայ զարմանքով և պատուով:

Գաբրիէլին թէպէտ և օտար էր սուտ պարկեշտութիւնը, բայց այսու ամենայնիւ մասնակից չէր այն զգացմունքներին, որ շարժվել էին Դագոբերի և Ագրիկօլի մէջ, այս պատճառաւ դառնալով դէպ ի զինուորը, ասաց «ի՞նչ պատահեց ձեզ». —ինչ պատահեց ի՞նձ,—գանչեց զինուորը,—այն, որ երեսնամեայ պատերազմից յետոյ . . . ես կարծումէի ինձ նոյնպէս քաջ, ինչպէս և բոլորը, բայց այժմ ես հանդիպեցայ այնպիսի մի մարդու, որ առաւել քաջ է ինձանից . . . . և այդ մարդը դու ես: «Ի՞նչ կամիք ասել, ես ի՞նչ եմ արել»—գիտե՞ս արդեօք, որ այդ գեղեցիկ վէրքերը (և զինուորը ուրախացած բռնեց Գաբրիէլի ձեռքերից) այնքան գեղեցիկ են, որ աւելի գեղեցիկ են քան թէ մեր վէրքերը, որ պատահումեն . . . «Այո՛ . . հայրս արդար է», գանչեց Ագրիկօլը, և յետոյ ուրախացած յաւելա-

ցրեց, նա, ահա թէ ես ինչպէս քահանաներ սիրումեմ, ես յարգումեմ բարութիւն, պյրութիւն, հնազանդութիւն:

— Խնդրումեմ ձեզանից մի դովասանէք ինձ այդպէս,— ասաց Գաբրիէլը շփոթված: «Քեզ գովել», ասաց Դագոբերը, «լսէր ինձ . . . . երբ ես գնումէի կրակի մէջ, միթէ ես միայն էի գնում, միթէ ինձ վերայ չէր նայում գլխաւորը, միթէ ինձ հետ չէին իմ ընկերքը. միթէ եթէ քաջութիւնը տեղի տար անձնասիրութիւնը չէր դրդում ինձ, չ՚յիշելով դեռ և այս տեղ պատերազմական աղաղակը, վառօդի հոտը, փողերի ձայնը, թնդանօթների որոտումը, իմ ձիու կրակոտութիւնը, որ խաղումէր տակիս: Այո՛ առանց յիշելու մինչև անգամ այն, որ ինձ վերայ նայումէր ինքը կայսրը, որ փոխանակ ծանր հանդերձներին իմ ծակոտած մարմնի վերայ, կարող էր հրամայել կրել մի աւելորդ ժապաւէն օձիքի վերայ, կամ մի խաչ նշանազգեստի վերայ, այս բոլոր սածներիս շնորհքով, ես անուան վեցայ քաջ: Բարի է, բայց դու արդեօք հազար անգամ քաջագոյն չե՞ս ինձանից, իմ փառաւոր որդեակ. դու, որ գնումես միայն . . . . անզէն, թշնամու ընդդեմ, որ հազար անգամ զօրեղ է նոցանից որոնց հետ մեզ պատահեցաւ պատերազմել և որի վերայ մեք յարձակվումէինք ամբողջ վաշտերով, երաժշտութենով ումբաձգութենով և այլն:

«Բարի հայրիկ», գանչեց երկաթագործը, «ինչպէս գեղեցիկ և ազնիւ է, որ դու գնահատումես Գաբրիէլի գործը»:— Ա՛հ եղբայր նորա դէպ ի ինձ սէրը մեծացնումէ այն, ինչ որ ինքն ըստ ինքեան շատ բնական էր: «Բնական էր այնպիսի մարդերի համար ինչպէս դու ես. Ճշմարիտ է», ասաց զինուորը «բայց քեզ նման մարդիկ շատ հազուագիւտ են»:—Այո՛, այո՛ շատ հազուագիւտ են. պատճառ, այսպիսի քաջութիւնը ամենայն տեսակ քաջութեններից գերազանց է,— ասաց Ագրիկօլը—ինչպէս. քեզ յայտնի է, որ գնումես համարեա թէ դէպ ի հաւաստի մահ, և միայն. խաչը ձեռքիդ գնումես քարոզել վայրենիներին բարութիւն և եղբայրութիւն. նոքա բռնումեն քեզ, տանջումեն և դու յանձն ես առնում մահը առանց տրտնջանքի, առանց ատելութեան, առանց բարկութեան, վրէժխնդրութեան, թողութիւն տալով, և ժպիտը բերանիդ, և այս ամենայնը ո՞ր տեղում, անտառի խորքերում, այն ժամանակ, երբ այս մասին ո՛չոք չգիտէ, ո՛չո՛ք չէ տեսանում և այս բոլորը միայն այն յուսով, որ եթէ կարողանաս ազատվել նոցա ձեռքից, ծածկես քո վէրքերը պարկեշտ և սև վերարկուի տակ. պէտք է խոստովանիլ, որ հօրս ասածը Ճշմարիտ է, չ՚կամի՞ս արդեօք այժմ ևս ապացուցանել որ դու նոյնպէս քաջ չէիր ինչպէս նա: «Բաց ի դորանից», ասաց Դագոբերը, «նա բոլոր այդ բաները առնումէ, ինչպէս ասումէ առածը «Պրուսիացոց թագաւորի

համար», և դու արդարութենով խօսեցար իմ որդի, որ նորա քաջութիւնը և նորա վէրքերը երբէք չեն փոխելու նորա սև վերարկուն դէպ ի Եպիսկոպոսական վերարկու:

— Ես այդպէս բոլորովին անշահասէր չեմ ինչպէս ձեզ թըվումէ — ասաց Գաբրիէլը հեզ ժպիտով — եթէ ես արժանանամ, այն ժամանակ այն տեղ երկնքումը սպասումէ ինձ ամենամեծ վարձը: «Այդ մասին ես քեզ հետ չեմ վիճում իմ որդեակ. բայց միայն այսքան կ'ասեմ, որ իմ հին խաչը նոյնպէս վայել է քո վերարկուին ինչպէս և իմ նշանազգեստին»:

— Բայց այդ վարձատրութիւնքը նշանակվումեն ոչ Աստուծոյ սեղանի պարկեշտ սպասաւորների համար ինչպէս է Գաբրիէլը, — ասաց երկաթագործը, — բայց եթէ դու գիտացել էիր հայրիկ, թէ որքան այրութիւն և բարեգործութիւն կայ այն բանի մէջ, որ հոգևոր աստիճանաւորքը համարվումեն ստորին հոգևորականք! Ո՞րքան ծածկած արժանաւորութիւնք, անյայտ մտերմութիւնք գտանվումեն այդ աննշան և արժանաւոր գիւղական քահանաների մէջ: Մեզ նման, այս աղքատ քարոզիչքը կարելի է համարել արհեստաւորք. նոքա որդիք են նոյնպէս ֆրանսիական ազգին, ինչպես մեք, այնքան օգտակար են ինչպէս մեք, և նորանց ինչպէս մեզ պիտոյ է . . . . իրաւունք տուած: Ճշմարիտ է իմ ասածը Գաբրիէլ: Դու սուտ չես խօսում իմ բարի եղբայր, պատճառ, երբեմն ասացիր ինձ թէ քո անձնասիրութիւնը սահմանաւորվումէ մի փոքրիկ գիւղական ծուխ [1]) ստանալով, ուր կարելի է շատ բարի բաներ գործել ինչպես այդ քեզ յայտնի է»:

— Իմ ցանկութիւնը անփոփոխ մնաց, — ասաց տխրութենով Գաբրիէլը — և մի չար բաղդով: Յետոյ կամենալով ցրվել տխուր մտածութիւնը և փոխել խօսակցութիւնը, ասաց նա դառնալով դէպ ի Դագոբեռը, — հաւատացէք ինձ, արդարադատ եղիք, և մի ստորացնէք ձեր քաջութիւնը բարձրացնելով մերը. ձերը մեծ է և շատ մեծ.. պատճառ, մեծահոգի սրտի համար պատերազմից յետոյ արիւնհեղութեան տեսարանը պիտոյէ սարսափելի լինի: Մեզ գոնէ եթէ և սպանումեն . . . բայց մեք չենք սպանում: Քարոզչի այս խօսքերի վերայ զինուորը ուղղվեցաւ և գանչեց զարմացած, «ահա՛ զարմանալի բան»: — Ո՞րը, հայրիկ: — »

«Գաբրիէլի ասածները իմ միտքն են բերում այն, ինչ որ ես զգումէի պատերազմում, քանի ծերանումէի»: Գիտէք որդեակներ, քանի անգամ ինչպէս պատահումէր պատերազմից յետոյ, երեկոները, իմ

[1]) Ժողովուրդ, վիճակ:

ճարգն էր գալիս գիշերը միայն պահապան կանգնել լուսնի լուսի տակ, այն հողի վերայ, որ մնացել էր մեր ձեռքում, բայց ծածկած եօթն կամ ութն հազար դիերով, որոնց մէջ կային և իմ հին ու պատերազմական ընկերները. երբեմն այս տխուր տեսարանը, այս վսեմական լռութիւնը, հանումէր իմ սրտից պատերազմելու ցանկութիւնը . . . . և ես ասումէի ինքս ինձ, ահա՛ բաւական մեռածներ կա՛ն. ի հարկէ այն խափան չէր ինձ, միւս օրը, թշնամին պաշարելու քամակից ընկած, պատերազմիլ առաջվայ նման, բայց այս մի և նոյն է, երբ վաստակած ձեռքով ես իմ ձիու բաշով սրբումէի արիւնոտ սուրս և նոյնպէս ասումէի. . . . ես սպանեցի՜, սպանեցի՜:» Քարոզիչը և երկաթագործը նայեցան միմեանց վերայ երբ զինուորը անցած բաները սկսեց խօսել: «Աւաղ», ասաց Գաբրիէլը, «ամենայն մեծահոգի սրտեր զգումըն մի և նոյնը, ինչ որ զգացել էիք դուք այդ վսեմական ժամերում, երբ փառքի յոյսը ցնդումէր, և մարդը մնումէր այն բարի յատկութեններովը որ ինքն Աստուած դրել է նորա սրտի մէջ:»

— Եւ մի և նոյն այդ խօսքը ապացուցանումէ քեզ իմ սիրական որդի, որ դու ինձանից լաւ էիր, պատճառ այդ ազնիւ զգացողութիւնքը ինչպէս դու անուանումես երբէք հեռացած չեն քեզանից, բայց ասա՛ խնդրեմ ինչպէս ազատվեցար դու այն վայրենիների սատանայական ճանկերից, որոնք արդէն խաչելու վերայ էին . . . .

Դագոբերի այս հարցմունքի վերայ Գաբրիէլը ցնցվեցաւ և այնպիսի զգալի կերպով կարմրատակեց, որ զինուորը ասաց նորան «եթէ դու չէ պիտոյ կամ չ՛կամիս պատասխանել իմ այս հարցմունքին, այն ժամանակ համարիր որպէս թէ չէի հարցուցած:

Ես ո՛չ ձեզանից և ո՛չ եղբօրիցս թաքցնելու բան չունիմ — ասաց քարոզիչը փոխված ձայնով — բայց ինձ դժվար կը լինի մեկնել ձեզ այն. . . . ինչ որ ես ինքս չեմ հասկանում:

«Ա՞յդ ինչպէս», ասաց Ագրիկօլը զարմացած:

— Ա՛նտարակոյս! — ասաց Գաբրիէլը կարմրելով, — այն վսեմական րոպէումը խաբեցին ինձ իմ ամբոխված զգացմունքը, այն րոպէումը երբ ես հնազանդութենով սպասումէի մահին, իմ թուլացած միտքը, իմ կամքիս ընդդէմ, կարող էր արտաքին կերպարանքով ինձ խաբել և այն ինչ, մինչև այս րոպէս ինձ անհասկանալի է թըվում, վերջումը կը յայտնվէր ինձ. . . . անպատճառ ես կ՛իմանայի, թէ ո՞վ էր այդ զարմանալի կինը: Դագոբեռը լսելով քարոզչի խօսքերը զարմացաւ, պատճառ և ինքը զուր տեղը աշխատումէր մեկնել ինքեան այն անակնկալ օգնութիւնը որ ազատեց իւրեան և որբերին Լէյբցիգի բանդից: «Ո՞ր կնոջ մասին խօսումես դու», հարց արեց երկաթագործը քարոզչից: — Նորա մասին, որ փրկեց ինձ: — «Կին մարդ

ազատեց քեզ վայրենիների ձեռքից», ասաց Դագոբեռը: — Այո՛, — պատասխանեց Գաբրիէլը, մտած միանգամայն իւր յիշողութեան մէջ, — կին մարդ մատաղահաս և գեղեցիկ: «Ո՞վ էր այն կինը հարց արեց Ագրիկօլը»: — Չ՚գիտեմ. երբ ես հարցրեցի նորանից այս մասին նա պատասխանեց ինձ, Ես վշտացածներէ տուր եմ: «Ո՞ր տեղից եկաւ նա և ո՞ւր գնաց», հարց արեց Դագոբեռը: — Ես գնում եմ այն տեղ ուր լուս-լուսին, պատասխանեց նա ինձ, — ասաց քարոզիչը, — և գնաց հիւսիսային Ամերիկայի ուղղութենով դէպ ի այն ամայի անապատները, ուր թագաւորումէ յաւիտենական ձիւն և անվախճան գիշեր:

«Ինչպէս, դէպ ի Սիբիր», ասաց Դագոբեռը մտածմունքի մէջ ընկած:

— Բայց, — ասաց Ագրիկօլը դառնալով դէպ ի Գաբրիէլը, որ դարձեալ առաւել ընկղմումէր մտածմունքի մէջ, — ինչ կերպով այն կինը հասաւ քեզ օգնութիւն: Քարոզիչը կամենումէր պատասխանել մինչ յանկարծ դրան հանդարտ բաղխումը նորոգեց Ագրիկօլի երկիւղը, որ իւր եղբայրագրի գալովը մոռացել էր բոլորովին: «Ագրիկօլ», ասաց մեղմ ձայնը դուռի քամակից, «ինձ հարկաւոր է այս րոպէիս խօսիլ քո հետ»: — Երկաթագործը ճանաչեց Մայեօի ձայնը և բացեց դուռը: Մատաղահաս աղջիկը փոխանակ որ ներս մտանէ, յետ կանգնեց մի քայլ, մութ պատշգամբի մէջ և անհանգստութենով ասաց, «Աստուած իմ, Ագրիկօլ, արդէն մի ժամից աւելի է, որ լուսացել է, բայց դու դեռ ես այս տեղ ես, ինչ անխոհեմութիւն է, ես պահապան էի կանգնած ցածումը, փողոցում, մինչև այժմ ոչինչ վշտացուցիչ բան չտեսայ, բայց ամենայն րոպէ կարող են գալ և քեզ կալանաւորել. երդմնեցուցանումեմ քեզ, գնա շուտով օրիորդ տիկին դը-Կարդովիլլի մօտ, մի րոպէ ևս չէ պիտոյ կորուսանել»: — Եթէ Գաբրիէլը չգար ես վաղուց արդէն գնացած էի, բայց կարո՞ղ էի արդեօք մի քանի րոպէ չմնալ նորա հետ: «Գաբրիէլը այս տե՞ղ է», ասաց Մայեօն, ախորժելի զարմանքով, պատճառ, ինչպէս ասված է արդէն, նա Գաբրիէլի և Ագրիկօլի հետ միասին մեծացել էր:

— Այո՛, — պատասխանեց Ագրիկօլը, — նա արդէն կէս ժամ է որ ինձ ու իմ հօր հետ է: «Ի՞նչպէս ուրախ եմ ես նորան տեսանելու», ասաց Մայեօն, «նա երևի ներս մտաւ այն ժամանակ, երբ ես գնացել էի քո մօր մօտ հարցանել, արդեօք մի բանով օգտակար չէի կարող լինել այն մատաղահաս օրիորդներին, բայց նոքա այնպէս վաստակած են, որ մինչև այժմ քնումեն. Տիրուհի Ֆրանսիսկայն խնդրեց ինձ տալ քեզ այս նամակը որ նա այս րոպէիս ստացել էր քո հօր անունով: — Շնորհակալ եմ բարի Մայեօ: «Որովհետև դու արդէն տեսութիւն արել էիր Գաբրիէլի հետ, ուրեմն մի մնար այս

տեղ երկար.... մտածիր, ինչ հարուած կը լինի հօրդ, եթէ նորա աչքի առաջև քեզ կալանաւորեն, Աստուած իմ»: — Ճշմարիտ է քո ասածը շուտով հարկաւոր է գնալ, ես հօրս և Գաբրիէլի հետ եղած, մոռացել էի բոլորովին վտանգը: «Գնա շուտով, և եթէ օրիորդ-տիկին դը-Կարդովիլը համաձայնի քեզ շնորհ ցոյց տալ, այն ժամանակ դու երկու ժամից յետ կը դառնաս ըստ ամենայնի ապահովված և քեզ և քոյայինքդ: — Իսկ և իսկ ես մի քանի րոպէից յետոյ կերթամ: «Ես կերթամ պահապան լինել դրանը, եթէ մի բան տեսանեմ իսկոյն կը յայտնեմ քեզ, նայիր չուշանաս»: — Հանգիստ կաց:

Մայեօն շուտով ցած իջաւ սանդուղքից և գնաց պահապան լինել փողոցում. Ագրիկօլը ներս մտաւ իւր սենեակը:

«Հայրիկ», ասաց նա Դագոբեռին, «այս նամակը, որ մայրս այս րոպէին ստացել է, խնդրումէ կարդալ»: — Ուրեմն կարդա սիրելիս:

Ագրիկօլը ընթերցաւ հետևեալ բանը:

«Ողորմած Տիրուհի»:

«Ես իմացայ, որ ձեր ամուսնուն յանձնել է գեներալ Սիմոնը «շատ հարկաւոր գործ: Խնդրումեմ ձեզանից, ձեր ամուսինը իսկոյն «Փարիզ հասածովը խնդրէք նորան անյապաղ գալ իմ կօնտուարս, «որ Հարտրումն է, ինձ յանձնված է տալ նորան, երբեք ու երբեք նո-«րան, նորա սեպհական ձեռքը թղթեր, որ անպատճառ հարկաւոր էին «գեներալ Սիմոնի օգուտը պահպանելու համար»:

«Դիւրան Նօտարիուս Հարտրում»:

Դագոբեռը զարմացած նայեց որդու վերայ և ասաց. ո՞վ կարո՞ղ էր իմաց տալ այդ պարոնին այսպէս շուտով իմ Փարիզ հասանելը»: — Կարելի այն նօտարիուսն է, որի հասցէն դու կորուսել ես և որին ուղարկելէիր թղթեր, հայրիկ, — ասաց Ագրիկօլը: «Բայց նորա անունը Դիւրան չէր և այս լաւ իմ մտքումն է, որ նա Փարիզումը էր և ո՛չ Հարտրում. միւս կողից ասաց զինուորը մտածելով» եթէ կան նորա մօտ հարկաւոր թղթեր, որ նա պարտական էր ինձ միայն յայտնել....»: — Ուրեմն քեզ անպատճառ հարկաւոր է որքան կարելի է շուտով գնալ — ասաց Ագրիկօլը: համարեա թէ ուրախացած այս հանգամանքի վերայ, որով իւր հայրը բացակայութեան մէջ պիտոյ է լինէր գո՛նէ երկու օր, երբ Ագրիկօլի վիճակը մի կերպով կը վճռվէր այսպէս կամ այնպէս: «Քո խորհուրդը լաւ է», ասաց նորան Դագոբեռը: — Այդ ձեր մտածութիւնքը խանգարում են — հարց արեց Գաբրիէլը:

«Մի մասով իմ երեխայք, պատճառ, ես յոյս ունէի այսօր ձեզ հետ անցուցանել, բայց պարտականութիւնը ամենայն բանից յառաջ է, ես նորա համար չ'եկայ Սիբիրից Փարիզ, որ շատ հարկաւոր գործի համար վախենամ Փարիզից Հարտր գնալու։ Երկու օրվայ մէջ ես կը վերադառնամ. բայց այսու ամենայնիւ այս օտար մի բան է, սատանան առնու ինձ, եթէ ես մտածել էի, թէ այսօր կը բաժանվիմ ձեզանից և կ'երթամ Հարտր, լաւ է, որ Ռօզը և Բլանշը իմ բարի կնոջ հետ թողնումեմ, և նոցա հրեշտակ Գաբրիէլը ինչպէս անուանումեն նոքա նորան, կը գայ նորանց հետ խօսելու»։

— Գժբաղդաբար այդ անկարելի է ինձ, — ասաց տխրութենով քարոզիչը, — իմ այս այցելութիւնը նոյնպէս հրաժարական այցելութիւն է իմ մօր և Ագրիկօլի հետ։ «Ինչպէս հրաժարական», ասացին միաբերան Դագօբեռը և Ագրիկօլը։ — Աւա՜ղ, այո՛։ «Դու արդէն գնումես այլ առաքելութենով?» ասաց Դագօբեռը, «այդ անկարելի է»։ — Ես դորան ոչինչ չեմ կարող պատասխանել, — ասաց Գաբրիէլ խեղդելով իւր հառաչանքը բայց սկսած այս օրից մինչև մի անորոշ ժամանակ ես չեմ կարող, ես չէ պիտոյ վերադառնամ այս տունը։ «Լսիր ինձ սիրելիս», ասաց զինուորը սիրտը շարժված, «քո ընթացքի մէջ կայ մի հակառակաբանութիւն — նեղութիւն։ Ես ճանաչումեմ մարդիկ. այն մարդը որին դու անուանումես քո գլխաւորը և որին ես նաւաբեկութենից յետոյ մի քանի րոպէ տեսայ կարդովիլեան ամրոցում, ունի ամենազարշելի երես, սատանան առնու, ինձ շատ ընդդէմ է, որ դու այն մարդու իշխանութեան տակ ես։ — կարդովիլեան ամրոցում, գանչեց երկաթագործը, անունի նմանութեան վերայ զարմացած — կարդովիլեան ամրոցում ընդունեցին ձեզ նաւաբեկութենից յետոյ։

«Այո՛ բարեկամ, ինչ զարմանալի բան կայ այս տեղ»։

— Ոչինչ հայրիկ. բայց այդ ամրոցի տէրերը բնակվումեն նորա մէջ?

«Ո՛չ, պատճառ, կառավարիչը, որին ես ասացի թէ կամենումէի շնորհակալ լինել նորանից ցոյց տուած հիւրասիրութեան համար, պատասխանեց ինձ թէ այն անձը, որին պատկանումէ այս ամրոցը բնակվումէ Փարիզում»։

— Ի՞նչ զարմանալի մօտաւորութիւն է — ասաց ինքը ինքեան Ագրիկօլը — եթէ այն օրիորդը լինէր ամրոցի տէրը, որ կոչվումէ մի և նոյն անունով։ Յետոյ, որովհետև այս բանը միտքը բերեց Մայեօյին տուած խոստմունքը, վառնորդ ասաց Դագօբեռին։ «Հայրիկ, ներիր ինձ.... արդէն ուշ է, բայց ինձ հարկաւոր էր երեկ աշխատաւորաց բնակարանի մէջ ութն ժամին» — քո ասածը ճշմարիտ

է բարեկամ, ուրեմն թողումնք մեր զուարճութիւնը մինչև իմ Հարտրից վերադառնալը, գրկիր ինձ այլ ևս, իմ որդի, և գնա: Այն միջոցին երբ Դագոբեռը ասումէր Գաբրիէլին հակառակաբանութեան և հարստահարութեան մասին Գաբրիէլը մնացած էր մտածմունքի մէջ. . . . Այն րոպէին երբ Ագրիկոլը մօտեցաւ նորան, որ սեղմէ նորա ձեռքը, քարոզիչը ասաց նորան վսեմ և վճռական ձայնով, որ զարմացուց երկաթագործին:

«Իմ բարի եղբայր, այլ ևս մի խօսք, ես նոյնպէս եկել էի այս տեղ որ ասեմ քեզ, որ այս օրից սկսած մինչև մի քանի օր դու ինձ հարկաւոր ես, դու ևս նոյնպէս հայրիկ, թոյլ տուեցէք ինձ այսպէս անուանել», յաւելացրեց Գաբրիէլը սրտաշարժ ձայնով դառնալով դէպ ի Դագոբեռը: — Այդ ինչ բան է, որ ասումես մեզ, ինչ է պատահել քեզ արդեօք — գանչեց երկաթագործը: «Այո», պատասխանեց Գաբրիէլը, «ինձ հարկաւոր կը լինին խորհուրդ և երկու վճռական և պատուաւոր մարդերի օգնութիւն, ես ձեր երկուսի վերայ կարող եմ յուսալ այնպէս չէ. ամենայն ժամանակ որ օր և չլինէր, առաջին խօսքովը դուք կը գաք:

Դագոբեռը և նորա որդին մի խօսք և չասելով նայեցան միմեանց վերայ, զարմացած Գաբրիէլի դէմքի վերայ: Ագրիկոլը զգումէր, որ իւր սիրտը ճնշվումէր, որ եթէ ինքը կալանաւորվի, այն ժամանակ, երբ իւր եղբայրը կարօտ էր ինքեան — ինչ պիտոյ էր անել այն միջոցին:

«Ամենայն ժամ գիշեր թէ ցերեկ, իմ գեղեցիկ որդի, դու կարող ես յոյս ունենալ մեր վերայ», ասաց Դագոբեռը այնքան ևս զարմացած որքան և հետաքրքրութիւնը շարժած. . . . «դու ունիս հայր և եղբայր, գործ դիր նորանց»: — Շնորհակալ եմ, շնորհակալ եմ, ասաց Գաբրիէլը, դուք ինձ շատ երջանիկ էք կացուցանում: «Գիտե՞ս արդեօք», ասաց զինուորը եթէ քո զգեստը չլինէր, այն ժամանակ քո խօսակցութեան կերպից ես կը կարծէի թէ բանը մենակռվի, մի մահաբեր մենակռվի վերայ է»: — Մենակռվի՞, ասաց քարոզիչը դողալով, այո, կարող է պատահել, որ բանը հասանէ սաստիկ, սարսափելի մենակռվի, որի համար ինձ հարկաւոր կը լինին երկու այնպիսի վկայք, ինչպէս դուք էիք հայր և որդի:

Մի քանի րոպէից յետոյ Ագրիկոլը, առաւել և առաւել անհանգստացած, շուտով գնաց օրիորդ դը-Կարդովիլի մօտ, ուր և մեք կը տանենք մեր ընթերցողքը:

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ ՎԵՐՋԸ:

[illegible] Арм. С.С.Р. [illegible]

ԳԼԽԱՒՈՐ ՍԽԱԼՏՊՈՒԹԻՒՆՔ.

Երես	Տպուած է	Կարդա՛
7	tyloma	Condyloma,
21	propiturus ero	propitius ero
27	կառող էր	կարող էր
34	բաղկամնումէր	բաղկանումէր
36	իշխանուորները	իշխանաւորները,
38	Գոնզալէչը	Գոնզալեզը
39	աղգութիւնը	ազգութիւնը
40	Nemo novus.	Nemo novas,
47	Գեյլըն	Ցեյլըն (այսպէս շատ անգամ է պատահել),
56	Պօնդիկերի	Պօնդիշերի
—	գնէլով.	գնելով
61	իշթանութիւնը	իշխանութիւնը
—	Հեյլեօմ.	Գեյլեօմ
68	արեսփոխանքը	երեսփոխանքը
69	Ցխուսեան	Ցխուսեանք.
72	— աքսորվէն	աքսորվին,
—	Հխուսեանների	Ցխուսեանների,
77	Սենտիկ	Սինդիկ,
78	սեւ գոյնը	այս սեւ գոյնը
85	Շութով,	Շուտով
87	կողկումը	կողքումը
89	Sint ut sunt non sint	Sint ut sunt aut non sint.

Թարգմանչի բազմադիմի պարապմունքը և գրաշարների օտարազգութիւնը պատճառ են դարձած այս անկարգութեանը։ Պատուելի ընթերցողներից խնդրվումէ ներողութիւն. այսպիսի սխալատպութիւնք, թէ և ոչ այսքան շատ, երեւումեն և թափառական հրէայի մէջ. բայց որովհետեւ դոքա այնպիսի բաներ չեն, որ խանգարէին բանի ընթացքը, այս պատճառով աւելորդ համարվեցաւ նշանակել, յուսալով որ ընթերցողքը կարող են ուղիղ կարդալ։

ՆՈՐ ՏՊԱԾ ԳՐՔԵՐ·

I· Հանդէս Նոր Հայախօսութեան, երկու հատոր մեծ ութ
աշխատութիւն Ս· Վարդապետի Նազարեանց· 1857· իւրաքանչի
սարակ կազմով հատորի գինն է Մոսկվայի մէջ երկու մանէթ ա
այլ քաղաքներից խնդրողքը պիտոյ է հատուցանեն իւրաքանչի
տորի համար ճանապարհական երեք փունտի ծախք:

II. Թափառական Հրէայ· գործ Եւժէն Սիւ Փրանսիացու
ջէլ Նալբանդեանցի աշխատութեամբ, 1857. առաջին հատ
ութածալ, որի մէջ պարունակվումեն, Ցիսուսեան կարգի պատ
նը, և Թափառական Հրէայի առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ
գերրորդ մասերը· հասարակ կազմով օրինակի գինն է Մոսկվայի
մանէթ քսան հինգ կոպէկ արծաթ· այլ քաղաքներից խնդրող
տոյ է հատուցանեն ամեն՝ հատորի համար ճանապարհական
փունտի ծախք:

III. Դէքուհի դը Շեվրեօզ· գործ Կլեմանս Րօբէրտի· Մ
Նալբանդեանցի աշխատութեամբ, 1858. հասարակ կազմով
գինն է Մոսկվայի մէջ երեսուն կոպէկ արծաթ· իսկ ճանապարհ
քով յիսուն կոպէկ:

IV. Հիւսիսափայլ Օրագիր ընդհանուր ազգային լուս
թեան և դաստիարակութեան· որ հրատարակվումէ Մոսկվայի
բապատիւ Ստեփանոս Նազարեանց Վարդապետի աշխատութեա
րեկան գինը Մոսկվայի մէջ, ութն մանէթ արծաթ, ճանապարհ
քով Ռուսսիայի մէջ ինն և կէս մանէթ:

V. Օրացոյց գալոց 1859 թուականի· գինն է Մոսկվ
քսան հինգ կոպէկ արծաթ:

Ով որ կամենայ ստանալ այս գրքերը, կարող է պատկանե
ծախթովը միասին ուղարկել իւր խնդիրը այսպիսի հասցէով·

В Редакцію Армянскаго Журнала «Сѣверное Сіяніе», на Черногр
домѣ Статскаго Совѣтника Назарьянца, въ Москвѣ.

ԳՐԵԱՆՔ ՈՐ ԳՏԱՆՎՈՒՄԵՆ ՏՊԱԳՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ Տ

VI. Պաւլոս և Վիրգինիա· գործ Բեռնարդէն դը Սէն Պիեր
սիացու, աշխատութիւն Ստեփանոս Վարդապետի Նազարեանց
գործի հետ միասին տպվումէ նոյն հեղինակի Հնդկական խուղ
նով գործը:

VII. Մինին խօսք, միւսին հարսն· գործ Մ· Նալբանդեան
նիւթը առած է Հայերի կեանքից:

VIII. Ընթերցարան Հայոց լեզուի նոր ոճով· աշխատութ
Քերբերեանց: